20459

154



II wr
3347/594w

Ռ. ԽԱՆԶԱՔՑԱՆ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

175 պատկերով

20459

Երկրորդ բարեփոխուած տպագրութիւն

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ե. Սդրաճեանի, Պօլից. 7
1915

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՏԵՆԱԴԻՐԱՆ
33030

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ձեռնարկելով «Հին աշխարհի պատմութիւն» կազմելը, մենք նպատակ ենք ունեցել լրացնել այն մեծ պակասը, որ զգացւում է «Ընդհանուր» և «Հայոց» պատմութիւնները դասաւանդելիս մեր թեմական և մանաւանդ ծխական դպրոցներում։ Ճիշտ է, ընդհանուր պատմութեան մի քանի դասագրքեր կան արդէն, բայց դրանք կամ շատ թերի և կամ չափազանց անմատչելի են նոյնիսկ ուսուցիչներից շատերի համար։ Ինչ վերաբերում է հայոց պատմութեանը, մինչև օրս էլ այդ առարկան համարեա թէ ամենուրեք Պալասանեանի առասպելախառն «Հայոց Պատմութիւն» գրքոյկն է դասաւանդւում։

Շեղւելով ընդհանուր ընդունւած սովորութիւնից, մենք Հայոց պատմութիւնը չենք բաժանել հարևան հին ազգերի պատմութիւնից, այլ տւել ենք խառը, ցոյց տալու համար նախ՝ թէ ինչպիսի դիրք կամ տեղ են գրաւել մեր նախահայրերը ընդհանուր հին ազգերի պատմութեան մէջ և թէ ապա՝ խրօնոլոգիական կարգով ինչ դէպքեր ու անցքեր են տեղի ունեցել մեր երկրում ընդհանուր պատմութեան յայտնի և որոշ ժամանակներում։ Հայոց պատմութիւնն ընդհանուրից անջատ աւանդելով, աշակերտների մէջ երկու միմեանցից բոլորովին հակառակ տպաւորութիւններ են առաջանում. ընդհանուր պատմութիւնն անցնելիս նրանց թւում է, թէ հայերը կամ բոլորովին գոյութիւն չեն ունեցել և կամ մի այնպիսի ոչնչութիւն են իրանցից ներկայացրել, որ հարկ չէ համարւում նոյնիսկ յիշատակել նրանց մասին։ Իսկ հայոց պատմութիւնն էլ սովորելիս նրանք կարծում են, թէ ամեն ինչ աշխարհիս երեսին միմիայն հայերի համար է գոյութիւն ունեցել։ Հայոց պատմութիւնը ընդհանուրի հետ խառն անցնելը չէ խանգարում, ի հարկէ, որ բարձր դասարաններում նա կրկնւի առանձին և աւելի մանրամասն կերպով։

Բոլորովին վստահ չլինելով, թէ մեր առաջարկը՝ հայոց պատմութիւնն ընդհանուրի հետ խառն աւանդելու մասին՝ կարող է ընդունւել բոլոր ուսուցիչների կողմից անխտիր, մենք հայոց պատմութիւնը մանր տառերով ենք աւել։ Մանր տառերով ենք տւել նոյնպէս և ընդհանուր պատմութեան այն մասերը, որոնք կամ աւելորդ մանրամասնութիւններ են, գրւած ուսուցիչների

համար, և կամ կարող են իբրև անմատչելի նիւթ համարուել որոշ հասակի կամ դասարանի աշակերտների համար։

Դասագիրք կազմողի համար անշուշտ շատ դժւար է մատչելի ու անմատչելի նիւթերը ճշտութեամբ բաժանելը, որովհետև այդ գլխաւորաբար աշակերտների հասակից և ունեցած ընդհանուր զարգացումից է կախւած։ Ուստի կատարւած բաժանումը չէ կարող պարտաւորեցուցիչ համարուել բոլոր ուսուցիչների համար. նրանք կարող են կրճատումների ենթարկել և այն նիւթը, որ դասագիրք կազմողը մատչելի է համարել ու խոշոր տառերով տպագրել։

Զափազանց մեծ նշանակութիւն տալով դասագրքերում եղած պատկերներին, մենք ոչ մի ջանք չենք խնայել կարելի եղածին չափ ճոխ դարձնել մեր աշխատութիւնը պատկերներով։ Թէև այդ բանը առհասարակ բաւականին բարձրացնում է գրքի արժէքը, բայց մենք զոհողութեան առաջ կանգ չառնելով, ընդամենը 1 րուբ. 25 կոպ. ենք նշանակել մեր գրքի գինը, որ կարծում ենք, աւելի քան մատչելի պիտի լինի բոլորի համար էլ, եթէ մանաւանդ ի նկատի առնենք, որ այս դասագրքով աշակերտը երկու տարւան դասընթաց պիտի անցնի։

Շատ երկար կը լինի մանրամասն այստեղ յիշատակել այն բոլոր աղբիւրները, որոնցով մենք օգտւել ենք սոյն աշխատութիւնը կատարելիս։ Յիշենք միայն ամենագլխաւորները։—«Histoire Ancienne des peuples de l'Orient» par G. Maspero, «Histoire Ancienne do l'Orient» par F. Lenormant, «L'homme et la Terre» par El. Reclue, «La Civilisation et les Grands Fleuves Historiques» par Metchnicoff, «Les Ariens avant l'Europe» par Ihering, «Histoire des Anciens Armeniens» par Noël Dolens et A. Khatch, Исторія Халдеи, Ассиріи и Мидіи» Рогозиной, «Древній Востокъ» Добринина, «Эллада» и «Римъ» Вегнера, «Всеобщая Исторія» Г. Вебера, «Учебникъ Всеобщей Исторіи» П. Виноградова, «Исторія Древняго Міра» Иванова, «Очерки Исторіи Арменіи» Г. Халатова և այլն։



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատմութիւնը այն գիտութիւնն է, որ սովորեցնում է, թէ ինչպէս են ապրել, հետզհետէ զարգացել, կատարելագործւել մարդկային բազմազան ցեղերն ու ազգերն անցեալում. ինչպէս են նրանք, թէև շատ դանդաղ կերպով, մշակել իրանց շրջապատող բնութիւնը՝ կուլտուրա ստեղծել՝ ստեղծագործել այն բոլորը, ինչ մենք այսօր տեսնում ու վայելում ենք։

Անշուշտ, շատ հեշտ է այդ գիտութեան համար ճիշտ ու բազմակողմանի տեղեկութիւններ հաւաքելն այնպիսի ժամանակների մասին, երբ մարդիկ գրել—կարդալ գիտէին ու գրաւոր յիշատակարաններ են թողել։ Սակայն, մարդիկ միշտ էլ գրել—

համար, և կամ կարող են իբրև անմատչելի նիւթ համարուել որոշ հասակի կամ դասարանի աշակերտների համար։

Դասագիրք կազմողի համար անշուշտ շատ դժւար է մատչելի ու անմատչելի նիւթերը ճշտութեամբ բաժանելը, որովհետև այդ գլխաւորաբար աշակերտների հասակից և ունեցած ընդհանուր զարգացումից է կախւած։ Ուստի կատարւած բաժանումը չէ կարող պարտաւորեցուցիչ համարուել բոլոր ուսուցիչների համար. նրանք կարող են կրճատումների ենթարկել և այն նիւթը, որ դասագիրք կազմողը մատչելի է համարել ու խոշոր տառերով տպագրել։

Զափազանց մեծ նշանակութիւն տալով դասագրքերում եղած պատկերներին, մենք ոչ մի ջանք չենք խնայել կարելի եղածին չափ ճոխ դարձնել մեր աշխատութիւնը պատկերներով։ Թէև այդ բանը առհասարակ բաւականին բարձրացնում է գրքի արժէքը, բայց մենք զոհողութեան առաջ կանգ չառնելով, ընդամենը 1 րուբ. 25 կոպ. ենք նշանակել մեր գրքի գինը, որ կարծում ենք, աւելի քան մատչելի պիտի լինի բոլորի համար էլ, եթէ մանաւանդ ի նկատի առնենք, որ այս դասագրքով աշակերտը երկու տարւան դասընթաց պիտի անցնի։

Շատ երկար կը լինի մանրամասն այստեղ յիշատակել այն բոլոր աղբիւրները, որոնցով մենք օգտւել ենք սոյն աշխատութիւնը կատարելիս։ Յիշենք միայն ամենագլխաւորները։—«Histoire Ancienne des peuples de l'Orient» par G. Maspero, «Histoire Ancienne do l'Orient» par F. Lenormant, «L'homme et la Terre» par El. Reclue, «La Civilisation et les Grands Fleuves Historiques» par Metchnicoff, «Les Ariens avant l'Europe» par Ihering, «Histoire des Anciens Armeniens» par Noël Dolens et A. Khatch, Исторія Халдеи, Ассиріи и Мидіи» Рогозиной, «Древній Востокъ» Добринина, «Эллада» и «Римъ» Вегнера, «Всеобщая Исторія» Г. Вебера, «Учебникъ Всеобщей Исторіи» П. Виноградова, «Исторія Древняго Міра» Иванова, «Очерки Исторіи Арменіи» Г. Халатова և այլն։



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատմութիւնը այն գիտութիւնն է, որ սովորեցնում է, թէ ինչպէս են ապրել, հետզհետէ զարգացել, կատարելագործւել մարդկային բազմազան ցեղերն ու ազգերն անցեալում. ինչպէս են նրանք, թէև շատ դանդաղ կերպով, մշակել իրանց շրջապատող բնութիւնը՝ կուլտուրա ստեղծել՝ ստեղծագործել այն բոլորը, ինչ մենք այսօր տեսնում ու վայելում ենք։

Անշուշտ, շատ հեշտ է այդ գիտութեան համար ճիշտ ու բազմակողմանի տեղեկութիւններ հաւաքելն այնպիսի ժամանակների մասին, երբ մարդիկ գրել—կարդալ գիտէին ու գրաւոր յիշատակարաններ են թողել։ Սակայն, մարդիկ միշտ էլ գրել—

կարդալ չեն իմացել. հազարաւոր ու տասնեակ հազարաւոր տարիներ են անցել մարդու աշխարհ գալու օրից, մինչև որ նա գիր է հնարել ու ընդունակ դարձել յիշատակարաններ թողնելու։ Այդ դէպքում պատմութիւնը, իր պակասը լրացնելու համար դիմում է ուրիշ գիտութիւնների, այն է՝ հնագիտութեան և ազգագրութեան օգնութեանը։

Հնագիտութիւնը զբաղւում է պեղումների միջոցով հանւած զանազան իրերի ուսումնասիրութիւնով։ Շատ տեղերում գետինը պեղելիս մարդկային ոսկորների, կմախքի ու գանգի հետ միասին հողի միջից դուրս են հանւում զանազան ամանեղէններ, գործիքներ, զէնքեր, զարդեր և այլ շատ այնպիսի իրեր, որոնք հազարաւոր տարիներ մեղնից առաջ ապրած մարդկանց են պատկանել։ Ահա հէնց այդ իրերից կամ նրանց ճեացորդներից կարելի է լինում հասկանալ ու գուշակել, թէ ինչպէս են ապրել մարդիկ մեղնից հազարաւոր տարիներ առաջ. ինչ բնութիւն էր նրանց շրջապատում, ինչով էին նրանք կերակրւում, ինչ գործիքներ ու զէնքեր գործ ածում, ինչպէս հագնւում, զարդարւում, աշխատում ու զարճանում։

Իսկ ազգագրութիւնն երկրագնդի վրայ ապրող զանազան ազգերի ու ցեղերի ուսումնասիրութիւնով է զբաղւում։

Ծանօթանալով Ամերիկայի, Աւստրալիայի ու բազմաթիւ կղզիների վրայ ապրող վայրենի ցեղերի հետ, ուսումնասիրելով նրանց նիստ ու կացը, սովորութիւնները, մարդիկ նկատել են, որ դրանց գործ ածած տնային գործիքներից, զէնքերից և այլ իրերից, ինչպէս և ունեցած սովորութիւններից շատերը ժամանակով գոյութիւն են ունեցել և նոյն իսկ այժմ էլ տեղ-տեղ գոյութիւն ունեն եւրոպական քաղաքակրթւած ազգերի մէջ։ Բացի դրանից՝ մարդիկ նկատել են, որ այդ ցեղերից ոմանք շատ աւելի վայրենի դրութեան մէջ են գտնւում, քան միւսները, որոնք կուլտուրապէս արդէն բաւականին զարգացել և ազգ ու պետութիւն են կազմում։ Բոլոր այդ կարգի դիտողութիւններից և ուսումնասիրութիւններից կարելի է եզրակացնել, որ այժմեան մինչև իսկ ամենաքաղաքակրթւած ազգերի նախահայրերն էլ հնումը մի ժամանակ ճիշտ այնպէս են ապրել, նոյն կարգերն ու սովորութիւններն են ունեցել, ինչպէս ներկայումս վայրենի ցեղերն են։

Այդ եղանակով ահա հնագիտութիւնն ու ազգագրութիւնը, միմեանց լրացնելով, պատմութեանը հնարաւորութիւն են տալիս ուսումնասիրելու և այնպիսի հին ժամանակներում ապրող մարդկանց կեանքը, երբ նրանք դեռ ոչ գրել-կարդալ են իմացել և ոչ էլ գրաւոր յիշատակարան թողել իրանց մասին։

Այդպիսով մարդկային պատմութիւնը երկու մեծ ժամանակաշրջանների է բաժանւում. նախապատմական շրջան, որի մասին գրաւոր յիշատակարաններ չը կան, և պատմական շրջան, երբ մարդիկ արդէն գրել-կարդալ գիտէին և իրանց մասին գրաւոր յիշատակարաններ էին թողնում։ Նախապատմական շրջանի պատմութիւնը մենք արդէն, թէև համառօտակի, սովորել ենք։ Այժմ պիտի զբաղւենք մարդկային կուլտուրայի պատմական շրջանով։

—

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐԵՔ ԳԼԽԱՒՈՐ ՑԵՂԵՐԸ։


Խօսելով նախապատմական կուլտուրայի մասին, մենք շարունակ գործ էինք ածում «նախապատմական մարդիկ» բառերը, առանց որոշելու, թէ ներկայ բազմաթիւ ազգերից որը ինչ դեր է կատարել այդ չափազանց հին ժամանակներում։ Դրա պատճառը պարզապէս այն է, որ ազգերն էլ շատ ու շատ ուշ են կազմակերպւել, երբ մանաւանդ մարդիկ ցրւել են զանազան երկիրներ ու սկսել են միմեանցից խիստ տարբեր կլիմայի տակ և պայմանների մէջ ապրել։ Կլիմայական զանազան պայմանների ազդեցութեան շնորհով մարդկութիւնը երեք մեծ խմբակցութիւնների կամ ցեղերի է բաժանւել, որ են՝ *Սպիտակ կամ Կովկասեան ցեղը, Դեղին կամ Մոնղոլական ցեղը և Սեւ ցեղը*։

Բոլոր արիական և սեմիտական ազգերը պատկանում են *Սպիտակ ցեղին*։ Այդ ցեղի գլխաւոր յատկանիշներն են՝ մորթու սպիտակութիւնը, գանգի ու դիմագծերի միանգամայն կանոնաւորութիւնը։ *Դեղին կամ Մոնղոլական ցեղին* պատկանում են՝ չինացիք, ճապոնացիք, թուրանական ու ֆիննական բոլոր ազգերը, ինչպէս և Ամերիկայի հնդիկները, որոնց մորթը կարմիր պղինձի գոյն է ստացել։ Այս ցեղի միւս գլխաւոր յատկանիշներն այն են, որ երեսի ոսկորը դուրս է ցցւած, աչքերը նեղ և ծուռն են, մազերը ձիու բաշի են նմանում և մարդիկ այնպիսի առատ բեխ ու մորուք չունեն, ինչպէս սպիտակ ցեղին պատկանողները։ Երրորդ՝ *Սև ցեղին* պատկանում են Աֆրիկայի Նեգրները (խափշիկները) և Աւստրալիայի կատարելապէս վայրենի ճեացած պա-

պուսանները։ Բացի սև մորթ ունենալը, այդ ցեղին պատկանող մարդկանց շրթունքները չափազանց հաստ են, ցածի ծնոտը խիստ դուրս ցցած և մազերն էլ ոչխարի բուրթի են նմանում։ Դրանք նոյնպէս առատ բեխ ու մորուք չունեն։

Մարդկային կուլտուրայի ասպարիզում ամենից վաղ երևացել են Դեղին ցեղին պատկանող ժողովուրդները. իսկ ամենից մեծ դեր կատարել են Սպիտակ ցեղին պատկանողները։ Սև ցեղին պատկանող ժողովուրդները մինչև օրս էլ համարեա թէ ամբողջապէս վայրենի դրութեան մէջ են մնացել։ Եւ այդ բացատրւում է, ոչ թէ երեք ցեղերի ունեցած առաւել կամ նւազ բնածին ընդունակութիւններով, այլ շատ աւելի նրանց բնակած երկիրների ու միջավայրերի տարբերութիւններով։ Բնական բերքերով թէ չափազանց աղքատ և թէ չափազանց հարուստ երկիրներում կուլտուրա երբէք չէ զարգացել։ Սիբիրիայի ու Հիւսիսային Ամերիկայի խիստ ցուրտ ու աղքատ տունդրաներում, որտեղ մարդկային աշխատանքը անզօր է որևէ բան արտադրելու, ոչ մի կուլտուրա չէ ծագել կամ զարգացել։ Նոյն ամլութիւնն է տիրել միշտ և այնպիսի խիստ տաք երկիրներում, ուր բնութիւնը չափազանց հարուստ է բերքերով և մարդիկ, ամեն ինչ առատութեամբ ստանալով բնութիւնից, կարիք չեն զգում աշխատելու և ստեղծագործելու։

Մարդկային ստեղծագործութիւնը զարգացել է դէպի այնպիսի բարեխառն կլիմա ունեցող երկիրներում, ուր բնութիւնը ոչ հիւսիսային տունդրաների նման ժլատ է եղել և ոչ էլ հարաւային երկիրների նման չափազանց հարուստ։ Բացի դրանից՝ մարդկային ստեղծագործութիւնը ամենից վաղ սկսել է զարգանալ մանաւանդ այնպիսի վայրերում, ուր մարդիկ ամենից աւելի են հնարաւորութիւն ունեցել միմեանց հետ շփւելու, հաղորդակցութեան մէջ մտնելու։ Իսկ իրրև հաղորդակցութեան լաւագոյն միջոցներ նախապատմական շրջանում մեծ գետերն էին։ Եւ կուլտուրայի հնագոյն կենտրոնները հէնց մի քանի նշանաւոր գետերի աւազաններն են եղել։ Այդ գետերն են՝ Հօանգօ, Եանցեկիանգ, Գանգէս, Բրահմապուտրա, Տիգրիս, Եփրատ և Նեղոսը։ Առաջին չորս գետերի աւազաններում ծաղկեցին Հինական և հնդկական կուլտուրաները, որոնց պատմութեամբ մենք չենք զբաղւի։ Իսկ վերջին երեք գետերի աւազաններում զարգացան Միջագետքի ու Եգիպտոսի կուլտուրաները, որոնք այժմեան բոլոր եւրոպական ազգերի քաղաքակրթութեան հիմքը կազմեցին և հէնց դրանցով էլ սկսւում է հին աշխարհի պատմութիւնը։



ԵԳԻՊՏՈՍ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Եգիպտոսն իրանից մի հովիտ է ներկայացնում, որ գտնւում է Աֆրիկէի հիւսիս-արևելեան անկիւնում և ձգւում է Նեղոսի ստորին մասի երկու ափերի երկարութեամբ։ Դա մի, թէև փոքրիկ, բայց վերին աստիճանի բարեբեր երկիր է և, իր հարուստ ու ճոխ բուսականութեամբ, մի կատարեալ օազիս է ներկայացնում շրջապատող չոր և աւազուտ անապատի մէջ։ Նրա կլիման խիստ տաք է. ձմեռ ու ձիւն ասւած բաները եգիպտացիք չը գիտեն։ Մինչև իսկ անձրևներն էլ այնտեղ խիստ հազւագիւտ են. ամբողջ տարիներով երկիրն անձրևի երես չէ տեսնում։ Նեղոս գետն է միայն, որ իր առատ ջրերով ու խոնաւութեամբ լի ու լի փոխարինում է անձրևներին և կեանք ու կենդանութիւն պարգևում այդ եր-

կրին։ Այդ պատճառով էլ Եգիպտոսը շատ հին ժամանակներից կոչւում էր «Նեղոսի պարգևը»։

Նեղոսը ոչ միայն Եգիպտոսին կենդանութիւն տուող է, այլ և նրան ստեղծողն էլ։ Հազարաւոր տարիներ առաջ այս գետի հովիտը բոլորովին այլ կերպարանք ունէր. նրա ստորին ընդարձակ մասը չը կար։ Միջերկրական ծովի ծոցը, ուր Նեղոսն էր թափւում, հասնում էր մինչև Մեմֆիս (այժմեան Գայիրէ) քաղաքը։ Երկար դարերի ընթացքում Նեղոսն իր ջրերի հետ բերած առատ տիղմով հետզհետէ լցրել է ծոցը, բարձրացրել յատակը և ստիպել ծովին յետ-յետ քաշւել, որից յետոյ գետն էլ իր ստեղծած հարթութեան վրայ ճիւղաւորւելով, բազմաթիւ առուներ է փորել ու կազմել այժմեան դելտան*)։


Նեղոսի բերած տիղմն էլ հասարակ տիղմերից չէ. դա բուսական մնացորդներից գոյացած վերին աստիճանի պարարտ սև հող է։ Իր երկարութեամբ աշխարհիս այդ համարեա թէ ամենամեծ գետի մէկ ճիւղը՝ Սպիտակ Նեղոսը, իր սկիզբն առնելով Աֆրիկէի հարաւային կիսագնտի խորքերում, Վիկտորիա-Նիանզա լճից, հոսում է կուսական անտառներով չափազանց հարուստ ու խոնաւ վայրերի միջով։

Այդտեղ բազմաթիւ մեծ ու փոքր լճեր ու ճահիճներ կան, որոնց մէջ շարունակ թափւող ու նեխւող բուսական մնացորդներից գոյանում է այնպիսի տիղմ, որ երկիրը պարարտացնելու չափազանց մեծ յատկութիւն ունի։ Ահա հէնց այդ լճերի ու ճահիճների միջով անցնելով, Սպիտակ Նեղոսն իր հոսանքի հետ խլում է այդ հազւագիւտ տիղմը և, հազարաւոր վերստ առաջ խաղալով, բերում հասցնում է Եգիպտոս։ Այդտեղ նա դուրս է գալիս ափե-

*) Դելտա յունական դ տառի անունն է, որ △ հատկութեան ձև ունի և այդ անունով են կոչւում բոլոր այդ ձևի գետաբերանները։

րից և իր բերած պարգևը տարածում է ամբողջ հովիտի վրայ։

Այդ գործն էլ գլխաւորաբար կատարում է Նեղոսի միւս ճիւղը՝ Կապոյտ—Նեղոսը։ Սա իր սկիզբն առնում է Հաբէշական ձիւնապատ լեռներից և, յորդանալով արեւադարձային անձրևներից ու ձիւների հալւելուց, արա-



Նեղոսը։

գընթաց հոսում խառնւում է Սպիտակ—Նեղոսին ու հեղեղ կազմելով, հրում, քշում է սրա բերած տիղմը մինչև որ հասցնում է Եգիպտոսի սահմաններին։ Այստեղ Նեղոսը դուրս գալով իր ափերից, որ շատ ցածր են, հեղեղում է ամբողջ երկիրը։ Այդ ժամանակ Եգիպտոսը մի կատարեալ ծովի է նմանում, բարձր բլրակների վրա շինւած քաղաքներն ու գիւղերը կղզիներ են թւում այդ ընդարձակ ծովի մէջ։ Երթևեկութիւնը կատարւում է կամ մակոյկներով և կամ այն հողաթումբերի ու պատնէշների վրայով, որ շինւած են ջրի հոսանքը այս ու այն կողմ

տանելու համար։ Նեղոսի հեղեղումները սկսւում են յունիսին և տևում են մօտ չորս ամիս։

Հեղեղումից առաջ տարւայ ամենատխուր և անտանելի ժամանակն է Եգիպտոսում։

Մօտ 40 օր շարունակ փչում է Սահարայի քամին, որը հնոցից արձակւած բոցերի նման այնպէս է շիկացնում օդը, որ ոչ միայն մարդիկ, այլ և կենդանիները էլ դժւարանում են շնչել։ Ամբողջ բուսականութիւնը ծածկւում է թանձր փոշիով և թւում է, թէ ամեն ինչ մեռած է։ Այդ ժամանակ փոքրացած Նեղոսը, իր աւազանի մէջ կարծես կուճ եկած, այն աստիճան հանդարտ է հոսում, որ շատ աւելի կանդնած լճի է նմանում։ Վերջապէս դաղարում է հարաւային քամին և նրան փոխարինում է հիւսիսայինը՝ Միջերկրականի կողմից, որ տևում է մի քանի օր միայն։ Բայց այդ մի քանի օրուայ էլ այդ քամին բաւականին զովացնում է երկիրն ու մաքրում բուսականութիւնը թանձր փոշուց։ Այդ հիւսիսային քամին առաջին նշանն է, որ Նեղոսի ջուրը շուտով պիտի բարձրանայ։

Հազիւ մի քամի օր անցած, Նեղոսի պարզ ու վճիտ ջուրը սկսում է պղտորւել և աւելի ու աւելի վարարել։ Նա շուտով թանձրանում և կանաչ գոյն է ստանում։ Այդ ժամանակ Նեղոսի ջուրը շատ վնասակար է. նրան չեն խմում։ Բայց այդ դրութիւնը հազիւ 3—4 օր է տևում։ Ջուրը գնալով յորդանում ու մեծանում է։ Տաս-տասերկու օրից յետոյ նա բոլորովին կարմիր՝ արեան գոյն է ստանում և սկսում է ափերից դուրս թափւել։ Այդ ժամանակ Նեղոսի ջուրը ոչ միայն վնասակար չէ, այլ շատ համեղ և առողջարար է։

Այդ հեղեղումների ժամանակ մի կատարեալ ցնծութիւն է տիրում Եգիպտոսում. ցնծում, զւարթանում են ոչ միայն մարդիկն ու բուսականութիւնը, այլ և ուրախանում ու հրճւանքի մէջ են ընկնում նաև անասուններն ու թռչունները։ Անասունները թռչկոտում ու վազվզում են ջրերի մէջ, իսկ թռչունները կարծես թէ ջրի հետ միասին եկած, բազմաթիւ երամներով լցնում են երկիրն ու թնդացնում օդը իրանց երգերով։ Արագութեամբ զարթնում ու բազմանում են հազար ու մի տեսակ միջատներ ու զեռուններ, և գետը լցւում է բազմաթիւ ձկներով։

Նեղոսի յորդանալը տևում է մինչև սեպտեմբեր, որից յետոյ

ջուրը նոյնպիսի դանդաղութեամբ սկսում է նուազել և նոյեմբերին Նեղոսը նորից իր աւազանի մէջ է մտնում ու իր սովորական դիրքը ընդունում, բերած տիղմը թողնելով դաշտերի վրայ։

Ջրերը ցամաքելուց յետոյ, սկսւում է դաշտային եռուն աշխատանքը. մարդիկ յաճախ առանց հերկելու, ձեռքերով ու ոտներով են ցանում և շատ կարճ ժամանակի մէջ ամբողջ երկիրը ծածկւում է կանաչով ու ծաղիկներով։ Փետրուարի վերջերին հացն արդէն հասնում է, որից յետոյ սկսւում է հունձը։

Այդպիսով եգիպտացիք տարւայ միայն երեք եղանակն ունեն. Նեղոսի հեղեղումների, ցանքսի և հունձը հաւաքելու եղանակները։ Տարւայ այս վերջին եղանակը լինում է ձմեռւայ ամիսներին։ Եգիպտոսի բերքն ու պտղաբերութիւնը ոչ միայն չափազանց առատ է լինում, այլ և այնտեղ երկրագործը կարողանում է տարւայ մէջ 2—3 անգամ ցանել ու հնձել։

Հնումը եգիպտացիք անկարող լինելով բացատրել Նեղոսի հեղեղումների էութիւնը, աստւածային մի գործ էին համարում այդ հեղեղումները և Նեղոսին աստծու տեղ ընդունում։ Նեղոս—աստւածը կոչւում էր՝ Հապի, որից եգիպտացիք սաստիկ վախենում էին և միևնոյն ժամանակ փառաբանում նրան իր բերած բարիքների համար։

Բայց որչափ էլ մեծ լինեն Նեղոսի տւած բարիքները, այնուամենայնիւ, առանց մարդկային երկարատև, տոկուն ու բարդ աշխատանքի, աննշմարին կը լինէր նրանցից օգտւել։ Նեղոսի հեղեղումները, երկրին արգաւանդութիւն պարգևելով հանդերձ, կարող էին նաև ամեն ինչ ոչնչացնել, խորտակել, եթէ միայն մարդիկ ջրի հոսանքը չը կանոնաւորէին ու որոշ սահմաններ չը ստեղծէին նրա համար։ Շատ հին ժամանակներում հեղեղումների ժամանակ Եգիպտոսը բոլորովին տարբեր պատկեր էր ներկայացնում։ Ցածր տեղերում ահագին լճեր ու ճահճա-

կար ճահիճներ էին կազմւում, իսկ աւելի բարձր տեղերը ջուրը բոլորովին չէր հասնում։ Բացի դրանից՝ հեղեղումները իւրաքանչիւր տարի նոյն չափով ու քանակով չէին լինում և ոչ էլ միշտ միևնոյն կանոնաւորութեամբ, այնպէս որ լինում էին խիստ երաշտի տարիներ, ինչպէս և խիստ հեղեղումների տարիներ։ Իսկ այս հանգամանքը թոյլ չէր տալիս մարդկանց ոչ հաստատուն բնակարաններ շինելու և ոչ էլ երկրագործութեամբ պարապելու։



Հապի (Նեղոս) աստուածը իր պարգեւներն է բերում։

Նախապատմական ժամանակներում Եգիպտոսում ապրում էին սեւամորթ նեգրները, որոնք երկրագործութեան մասին իսկի չէին էլ մտածում և թափառական կեանք էին վարում։ Աւելի ուշ Ասիայից այդտեղ գալիս և բնակութիւն է հաստատում մի այլ ժողովուրդ սեմիտական ցեղից։ Նորեկները խառնւում են սեւամորթ բնիկների հետ, և հէնց այդ խառնուրդից էլ կազմւում է Եգիպտոսի բնակչութիւնը։

Սեմիտները ծանօթ լինելով հողագործութեան արուեստին և նկատելով իրանց նոր հայրենիքի հողի չափազանց արգաւանդ լինելը, սկսեցին հետզհետէ երկրագործութեամբ պարապել։ Նրանք դեռ անյիշելի ժամանակներում բազմաթիւ ջրանցքներ ու ջրամբարներ են շինել, պատնէշներ ու հողաթմբեր կառուցել, և այդպիսով ամբողջ երկիրը խիստ յարմար դարձրել երկրագործութեան համար։

Թէ երբ են կատարւել այդ բարդ ու դժւարին աշխատանքները, դժւար է ասել։ Ենթադրւում է, որ այդ կառուցւածքները արդէն գոյութիւն ունէին Քրիստոսի ծնունդից մօտ 5000 տարի առաջ։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻԵԼԸ

Սկզբում Եգիպտոսի բնակիչները, երբ դեռ չէին սկսել երկրագործութեամբ պարապել, բազմաթիւ խմբակցութիւնների կամ տոհմերի էին բաժանւած, որոնցից ամեն մէկն իր առանձին տոհմապետը կամ իշխանն ունէր։ Այդ փոքրիկ իշխանութիւններին յոյները կոչում էին «նոմ», իսկ նրանց իշխաններին՝ «նոմարքոս»։ Ամեն մի նոմ իր առանձին քաղաքն ու տաճարն ունէր։ Նոմի բոլոր վարչական, պատերազմական ու կրօնական գործերի վարողն ու տնօրինողը նոմարքոսն էր։ Նոմարքոսները շատ անհաշտ էին ապրում և շարունակ պատերազմներ մղում միմեանց դէմ։ Ժամանակի ընթացքում սակայն, երբ ժողովուրդն սկսեց երկրագործութեամբ պարապել, Նեղոսի հեղեղումները հարկադրեցին թշնամի նոմերին հետզհետէ իրարու հետ միանալ։ Այդ ժամանակ նրանք, հեղեղների պատճառած ընդհանուր աւերներից ազատւելու նպատակով, սկսում են միահամուռ ջանքերով ջրանցքներ անցկացնել, հողաթումբեր շինել և այլ աշխատանքներ կատարել։ Եւ այդ միահամուռ աշխատանքների շնորհով, նոմերը միանալով, երկու մեծ թագաւորութիւններ են կազմւում՝ մէկը Նեղոսի դելտայում, իսկ միւսը՝ դելտայից վերև։ Դրանցից առաջինը կոչւում էր *Սաորին*, իսկ վերջինը՝ *Վերին Եգիպտոս*։ Նեղոսի հեղեղումները աւելի ուշ հարկադրում են այդ երկու թագաւորութիւններին ևս միանալ։

Շարունակ պահանջ էր զգացւում, որ Եգիպտոսի ամբողջ տարածութեան վրայ ջրաբաշխական պարբերական աշխատանքները

միաժամանակ և կանոնաւորապէս կատարուեն. եթէ մի տեղում որևէ աշխատանք թերի էր լինում, միւս տեղերի բոլոր ցանքսերը վտանգի էին ենթարկւում: Բացի դրանից՝ պահանջ էր զգացւում, որ ամբողջ երկրում կատարուող աշխատանքների վրայ մի ընդհանուր խիստ հսկողութիւն ու ղեկավարութիւն լինի:

Եւ այդ հրամայողական բնական պահանջի ազդեցութեան տակ, Եգիպտոսում մի խիստ կազմակերպւած բռնապետական պետութիւն էր կազմւել: Պետութեան միահեծան տէրն ու կառավարողը թագաւորն էր, որ կոչւում էր փարաւոն:

Վերին և Ստորին Եգիպտոսի իշխանութիւնները առաջին միացնողը եղել է Մէնէս անունով փարաւոնը, որն ապրել է Քրիստոսի ծնունդից 3 թէ 5 հազար տարի առաջ: Նա հիմնել է Մեմֆիս քաղաքը և նրան միացնել պետութեան մայրաքաղաքը դարձրել:

Ամբողջ Եգիպտոսը մի և անբաժան թագաւորութիւն դառնալուց յետոյ, նախկին նոմերը թէև իսպառ չը ոչընչացան, բայց նոմարքոնները կորցրին իրանց ինքնիշխանութիւնը և փարաւոնների պաշտօնեաները դարձան:

Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ե Ր

Պետութեան կազմակերպւելու հետ միաժամանակ Եգիպտոսի ժողովուրդը հետզհետէ երկու մեծ՝ *բարձր եւ ստորին* դասակարգերի բաժանւեց: Բարձր կամ ազնւական դասակարգին էին պատկանում հէնց ինքը փարաւոնը, նոմարքոնները, քուրմերը և զինուորականները, իսկ ստորին դասակարգին պատկանում էին՝ գիւղացիները, արհեստաւորները, վաճառականները և ստրուկները:

Եգիպտոսի ամբողջ երկիրը ազնւականների սեփականութիւնն էր, որ ժառանգաբար անցնում էր որդուորդի: Ազնւականները սակայն իրանց կալւածների մշակութեամբ չէին պարապում, այդ կարգի սև աշխատանքները նրանց համար անվայել բաներ էին: Ամենամեծ կալւածատէրը հէնց ինքը փարաւոնն էր, որն իր ընդարձակ կալւածներից նւէրներ էր տալիս ուզած մարդկանց:

Փարաւոնից ոչ պակաս ընդարձակ կալւածներ ունէին քուրմերը՝ քահանայական դասը: Սրանք, բացի իրանց սեփական կալւածներից, վայելում էին նաև տաճարներին յատկացւած կալւածների եկամուտները: Քուրմերը Եգիպտոսում շատ մեծ հեղինակութիւն էին վայելում և մեծ հեղինակութեամբ էին օգտւում: Նեղոսի անբացատրելի հեղեղումների ազդեցութեան տակ կրօնամոլ դարձած եգիպտական ժողովուրդը այնպէս էր հաւատում, թէ քուրմերը գիտեն Հապիի և միւս աստւածների գաղտնիքները: Այդ պատճառով էլ նրանցից սաստիկ վախենում և սուրբ էին համարում:

Քուրմերի հեղինակութիւնը Եգիպտոսում բարձր էր և այն պատճառով, որ նրանք էին երկրի ամենալաւ գրագէտները, ուսուցիչներն ու գիտնականները:

Եգիպտացիք գրում էին հիէրոգլիֆներով (նշանագրերով), որ շատ դժւար բան էր և ամեն մարդ չէր կարողանում տարիներով նստել ու սովորել: Այդ պատճառով էլ քուրմերը ոչ միայն կրօնական, այլ և պետական բազմաթիւ պաշտօններ էլ էին վարում. նրանցից լինում էին փոխարքաներ, գաւառական կառավարիչներ, դատաւորներ և այլն:

Իրանց վարկը ժողովրդի աչքում միշտ բարձր պահելու նպատակով, քուրմերը առանձնայատուկ կեանք էին վարում. ծխականութիւններից առաջ պաս էին պահում, ամեն օր՝ թէ ցերեկը և թէ գիշերը՝ միքանի անգամ լողանում էին, անմաքուր համարւած կենդանիների միս չէին ուտում և այլն:

Ազնւականների դասին էին պատկանում նոյնպէս և զինուորականները, որոնց կալւածները սակայն շատ մեծ չէին,

Թէ քուրմերը և թէ զինուորականները, մի-մի փակ-

20459 33030

ւած կաստա էին ներկայացնում, այսինքն՝ քուրմի և զինուորականի որդիքը պարտաւոր էին անպատճառ քուրմ և զինուորական դառնալ։

ՍՏՈՐԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐ

Եգիպտոսի բնակչութեան ճշգրիտ մեծագոյն մասը ստորին դասակարգերին էին պատկանում։ Դրանք բոլորովին կալւածներ չունէին և միանգամայն զուրկ էին նոյնպէս պետական որևէ պաշտօն վարելու իրաւունքից։ Այդ դասակարգերից ամենամեծը գիւղացիութիւնն էր։

Գիւղացիները էին մշակում երկրի բոլոր հողերը, և ստացած արդիւնքի մեծ մասը նրանք պարտաւոր էին կալւածատէրերին տալ։ Այս վերջիններն առհասարակ այնպէս էին քամում երկրագործի վաստակը, որ նա տարին-տասերկու ամիս ստիպւած էր լինում կիսաքաղցած կեանք վարել։ Գիւղացիք կարծես դրանից աւելի լաւ կեանք վարելու իրաւունք էլ չունէին, որովհետև նրանք աղնւականների ճորտերն էին համարւում և պարտաւոր էին, բացի երկրագործական աշխատանքներից, ուրիշ ամեն տեսակ ծառայութիւններ էլ մատուցանել իրանց տէրերին։

Գիւղացիներից ոչ պակաս խղճալի կեանք էին վարում արհեստաւորները, որոնք սակայն, բացի ջուլհակներից, ճորտեր չէին, այլ ազատ քաղաքացիներ։ Այնուամենայնիւ նրանց աշխատանքի պայմանները չափազանց ծանր էին, ստացած վարձատրութիւնն էլ շատ չնչին։

Ստորին դասակարգերից վաճառականները միայն համեմատաբար աւելի ապահով վիճակ ունէին և աւելի ազատ էին զգում իրանց։ Այդ էլ գլխաւորաբար նրանից էր, որ վաճառականները տարւայ մէջ շատ կարճ ժամանակ էին իրանց հայրենիքում գտնւում. նրանք կարաւանները կազմած ամբողջ ամիսներով ճանապարհորդում էին երկրից-երկիր։

Եգիպտական ժողովրդի ամենաստորին խաւը կազմում էին *ստրուկները*։ Դրանք մեծ մասամբ սևամորթ նեգրներ էին։ Ստրուկները, ընտանի անասունների նման, կալւածատէր աղնւականների և հարուստ վաճառականների սեփականութիւնն էին կազմում։ Նրանց հետ վարւում էին իբրև անասունների հետ և մտրակների տակ բանեցնում էին վաղ առաւօտից մինչև երեկոյ։ Ստրուկները միևնոյն ժամանակ ծառայում էին իբրև առևտրի ապրանք և մեծ թւով արտահանւում էին օտար երկիրներ։

Եգիպտոսում բոլորովին առանձնայատուկ դիրք ունէին *սկրիբները* կամ գրագիրները։



Սկրիբները գրում են բարձր պաշտօնեայի թեւադրութեամբ։

Սրանք ոչ կալւածատէրեր կամ աղնւականներ էին և ոչ էլ քուրմերի չափ բարձր կրթութիւն ունէին, այլ սոսկ գրագէտներ էին, որ գիտէին վարժ կարդալ, գրել և տոկոսներ հաշւել։ Եւ հէնց դրա համար է, որ նրանք շատ գնահատւում և մեծ յարգանք էին վայելում։

Սկրիբների դասը միւսների նման փակուած կաստա էլ չէր, ամեն մի դասակարգի զաւակ կարող էր սկրիբը դառնալ։ Հարկաւոր էր միայն, որ երեխային մանուկ հասակից տային գրագիտութեան արուեստը սովորելու։ Սկրիբները շատ ազատութիւններ էին վայելում և կարող էին, իրանց ընդունակութիւնների համաձայն, պետական և այլ բարձր պաշտօնների հասնել։ Հէնց այդ պատճառով էլ ամեն մի ծնող Եգիպտոսում միշտ ձգտում էր իր որդուն սկրիբ դարձնել։

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերին ու Ստորին թագաւորութիւնների միանալուց յետոյ, փարաւոնը ամբողջ Եգիպտոսի միահեծան ու լինքնակալ հրամայողը և կառավարիչը դարձաւ. նրա ամեն մի խօսքը օրէնք էր համարւում։ Եգիպտոսի բոլոր բնակիչները փարաւոնի ստրուկներն ու ծառաներն էին, որոնց կեանքն ու սեփականութիւնը նրան էին պատկանում։

Փարաւոնի ամենամեծ գործերից մէկը ջրաբաշխական աշխատանքների վրայ հսկելն ու կանոնաւորելը լինելով, ժողովուրդը նրան Նեղոսի գաղտնիքները ամենից լաւ իմացող, աստուածների փոխանորդ և նոյնիսկ երկրային աստուած էր համարում։ Նրան ողջունում էին, երեսի վրայ գետնին փուելով, և փառաբանում էին ճիշտ այնպէս, ինչպէս որ առհասարակ մարդիկ անում են աղօթելու ժամանակ։ Փարաւոնների արձանները դնում էին տաճարներում ու նրանց առաջ զոհաբերութիւններ կատարում։ Փարաւոնն էլ պարտաւոր էր, իբրև աստուածների փոխանորդ և ամենամեծ քրմապետ, առանձնայատուկ կեանք վարել և իրան մաքուր ու սուրբ պահել։

Ի նշան այն բանի, թէ ինքը թագաւոր է Վերին և Ստորին Եգիպտոսի, փարաւոնը գլխին երկու թագ էր կրում՝ երբեմն կարմիր և երբեմն սպիտակ։ Իսկ իբրև նշան իր աստուածութեան և միահեծանութեան, նա ձեռքին կրում էր գայլխոն, մարակ և այլ խորհրդաւոր նշաններ։

Փարաւոնի կառավարութեան մէջ այնպիսի խիստ կարգապահութիւն էր տիրում, ինչպիսին այժմ կայ զօրքերի մէջ։ Փարաւոնի բոլոր կարգադրութիւններն ու հրամանները գործադրում էին իր նշանակած բարձր և ստորին պաշտօնեաները։ Այդ պաշտօնեաները բաժանւում էին երկու տեսակի՝ պալատական և վարչական։ Առաջինները միշտ գտնւում էին արքունիքում և վարում էին արքունիքի գործերը։ Նրանք էին կառավարում արքունական կալուածները, հսկում նրա շէնմարանների, հօտերի, կանանոցի վրայ և կատարում այլ բազմաթիւ պաշտօններ։ Իսկ վարչական կամ պետական պաշտօնեաները կառավարում էին ամբողջ պետութեանը վերաբերեալ գործերը։ Բոլոր պաշտօնեաները իրանց ոճիկը ստանում էին մթերքներով փարաւոնի պահեստներից։

Փարաւոնի բարձրաստիճան պաշտօնեաները զանազան տիտղոսներ ունէին, ինչպէս օրինակ՝ «փարաւոնի բարեկամ», «գաղտնի խորհրդական» և այլն։

ԶՕՐՔ

Երկրի վերին աստիճանի բարեբեր լինելու պատճառով, եգիպտացիք հին ժամանակներում օտար երկիրների վրայ արշաւանքներ գործելու՝ արտաքին պատերազմներ անելու ոչ մի կարիք չէին զգում։ Նրանց վրայ դրսից արշաւանք գործելն էլ շատ դժւար էր, որովհետև հիւսիսից նրանք պաշտպանւած էին Միջերկրական ծովով, հարաւում Սիեհնի քառաժայռերի նեղ անցքն էր, որտեղից Եգիպտոս մուտք գործելը խիստ դժւար էր, իսկ արևմուտքում անմարդաբնակ անապատն էր։ Մատչելի մնում էր միայն արևելեան կողմը՝ Սուէզի պարանոցը, իսկ այդտեղ էլ եգիպտացիք մի հսկայական պատնէշ էին շինել։ Այդպէս փակւելով իրանց երկրում, եգիպտացիք հնում

շատ խաղաղ կեանք էին վարում։ Այդ ժամանակ նրանք ոչ կանոնաւոր զօրք և ոչ էլ զինւորականութիւն ունէին։ Ուշ ժամանակներում միայն եգիպտացիք սկսեցին զօրք ու զինւորականութիւն ունենալ, երբ ասիական զանազան ժողովուրդներ սկսել էին շարունակ անհանգիստ անել իրանց վայրագ արշաւանքներով։ Եւ հէնց այդ ժամանակ է, որ զինւորականութիւնը հետզհետէ մեծ դիրք ու ազդեցութիւն ստացաւ Եգիպտոսում։

Դարերով խաղաղ կեանք վարած եգիպտական երկրագործ ժողովուրդը սակայն պատերազմներ չէր սիրում և միշտ աշխատում էր խուսափել զինւորագրութիւնից։ Այդ պատճառով էլ փարաւոնները, չը վստահանալով բնիկ ժողովրդի վրայ, իրանց զօրքը վարձով հաւաքում էին մեծ մասամբ օտարականներից. սևամորթ նիւբիացիներից, փիւնիկեցիներից, յոյներից և այլն։ Այս օտարականներից կազմւած զինւորականութիւնը մի ժամանակ այն աստիճան զօրեղացել էր, որ կարողանում էր փարաւոններին գահընկեց անել և իր ուզած մարդուն նրա տեղը հաստատել։

Եգիպտական զօրքը կազմւած էր հետևեալ զօրամասերից. 1) Ծանրազէն հետեւակ զօրքը, որ զինւած էր սրով, նիզակով ու կացինով, գլխին դնում էր սաղաւարտ և առաջը կաշէ գոգնոց կապում։ 2) Թեթևազէն հետեւակ զօրքը զինւած էր նետ-աղեղով և տէգով։ Սա ոչ վահան և ոչ սաղաւարտ էր կրում։ Եւ 3) Հեծելազօրքը, որ կռւի էր դուրս գալիս թեթև երկանիւի կառքերով։ Այս զօրամասը կազմւած էր բացառապէս ազնուականներից։

ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Եգիպտացիների գլխաւոր զբաղմունքը հողագործութիւնն էր։ «Նեղոսի ստեղծած» երկիրը այն աստիճան բարեբեր և պտղատու էր, որ երկրագործութիւնը մի առանձին դժւարին աշխատանք չէր էլ պահանջում. այնտեղ չէին հերկում, այլ հեղեղումների ջուրը ցամաքելուց յետոյ, սերմը շաղ էին տալիս տիղմի վրայ ու անասուններով հետ միասին կոխկրտելով թաղում էին։ Յետոյ՝ մարդիկ սպասում էին միայն, որ հունձը հասնի, որպէսզի քաղեն ու կալսեն։ Եգիպտոսում մշակում էին ամեն տեսակ հացահատիկներ ու բանջարեղէն։ Բացի մեր երկրին յատուկ պտղատու ծառերից, այդ երկիրը շատ հարուստ էր նաև հարաւային երկիրներին յատուկ այլ բուսականութեամբ, ինչպէս օրինակ՝ արմաւենին, բանանը, նուռնուֆարն (լոտոս) ու պապիրուսը։ Այս վերջինի թելանման մասերից եգիպտացիք թերթեր էին պատրաստում, վրան գրելու համար։




Պապիրուս

Եգիպտացիք զբաղւում էին նոյնպէս և խաշնարածութեամբ, որսորդութեամբ ու ձկնորսութեամբ։ Բացի եղջիւրաւոր անասուններից, շատ նշանաւոր էին էշերը, որոնք մինչև այսօր էլ շատ մեծ արժէք ունեն Եգիպտոսում։ Իսկ ձիեր շատ հին ժամանակներում չը կային



Անասուններին ջրում են

այդտեղ. այդ կենդանիները բերւեցին աւելի ուշ Ասիայից։



Եգիպտական աթոռներ

Երկար դարերի ընթացքում համարեա թէ բոլորովին կտրւած լինելով դրսի աշխարհից, եգիպտացիք ինքնուրոյն կերպով արդիւնագործութեան բազմաթիւ ճիւղերը էին զարգացրել։ Նրանց ոչ միայն շատ լաւ ծանօթ էին կեանքի համար անհրաժեշտ բոլոր արհեստները, ինչպէս օրինակ՝ կաւից, փայտից, կաշուից ու մետաղներից զանազան իրեր շինելը, այլ և նրանց մէջ նոյնպէս շատ զարգացած էին քարտաշութիւնը, ճարտարապետութիւնը, նկարչութիւնն ու ջուլհակութիւնը։ Նրանք գիտէին նոյնպէս և ապակի պատրաստել։ Մանաւանդ մեծ հռչակ էին վայելում եգիպտական ջուլհակներն ու ոսկերիչները, որոնց գործած նուրբ կտորներն ու շինած զարդարանքի թանկագին առարկաները չափազանց գնահատւում էին բոլոր հարևան երկիրներում։



Եգիպտոսում գործածւող ամաններ

Առօրեայ կեանքի համար պէտք եղած բոլոր պիտոյքներն ունենալով իրանց երկրում, եգիպտացիք երկար ժամանակ կարիք չէին զգում օտար երկիրներից ապրանքներ բերելու կամ նրանց հետ վաճառականութիւն սկսելու։ Նրանք մինչև իսկ օտարների վրայ արհամարհանքով ու զրզւանքով էին նայում։ Բայց ժամանակի ընթացքում, մարդկանց պահանջը մեծանալով, նրանք անկարող էին հարևան ազգերի հետ առևտրական յարաբերութիւնների մէջ չը մտնել։ Եւ այդ ժամանակից եգիպտոսի վաճառականութիւնը սկսեց արագութեամբ զարգանալ։ Հարևան երկիրներից եգիպտացիք գլխաւորաբար ստանում էին՝ եղևնու տախտակներ՝ նաւեր շինելու համար, պղինձ՝ բրոնզ պատրաստելու համար, փղոսկր, ներկեր և այլն։ Իսկ իրանց երկրից արտահանում էին՝ հացահատիկներ, գործւածքներ, գէնք, զարդարանքի առարկաներ և սրտուկներ։

Թէ երկրի ներսում և թէ դուրսի աշխարհի հետ ամբողջ առևտուրը կատարւում էր *փոխանակութեամբ*, դրամ դեռևս գոյութիւն չունէր։


Արհեստաւորներն ու բանւորներն էլ պետական պաշտօնեաների նման իրանց վարձատրութիւնը ստանում էին մթերքներով։

ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եգիպտոսում, ինչպէս և հին ժամանակւայ բոլոր ժողովուրդների մէջ, բազմակնութիւն էր ընդունւած։ Այդ իրաւունքից սակայն օգտւում էին հարուստ դասակարգերը միայն, որոնք միջոցներ ունէին թէ բազմաթիւ կանայք և թէ զաւակներ պահելու։ Իսկ հասարակ և աղքատ դասակարգերին պատկանող մարդիկ մեծ մասամբ մէկ կին ունէին։ Եգիպտոսում շատ ընդունւած բան էր

այդտեղ. այդ կենդանիները բերւեցին աւելի ուշ Ասիայից։

Երկար դարերի ընթացքում համարեա թէ բոլորովին կարւած լինելով դրսի աշխարհից, եգիպտացիք ինքնուրոյն կերպով արդիւնագործութեան բազմաթիւ ճիւղեր էին զարգացրել։ Նրանց ոչ միայն շատ լաւ ծանօթ էին կեանքի համար անհրաժեշտ բոլոր արհեստները, ինչպէս օրինակ՝ կաւից, փայտից, կաշուից ու մետաղներից



Եգիպտական աթոռներ

զանազան իրեր շինելը, այլ և նրանց մէջ նոյնպէս շատ զարգացած էին քարտաշութիւնը, ճարտարապետութիւնը, նկարչութիւնն ու ջուլհակութիւնը։ Նրանք գիտէին նոյնպէս և ապակի պատրաստել։ Մանաւանդ մեծ հռչակ էին վայելում եգիպտական ջուլհակները ու ոսկերիչները, որոնց գործած նուրբ կտորներն ու շինած զարդարանքի թանկագին առարկաները չափազանց գնահատւում էին բոլոր հարևան երկիրներում։



Եգիպտոսում գործածւող ամանները

Առօրեայ կեանքի համար պէտք եղած բոլոր պիտոյքներն ունենալով իրանց երկրում, եգիպտացիք երկար ժամանակ կարիք չէին զգում օտար երկիրներից ապրանքներ բերելու կամ նրանց հետ վաճառականութիւն սկսելու։ Նրանք մինչև իսկ օտարների վրայ արհամարհանքով ու զզուանքով էին նայում։ Բայց ժամանակի ընթացքում, մարդկանց պահանջը մեծանալով, նրանք անկարող էին հարևան ազգերի հետ առևտրական յարաբերութիւնների մէջ չը մտնել։ Եւ այդ ժամանակից եգիպտոսի վաճառականութիւնը սկսեց արագութեամբ զարգանալ։ Հարևան երկիրներից եգիպտացիք գլխաւորաբար ստանում էին՝ եղևնու տախտակներ՝ նաւեր շինելու համար, պղինձ՝ բրոնզ պատրաստելու համար, փղոսկր, ներկեր և այլն։ Իսկ իրանց երկրից արտահանում էին՝ հացահատիկներ, գործւածքներ, զէնք, զարդարանքի առարկաներ և սրտուկներ։

Թէ երկրի ներսում և թէ դուրսի աշխարհի հետ ամբողջ առևտուրը կատարւում էր *փոխանակութեամբ*, դրամ դեռևս գոյութիւն չունէր։

Արհեստաւորներն ու բանւորներն էլ պետական պաշտօնեաների նման իրանց վարձատրութիւնը ստանում էին մթերքներով։


ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եգիպտոսում, ինչպէս և հին ժամանակւայ բոլոր ժողովուրդների մէջ, բազմակնութիւն էր ընդունւած։ Այդ իրաւունքից սակայն օգտւում էին հարուստ դասակարգերը միայն, որոնք միջոցներ ունէին թէ բազմաթիւ կանայք և թէ զաւակներ պահելու։ Իսկ հասարակ և աղքատ դասակարգերին պատկանող մարդիկ մեծ մասամբ մէկ կին ունէին։ Եգիպտոսում շատ ընդունւած բան էր

նոյնպէս իրանց հարազատ քրոջ կամ մօտիկ ազգականների հետ ամուսնանալը։ Կանայք այնտեղ աշխատանքի մէջ իրանց ամուսինների կատարեալ ընկերն էին. ինչպէս որ ամուսինը առաւօտից մինչև երեկոյ զբաղուած էր լինում դուրսի աշխատանքներով, այնպէս էլ կինը զբաղուում էր տնային աշխատանքներով։

Շնորհիւ Եգիպտոսի չոր և տաք կլիմայի, հասարակ ժողովուրդը հաստատուն ու ամուր բնակարանների կարիք էլ չէր զգում. իրանց բնակարանները եգիպտացիք մեծ մասամբ շինում էին հասարակ ցեխից կամ չը թրծած աղիւսից, իսկ կտուրը ծածկում արմաւենու տերևներով։ Եգիպտացիք բազմաթեսակ հագուստների էլ կարիք չէին զգում. նրանք ման էին գալիս համարեա թէ կիսամերկ։ Մինչև օրս էլ այդ երկրում աղքատ ժողովրդի՝ թէ կնոջ և թէ տղամարդու՝ ամբողջ հագուստը բաղկացած է մէկ հատ կապոյտ կամ սպիտակ երկար շապկից, որ հասնում է մինչև սրունքները։

Բոլորովին տարբեր էր հարուստ դասակարգերի ապրուստն ու կենցաղը. նրանք թէ շատ շքեղ էին հագնւում, թէ հաստատուն ու գեղեցիկ բնակարաններ ունէին և թէ շատ փարթամ կեանք էին վարում։



Եգիպտական տուն

ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԿՐՕՆԸ

ԱՍՏՒԱԾՆԵՐԸ

Եգիպտացիք բնապաշտներ էին։ Զկար բնութեան մէջ մի երևոյթ, շնչաւոր թէ անշունչ առարկայ, որին եգիպտացիք իրանց պաշտամունքի առարկայ չը դարձնէին։ Մանաւանդ մեծ և զօրաւոր աստուածներ էին համարւում այն երևոյթներն ու տարրերը, որոնք ամենից աւելի կարող էին նպաստել կամ վնասել երկրագործութեանը։ Այսպէս՝ մի-մի զօրաւոր աստուածներ էին՝ Նեղոսը, արեգակը, մայր երկիրը, քամին, եզը, կովը, կոկորդիլոսը և այլն։



Ռա-Ամոն աստուածը

Աստուածները երկու կարգի էին բաժանւում՝ *Բարի* և *Չար*։ Առաջին կարգի աստուածներից ամենազօրաւորը համարւում էր արևաստուածը, որ յայտնի էր *Ռա, Ամոն, Օզիրիս, Հօր* և այլ զանազան անուններով, և որին նրանք պատկերացնում էին զանազան կերպարանքներով։

Չար աստուածներից ամենանշանաւորը *Սէթն* էր։ Այդ Սահարայի անապատի մարմնացումն էր, որ գտնւում է Եգիպտոսի արևմտեան կողմում և որտեղից փչող հրաշունչ քամիները ամենից շատ են վնասում այդ երկրի ցանքսերին։ Սէթը միևնոյն ժամանակ և խաւարի մարմնացումն էր, որովհետև արեգակը այդ կողմն է մայր մտնում,

կամ, ինչպէս եգիպտացիները էին ասում, գիշերային խաւարը Սահարայից էր բարձրանում Եգիպտոսի վրայ։

Եգիպտացիների հասկացողութեամբ, չարութեան և խաւարի աստուած Սէթը շարունակ կռիւ էր մղում արեգակի՝ բարւոյ, լոյսի և ճշմարտութեան աստուծոյ՝ դէմ



Հօրը, Օզիրիսը եւ Իզիդան

ու կամենում էր կլանել նրան։ Բայց այդ չէր յաջողւում Սէթին. արեգակը միշտ յաղթում էր նրան և ամեն օր նոյն փայլով ու պայծառութեամբ կրկին բարձրանում հորիզոնի յետևից։

Եգիպտական դիցաբանութիւնը պատմում էր, թէ մի անգամ Սէթը յաղթելով արև-աստուած Օզիրիսին, նրան սպանել, դիակը կտոր-կտոր էր արել և գցել էր Նեղոսի մէջ։ Բայց Օզիրիսի կինը՝ Իզիդան և քոյրը՝ Նեֆտիդան, երկար փնտրելուց յետոյ, գտել էին Օզիրիսի մարմնի մասերը և իրանց արտասուքներով վերստին կենդանացրել նրան։ Վերակենդանացած Օզիրիսը այլևս անցել էր ստորերկրեայ աշխարը, ուր արեգակը գիշեր ժամանակն է միայն լինում և այնտեղ, հաստատելով իր թագաւորութիւնը, մեռած մարդկանց հոգիների գլխաւոր դատաւորն էր դառել։ Իսկ Օզիրիսի որդին՝ Հօրը գնացել էր Սէթից վրէժ առնելու։ Նա թէև յաղթել էր այս վերջինին, բայց սպանել չէր կարողացել։ Եւ այդ կռիւը շարունակւում է յաւիտեան ու երբէք վախճան չի ունենայ։

Այս դիցաբանութեան մէջ արտայայտւում է եգիպտացիների այն գաղափարը բարւոյ և չարի մշտնջենական կռիւ մասին, թէ բարին, թէև յաղթել է չարին, բայց չէ կարողացել նրան ոչնչացնել, և կռիւը շարունակւում է յաւիտեան։

Նոյնն էր եգիպտացիների կարծիքով և մարդկային կեանքը. մահն էլ միշտ կամենում է մարդին ոչնչացնել, բայց նրա հոգին նորից կենդանանում և ապրում է. այդպէս դատելով, նրանք հաւատում էին, թէ մարդիկ մեռնելուց յետոյ էլ պիտի կեանք ունենան։


Երկրային կեանքը, նրանց կարծիքով, մի ժամանակաւոր կայարան էր միայն. դա մի կարճատև մասն էր այն յաւիտենական կեանքի, որի ոչ սկիզբը և ոչ էլ վախճանն է յայտնի։ Եւ այդ յաւիտենական կեանքի ամեն մի շրջանը, ինչպէս օրինակ երկրային կեանքը, համապատասխան էր արեգակի կամ Օզիրիսի մէկ օրւայ կեանքին. մարդու ծնելը արեգակի ծագումն էր, իսկ մահը — արեգակի մայր մտնելը արևմուտքում։ Մեռնելով մարդը թաղւում էր գիշերային խաւարի մէջ և ծնում

այնտեղ մինչև որ, Հօր—Օզիրիսի նման, նորից կը ծնուէր մի այլ աշխարհում։

ՄՈՒՄԻԱՆԵՐ

Հաւատալով, թէ մարդու մահից յետոյ, մարմնից բաժանուղ հոգին յաւիտեան ապրելու է տարբեր աշխարհներում և ուրիշ կեանքով, եգիպտացիք ենթադրում էին, որ կը գայ մի ժամանակ, երբ հոգին նորից կը վերադառնայ՝ երկրային կեանքով ապրելու։ Այդ ժամանակ նրանց կարծիքով հոգին նորից կուզենայ իր այն մարմնի մէջ մտնել, որից նա բաժանուել էր։ Անհրաժեշտ էր ուրեմն թոյլ չը տալ, որ մեռնողի մարմինը փտի ու ոչնչանայ, ընդհակառակը՝ պէտք էր միջոցներ ձեռք առնել, որ մարմինը երկար դարեր պահպանուի, որովհետև եթէ հոգին գայ ու չգտնի իր մարմինը, անվերջ տանջանքների կը ենթարկուի ու ինքն էլ կոչնչանայ։

Այսպէս հաւատալով, եգիպտացիք իրանց մեռելների դիակները թաղելուց առաջ զմռսում էին։ Նրանք դիակի փորոտիքն ու գանգի ուղը դուրս էին հանում և ապա, ժարմինը զանազան անուշահոտ իւղերով լաւ լուանալուց յետոյ, լցնում էին զմուռսով (մի տեսակ խէժ է) ու պինդ փաթաթում զմուռսի և անուշահոտ իւղերի մէջ թրջած քաթանի կտորներով։



Մումիա

Այս ձևով պատրաստուած դիակը կոչւում է մումիա և անաղարտ պահպանւում է հազարաւոր տարիներ։


Մումիան դնում էին նախ փայտէ և ապա քարէ դագաղների մէջ և ապա թաղում։

ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Միմիայն դիակը զմռսելով չէին բաւականանում եգիպտացիք։ Ենթադրելով, թէ մարդու երկրային կեանքը մի կարճատև մասն էր նրա վայելելիք յաւիտենական կեանքի, նրանք դեռ իրանց կենդանութեան ժամանակ այդ ապագայ կեանքի համար շատ շքեղ ու հոյակապ կացարաններ էին պատրաստում։ Դա եգիպտացիների դամբարաններն էին, որոնց մէջ մեծ խնամքով պահում էին մումիաները։

Ցոյն պատմաբաններից մէկը այդ մասին ասում է. «կենդանի մարդկանց բնակարանները եգիպտացիք հիւրանոցներ են անուանում, որովհետև այդ բնակարաններում ապրելը շատ կարճատև բան են համարում։ Իսկ դամբարանները, ընդհակառակը, նրանք մշտնջենական կացարան են համարում, որովհետև մարդիկ տեղափոխւում են դամբարանների մէջ յաւիտեան ապրելու։ Ահա թէ ինչու համար էլ նրանք շատ քիչ են հոգ տանում իրանց տները զարդարելու մասին, այնինչ իրանց դամբարանների հոյակապութեան մասին ոչինչ չեն խնայում»։ «Եւ յիրաւի,—աւելացնում է մի այլ՝ ժամանակակից պատմաբան,—եգիպտոսը կարելի է շատ աւելի մի գերեզմանատուն համարել, քան կենդանի մարդկանց մի երկիր։ Եթէ այդ երկրի դամբարանները չը լինէին, մենք ոչինչ չը պիտի իմանայինք նրա պատմութեան, կրօնի, սովորութիւնների, արուեստի մասին, սկսած ամենահին ժամանակներից։ Բաւական է մտնել մահուան այդ պալատները, դիտել զարմանալի կերպով պահպանուած պատերի վրայի քանդակներն ու նկարները իրանց բացատրական գրութիւններով, որպէսզի մեր առաջ կենդանանան ամեն մի սերունդի նիստ ու կացը, և այդ նիստ ու կացի տեսարանները կանգնեն մեր աչքերի առաջ այն աստիճան կենդանի ու որոշ, որ կարծես թէ մենք մեր աչքե-

բով տեսնում ենք այդ տեսարաններում մասնակցող կենդանի մարդկանց»։



Պիրամիդ

Եգիպտական այդ դամբարանները կոչւում էին մաստաբա։ Եւ ամեն մի եգիպտացի աշխատում էր անշուշտ,

իր կարողութեան և դիրքի համաձայն շքեղ ու փառաւոր մաստաբա ունենալ։

Իսկ աղքատ ու խեղճ դասակարգերը ոչ միայն մաստաբաներ չէին շինում իրանց համար, այլ և չէին էլ գմռսում իրանց մեռելների դիակները։ Նրանք դիակը աղում, կիզիչ արևի տակ չորացնում էին և ապա թաղում աւազի մէջ։

Փարաւոնները սովորական մաստաբաներով էլ չէին բաւականանում։ Նրանք, որ երկրի ամենամեծ և ամենակարող իշխանաւորներն էին, աշխատում էին, որ իրանց դամբարանները բոլոր եղածներից ամենաշքեղն ու հոյակապը լինեն։ Եւ իրրև դամբարան, նրանք մաստաբաների փոխարէն հսկայական պիրամիդներ (բուրգեր) էին շինել տալիս։ Հէնց որ գահի վրայ մի նոր փարաւոն էր բարձրանում, նա սկսում էր իր համար պիրամիդ շինել տալ, և որչափ երկար էր տևում նրա թագաւորութիւնը, այնչափ էլ հսկայական մեծութեան էր հասնում նրա պիրամիդը։


Թէ որպիսի վիթխարի գործ են ներկայացնում իրանցից եգիպտական պիրամիդները, կարելի է գաղափար կազմել այն բանից, որ ինչպէս հաշուել են, միայն մէկ պիրամիդի վրայ ծախսուած քարերով կարելի է մի պատ կառուցել 6 կանգուն (ֆուտ) բարձրութեամբ, երկու կանգուն լայնութեամբ և 4,500 վերստ երկարութեամբ։

Այդ պիրամիդները կառուցանելու վրայ տասնեակ տարիների ընթացքում հազարաւոր ստրուկներ էին աշխատում։

ՕԶԻՐԻՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Եգիպտացիք այնպէս էին հաւատում, թէ մեռնողի հոգին, բաժանուելով մարմնից, գնում է ստորերկրեայ աշխարհը՝ Օզիրիսի դատաստանին ներկայանալու, ուր Օզիրիսը 42 ուրիշ աստուած-

նների հետ միասին դատում են մեռածին ու արժանաւոր համաւոցում անօրինում։ Օզնական դատաւոր աստուածների թիւը Եգիպտոսի 42 նոմերի թուին էր համապատասխանում։ Դատաւորը, նեղ



Օզիրիսի դատաստանը

արդար էր ճանաչւում, արժանանում էր Օզիրիսի թագաւորութեան մէջ երջանիկ կեանք վայելելու, իսկ մեղաւորը դատապարտւում էր անհամար տանջանքների և ոչնչանալու։

Մինչև ահեղ դատաստանին ներկայանալը, մարդու հոգին պարտաւոր էր երկար ժամանակ թափառել և բազմաթիւ վտանգների ու փորձութիւնների միջով անցնել. նա պիտի մարտնչէր չար Սէթի ու նրան ծառայող բազմաթիւ հրէշների դէմ և ջանար խուսափել նրանց լարած որոգայթներից։ Եւ որպէսզի հոգին կարողանար այդ բոլոր փորձութիւններից անվտանգ ազատւել ու Օզիրիսի դատաստանին ներկայանալ, մեռածի ազգականներն ու բարեկամները յաճախ հոգեհանգիստներ էին կատարում և զոհեր մատուցանում աստուածներին։ Նրանք միևնոյն ժամանակ մեծ հոգ էին տանում և այն մասին, որ մեռածի հոգին կարողանայ անպատճառ պարզ երես դուրս գալ Օզիրիսի դատաստանում ու արդար ճանաչւել։ Այդ նպատակի համար եգիպտացիք մի գիրք ունէին, որ կոչւում էր «Մեռելների գիրք» և որ նրանք դնում էին մումիայի ծալքերի մէջ։ Այդ գիրքը պատկերազարդ էր և նրա մէջ մանրամասն նկարագրւած էին, թէ՝ ինչպիսի ճանապարհներով պիտի թափառի հոգին, ինչ փորձութիւնների պիտի հանդիպի, ինչպէս պիտի լինի այդ դատաստանը և ինչպէս պիտի պաշտպանւի հոգին, որպէսզի կարողանայ արդար ճանաչւել ահեղ դատաւորներից։ «Մեռելների գրքի» այս վերջին մասը, դատաւոր-աստուածների թւի համաձայն, բաղկացած էր 43 կէտերից, որոնց մէջ թւում էին մարդկանց այն բոլոր գործերը, ինչ որ եգիպտացիների հասկացողութեամբ մեղք էր համարւում. Դատաւորը, իւրաքանչիւր դատաւորին առանձին-առանձին դիմելով, պէտք է թւէր, թէ ինքը այս և այն մեղքերը չէ գործել։ Այսպէս օրինակ՝ նա պիտի ասէր.—«Ես գողութիւն չեմ արել, մարդ չեմ սպանել, սուտ չեմ խօսել, խեղճերին չեմ զրկել», և այլն։

Այնպիսի մարդիկ, որոնք միջոցներ չունէին «Մեռելների գիրքը» ամբողջապէս ձեռք բերելու, իրանց մեռելի հետ թաղելու համար, աշխատում էին գոնէ նրա մի մասը, գէթ մի թերթիկն ունենալ։ Իսկ բոլորովին խեղճերը այդ մի թերթիկից էլ զուրկ էին մնում և իրանց մեռելները թաղում էին առանց գրքի։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Եգիպտացիք հաւատացած էին, թէ դատաւոր աստուածները մարդկանց մեղքերի մասին ամենաճիշտ տեղեկութիւններն ունէին, ուստի անհնարին էր դատաստանի ժամանակ դատաւորներին խաբելը։ Եւ այդ բացատրում էին նրանով, թէ աստուածները շարունակ շրջում էին երկրի վրայ և դիտում ու նշանակում մարդկանց բոլոր բարի ու չար գործերը։ Եւ որպէսզի մարդիկ նրանց չը ճանաչեն, աստուածները իրանց իսկական կերպարանքով չէին շրջում, այլ թագնւում էին զանազան կենդանինեբի մարմնում։ Այդպիսով եգիպտացիք ամեն մի կենդանու մէջ մի որևէ աստուած էին ենթադրում թագնւած և սաստիկ վախենում էին նրանցից, միշտ և ամեն կերպ աշխատելով նրանց սիրաշահած լինել։



Սֆինքս

Այդ եղանակով էին գոնէ բացատրում եգիպտոսի ուսեալները իրանց երկրում տարածւած կենդանիների պաշտամունքը։

Բացի իրապէս գոյութիւն ունեցող կենդանիներից

եգիպտացիք պաշտում էին և այնպիսիները, որոնք պարզապէս երևակայութեան արդիւնք էին։ Այսպէս՝ նրանք հաւատում էին, թէ կայ մի թռչուն, *Ֆէնիքս* անունով, որը 500 տարին մէկ անգամ յայտնւում է և ապա իրան գցում է կրակի մէջ այրւում ու իր մոխրի միջից նորից ծնւում։ Նրանք նոյնպէս հաւատում էին, թէ գոյութիւն է ունեցել մի հրէշ, որի գլուխը եղել է մարդու, իսկ մարմինը առիւծի։ Այդ հրէշը կոչւում էր *Սֆինքս* և նրա վիթխարի արձանը մինչև օրս էլ կայ եգիպտոսում, Գայիրէից ոչ շատ հեռու, հռչակաւոր պիրամիդների մօտ։

ԳԼԽԱՒՈՐ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՍՏՒԱԾՆԵՐԸ

Թանի դեռ եգիպտական պետութիւնը չէր կազմակերպւել մի ընդհանուր փարաւոնի գերիշխանութեան ներքոյ և երկիրը բազմաթիւ ինքնավար իշխանութիւնների՝ նոմերի՝ էր բաժանւած, բոլոր աստւածներն ու պաշտւած կենդանիներն էլ ամեն տեղ միևնոյն պատիւն ու յարգանքը չէին վայելում։ Ամեն մի նոմ կամ քաղաք իր առանձին խնամակալ աստւածն ու սուրբ կենդանին ունէր, որոնք միւս նոմերի աստւածներից աւելի զօրաւոր ու գերազանց էին համարւում։ Կային նոյնիսկ այնպիսի կենդանիներ, որոնց մի տեղ շատ մեծ սուրբ էին համարում, իսկ մի այլ տեղ նրանց կոտորում էին։ Այդպիսի կենդանիներից էր օրինակ *կոկոդրիլոսը*։

Բայց պետութիւնը կազմակերպւելուց յետոյ, երբ ամբողջ եգիպտոսի միակ տէրն ու կառավարողը փարաւոնը հանդիսացաւ, իսկ նոմարքոսները նրա սատրապներն դարձան, եգիպտացիների հասկացողութիւնն էլ իրանց աստւածների վերաբերեալ փոխւեց։ Նրանց հասկացողութեամբ, ինչպէս որ երկրային իշխանաւորներից ամենազօրաւոր և գերագոյն իշխանութիւն ունեցողը մէկն

էր՝ փարաւոնը, այնպէս էլ աստուածներից ու սուրբ անասուններից մէկը միայն պէտք է, որ գերագոյն իշխանութիւն և գօրութիւն ունենար։ Եւ այդ գերագոյն աստուածը համարւեց Ռա աստուածը, իսկ գերագոյն սուրբը՝ Ապիս եզը, այսինքն՝ ճիշտ այն քաղաքի (Մեմֆիս) խնամակալ աստուածները, որն առաջին փարաւոնների թագաւորանիստ քաղաքը դարձաւ։

Ռա՛ն ամենակարող էր. նա էր ստեղծել աշխարհը, լոյսը և բոլոր միւս աստուածներին։ Բայց Ռա՛ն իր գործունէութեան մէջ միայնակ չէր. նա բազմաթիւ օգնականներ ունէր—քամու աստուածը, Շու անունով, լուսնի աստուածը՝ Ցօտ և ուրիշներ։ Այս աստուածների անունով հոյակապ տաճարներ կային, որոնց մէջ աստուածների արձաններն էին պահւում։



Ապիս եզը

Նոյնպէս մեծ պատիւ ու հռչակ ունէր Ապիս եզը, որը մի առանձին հոգատարութեամբ ու խնամքով պահւում էր նրա անունով յատկապէս շինուած փառահեղ տաճարում։ Ապիսը հասարակ եզներից չէր. նա երեսունի չափ առանձնայատուկ նշաններ ունէր, և այդ պատճառով էլ շատ հազւագիւտ էր։ Հէնց դրա համար էլ Ապիսի մահը ընդհանուր սուգի մէջ էր գցում բոլոր եգիպտացիներին, ինչպէս և ընդհանուր ցնծութիւն ու տօնախմբութիւն էր տեղի ունենում, երբ յայտնւում էր մեռածի տեղ մի նոր Ապիս գտնել։

Աւելի ուշ ժամանակներում եգիպտոսի քուրմերը միաստուածութեան գաղափարն էին ընդունել, բայց այդ գաղտնի էին պահում ճնացած ժողովրդից։

Եգիպտոսում հնուքը տաճարները մի-մի մութ սենեակ էին իրանցից ներկայացնում, որոնց մուտքի մօտ դրօշակ էին ծածանեցնում, որպէսզի հաւատացեալների ուշադրութիւնը գրաւեն։ Բայց աւելի ուշ եգիպտացիք սկսեցին շատ փառահեղ ու հսկայ շէնքեր շինել իրանց տաճարների համար։ Մինչև օրս էլ մեծ հիացմունք ու զարմանք են պատճառում նայողին եգիպտական տաճարների աւերակներն իրանց գեղեցկութեամբ ու ընդարձակութեամբ։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՐԵՐՆ ՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եգիպտացիք գրում էին հիերօգլիֆներով։ Գրելու այդ եղանակը բաւականին մեծ յարմարութիւններ ունի մանաւանդ այնպիսի ժամանակի կամ տեղի համար, երբ մարդիկ իրանց ուզածը փորագրում էին քարերի վրայ.




Հիերոգլիֆներ

կոպիտ գործիքներով խոշոր նշանագրեր փորելն աւելի հեշտ է, քան նուրբ տառեր փորելը։ Եգիպտական տաճարների պատերն ու փարաւոնների թողած հսկայական յուշարձանները կամ կոթողները, որոնք մանաւանդ ամենահին ժամանակներին են պատկանում, ամբողջապէս ծածկւած են հիերօգլիֆներով։

Աւելի ուշ ժամանակներում, երբ եգիպտացիք սկսեցին պապիրուսի վրայ գրել, այսինքն՝ երբ անհրաժեշտ էր թէ արագ և թէ մանր ու սեղմ գրել, նրանք սովո-

ւած էին իրանց նշանագրերը կրճատել։ Այսպէս՝ փոխանակ մի ամբողջ թռչուն նկարելու, նկարում էին միայն նրա կտուցը կամ կտուցի նմանող մի գիծ։ Իսկ այդ կրճատումների հետևանքը վերջ ի վերջոյ այն եղաւ, որ



Կրճատւած հիերօգլիֆներ

ստացւեց մի այլ տեսակի գիր, որն այլևս բոլորովին չէր նմանում հիերօգլիֆներին։

Եգիպտոսում գտնւած պապիրուսներից տեղեկանում ենք, որ այդ երկրի ուսումնականները, այն է՝ քուրմերը դեռ շատ վաղ ժամանակից զբաղւել ու մշակել էին գիտութիւնների մի քանի այնպիսի ճիւղերը, որոնք միշտ պէտք են գալիս առօրեայ կեանքում։ Այսպէս՝ գտնւել են գրութիւններ բժշկութեան վերաբերեալ, գտնւած են մինչև իսկ գրւած դեղատոմսեր։ Կան գրութիւններ աստղաբաշխութեան վերաբերեալ, որի մէջ եգիպտացիք բաւականին առաջ էին գնացել. նրանք ունէին իրանց տարետոմարը, որի համաձայն տարին 365 օր էին հաշւում, այսինքն՝ 6 ժամով մերինից պակաս։ Այդ տարբերութիւնն աճելով, 1460 տարւայ ընթացքում 365 օրւայ էր հաւասարւում, ուստի 1460 տարին մի անգամ եգիպտացիք ուղղում էին իրանց տոմարը։ Եգիպտացիների նոր տարին սկսւում էր յունիսի 20-ից, այսինքն՝ այն օրւանից, երբ Նեղոսի հեղեղումն էր տեղի ունենում։


Աստղաբաշխութիւնից շատ աւելի եգիպտոսում զարգացած էր աստղագիտութիւնը, այսինքն այն սխալ ուսմունքը, որի համաձայն մարդիկ կարծում էին՝ թէ երկնային մարմինների բոլոր շարժումները որոշ կապ և նշանակութիւն ունեն երկրում կատարւող դէպքերի հետ։ Հէնց այդ հիման վրայ էլ աստղագետներն աշխատում էին աստղերի կամ երկնային այլ մարմինների զանազան շարժումների համաձայն գուշակութիւններ անել մարդկանց համար։ Այդ սխալ հասկացողութիւնից առաջ էր եկել կախարդութիւնը, որը չափազանց տարածւած էր Եգիպտոսում։



Ռամզէս Բ. փարաւոնի կոթողը

Եգիպտացիք թւաբանութիւնն էլ բաւական լաւ գիտէին, միայն թէ նրանց գրաւոր հաշւելու եղանակը չափազանց բարդ և դժւար էր։ Այսպէս՝ 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9 թւանշանների համար նրանք գրեր չունէին, այլ ունէին միայն 1, 10, 100, 1000, 10000 և 100000, այնպէս որ 35 գրելու համար գրում էին 10+10+10+ 1+ 1+ 1 + 1+ 1, իսկ դիցուկ 231, 465 գրելու փոխարէն պիտի գրէին՝ 100000+ 100000 + 10000+10000+ 10000+1000+100 + 100 +100+100 + 10+10+10+10+ 10 +10 + 1 + 1 + 1 + 1 + 1։

Գիտութիւններից աւելի գեղարւեստն էր զարգացած Եգիպտոսում, այն է՝ նկարչութիւնն ու մանաւանդ քանդակագործութիւնը։ Եգիպտական նկարիչները մարդկանց համարեաթէ միշտ «պրօֆիլ» էին նկարում, այսինքն դէմքի մի երեսը։ Բացի դրանից, հեռանկարի մասին



Քէփրէնի արձանը

հասկացողութիւն չունենալով, նրանք միմեանց յետևում գնում գնում առարկաները նկարում էին այնպէս, որ կարծես թէ միմեանց վրայ են դարսած։

Բանդակագործութեան մէջ եգիպտացիք աւելի էին առաջ գնացել։ Նրանք կարողանում էին քարի վրայ ոչ միայն ճշտութեամբ դուրս բերել մարդկանց կերպարանքը, այլ և նրանց դէմքի արտայայտութիւնը։ Յաճախ քանդակելուց յետոյ նրանք զանազան գոյներով ներկում էին քանդակուածի դէմքը, մազերը, հագուստները և այլն, որով քանդակը աւելի կենդանութիւն էր ստանում։

ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսի քաղաքական ամբողջ պատմութիւնը երեք մեծ շրջանների է բաժանւում,—Հին, Միջին և Նոր։

Հին շրջան.—Հին շրջանը սկսւում է Մէնէս թագաւորից, որը Եգիպտոսի վերին և ստորին թագաւորութիւնները մէկ իշխանութեան տակ էր միացրել ու մի ընդհանուր պետութիւն հիմնել։

Երկար ժամանակ կարծւում էր, թէ Մէնէս անունով փարաւոն գոյութիւն չէ ունեցել Եգիպտոսում, այլ որ դա մի առասպելական անձնաւորութիւն է։ Բայց վերջին ժամանակներում պատահմամբ գտնւեցին թէ Մէնէսի և թէ նրա մի քանի յաջորդների գերեզմանները, իրանց անունների մակագրութեամբ հանդերձ, որից յետոյ այլևս կասկածից դուրս է Մէնէսի պատմական անձնաւորութիւն լինելը։

Մէնէսը ապրել է մօտաւորապէս 5000 տարի Ք. ծ. առաջ։ Նրա սերունդը թագաւորել է 250 տարի, որից յետոյ թագաւորական իշխանութիւնը անցել է մի ուրիշ սերունդի։ Պատմական հին շրջանը կոչւում է Նոյնպէս և Մեմֆիսեան շրջան, որովհետև այդ շրջանում փարաւոնների թագաւորանիստ քաղաքը միշտ Մէնէսի շինել տւած Մեմֆիան էր։

Այդ շրջանը տևել է մօտ 1500 տարի, որի ընթացքում թագաւորել են 10 թագաւորական սերունդներ կամ հարստութիւններ։ Այդ սերունդներից մի քանիսը խիստ հռչակաւոր են եղել իրանց գործերով, մանաւանդ հռչակաւոր էին չորրորդ սերունդին պատկանող փարաւոնները, որոնք կոչւել են՝ «պիրամիդներ կառուցողներ»։

Միջին շրջան.—Յայտնի չէ թէ ինչպէս կամ ինչպիսի ներքին քաղաքական հանգամանքների պատճառով է ստորին Եգիպտոսը կորցրել իր գերիշխող դիրքը և Մեմֆիսը դադարել այլևս ամբողջ Եգիպտոսի մայրաքաղաքը լինելուց։ Յայտնի է միայն, որ XI-րդ թագաւորական

հարստութեան հէնց առաջին փարաւոնի օրով Եգիպտոսի մայրաքաղաքը սկսել է Թէբէն համարուել, այսինքն՝ ստորին Եգիպտոսի հին մայրաքաղաքը։

Այդ ժամանակից էլ սկսւում է Եգիպտոսի պատմութեան *Միջին կամ Թէբէական* շրջանը։ Այդ շրջանի փարաւոններն էլ երկու թագ էին կրում իրանց գլխին, ինչպէս և Մեմֆիսեան շրջանի փարաւոնները։

Թէբէեան շրջանի թագաւորներից ամենանշանաւորները եղել են XII-րդ հարստութեան փարաւոնները, որոնք թագաւորել են 213 տարի, և որոնց օրով Եգիպտոսը իր զարգացման ու բարգաւաճման վերին աստիճանին էր հասել։ Այդ փարաւոնների թագաւորութեան շրջանը Եգիպտոսի ոսկէ դարն է համարւում։ Երբէք եգիպտական ժողովուրդը այնպէս հանգիստ ու անդորը կեանք չէ վայելել, ինչպէս այդ փարաւոնների օրով։ Սրանք իրանց նպատակ էին դրել՝ ընդարձակել Եգիպտոսի սահմանները հարաւի կողմից, բազմամարդ դարձնել նրան, գեղեցիկ ու հոյակապ շէնքերով զարդարել ամենայատկանշական քաղաքներն անգամ և, կարելիին չափ, շատացնել ջրանցքների թիւը։ Եւ նրանք իրանց այդ նպատակը աւանդում էին որդոց-որդի, որն հետզհետէ իրագործւում էր ամբողջ 200 տարւայ ընթացքում։

XII-րդ հարստութեան պատկանող Ամենեմհատ III-րդ փարաւոնի օրով է շինւել Մէօրիս անունով հռչակաւոր արհեստական լիճը, որը մինչև օրս էլ կայ Մեմֆիսից ոչ շատ հեռու։ Դա մի շատ ընդարձակ աւազահանման փոս տեղ էր, գետից բաւականին հեռու ընկած։ Ամենեմհատ III-րդը այդ փոսը աւելի ևս ընդարձակել ու խորացնել տւեց և ապա ջրանցքներով միացրեց մի կողմից աւելի հեռու ընկած բնական լճի, իսկ միւս կողմից՝ Նեղոսի հետ։ Այդպիսով ստացւել էր մի հսկայական ջրամբար, որը հեղեղումների ժամանակ լցւում և փակւում էր, իսկ

ջրի սակաւութեան ժամանակ բացւում և ջուր էր մատակարարւում դաշտերին։

Այդ լճի մէջ տեղում Ամենեմհատ III-րդը հրամայել էր իր և իր կնոջ արձանները կանգնեցնել, իսկ լճի մուտքից ոչ շատ հեռու նա մի ընդարձակ և փառաւոր շինութիւն էր կառուցել, Հօ-ալէ-քօ-հունղ անունով, որ նշանակում է՝ լճի մուտքի մօտ պալատ։ Յոյներն այդ անունը աղաւաղելով կոչում էին լաբիրինթոս։

Հէնց այդ անունով էլ յայտնի է գրականութեան մէջ այդ հռչակաւոր շինութիւնը, որն այժմ աւերակ է։

ՀԻԻՔՍՈՍՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Եգիպտոսն առատ ու լիսատ բերրի երկիր լինելու համբաւը շատ վաղ էր տարածւել հարևան երկիրներում։ Այդ պատճառով էլ Ասիայից թափառական խաշնարած ցեղերը յաճախ, երաշտից փախչելով Եգիպտոս էին գալիս փոքրիկ խմբերով, քաղցից ազատւելու համար։ Սուէզի պարանոցի միակ ճանապարհը փակող հսկայական պարիսպը վերջ ի վերջոյ անզօր էր հանդիսացել քաղցից փախչողների առաջը կարելու, որոնք գալիս էին՝ ոմանք Եգիպտոսում մշտապէս ճնալու նպատակով, իսկ ոմանք էլ պաշար էին վերցնում ու նորից իրանց երկիրը վերադառնում.

Այս վերջին կարգի այցելուներից էր նոյնպէս իսրայելացի Աբրահամը, որի մասին պատմւում է Աստւածաշունչի մէջ։

Որովհետև եգիպտացիք օտարականներին սաստիկ չէին սիրում ու «պիղծ» էին համարում, ուստի փարաւոնները Եգիպտոսում ընդմիշտ ճնացող օտարականների



Ասիացի գաղթականները

համար մի որոշ տեղ էին յատկացրել ապրելու Դելտայի մի անկիւնում, որպէսզի նրանք ոչ մի առնչութիւն չունենան բնիկների հետ:

Այդպէս շարունակւեց մինչև փարաւոնների XIII-րդ հարստութեան օրերը, երբ Եգիպտոսում ներքին խիստ պառակտումներ սկսւեցին ու միաժամանակ երկու փարաւոններ սկսեցին թագաւորել, մէկը՝ Վերին, իսկ միւսը՝ Սորին Եգիպտոսում: Վերին Եգիպտոսում թագաւորողը XIII-րդ հարստութեանն էր պատկանում, իսկ Սորին Եգիպտոսում թագաւորողն իրան արդէն XIV-րդ հարստութեան հիմնադիրն էր համարում:

Այդ ներքին պառակտումներից օգուտ քաղելով, Ասիայից մի ահագին գաղթականութիւն խուժեց Եգիպտոս (2000 թ. Ք. ա.): Դա բազմաթիւ փոքրիկ տոհմերից կազմւած մի մեծ ժողովրդային զանգւած էր, որ պատմութեան մէջ յայտնի է հիւքսոս, այսինքն՝ հովիւների թագաւոր անունով: Այդ զանգւածի մէջ կային ցեղեր, որոնք իրանց շատու էին անւանում, որ նշանակում է աւազակ, բայց կային և այնպիսիները, որ պարզապէս թափառական խաշնարածներ էին:

Դրանք եգիպտացիների համեմատութեամբ կատարեալ բարբարոսներ էին և եկել էին, ոչ թէ Եգիպտոսում ապաստան գտնելու, այլ նրան նւաճելու և այնտեղ հաստատւելու նպատակով: Եգիպտացիք սակայն շուտով անձնատուր չեղան. երկար տարիներ կատաղի կռիւներ մղեցին, մինչևոր իսպառ թուլացան և ընկճւեցին: Սկզբում անձնատուր եղաւ Սորին Եգիպտոսը, այնինչ Վերին Եգիպտոսը, ուր XV-րդ հարստութեան փարաւոններն էին թագաւորում, դեռ երկար ժամանակ մարտնչում էր հիւքսոսների դէմ: Սրանք, այնուամենայնիւ, Վերին Եգիպտոսը նւաճելուց յետոյ էլ շատ չը տարածւեցին այն կողմերում, այլ շատ աւելի հաստատւեցին Սորին Եգիպտոսում:

Բարբարոսների տիրապետութիւնը Եգիպտոսում տեւեց մօտ 250 տարի, որի ժամանակաընթացքում թագաւորող XVI-րդ հարստութեան բոլոր փարաւոնները հիւքսոսների ցեղին էին պատկանում:

Հէնց այդ հարստութեան վերջին փարաւոններից մէկի օրով էր, որ Իսրայէլացի Յակովբն իր որդիներով Եգիպտոս գաղթեց բնակւելու իր սիրած Յովսէփ որդու մօտ, որին եղբայրները տարիներ առաջ ծախել էին, իսկ նա, Եգիպտոս տարւելով, բաղդի բերմամբ, շատ մեծ դիրքի ու պաշտօնի էր հասել:

Եգիպտոսում հաստատւելով հիւքսոսները հետզհետէ եգիպտական կուլտուրային ենթարկւեցին և միանգամայն իւրացրին տեղական բոլոր սովորութիւնները ու ամբողջ քաղաքակրթութիւնը: Նրանք ժամանակի ընթացքում նորոգեցին և նորից կառուցին այն բոլոր հաստատութիւնները, ինչ որ իրանց արշաւանքի սկզբի տարիներում քանդել, աւերել և ոչնչացրել էին:

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

Որչափ էլ Հիւքսոսները իւրացնէին եգիպտացիների քաղաքակրթութիւնն ու սովորութիւնները, այնուամե-

նայնիւ նրանց լուծը չափազանց ծանր էր եգիպտացիների համար։ Սրանք ամբողջ 200 տարւայ ընթացքում համարեա թէ երբէք չէին դադարում այդ օտարականների դէմ մաքառելուց։ Մաքառումը չափազանց խիստ ու յատուկ էր մանաւանդ Վերին Եգիպտոսում, որտեղ Թէբէ քաղաքը ազատագրական շարժումների մի անշէջ օջախ էր ներկայացնում։

Այդ երկարատև ու ծանր կռիւները վերջացան նրանով, որ եգիպտացիք վերջապէս յաջողեցին դուրս քշել հիւքսոսներին Վերին Եգիպտոսից։

Շատ ժամանակ չանցած, Ահմէս I փառաւոր նուաճողութեամբ նրանք հիւքսոսներին մի լաւ ջարդ տուեցին և իսպառ դուրս վանեցին Եգիպտոսից, ամբողջ երկիրը վերջնականապէս ազատելով օտար տիրապետութիւնից։

Յաղթական Ահմէսը առաջարկեց բոլոր օտարականներին՝ կամ հեռանալ Եգիպտոսից և կամ ծառայել, իբրև բոլորովին իրաւազուրկ հպատակներ։ Օտարականների մեծ մասը դուրս գնաց Եգիպտոսից, բայց եղան այնպիսիներն էլ, որոնք ընդունելով Ահմէսի սոսկալի պայմանները, համաձայնեցին ծառայ։

Այս վերջիններից էին նաև իսրայէլացի Յակոբի սերունդի մարդիկ, որոնք սակայն, վերջ ի վերջոյ անկարող լինելով դիմանալ եգիպտացիների ձեռքից կրած զրկանքներին ու տառապանքներին, նոյնպէս թողին հեռացան Եգիպտոսից Մովսէսի առաջնորդութեամբ։

Հիւքսոսներին դուրս վանելու ժամանակից սկսւում է Եգիպտոսի պատմութեան նոր շրջանը, որ բոլորովին տարբեր բնաւորութիւն է կրում։

Հիւքսոսների երկարատև տիրապետութիւնը, նրանց հետ ունեցած անվերջ կռիւները միանգամայն փոխել էին եգիպտացիների խաղաղ բնաւորութիւնը և նրանց


խիստ պատերազմասէր էին դարձրել։ Նրանք ոչ միայն, առաջւան պէս, առանձնացած ու փակւած կեանք չէին վարում, այլև յաճախ արշաւանքներ էին գործում ասիական ժողովուրդների վրայ և նոր ու նոր երկիրներ գրաւում։ Նրանք կարծես թէ կամենում էին այդ ժողովուրդներից վրէժ լուծել այն անպատուութեան համար, որ հասցրել էին իրանց հիւքսոսները։

Եգիպտոսի պատմութեան այս նոր շրջանը տևեց մինչև 525 թ. Ք. ծ. առ. և այդ ժամանակաընթացքում նրա դերիշխանութիւնը երբեմն տարածւում էր մինչև Եփրատ գետը։ Շատ յաճախ էր պատահում, որ Եգիպտոսի տիրապետութեան տակ ընկնէին՝ Սիրիան (Ասորիքը) իր բազմաթիւ մեծ ու փոքր թագաւորութիւններով, Պաղեստինը, Փիւնիկեան և այլ շատ աւելի զօրաւոր երկիրներ։ Այդ շրջանումն է, որ օտար ազգերի հետ յաճախ շփւելով, Եգիպտոսում շատ զարգացան վաճառականութիւնն ու արհեստները, նամանաւանդ նաւագնացութիւնն ու ռազմական գիտութիւնները։

Բարբարոս ցեղերին դուրս վանելուց յետոյ, եգիպտացիք վերանորոգեցին նրանց քարուքանդ արած բոլոր քաղաքները, պալատներն ու տաճարները։ Փիւնիկեցի և յոյն վարժ նաւավարներ հրաւիրելով, փարաւոնները ընդարձակ նաւագնացութիւն հաստատեցին թէ Կարմիր և թէ Միջերկրական ծովերի վրայ։ Նաւագնացութիւնն ու վաճառականութիւնը հետզհետէ այնպիսի մեծ նշանակութիւն ստացան եգիպտացիների համար, որ վերջին՝ XX-րդ հարստութեան՝ փարաւոններից մէկը մտածում էր, Սուէզի պարանոցը կտրելով, ջրանցք փորել տալ և Կարմիր ու Միջերկրական ծովերը իրարու միացնել։ Դա մի այնպիսի հսկայական ձեռնարկութիւն էր, որի մասին տասնեակ դարեր այլևս ոչ ոք չէր մտածում, մինչև որ 1869 թ. միայն իրագործութիւն ստացաւ ֆրանսիացիների ձեռքով։

Օտար ազգերի հետ յաճախակի շփւելով, եգիպտացիք այլևս ոչ միայն արհամարհանքով չէին վերաբերւում դէպի օտարները, այլ և մեծ բազմութեամբ օտար ազգի գինւորներ էին վարձում, նրանց հողաբաժիններ էին տալիս և թողնում իրանց երկրում բնակւելու։ Եւ այդ օտարազգի գինւորականները մի ժամանակ այնպիսի մեծ դիրք էին գրաւել ու այնպիսի ոյժ ստացել, որ յաճախ փարաւոններին գահընկեց էին անում ու իրանց հրամանատարներին գահ բարձրացնում։

Այդ արդէն Եգիպտոսի ներքին խռովութիւնների շրջանն էր, երբ նա հետզհետէ թուլանում և դէպի անկումն էր գնում։ Եգիպտոսը թուլացաւ նամանաւանդ այն ժամանակ, երբ Առաջաւոր Ասիայում Ասորեստանը խիստ զօրացաւ։ Ասորեստանի դէմ մաքառումը մի քանի հարիւր տարի տևեց, մինչև որ երկու հզօր տէրութիւնները էլ ուժասպառ եղան ու իրանցից աւելի մեծ զօրութեան հասած պարսից տիրապետութեան տակ ընկան (525 թ. ք. ծ. ա.)։



ՄԻՋԱԳԵՏՔ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ


Մարդկային ցեղի ամենահին քաղաքակրթութեան օրրաններից մէկն էլ Միջագետքն է՝ այն երկիրը, որ ընկած է Եփրատ և Տիգրիս գետերի միջև։ Ինչպէս որ Եգիպտոսը Նեղոսի պարգևն ու ստեղծածն է, այնպէս էլ Միջագետքի Հարաւային մասը այդ երկու ասիական մեծ գետերի պարգևն ու ստեղծածն է։

Տիգրիսն ու Եփրատը, սկիզբն առնելով Հայաստանի լեռներում, համարեա թէ զուգահեռական գծերով հոսում են և գնում թափւելու Պարսից ծովը։ Բայց դեռ ծովին չը հասած նրանք միանում և Շատ-էլ-Արաբն են կազմում։

Շատ հին ժամանակներում Շատ-էլ-Արաբն էլ Նեղոսի այժմեան Դելտայի նման գոյութիւն չուներ. երկրի այն ամբողջ մասը, ուր այժմ այդ միացեալ գետերն են հոսում, ջրի տակն էր գտնւում, իսկ Տիգրիսն ու Եփրատը, զուգահեռական կերպով, առանձին-առանձին էին թափւում ծովը, իւրաքանչիւրն իր առանձին դելտան կազմե-

լով։ Ժամանակի ընթացքում այդ գետերի բերած տիղմը լցրել, բարձրացրել է ծովի յատակը, որի շնորհիւ ջուրը կամաց-կամաց յետ է քաշւել, և գետերն էլ միացել են։

Այդ նոյն տիղմը ամեն գարուն, գետերի վարարման ժամանակ, տարածւելով երկրի վրայ, չափազանց արգաւանդ է դարձրել Միջագետքի հողը մանաւանդ նրա հարաւային մասում, որ յայտնի է պատմութեան մէջ Քաղդէա և Բաբելոն անուններով։



Եփրատը, Բաբելոն քաղաքի աւերակների մօտ։

Ներկայումս Քաղդէան մի համարեա թէ անմարդաբնակ անապատ է իրանից ներկայացնում. մարդկային բնակութիւնները պատահում են գետերի ափերին մօտ տեղերում միայն, իսկ մնացած ընդարձակ դաշտավայրերը միանգամայն անմշակ են թողնւած և վայրի գազաններով ու թունաւոր օձերով են միայն բնակւած։

Բոլորովին այլ էր այդ երկիրը շատ հին ժամանակներում. դա էլ Եգիպտոսի նման արհեստական ջրանցքների միջոցով էր ոռոգւում և վերին աստիճանի ծաղկած ու հարուստ էր բուսականութեամբ։ Ահա թէ ինչ է ասում այդ երկրի պտղաբերութեան մասին պատմագիրների հայր Հերոդոտը, որը անձամբ շրջել էր այդ երկրում.

«Բաբելոնը երկրագործութեան համար ամենայարմար երկիրն է։ Բերքը այնտեղ ստացւում է մէկին 200 իսկ յաջող տարիներին՝ 300։ Ցորենի ու գարու տերևները շատ անգամ չորս մատ լայնութիւն ունեն։ Իսկ թէ ինչպիսի բարձրութեան է հասնում կորեկը, այդ մասին լաւ եմ համարում լռել, որովհետև ոչ ոք չը պիտի հաւատայ ասածներիս, եթէ չի եղել Բաբելոնում։ Այդ երկրում ծառեր չկան. ո՛չ թուզ, ոչ խաղող և ոչ էլ ձիթը, բայց արմաւենին աճում է ամեն տեղ և համարեա բոլորն էլ պտղատու են։ Ալմաւը թէ ուտում են և թէ նրանից մեղր, գինի, քացախ և այլ շատ բաներ պատրաստում»։

Քաղդէայի ամենահին բնակիչները *Թուրանական* կամ դեղին ցեղին էին պատկանում։ Նրանք այդ երկիրն էին եկել անյիշելի ժամանակներում Ուրալեան և Ալտայեան լեռների միջև ընկած ընդարձակ դաշտավայրից Սիբիրիայից։ Հնումն այդ ժողովուրդը յայտնի էր Քաղդէայի *Սումէր* և *Ակադ*՝ ամենահին երկու քաղաքների անուններով. նրանց կոչում էին *Սումէրները* և *Ակադացիները*։ Սումէր քաղաքը Քաղդէայի հարաւային մասումն էր գտնւում, իսկ Ակադը նրանից աւելի հիւսիս։

Սումէր-ակադացիները, ինչպէս այդ երևում է նրանց աւանդութիւնից, իրանց նոր հայրենիքը տեղափոխւելով, սկզբում թափառական կեանք էին վարում և որսորդութեամբ ու խաշնարածութեամբ պարապում։ Բայց յետոյ, գնահատելով իրանց նոր հայրենիքի չափազանց բերրի հողը, նրանք սկսում են երկրագործութեամբ պարապել։ Այստեղ էլ, ինչպէս Եգիպտոսում, հսկայ գետերի պարբերական հեղեղումները վարժեցնում են նրանց անխոնջ և միահամուռ աշխատանքի, և այդ աշխատանքի շնորհով Քաղդէան ծածկւում է արհեստական ջրանցքներով, ճահճային տեղերը ցամաքացւում են, ամայի վայրերը ջրրւում և երկիրը մշակւում ու լցւում է բազմաթիւ շէն գիւղերով ու քաղաքներով։ Ջրաբաշխական կառուցւածքները

Քաղդէայում շատ աւելի վաղ ու շատ աւելի հմտութեամբ էին շինւած, քան Եգիպտոսում։

ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Քաղդէայի ժողովրդի գլխաւոր զբաղմունքը երկրագործութիւնն էր։ Իսկ արհեստներից այնտեղ մանաւանդ զարգացած էին՝ մետաղագործութիւնը, ջուլհակութիւնը և որմնադրութիւնը։

Մետաղներ մշակելու արւեստը սումէր-ակադացիները բերել էին դեռ իրանց հայրենիքից՝ Սիբիրից, ուր հանքերի առատութեան պատճառով աւելի վաղ էր զարգացել մետաղագործութիւնը։ Ամենագործածական մետաղը Քաղդէայում բրոնզն էր. բոլոր զէնքերն ու գործիքները շինւում էին բրոնզից, իսկ երկաթը գործ էր ածւում զարդարանքի առարկաներ պատրաստելու համար։ Քաղդէայում պատրաստւած մետաղէ իրերը, ինչպէս և ջուլհակների գործած զանազան կտորեղէններն ու խալիները շատ գնահատւած էին հարևան երկիրներում։



Քաղդէացի կինը

Քաղդէայում անտառներ և քար չը կայ։ Սումէր-ակադացիներն իրանց բնակարաններն ու այլ կառուցւածքները ցեխից էին շինում. ցեխից աղիւսներ էին պատրաստում ու չորացնում արևի տակ։ Աղիւսն աւելի դիմացկուն դարձնելու նպատակով, նրանք ցեխի հետ մանր յարդ էին խառնում։ Իսկ աւելի ուշ նրանք սո-

վորեցին թրծել աղիւսը, որից յետոյ աղիւսագործութիւնն ու որմնադրութիւնը սաստիկ զարգացան այդ երկրում։

Շարունակ ցեխի կամ թաց կաւի հետ գործ ունենալով, սումէր-ակադացիները շատ լաւ վարժւել էին նաև փորագրութեան ու քանդակագործութեան արւեստին։ Նրանց տաճարների ու թագաւորական պալատների պատերը միշտ զարդարւում էին կրօնական բովանդակութիւն կրող և թագաւորների կեանքին վերաբերող դէպքերի քանդակագործ նկարներով։



Իա աստւածը

Սումէր-ակադացիների ամենահին աւանդութեան համաձայն, Միջագետքի ժողովրդին երկրագործութիւն ու արհեստներ սովորեցնողն առաջին անգամ եղել է ծովի՝

Էա կամ Օաննէս անունով՝ աստուածը, որին նրանք իրանց նկարների մէջ պատկերացնում էին կէս ձկան ու կէս մարդու կերպարանքով։

Շատ հին ժամանակներում,—ասում է աւանդութիւնը,—Տիգրիս և Եփրատ գետերի ափերում թափառական ցեղեր էին ապրում, որոնք որսորդութեամբ ու խաշնարածութեամբ էին պարապում։ Այդ ժամանակ մարդիկ ոչինչ չգիտէին, ոչ մի օրէնք չունէին և ապրում էին անասունների նման։ Բայց ահա մի օր ծովից դուրս է գալիս Էա կամ Օաննէս աստուածը, շրջում է մարդկանց մէջ ու սովորեցնում նրանց այն ամենը, ինչ որ հարկաւոր էր մարդկանց լաւ և հանգիստ ապրելու համար։ Մարդիկ նրանից են սովորել երկրագործութիւնն ու բազմաթիւ զանազան արհեստները, ինչպէս և քաղաքներ ու տաճարներ շինելը։ Էա աստուածը մարդկանց նոյնպէս և պրել է սովորեցրել, և ինքն էլ մի գիրք է գրել այն մասին, թէ ինչպէս պէտք է մարդիկ ապրեն և ինչ օրէնքներով ղեկավարուեն։ Այդ գիրքը նա յանձնել է մարդկանց ու ինքը աներևոյթացել ծովի ալիքների մէջ»։

ՔԱՂԴԷԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Սումէր-ակադացիները էլ, բոլոր նախապատմական ցեղերի նման, սկզբում մի ընդհանուր պետութիւն չունէին։ Եգիպտական նոմերի պէս, նրանք բազմաթիւ, միմեանց թշնամի խմբակցութիւնների կամ տոհմերի էին բաժանուած, որոնցից ամեն մէկը մի փոքրիկ իշխանութիւն էր ներկայացնում։ Սումէր-ակադական իշխանները կամ տոհմապետները կոչւում էին Պատեսի, և նրանցից ամեն մէկն իր փոքրիկ իշխանութեան թէ քաղաքական և թէ կրօնական պետն էր հանդիսանում։

Թէև Քաղդէայի բոլոր բնակիչները միևնոյն բնապաշտական կրօնն էին դաւանում, բայց և այնպէս իւրաքանչիւր տոհմ իր առանձին խնամակալ աստուածն ունէր, որի անունով էլ նրանց տաճարներն էին կոչւում։

Սումէր-ակադական քաղաքներից նշանաւոր էին՝ Ուր, Ուրուխ, Էրիդա, Նիպուր, Լագաշ և Բաբելոն։ Ամենից հին ու նշանաւոր քաղաքները Սումէր և Ակադ էին։ Այդ պարզ է այն հանգամանքից, որ երբ պատեսիներից մէկն ու մէկին յաջողւում էր գերիշխանութիւն ձեռք բերել ամբողջ Քաղդէայի վրայ, նա ինքն իրան անւանում էր «Սումէրի և Ակադի թագաւոր»։ Ըստ աւանդութեան, նոյն Էա աստուածն էր սումէր-ակադացիներին սովորեցրել համախմբուել և մի պետութիւն կազմել։

«Տիգրիս և Եփրատ գետերի ափերին թափառող ցեղերը,—ասում է աւանդութիւնը,—հետզհետէ համախմբուել են սկսել Էա աստծու յայտնուելուց յետոյ։ Բայց մինչև առաջին թագաւոր ունենալը անցել է 259,000 տարի։ Յետոյ յաջորդաբար թագաւորել են տասը թագաւորներ, որոնցից իւրաքանչիւրի թագաւորութիւնը տևել է հազարաւոր տարիներ։ Այդ թագաւորներից ամենակարճ կեանք ունեցողը ապրել է 10,800 տարի, բայց եղել են և այնպիսինները, որ ապրել են 64,000 տարի։ Այդ տասը թագաւորների օրերում Էա աստուածը դարձեալ 6 անգամ դուրս է եկել ծովից ու զանազան անուններով յայտնուելով մարդկանց, շատ ու շատ օգտակար բաներ է սովորեցրել»։

Կ Ր Օ Ն Ը

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Սումէր-ակադացիների հասկացողութեամբ սկզբում ոչ մի բան գոյութիւն չի ունեցել. ոչ երկինքը, ոչ երկիրը և ոչ էլ դրանց վրայ եղածները։ Կար միմիայն անհունութիւնն ու անսահման ովկիանոսը, որ նրանք Տիամատ աստուածուհի էին անւանում և որին պատկերացնում էին մի ահռելի հրէշի կերպարանքով։

Սումէր-ակադացիների կարծիքով, հէնց այդ հրէշից էր առաջացել տիեզերքը։ Ամենից առաջ ծնուել են աստ-

ւածները. սկզբում գլխաւորները և ապա սորագրեալ-ները։ Յետոյ՝ այդ աստւածների զօրութիւնից վախեցա-լով, Տիամատը կատաղի կռիւ է սկսել նրանց դէմ։ Եւ որպէսզի կարողանայ նրանց յաղթել, նա բազմաթիւ զա-նազան սեսակի հրէշներ է սեղծել՝ իբր իրան օգնական։ Բայց աստւածներից ամենաքաջ Բէլը հալածել ու յաղթել է ոչ միայն բոլոր հրէշներին, այլ և հէնց Տիամատին էլ։ Նա կայծակով հարւածել ու նրա մարմինը երկու կտոր է արել։



Բէլի կռիւը Տիամատի հետ

Մի կտորից գոյացել է երկինքը, իսկ միւսից՝ երկիրը։ Դրանից յետոյ, բոլոր աստւածները միացած սեղծել, կարգ ու կանոնի են դրել այն ամենը, ինչ որ սեսնում ենք երկրի ու երկնքի վրայ։

Երկիրը սումէր-ակադացիներն իրանց ներկայաց-նում էին բերանի վրայ կործած մի մեծ ջուր նաւա-կի ձևով։ Նաւակ-երկիրը, նրանց կարծիքով, չորս կողմից շրջապատւած է ովկիանոսով։ Քաղդէան երկրի կենտրոնն է կազմում։ Տիգրիսից շատ հեռու դէպի արևելք՝ մի լեռ է բարձրանում, որի միջոցով երկիրն ու երկինքը միանում են իրարու հետ։ Նրանք ասում էին, որ եր-

կինքն էլ մի շատ մեծ գլխարկի ձև ունի, և նրա եզրերը շատ հեռուում՝ ովկիանոսի միւս կողմում յենւած են եր-կրին։ Երկնակամարը, յենարան ունենալով արևելքի բարձր լեռը, անվերջ պտտւում է երկրի վրայով, հետը պտտեցնելով նոյնպէս և իր վրայ անշարժ կերպով սը-փռւած աստղերին։

Երկնքի ու երկրի միջև ընկած տարածութեան մէջ, սումէր-ակադացիների հասկացողութեամբ, ամենից հեռ-ւում երկնային 7 մարմիններն են պտտւում.—Արեգա-կը, Լուսինը, Հրատը, Մերկուրին, Արուսեակը, Իւպի-տերն ու Սատուրնոսը, որ մի-մի առանձին աստւածներ են։ Դրանցից ցած՝ գալիս են ամպերը, քամիները, կայ-ծակն ու անձրևը, որոնք նոյնպէս մի-մի առանձին աս-տւածներ են։

Կործւած նաւակ-երկրի տակ անհունութիւնը կամ անդունդն է գտնւում, ուր խաւարն ու մահն են թագա-ւորում։

Ա Ս Տ Ի Ա Ծ Ն Ե Ր Ը

Անունդ, երկինք և երկիր թագաւորութիւններից կազմ-ւած տիեզերքը լցւած էր բազմաթիւ բարի ու չար աստ-ւածներով և ոգիներով։ Աստւածներից ամենագլխաւոր-ներն էին. Անաա՛ն-երկնքի աստւածը, Էա՛ն կամ Օանէսը՝ երկրի (ջրի ու ցամաքի) աստւածը և Ալաոը անդունդի աստւածը։ Դրանք բոլորն էլ կին ու զաւակներ ունէին։

Ամենից սիրւած ու յարգւածը Էա աստւածն էր, որը չափազանց խորիմաստ ու բարի էր և որը, ըստ աւան-դութեան, մարդկային ցեղը փրկել էր ջրհեղեղով խափա-նւելիից։

«Մարդիկ սկզբում,—պատմում է այդ աւանդութիւնը,—շատ առաքինի կեանք էին վարում ու երբէք չէին խոտորում աստ-

ւածների տւած պատւիրաններից։ Բայց յետոյ նրանց բարքերը սկսում են փչանալ և նրանք շեղւում են աստւածային կանոններից։ Այդ տեսնելով երկինքն ու երկիրը ստեղծող աստւածներից մէկը՝ Բէլը մտածում է ջրհեղեղով բնաջինջ անել բոլոր մարդկանց։ Բէլի այդ չար դիտաւորութիւնն իմանալով, բարի Էա աստւածը գաղտնի կերպով պատւիրում է Քսիսուտրէ բարեպաշտ թագաւորին մի մեծ նաւ շինել։ Նաւը պատրաստելուց յետոյ, Էան հրամայում է Քսիսուտրէին գետնի մէջ թաղել բոլոր սրբազան գրքերը և իր ամբողջ ընտանիքով ու ազգականներով մտնել նաւի մէջ։ Բացի դրանից՝ բարի աստւածը հրամայում է թագաւորին իր հետ վերցնել կենդանիների բոլոր տեսակներից մի-մի զոյգ։

Իրանից յետոյ մեծ ջրհեղեղ է սկսւում. վեց օր ու գիշեր անընդհատ անձրև է տեղում և ամբողջ երկիրը ծածկւում է ջրերով։ Եօթերորդ օրը անձրևն ու փոթորիկը դադարում են, ջուրը սկսում է քաշւել, Քսիսուտրէի նաւը, երկար ժամանակ ջրերի վրայ լողալուց յետոյ, գնում կանգնում է արմենական լեռների վրայ։ Քսիսուտրէն ջրերի ցամաքելն իմանում է նրանով, որ երբեք անգամ դանագան թռչուններ է բաց թողնում նաւից — աղաւնի, ծիծեռնակ և ագռաւ։ Առաջին երկու թռչունները ցամաք չգտնելով շուտով նաւ են վերադառնում, իսկ ագռաւն այլևս չը վերադարձաւ։

Այդ ժամանակ բարեպաշտ Քսիսուտրէն դուրս է գալիս նաւից և շնորհակալութեան զոհ մատուցանում աստւածներին։ Շատ ժամանակ չանցած աստւածները Քսիսուտրէին երկինք են վերացնում իր բարեպաշտութեան համար, և նրա հետ նաւում եղած մարդիկ՝ այլևս նրան չեն տեսնում։ Սակայն նրանք լսում են նրա ձայնը, որ յայտնում է, թէ այն երկիրը, ուր նրանք գտնւում են, Արմենիան է, և պատւիրում է նրանց՝ վերադառնալ իրանց հայրենիքը՝ Բաբելոն, հանել գետնից սրբազան գրքերը, որ ինքը թաղել էր աստւածների հրամանով, և ապրել նրանց մէջ գրւած պատւիրանների համաձայն»։

Մարդկային ցեղը ջրհեղեղից փրկելուց յետոյ էլ Էան միշտ օգնութեան էր հասնում մարդկանց ամեն տեսակ դժբախտութիւնների ժամանակ։ Բայց որովհետև այդ բարի աստւածը չափազանց հեռու էր բնակւում և մարդկանց ձայնը կարող էր նրան չհասնել, ուստի սումերակադացիք իրանց աղօթքները միշտ նրա որդուն՝ Մարդուկին էին ուղղում և նրա բարեխօսութիւնը խնդրում։

Բացի երկնքի Անա աստծուց Բաղդէայում նոյնպէս շատ յարգւած էին Սամասը՝ արևի աստւածը և Մերմերը՝ որոտի աստւածը։ Իսկ խաւարի ու անհունութեան Ալատ աստւածուհուն ոչ միայն չէին յարգում սումէր-ակադացիք, այլ և սաստիկ ատում ու վախենում էին նրանից։ Այդ աստւածուհու մասին այն կարծիքը կար, թէ նա իր ամուսնու հետ բնակւում է ստորերկրեայ դժոխքում և այնտեղից ամեն տեսակ դաւեր է լարում թէ աստւածների և թէ մարդկանց դէմ։

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ


Սումէր-ակադացիները արքայութեան կամ հանդերձեալ կեանքում վարձատրութիւն ստանալու մասին գաղափար չունէին։ Նրանց կարծիքով, մարդիկ իրանց վարձատրութիւնն ու պատիժը ստանում են աստւածներից հէնց կենդանութեան ժամանակ։

Բայց և միևնոյն ժամանակ նրանք չէին կարողանում հաւատալ, թէ մահով էլ հէնց վերջանում է մարդու ամբողջ կեանքը։ Սկզբում նրանք այնպէս էին հաւատում, թէ մեռնելուց յետոյ մարդու հոգին դեռ ևս շարունակում է ապրել ճիշտ այնպէս, ինչպէս որ մարդը ապրել էր կենդանութեան ժամանակ։ Այդ պատճառով էլ նրանք իրանց մեռելների հետ գերեզմանի մէջ դնում էին ուտելիք, ամաններ, զէնքեր և այլն։

Աւելի ուշ ժամանակներում նրանց կարծիքը հանդերձեալ կեանքի մասին փոխւել էր։ Նրանք այլևս հաւատում էին, թէ մարդու հոգին մեռնելուց յետոյ շարունակում է ապրել, ոչ թէ գերեզմանում, այլ մի ու-

բիշ աշխարհում։ Այդ աշխարհը *ստորերկրեայ դժոխքն էր՝* Ալատ աստուածուհու թագաւորութիւնը։

Թէև սումէր-ակադացիք հաւատում էին, թէ մի ինչ-որ երջանիկ աշխարհ էլ կայ՝ արքայութիւնը, որը գտնւում է շատ հեռու, «զեռաբերաններում», և որտեղ Քսիսուտրէն է ապրում, բայց այդ արքայութիւնը հասարակ մահկանացուների համար չէր։ Այնտեղ միմիայն աստուածներն էին բնակւում և մահկանացուներից այնպիսի երջանիկները, որոնց աստուածները կը բարեհաճեն իրանց մօտ տանել դեռ ևս նրանց կենդանութեան ժամանակ։ Իսկ մահկանացուների հոգիները, բոլորն էլ գնում են Ալատ



Ալատի ստորերկրեայ թագաւորութիւնը

աստուածուհու ստորերկրեայ աշխարհը, որտեղից այլևս վերադարձ չը կայ։

Այդ աշխարհի, կամ դժոխքի մասին սումէր-ակադացիներն աւելի պարզ հասկացողութիւն ունէին, քան արքայութեան մասին։

Այդտեղ հրէշանման ու խիստ դաժան Ալատը, մի շատ տաբօրինակ կենդանու վրայ նստած և ձեռքերին մի-մի օձ բռնած, շարունակ շրջում է իր թագաւորութեան մէջ երկու հատ առիւծի ձագուկների հետ, որ իր՝ Ալատի զաւակներն են։ Դժոխքը լիքն է ամեն տեսակ հրէշներով։ Մի սոսկալի հրէշ է նոյնպէս և Ալատի ամուսինը։ Եւ այդ բոլոր այլանդակ ու զարհուրելի չարդևերի իշխանութեան ներքոյ են դատապարտւած ապրելու բոլոր մեռածների հոգիները։ Թէև այդ դժոխքում «անմահական ջրի մի աղբիւր» կայ, որից խմողները կարող են «անմահանալ» ու այս աշխարհը վերադառնալ, բայց այդ աղբիւրը չափազանց անմատչելի էր. դժոխքի ոգիները նրան խիստ պահպանում ու թագցնում էին, միմիայն աստուածների օգնութեամբ կարելի էր այդ աղբիւրի ջրից խմել։

Հոգիները դատապարտւած են դժոխքում կերակրւել միմիայն տիղմով ու փոշիով և մշտնջենապէս խարխափել խաւերի մէջ, բազմազան տանջանքների ենթարկւելով։

ԳԻԼԳԱՄԻՇԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Հանդերձեալ կեանքի մասին սումէր-ակադացիք մի քանի բանաստեղծական առասպելներ ունէին։ Դրանցից մէկը, որ 12 ընդարձակ գլուխներից է բաղկացած, պատմում է, թէ Ջրհեղեղից և Քսիսուտրէ թագաւորի երկինք վերանալուց յետոյ, երկրի վրայ սկսել են կիսաստուածներ ու հսկաներ թագաւորել։ Այս կիսաստւած կամ հսկայ թագաւորներից շատ նշանաւորը եղել է Ուրուկի թագաւոր Գիլգամիշը, որը չափազանց յայտնի է դարձել թէ իր քաջագործութիւններով և թէ իր գեղեցկութեամբ։ Մարդիկ չկարողանալով Գիլգամիշի հասցրած չարիքներից ազատւել, Հշտար աստուածուհու օգնութեանն են դիմում։

Սրա ցանկությամբ, աստուածները մի սոսկալի հրեշ են ըստեղծում, Էաբանի անունով, որը պիտի ոչնչացներ Գիլգամիշին: Սակայն այս վերջինը յաջողում է հրեշին իր կողմը գրաւել և նրանք ընկերներ են դառնում: Այդ ժամանակից Գիլգամիշը այլևս ոչ մի բանից չէ վախենում: Նրա անպատմելի քաջագործութիւններից ու գեղեցկութիւնից Իշտար աստուածուհին էլ է հրապուրւում և ցանկութիւն է յայտնում նրա կինը դառնալ: Բայց Գիլգամիշը մերժում է Իշտարի սէրը.



Գիլգամիշի եւ Էաբանու կռիւը առիւծի ոլեզան դէմ

Վիրաւորւած աստուածուհին սաստիկ բարկանում է Գիլգամիշի վրայ և վճռում է վրէժ առնել: Նրա խնդիրքով, իր մայրը, Անատու աստուածուհին՝ յանկարծամահ է անում Էաբանուն, իսկ Գիլգամիշի վրայ էլ մի այնպիսի վատ հիւանդութիւն (բորոտութիւն) է ուղարկում, որ նա ոչ միայն իր գեղեցկութիւնից է զրկւում, այլև սաստիկ տառապում է:

Յուսահատ Գիլգամիշը որոշում է անմահացած Քսիսուտրէի օգնութեանը դիմել, նա ուզում է խորհուրդ հարցնել, թէ ինչպէս կարող է առողջանալ և անմահ դառնալ: Բայց Քսիսուտրէն շատ ու շատ հեռու էր բնակւում. նրան հասնելու համար, պէտք էր անցնել «մեռած ջրերի» վրայով, որոնք բաժանում էին մահկանացուների աշխարհը հանդերձեալ աշխարհից»: Երկար թափառելուց յետոյ, Գիլգամիշը վերջապէս հասնում է այդ «մեռած ջրերին»: Սակայն դեռ բաւական չէր այդ ջրերին հասնելը, հարկաւոր էր և նրանց վրայով անցնել: Իսկ անց էին կացնում միմիայն անմահներին: Այնուամենայնիւ Գիլգամիշը իր տառապանքների պատմութիւնով յաջողում է մեռած ջրերի վրայի նաւավարի դուրը շարժել, և նա Գիլգամիշին անց է կացնում:

Քսիսուտրէն Գիլգամիշին ասում է, որ հիւանդութիւնից ու աստուածների անէծքից ազատւելու համար անհրաժեշտ է «անմահական ծառը» գտնել: Եւ նա պատմում է, թէ որտեղ և ինչպէս կարելի է գտնել այդ: Միևնոյն ժամանակ նա մանրամասն պատմում է ջրհեղեղի ու իր աստուածների մօտ վերանալու մասին:

Գիլգամիշին երկար թափառումներից յետոյ, վերջ ի վերջոյ յաջողւում է «անմահական ծառը» գտնել, բայց հէնց որ ուզում է քաղել, նրա ձեռքից բոյսը դուրս է թռչում օձի կերպարանքով: Գիլգամիշը այնուամենայնիւ ազատւում է իր հիւանդութիւնից, բայց նրան չի յաջողւում անմահանալ:



Անմահական ծառը

«Անմահների թագաւորութիւնից» վերադառնալով, Գիլգամիշը յիշում է իր մեռած բարեկամ Էաբանուն և սաստիկ վախագ է զգում իմանալու, թէ արդեօք ինչպէս է նա ապրում «Մեռածների աշխարհում»: Երկար ժամանակ նա ազաչում-պաղատում է աստուածներին, որ թոյլ տան գէթ մի անգամ իր սիրելի

բարեկամին տեսնելու։ Դժոխքի աստուածները վերջապէս զիջում են նրա թախանձանքներին։ «Գետինը պատուում է և նրա տակից դուրս է գալիս էաբանու ոգին, թեթև քամու կերպարանքով»։ Գիլգամիշը վրայ է ընկնում, թախանձելով.—«Ասա ինձ, ընկերս, պատմիր, ինչպիսի տեղ է այն երկիրը, ուր դու հիմա ապրում ես և ինչպէս ես քեզ այնտեղ զգում, կամ ինչպէս ես ապրում։ Օ՜հ ասա ինձ, ասա»։ Բայց էաբանին որոշ պատասխան չի տալիս իր բարեկամին։ Նա մեծ դժկամակութեամբ ասում է միայն։ «Չեմ կարող քեզ ոչինչ ասել, բարեկամս, չեմ կարող»։ Վերջում նա մի քանի ակնարկներով հասկացնում է, թէ սոսկալի է «Մեռածների աշխարհի» կեանքը։

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՃԱՐՆԵՐ


Սումէր-ակադացիները վերին աստիճանի սնոտիապաշտ ժողովուրդ էին։ Նրանց կարծիքով, աշխարհիս վրայ պատահած բոլոր դժբախտութիւնները՝ հիւանդութիւն, մահ, երաշտ, սով և այլն՝ չար ոգիների գործերն են։ Այդ ոգիները միշտ ահագին բազմութեամբ դուրս են սողում «Մեռածների աշխարհից» և գանազան կերպարանքներով ներս են սողում ամեն տեղ, որպէսզի վնասեն թէ աստուածներին և թէ մարդկանց։

Սումէր-ակադացիների խիստ սնոտիապաշտ լինելը մեծ մասամբ հետևանք էր այն բանի, որ Բաղդէայում, շատ տաք և վատառողջ կլիմայի շնորհով, ժողովուրդը միշտ տառապում էր ամեն տեսակ հիւանդութիւններից։ Նամանաւանդ սոսկալի էր ժանտախտը, որ յաճախ կրկնւում և բազմաթիւ զոհեր էր տանում։ Անկարող լինելով սոսկալի հիւանդութիւնների իսկական պատճառները հասկանալ, ժողովուրդը այնպէս էր հաւատում, թէ այդ բոլորը չար ոգիների գործերն են, թէ ամեն մի հիւանդութիւն իր առանձին դևն ունի, որ մտնում է մարդու մէջ և տանջում նրան։

Այդպէս հաւատալով, սումէր-ակադացիները դևերից ու չար ոգիներից աստիկ վախենում էին։ Բայց և միևնոյն ժամանակ նրանք այդ ոգիներին ո՛չ աղօթում և ո՛չ էլ զոհ էին մատուցանում։

«Չար ոգիները խիղճ ու գութ չունեն,—ասում էին Բաղդէայի այդ հնագոյն բնակիչները,—հետևապէս չարժէ նրանց աղօթել, որովհետև միևնոյն է՝ նրանք մեր աղերսանքները չեն լսելու»։

Նրանք աղօթում ու զոհ էին մատուցանում միմիայն բարի աստուածներին, ասելով, որ սրանք միայն կարող են հալածել դևերին և խանգարել նրանց չար դիտաւորութիւնները։ Եւ նրանք ոչինչ չէին խնայում բարի աստուածների սրտերը շահելու համար. օրական մի քանի անգամ կրօնական արարողութիւններ էին կատարում և ամենաթանկագին զոհերը մատուցանում նրանց։ Բոլոր աղօթքներն ու զոհաբերութիւնները կատարւում էին տաճարներում։



Զուգուրատ

Բաղդէայում տաճարները կոչւում էին Զուգուրատ։ Դրանք 7, 5 կամ 3 յարկանի քառակուսի հսկայական շի-

նութիւնները էին, եգիպտական պիրամիդների ձևով կառուցած և ամբողջապէս աղիւսից շինուած։ 7, 5 և 3 յարկերը համապատասխանում էին երկնային 7 մարմիններին, 5 մոլորակներին և կամ տիեզերքի 3 թագաւորութիւններին։

Զուգուրատի ամենավերին յարկը սրբարանն էր, ուր դրուում էր այն աստուծոյ արձանը կամ պատկերը, որին նւիրուած էր տաճարը։ Այդ սրբարանի մուտքը հասարակ աղօթողներին արգելուած էր. այնտեղ կարող էին մտնել միմիայն քուրմերը։ Իսկ տաճարի մուտքի մօտ դրուած էր *սուրբ սեղանը*, որի վրայ զոհ էր մատուցանւում։

Քաղդէական տաճարների վերին յարկը միևնոյն ժամանակ և իբրև դիտարան էր ծառայում, որտեղից քուրմերը երկնային մարմիններն ու նրանց շարժուձևերն էին ուսումնասիրում։

Կ Ա Խ Ա Ր Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամեն մարդ, ի հարկէ, ընդունակ չէր աղօթքներով չար ոգիներին հալածել։ Դրա համար յատուկ պաշտօնեաներ կային, որ կոչւում էին կախարդները և որոնք այնպիսի խորհրդաւոր խօսքեր ու անէծքներ գիտէին, որոնցից դևերը սարսափում ու փախչում էին։ Հէնց որ մի որևէ դժբախտութիւն էր պատահում, կամ մեկը հիւանդանում էր Քաղդէայում, իսկոյն կախարդի օգնութեան էին դիմում։ Սա «աղօթում էր» հիւանդին և դուրս էր վռնդում դևին նրա մէջից, որից յետոյ հիւանդը ազատւում էր տանջանքներից ու բժշկւում։

Թէև սումէր-ակադացիք զանազան բոյսերով բժշկելու մի քանի միջոցներ էլ գիտէին, բայց նրանք դեղերին մի առանձին նշանակութիւն չէին տալիս և գերադասում էին կախարդական միջոցների օգնութեանը դիմել։ Նրանց կարծիքով կարելի էր այդ միջոցներով նոյն իսկ ամեն տեսակ չարիքների առաջն առնել։ Դրա համար կախարդները զանազան *թալիսմաններ* ու *համայիլներ* էին պատրաստում, որոնցից ցանկացողները ձեռք էին բերում որոշ վճարով ու մշտապէս կրում իրանց վրայ, որպէսզի այս կամ այն չար ոգին սարսափից չը համարձակւի մօտենալու։



Քամու աստուածը

Այդ թալիսմները կամ համայիլները կաւից պատրաստած մի աղիւսի փոքրիկ կտոր էր՝ վրան զանազան խորհրդաւոր աղօթքներ գրած և կամ մի այլանդակ հրէշի արձանիկ։


Յաճախ այդ արձանիկներից սումէր-ակադացիները կախում էին իրանց պատուհաններից ու դռներից, կամ թաղում էին շէմքի տակ, միանգամայն հաւատացած լինելով, թէ չար ոգիներն այլևս չեն համարձակւի մինչև իսկ տուն մտնել։

Սումէր-ակադացիները ուրիշ շատ բազմաթիւ սնոտիապաշտութիւններ էլ ունէին, բնութեան մէջ կատարուղ ամենասովորական երևոյթներն անգամ նրանք բաղդատուորութեան կամ դժբաղդութեան նախագուշակներ էին համարում. այսպէս օրինակ՝ շան ոռնալը, ագռաւի կռռանչելը, կատւի լացւելը, կաչաղակի կըչկըչալը և այլն մի-մի չարագուշակ կամ բարեգուշակ երևոյթներ էին համարւում։ Բացի դրանից՝ նրանք հաւատում էին «աչքով տալուն», ինչպէս և այն բանին, թէ կախարդների միջոցով կարելի է հակառակորդին այս կամ այն դժբաղդութիւնը հասցնել։

Կախարդությունն ու գուշակելու սովորությունը այն աստիճան շատ էր տարածված Քաղդեայում, որ ամեն ուշ ժամանակներում կախարդ և քաղդեացի բառերը օտարների համար հոմանիշներ էին դառել։

ԳԻՐԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սումէր-ակադացիներին էլ ծանօթ էր գիրը։ Իբրև գրելու նիւթ նրանք գործ էին ածում դարձեալ հէնց այն աղիւսները, որոնցով նրանք իրանց շինութիւններն էին կառուցանում։ Գրում էին թաց աղիւսի վրայ փայտէ կամ այլ սուր գործիքով և ապա աղիւսը արևի տակ չորացնում կամ թրծում էին։ Գրած ու թրծած աղիւսները պահպանւում են հազարաւոր տարիներ և հէնց այդ աղիւսների շնորհով է, որ մարդիկ կարողացել են ծանօթանալ մեզնից մօտ 8—9 հազար տարի առաջ ապրած այդ ժողովրդի կեանքի ու կուլտուրայի հետ։



Սեպաձեւ տառեր

Սումէր-ակադացիները սկզբում, եգիպտացիների նման, գրում էին հիերօգլիֆներով։ Բայց ցեխի վրայ նրկարած մանր պատկերագրերը, չորանալուց յետոյ, աղաւաղւում և ուրիշ ձև էին ստանում։ Այդ եղանակով սեպաձեւ տառերն ու հնչազրերն առաջացան և տարածւեցին Քաղդեայում։



Գրած աղիւս

Այդ գրերով զանազան մեծութեան պատրաստուած աղիւսների վրայ գրում էին ոչ միայն նամակները, առևտրական մուրհակները ու կարճ գրութիւնները, այլ և շատ ընդարձակ ծաւալ ունեցող և մի քանի հատորներ կազմող գրքերը, որոնցով ահագին գրադարաններ էին կազմւում։ Սումէր-ակադական գրքերը մեծ մասամբ կրօնական և դիտական բովանդակութիւն ունէին։

Գիտութիւններից Քաղդեայում զարգացած էին աստղաբաշխութիւնն ու սրա հետ սերտ կապ ունեցող թւաբանութիւնը։ Քաղդեայի հարաւային չինչ ու պայծառ երկինքն էլ, եգիպտականի նման, շատ նպաստաւոր էր աստղաբաշխութեամբ պարապելու համար, և սումէր-ակադացիներին արդէն ծանօթ էին արեգակի շուրջը դարձող գլխաւոր հինգ մոլորակները՝ Հրատը, Մերկուրին, Արուսեակը, Իւպիտերն ու Սատուրնոսը, որոնց նրանք ուրիշ անուններով էին կոչում։

Ուսումնասիրելով երկնային մարմինները, սումէր-ակադացիները տարին բաժանել էին 12 ամիսների, օր ու գիշերը՝ 12 ժամերի (փոխանակ 24-ի) և ժամն էլ՝ 120 րոպէի։ Երկնային մարմիններից ամեն մէկին էլ շաբաթւայ մէջ մի օր էր յատկացած. առաջին և երկրորդ օրերը նւիրւած էին արևին և լուսնին, իսկ միւս օրերը 5 մոլորակներին։ Այդ եղանակով է կազմւել 7 օրեայ շաբաթը։ Չորս շաբաթը նրանք մէկ լուսնի ամիս էին հաշւում, բայց որովհետև այդպիսով տարւայ վերջում միշտ մի քանի օր աւելանում էր, ուստի նրանք երեք տարին մի անգամ մէկ ամբողջ աւելորդ ամիս էլ էին ունենում։

Սումէր-ակադացիները շաբաթւայ եօթերորդ օրը մի շատ անիծւած ու չարագուշակ օր էին համարում։ Հաւատալով թէ այդ օրը մարդիկ ինչ տեսակ գործ էլ որ անեն անպատճառ շատ անյաջող և վատ կը վերջանայ, նրանք այդ օրը ոչ մի գործ չէին շինում։

Բացի դրանից՝ նրանք այնպէս էին հաւատում, թէ

երկնային աստղերն ու մոլորակները խիստ մեծ ազդեցութիւն ունեն երկրային արարածների վրայ և որ նրանց շարժումների ու երկրի վրայ տեղի ունեցող զանազան անցքերի միջև շատ սերտ կապ կայ։ Դրա համար էլ նրանք հնարաւոր էին համարում այդ շարժումների հիման վրայ ամեն տեսակ գուշակութիւններ անել։

Այդպիսի հասկացողութեան շնորհով, աստղաբաշխութիւնը Քաղդէայում հետզհետէ աստղագուշակութեան էր վերածւել։ Աստղաբաշխութեամբ պարապող քուրմերը, աստղագուշակութիւնը իրանց համար շատ աւելի շահաւէտ գործ համարելով, հետզհետէ պարզ գուշակողներ ու կախարդներ դարձան։

Թէ Քաղդէայում և թէ աւելի ուշ Ասորեստանում, թագաւորները միշտ գուշակողներ էին պահում իրանց արքունիքում և ոչ մի պատերազմ կամ մի որևէ՝ այլ մեծ նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւն՝ չէին սկսում առանց նախօրօք գուշակողների կարծիքը լսելու։ Գուշակողներից պահանջւում էր նոյնպէս, որ նրանք նոր երեխայ ծնւելիս դիտեն ու իմանան, թէ որպիսի աստղի տակ է ծնւում երեխան և թէ ինչպիսի ապագայ նա պիտի ունենայ։

ՍԵՄԻՏՆԵՐԸ ՔԱՂԴԷԱՑՈՒՄ

Աւելի քան 4000 տարի Ք. ծ.-ից առաջ սումէր-ակադացիների երկիրն եկաւ մի նոր ժողովուրդ՝ սպիտակ ցեղին պատկանող սեմիտները։ Սրանք թափառաշրջիկ խաշնարածներ էին, որոնք իրանց բազմաթիւ հօտերով գալիս էին Արաբիայից, լաւ արօտատեղեր որոնելու։

Միջագետքի արգաւանդ երկիրը շատ հրապուրիչ էր այդ խաշնարածների համար, և նրանք հետզհետէ բնակութիւն հաստատեցին այդ երկրում։ Սումէր-ակադացիները երկարատև կռիւներ էին մղում թափառական նորեկների դէմ, ամեն կերպ աշխատելով վռնդել նրանց իրանց երկրից, բայց իրարու ետևից եկող սեմիտական նոր ու նոր խմբերը այնչափ բազմաթիւ էին, որ նրանք վերջ ի վերջոյ յաղթեցին, իսկ սեմիտները ամբողջ երկրի կատարեալ տէրը դարձան։

Վայրենի սեմիտները, հաստատւելով Քաղդէայում, սկզբում քարուքանդ արին, իսկ յետոյ կամաց-կամաց իւրացրին սումէր-ակադացիների կուլտուրան ու քաղաքակրթութիւնը։ Նրանք էլ վարժւեցին երկրագործութեան, սովորեցին ջրանցքներ շինել, ադիւս պատրաստել, մետաղները մշակել և այլն։

Ընդունելով սումէր-ակադացիների կրօնը, տիեզերքի, աստւածների ու ոգիների մասին նրանց ունեցած բոլոր հասատատիքներն ու հասկացողութիւնները, սեմիտները միայն փոխեցին, իրանց լեզուով թարգմանեցին աստւածների անունները։ Այսպէս օրինակ՝ սումէր-ակադացիների Անան (արևի աստւածը) սեմիտական լեզուով դարձաւ *Շամաշ*, Նանարը (լուսնի աստւածը)—*Սին*, *Մերոմերը* (որոտի աստւածը)—*Ռոման* և այլն։

Երկնային մոլորակներին էլ նրանք տարբեր անուններ տւին, ինչպէս և սովորեցին շաբաթւայ եօթերորդ օրը ոչ մի աշխատանք չանել։ Տարբերութիւնն այն էր միայն, որ սումէր-ակադացիներն այդ օրը «ծանր» ու դժբախտ օր էին համարում, իսկ սեմիտները նրան շաբաթ անւանեցին, որ նշանակում է սուրբ կամ հանգստեան օր։

Սեմիտները սումէր-ակադացիներից սովորեցին նոյնպէս և գրել սեպաձև տառերով, և նրանք այդ տառերը իրանց լեզուին յարմարեցին։

ՍԵՄԻՏԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՔԱՂԴԷԱՅՈՒՄ

Սեմիտները հետզհետէ Քաղդէայի տէրը դառնալով, ամբողջ երկրի իշխանութիւնը իրանց ձեռքը գցեցին։ Նախկին սումէր-ակադական «պատեսի»-ների փոխարէն սեմիտական իշխանները հաստատուեցին, որոնք իրանց թագաւոր էին անւանում։ Այդ թագաւորներից մէկը, Սարգոն I անունով, յաջողեց (3800 թ. Ք. ծ. ա.) բոլոր մանր թագաւորների վրայ գերիշխանութիւն ձեռք բերել և ամբողջ երկրի կամ, ինչպէս այն ժամանակ էին ասում, «Սումէրի և Ակադի» ինքնիշխան տէրը դառնալ։

Այդպէս հիմք դնելով սեմիտական մի զօրաւոր պետութեան, Սարգոն I-ը հետզհետէ բազմաթիւ նւաճումներ կատարեց և աստիճ ընդարձակեց իր թագաւորութեան սահմանները։ Սեմիտական այդ նշանաւոր թագաւորի օրով քաղդէական պետութիւնը տարածւում էր արևմուտքում՝ մինչև Միջերկրական ծովը, իսկ արևելքում մինչև Իրանի բարձրաւանդակը։



Սարգոնի կնիքը

Սարգոն I-ը յայտնի էր ոչ միայն իբրև քաջ զօրապետ ու լաւ վառավարիչ, այլ և իբրև մի շատ լուսամիտ մարդ։ Նա կարգի բերել տւեց Էրեխ քաղաքի գրադարանը և նրան հարստացրեց մի քանի նշանաւոր գրական աշխատանքներով, որ թագաւորի պատւէրով կատարել էին քուրմերը։

Այդ գրական աշխատութիւնները մի քանի հարիւր աղիւսներից էին բաղկացած և իրանց մէջ պարունակում էին՝ սումէր-ակադական բազմաթիւ կրօնական աղօթքներ, մեղեդիներ, զանազան կախարդութիւններ, աստղագիտական դուշակութիւններ և այլ ամեն տեսակ հաւատալիքներ։ Այդ աղիւսների նշանակութիւնը մանաւանդ մեծ է նրանով, որ նրանք, գրւած լինելով երկու լեզուներով—սումէր-ակադական ու թարգմանաբար՝ սեմիտական,—հնարաւոր են դարձրել սումէր-ակադական գրւածքները կարդալ ու նրանց լեզուն ուսումնասիրել։

Սարգոն I-ի գործերից յայտնի են նոյնպէս նրա շինել տւած փառահեղ պալատն ու տաճարը իր Ազաղէ մայրաքաղաքում։

Սարգոն I-ից յետոյ սեմիտների թագաւորութիւնը Քաղդէայում թէև դարձեալ մօտ 1000 տարի տևեց, բայց այդ ժամանակաշրջանում Քաղդէան այլ ևս այն փառքն ու մեծութիւնը չունեցաւ, ինչ Սարգոնի օրով։ Թագաւորական գերիշխանութիւնը յաճախ մի քաղաքից անցնում էր միւսին, իսկ երբեմն էլ երկիրը բաժանւում էր մի քանի մանր թագաւորութիւնների, որոնք գերիշխանութեան համար անվերջ կռիւներ էին մղում միմեանց դէմ։

Քաղդէական թագաւորների ներքին պատակոուճներից օգուտ քաղեցին նրանց արևելեան հարևան երկրի բնակիչները, որոնք շատ հեշտութեամբ նւաճեցին Քաղդէան և իրանց իշխանութիւնը հաստատեցին այնտեղ։

Այդ հարևան երկիրը Էլամն էր, որի բնակիչները կոչւում էին Էլամացիներ կամ Էլամիտները։

Է Լ Ա Մ Ա Ց Ի Ք

Էլամը այն լեռնոտ երկիրն է, որ ընկած է Քաղդէայի արևելեան կողմում և Զագրոս լեռնաշղթայի հարաւային մասն է կազմում։ Ենթադրւում է, որ էլամացի-

ներն էլ, սումէր-ակադացիների նման թուրանական ցեղին էին պատկանում։ Բայց, իբրև լեռնային երկրի բնակիչներ, նրանք մեծ մասամբ խաշնարածութեամբ էին պարապում։

Շատ հին ժամանակից ի վեր այդ լեռնաբնակները իրանց երկրի անբերրիութիւնից նեղուելով, յաճախ դուրս էին գալիս իրանց երկրի սահմաններից և արշաւանքներ էին գործում արգաւանդ ու հարուստ Քաղդէայի վրայ։ Ամեն ինչ կողոպտելով, նրանք դարձեալ իրանց երկիրն էին վերադառնում։

Քաղդէայում սեմիտական զօրաւոր պետութիւն հաստատուելուց առաջ, էլամացիների արշաւանքները երբեմն շատ աւելի հեռուն էին տարածւում դէպի արևմուտք։ Այսպէս՝ էլամի թագաւորներից մէկը արշաւել էր մինչև Միեռևալ ծովը, նուաճել Սիրիայի (Ասորիքի) շատ երկիրներն ու քաղաքները և դրանց բնակիչներին հարկատու դարձրել իրան։

Սակայն սեմիտական պետութեան զօրեղանալը բաւականին երկար ժամանակ վերջ էր դրել էլամացիների արշաւանքներին։ Սարգոն I-ի օրով նոյնիսկ ամբողջ էլամը Քաղդէայի գերիշխանութեան տակ էր գտնւում և հարկ վճարում նրան։

Սարգոնից յետոյ, մօտ ամբողջ 1000 տարուայ ընթացքում, մինչ Քաղդէան ներքին պատերազմների շնորհով, հետզհետէ թուլանում և դէպի անկումն էր դիմում, էլամացիք ընդհակառակը կազմակերպւել և զօրաւոր պետութիւն էին կազմել։

Այն ժամանակւայ կուլտուրապէս ամենազարգացած Քաղդէայի հետ իրանց ունեցած յաճախակի շփումների շնորհով, էլամացիները իւրացրել էին սումէր-ակադացիների կուլտուրան, փոխ էին առել նրանց գրերն ու յարմարացրել իրանց լեզուին և շատ ու շատ բաներ սովորել նրանցից։ Էլամացիների Սուզա կամ Շոշ անունով մայրաքաղաքը այն ժամանակւայ ամենագեղեցիկ և հարուստ քաղաքներից մէկն էր համարւում։

Քաղդէական թագաւորների ներքին պատերազմներից օգուտ քաղելով, արդէն զօրեղացած ու կազմակերպւած էլամացիները յարձակւեցին նրանց վրայ (2300 թ. Ք. ա.), միմեանց յետևից նուաճեցին Քաղդէայի բոլոր քաղաքները և իրանց իշխանութիւնը հաստատեցին այնտեղ։

Էլամացիների տիրապետութիւնը Քաղդէայում տևեց ամբողջ 100 տարի։

Ջափազանց ծանր էր սեմիտների համար էլամացիների լուծը և նրանցից շատերը, չը կարողանալով տանել այդ լեռնաբնակների տւած նեղութիւնները, բազմաթիւ խմբերով թողեցին իրանց հայրենիքն ու գաղթեցին օտար երկիրներ. ոմանք դէպի հիւսիս, իսկ ոմանք էլ դէպի արևմուտք։

Դէպի հիւսիս գաղթած սեմիտները հիմք դրեցին Ասորեստանի հզօր թագաւորութեան, իսկ դէպի արևմուտք գաղթածները բնակութիւն հաստատեցին Սիրիայում։ Այս երկրի հիւսիսային կողմում բնակւող սեմիտները վերջում «Արամի որդիք» կամ արամացիներ կոչւեցին, իսկ հարաւային՝ Յորդանան գետի մօտ բնակւողները, որոնք գնացել էին Աբրահամ նահապետի առաջնորդութեամբ, կոչւեցին իսրայելացիներ։

Պակաս ծանր չէր էլամացիների լուծը և Քաղդէայում ճնացող սեմիտների համար։ Ատելութիւնը սրանց մէջ դէպի այդ լեռնաբնակները գնալով սաստիկ աճում էր և մի քանի ու բանիմաց զօրապետ էր հարկաւոր միայն, որպէսզի ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնէր, նրանց լուծը թօթափելու համար։

Շուտով այդպիսի զօրապետ էլ գտնւեց. դա Բաբելոն քաղաքի թագաւորն էր, Համմուրաբի անունով։

ԲԱԲԵԼՈՆԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Բաբելոնը սումէր-ակադական ամենահին քաղաքներից մէկն էր և գտնւում էր Եփրատ գետի ափին, Ագա-

դէպից փոքր ինչ դէպի հարաւ։ Թէև Բաբելոնն էլ հնուսմը, քաղդէական միւս քաղաքների նման, առանձին իշխանութիւն կամ թագաւորութիւն էր կազմում, բայց մինչև էլամացիների տիրապետութիւնը, այդ քաղաքը ոչ մի նշանաւոր դեր չէր կատարել։ Էլամացիների տիրապետութեան ժամանակ է, որ փոքրիկ Բաբելոնը, իր առևտրական լաւ դիրքի շնորհով, սկսում է հարստանալ ու նշանակութիւն ձեռք բերել։ Համմուրաբի թագաւորի օրով Բաբելոնը այն աստիճան զօրեղացել ու պատկառելի դիրք էր ձեռք բերել, որ էլամի թագաւորը դէպի Սիրիա արշաւելու ժամանակ, նրա դաշնակցութիւնն էր փնտրում։

Էլամի թագաւորի հետ դաշնակցելն ու նրա հետ միասին արշաւանք կատարելը չէր խանգարում սակայն, որ Համմուրաբին իր արիւնակից ժողովրդին օտարականների լծից ազատելու մասին մտածէր։ Օգուտ քաղելով այն ընդհանուր աւելութիւնից, որ Քաղդէայի բոլոր սեմիտները տածում էին դէպի էլամացիները, Համմուրաբին ապստամբութեան դրօշ բարձրացրեց և կարճ ժամանակից ամբողջ Քաղդէան մաքրեց օտարականներից։ Էլամացիները 100 տարի Քաղդէային տիրելուց յետոյ քաշուեցին իրանց լեռները, իսկ Համմուրաբին, բոլոր սումէր-ակադական երկիրները միացնելով, նորից մի զօրեղ սեմիտական թագաւորութիւն ստեղծեց, որի մայրաքաղաքն այս անգամ Բաբելոնը դարձաւ։

Իր իշխանութիւնն ամբողջ Քաղդէայի վրայ հաստատելուց յետոյ, Համմուրաբին սկսեց իր թագաւորութեան բարգաւաճման ու զարգացման գործերով զբաղուել։ Շատ լաւ ըմբռնելով, որ Քաղդէայի հարստութեան գլխաւոր աղբիւրը երկրագործութիւնն էր, նա մասնաւոր հոգատարութիւն ցոյց տւեց դէպի երկրի ոռոգման գործը։ Այդ նպատակով նա մի շատ հսկայական ջրանցք շինել տւեց, որով հոսող ջուրը, բազմաթիւ մանր ջրանցքների

միջոցով բաժանուելով, անցնում ոռոգում էր երկրի բոլոր կողմերը։ Այդ ջրանցքը կոչւեց «Համմուրաբիի ջրանցք», որն աւելի ուշ յայտնի էր «Թագաւորական ջրանցք» անունով։ Այնչափ մեծ ու խորն էր այդ ջրանցքը, որ նրա վրայ նաւագնացութիւն էր հաստատուած։ Բացի դրանից՝



Համմուրաբին աստծուց օրէնքներ է ընդունում

Տիգրիսի աւերիչ հեղեղումների առաջն առնելու նպատակով, Համմուրաբին մի մեծ պատնէշ շինել տւեց գետի ափին, որ յայտնի դարձաւ «Տիգրիսի մեծ պարիսպ» անունով։

Երկրագործութիւնից ու վաճառականութիւնից ստաց-

ւող պետական հասոյթը հաստատ հիմունքների վրայ դնելու նպատակով, Համմուրաբին խիստ կարգ ու կանոնի տակ էր դրել հաւաքւող տուրքերն ու հարկերը։ Նա օրէնքների մի ընդարձակ ժողովածու էր կազմել տւել, որով մի առ մի որոշւած էին, թէ ինչպէս պիտի կապւոտ տալ հողը, ինչպէս օգտւել ջրանցքների ջրից, ինչ պայմաններով պիտի վարձել բանւորներին, գնել ստրուկներին, ապրանք տեղափոխել գետերի ու ջրանցքների վրայով։ Օրէնքների հեղինակը պահանջում էր, որ իր բոլոր հպատակները ազնւութեամբ ու ճշտութեամբ կատարէին իրանց կնքած պայմանները ու ստանձնած պարտականութիւնները և խիստ պատիժներ է սպառնում անհնազանդներին։

Օրէնքները գրւած էին մի մեծ ժայռի վրայ և դրւած տաճարում, որպէսզի ամենքն էլ կարդան ու նրանց համաձայն վարեն իրանց գործերը։

Ժայռի վերևում նկարւած է, թէ ինչպէս Համմուրաբին աստծուց օրէնքներ է ընդունում։ Այդ օրէնքները աշխարհիս ամենահին գրաւոր օրէնքներն են և Մովսէսի օրէնքներից հազար տարի առաջ են գրւած։

Այդ օրէնքների մէջ նոյնպէս աչքի է ընկնում այն, որ այդ պիսի հին ժամանակներում անգամ մեծ հոգատարութիւն էր ցոյց տրւում դէպի խեղճերը, թոյլերն ու անպաշտպանները։ Օրէնքների մէջ նշանակւած էին և այն բոլոր պատիժները, որ պէտք է տրւէին իւրաքանչիւր առանձին յանցանքի համար։ Յանցաւորի աչքը հանելը, լեզուն, ձեռքը կամ գլուխը կտրելը շատ սովորական բաներ էին համարւում։

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Համմուրաբիի հիմնած բաբելոնական մեծ պետութիւնը, շնորհիւ իր արժանաւոր յաջորդների խելացի վարչութեան, մի քանի դար կատարեալ հանգստութիւն և անդորրութիւն վայելելով, խիստ բարգաւաճ դրութեան հասաւ։ Բացի երկրագործութեան, Բաբելոնում արհեստներն ու վաճառականութիւնն էլ հետզհետէ սաստիկ զարգացան։ Այդտեղ գործւած բրդէ և բամբակէ կտորներն ու գորգերը մեծ հռչակ էին վայելում ամբողջ հին աշխարհում։

Ամենահեռաւոր երկիրներում անգամ թագաւորական շքեղ ու ամենաթանկագին զգեստները բաբելական նուրբ կտորներից էին կարւում։ Բաբելացիք շատ յայտնի էին նոյնպէս իբր լաւ ոսկերիչներ ու փորագրողներ։ Փորագրւած թանկագին քարերից պատրաստւած մատանիները միևնոյն ժամանակ կնիքի տեղ էին գործածւում։ Շատ մեծ հռչակ ունէին նմանապէս Բաբելոնում պատրաստւած հոտաւէտ իւղերը (духи), որ գործ էին ածում թէ մազերը և թէ մարմինն օծելու համար։

Իր բազմատեսակ արդիւնագործութեան ու աշխարհագրական դիրքի շնորհով՝ Բաբելոնը հին աշխարհի վաճառականութեան կենտրոնն էր համարւում։ Նրա վաճառականութիւնը կատարւում էր թէ ջրային և թէ ցամաքային ճանապարհներով։ Պարսից ծոցի և Եփրատի վրայով բաբելացիք ստանում էին՝ Հնդկաստանից ոսկի, թանկագին քարեր, փղոսկր, համեմներ և մարգարիտ, իսկ Արաբիայից՝ խունկ և ուրիշ խոտաւէտ իրեր։ Տիգրիս և Եփրատի վրայով նրանք առևտուր էին կատարում Հայաստանի հետ, որտեղից Բաբելոն էին բերւում գինի, ձիեր և այլ բերքեր։ Իսկ ցամաքային ճանապարհով Բաբելոնը կապւած էր վաճառաշահ Փիւնիկիայի հետ։ Այդ ճանապարհն անցնում էր Սիրիայի անապատով, և ապրանքները տեղափոխւում էին ուղտերի կարաւաններով։ Փիւնիկիայից բաբելացիք ստանում էին գլխաւորաբար ներկ իրանց գործւածքների համար, պղինձ, արծաթ և ստրուկներ։

Բաբելացիների առևտուրը կատարւում էր փոխանակութեամբ, սակայն փոխանակում էին ոչ թէ անմիջական կերպով ապրանքը ապրանքի հետ, այլ մի որոշ կշիռ ունեցող ոսկու և արծաթի կտորների հետ: Բացի կշռի չափից, բաբելացիք սահմանել էին նաև երկարութեան չափ: Եւ բաբելական չափերի այդ ձևը ընդունւած էր ամբողջ հին աշխարհում:

Բաբելացիները ծանօթ էին նոյնպէս մուրհակով փող վերցնելու և տեղից տեղ փող փոխադրելու եղանակին:

Երկրի հարստութեան հետ բաբելացիների մէջ սաստիկ զարգացել էր նաև խիստ ճոխ ու փարթամ կեանք վարելու սովորութիւնը. արտօնեալ դասակարգերի, այն է՝ թագաւորի և նրան շրջապատող ազնւական պալատականների ու քուրմերի վարած կեանքն այն աստիճան ճոխ, շքեղ ու փարթամ էր, որ այն ժամանակւայ բոլոր թագաւորների նախանձն էր շարժում:



Բաբելական թագաւոր

Ամեն մի թագաւոր Բաբելոնում սովորութիւն ունէր իր համար մի նոր և աւելի շքեղ պալատ շինել տալու: Պալատի պատերը ներսից զարդարում էին նոյն թագաւորի կեանքին վերաբերող նշանաւոր անցքերի քանդակագործ նկարներով: Բաբելոնի թագաւորները սիրում էին պալատից դուրս էլ մեծ շուքով ու շքեղութեամբ երևալ. նրանք միշտ շրջապատւած էին լինում պալատականների բազմաթիւ շքախմբով, որոնք նոյնպէս ծփում էին ոսկու, արծաթի և գոհարների մէջ:

Զը նայելով երկրի սաստիկ շոգ կլիմային, Բաբելոնի հարուստ դասակարգերը, իրանց փարթամ կեանքը ցոյց տալու համար, իրարու վրայից երեք զգեստ էին հագնում: Իսկ հասարակ ժողովրդի ամբողջ հագուստը մէկ շապիկ էր միայն:






ԱՍՈՐԵՍՏԱՆ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Էլամացիների տիրապետութեան օրով Քաղդէայից հեռացած այն գաղթականները, որոնք չէլ էին դէպի հիւսիս, գնացել հաստատուել էին Միջագետքի միջին մասում, Տիգրիսի երկու օժանդակ՝ Մեծ ու Փոքր Զաբ՝ գետերի մէջև ընկած հովիտում։

Միջագետքի այդ մասը Քաղդէայի նման, պտղաբեր չէր։ Ընդհակառակը՝ նրա մեծ մասը շատ անբերրի, համարեա թէ անապատի նման, չոր ու ցամաք երկիր էր։ Նորեկները, սակայն, շատ հմուտ լինելով ջրանցքներ շինելու արուեստին, ժամանակի ընթացքում իրանց նոր հայրենիքը ծածկեցին ջրանցքների ցանցով և նրան խիստ պտղաբեր դարձրին։ Առաջին քաղաքը, որ այդ գաղթականները շինեցին, կոչուեց իրանց ցեղական գլխաւոր աստծու անունով՝ *Ասուր*։ Հէնց այդ անունով էլ յետոյ ամբողջ երկիրը կոչուեց *Ասորեստան*, իսկ նրա բնակիչները *Ասորեստանցիներ*։

Ասորեստանցիները իրանց կուլտուրայով համարեա թէ ոչնչով չէին տարբերուում քաղդէացիներից կամ բաբելացիներից։ Նրանք իրանց հետ բերել էին քաղդէական գիրը, կրօնը, ճարտարապետութիւնը, մի խօսքով՝ այն բոլորը, ինչ որ նրանք դարերի ընթացքում սովորել և գիտէին իրանց հին հայրենիքում։



Ասուր աստուածը

Թէ որ աստիճան ասորեստանցիները խիստ հաւատարիմ էին մնացել իրանց հին սովորութիւններին, այդ պարզ է այն բանից, որ նրանք իրանց նոր հայրենիքումն էլ շարունակում էին աղիւս գործածել շինութիւնների համար, չնայելով որ Ասորեստանը, թէ հիւսիսից և թէ արևելքից շրջապատուած լինելով լեռներով, քարի պակասութիւն չունէր։ Ասորեստանի 3, 5 կամ 7 յարկանի տաճարներն ու արուեստական հողաթումբերի վրայ կառուցած թագաւորական պալատները նոյնպէս ոչնչով չէին տարբերուում քաղդէականներից։

Ասորեստանցիների կրօնն էլ նոյնն էր, ինչոր քաղդէացիներինը. տարբերութիւնն այն էր միայն, որ ասորեստանցիները քաղդէական աստուածների անունները փոխել էին իրանց բարբառով։ Բացի գլխաւոր 12 աստուածներից, նրանք էլ բազմաթիւ երկրորդական աստուածներ ունէին և բարի ու չար ոգիների գոյութեան էին հաւատում։

Ասորեստանցիները շաբաթը շատ սրբութեամբ էին պահում և այդ օրը ոչ մի գործ չէին կատարում։ Նրանք սովորութիւն ունէին դժբաղտութեան տարիներում զրկ-

ման մաղթանքները ու թափորները կատարել տաճարներում և ազգովին ծոմ պահել։

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԶՕՐԱՆԱԼԸ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ասորեստանը սկզբում, Քաղդեայի նման, բաժանված էր մի քանի մանր իշխանութիւնների, որոնք կառավարում էին քրմապետ-իշխաններով, որ նոյնպէս պատեսի էին կոչւում։ Այդ ժամանակ նա դեռ մի թոյլ երկիր էր և Բաբելոնի գերիշխանութեան տակ էր գտնւում. ասորական պատեսիները բաբելոնական թագաւորներին էին ենթարկւում։

Հարևան լեռնաբնակ ցեղերի հետ շարունակ պատերազմներ ունենալը Ասորեստանի մանր ու անզօր իշխաններին հետզհետէ ստիպեց միանալ և մի ընդհանուր միապետական իշխանութիւն կազմել։

Պեղումների ժամանակ գտնւած աղիւսէ վաւերագրերից յայտնի է, որ XVI-րդ դարի (Ք. ա.) վերջերում Ասորեստանը դեռ ևս մի շատ թոյլ տէրութիւն էր, եգիպտացիք նւաճել էին նրան և հարկատու դարձրել իրանց։ Սակայն XV-րդ դարում Ասորեստանը այն աստիճան զօրեղացել էր արդէն, որ ոչ միայն ազատւել էր եգիպտական լուծից, այլև սկսել էր այդ հզօր պետութեան մրցակիցը դառնալ սիրիական երկիրներում։ Միևնոյն ժամանակ մրցակիցը դառնալ սիրիական երկիրներում։ Միևնոյն ժամանակ Ասորեստանի թագաւորները, արդէն ազատւած լինելով նաև Բաբելոնի գերիշխանութիւնից, յաճախ կռիւներ էին մղում նրա դէմ, կամենալով իրանց գերիշխանութիւնը հաստատել այդ երկրի վրայ։

Բաբելոնի, Եգիպտոսի և միւս հարևան երկիրների դէմ փոփոխակի բաղդով մղած պատերազմները շարունակւեցին ամբողջ 6—7 դար։ Ասորեստանը, գնալով, ընդարձակւեց ու զօրեղացաւ. VIII-րդ դարում նրա սահմանները հասնում էին՝ Կասպից ծովից մինչև Պարսից ծոցը և Միջերկրականից մինչև Իրանի բարձրաւանդակը։ Այդպիսով՝ այն ժամանակւայ Առաջաւոր-Ասիայում եղած բոլոր նշանաւոր երկիրներն ու թագաւորութիւնները—Բաբելոն, Էլամ, Հայաստան, Հրէից թագաւորութիւնը, Պաղեստինը, Փիւնիկեան—կամ կատարելապէս Ասորեստանի տիրապետութեան տակ էին և կամ հարկատու նրան։ Ասարդադոն անունով թագաւորը մինչև իսկ Եգիպտոսը նւաճեց (672 թ.), թէև նրան տիրապետելը շատ կարճ տևեց։

Ասորեստանի զօրեղանալու հետ միասին սաստիկ զօրեղացել էր և ասորական թագաւորների միահեծան իշխանութիւնը։ Նրանց ինքնակալ բռնապետութիւնը չափ ու սահման չունէր։ Թագաւորը թէ երկրի լիակատար տէրն ու կառավարիչն էր և թէ ամբողջ զօրաբանակի գլխաւոր հրամանատարը։ Միևնոյն ժամանակ նա երկրի ամենագլխաւոր քրմապետն էր։

Կառավարչական բոլոր գլխաւոր պաշտօնեաները Ասորեստանում զինուորականներ էին։ Ամեն մի նահանգի կառավարիչ միևնոյն ժամանակ իր շրջանում եղած զօրամասի գլխաւոր հրամանատարն էր։ Այդպիսով Ասորեստանը մի բոլորովին զինուած զօրաբանակ էր ներկայացնում, ուր զօրքերի գլխաւոր հրամանատարների և նրանց ինքնակալ միապետի կամքն ու քմահաճոյքն էր միայն թագաւորում։

Ասորական զօրքը մի չը տեսնւած կատարելութեան էր հասցւած, այն ժամանակւայ պետութիւններից և ոչ մէկի զօրքը կարող էր համեմատւել ասորականի հետ թէ զինւելու, թէ պատերազմական վարժութիւնների և թէ զինուորական կարգապահութեան տեսակէտից։

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ԽՍՏԱՄՐՏՈՒԹԻՒՆԸ

6—7 դար շարունակ կրկնուող պատերազմները վերին աստիճանի խստասիրտ ու խստաբարոյ էին դարձրել ասորեստանցիներին: Ամենասոսկալի անգթութիւններն անգամ սովորական քաջագործութիւններ էին համարւում նրանց համար: Ասորական թագաւորները, կարծես թէ մրցում էին միմեանց հետ, աշխատելով իւրաքանչիւրն իր կատարած գազանութիւններով գերազանցել նախորդներին: Եւ նրանք մի առանձին պարծանքով արձանագրել էին տալիս իրանց կատարած գործերը հսկայական ժայռերի վրայ, հաւատացած լինելով, թէ յետագայ սերունդները պիտի հիանան իրանց սոսկալի արարքներով:



Սեպագիր արձանագրութիւն

Այսպէս՝ Տիգլատ-Պալասար թագաւորը իր թողած արձանագրութիւններից մէկում պարծենալով, թէ իր յաղթած 20 հազար ժողովրդից միմիայն 600-ն է կենդանի թողել, ամենայն սառնասրտութեամբ պատմում է.

«Շնամինների դիակներով ես լցրեցի ձորերն ու հովիտները, ես նրանց գլուխներով զարդարեցի նրանց քաղաքների պատերը, ես վերցրի բազմաթիւ ստրուկներ, ահագին աւար և անհամար, հարստութիւններ: Նրանցից 6000 հոգի խոնարհեցին իմ զօրութեան առաջ, համբուրեցին ոտներս, և ես նրանց գերի վերցրի»: «Ես վերցրի նրանց

քաղաքները,—ասում է պարծանքով Սեննեքերիմ թագաւորը,—և մոխրակոյտեր դարձրի նրանց: Ամբողջ երկիրը, աւելով աւելածի նման սրբեցի և անապատ դարձրի»:

«Իմ պատերազմական կառքերը,—ասած է մի այլ արձանագրութեան մէջ,—կոխոտում էին թէ մարդկանց և թէ անասուններին, և չարդոտում թշնամիների դիակները: Ես ինձ համար յուշարձան կանգնեցրի դիակների բազմաթիւ կոյտերից, նախօրօք ձեռքս ընկածների ձեռքերն ու ոտքերը կոտրել տալուց յետոյ»:

«Ես թշնամիների իւրաքանչիւր երկուսից մէկին սպանում էի,—պարծենում է մի այլ թագաւոր,—և նրանց գլուխներով զարդարեցի քաղաքի պատերը: Ես պատ քաշեցի քաղաքի մեծ դռների առաջ և այդ պատը ծածկեցի




Սեննեքերիմ թագաւորին խոնարհութիւն է անում յաղթուած իշխանը

ապստամբութեան գլխաւորների մարմնից քերթած կաշիներով: Մի քանիսին ողջ-ողջ պատերի մէջ թաղեցի, միւսներին ցիցերի վրա նստեցրի և կամ խաչերի վրայ գամեցի»:

«Նա կենդանի իմ ձեռքս ընկաւ,—պատմում է Ասուրբանապալ թագաւորը մի յաղթուած օտար թագաւորի մասին,—և ես հրամայեցի նրա կաշին քերթել: Ես հրամայեցի նրա որդու աչքերը հանել և ապա, փոխանակ

դիակը գցելու, որ շներն ուտեն, գամեցի Արեգակի մեծ դռնիցը Նինէէում»։

Եւ այս բոլոր գազանութիւնները ասորեստանցիք ու նրանց թագաւորները կատարում էին իրանց Ասուր աստծու անունով. «Այսպէս էր հրամայել իմ ամենաողորմած Ասուր աստուածը», շարունակ կրկնւում է նրանց թողած արձանագրութիւնների մէջ։



Ասորական զինուորները տանում են օտարներից կողոպտած աստուածներին

Այդ արձանագրութիւնների մէջ միևնոյն ժամանակ թագաւորները մանրամասն պատմում էին, թէ իրանց նւաճած երկիրներից որչափ կողոպուտ, հարստութիւններ ու գերիներ են բերել և դարձեալ ինչ գործեր կատարել։

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ինչ չափով որ ասորեստանցիք հմուտ էին պատերազմներ անելու ու երկիրներ նւաճելու մէջ, նոյն չա-

փով էլ նրանք անհոգ էին իրանց նւաճած երկիրները կառավարելու մէջ։ Կառավարութեան ամբողջ ոյժը զինւորութեան վրայ հիմնւած լինելով, ասորական թագաւորները կարողանում էին միմիայն պատերազմների միջոցով գոհացում տալ զօրքի օրըստօրէ աճող պէտքերին։ Այդ պատճառով էլ ասորեստանցիների մղած պատերազմները հիմնւած էին միմիայն նւաճւած երկիրները կողոպտելու և աւերմունքներով սարսափ տարածելու վրայ։ Նրանք երբէք հոգ չէին տանում այդ երկիրների կամ նրանց ժողովրդի բարեկարգութեան ու օրինաւոր կառավարութեան մասին։ Ընդհակառակը՝ այս կամ այն երկիրը նւաճելով, նրանք ամեն բան կողոպտում, աւերում, այրում և հիմնայատակ էին անում, իսկ ժողովրդին էլ ահագին բազմութեամբ գերում և ստրկութեան էին տանում։




Կոիւը բերդի պարիսպի վրայ

Ասորեստանի թագաւորները տիրած երկրում իրանց

յատուկ կառավարիչը չէին նշանակում, այլ թողնում էին թագաւորելու տեղական իշխաններից նրան, ով խոստանում էր հաւատարիմ հպատակ մնալ Ասորեստանին և տարեկան մի որոշ տուրք վճարել։ Տուրքը վճարւում էր երկրի բերքերով։ Այսպէս օրինակ՝ Հայաստանի թագաւորները վճարում էին գլխաւորաբար ձիեր և էշեր։

Նւաճւած երկիրները կառավարել չիմանալու և նրանց բնակիչների հետ չափազանց անգթութեամբ վարւելու պատճառով, Ասորեստանի տիրած երկիրներում ապստամբութիւնները միշտ անպակաս էին։ Հաւատարիմ հպատակութեան խոստում տւած թագաւորները հէնց որ



Ասորակ. զօրքն անցնում է Եփրատը

նկատում էին, թէ ասորեստանցիք մի այլ կողմում պատերազմով են զբաղւած, իսկոյն գլուխ էին բարձրացնում և հրաժարւում հարկ տալուց։ Այդպիսով ասորեստանցիները ստիպւած էին լինում նոր ու նոր արշաւանքներ կատարել միևնոյն երկրի վրայ և նորից գրաւել այն, ինչ մի քանի անգամ արդէն նւաճել էին իրանց նախորդները։

Եւ որպէսզի լաւ դաս տան խոստիացանց ազգերին ու թագաւորներին, ասորիները կրկնապատկում ու քառապատկում էին իրանց կատարած անգթութիւնները, հասւացած լինելով, թէ սրով ու կրակով տարածած սարսափների ազդեցութեան տակ ապստամբութիւնները այլևս

չեն կրկնւի։ Ապստամբութիւններին վերջ դնելու նպատակով, Ասորեստանի թագաւորները մի այլ՝ նոյնպէս շատ յոռի քաղաքականութիւն ունէին. նրանք նւաճւած երկիրների ժողովուրդներին մեծ բազմութեամբ գաղթեցնում էին Ասորեստան կամ այլ ասորական երկիրներ և նրանց տեղ ասորիներ կամ այլ ժողովուրդ բնակեցնում։ Թէև այդ եղանակով տեղափոխւած ժողովուրդներին իրանց նոր հայրենիքում վարելահողեր, ագարակներ էին տրւում, բայց և այնպէս բնիկ հայրենիքից վտարւած գաղթականները միշտ դժգոհ էին իրանց վիճակից, և աւելութիւնը դէպի Ասորեստանը գնալով, աւելի էր աճում, ապստամբութիւններն էլ անվերջ կրկնւում էին։

Ա Ս Ո Ր Ե Ս Տ Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

Անվերջ կողոպուտների շնորհով Ասորեստանը չափազանց հարստացաւ։ Ասորական քաղաքները իրանց թագաւորական հոյակապ ու փառահեղ պալատներով ոչ միայն մրցում, այլ նոյն իսկ գերազանցում էին Բաբելոնին։ Ասորեստանի թագաւորների գլխաւոր ձգտումներից մէկն էլ հէնց այն էր, որ Բաբելոնի ամբողջ հարստութիւնը, փարթամութիւնն ու վաճառականութիւնը իրանց երկիրը տեղափոխեն և միանգամայն նսեմացնեն այդ հարուստ ու վաճառաշահ քաղաքի նշանակութիւնը։ Այդ նպատակով ասորական Սեննախերիբ (Սեննեքերիմ) թագաւորը, մինչև իսկ մի անգամ նւաճելով Բաբելոնը, կատարելապէս հիմնայատակ արեց նրան, գետնի հետ հաւասարեցրեց և բնակիչներին գերի տարաւ։ Սակայն, նրա որդին՝ Ասարդադոնը նորից վերադարձրեց գերւած ժողովրդին և ամեն կերպ օգնեց նրան վերականգնելու քանդւած քաղաքը։

Նամանաւանդ չափազանց մեծ հարստութեան ու փառահեղութեան էր հասել ասորական Նինէ քաղաքը, ո-

ըին սաստիկ նպաստում էր Նոյնպէս և իր աշխարհագրական դիրքը։ Նինուէն շինուած էր Տիգրիս գետի ափին և Բաբելոնի նման վաճառականութեան շատ մեծ յարմա-




Ասորակ. թագ. զգեստները

րութիւններ ունէր։ Բաբելոնից, Եգիպտոսից, Փիւնիկիայից և այլ երկիրներից այդտեղ բազմաթիւ ու բազմատեսակ ապրանքներ էին բերւում և շատ հեշտութեամբ վաճառւում ասորական վերին աստիճանի ցոպ ու շռայլ կեանք վարող թագաւորների ու նրանց զինուորական պալատականների պէտքերի համար։

Նինուէն, ինչպէս և Ասորեստանի միւս քաղաքները՝ Կալախ, Դուր-Սարուկին և այլն, մի-մի ամուր բերդաքաղաքներ էին։ Նրանք շրջապատւած էին աղիւսէ բարձր ու այնպիսի հաստ պարիսպներով, որոնց վրայ կարող էին կողք կողքի 3 կառք անցնել։ Որոշ հեռաւորութեամբ պարիսպների վրայ հսկայական աշտարակներ էին բարձրանում, իսկ չորս կողմից մեծ դռներ ունէին, որ փակւում էին գիշերները։

Ասորեստանի թագաւորները սովորութիւն ունէին՝ ամեն մէկն իր համար մի նոր մայրաքաղաք կամ գոնէ


մի առանձին պալատ շինել տալ։ Նրանց պալատներն իրանց հսկայական մեծութեամբ ու մռայլութեամբ նոյնչափ ահռելի տպաւորութիւն էին գործում ժողովրդի վր-



Ասորական պալատ

րայ, ինչպէս և իրանք՝ թագաւորները։ Տպաւորութիւնն աւելի խիստ դարձնելու նպատակով, թէ պալատի և թէ քաղաքի դռների մօտ, երկու կողմից, քարից շինած վիթխարի սֆինքսներ էին կանգնեցնում։ Ասորական սֆինքսները մարդու գլուխ ունեցող թեւաւոր եզ կամ առիւծ էին ներկայացնում։

Ասորեստանի թէ քաղաքները և թէ նրանց մէջ եղած նշանաւոր շինութիւնները մեծ մասամբ կառուցել էն գերւած ստրուկների ձեռքով։ Այդ գերիների ձեռքով ասորական թագաւորներն իրանց երկրում նոյնպէս և բազմաթիւ արւեստական անտառներ ու խաղողի այգիներ էին տնկել տւել և արդիւնաբերական մի քանի ճիւղեր զարգացրել։



Ասորական սֆինքս

ԱՍՈՒԲԱՆԱՊԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Ասորեստանի թագաւորներն առհասարակ իրանց ծերութեան հասակում, երբ այլևս անկարող էին պատերազմներին անձամբ մասնակցել, սկսում էին իրանց երկրի կուլտուրական գործերով զբաղւել։ Այդ շրջաններումն է, որ Ասորեստանում արդիւնագործութեան մի քանի ճիւղեր զարգացան, ինչպէս օրինակ՝ զինագործութիւնը, ոսկերչութիւնը, գինեգործութիւնը և այլն։

Ասորական թագաւորների կատարած կուլտուրական գործերից ամենանշանաւորը Ասուրբանապալ թագաւորի հրամանով կազմած գրադարանն է համարւում։ Այս թագաւորը երիտասարդ հասակումն էլ չէր սիրում անձամբ պատերազմներին մասնակցել. նա իր զօրապետներին էր

ուղարկում, որոնց ձեռքով կատարւած գազանութիւնները, սակայն, նա իրան էր վերագրում իր թողած պարծենկոտ արձանագրութիւնների մէջ։ Նա թէև, միւս թագաւորներից ոչ պակաս, ցոպ կեանք էր վարում ու խրախճանքներ սիրում, բայց և միևնոյն ժամանակ գրականութեան ու գիտութիւնների էլ մեծ սիրահար էր։ Նա հաւաքել էր տւել քաղդէական և ասորական այն բոլոր հին ու նոր գրւածքները, ինչքոր կարելի էր եղել ձեռք բերել, և մի շատ ընդարձակ գրադարան էր կազմել իր պալատում։

Ասուրբանապալի խնամքով կազմւած գրադարանը տասնեակ հազար աղիւսի կտորներից էր բաղկացած, որոնց մէջ ամբողջ հատորներ կազմող գրքեր կային։

Հէնց այդ՝ հողի տակից պեղւած՝ գրադարանի շնորհով է գլխաւորաբար լոյս աշխարհ հանւել մարդկային ցեղի կուլտուրայի այն երկու ամենահին որքանների՝ Քաղդէայի ու Ասորեստանի՝ պատմութիւնը, որոնցից այժմ հողի տակ թաղւած աւերակներ են միայն մնացել։

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Շարունակական ու անվերջ պատերազմները, ինչպէս որ պատճառ էին եղել Ասորեստանի չափազանց զօրանալուն, այնպէս էլ նրա յանկարծական անկման պատճառը դարձան։ Հպատակ ազգերի աւելութիւնը դէպի ասորական գոռոզ ու խստասիրտ թագաւորները գնալով աւելի ու աւելի աճում էր։ Այդ թագաւորներին չէր սիրումնաև հարազատ ժողովուրդը։ Շնորհիւ թագաւորների այն քաղաքականութեան, որ զանազան երկիրների բնակիչներին տեղից-տեղ էին գաղթեցնում, դժգոհութիւնը ընդհանուր էր։ Միատ դժգոհ էին իրանց վիճակից և ասորիները, որոնք իրանց հարազատ հայրենիքի հող ու ջրից զրկւելով, ոչ միայն դժգոհ էին մնում իրանց վիճակից, այլև հետզ-

հետէ սառչում էին դէպի իրանց հայրենիքը և կորցնում նախկին հայրենասիրութիւնը։ Իսկ դրա հետևանքն այն էր լինում, որ ասորական պետութիւնը թուլանում էր և թագաւորների նախկին զօրութիւնն էլ կամաց-կամաց խախտւում։

VII-րդ դարի կիսում Ասորեստանը այլևս նմանում էր մի՝ թէև շատ փայլուն, բայց և շատ խախուտ շէնքի, ո-



Սկիւթացիներ

րին բաւական էր մի ուժգին հարուած, որպէսզի մէկ անգամից քանդւի և աւերակների մի կատարեալ կոյտ դառնայ։ Եւ այդ հարուածը եկաւ այնպիսի կողմից, որտեղից Ասորեստանի թագաւորները, գուցէ ամենից քիչ վտանգ էին սպասում։

Ասորեստանին առաջին հարուածը տւեց մի բոլորովին նոր ժողովուրդ, արիական ցեղից, որ հնումը յայտնի էր *սկիւթացի*, *սարմատ* և այլ անուններով։

Դա մի վայրենի ժողովուրդ էր, որը դեռ ևս թափառական կեանք էր վարում։ Նա եկել էր այժմեան հարաւային Ռուսաստանից և, կանգ առնելով Կուր և Արաքս գետերի աւազաններում, այնտեղից աւազակային յարձակումներ էր գործում հարևան հարուստ երկիրների վրայ։ Սկիւթացիք շատ լաւ ձիավարներ էին և խիստ անողոք դէպի օտարներն ու թշնամիները։ Այդ բարբարոսները երկիրներ չէին գրաւում, այլ միայն կողոպտում, քանդում ու ամեն ինչ աւերակ էին դարձնում։

Առաջին անգամ նրանք մի այդպիսի աւերիչ արշաւանք գործեցին Ասորեստանի վրայ VII-րդ դարի (Ք. ծ. ա.) վերջերում։ Այդ միջոցին Ասորեստանը պատերազմի մէջ էր *Միդիական* նորակազմ թագաւորութեան հետ, որն այդ ժամանակներում նոր էր սկսել զօրեղանալ Ասորեստանի արևելեան կողմում։ Սկիւթացիները տակն ու վրայ արեցին թէ Միդիան և թէ Ասորեստանը։ Սրա ամենանշանաւոր քաղաքները՝ Կալախ, Ասուր և Ուրիշները՝ կրակի ճարակ դարձան և հողի հետ հաւասարւեցին։ Անվնաս մնաց միայն Նինուէն։ Թէ Ասորեստանի և թէ Միդիայի թագաւորները սկիւթացիներին հարկատու դարձան։

Այդ դրութիւնը սակայն երկար չտևեց։ Միդիայի թագաւոր Կիաքսարը խորամանկութեամբ բարեկամութիւն հաստատեց սկիւթացիների գլխաւոր առաջնորդների հետ և մէկ անգամ, նրանց իր մօտ խնճոյքի հրաւիրելով, բոլորին էլ կոտորել տւեց։

Այդպիսի նենգամտութիւնից սարսափած՝ սկիւթացիները այլևս թողեցին ու փախան այդ երկիրներից։

Կիաքսարի այդ հնարագիտութեան շնորհով, նրա համբաւը սաստիկ մեծացաւ հարևան ազգերի աչքում։ Օգտւելով այդ հանգամանքից, Կիաքսարը, սկիւթացիների հեռանալուց յետոյ, պատրաստւեց նորից Ասորեստանի դէմ պատերազմ սկսելու։ Այդ նպատակով նա դաշնակցութիւն կապեց Բաբելոնի, Էլամի և այլ՝ Ասորեստանին հարկատու՝ թագաւորների հետ. դաշնակիցները կարճ ժամանակի մէջ նւաճեցին Նինուէն, հիմքից կործանեցին նրան և բնակիչներին էլ գերի տարան։

Ասում են, որ Ասորեստանի վերջին թագաւորը, Սարակ անունով, չը կամենալով թշնամիների ձեռքն ընկնել, հրդեհել է իր պալատն ու ինքն էլ ամբողջ ընտանիքով այրւել նրա մէջ։

Ասորեստանի ընդարձակ տէրութիւնը երկու գլխաւոր դաշնակից թագաւորները բաժանեցին իրանց մէջ. իսկա-

կան Ասորեստանը, այն է՝ Միջագետքի վերին մասն ու նրա սահմանակից հիւսիսային և հիւսիս-արևմտեան երկիրները, մինչև Ալիւս գետը, Կիաքսարի տիրապետութեան տակ մտան։ Իսկ Միջագետքի հարաւային մասը, այն է՝ ամբողջ Քաղդէան ու նրա սահմանակից Սիբիան, Պալեստինը և Էլամը Բաբելոնի Նաբուպալասար թագաւորին բաժին հասան։

ԲԱԲԵԼՈՆԸ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Ասորեստանի անկումից յետոյ, Բաբելոնը նորից ըսկըսեց արագութեամբ բարձրանալ։ Կիաքսարի հետ կապած բարեկամական դաշնակցութեան շնորհով, այդ երկիրը հիւսիսային ու արևելեան միւս թշնամիների յարձակումներից ևս ազատուեց և ամբողջ 15 տարի կատարեալ խաղաղութիւն ու հանգստութիւն վայելեց։ Այդ անդորրութեան շնորհով, Բաբելոնում նորից ծաղկեցին արհեստները, արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնը։


Բաբելոնը զօրացաւ ու խիստ մեծ փառքի և բարգաւաճման հասաւ՝ մանաւանդ Նաբուպալասարի որդու՝ Նաբուգոդոնոսորի թագաւորութեան օրով, որ մի շատ խելօք ու քաջ անձնաւորութիւն էր։

Նաբուգոդոնոսորը մեծ համբաւ էր ստացել դեռ Ասորեստանի դէմ մղած պատերազմի ժամանակ, երբ նա, չը նայելով իր երիտասարդ հասակին, մի շարք փառաւոր քաջագործութիւններ էր կատարել։ Նրա փառքն ու համբաւը նամանաւանդ մեծացան եգիպտացիների հետ ունեցած պատերազմի ժամանակ։

Այդ ժամանակներում Եգիպտոսն էլ զօրեղացել էր և Նեխաո փարաւոնը, բազմաթիւ զօրքերի գլուխն անցած յարձակւել էր սիրիական երկիրների վրայ ու գրաւել

նրանցից մի քանիսը, որոնց թւում և Հրէաստանը։ Նա պատրաստութիւններ էր տեսնում իր արշաւանքը մինչև Եփրատ շարունակել, բայց նրան բաբելացիք արգելք հանդիսացան։

Նաբուպալասարն այդ ժամանակ թէ ծերացած և թէ տկար լինելով, եգիպտացիների դէմ իր որդուն ուղարկեց։ Նաբուգոդոնոսորը բազմաթիւ զօրքով Սիրիա մտաւ, երկու զօրաւոր թշնամիները հանդիպեցին Կարկեմիշ քաղաքի մօտ, ուր և վճռական ճակատամարտը տեղի ունեցաւ։ Եգիպտացիք սոսկալի պարտութիւն կրեցին, և Նեխաո փախաւ Եգիպտոս։ Նաբուգոդոնոսորը անկարող եղաւ նրան հալածել, որովհետև այդ միջոցին իր հօր մահուան լուրն ստանալով, ստիպւած էր շտապով Բաբելոն վերադառնալ, թագաւորական գահը ժառանգելու։



Սողոմոնի տաճարը

Թագաւոր դառնալուց յետոյ, Նաբուգոդոնոսորը աւելի ևս ընդարձակեց իր երկրի սահմանները, աշխատելով շարունակ ոչ միայն վերականգնել Բաբելոնի նախկին փառքը, այլև նրան էլ աւելի փառաւոր դարձնել։

Ամենից առաջ նա դարձեալ մի արշաւանք կատարեց դէպի սիրիական երկիրները։ Հրէաստանի Սեդեկիա թագաւորը, եգիպտական փարաւոնի դրդմամբ, հրաժարւել էր հարկ վճարել Բաբելոնին։ Նաբուգոդոնոսորը յարձակեցաւ նրա վրայ և կարճատև պաշարումից յետոյ, առաւ նրա թագաւորանիստ Երուսաղէմ քաղաքը, որ քանդեց, հիմնայատակ արեց, ինչպէս և քանդեց Սողոմոն թագաւորի շինած փառահեղ տաճարը, նախօրօք կողոպտելով նրա մէջ եղած բոլոր թանկագին հարստութիւնները։ Քաղաքում կենդանի մնացած բնակիչներին էլ նա գերի տարաւ Բաբելոն։ Յետոյ Նաբուգոդոնոսորը նւաճեց ու հարկատու դարձրեց Փիւնիկայի հարուստ քաղաքները, որից յետոյ Բաբելական թագաւորութեան սահմանները մինչև Միջերկրական ծովը հասան։

ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ասորեստանի փլատակների վրայ բաբելական զօրեղ պետութիւնը հաստատելուց յետոյ Նաբուգոդոնոսորը սկսեց իր երկրի բարգաւաճման գործով զբաղւել։ Նա մաքրել ու նորոգել տւեց այն բոլոր հին ջրանցքներն ու աւազանները, որոնք Ասորեստանի տիրապետութեան ժամանակից կիսաւեր ու խանգարւած էին մնացել։ Բացի դրանից՝ նա չորս հատ նոր լայն ու խոր այնպիսի ջրանցքներ շինել տւեց, որոնց միջոցով Տիգրիսն ու Եփրատը միանում էին միմեանց հետ և որոնց վրայ առևտրական նաւերը կարողանում էին ազատ կերպով երթևեկութիւն կատարել։ Այդ մեծ ջրանցքներից բազմաթիւ մանր ջրանցքների մի ամբողջ ցանց էր բաժանւում դէպի երկրի խորքերը, և նրանց միջոցով հնարաւոր էր դառնում ամենահեռաւոր դաշտերն անգամ ոռոգել։

Պահեստի համար միշտ առատ ջուր ունենալու նպատակով, Նաբուգոդոնոսորը մի ընդարձակ աւազան էր փորել տւել Եփրատի ձախ ափին՝ Սիպարա քաղաքի մօտ։ Այդ աւազանի շուրջը, պատմագիր Հերոդոտի ասելով, մօտ 35 մղոն էր, նոյնչափ էր և նրա խորութիւնը։

Թէ Սիպարայի աւազանը և թէ չորս հսկայական ջրանցքները շատ մեծ նշանակութիւն ունէին նաև երկրի պաշտպանութեան համար։ Նրանք ոչ միայն կարող էին հիւսիսից յարձակւող թշնամիներին արգելք հանդիսանալ, այլ և, ծայրահեղ դէպքում, կարելի էր ամբողջ երկիրն այնպէս հեղեղել, որ անհնարին լինէր թշնամուն առաջ անցնելու։

Երկիրը հիւսիսից լաւ պաշտպանելու նպատակով, Նաբուգոդոնոսորը սաստիկ ամրացրել էր նաև իր ամենահիւսիսային Սիպարա քաղաքը։ Բացի դրանից՝ երկրի հիւսիսային սահմանի ամբողջ երկարութեամբ, Եփրատից մինչև Տիգրիս, մի շատ հաստ ու բարձր պարիսպ էր շինել տւել։

Բաբելոնը ասորական լուծից ազատւած ժամանակ կիսաքանդ ու կիսաւեր դրութեան մէջ էր գտնւում։ Նաբուպալասարը սկսել էր վերաշինել նրան, բայց շատ բան կիսատ էր մնացել։ Նաբուգոդոնոսորը շարունակելով հօր սկսածը, վերանորոգեց բոլոր հին պալատներն ու տաճարները, նրանց վրայ բազմաթիւ նոր և փառահեղ շինութիւններ էլ աւելացնելով։

Քաղաքը պաշտպանելու նպատակով, Նաբուգոդոնոսորը նրան կրկնակի պարիսպներով էր շրջապատել։ Եւ որպէսզի թշնամիներից պաշարւած դէպքում հացի կարօտութիւն չզգացւի Բաբելոնում, նա այդ երկու պարիսպների միջև ընդարձակ տարածութիւն էր թողել, վար ու ցանք անելու համար։

Նաբուգոդոնոսորի շինել տւած կառուցւածքներից

շատ նշանաւոր էր Եփրատի վրայի կամուրջը, որը քաղաքի երկու մասերն էր իրար միացնում: Այդ կամուրջը այնպէս էր շինուած, որ հարկաւոր դէպքում նրան կարելի էր մէջտեղից բանալ, և քաղաքի երկու մասերի հաղորդակցութիւնը կտրել իրարից: Ոչ պակաս նշանաւոր էին իրանց շքեղութեամբ նաև Նաբուգոդոնոսորի



Կախուած պարտէզները

սորի նոր պալատը, Բէլ-Մարդուկի փառաւոր տաճարը, իր եօթ յարկանի զուգուրատով, և մանաւանդ կախուած պարտէզները, որ ամենքին հիացմունք ու զարմանք էին պատճառում:

Ասում են, որ Նաբուգոդոնոսորը այդ պարտէզները շինել էր տուել իր սիրելի կնոջ, Ամիտիսի համար, որը Կիաքսարի աղջիկն էր: Ամիտիսը, իբրև լեռնոտ ու անտառախիտ երկրի զաւակ սաստիկ տխրելիս է եղել դաշտավայր Բաբելոնում: Իսկ Նաբուգոդոնոսորը, կամենալով նրա տխրութիւնը փարատել, շինել է տալիս այնպիսի պարտէզներ, որ նայողի վրայ անտառապատ սարերի տպաւորութիւն թողնեն:

Այդ պարտէզները մի քանի յարկանի ընդարձակ տերրասներ էին միմեանց վրայ հաստատուն սիւներով ամրացած և վրան ամեն տեսակ ծառեր ու բոյսեր տնկած: Սիւներից մէկի մէջ դեռեղած էին ջրհան մեքենաներ, որոնց միջոցով ջուրը բարձրանում և ջրում էր պարտէզի բոլոր յարկերը:

Նաբուգոդոնոսորի այդ շինարար և բազմարդիւն գործունէութիւնը տևեց մօտ կէս դար (44 տարի): Նրա թագաւորութեան օրով Բաբելոնը այնպէս զարդարուել, հարստացել ու փառահեղութեան էր հասել, որ նրա համբաւը շատ ու շատ հեռաւոր երկիրներ էր տարածուել: Օտարները այդ ժամանակ Բաբելոնն անւանում էին «Ոսկով հարուստ քաղաք», «պետութիւնների զարդարանք», «շքեղութեան հպարտութիւն» և այլն:

Այդ վերին աստիճանի շքեղ ու փառահեղ քաղաքը սակայն, ինչպէս և Բաբելական անկախ պետութիւնը, Նաբուգոդոնոսորի մահից յետոյ, երկար կեանք չունեցաւ: Նա էլ ընկաւ (536 թ.) նոյնպէս անսպասելի կերպով, ինչպէս մօտ 70 տարի առաջ ընկել էր Նինուէն և ամբողջ Ասորեստանը:



ՓԻՆԻԿԻԱ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Միջագետքից գաղթած սեմիտների մի մեծ խումբ գնաց հաստատուեց Միջերկրական ծովի արևելեան ափում՝ Փոքր-Ասիայից հարաւ։ Այդ երկիրը կոչւում էր Փինիկիա և բնակիչներն էլ հէնց երկրի անունով փինիկեցիներ կոչուեցին։


Փինիկիան ցամաքային մի նեղ շերտ է, որի արևմտեան կողմում ընդարձակ ծովն է բացւում, իսկ արևելեան կողմում Լիբանանի լեռներն են բարձրանում։ Հնումն այդ երկիրը խիստ հարուստ էր բուսականութեամբ. լեռները ամբողջապէս ծածկւած էին վայրի ծառերի անտառներով, իսկ աւելի ցածրում արմաւենիներն էին թագաւորում, որոնց ծառաստանները տարածւում էին մինչև ծովափը։ Միջագետքում հողի մշակութեան վարժւած փինիկեցիները իրանց այս նոր հայրենիքում էլ հողագործութեամբ էին պարապում։ Սակայն Փինիկիայի առաջին քաղաքները ծովափին էին, որ նրա բերքը չէր բաւականանում հետզհետէ աճող բնակիչների կարիքներին։ Այդ պակասը նրանք լրացնում էին ձկնորսութեամբ, արհեստներով ու մանաւանդ վաճառականութեամբ, որին խիստ նպաստում էր իրանց երկրի աշխարհագրական դիրքը էլ։

Փինիկիայի եզերքը, չափազանց հարուստ լինելով ծովախորշերով ու ծոցերով, շատ մեծ յարմարութիւն էր ներկայացնում նաւամատոյցների համար։ Իսկ Լիբանանի շքեղ անտառներն առատ նիւթ էին մատակարարում նաւերը ու նաւակները շինելու։ Եւ փինիկեցիները հին ժամանակների ամենանշանաւոր նաւագնացները դարձան։ Սկզբում նրանք շատ հեռուն չէին գնում, այլ Եգիպտոսի, Փոքր Ասիայի և մերձաւոր կղզիների ափերն էին այցելում միայն։ Իսկ յետոյ, աւելի ու աւելի վարժւելով, նրանք ոչ միայն ամբողջ Միջերկրականն էին շրջում, այլ և Ջիբրալտարի նեղուցն անցնելով, շատ ու շատ հեռաւոր երկիրներ էին գնում՝ թէ դէպի արևելք՝ Հնդկաստանի կողմը և թէ դէպի հիւսիս՝ Բրիտանիայի և Գերմանիայի ափերը։

Աւանդութիւնն ասում է, որ նրանք եգիպտական Նեխո փարաւոնի յանձնարարութեամբ շրջել են ամբողջ Աֆրիկան։ Փինիկեցիք յաճախ, օգտւելով իրանց աշխարհագրական դիրքից, ծովային աւազակութեամբ էին պարապում. օտար ծովեզրների վրայ յարձակւելով, գերում էին անպաշտպան մարդկանց, մանաւանդ կանանց ու երեխաներին և տանում ծախում էին իբրև ստրուկների ասիական վաճառանոցներում։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Փիւնիկեցիների այդ հեռաւոր ճանապարհորդութիւնների գլխաւոր նպատակը վաճառականութիւնն էր։ Իրանց երկրի աշխարհագրական դիրքի շնորհով նրանք մի տեսակ միջնորդ էին հանդիսանում այն ժամանակւայ բոլոր ծաղկած երկիրների միջև։ Նրանց վաճառականութեան առարկան կազմում էին թէ իրանց և թէ օտար երկիրների ապրանքները։ Առևտուրը կատարւում էր փոխանակութեամբ։ Պատմում են, որ Աֆրիկայի վայրենիների հետ առևտուր անելիս, փիւնիկեցիները իրանց բերած ապրանքը ծովափ էին իջեցնում, կողքին կրակ վառում



Փիւնիկեան նաւ

և ապա քաշւում իրանց նաւերը։ Վայրենիները կրակի ծուխը նկատելով, գալիս էին և բերած ապրանքի կողքին մի որոշ քանակութեամբ ոսկի թողնում ու հեռանում էին։ Փիւնիկեցիները նորից ցամաք էին դուրս գալիս ու տեսնում. եթէ ոսկու քանակը համապատասխան էին համարում իրանց բերած ապրանքին, վերցնում հեռանում էին, իսկ եթէ ոչ՝ նորից նաւերն էին գնում և սպասում, մինչև որ վայրենիները ոսկու քանակը կաւելացնէին։ Փիւնիկեցիները ոսկուն ձեռք չէին տալիս, մինչև որ բերած ոսկին իրանց ապրանքի արժէքին համապատասխան չէին համարում, իսկ վայրենիներն էլ ապրանքը չէին տանում, մինչև որ փիւնիկեցիները ոսկին չը տանէին։

Բայց միայն ծովի վրայ չէր, որ զարգացած էր փիւնիկեցիների վաճառականութիւնը։ Նրանց կարաւանները ցամաքով գնում հասնում էին Արաբիա, Բաբելոն, Հայաստան և մինչև իսկ Բուխարա ու Տիբետ։




Փիւնիկ. պատրաստած ապակեայ աման

Օտար երկիրներից բերած ապրանքներից նշանաւոր էին՝ Արաբիայի ոսկին ու անուշահոտ խունկերը, Սպանիայի արծաթը, Բրիտանիայի անագը, Գերմանիայի սաթը (քահրեբարը), Հայաստանի ձիերն ու կառքերը, Բուխարայի մետաքսը, Բաբելոնի, Նինուէի ու Եգիպտոսի բրդէ և այլ գործւածքները, բրոնզէ զէնքերը, Հնդկաստանի թանկագին քարերն ու անուշահոտ համեմունքները և, վերջապէս, Կովկասի լեռնականներից բերւած սարուկները։ Միջերկրականի շուրջը գտնուող երկրներից էլ փիւնիկեցիք արտահանում էին՝ հացահատիկներ, գինի, ձէթ, կաշի, բուրդ, պղինձ և այլ հում նիւթեր։

Վաճառականութեան խիստ ընդարձակւելուշնորհով, Փիւնիկիայում հետզհետէ զարգացաւ նաև արդիւնագործութիւնը։ Թէև փիւնիկեցիներն իրանք արհեստների մէջ շատ մեծ հնարագէտներ չէին, բայց չափազանց ճարպիկ էին ուրիշներից փոխ առնելու և սովորածը զանազան ցեղերի ճաշակին յարմարեցնելու մէջ։ Եւ նրանք ահագին ծառայութիւն էին մատուցանում մարդկութեանը,

կուլտուրապէս աւելի զարգացած ազգերից փոխ առածը շատ աւելի յետամնաց ու վայրենի ցեղերի մէջ տարածելով։

Եգիպտացիներից ու բաբելացիներից փիւնիկեցիները սովորել էին ապակի ու թանկագին գործւածքներ պատրաստել, ոսկերչութեամբ, մետաղագործութեամբ և այլ զանազան արհեստներով պարապել։ Վաճառականութեան



Փիւնիկ. պատ. ոսկէ ափսէի յատակը

մէջ խիստ հռչակւած էին փիւնիկեցիների պատրաստած ոսկեայ, արծաթեայ, բրոնզեայ և ապակեայ զանազան անօթներն ու զարդարանքի առարկաները։ Զափազանց հռչակւած էին նամանաւանդ փիւնիկեան ծիրանի գոյնով ներկւած բրդե ու բամբակէ կտորները, որոնք խիստ թանգ էին գնահատւում ամբողջ Արևելքում։ Այդ ներկը նրանք պատրաստում էին մի տեսակ ծովային ժլժլունքից, որոնցով շատ հարուստ էին Փիւնիկէյի ափերը։

Ա. ՅԲՈՒԲԵՆԸ

Փիւնիկեցիների ամենամեծ գիւտը այբուբենն կազմելն է համարւում։ Եգիպտական հիերօգլիֆներն ու Միջագետքի սեպաձև նշանագրերը շատ մեծ անյարմարութիւններ էին ներկայացնում առևտրական ընդարձակ հաշիւներ պահելու և լայն յարաբերութիւններ պահպանելու համար։ Շնորհիւ այն հանգամանքի, որ այդ նշանագրերից ամեն մէկը մի առանձին բառ, վանկ կամ երբեմն էլ մի տառ էր արտայայտում, չափազանց դժւար էր նրանցով անսխալ գրել—կարդալ սովորելը։ Իսկ լաւ գրել—կարդալ չիմանալուց՝ ահագին թիւրիմացութիւններ էին առաջ գալիս վաճառականութեան մէջ, որ բոլորովին ցանկալի բան չէր։ Այդ անյարմարութիւններից ազատւելու համար, փիւնիկեցիները մի բոլորովին նոր տեսակի նշանագրեր հնարեցին։ Այդ նշանագրերի առաւելութիւնն այն էր, որ նրանցից ամեն մէկը մի առանձին հնչիւն էր արտայայտում, որով չափազանց հեշտանում էր գրել-կարդալը։ Այդ տառերը թւով 22 էին, որ և փիւնիկեան այբուբենն էին կազմում։

Այդ տառերը յետոյ յունական և այլ բոլոր եւրոպական այբուբենների հիմքը կազմեցին։

ՓԻՒՆԻԿԵՑԻՆԵՐԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

Երկրի չափազանց փոքրութիւնը ստիպում էր փիւնիկեցիներին շարունակ գաղթել իրանց հայրենիքից և նոր գաղթավայրեր հաստատել։ Նրանց առաջին գաղթավայրը Կիպրոս կղզին էր, որտեղից նրանք մեծ առատութեամբ պղինձ էին արտահանում։ Յետոյ նրանք հետզհետէ տարածւեցին Արշիպելագոսի ու Միջերկրականի բոլոր կղզիների վրայ, Յունաստան, հարաւային Սպանիա և հիւսիսային Աֆրիկա։ Այդ գաղութները թէև քաղաքական-

պէս բոլորովին անկախ էին իրանց մայր հայրենիքից, բայց սերտ կապ էին պահպանում նրա հետ։ Գաղութներից ամեն մէկը մի տեսակ առևտրական միջնորդ էր հանդիսանում իր հարևան ժողովուրդների ու փիւնիկեան վաճառականների միջև, որոնք ամեն մի գաղթավայրում իրանց ապրանքների պահեստն ու գրասենեակն ունէին։

Փիւնիկեան գաղութներից ամենանշանաւորն էր Կարթագէնը (Նոր քաղաք) Հիւսիսային Աֆրիկայում (այժմեան Տունիսի տեղը)։ Այդ գաղթավայրի հիմնելը միւսներից սարքերում էր նրանով, որ գաղթողները մեծ մասամբ ամենահարուստ վաճառականներն էին, որոնք, երկրի ներքին խռովութիւններից ձանձրացած, Պիգմալիոն Կարթագէնը շուտով իր մայր հայրենիքի ամենավտանգաւոր մրցակիցը դարձաւ և նրանից շատ աւելի երկար ժամանակ պահպանեց իր անկախ գոյութիւնը։

ԿՐՕՆԸ

Ա Ս Տ Ի Ա Ծ Ն Ե Ր Ը

Առևտրական նպատակներով շարունակ երկրից երկիր թափառելը մի առանձին կնիք էր դրել փիւնիկեցիների կրօնի վրայ։ Դա մի կատարեալ խառնուրդ էր Միջագետքի, Եգիպտոսի և այն երկիրների կրօնական հասատալիքների։ Իրանց սեփական դիցաբանութիւնը նրանք չունէին. ամբողջապէս վաճառականական հաշիւների մէջ թաղուած փիւնկեցիներին բոլորովին չէր հետաքրքրում, թէ որ աստուածը ինչ բան է կառավարում, ինչպիսի կապ կամ յարաբերութիւն կայ այս ու այն աստուծոյ միջև և այլ այդ կարգի խնդիրները։

Նրանց աստուածներից շատերը մինչև իսկ յատուկ անուններ էլ չունէին։ Ամենագլխաւոր աստուածները կոչւում էին *Բահաղ* և *Աստարտէ* (Բահաղի կինը), որ Միջագետքի Բէլ ու Իշտար անունների աղաւաղուածն էին։ Փիւնիկիայի ամեն մի քաղաքն իր առանձին Բահաղն ունէր, բոլոր քաղաքների համար միակերպ պաշտելի էր միայն *Մելկարտ* աստուածը, որը նաւագնացութեան, վաճառականութեան և գաղութների հովանաւորողն էր համարւում։ Մելկարտի մասին աւանդութիւն կար, թէ նա գնացել էր զօրքով Սպանիան նւաճելու. նաւարկելով Միջերկրական ծովի հարաւային կողմով, նա հասել էր մինչև այժմեան Ջիբրալտարի նեղուցը, այնտեղ երկու կողմում հսկայական ժայռէ սիւներ էր կանգնեցրել և ապա վերադարձել էր Միջերկրականի հիւսիսային կողմով։ Փիւնիկեցիք սկիզբներն այնպէս էին հաւատում, թէ աշխարհը հէնց այդ սիւների մօտ էլ վերջանում է։



Աստարտէ աստուածուհին

Աւելի ուշ ժամանակներում յոյներն այդ աւանդութիւնը փոխ առնելով, իրանց դիւցազն Հերակլէսին վերագրեցին այդ ճանապարհորդութիւնը։

Ամեն բանի մէջ գործնականութիւն ու շահ որոնող փիւնիկեցիներն սկզբում իրանց աստուածների կերպարանքով արձաններ էլ չէին շինում. մի ժամանակ արձաններին պարզ քարի կտորներ կամ տաշած քարի սիւներ էին փոխարինում։ Իսկ երբ սկսեցին ուրիշների ձևով իրանք էլ արձաններ շինել, չափազանց կոշտ ու կոպիտ էին լինում դրանք։ Յաճախ իրանց արձանները նրանք մեծ խնամքով նմանեցնում էին այս կամ այն երկրի ար-

ձաններին։ Երբեմն էլ միևնոյն արձանի մէջ նրանք զանազան երկիրներից փոխ առած գծեր ու արտայայտութիւններ էին միացնում, այսպէս օրինակ՝ ասորական ձևով սանտրած արձանի գլուխը նրանք եգիպտական ասուածների գլխազարդերով էին զարդարում։



Փիւնիկեան արձան

ՏԱՃԱՐՆԵՐ

Փիւնիկեան տաճարներից միայն մէկի աւերակներն են հասել մինչև մեր ժամանակները։ Եւ այդ մէկից կարելի է եզրակացնել, որ փիւնիկեցիները իրանց տաճարի ձևը եգիպտացիներից էին փոխ առել։ Եգիպտական ու փիւնիկեան տաճարների տարբերութիւնն այն էր միայն, որ վերջիններն անհամեմատ փոքր էին։ Բայց այդ՝ ծաւալով փոքր տաճարներում ծառայող քուրմերի թիւը չափազանց մեծ էր։ Բահաղի ու Աստարտէի տաճարում, օրինակ, մօտ հազար քուրմ էր ծառայում։ Գլխաւոր տաճարի քրմապետը թագաւորից յետոյ առաջին մարդն էր պետութեան մէջ։ Քուրմերը հագնւում էին եգիպտական ձևով, իսկ ծիսակատարութիւնն անում էին ասորեստանցիների եղանակով։ Զոհաբերութեան ժամանակ նրանք էլ նւագում և անուշահոտ խունկեր էին ծխում։

Փիւնիկեցիներն իրանց աստուածների բարեգթութիւնը շարժելու համար, մինչև իսկ իրանց զաւակներն էին զոհում։ Ամենաանգութ ու դաժան աստուածը Մոլոքն էր համարւում, որն արևի կիզիչ տապի մարմնացումն էր։ Երկարատև երաշտից, վարակիչ հիւանդութիւններից և զօրեղ թշնամիների հասցրած արհաւիրքներից ազատւելու համար, փիւնիկեցիները նրան մարդկային զոհեր էին բերում։ Զոհւողը պէտք է լաւ ընտանիքից և ամենից շատ սիրած արու զաւակը լինէր։

Փիւնիկեցիները ծանօթ չէին հոգու անմահութեան գաղափարին. իբրև չափազանց գործնական մարդիկ, նրանք այդ կարգի վերացական խնդիրներով չէին զբաղւում։ Նրանք իրանց մեռելների մարմինները թաղում էին փոքրադիր դամբարաններում, ու աշխատում էին եգիպտական բուրգերին նմանեցնել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Փիւնիկիայի ամբողջ երկիրը բաժանւած էր մի քանի քաղաքների միջև, որոնցից ամեն մէկը մի առանձին տէրութիւն էր ներկայացնում։ Ամեն մի քաղաք իր առանձին թագաւորն ունէր, որի իշխանութիւնը ժառանգաբար անցնում էր որդուց որդի։ Բայց Փիւնիկիայի թագաւորները բոլորովին նման չէին արևելեան միւս թագաւորներին, նրանց իրաւունքները չափազանց սահմա-

նափակւած էին ամենահարուստ վաճառականներից կազմւած Խորհուրդներով, որոնք մի-մի ծերակոյտ էին ներկայացնում։ Ինքը թագաւորն էլ վաճառականութեամբ էր պարապում և հէնց ամենահարուստ վաճառականն էր քաղաքում։ Այդպիսով Փիւնիկիայ տէրութիւնները, չը նայելով որ թագաւորներ ունէին, մի-մի փոքրիկ հանրապետութիւն էին։ Ամեն մի տէրութեան կառավարչական գործերն ու իշխանութիւնը հարուստ վաճառականների ձեռքումն էին գտնւում։ Այդպիսի կառավարութիւնը կոչւում է պլուտոկրատիա, այսինքն՝ փողատէրերի վարչութիւն։



Տիրոս քաղաքի պարիսպները

Սաորին դասակարգերի, ինչպէս և սարուկների դրութիւնը չափազանց ծանր էր Փիւնիկիայում։ Նրանք յաճախ ապստամբում և խիստ սպառնական էին դառնում իշխող դասակարգի համար։ Հէնց դրա համար էլ կառավարութիւնը միշտ աշխատում էր, դժգոհներից ազատւելու նպատակով, նոր ու նոր գաղթավայրեր գտնել նրանց համար։

Իր ունեցած չափազանց մեծ հարստութիւնների պատճառով՝ Փիւնիկիան միշտ արտաքին յարձակումների էր ենթարկւում։ Այդպիսի դէպքերում նրա քաղաքները

միանում էին մէկի կամ միւսի գերիշխանութեան ներքոյ և միահամուռ ոյժերով էին պաշտպանւում ընդհանուր թշնամու դէմ։ Սկզբում (մինչև XII-րդ դարը Ք. ա.) առաջնութիւնը միշտ Սիդոն քաղաքին էր պատկանում, որովհետև նա էր ամենից հարուստ ու զօրաւորը։ Բայց աւելի ուշ ժամանակներում այդ առաջնութիւնը Տիրոս քաղաքին անցաւ։ Չը նայելով այդ միութիւններին, փոքրիկ Փիւնիկիան այնուամենայնիւ մեծ մասամբ անզօր էր հանդիսանում իր ահաւոր թշնամիների հանդէպ։ Այդ պարագայում նա մեծաքանակ փրկանքներ էր վճարում թշնամուն ու այդ եղանակով պահպանում իր անկախութիւնը։

Սիդոնի առաջնութեան շրջանում Փիւնիկիան եգիպտոսի իշխանութեան տակ ընկաւ, իսկ Տիրոսի առաջնութեան շրջանում նրան նւաճեցին՝ նախ Ասորեստանը և ապա Բաբելոնը։ Այս վերջինի անկումից յետոյ Փիւնիկիան էլ պարսից տէրութեան մի նահանգը դարձաւ։



ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Դարեր շարունակ ինչպէս որ Բաբելոնն էր մաքառում հզօր Ասորեստանի դէմ հարաւում, այնպէս էլ հիւսիսում Հայաստանն էր անվերջ պատերազմներ մղում նրա դէմ։

Հայաստանը Եփրատ, Տիգրիս և Երասխ գետերի ակունքներից սկսած տարածւում էր մինչև Ուրմիայի լիճը։ Դա մի վերին աստիճանի լեռնոտ երկիր է, զանազան լեռնաշղթաներով բազմաթիւ հովիտների ու բարձրաւանդակների բաժանուած։

Հնումն, այդ երկիրը Հայաստան չէր կոչւում, որովհետև այդտեղ դեռ հայեր չկային, այլ ապրում էին զանազան ուրիշ ժողովուրդներ, որ յայտնի էին Հրէիտ, Հաթ, քետացի, Խալդ և այլ անուններով։ Թէ մարդկային գլխաւոր ցեղերից որ մէկին էին պատկանում Հայաստանի հին բնակիչները՝ դեռ ճիշտ յայտնի չէ. ստոյգ է միայն, որ նրանք սեմիտներ չէին։

Այդ ժողովուրդը մի ժամանակ Սիբիայում մի շատ զօրաւոր և ընդարձակ տէրութիւն էր կազմում։ Նա իր ինքնուրոյն կուլտուրան ու առանձին գիրն ունէր և, եգիպտացիների նման, գրում էր հիերօգլիֆներով։ Բայց որովհետև նրանց լեզուն մինչև օրս դեռ անծանօթ է մնացել, ուստի նրանց հիերօգլիֆները դեռ չեն կարդացած։

Սիրիայում հրէիտական գլխաւոր քաղաքներն էին.—Կարքեմիշ՝ Եփրատի վրայ, Կադեշ՝ Օրոնտ գետի վրայ և Դամասկոս՝ նոյն գետի ակունքների մօտ, որ մինչև օրս էլ դեռ գոյութիւն ունի։

Հրէիտները կամ հաթները եգիպտացիների յիշերիմ թշնամիներն էին և շարունակ պատերազմում էին նրանց դէմ։ Գիտնականներից ոմանք այն կարծիքի են, թէ եգիպտոս արշաւած հիւքսոսները հէնց այդ հաթական ցեղին էին պատկանում։ Անվերջ պատերազմների շնորհով նրանք հետզհետէ թուլացան ու նրանց տէրութիւնն էլ Սիրիայում ընկաւ, որից յետոյ ժողովուրդը ցրւեց հեռու երկիրներ։ Նրա մի մասը գնաց Փոքր-Ասիա և Միջերկրական ծովի մօտ մի քանի տէրութիւններ հիմնեց, իսկ մի մասն էլ դէպի հիւսիս-արևելք գնաց և ամրացաւ Հայաստանի լեռներում, տարածւելով մինչև Վանայ և Ուրմիայի լճերը։ Հէնց այդ կողմերում հաստատւած հրէիտներն էին, որ իրանց գլխաւոր աստծու անունով Խալդ էին կոչւում։ Նրանց կոչում էին նոյնպէս և Ալարոդեաններ։



Հաթական հիերօգլիֆ

Խալդերի շատ հեռաւոր անցեալի մասին տեղեկութիւններ չկան։ Ստոյգ է միայն, որ նրանք հետները Հայաստան բերելով իրանց ինքնուրոյն կուլտուրան, շատ լաւ մշակել ու ծաղկեցրել էին այդ երկիրը։ Շատ բան էլ նրանք քաղդէացիներից ու ասորեստանցիներից էին սովորել։ Այս վերջիններից, օրինակ, սովորել էին սեպաձև տառերով գրել, փոխանակ նախկին հիերօգլիֆների։ Եւ սկզբում, քանի դեռ սեպաձև տառերը չէին յարմարեցւած իրանց լեզուին, խալդերը գրելու ժամանակ ասորական լեզուն էին գործ ածում։ Աւելի ուշ նրանք այդ անյարմարութիւնը վերացրին, սեպաձև տառերն իրանց լեզուին յարմարեցնելով։

ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Խալդերի գլխաւոր զբաղմունքը երկրագործութիւնն ու խաշնարածութիւնն էին։ Քաղդէացիներից ոչ պակաս հմուտ լինելով ջրաբաշխական աշխատանքներ կատարելու արուեստին, նրանք, չը նայելով Հայաստանի խիստ լեռնոտութեանը, բազմաթիւ ջրացքներ էին անցկացրել այդ երկրում։ Ջրանցքներից ամենանշանաւորը Մենուաշ կամ Մենուաս թագաւորի շինածն էր, վան քաղաքի մօտ, որ մինչև օրս էլ գոյութիւն ունի։

Հայաստանում եղած ամեն տեսակ հացահատիկների հարուստ շտեմարանների, ինչպէս և զանազան տեսակ ընտանի անասունների բազմաթիւ հօտերի մասին շատ յաճախ են յիշատակւում ասորական արձանագրութիւնների մէջ։ Շատ նշանաւոր էին մանաւանդ Հայաստանի ձիերն ու ջորիները, որ խիստ գնահատւում էին Բաբելոնի շուկայում և որ, իբրև տուրք, խալդական թագաւորները վճարում էին Ասորեստանին, իբր սրա գերիշխանութեան տակ էին ընկնում։ Նոյն արձանագրութիւնների մէջ, իբրև տուրքի առարկայ, յիշատակւում է նաև գինին։

Խալդերի մէջ արհեստներն ու վաճառականութիւնն էլ բաւական զարգացած էին։ Նրանք հմուտ էին մետաղներ հալելու և նրանցից զանազան զէնքեր, ամաններ ու զարդարանքի առարկաներ շինելու մէջ։ Մանաւանդ նշանաւոր էր Հայաստանում պատրաստւող լեռապիս-լազուր անունով թանկագին քարը, որը չափազանց գնահատւում էր եգիպտացիներից։



Հաթ զինուորներ

Մասնաւոր ուշադրութեան արժանի էր նոյնպէս խալդերի որմնադրական արհեստը. նրանք զարմանալի հմտութեամբ կառուցանում էին հսկայական ժայռերի մէջ ամբողջ թագաւորական

պալատներ ու դամբարաններ փորել, ինչպէս և ահագին քարերից շինութիւններ կառուցանել։

Պատերազմական գործն էլ շատ լաւ էր դրւած այն ժամանակւայ Հայաստանում. ունէին թէ հետևակ և թէ ձիաւոր զօրք, իսկ թագաւորներն ու ազնւականները կուի էին դուրս գալիս պատերազմական կառքերի վրայ։ Հայաստանում պատրաստւած երկանիւ պատերազմական կառքերն էլ շատ էին գնահատւում օտար երկիրներում, նամանաւանդ Եգիպտոսում։ Խալդերի գործածած զէնքերն էին՝ սուր, նիզակ, նետ ու աղեղ և վահան։

Շատ բնորոշ էր և խալդերի հագուստը, նամանաւանդ նրբանց՝ սրածայր ու դէպի յետ ծալւած քիթ ունեցող՝ կօշիկներն ու մեծ-մեծ ձեռնոցները։



Երկու հրթիռ իշխաններ ճաշելիս

Կ Ր Օ Ն Ը

Խալդերի կրօնն ու հաւատալիքները համարեա թէ ոչնչով չէին տարբերւում քաղդէականից կամ ասորականից։ Նրանք էլ բնապաշտներ էին և հաւատում էին բազմաթիւ աստւածների և

ոգինների գոյութեանը, որոնց թիւը մօտ 2000 էին հաշւում։ Բնութեան իւրաքանչիւր մի տարր, նրանց կարծիքով, իր առանձին աստւածն ունէր. այսպէս՝ լեռները, անտառները, գետերը և այլն մի-մի առանձին աստւած ունէին։ Բայց այդ աստւածները բոլորն էլ միատեսակ զօրութիւն չունէին. կային նրանց մէջ գլխաւորները և երկրորդականները։ Բացի դրանից՝ ամէն մի գաւառ կամ քաղաք, հարևան երկիրների նման, իր առանձին հովանաւորող ու ամենից աւելի սիրած աստւածն ունէր։ Այսպէս օրինակ Ուրարտու անունով նահանգի կամ փոքրիկ թագաւորութեան ամենագլխաւոր աստւածը կոչւում էր Խալդի։ Նոյնպէս շատ յարգւած էին՝ ամպրոպի աստւածը Տարկու կամ Տեշուղ անունով, արեգակի աստւածը՝ Արդիս և ուրիշները։



Ամպրոպի աստւածը

Ամէն մի գլխաւոր աստւած իր յատուկ տաճարն ունէր, որի մէջ բազմաթիւ քուրմեր և քրմուհիներ էին ծառայում։ Հին Հայաստանի տաճարներն իրանց ձևով սաստիկ նման էին քաղդէական տաճարներին։ Նրանց մուտքերի մօտ էլ հսկայական սֆինքսներ էին դրւած։

Հայաստանի այդ նախկին բնակիչները, իրանց հարևան ազգերի նման, սասաիկ անոտիապաշտ էին, և նրանց անոտիապաշտութիւններից շատերը մինչև այսօր էլ դեռ պահպանւած են հայ ժողովրդի մէջ։

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿ. ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հայաստանը հնումը մի ամբողջական պետութիւն չէր ներկայացնում իրանից. լեռնաշղթաներով միմեանցից բաժանւած նրա զանազան մասերը մի-մի առանձին մեծ կամ փոքր անկախ տէրութիւն էին կազմում։ Այդ տէրութիւնների թիւը, ասորական արձանագրութիւնների համաձայն, հասնում էր 20—50 և աւելի։ Դրանցից շատերի անուններն անգամ յայտնի չեն, իսկ շատերի էլ սահմանները դժւար է որոշել։

Յայտնիներից ամենանշանաւորներն էին.—

1. *Ուրարտու* (Արարատ), որ տարածւում էր Մասիս լեռան հարաւային ստորոտից մինչև Վանայ լիճը։

2. *Բիանա*, որի մայրաքաղաքն էր Վան, և ընկած էր Վանայ լճի հարաւ-արևելեան կողմում։

3. *Մաննա*՝ Բիանայի և Ուրմիայի լճի միջև ընկած երկիրն էր։

4. *Մուսասիր* (Մուշ), որ գտնւում էր Վանայ լճի հիւսիս-արևելեան կողմում։

5. *Միլդիս*, որ ընկնում էր Մուսասիրի հիւսիսային կողմում։

6. *Նայիրի*, որը տարածւում էր Տիգրիս և Եփրատ գետերի վերին հոսանքների միջև։

7. *Միլիդ*, որ գտնւում էր Նայիրիի արևմտեան կողմում։

Այդ բազմաթիւ փոքր տէրութիւնները, անկարող լինելով մի ընդհանուր ու մեծ պետութիւն կազմել, այնուամենայնիւ արտաքին թշնամու յարձակումների ժամանակ, յաճախ դաշնակցում էին միմեանց հետ և իրարու օգնութեան հասնում։ Այդ հանգամանքի, ինչպէս և մանաւանդ իրանց երկրի խիստ անմատչելի լեռների շնորհով, Հայաստանի նախկին բնակիչները մինչև վերջ անընկճելի և սպառնական թշնամիներ մնացին հզօր Ասորեստանի համար։

Այդ լեռնաբնակները մի կատարեալ պատուհաս էին Ասորեստանի գլխին. նրանք ամենահին ժամանակից սկսած շարունակ աւազակային արշաւանքներ էին գործում Ասորեստանի

արգաւանդ դաշտերի վրայ ու, մեծ աւերմունքներ առաջացնելով, գնում իրանց անմատչելի լեռներն էին քաշւում։ Այդ պատճառով էլ Ասորեստանի թագաւորները, հէնց որ սկսեցին զօրեղանալ, իրանց առաջին հոգսերից մէկն էլ այդ լեռնականներին մի լաւ պատժելն ու զսպելը դարձրին։ Այդ նպատակով նրանք այնուհետև համարեա թէ ամեն տարի արշաւանքներ էին կատարում Հայաստանի վրայ և, իրանց սովորութեան համաձայն, ահեղասոսկալի սարսափներ տարածում ամեն կողմ։



Հաթական թագաւոր

Սկզբում Ասորեստանի թագաւորներն իրանց արշաւանքները միշտ ուղղում էին Հայաստանի հարաւ-արևմտեան երկիրների վրայ, ուր Նայիրի անունով տէրութիւնն էր գտնւում։ Մինչև IX դարի (Ք. ծ. ա) սկիզբները այդ տէրութեան թագաւորների գլխաւոր ղեկավարութեան տակ էին պատերազմում Հայաստանի միւս փոքր տէրութիւնները։ Այդ պատճառով էլ մինչև այդ ժամանակ թողած ասորական սեպագիր արձանագրութիւնների մէջ Հայաստանը «Նայիրիի երկիրներ» անունով է յիշատակւած։ Իսկ աւելի ուշ ժամանակներին վերաբերող արձանագրութիւններում այլևս Ուրարտուի մասին է շարունակ խօսքը, որովհետև IX-րդ դարից արդէն Ուրարտուի թագաւորներն են սկսում գերակշիռ ու ղեկավարող դեր կատարել Հայաստանում։

Հայաստանի վրայ ասորական թագաւորներից առաջին արշաւանք գործողը Տիգլատ-Պալասարն է եղել, որը երեք անգամ է արշաւել այդ երկրի վրայ և երեք անգամին էլ նրան վերջնակատապէս նւաճած է համարել։

Այսպէս է այդ թագաւորը պարծենում իր կատարած սարսափների մասին, Տիգրիսի ամենաւերին ակունքի մօտ մի հսկայական ապառաժի վրայ իր փորագրել տւած արձանագրութեան մէջ (XI-րդ դարում).—

«Ես, Տիգլատ—Պալասարս, երրորդ անգամ խուժեցի Նայիրիի երկիրները... Ես անցնում էի այնպիսի անմատչելի լեռնակատարների ու խորխորատ ձորերի միջով, որ ինձնից առաջ ոչ մի թագաւոր չէր տեսել... Ես անցայ Եփրատի վրայով։ Նայիրիի երկիրներից 23 թագաւորները հաւաքեցին իրանց բոլոր կողմերի զօրքերն ու պատերազմական կառքերը և դուրս եկան իմ դէմ կռւելու։ Նրանց միացան միւս 60 թագաւորներն էլ իրանց զօրքերով։ Բայց իմ քաջ զօրքերի փոթորկանման գրոհով ես խորտակեցի նրանց։ Կայծակի նման ես ոչնչացրի նրանց բազմաթիւ զօրագունդերը։ Նրանց զինւորների դիակները յարդի նման փռեցի լեռների բարձունքների վրայ ու նրանց քաղաքների շրջակայքում։ Կռւի մէջ ես ոչնչացրի նրանց 120 կառքերը։ Նայիրիի երկիրների 60 թագաւորներին և նրանց օգնութեան եկածներին ես փախցրի մինչև Վերին (Սև) ծովը։ Նրանց մեծ քաղաքները ես գրաւեցի, հարստութիւնները կողոպտեցի, գիւղերը քարուքանդ արեցի, այրեցի կրակով, խորտակեցի և հողակոյտեր ու վարելահողեր դարձրի։ Ես նրանց 25 աստւածները գերեցի։ Բազմաթիւ ձիերի, հորթերի ու անհամար այլ անասունների հօտեր քշեցի և իմ երկիրը տարայ։ Նայիրիի երկիրների բոլոր թագաւորներին ես կենդանի բռնեցի։ Այդ թագաւորներին ես ողորմեցի. նրանց՝ կապուտած՝ ազատ արձակեցի, մեծ աստւածների անուններով երդւեցնելով, որ յաւիտեան ինձ հաւատարիմ հպատակներ կը մնան։ Նրանց զաւակներին՝ թագաւորական շառաւիղներին՝ ես պատանդ վերցրի։ Նրանց վրայ հարկ նշանակեցի—1200 ձի և 2000 եզ—և թողեցի, որ իրանց երկիրները գնան։ Այսպէս Նայիրիի բոլոր ընդարձակ երկիրներին ես տիրեցի և նրանց բոլոր թագաւորներին ինձ խոնարհեցրի»։

Բայց Տիգլատ-Պալասարի, ինչպէս և իր յաջորդների կատարած սարսափները անզօր էին Հայաստանի լեռնականներին զսպելու. նրանք ժամանակաւորապէս ընկճւում էին, խոստանալով Ասորեստանի գերիշխանութիւնը ճանաչել և պահանջած հարկը վճարել, բայց հէնց որ ասորեստանցիք հեռանում էին կամ մի այլ տեղ պատերազմի բռնւում, նրանք նորից գլուխ էին բարձրացնում։ Նրանք յարձակւում էին Ասորեստանի վրայ և յաճախ նոյնիսկ նրանից երկիրներ գրաւում։ Այդպիսով Ասորեստանի թագաւորներից համարեա թէ ամեն մէկը ստիպւած էր նոր պատերազմ սկսել Հայաստանի դէմ և նորից նւաճել այն երկիրները, ինչ որ շատ անգամ նւաճել էին իր նախորդները։

IX-րդ դարի սկիզբներում Նայիրիի տէրութիւնը թուլացաւ և Հայաստանի մանր տէրութիւնների գերիշխանութիւնն ու դիկավարութիւնը Ուրարտուի թագաւորութեանն անցաւ։

Շնորհիւ այն հանգամանքի, որ Ուրարտուի թագաւորներն էլ սիրում էին իրանց քաջագործութիւնների մասին պարծենկոտ արձանագրութիւններ թողնել, ուստի Հայաստանի պատմութեան այդ շրջանի մասին աւելի շատ ստոյգ տեղեկութիւններ կան։ Այդ արձանագրութիւնները վանում և այլ տեղերում գտնւած սեպաձև տառերով գրւած ժայռէ կոթողներն են, որոնցից շատերը դեռ ևս կարդացւած չեն։

ՈՒՐԱՐՏՈՒ

Հայաստանում գտնւած սեպագիր արձանագրութիւնների համաձայն, Ուրարտուի ամենահին թագաւորներից մէկը կոչւել է Շարդուր I, Լուտիբրիսի որդի։ Այդ Շարդուրն իր թողած երկու արձանագրութիւնների մէջ իրան անւանում է «թագաւորների թագաւոր, որին բոլոր թագաւորները հարկ են վճարում»։

Շարդուրի յաջորդներից մէկը կոչւում էր Արամէ, որը ժամանակակից էր ասորական Սալմանասար II թագաւորին (860—824)։ Այս Սալմանասարը երեք անգամ արշաւանք գործեց Ուրարտուի վրայ։ Վերջին անգամին Արամէն, յանկարծակիի գալով, թողեց իր Արզաշկուն քաղաքն ու փախաւ լեռները։ Իսկ Սալմանասարը, առագին աւերմունք ու կողոպուտ անելուց յետոյ, վերադարձաւ Նինւէ։

Արամէի յաջորդներն էին Շարդուր II, որ ժամանակակից էր նոյն Սալմանասար II-ի՝ և՛ Իշպուինիշ։ Այս վերջինիս հինգ արձանագրութիւններ են մնացել, որոնցից մէկը կանգնեցած է Մեծ Զաբ լեռան մօտ, որ ապացոյց է, թէ նա իր արշաւանքները Ասորեստանի վրայ հասցրել է մինչև ասորական մայրաքաղաքի մօտերը։

Իշպուինիշի որդին՝ Մենուաշը կամ Մենուասը, ժառանգելով հօր գահը, մի շարք յաջող պատերազմներ մղեց և իր երկրի սահմանները ընդարձակեց թէ արևմտեան, թէ հարաւի և թէ

արևելեան կողմերից։ Հարաւում նա գրաւեց խալդական Մանա թագաւորութիւնը, որ այդ ժամանակ Ասորեստանի գերիշխանութեան տակ էր գտնւում և որը մի կատարեալ կուսակնձոր էր Ուրարտուի և Ասորեստանի միջև։ Վանում գտնւած սեպագիր արձանագրութիւնների մեծ մասը Մենուասին են պատկանում։ Այդ արձանագրութիւններին նայելով Մենուասը եղել է թէ մեծ աշխարհակալ և թէ իր երկրի բարեկարգիչը։



Մենուասի մէկ կոթողը

Ուրարտուն իր ամենամեծ զօրութեանն ու փառքին հասել է Մենուասի որդու՝ Արգիշտի թագաւորի օրով (VIII-րդ դարում)։ Սրանից մի քանի արձանագրութիւններ են մնացել, որոնցից մէկը մի շատ հսկայական բան է՝ 400 տողից բաղկացած։

Այս արձանագրութեան մէջ նկարագրւած են Արգիշտիի 14 արշաւանքները Ասորեստանի և այլ հարևան թագաւորութիւնների վրայ։

Արգիշտին բոլոր հարևան մանր տէրութիւնները նւաճել ու իր տէրութեանն էր միացրել։ Այդպիսով Ուրարտուի սահմանները նրա օրով հասնում էին արևելքում մինչև Կիլիկիա, հիւսիսում մինչև Սևանայ լիճը, իսկ հարաւում մինչև Մեծ Զաբը։ Կար ժամանակ մինչև իսկ, երբ հզօր Ասորեստանը պարտաւորւել էր Արգիշտիին հարկ վճարել։

Արգիշտիին յաջորդեց նրա որդին՝ Շարդուր III-ը, որն իր թողած արձանագրութիւններում իրան «արքայից արքայ» և «տիեզերքի արքայ» տիտղոսներն է տալիս։

Շարդուր III-դը տեսնելով, թէ ինչպէս Ասորեստանը, Տիգլաթ-Պալասար III-ի (745—725) ջանքերով սկսել էր նորից զօրեղանալ, մի ընդարձակ դաշնակցութիւն ստեղծեց նրա դէմ։ Դաշնակցութեան մէջ մտան Փոքր-Ասիայի ու Սիրիայի այն բոլոր թագաւորութիւնները, որոնք վաղուց արդէն ատում էին ասորական բռնակալներին։ Այդ եղանակով Շարդուր III-րդն իր ազդեցութիւնը մինչև Փիւնիկիա էր հասցրել։ Այնուամենայնիւ

Ասորեստանի հետ ունեցած հէնց առաջին ընդհարումին Շարդուրը մի խիստ պարտութիւն կրեց և իր կազմած դաշնակցութիւնն էլ քայքայուեց։

Շարդուրին յաջորդեց Ուրսան, որի օրով Ասորեստանում նորից ներքին խռովութիւններ ծագեցին և քայքայած դաշնակցութիւնը դարձեալ նորոգուեց։ Պայմանաւորուած նշանով դաշնակիցները ամեն կողմից ապստամբեցին Ասորեստանի դէմ։ Ամբողջ տասը տարի տևեց, մինչև որ ասորական հռչակաւոր Սարգոն*) թագաւորը, որ կարճատև ներքին խռովութիւններից յետոյ գահ էր բարձրացել, կարողացաւ դաշնակիցներին զսպել։

Դաւադրութիւնը Ուրսայի ջանքերով այնպէս լաւ էր կազմուած, որ երբ Սարգոնին յաջողւում էր մի տեղ զսպել ապստամբութիւնը, սա մի այլ տեղ էր բռնկում։ Ամենից ուշ պարտեցին Մաննայի Ուլուսուն և Մուսասիրի Ուրսանա թագաւորները։



Ուրսանայի կնիքը

Դրանցից յետոյ պարտուեց և ինքը՝ Ուրսան, որ դաւադրութեան նախաձեռնողն ու ոգին էր հանդիսանում։ Նա փախաւ և իր հայրենիքի անմատչելի լեռներում ապաւինեց, երկար ժամանակ յուսալով, թէ գուցէ կարելի կլինի վերանորոգել դաշնակցութիւնը։ Իսկ երբ համոզուեց, որ ամեն ինչ այլևս կորած է, նա յուսահատութիւնից անձնասպան եղաւ (714 թ. Ք. ա.)։

Ուրսայից յետոյ Ուրարտուն այլևս կորցրեց իր վաղեմի փառքն ու զօրութիւնը։ Հէնց նրա յաջորդի օրով էր, որ հիւսիսից ու արևելքից սկսեցին դէպի Առաջաւոր Ասիա արշաւել սկիւթացիները ու այլ արիական ցեղերը։ Այդ անծանօթ ու վայ-

*) Զը շփոթել սրան քաղդէական Սարգոն I-ի հետ։

րենի ցեղերի արշաւանքները հարկադրեցին երկու դարաւոր թշնամի տէրութիւններին՝ Ասորեստանին և Ուրարտուին՝ բարեկամական դաշինք կապել իրարու հետ, որպէսզի կարողանան միահամուռ ոյժերով դիմադրել ընդհանուր թշնամուն։

Այդ դիմադրութիւնն ու կռիւը շարունակւեց, մինչև որ երկու դաշնակիցներն էլ Թուլացան և նորեկ թափառական բարբարոսների տիրապետութեան տակ ընկան։ Հաթական կամ խալդական երկիրները գրաւեցին հայերը, որ նոյնպէս արիական բարբարոսներից էին, իսկ Ասորեստանը Մեղացիք նւաճեցին։





ԱՐԻԱԿԱՆ ՑԵՂԸ

ԱՐԻԱԿԱՆ ՑԵՂԻ ԶԱՆԱԶԱՆ ՃԻՒՂԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳԱՂԹԸ

Արիական ցեղի նախնական հայրենիքը Միջին Ասիայի ընդարձակ սարհարթն է համարուում։ Մարդկութեան այդ բազմանդամ ցեղն էլ սկզբում խաշնարածութեամբ էր պարապում ու թափառական կեանք վարում։ Շնորհիւ այն հանգամանքի, որ երկրի արօտատեղերը միշտ չէին բաւականանում աճող անասուններին կերակրելու, ուստի խաշնարած ժողովուրդը ստիպւում էր շարունակ մեծ խմբերով դուրս գալ իր բնիկ հայրենիքից և նոր ու նոր արօտատեղեր որոնել։

Այդպէս տեղից տեղ թափառելով, արիացիները շատ ու շատ հեռաւոր երկիրներ էին գնում, մինչև որ կամ օտարներից սովորելով և կամ արգաւանդ ու պտղատու վայրերի հանդիպելով, սկսում էին երկրագործութեամբ պարապել ու նստակեաց կեանք վարել։

Արիական ցեղի զանազան մեծ խմբեր անյիշելի ժամանակներում գաղթել են իրանց հայրենիքից երեք ճանապարհներով։ Մի մասը Ինդոս գետի ափերով անցել է Հիմալայեան լեռներն ու գնացել հաստատուել է հարուստ և խիստ արգաւանդ Հնդկաստանում։ Մի այլ մասը, անցնելով մի շարք լեռների վրայից, տարածուել է այժմեան Աֆղանիստանում, Կաբուլում և արևելեան Պարսկաստանում։ Այդ ընդարձակ երկիրը արիացիների հաստատուելուց յետոյ, կոչուել է Արիանա, այսինքն՝ արիացիների երկիր, որն ապա դարձել է Իրան։

Արիացիների մի երրորդ մասն էլ, Ուրալ գետն անցնելով, մտել է այժմեան Ռուսաստանի ընդարձակ դաշտավայրերն ու, երկար ժամանակ այնտեղ թափառելուց յետոյ, գնացել հաստատուել է Եւրոպայի զանազան մասերում։

Հէնց այն հիման վրայ, որ Հնդկաստանի և Եւրոպայի ազգերը միևնոյն ծագումն ունեն ու նոյն մեծ ցեղին են պատկանում, արիական ցեղը կոչւում է նոյնպէս և Հնդկաեւրոպական ցեղ։

ԱՐԻԱՑԻՆԵՐԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՑՈՒՄ

Դէպի արևմուտք գաղթած արիացիների մի ճիւղը, Կիմմերներ անունով, անյիշելի ժամանակներում, եկել հաստատուել էր այժմեան հարաւային Ռուսաստանի դաշտավայրերում, Վոլգա և Դոն գետերի միջև, ուր նրանք սկսել էին արդէն երկրագործութեամբ պարապել։ VIII-րդ դարում (Ք. ծ. ա.) Միջին Ասիայից դուրս եկաւ արիացիների մի նոր բազմութիւն, որն անզուսպ հեղեղի նման, Կիմմերների գրաւած երկիրը թափեց։ Արիական այդ նոր բազմութիւնը Սկիւթացիներն էին, որ կոչուեցին նոյնպէս Սակի, Սարմատ և այլ անուններով։

Կիմմերները, անկարող լինելով այդ բարբարոսներին երկար դիմադրել, ստիպուեցին թողնել իրանց արգաւանդ դաշտերն ու հեռանալ։ Նրանց մի մասն անցաւ այժմեան Տաւրիկեան, կամ

Ղրիմի թերակղզին ու այնտեղ ամրացաւ, իսկ մեծագոյն մասը գնաց դէպի արեւմուտք և, անցնելով Իսթեր գետը (Դանուբը) ու ապա իջնելով դէպի հարաւ, մտաւ Թրակիա (այժմեան Բոլգարիա և Րումելիա)։

Մի առ ժամանակ Թրակիայում մնալուց յետոյ, կիմերները շարունակեցին իրանց թափառումը և այժմեան Կոստանդնուպոլսի նեղուցով Փոքր-Ասիա անցան։ Կիմերների հետ միասին Թրակիայից Փոքր-Ասիա անցան նաև ուրիշ ժողովուրդներ, որոնք նոյնպէս արիական ցեղին էին պատկանում և կիմերներից շատ առաջ էին Թրակիայում հաստատուել։ Դրանցից անուանի էին փրիգները, որոնք յայտնի էին իրանց քաջութեամբ ու պատերազմասիրութեամբ։ Սրանք, Փոքր-Ասիա անցնելով, մեծ ընդհարումներ ունեցան այդ տեղի հետ կամ հետ ժողովուրդների հետ, որոնց վերջ ի վերջոյ մասամբ դուրս վանեցին, իսկ մասամբ էլ իրանց հպատակեցրին։ Ապա հաստատուելով Լիդիայի կողքին՝ դէպի արեւելք, նրանք մի նոր տէրութիւն հիմնեցին։ Փրիգների հիմնած տէրութիւնը կոչուեց Փրիւգիա։

Փրիգների հետ Թրակիայից եկած մի ուրիշ արիական ժողովուրդ էլ, փրիգներից բաժանուելով, շատ աւելի հեռուն գնաց դէպի արեւելք և, զէնքի ոյժով շարունակ ճանապարհ բանալով, գնաց հաստատուեց (VII-րդ դարում Ք. ա.) Նայիրիի երկիրների արեւմտեան մասում։ Այդ ժողովուրդը վերջում կոչուեց հայ, իսկ նրա հիմնած այդ առաջին տէրութիւնը՝ Փոքր-Հայք։

Մօտ հարիւր տարի յետոյ, հայերի մի մասը, կամաց-կամաց առաջ խաղալով, անցաւ Եփրատը և հետզհետէ գրաւեց Նայիրիի արեւելեան կամ Ուրարտուի երկիրները։ Այդտեղ մի երկրորդ հայկական թագաւորութիւն հաստատեցին հայերը, որը կոչուեց Մեծ Հայք։

Այդ երկրի տեղական բնակիչները՝ հաթերը կամ խալդերը՝ մասամբ թողին իրանց երկիրն ու քաշուեցին դէպի հիւսիս, իսկ մասամբ էլ հպատակուեցին հայերին և ժամանակի ընթացքում ձուլուեցին նրանց հետ։

Հայերին հեշտութեամբ աջողուեց գրաւել այդ երկիրները մանաւանդ նրա համար, որ այդ ժամանակներում Ուրարտուի թագաւորութիւնն արդէն սաստիկ թուլացած էր հէնց նոյն կիմերների ու սկիւթացիների շարունակական յարձակումների պատճառով։ Կիմերների այն մասը, որ սկիւթացիներից հալածուելով, գնացել ամրացել էր Տաւրիկեան թերակղզում, անկարող եղաւ այնտեղ երկար մնալ. սկիւթացիք այնտեղից շուտով դուրս վանեցին նրանց։ Այս անգամ կիմերները դէպի հարաւ ուղղուեցին և անցնելով Կովկասի լեռնաշղթան, մտան Անդրկովկաս ու դէպի Վանայ լիճը գնացին։ Նախ Ուրարտուի և ապա Ասորեստանի վրայ յարձակուեցին նրանք։ Բայց այս վերջինից մի լաւ ջարդ ուտելով դէպի Փոքր-Ասիա անցան։ Այդ տեղ նրանք ոչնչացրին Փրիւգիայի թագաւորութիւնը և ապա հանդիպելով Թրակիայից եկած կիմերներին, միացան նրանց հետ ու բնակութիւն հաստատեցին Ալիւս գետի մօտ։ Այդտեղից կիմերները շարունակ յարձակումներ էին գործում Ասորեստանի, Ուրարտուի և այլ հարեան երկիրների վրայ։

Նոյնպիսի աւազակային յարձակումներ գործում էին այդ երկիրների վրայ արեւելքից՝ սկիւթացիները, որոնք կովկաս անցնող կիմերներին հալածելով, եկել հաստատուել էին Կուր և Արաքս գետերի աւազաններում։ Հէնց այս սկիւթացիներն էին, որ իրանց աւազակային արշաւանքներով մինչեւ նպաստեցին Ասորեստանի անկմանը։

ԱՐԻԱՑԻՆԵՐԻ ՀԻՆ ԿՐՕՆԸ

Արիացիները միւս բոլոր հին ժողովուրդների նման, բնապաշտներ էին։ Բնութեան խիստ հակադրական տարրերի ու կլիմայական փոփոխութիւնների ազդեցութեան տակ, նրանք էլ իրանց աստուածներին երկու կարգի էին բաժանում — օգտակար կամ բարի և վնասակար ու չար աստուածներ։

Բարի աստուածներ էին համարւում պայծառ երկինքը, ամեն տեղ թափանցող լոյսը, արեգակը, կրակը, մայր-երկիրը, ջուրը, քամին և այլն։ Իսկ չար աստուածներ էին՝ խաւարն ու երաշտը։

Չար աստուածներին արիացիները սաստիկ ատում և անիծում էին. նրանք երբէք չէին աշխատում զոհաբերութիւններով ու աղօթքներով այդ աստուածների սիրտը շահել և նրանց ողորմութիւնը խնդրել։ Ընդհակառակը՝

արիացիների հասկացողությամբ, մարդիկ պէտք է մարտնչեն չար աստուածների դէմ։ Բարի աստուածների նպատակն ու ամբողջ աշխատանքն էլ հէնց չար աստուածների դէմ մարտնչելն է։ Այսպէս՝ լոյսը աշխատում է յաղթել խաւարին, քամին ու որոտը, հաւաքելով երաշտի ցրած ամպերը, կայծակներ են արձակում և անձրև շաղ տալիս։ Բարի աստուածներին էլ արիացիք չէին խնդրում ու աղերսում այլ միմիայն փառաբանում էին։

Արիացիների ամենահին և ամենաբարձր աստուածը համարւում էր երկինքը, որ կոչւում էր Վարունա։ Արեգակը Վարունայի աչքն էր, կրակը՝ երկնային կայծակի ձևով՝ նրա որդին, իսկ տեսանելի աստղալից երկինքը, նրա արքայական շղարշը։

Յաճախ Վարունայի անւան հետ կցւում էր և Միտրա (Միհր) անունը, որ ցերեկւայ լոյս է նշանակում, և այդ երկու անունները՝ Վարունա-Միտրա կամ Միտրա-Վարունա գործ էին ածւում իբրև մի աստուածութիւն։ Ասում էին, թէ այդ երկուսը միևնոյն կառքով են մանգալիս և միշտ միևնոյն բանն են մտածում։ Նրանք միասին տիեզերքի կարգ ու կանոնն ու Արդարութեան օրէնքն են պահպանում։ Իբրև ամեն բան տեսնող ու ամենագէտ աստուածներ, նրանք միասին հսկում են մարդկանց թէ գործերի և թէ սրտերի վրայ։ Արդարութեան օրէնքից շեղւելը մեծ մեղք և ամեն մի ստութեան ու անբարշտութեան սկիզբ էր համարւում, և դրա համար Վարունա-Միտրան խիստ պատժում էր մարդկանց։ Իսկ պատժից ազատւելու համար մարդիկ պէտք է աղօթէին և ներում խնդրէին։ Վարունա-Միտրան ամենից աւելի ստախօսութիւնն էր ատում։

Արիացիները մի առանձին յարգանք էին տածում պէպի կրակ-աստուածը, որը, գիշերները մարդկանց օջախում նստած, արեգակին էր փոխարինում, թէ լոյս և թէ ջերմութիւն արձակելով շուրջը։ Կայծակը կրակ-աստծու

մի այլ տեսակն էր համարւում, որը միշտ պատերազմ էր մղում խաւարի ու երաշտի դէմ։ Գիշերային խաւարի դէմ մարտնչող ու նրան հալածող աստուած էր համարւում և արշալոյսը։

Չար և բարի աստուածների միջև տեղի ունեցող կռիւների մասին արիացիները բազմաթիւ դիցաբանական առասպելներ էին յօրինել։ Այսպէս օրինակ, երկնակամարի վրայ լողացող սպիտակ ամպերը համարւում էին ընդարձակ արօտատեղում զբօսնող կովեր, որոնք առատութեամբ կաթ՝ այսինքն անձրև են ցողացնում երկրի ու նրա վրայ ապրող բոլոր էակների համար։ Սակայն երաշտի դևերը, գողերի ու աւազակների նման, գալիս յափշտակում են այդ կովերին և տանում փակում են լեռների բարձունքներում եղած քարայրների կամ բերդերի մէջ։ Այդ ժամանակ որոտի աստուածը՝ Ինդրան, հագնում է իր փայլուն ոսկէ զգեստները, կանգնում է՝ արագավազ մոխրագոյն ձիեր (որոտային ամպեր) լծած կառքի մէջ ու սլանում է իր անբաժան ընկերոջ՝ Վա-ի (քամու) հետ։ Նրանց յետևից սլանում է մի ուրիշ՝ աւելի խիստ քամիների խումբ և պատերազմը սկսւում է երաշտի մեծ դևի՝ Օձի դէմ, որը խրոխտաբար նստած է լեռան գագաթին։

Ինդրայի բուռն յարձակմանը երկար չեն կարողանում դիմանալ չար ոգիները. որոտի հարւածներից ու արձակւած շանթերից քարուքանդ են լինում լեռան վրայի բերդերն ու պատնէշները, և կովերը, ազատւելով, իրանց կաթն են ցողում երաշտից պապակւած երկրի վրայ։



ԻՐԱՆ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Իրանը այն եռանկիւնաձև ընդարձակ բարձրաւանդակն է, որ սկսում է Կասպից ծովի հարաւից ու տարածւում մինչև Պարսից ծոցն ու Հնդկական ովկիանոսը։ Այդ բարձրաւանդակի մէջտեղը անջուր ու աւազոտ անապատ է, իսկ եզերքները խիստ լեռնոտ են։ Իրանի լեռնային մասը ամեն տեղ միևնոյն բնաւորութիւնը չէ կրում. կան տեղեր, որ շատ հարուստ են բուսականութեամբ և շատ յարմար երկրագործութեան համար, իսկ կան տեղեր էլ, որ կամ բոլորովին զուրկ են ջրից, կամ թէ ծածկւած են ձլասակար ճահիճներով։

Իրանի կլիման էլ խիստ տարբեր է երկրի զանազան մասերում. կան տեղեր, ուր շատ տաք է և մարդիկ գաղափար անգամ չունեն ձիւնի մասին, իսկ կան տեղեր էլ, ուր շատ վաղ է սկսում ձմեռը և այնպիսի սառնամանիքներ ու կատաղի քամիներ են լինում, որպիսին

կարելի է միմիայն հիւսիսային երկիրներում տեսնել։

Իրանը անմարդաբնակ չէր, երբ արիացիները եկան Միջին Ասիայից։ Այնտեղ ապրում էին թափառաշրջիկ խաշնարած ժողովուրդներ թուրանական ցեղից, որոնց հետ արիացիները երկար տարիներ կռիւ էին մղում, մինչև որ կարողացան դուրս քշել բոլորովին ու նրանց երկիրը գրաւել։ Շարունակ առաջ խաղալով, արիացիները հետզհետէ տարածւեցին հիւսիս-արևելքից դէպի հարաւ, արևմուտք ու մինչև Ասորեստանի, Էլամի և Ուրարտուի սահմանները հասան։ Այստեղ հանդիպելով խիստ արգասաւոր ու մշակւած դաշտերի, հարուստ քաղաքների ու գիւղերի, նրանք հետզհետէ երկրագործութեան վարժւեցին և սկսեցին նստակեաց կեանք վարել։

Արիացիներն էլ, միւս ժողովուրդների նման, սկզբում բազմաթիւ մանր տոհմերի էին բաժանւած, որոնցից ամեն մէկը իր առանձին նահապետն ունէր և միւսներից անկախ կեանք էր վարում։ Նրանք իրանց տոհմապետներին անւանում էին Ցանուտէր։

Իրան եկած արիական այդ մանր ցեղերը, ժամանակի ընթացքում, իրարու հետ միանալով, մի քանի մեծ թագաւորութիւններ կազմեցին, որոնցից գլխաւորներն էին՝ Բակտրիան, Միդիան (Մարաստանը), Պարսկաստանը, Պարթևաց երկիրը և ուրիշներ։

ԻՐԱՆԻ ԿՐՕՆԸ

Արիացիները զանազան, միմեանցից բոլորովին տարբեր կլիմայ և այլ աշխարհագրական պայմաններ ունեցող երկիրներ գաղթելով, նրանց կրօնական հաւատալիքներն էլ, ժամանակի ընթացքում, մի շարք փոփոխութիւններ կրեցին և տարբեր երկիրներում, տարբեր ձևեր ստացան։ Այսպէս՝ Հնդկաստանում, ուր կլիման աստիկ մեղմ է և

բնութիւնը վերին աստիճանի հարուստ. ուր մարդիկ, իրանց ապրուստը հայթայթելու համար պարտաւորւած չէին բնութեան դէմ շարունակ մարտնչելու և համարեա թէ ամեն բան գտնում էին պատրաստի, նրանց կրօնական հաւատալիքներն էլ շատ մեղմ, խաղաղ ու մելամաղձոտ բնաւորութիւն ստացան։ Այնինչ Իրանում, ուր բնութիւնը շատ քիչ բան էր տալիս առանց աշխատանքի, ուր մարդիկ, իրանց ապրուստը հայթայթելու համար, պարտաւոր էին շարունակ աշխատել ու կռիւ մղել բնութեան զանազան տարրերի դէմ, ժողովրդի կրօնական հաւատալիքներն էլ աւելի խրոխտ բնաւորութիւն ստացան։

Երկրի աշխարհագրական ու կլիմայական միմեանց հակադիր երևոյթների ազդեցութեան տակ, Իրան եկած արիացիների մէջ աւելի ևս զարգացաւ, հին *զուալիստականի* երկւորութեան կրօնը, աւելի ևս զօրացաւ այն գաղափարը, թէ աշխարհս լիքն է երկու տեսակ՝ բարի և չար՝ աստւածներով, որոնք շարունակ կռիւներ են մղում միմեանց դէմ և որ այդ կռւի ելքից է կախւած մարդկանց երջանկութիւնը։

Այդպէս դատելով, իրանցիք այն համոզման էին եկել, թէ մարդկանց ու ամբողջ տիեզերքի գոյութեան նպատակն էլ հէնց կռիւ է, որ պիտի շարունակւի, մինչև *լոյսը* կը յաղթի *խաւարին*։ Իսկ *լոյս* և *խաւար* ասելով, *բացարձակ բարւոյ* և *չարի* գաղափարներն էին հասկացւում իրանց բոլոր լաւ և վատ հետևանքներով։

Բարի աստւածների գլխաւորն ու ամենազօրաւորը կոչւում էր *Ահուրա-Մազդա (Որմիզդ)*, որ նշանակում էր Ամենագէտ տէր։ Ահուրա-Մազդան էր ստեղծել երկինքն ու երկիրը, նա էր երկրին կեանք ու բոլոր բարիքները տւողը։ Արեգակը Ահուրա-Մազդայի աչքն էր, իսկ կրակը՝ կայծակի ձևով՝ նրա որդին։ Օջախում պլպլացող կրակն էլ Ահուրա-Մազդայի որդին ու մարդկանց ամենասիրելի բարեկամն էր համարւում։ Հէնց դրա համար էլ կրակը Իրանում պաշտամունքի մասնաւոր առարկայ էր. մարդիկ պարտաւոր էին միշտ կրակը վառ պահել օջախում։

Ահուրա-Մազդան բազմաթիւ օգնական բարի ոգիներ ունէր, որոնցից եօթը ամենագլխաւորն էին։ Նրանք արդարութեան, իմաստութեան, համբերատարութեան, ողորմածութեան և այլ լաւ գործերի մարմնացումն էին։ Այս բոլոր աստւածները յաւիտենական լոյսի թագաւորութեան մէջ էին ապրում։

Չար ոգիները, կամ դևերը, ընդհակառակը, ապրում էին յաւիտենական թանձր խաւարի թագաւորութեան մէջ. սրանց գլխաւորն ու ամենամեծ դևը կոչւում էր *Ահրա-Մանիւ* (Ահրիման), որ նշանակում էր Ոչնչացնող ոգի։

Ահրիմանը Որմիզդի ճիշտ հակապատկերն էր ներկայացնում. մինչ Որմիզդը ամբողջապէս լոյս, բարութիւն, ճշմարտութիւն և կեանք էր, Ահրիմանը, ընդհակառակը, խաւար, ստութիւն, կեղծիք և մահ էր։ Աշխարհի վրայ եղած բոլոր լաւ բանները Որմիզդի ստեղծածն էին, իսկ բոլոր վատ բանները Ահրիմանի ստեղծածը. Այսպէս՝ Ահրիմանի թագաւորութեանն էին պատկանում բոլոր անապատները, ջնասակար միջատները, վայրի գազանները, թունաւոր բոյսերը և այլն։

Որմիզդն ու Ահրիմանը, իրանցիների հասկացողութեամբ, գոյութիւն են ունեցել աշխարհի ստեղծագործութիւնից շատ առաջ և ապրում են միմեանցից բոլորովին անկախ։

Նրանք կատաղի թշնամիներ են իրար և անվերջ պատերազմ են մղում միմեանց դէմ։ Ահրիմանը միշտ աշխատում է Որմիզդի բարի գործերը ոչնչացնել։ Տիեզերքի մէջ եղած բոլոր տարրերային երևոյթները՝ անձրև ու երաշտ, ջուր և անապատ և այլն՝ Որմիզդի ու Ահրի-

մանի միջև եղած պատերազմի տեսանելի արտայայտութիւններն են։

Արիացիների հաւակացողութեամբ, ամբողջ մարդկային ցեղն էլ, երկու բանակի էր բաժանւում «աստուածապաշտներ» և «դևապաշտներ»։ Ով Որմիզդի կողմը չէ, նրան հակառակ է։ Ով չէ օգնում ոչնչացնել չարը, ստութիւնն ու վատը, անխուսափելի կերպով Ահրիմանի՝ մահւան ու խաւարի՝ ոգու բանակին է պատկանում։

Իրանցիների կարծիքով, Ահրիմանի բանակին էին պատկանում Թուրանցի բոլոր ժողովուրդները, որովհետև սրանք երկար ժամանակ յարձակումներ էին գործում իրանցիների վրայ և ահագին վնասներ հասցնում նրանց։ Իսկ դրա հակառակ կենդանիներից շատերը Որմիզդի բանակին էին պատկանում։ Այդ կենդանիներից էին ձին, աքաղաղն ու շունը։ Նրանց կարծիքով արևը ձիով է մեն գալիս երկնքի վրայ, աքաղաղն իր ձայնով փախցնում է խաւարը երկրից, շունն էլ նոյնն է անում իր հոտով և օգնում է մարդուն կռւելու վայրի գազանների դէմ, որոնք Ահրիմանի ստեղծածներն են։

Չարի և բարիի կռիւը տեղի է ունենում նաև մարդկանց ներքին աշխարհում՝ իւրաքանչիւր մարդու հոգու մէջ։ Այդտեղ էլ չարը կամ բարին է յաղթող հանդիսանում, նայած թէ ինքը մարդը որ մէկի կողմը կը բռնի և ինչպիսի վարմունք կունենայ։

Բարի գործեր կատարողի հոգին, մարդու մահից յետոյ յաջողութեամբ անցնում է Զինվատ կամուրջով և գնում բնակւում է Ցաւիտենական Լոյսի թագաւորութեան մէջ, ուր Արաբիչն է ապրում։ Իսկ չար գործեր կատարողի հոգին սայթաքում է կամուրջի վրայից և գլորւում Ցաւիտենական խաւարի անդունդը, Սատանայի Ոգու թագաւորութեան մէջ։

ԶՐԱԴԱՇՏ ԵՒ ԱՒԵՍՏԱ

Իրանի կրօնական հայեացքները քարոզողն ու կարգաւորողը Զարատուշտրա անունով իմաստունն էր համարւում։ Եւրոպական լեզուներով այդ անունը, աղաւաղած, կոչւում է Զօրօաստր, իսկ հայկական գրականութեան մէջ գործ է ածւում Զրադաշտ։



Զրադաշտ

Թէ երբ և որտեղ է ծնւել ու ապրել Զրադաշտը, ճշտութեամբ յայտնի չէ։ Շատ հին իրանական գրւածքներում ասւած է միայն, որ նա ծնւել է «մի մեծ ջրի մօտ», լիճ, գետ կամ ծով։ Երեսուն տարեկան հասակում Զրադաշտը հեռացել էր մարդկանց շրջաններից, տասը տարի առանձնացած, միայնակ կեանք էր վարել ու քարոզչութեան համար պատրաստւել։ Սակայն նրա քարոզներին իր հայրենիքում ոչ ոք ականջ չէր դրել և նա, յուսահատ հարկադրւել էր թողնել իր հայրենիքն ու օտար երկիր գնալ։ Այդ օտար երկիրը Բակտրիան էր, Իրանի արևելեան մասում կազմւած մեծ տէրութիւնը։ Բակտրիացի Վիշտասպ թագաւորը շատ սիրով էր ընդունել Զրադաշտին ու նրա քարոզած ուսմունքը, որն այդտեղից էլ հետզհետէ տարածւել էր ամբողջ Իրանում։

Զրադաշտի ուսմունքը գրւած էր՝ մի քանի հատորներից բաղկացած՝ մի մեծ գրքում, որ կոչւում էր Աւեստա։ Այդ բազմահատոր գրքից մի քանի հատւածներ են միայն մեզ հասել, բայց այդ հատւածներն էլ բաւական են զրադաշտեան կրօնի մասին պարզ ու որոշ գաղափար կազմելու համար։

Աւեստան պատւիրում էր մարդկանց լինել՝ աշխատասէր, ճշմարտախօս և մաքրասէր։

Որովհետև անապատը, անջուր ու անմշակ հողը Ահրիմանինն էր, իսկ մշակւած ու լաւ հողը Որմիզդինը, ուստի մարդիկ, Որմիզդին օգնած լինելու համար, պարտաւոր էին չը ծուլանալ և կարելին չափ մեծացնել մշակւած հողերի քանակութիւնը։ Զրադաշտի ուսմունքի համաձայն, ով հաց է ցանում, միևնոյն է թէ սրբութիւն է ցանում, և ուր որ աշխատանք, առատութիւն ու բարեկեցութիւն կայ, այնտեղ չէ կարող բռնութիւն, նախանձ, աւազակութիւն և այլ չար զգացումներ լինել։

Որպէսզի մարդիկ կարողանան արագութեամբ վոքրացնել խոպան ու անմշակ տարածութիւնը, անհրաժեշտ էր, որ երկրիս բնակիչների թիւը շուտ աճէր։ Հէնց դրա համար էլ Աւեստան պատւիրում էր մարդկանց վաղ ամուսնանալ և թոյլ էր տրւում մի մարդուն մի քանի կին ունենալ։ Թոյլ էր տրւում նոյնպէս մօտ ազգականների, մինչև իսկ քոյր ու եղբայրների ամուսնութիւնը։

Աւեստան պատւիրում էր նոյնպէս լաւ ուտել և լաւ կերակրել ունեցած ծառաներին ու անասուններին, որովհետև երկիրը մշակելու, չար դևերին աշխատանքով հալածելու համար, պէտք է որ մարդիկ ֆիզիքապէս շատ առողջ լինեն։ «Լաւ կերակրւող մարդը միայն կարող է Մահւան դևի դէմ մաքառել», սովորեցնում էր Աւեստան։

Որմիզդին ոչ պակաս արժանի գործ էր համարւում և ճշմարտախօսութիւնը։ «Լոյսը ամենուրեք թափանցող է,—ասում էր Աւեստան,—հետևապէս նա ամեն բան տեսնում և իմանում է։ Ահուրա Մազդան նրան հազարաւոր աչքեր ու ականջներ է տւել, և նա ամենայն խստութեամբ հսկում է մարդկանց վրայ։ Անկարելի է ճշմարտութիւնը լոյսից թագցնել, որովհետև լոյսը հէնց ինքը ճշմարտութիւնն է, իսկ խաւարը սուտութիւնն է»։ Եւ պատւիրւում էր մարդկանց՝ երբէք սուտ չը խօսել ու կեղծիք չը գործել, այլ լինել միշտ ազնիւ ու պարտաճանաչ։ Այդ իսկ հիման վրայ, Իրանում շատ ծանր յանցանքներ էին համարւում խաբեբայութիւնը, պայմանագիր դրժելը, գողութիւնը, պարտք չը վերադարձնելն ու այլ այդ կարգի գործերը, որոնց համար շատ խիստ պատիժներ էին անօրինւած։ Պատժւում էին նոյնիսկ յանցաւորի մօտիկ ազգականները։

ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՄԱՔՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Բարոյական ներքին մաքրութեան հետ միասին Աւեստան նոյնպէս և արտաքին մաքրասիրութիւն էր պահանջում։ Որմիզդի արքայութեանն արժանանալու համար մարդիկ պէտք է չը թողնէին, որ Ահրիմանի ստեղծած անմաքուր, անսուրբ առարկաները դիպչեն Որմիզդի ստեղծած մաքուր ու սուրբ առարկաներին և պղծեն նրանց։

Աւեստայի ուսմունքի համաձայն ամենամաքուր ու սուրբ առարկաներ համարւում էին՝ օդը, ջուրը, հողն ու կրակը, որոնց մաքրութեան մասին մասնաւոր հոգատարութիւն էր պահանջւում։ Այսպէս օրինակ՝ ոչ միայն արգելւում էր կրակի մէջ մի որևէ անմաքուր բան գցելը, այլև կրակին մօտենալիս, պէտք էր քիթ ու բերանը շորով ծածկել, որպէսզի շնչառութիւնը չը դիպչի ու չը պղծի նրան։

Անմաքուր ու պիղծ էին համարւում այն բոլորը, ինչ որ փտում, լուծւում էր։ Այդպիսով խիստ անմաքուր բան էր նոյնպէս և ննջեցեալի դիակը, ուստի հանգուցեալի մերձաւորները աշխատում էին, որչափ կարելի է, շուտ ազատւել նրանից ու չը դիպչել նրան։ Բայց, որպէսզի

հողը, կրակն ու ջուրը չը պղծւեն, նրանք իրանց մեռելներին ոչ թաղում, ոչ այրում և ոչ էլ ջուրն էին նետում։

Մերկ դիակը փալասի մէջ փաթաթած, նրանք տանում դնում էին մի բարձր կամ անապատ տեղ և թողնում էին, որ գիշատիչ գազաններն ու թռչուններն ուտեն։ Իսկ երբ ննջեցեալի չոր ոսկորներն էին միայն մնում, նրանք ծածկում էին հողով։



Իրանցիների յուղարկաւորութիւնը

Միայն ննջեցեալը չէը, որ անմաքուր էր համարւում. անմաքուր էր նոյնպէս և հիւանդը։ Ամեն մի հիւանդութիւն նկատւում էր դևերի գործ, ուստի հիւանդների հետ իրանցից վարւում էին, իբրև յանցաւորների հետ։ Նրանց պահեցնում էին յատկապէս հիւանդների համար շինւած մի այնպիսի սենեակում, ուր ոչ արև էր թափանցում ու ոչ էլ կրակ վառւում։ Հիւանդներին էլ քիչ բան էին տալիս ուտելու, ասելով թէ ուտելիքը նրա մէջ մտած դևին կարող էր ոյժ տալ։ Հեռուից էին պարզում նրանք ուտելիքը հիւանդին. ամեն կերպ աշխատելով չմօտենալ նրան։ Հիւանդին նոյնիսկ լաւ անկողին էլ չէին տալիս, այլ պառկեցնում էին հին ու անպէտք փալասների մէջ։

Զը նայելով այս բոլորին, Աւետան մեծ համակրանքով էր խօսում բժիշկների ու նրանց տւած օգուտների մասին։ «Բժիշկները, պահպանելով մարդկանց մարմինը հիւանդութիւնների քայքայումից, մեծ ծառայութիւն են մատուցանում Որմիզդին»։ Այդ իսկ պատճառով բժշկութիւնը Իրանում բաւականին զարգացել էր։

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ

Իրանցիները հետևեալ ձևով էին իրանց պատկերացնում հանդերձեալ կեանքը.—Մահից յետոյ մարդու մարմնից բաժանւած հոգին երեք օր ման ի գալիս է նստած մեռելի գլխի մօտ։ Եթէ մեռնողը բարի և արդար մարդ էր, այդ երեք գիշերւայ ընթացքում նրա հոգին այնպիսի քաղցրութիւններ է ճաշակում, որպիսին կարող է միայն կենդանի արարածը ճաշակել։ Իսկ մեռնողի մօտիկ ազգականները պարտաւոր էին այդ երեք գիշերը աղօթքներով և զոհեր մատուցանելով անցկացնել։ Երրորդ գիշերը անցնելուն պէս, հէնց որ արշալոյսը սկսում է բացւել, արդարի հոգուն թւում է, թէ իրան մի ծառաբիտ բուրաստան են տարել։ Եւ նա զգում է, թէ ինչպէս հարաւից*) մի այնպիսի անուշահոտ քամի է փչում, որպիսին ամբողջ աշխարհում ոչ մի տեղ չը կայ։ Այդ միջոցին, աստւածաշէն սուրբ Զինվատ կամուրջի միւս ծայրում յայտնւում է մի բարձրահասակ, սպիտակ երեսով, շէկ մազերով, գեղեցիկ ու նազելի աղջիկ, որին երկու շուն են ու-

*) Ամեն լաւ բան, իրանցիների կարծիքով, հարաւումն էր, իսկ ամեն վատ բան հիւսիսում, որը դևերի կացարանն էր համարւում։ Եւթէ, այդ այն պատճառով, որ նրանց թշնամի Թուրանը հիւսիսումն էր։

ղեկցում։ Եւ արդար մարդու հոգին դիմում է նրան, հարցնելով.--«Ո՞վ ես դու, ով կոյս, որ մինչև այժմ իմ տեսած բոլոր կոյսերից գեղեցիկն ես»։ Աղջիկը նրան պատասխանում է.— «Այ դու, գործով ու խօսքով առաքինի և բարի հաւատ ունեցող մարդ, ես քո խիղճն եմ...»

Եւ աղջիկը օգնում է արդար մարդու հոգուն անցնել Զինվատ կամուրջն ու վեր բարձրանալ, և ապա նրան երկնային աստուածների մօտ է տանում։


Հոլորովին ուրիշ վիճակ է ունենում մեղաւոր մարդու հոգին։ Մեռելի գլխավերևում անգկացրած առաջին երեք օրերում նա անասելի դառնութիւններ է միայն ճաշակում։ Նրա զգացած քամին հիւսիսից է փչում և սոսկալի գարշահոտութիւն է բերում։ Զինվատ կամուրջի վրայ հանդիպած նրա խիղճը պառաւ վհուկի կերպարանքով է, և նա կամուրջը չի անցնում, այլ գլորւում է անդունդը, ուր Ահրիմանի թագաւորութիւնն է։

ՏԱՃԱՐՆԵՐԸ



Ատրուշան

Իրանի բնակիչները սկզբում սովորութիւն չունէին տաճարներ շինել։ Նրանք աղօթում և զոհ էին մատուցանում բացօդեայ։ Միւս ազգերի նման, նրանք ձեռակերտ աստուածներ էլ չէին շինում։ Միակ շօշափելի սրբազան առարկան *զոհարանն* էր, այսինքն՝ մի մեծ *ատրուշան*, որի մէջ մոխիր էին լցնում, վրան հոտաւէտ չոր փայտի կտորներից կրակ վառում ու



Աշտարակաձեւ ատրուշան

շարունակ հսկում, որ չը հանգչի։ Զոհարանի շուրջը հաւաքւելով՝ նրանք աղօթում զոհ էին մատուցանում և այլ կրօնական ծիսակատարութիւններ անում։

Աւելի ուշ ժամանակներում իրանցիք, քաղդէացիների ու ասորիների նմանութեամբ, մի քանի յարկանի բարձր աշտարակներ էին շինում ու նրա գագաթին տեղաւորում ատրուշանը։

Զոհ կարելի էր բերել այն բոլորը, ինչ որ պիտանի է մարդկանց ուտելու համար. միս, հաց, պտուղներ և այլն։ Եւ զոհ բերւած առարկան նրանք չէին գցում կրակի մէջ ու չէին այրում միւս ազգերի նման, այլ միայն *ցոյց էին տալիս* կրակին օրհնելու նպատակով։ Աստուածներին էլ ոչ մի բաժին չէին թողնում զոհից, այլ բոլորը մարդկանց մէջ էին բաժանում, ասելով թէ աստուածներին միմիայն զոհի հոգին է պէտք։

Զոհաբերութիւնն ու այլ կրօնական ծիսակատարութիւնները կատարում էին



Իրանցին աղօթելիս

մոգերը, որոնք այդ միջոցին մի առանձին երկար ու սպիտակ հագուստ էին հագնում և քիթ ու բերանը սպիտակ շորով փաթաթում։ Զոհաբերութեան ու աղօթքի ժամանակ, սովորական մարդիկ էլ մի առանձին հագուստ էին հագնում։

Իրանում մոգերը առանձին կաստա չէին կազմում, ինչպէս Եգիպտոսում։ Ամեն ցանկացող կարող էր մոգ դառնալ. դրա համար հարկաւոր էր միայն լաւ ուսումնասիրել Աւեստան և առաքինի կեանք ունենալ։

Իրանցիների աղօթքներն էլ իրանց բովանդակութեամբ սաստիկ տարբերւում էին եգիպտական և ասորա-բաբելոնականներից։ Մեծ ուշադրութեան են արժանի, օրինակ, իրանական հետևեալ երկու աղօթքները. «Երկրպագում եմ երբ և է ծնւած այն սուրբ մարդկանց ու կանանց հոգիներին, որոնց խիղճը մարտնչել է, մարտնչում է և կամ պիտի մարտնչի բարւոյ համար»։ «Տուր մեզ, Ահուրա-Մազդա, գիտութիւն, շրջահայեցողութիւն, ճարտարախօսութիւն, իմաստութիւն, լաւ յիշողութիւն. տուր մեզ հետզհետէ աճող հասկացողութիւն և այնպիսի հասկացողութիւն, որն ուսումի հետևանք չէ»։





ՄԻԴԻԱ. ԿԱՄ ՄԱՐԱՍՏԱՆ

Իրանի ժողովուրդներից մեդացիք կամ մարերը ամենից վաղ մեծ զօրութեան հասան։

Աւանդութիւնը պատմում է, որ Միդիայի առաջին թագաւորը եղել է մի ոմն Դէյօկ, որն սկզբում քաղաքային մի հասարակ տանուտէր էր։ Այդ Դէյօկը իր ազնւութեամբ, խելքով ու անկաշառութեամբ այնպիսի մեծ համբաւ էր հանել, որ ոչ միայն իր քաղաքացիները, այլ և ուրիշ՝ աւելի հեռաւոր տեղերից էլ մարդիկ գալիս էին նրա մօտ դատւելու և նրա արդարադատութիւնը խնդրելու։

Իր այդ համբաւից և ունեցած ազդեցութիւնից օգտւելով, Դէյօկը մէկ օր էլ իրան թագաւոր է յայտարարում մեդական բոլոր մանր տոհմերի ու քաղաքների վրայ, որ և ընդունւում է առանց դիմադրութեան։ Դրանից յետոյ նա իր համար նոր մայրաքաղաք է շինել տալիս մի լեռնոտ ու զով տեղ, որ կոչւում է Հազմատանա կամ Եկբատանա (այժմ Համադան)։

Դէյօկն իր խելացի և արդար վարչութեամբ թագաւորական իշխանութիւնը այնպիսի հաստատուն հիմքերի վրայ էր դրել, որ նրա որդին՝ Փրաօրտը, հօր մահից յետոյ, գահը ժառանգեց առանց մի որևէ խոչնդոտի հանդիպելու։

Փրաօրտը հօրից ոչ պակաս խելացիութեամբ էր կառավարում երկիրը։ Նա իր գերիշխանութեանը ենթարկեց պարսիկներին, պարթևներին ու բակտրիացիներին և այդ-

պիսով խիստ ընդարձակեց Միդիայի սահմանները։ Նա փորձեց Ասորեստանն էլ նւաճել, բայց հէնց պատերազմի ժամանակ ապաշուեց։

Ֆրաօրտին յաջորդեց որդին՝ Կիաքսարը։ Այս այն Կիաքսարն էր, որի օրով կիմերներն ու սկիւթացիք Առաջաւոր-Ասիա մտան և ահագին աւերմունքներ գործեցին։ Կիաքսարը խորամանկութեամբ նախ բարեկամութիւն հաստատեց սկիւթացիների իշխանների հետ, իսկ յետոյ, նրանց խնճոյքի հրաւիրելով, բոլորին էլ կոտորել տւեց։ Սարսափած բարբարոսները թողին ու բոլորովին հեռացան Միդիայից։

Դրանից յետոյ Կիաքսարը, Բաբելոնի Նաբուպալասար թագաւորի հետ դաշնակցելով, Ասորեստանի վրայ յարձակւեց և, վերցնելով ու այրելով Նինւէն (606 թ. ք. ա.), վերջ դրեց այդ հզօր թագաւորութեան։ Նա Հայաստանն էլ գրաւեց և իր տիրապետութեան սահմանները արևմտեան կողմում մինչև Ալիս գետը հասցրեց։ Կիաքսարը կամենում էր աւելի հեռուն՝ մինչև Միջերկրական ծովը գնալ, բայց այդ կողմում նրա յանդիման կանգնած էր մի ուրիշ, ոչ պակաս զօրաւոր պետութիւն, որին յաղթելը այնչափ էլ հեշտ բան չէր։

Այդ պետութիւնը Լիդիան էր, որի բնակիչները գլխաւորաբար հաթթեր էին և որը, Փոքր-Ասիական մանր տէրութիւնները հետզհետէ նւաճելով, այդ ժամանակներում նոյնպէս սաստիկ զօրեզացել և իր սահմանները Միջերկրական ծովից մինչև Ալիս գետն էր հասցրել։

Լիդիան մի շատ հարուստ երկիր էր։ Իր աշխարհագրական դիրքի շնորհով, այդ երկրում սաստիկ ծաղկել էին վաճառականութիւնն ու արհեստները։

Դրամահատութիւնն առաջին անգամ Լիդիայումն էր սկսւել։ Նրա մայրաքաղաք Սարդան իր շքեղութեամբ ու հարստութեամբ Բաբելոնից ոչ պակաս համբաւ ունէր։

Կիաքսարը մի առիթ էր որոնում Լիդիայի երիտասարդ Ալիաթ թագաւորի դէմ պատերազմ սկսելու համար։ Եւ այդ առիթն էլ շուտով ներկայացաւ. սկիւթացիներից կազմւած Կիաքսարի թիկնապահ զօրախումբը, մի ինչոր պատճառով վիրաւորւած, թագուն փախել էր Ալիաթի մօտ ու նրա հովանաւորութեան տակ մտել։ Կիաքսարը Ալիաթից պահանջեց փախստականներին և, երբ մերժուեց ստացաւ, պատերազմ յայտարարեց։



Լիդիական դրամներ

Պատերազմը տևեց ամբողջ 6 տարի։ Լիդիական զօրքերը իրանց քաջութեամբ բոլորովին յետ չէին մնում միդիականից։ Մանաւանդ շատ լաւ էր կռւում լիդիական հեծելազօրքը, որ այն ժամանակներում շատ հռչակւած էր առհասարակ։ Ցայտնի չէ, թէ պատերազմը էլի որչափ պիտի տևէր, եթէ մի անակընկալ դէպք առիթ չը տար նրան վերջ դնելու։

Մի վճռական ճակատամարտի ժամանակ յանկարծ արեգակի խաւարում տեղի ունեցաւ և այն աստիճան խիստ, որ պայծառ ցերեկը մութ գիշերի փոխւեց։ Երկու կողմի զօրքերն էլ սաստիկ շփոթւեցին այդ բնական երևոյթից և, ենթադրելով, որ դա մի մեծ դժբաղդութեան նախագուշակ է, զէնքերը վայր գցեցին և հրաժարւեցին կռիւը շարունակելուց։

Այդ հանգամանքից օգտւելով, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը միջամտեց և առաջարկեց երկու ախոյեաններին հաշտութիւն կայացնել։ Կիաքսարն ու

Ալիաթը հաշտեցին և, իրանց բարեկամութիւնը աւելի հաստատ հիմքերի վրայ դնելու համար, խնամիական կապերով կապեցին. Ալիաթի աղջիկը կիաքսարի մեծ որդու՝ Աստիագի (Աժդահակի) հետ ամուսնացրին, եւ որովհետև կիաքսարի աղջիկն էլ արդէն Նաբուդոդոնոսորի կինն էր, ուստի այդ երեք խոշոր պետութիւնները՝ Միդիան, Բաբելոնն ու Լիդիան երեքպետեան մի շատ զօրաւոր դաշնակցութիւն կազմեցին։

Կիաքսարի մահից յետոյ (54 թ. Ք. ա.), Միդիայի գահը ժառանգեց նրա որդին՝ Աժդահակը։ Բայց սա բոլորովին իր հօր նման չէր. շատ քիչ էր զբաղւում պետական գործերով և շատ աւելի զւարճութիւնների, վարքամ ու շքեղ կեանք վարելու յեւից էր ընկած։ Թէև նա ամբողջ երեսուն և հինգ տարի թագաւորեց, բայց ոչինչ չաւելացրեց իր նախորդների միջոցով ձեռք բերած Միդիայի վառքի ու հարստութիւնների վրայ։ Ընդհակառակը՝ Աժդահակը աւելի վատնում էր իր ժառանգած հարստութիւնները, իսկ իր խստասրտութեամբ ու բռնութիւններով մխիթարն դժգոհութիւն և անբաւականութիւն էր սերմանում ժողովուրդի մէջ։ Նրան չէին սիրում ոչ ժողովուրդը և ոչ նոյնիսկ իրան շրջապատողները։

Այդ հանգամանքից օգտւելով, պարսից իշխանազն Կիւրոսը դաւադրութիւն կազմեց նրա դէմ և ապստամբելով, խորտակեց Միդիայի թագաւորութիւնը (546 թ. Ք. ա.), որ գոյութիւն էր ունեցել ընդամենը 57 տարի, հաշւելով Նինւէի անկման օրից։ Աժդահակը գերի ընկաւ, իսկ Կիւրոսը գահ բարձրանալով, դարձաւ Պարսկաստանի և Միդիայի թագաւոր։

ՄԻԴԻԱՑԻ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՇՔԵՂՈՒԹԻՒՆԸ

Միդիայի թագաւորների, նամանաւանդ կիաքսարի ձեռք բերած հարստութիւններին հաշիւ չը կար։ Այն բոլոր ոսկին ու արծաթը, գանձերն ու հարստութիւնները, որ հարիւրաւոր տարիների ընթացքում զանազան երկիրներից կողոպտել ու կուտակել էին Ասորեստանի թագաւորները, Նինւէի անկումից յետոյ՝ մի անգամից եկբատան տարւեցին։ Կարճ ժամանակի մէջ, եկբատանի արքայական պալատն իր հարստութեամբ, շքեղութեամբ ու փայլով սկսեց Բաբելոնի ու Սարդայի հետ մրցել։

Բայց միդիացիք, ինչպէս և Իրանի միւս արիական ցեղերը, իբրև կիսավայրենի դրութիւնից նոր դուրս եկած ժողովուրդ, դեռևս ոչ իրանց սեփական արւեստն ու ճարտարապետութիւնն ունէին և ոչ էլ դեռ կարողացել էին հարևան ազգերից սովորել։ Այդ պատճառով էլ նրանց շքեղութիւնն ու փարթամութիւնը արտայայտւում էր շատ աւելի քանակով, քան որակով։ Այսպէս օրինակ՝ թագաւորական պալատի կտուրը կղմինդրի փոխարէն, արծաթից ձուլւած կտորներով էր ծածկւած։

Մեդացիք փայտից էին շինում իրանց տները և սիրում էին դրսի կողմից բազմաթիւ սիւներով զարդարել նրանց։ Այդ բանին իրանց երկրի հարուստ ու ճոխ անտառները աստիճ նպաստում էին։

Թագաւորական պալատն էլ ամբողջապէս փայտից էր շինւած։ Դա մի հսկայական շէնք էր, որ ահագին տարածութիւն էր գրաւում։ Նրա մի մասը շինել էր դեռ Դէոյկի օրով, իսկ յետոյ կողքերին նոր ու նոր շինութիւններ էին աւելացրել յաջորդ թագաւորները։

Թէ ներսի և թէ դրսի կողմից ամբողջ պալատը՝ պատերը, առաստաղը, սիւները, գերանները՝ պատած էր ոսկէ և արծաթէ թիթեղներով, այնպէս որ փայտը բոլորովին չէր երևում։

Պալատը շինւած էր մի բլրի վրայ և շրջապատւած եօթը կարգ պարիսպներով։ Պարիսպները վերջանում էին ատամնաձև կարւածքներով, և ամեն մի պարսպի վերին մասը առանձին գոյնով էր ներկւած։ Բլուրի թեքութեան շնորհով, պարիսպները մէկը միւսից աւելի բարձր էին թւում, և բոլորի էլ վերին ներկւած մասերը կարւածքների միջից երևում էին։ Այդպիսով գոյնզգոյն պարիսպների մէջ տեղում փայլող ոսկով ու արծաթով ծածկւած պալատը՝ հեռւից խիստ շլացուցիչ տպաւորութիւն էր թողնում։

Պարզ գաղափար տալու համար, թէ ինչ աստիճանի էր հասնում Միդիայի թագաւորական պալատի հարստութիւնը, պատմում են, որ չը նայելով Ալեքսանդր Մակեդոնացին Ասիան գրաւած ժամանակը, պոկել տարել էր այդ պալատի վրայ եղած բոլոր արծաթն ու ոսկին, այնուամենայնիւ Ալեքսանդրից 75 տարի յետոյ եկող մի ուրիշ աշխարհակալ՝ Եկբատանում գարձեալ տասը միլիոն արժողութեան ոսկու և արծաթի թիթեղներ էր գտել։ Իսկ Ալեքսանդրից առաջ էլ մօտ 17 միլիոն րուբլու ոսկի ու արծաթ պարսից թագաւորներն էին տարել։





ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսիկները, իբրև արիացիներ, լեզուով ու կրօնով ցեղակից էին մեդացիներին։ Նրանք տարածւած էին Պարսից ծոցի հիւսիսային կողմում, մեդացիներից դէպի հարաւ։ Այդ երկիրը բաւական կլիմայ ունէր և շատ նպաստաւոր էր երկրագործութեան ու խաշնարածութեան համար, որ պարսիկների ամենասիրած զբաղմունքն էր։ Մեդացիների և միւս բոլոր ազգերի նման, պարսիկներն էլ սկզբում մի ամբողջ ազգութիւն կամ տէրութիւն չէին կազմում, այլ բաժանւած էին բազմաթիւ մանր համայնքների կամ տոհմերի, որոնցից ամեն մէկն իր առանձին կառավարութիւնն ունէր։

Պարսկական այդ մանր տէրութիւնները միացնողն ու պարսկական թագաւորութեան հիմք դնողը եղել է Պասարգադ տոհմի իշխանը, Հաքհամանիշ կամ Աքեմենն անունով, որի մայրաքաղաքը նոյնպէս Պասարգադ էր կոչւում։

Էլամի թագաւորութեան անկումից յետոյ, որ տեղի ունեցաւ Ասորեստանի Ասուրբանապալ թագաւորի օրով, պարսիկները հետզհետէ այդ երկրի մի մասն էլ գրաւեցին։ Դրանից բաւական ժամանակ անցած, Պարսից տէրութիւնը երկու մասի բաժանւեց, և Աքեմենի յաջորդներից մէկը մնաց բուն Պարսկաստանում թագաւորելու, իսկ միւսն սկսեց Էլամում թագաւորել։ Այս վերջինն իր նոր

մայրաքաղաքի անունով կոչւեց Անշանի թագաւոր։ Եւ հէնց այդ Անշանի թագաւորների սերունդից էր Կիւրոսը, որն ապստամբութիւն բարձրացնելով Աժդահակի դէմ, վերջ դրեց Միդիայի գերիշխանութեանն ու նրա տեղ Պարսկաստանինը հաստատեց։

Կիւրոսի ծագումի, մանկութեան և Միդիայի անկման մասին մի քանի աւանդութիւններ ու առասպելներ են հասել մինչև մեր օրերը։ Այդ առասպելներից է և մեր պատմագիր Մովսէս Խորենացու աւանդածը՝հայոց թագաւոր Տիգրան Երւանդեանի ու Աժդահակի մասին։

Ամենից ստոյգը համարւում է այն, որ Կիւրոսը իր պատանեկութիւնն ու երիտասարդութեան մի մասը անց էր կացրել Աժդահակի արքունիքում։ Այդտեղ օգուտ քաղելով թագաւորի դէմ եղած խիստ դժգոհութիւնից, նա սկսել էր իրան կուսակիցներ գտնել հէնց մեդացիների շրջանում։ Դաւադիրների կուսակցութեան գլուխ է կանգնում նոյնիսկ Աժդահակի ազգական Հարպագը, որը մի շատ բարձրաստիճան պալատական էր։ Ապստամբութեան յաջողութիւնը կատարեալ դարձնելու համար, Կիւրոսը իրան աջակիցներ է որոնում նաև այն օտար երկիրներում, որոնք նոյնպէս Միդիայի գերիշխանութեան տակ էին գտնւում։ Այդպիսի երկիրներից էր և Հայաստանը, որի գահաժառանգ Տիգրանը, յոյն պատմաբան Քսենոֆոնտի պատմածի համաձայն, Կիւրոսի հասակակիցն էր և մտերիմ բարեկամը։



Մեդական եւ պարսկական զինուորները

Կիւրոսը, Միդիայից Պարսկաստան վերադառնալով, ապըստամբութեան դրօշակ է բարձրացնում և կոչ է անում իրան հետեւել։ Միդիայի լուծից ձանձրացած թէ պարսիկները և թէ միւս ազգերը ուրախութեամբ են ընդունում Կիւրոսի կոչը։ Հայերը նրան օգնում են թէ փողով և թէ զօրքով, և հայկական զօրքի հրամանատարը հէնց ինքը արքայազն Տիգրանն էր։

Աժդահակը ապստամբութեան լուրը լսելուն պէս, իսկոյն զօրք է ուղարկում Կիւրոսի դէմ, բայց, գաւաղրութեան մասին ոչինչ չկասկածելով, զօրքի հրամանատարութիւնը յանձնում է Հարպագին։ Իսկ սա, ի հարկէ, իր զօրքի հետ միասին Կիւրոսի կողմն է անցնում։ Կիւրոսը արշաւում է շիտակ Եկբատանի վրայ։ Ծերունի Աժդահակը, շտապով հաւաքած իր զօրքի գլուխն անցած, դուրս է գալիս ապստամբներին դիմադրելու, բայց պարտւում և գերի է ընկնում։ Բնաւորութեամբ խիստ վեհանձն Կիւրոսը ոչ միայն չէ վնասում Աժդահակին, այլև նրան պահում է իր մօտ արքայավայել պատիւներով մինչև նրա մարը։

ԿԻՒՐՈՍԸ ԵՒ ԼԻԴԻԱՑԻ ՆԱՒՃՈՒՄԸ

Կարճ ժամանակի մէջ Կիւրոսը տէր դարձաւ այն բոլոր երկիրներին, որոնք Միդիայի իշխանութեան տակ էին գտնւում։ Նւաճւած ազգերը ոչ միայն շուտ հաշտւեցին պարսից տիրապետութեան հետ, այլ և հաճութեամբ էին տանում նրա լուծը, որովհետև Կիւրոսն ամեն կերպ աշխատում էր, որ այդ լուծը կարելիին չափ թեթև ու տանելի լինի։ Այսպէս օրինակ՝ մի որևէ երկիր նւաճելով, նա ամենից առաջ յաղթւած ժողովրդի տաճարն էր մտնում ու յարգանքներ մատուցանում նրա աստւածներին։ Եւ որպէսզի ժողովուրդը տեսնէ, որ նա չը քայքայւի ու չը թշւառանայ, նա հէնց այդ ժողովրդին էր թողնում որոշելու Պարսկաստանին վճարելիք տուրքն ու հարկը։ Իր նշանակած փոխարքաներից կամ սատրապներից էլ նա ամենից առաջ արդարադատութիւն ու պարտաճանաչութիւն էր պահանջում։

Հանճարեղ վարչական ընդունակութիւնների հետ միասին՝ Կիւրոսն աշխարհակալական մեծ ձգտումներ ունէր։ Նա չէր բաւականանում Միդիայի իշխանութեան

տակ եղած երկիրներին տիրանալով, այլ մտածում էր Բաբելոնն ու Լիդիան էլ նւաճել և այդպիսով ամբողջ Առաջաւոր և Փոքր-Ասիայի տէրը դառնալ։ Եւ նա իր արշաւանքը Լիդիայի դէմ ուղղեց։

Այդ ժամանակ Լիդիայում թագաւորում էր Ալիաթի որդին՝ Կրեսոսը, որը թէև շատ խելօք, կրթւած ու բարի բնաւորութեան տէր մարդ էր, բայց և սաստիկ փառասէր ու պարծենկոտ էր։ Նա չափազանց սիրում էր նամանաւանդ պարծենալ իր հարստութիւններով ու գանձերով, որոնք ձեռք էին բերւած գլխաւորաբար Ալիաթի օրով։ Կիւրոսին նա չէր սիրում Աժդահակից գահը յափշտակելուն համար, և նրա վրայ նայում էր, իբրև մի ապստամբ։ Բայց և միևնոյն ժամանակ Կիւրոսի օրէցօր զօրեղանալը տեսնելով, նա խիստ անհանգիստ էր լինում։ Որպէսզի պարսից թագաւորին ժամանակ չը տայ Լիդիայի վրայ յարձակւելու, Կրեսոսն ինքը սկսեց պատերազմի պատրաստութիւններ տեսնել։ Իր սեփական ոյժերին չը վստահանալով, նա պատգամաւորներ ուղարկեց Բաբելոնի և Եգիպտոսի թագաւորների մօտ ու նրանց աջակցութիւնն էլ խնդրեց։ Միևնոյն ժամանակ Կրեսոսը պատգամաւորներ ուղարկեց մեծ ու թանկագին նւէրներով մի քանի Յունաստանի Դելֆեան պատգամախօսի մօտ հարցնելու, թէ արդեօք ինքը պատերազմ անի պարսիկների հետ։ Պատգամախօսն ասել էր. «Երբ Կրեսոսը Ալիւս գետն անցնի, մի մեծ պետութիւն կը կործանւի»։

Եւ նա, բոլորովին չը կասկածելով, թէ այդ մեծ պետութիւնը կարող է և Լիդիան լինել, շտապեց Ալիւս գետն անցնել, մինչև իսկ իր դաշնակիցների գալուն չը սպասելով։

Կիւրոսն էլ մի ւս կողմից էր արդէն մօտենում զօրքով։ Առաջին ճակատամարտում երկու կողմն էլ շատ մեծ քաջութեամբ կռւեցին, բայց յաղթութիւնը ոչ մէկի

և ոչ միւսի կողմը ձգաց։ Երկրորդ օրը Կրեսոսը, տեսնելով որ պարսիկները չեն ուզում յարձակւել, թողեց ու Սարդա վերադարձաւ, կատարելապէս վստահ լինելով, թէ ձմեռւայ պատճառով Կիւրոսը չի համարձակւի Սարդայի վրայ յարձակւել։ Մինչևիսկ նա իր զօրքերն արձակեց այն յոյսով, թէ գարնանը նորից կը հաւաքի, և պատգամաւորներ ուղարկեց դաշնակիցներին ասելու, թէ պատերազմը գարնանը պիտի վերանորոգւի։

Բայց Կիւրոսը չըսպասեց գարնանը, և առանց ժամանակ կորցնելու, Սարդայի վրայ արշաւեց։ Այդ անակնկալ յարձակումից սակայն Կրեսոսը գլուխը չը կորցրեց. նա շուտով զօրք հաւաքեց ու դուրս եկաւ կռւելու։ Բայց մի շատ մեծ պարտութիւն կրեց ու փախաւ, փակւեց Սարդայում։ Նա դեռ յոյս ունէր, թէ կը կարողանայ քաղաքը պաշտպանել, մինչև որ դաշնակիցները կը գան։ Բայց իզուր՝ տասնուչորս օրւայ պաշարումից յետոյ պարսիկները գրաւեցին Լիդիայի մայրաքաղաքն ու նրա թագաւորին էլ գերի բռնեցին (546 թ. Ք. ա.)։

Կիւրոսը մեծ վեհանձնութեամբ վերաբերւեց Կրեսոսին և շատ արժանավայել պատիւներ տւեց նրան։

Յետոյ այն աստիճան նա սիրել ու բարեկամացել էր Կրեսոսի հետ, որ մեռնելիս նրան խնամակալ նշանակեց իր անչափահաս կամբիզ որդու վրայ։

Սարդայի անկումով վերջ դրւեց Լիդիայի թագաւորութեանը։

ԲԱԲԵԼՈՆԻ ՆԻԱՁՈՒՄԸ ԵՒ ԿԻՒՐՈՍԻ ՄԱՀԸ

Սարդայի գրաւումից յետոյ Կիւրոսն իր զօրապետ Հարպագին յանձնեց Լիդիայի գերիշխանութեան տակ եղած Փոքր-Ասիայի յունական քաղաքների նւաճումը, իսկ ինքը, զօրքի մեծագոյն մասը հետն առնելով, եկբատան

վերադարձաւ։ Այսուհետեւ նա, նոր պատրաստութիւններ տեսնելուց յետոյ, Էլամի վրայ արշաւեց և, նւաճելով այդ երկիրն էլ, Շուշը (Սուզան) իր երկրորդ մայրաքաղաքը դարձրեց։


Յետոյ Կիւրոսը Բաբելոնի վրայ գնաց, որտեղ այդ ժամանակ ներքին խիստ պառակտումներ էին սկսւել։ Պառակտումների գլխաւոր պատճառն այն էր, որ Նաբուգոդոնոսորի մահից յետոյ քրմական-դասը սաստիկ զօրեղացել էր և, գահի վրայ այլևս ուժեղ թագաւոր չը տեսնելով, ձգտում էր երկրի իշխանութիւնն իր ձեռքը գցել։ Այն թագաւորները, որոնք հակառակ էին գնում քուրմերի պահանջներին, դաւադրութիւնների զոհ էին դառնում։ Այդպիսով 15 տարւայ մէջ մի քանի թագաւորներ էին գահ բարձրացել ու գահընկէց եղել, կամ դաւաճանութեամբ սպանւել։

Ներքին խռովութիւններից ձանձրացած, բաբելացիք հէնց իրանք էին հրաւիրում Կիւրոսին՝ գալ օր առաջ իրանց երկրին տիրելու։ Կիւրոսին մեծ աջակցութիւն էին խոստանում Նաբուգոդոնոսորի ձեռքով գերւած ու Բաբելոն վերաբնակեցրած հրէաները, որոնք սաստիկ ատում էին բաբելացիներին։ Կիւրոսը համարեա թէ առանց պատերազմի տիրեց Բաբելոնին (538 թ. Ք. ա.)։

Այդ հռչակաւոր քաղաքի անկումով ամբողջ Սիրիան, Պաղեստինն ու Փիւնիկիան Պարսկաստանի տիրապետութեան տակ ընկան։ Իբրև վարձատրութիւն, հրէաների ցոյց տւած աջակցութեան, Կիւրոսը թոյլ տւեց նրանց իրանց հայրենիքը վերադառնալ և օգնեց Սողոմոնի տաճարը վերականգնելու։

Կիւրոսի թագաւորութեան վերջին տարիներում Բաբելեան ծովի հիւսիս-արևելեան կողմից մի նոր թափառական ժողովուրդ յարձակւեց Պարսկաստանի վրայ։ Այդ թափառականները նոյնպէս սկիւթական ցեղին էին պատկանում և կոչւում էին *մասագատներ*։

Մի աւանդութիւն ասում է, որ Կիւրոսը այդ մասագատների դէմ դուրս գալով, սպանւել է պատերազմի ժամանակ (529 թ. Ք. ա.)։ Բայց մի այլ աւանդութեան համաձայն նա իր բնական մահով է մեռել, ընտանեկան շրջանում։



Կիւրոսի դամբարանը

Կիւրոսի դամբարանը գտնւում է Պասարագատում, որը պարսից Աքեմենեան բոլոր թագաւորների նւիրական քաղաքն էր։ Այդտեղ էր գտնւում նաև Կիւրոսի գլխաւոր պալատը, որի մէջ նա հաւաքել էր իր նւաճած նշանաւոր քաղաքներից բերած բոլոր հարստութիւնները։

ԿԱՄԲԻԶ

Կիւրոսը երկու որդի ունէր. Կամբիզը (աւելի ճիշտ՝ Կամբուջիա) և Բարդիա*)։ Մեծը Կամբիզն էր և հէնց նա էլ յաջորդեց իր հօրը պարսից գահի վրայ։ Իսկ Բարդիան, հօր կտակի համաձայն, Իրանի ամբողջ արևելեան մասի փոխարքայ նշանակւեց։

*) Յոյները այդ անունը աղաւաղելով Սմերդիս էին անւանում։

Կամբիզը, իբրև վարչական անձնաւորութիւն, շատ նման էր իր հօրը, բայց սաստիկ կասկածոտ ու խստասիրտ բնաւորութիւն ունէր։ Նրա կասկածոտութիւնը մինչև հիւանդոտութեան աստիճանի էր հասնում։ Այդ իսկ պատճառով հպատակները Բարդիային աւելի էին սիրում, քան Կամբիզին։ Այդ հանգամանքն աւելի ևս կասկածոտ էր դարձնում Կամբիզին, ենթադրել տալով, թէ Բարդիան հեշտութեամբ կարող է իրանից խլել թագաւորական գահը։ Կասկածը հետզհետէ այն աստիճան զարգացաւ Կամբիզի մէջ, որ նա, Եգիպտոսի վրայ արշաւելու համար երկար պատրաստութիւններ տեսնելուց յետոյ, սկսել էր վարանել և չէր վստահանում Պարսկաստանի կենտրոնից հեռանալ։

Վերջ ի վերջոյ նա գաղտնի կերպով սպանել տւեց Բարդիային, որպէսզի կարողանայ հանգիստ սրտով կատարել իր ծրագրած արշաւանքը։

Կամբիզի արշաւանքը Եգիպտոսի վրայ շատ մեծ յաջողութեամբ վերջացաւ. հէնց առաջին ճակատամարտում փարաւոնը գերի բռնւեց, որից յետոյ ամբողջ Եգիպտոսը Պարսկաստանի տիրապետութեան տակ ընկաւ (525 թ. Ք. Ծ. ա.)։ Եգիպտական հասարակ ժողովուրդը, սաստիկ ձանձրացած լինելով իրանց փարաւոնների կամայական բռնութիւններից, ամեն տեղ համարեա թէ ցնծութեամբ էր ընդունում պարսիկներին, նամանաւանդ որ Կամբիզը շատ լաւ վերաբերմունք էր ցոյց տալիս յաղթւածներին ու մեծ յարգանքով վերաբերւում դէպի նրանց կրօնն ու սովորութիւնները։

Մինչ Կամբիզը Եգիպտոսումն էր և այնտեղից նոր ու նոր արշաւանքներ էր կատարում Աֆրիկայի խորքերը, Պարսկաստանից լուր ստացւեց, թէ Բարդիան իրան թագաւոր է հռչակել։

Ինքն իրան Պարսկաստանի թագաւոր հռչակողը մի

մեդացի մոգ էր, Հաուամաթա անունով, որն իմացած լինելով Բարդիայի գաղտնի կերպով սպանւած լինելը, ուզեցել էր օգտւել հանգամանքից և յայտարարել էր, թէ ինքն է Բարդիան։

Կամբիզը լուրն ստանալուն պէս թէև իսկոյն հասկացել էր գործի էութիւնը, բայց հնարք չունէր խաբեբայի ստութիւնը երևան հանելու. ինչպէս յայտարարէր, թէ ինքը վաղուց սպանել է տւել իր հարազատ եղբօրը։ Նա պատրաստւեց Պարսկաստան վերադառնալ, որպէսզի օր առաջ պատժի գահը յափշտակող կեղծ Բարդիային, բայց շուտով վարանումների և յուսահատութեան մէջ ընկաւ նորից։ Նա մտածում էր, թէ իր կատարած ոճրագործութեան արժանի պատիժն է այժմ ինքը կրում։

Ծղճահարութիւնն ու յուսահատութիւնը Կամբիզին այնպիսի դրութեան էին հասցրել, որ շատերը նրան խելագար էին համարում, նամանաւանդ որ նա առանց մի որ և է պատճառի, սպանել էր տալիս իր մերձաւորներին և շարունակական սարսափի մէջ պահում նրանց։

Կամենալով, վերջապէս, վերջ դնել իր հոգեկան խիստ տանջանքներին, Կամբիզը դեռ Պարսկաստան չը հասած, խորհուրդ գումարեց իր ամենամօտիկ պալատականներից, նրանց յայտնեց Բարդիայի սպանութեան գաղտնիքն ու անձնասպան եղաւ (522 թ. Ք. Ծ. ա.)։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պարսից զօրքը հայրենիք հասցնելու և թագաւորական գահը խաբեբայ Հաուամաթայից ազատելու գործը իր վրայ վերցրեց Կամբիզի մի հեռաւոր ազգականը՝ երիտասարդ Դարէհը, որի հայրը Վիշտասպ (կամ Հիստասպ) Պարսկաստանի արևելեան մի հեռաւոր նահանգի սատրապն էր։ Բայց Դարէհի յանձն առած գործը շատ էլ

հեշտ բան չէր, որովհետև նախ՝ շատ քչերն էին հաւատում, թէ իսկական Բարդիան մեռած է, և երկրորդ՝ խոտրամանկ ինքնակոչը խոստացել էր ժողովրդին երեք տարի շարունակ հարկ չը պահանջել, եթէ իրան յաջողւի գահի վրայ հաստատուել։

Անկարող լինելով բացարձակ կռիւ մղել կեղծ Բարդիայի դէմ, Դարէհն ինքն էլ խորամանկութեան դիմեց. նա իր հօր և աներոջ օգնութեամբ դաւադրութիւն կազմեց ու անձամբ սպանեց ինքնակոչին, որից յետոյ հէնց ինքն էլ Պարսկաստանի թագաւորը դարձաւ։

Երկրի ներքին խռովութիւնները դրանով չը վերջացան. կարճ ժամանակից յետոյ, մէկը միւսի յետևից ապստամբութիւնները ծագեցին պարսից գերիշխանութեան տակ եղած համարեա թէ բոլոր երկիրներում։ Ամբողջ 6—7 տարի տևեց, մինչև որ Դարէհը կարողացաւ ապստամբութիւնները զսպել ու վերջնական խաղաղութիւն հաստատել իր երկիրներում։ Ամենից աւելի մեծ դժուարութեամբ կարելի եղաւ խաղաղութիւնը վերականգնել Բաբելոնում, ուր մի հայ, Մալդիդայի որդի Արախա անունով, յայտարարել էր, թէ ինքը բաբելական թագաւոր Նաբոնիդի որդի Նաբուգոդոնոսորն է, որը վաղուց արդէն մեռած էր։

Ոչ պակաս դժւարութեամբ կարելի եղաւ ճնշել և Հայաստանի ապստամբութիւնը։ Հայերի դէմ Դարէհը սկզբում Դադրշ անունով մի հայ զօրավարի առաջնորդութեամբ զօրք ուղարկեց։ Բայց վերջը տեսնելով, թէ ինչպէս Դադրշը երեք ճակատամարտից յետոյ էլ դեռ անկարող է ապստամբութիւնը ճնշել, նա պարսիկ վարխումիս զօրավարին ուղարկեց։ Սա էլ երկու ճակատամարտից յետոյ միայն յաջողեց ապստամբութիւնը բոլորին ճնշել ու խաղաղութիւն հաստատել Հայաստանում։

Կիաքսարի ժամանակից ի վեր Հայաստանը թէև նախ Միդիայի և ապա Պարսկաստանի գերիշխանութեան տակ էր գտնւում և հարկատու էր նրանց, բայց և այնպէս դեռ միշտ էլի իր հայ թագաւորներն ունէր, որ իշխում էին Հայաստանում Ուրարտուի թագաւորական տոհմի անկումից յետոյ։ Իսկ Դարէհի դէմ ապստամբելուց և պարտութիւն կրելուց յետոյ, Հայաստանն իր այդ կիսանկախ դրութիւնից էլ զրկւեց և Պարսից պետութեան մի նահանգը դարձաւ։

ԴԱՐԷՀԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամեն տեղ ապստամբութիւնները ճնշելուց և խաղաղութիւնը վերականգնելուց յետոյ, Դարէհն սկսեց իր ընդարձակ պետութեան կառավարչական գործերով զբաղւել։ Ամենից առաջ նա մտածեց այնպիսի միջոցներ ձեռք առնել, որ այլևս չկրկնւեն ապստամբութիւնները։ Դրա համար նա իր ամբողջ պետութիւնը բաժանեց 20 նահանգների և ամեն մի նահանգի կառավարութիւնը յանձնեց մի պարսիկ իշխանի։ Նահանգական այդ կառավարիչները կոչւում էին *սատրապները*, որ նշանակում է՝ պաշտպան արքայական իշխանութեան։ Սատրապները իրանց նահանգների համարեա թէ լիակատար տէրերն էին, և որչափ Պարսկաստանի կենտրոնից հեռու էր գտնւում նահանգը, այնչափ էլ սատրապի իշխանութեան իրաւունքները աւելի ընդարձակ էին։ Դրա համար էլ հեռաւոր նահանգների սատրապութիւնը տրւում էր շատ մեծ վստահութիւն վայելող անձանց։

Սատրապների պարտականութիւններն էին. հսկել իրանց նահանգի ու ժողովրդի բարօրութեան վրայ, թոյլ չը տալ, որ դաշտերն անմշակ և ջրանցքներն ու ճանապարհները չը վերանորոգւած մնալով, փչանան և այլն։ Նրանք ոչ մի առիթ չը պէտք է տային հպատակ ժողովուրդների դժգոհութեան։ Դրա համար սատրապներին ու

նրանց սատրապները ծառայողներին խստիւ պատիժներում էին ոչ մի կերպ չդիպչել ու յարգանքով վերաբերուել դէպի հպատակ ազգերի կրօնը, ազգային լեզուն, սովորութիւնները ու զանազան հաստատութիւնները։ Հակառակ դէպքում, յանցաւորները խստիւ պատժւում էին։

Հպատակ ժողովուրդների բարօրութիւնը Դարէհին հարկաւոր էր նոյնպէս և նրա համար, որ կարելի լինի հնարաւոր եղածին չափ շատ հարկ ստանալ։ Իր պետութեան մէջ եղած բոլոր մշակուող հողերը նա գնահատել և ըստ գնահատութեան, իւրաքանչիւր կտոր հողի վրայ հարկ էր նշանակել։ Բացի այդ հողային հարկից, որ վճարւում էր ոսկէ կամ արծաթէ դրամով, հպատակները պարտաւոր էին տուրք վճարել նաև իրանց բերքերից— հացահատիկներ, ընտանի անասուններ, ստրուկներ և այլն։ Սակայն, այդ բոլորը պահանջւում էր այնպիսի չափով ու քանակով, որ ժողովուրդը չքայքայւի ու թշուառութեան չը մատնւի։ Իսկ ընդհակառակը, որ մի տուրք կամ հարկ չէր պահանջւում. նրանք պատրաստ էին միայն զինուորական ու քաղաքացիական ծառայութիւններ կատարել։

Որպէսզի սատրապները ի չարը գործ չը դնեն իրանց իշխանութիւնը և դաւադրութիւններ չը սարքեն թագաւորի դէմ, Դարէհը նրանց վրայ հսկող յատուկ պաշտօնեաներ էր նշանակել, որ կոչւում էին «թագաւորի աչք»։ Սրանք ամեն մի նահանգում իրանց ստորադրեալ գաղտնի պաշտօնեաներն ունէին, որ կոչւում էին «թագաւորի ականջներ»։ Այս վերջինները հսկում էին սատրապների վրայ ու նրանց կատարած գեղծումների մասին զեկուցանում իրանց գլխաւորին, երբ սա գալիս էր սատրապների գործերը քննելու։ Այս պաշտօնեաները լիազօրութիւն ունէին յանցաւոր սատրապներին մինչև իսկ մահուան պատժի ենթարկել։

Կենտրոնական իշխանութեան հաղորդակցութիւնը սատրապների հետ հեշտացնելու և տեղից տեղ շուտափոյթ զօրք հասցնելու համար, Դարէհը մի քանի հատ լաւ ճանապարհներ էր շինել տւել։ Դրանցից ամենանշանաւորն էր «թագաւորական ճանապարհը», որը Շուշ քաղաքից սկսուելով, գնում հասնում էր մինչև Սարդա և Միջերկրական ծովը։ Այդ ահագին՝ 90 օրւայ ճանապարհի ամբողջ երկարութեան վրայ, մէկը միւսից մի որոշ հեռաւորութեամբ, 111 կայարաններ էին շինւած, ուր միշտ թամբած պատրաստի ձիեր էին պահւում պետական սուրհանդակների համար։ Այդ եղանակով հնարաւոր էր լինում թագաւորական հրամանները արագութեամբ հասցնել պետութեան բոլոր կողմերը։

Կառավարչական նպատակներով շինւած ճանապարհները, որ միևնոյն ժամանակ շատ ապահով էին աւազակներից, սաստիկ նպաստում էին նոյնպէս և Պարսկաստանի վաճառականութեանը, որի մասին Դարէհը պակաս հոգատարութիւն չէր ցոյց տալիս։


Կամենալով Հնդկաստանի հետ առևտուրը զարգացնել, նա յատուկ նաւատորմիղ ուղարկեց այդ երկիրը ուսումնասիրելու համար։ Նաւատորմիղը Ինդոս գետի վրայով իջաւ մինչև Հնդկական ովկիանոսը և ապա, պտտելով Արաբիայի շուրջը, մտաւ Կարմիր ծովը ու հասաւ Եգիպտոս։

Դարէհը հրամայել էր, որ պարսից իշխանութեան տակ եղած բոլոր երկիրներում միատեսակ դրամ, չափ ու կշիռ գործածեն։

ՊԵՐՍԵՊՕԼԻՍ

Թագաւորական գահը կատարելապէս ապահով դարձնելու նպատակով, Դարէհն իր համար մի նոր մայրա-

քաղաք հիմնեց։ Պարսից թագաւորների սկզբնական մայրաքաղաքը Պասարգադն էր։ Բայց յետոյ մի-մի մայրաքաղաքներ դարձան Եկբատանը, Շուշն ու Բաբելոնը։ Կիւրոսն ու Կամբիզը ձմեռուայ ամիսները անց էին կացնում Բաբելոնում, ուր կլիման տաք էր, իսկ ամառը գնում էին Եկբատան կամ Շուշ, ուր աւելի զով էր։




Դարեհի պալատը Պերսեպօլիսում



Պերսեպօլիսի պալատի աւերակները


Դարէհն ուզեց, որ պարսից թագաւորական գահը բուն Պարսկաստանում լինի։ Դրա համար էլ նա, Պասարգադից ոչ հեռու, մի շատ առողջարար ու արգաւանդ տեղում իր համար մի նոր պալատ կառուցել տւեց։ Սկզբում այդ նոր թագաւորական պալատի շինած տեղում ուրիշ ոչ մի բնակութիւն չը կար, բայց յետոյ պալատի շուրջը բազմաթիւ տներ ու բնակութիւններ կառուցելով, մի ընդարձակ ու մեծ քաղաք գոյացաւ։ Թէ ինչպէս էր այդ քաղաքը կոչւում այն ժամանակներում, յայտնի չէ, միայն վերջը յոյները նրան «Պերսեպօլիս» էին անւանում, որ նշանակում է «Պարսից քաղաք»։



Պերսեպօլիսի պալատի սիւներից

Պերսեպօլիսի արքայական պալատը վերին ասիճանի հոյակապ էր։ Նախկին չափազանց պարզ, համեստ կեանքի վարժւած պարսից թագաւորներն ու ազնւականները, հարուստ և փարթամ Բաբելոնին ու միւս մայրաքաղաքներին տիրելուց յետոյ, սովորել էին վերին աստիճանի շռայլ ու ճոխ կեանք վարել։ Դրա համար էլ

Դարէհը ուզեցել էր, որ պարսից թագաւորական պալատն իր գեղեցկութեամբ ու շքեղութեամբ գերազանցէ թէ Շուշի, թէ Բաբելոնի և թէ Եկբատանի պալատներին։ Այդ



Բեհիստանի արձանագրութիւնը

հոյակապ պալատից այժմ մի քանի աւերակներ են մնում, որոնցից սակայն դժուար չէ գաղափար կազմել նրա վաղեմի գեղեցկութեան ու շքեղութեան մասին։

նշանաւոր են մանաւանդ նրա մարմարեայ հսկայական ու քանդակագործ սանդուղքներն ու սիւները։

Բացի շռայլ ու ճոխ կեանք վարելու ձգտումներից, պարսիկները ուրիշ շատ լաւ ու վատ բաներ էլ սովորեցին իրանց նուաճած ազգերից։ Այսպէս՝ սովորեցին նրանք արհեստներով ու վաճառականութեամբ պարապել, զանազան անոտիապաշտութիւնների հաւատալ, գուշակութիւններ անել և գիր գրել։ Գրում էին բևեռագրերով, բայց պարսից լեզուով։

Բաբելական ու ասորական թագաւորների օրինակին հետևելով, պարսից թագաւորներն էլ սովորութիւն ունէին իրանց կատարած գործերն արձանագրել տալ հսկայական ժայռերի վրայ։ Այդ արձանագրութիւններից նշանաւոր է Դարէհի թողած մի շատ ընդարձակ արձանագրութիւնը, որ յայտնի է «Բեհիստանի» կամ «Բիսուտունի» արձանագրութիւն անունով։

Դա մի հսկայական ժայռ է, Համադանից բաղդատ տանող ճանապարհի վրայ, Քիրմանշահի մօտերքում։ Ժայռի մի երեսը, գետնից մօտ 300 ոտնաչափ բարձրութեան վրայ, յղկած և վրան մի ամբողջ նկար է փորագրած։ Իսկ նկարի շուրջը երեք՝ պարսից, բաբելական և էլամական՝ լեզուներով Աքեմենեան տոհմի և Պարսկաստանի համառօտ պատմութիւնն է գրած։

ԴԱՐԷՀԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պարսից տիրապետութեան տակ եղած բոլոր երկիրներում խաղաղութիւն, կարգ ու կանոն հաստատելուց յետոյ, Դարէհը մեծ զօրք հաւաքեց և սկիւթացիների դէմ պատերազմելու գնաց։ Սկիւթացիք այդ ժամանակ Սև

ծովի հիւսիսային ու արևմտեան ափերում էին ապրում, Իսաեր (Դանուբ) և Դոն գետերի միջև: Որովհետև Սև ծովի հարաւային և արևելեան ափերն ամբողջապէս պարսից տիրապետութեան տակ էին գտնւում, ուստի սկիւթացիների երկիրը գրաւելով, Դարէհը մտածում էր ամբողջ Սև ծովին տիրանալ և նրան պարսկական մի լիճ դարձնել:

Փոքրասիական յոյների նաւերից մի մեծ կամուրջ շինել տալով, Դարէհն անցաւ զօրքերով Բոսֆորը և դէպի Իսաեր գնաց: Այդ գետի միւս կողմում սկիւթացիների երկիրն էր սկսւում:



Սկիւթացոց գերեզմաններում գտնւած ամաններ

Բայց սկիւթացիների երկիրը նւաճելը այնչափ էլ հեշտ բան չէր, որովհետև նրանք ոչ քաղաքներ, ոչ գիւղեր և ոչ էլ բերդեր ունէին, որպէսզի դրանց գրաւումով երկիրն էլ նւաճւած լինէր: Սկիւթացիք նոյնիսկ տներ էլ չունէին. իբրև թափառական ժողովուրդ, նրանք բոլոր ժամանակ իրանց ընտանիքով ու անասուններով տեղից տեղ էին շրջում: Սկիւթացու միակ բնակարանը թաղիքե

վրանն էր, որ քաշելիս քանդում, այլի վրայ էին բարձում, այնտեղ տեղաւորելով նոյնպէս և կանանց ու երեխաներին: Իսկ տղամարդիկ շարունակ ձիու վրայ էին նստում: Ձին սկիւթացիների ամենայարգի անասունն էր. ձիու մսովն ու կաթովն էին նրանք կերակրւում:


Սկիւթացիք առհասարակ շատ արիւնարբու էին. նրանք իրանց սպանած թշնամու արիւնը խմում, իսկ գանգն էլ գինու բաժակ էին շինում:

Երբ պարսից բանակը Իսաեր գետն անցաւ, սկիւթացիք իսկի չը փորձեցին էլ նրա առաջը կտրել: Ընդհակառակը՝ նրանք իրանց կանանց ու երեխաներին ուղարկեցին սահմանից հեռու՝ ապահով տեղ, իսկ իրանք, մի քանի զօրամասերի բաժանւելով, սկսեցին կամաց-կամաց յետ նահանջել: Այդպիսով նրանք կամենում էին թշնամուն գրաւել դէպի երկրի ներսերն ու, յետևից ճանապարհը կտրելով, մի լաւ ջարդ տալ:

Դարէհը սկզբում սկիւթացիների այդ խորամանկութիւնը չը հասկանալով, բաւականին հեռացաւ սահմանից: Բայց վերջը, երբ զգաց իր սխալն ու շտապեց յետ դառնալ, արդէն ուշ էր. սկիւթացիք յարձակողական դիրք բռնեցին և մեծ ճնաս հասցրին նրա բանակին: Ահագին դժւարութեամբ կարողացաւ Դարէհը իր զօրքի մնացորդները Փոքր-Ասիա հասցնել:

Դարէհի այդ անյաջողութիւնը սաստիկ խրախուսեց Փոքր-Ասիայի ծովափնեայ յոյներին, և նրանք, շատ ժամանակ չանցած, ապստամբութեան դրօշ բարձրացրին Դարէհի դէմ: Ազատագրական այդ շարժումի կենտրոնն ու ղեկավարը Մելիտ քաղաքն էր, որն էլ հէնց ամենից շատ տուժողը եղաւ. պարսիկներն այրեցին այդ գեղեցիկ քաղաքը և բնակիչներին էլ գերի վաճեցին, հարկադրելով նրանց Պարսից ծոցի մօտ ապրել: Բայց դրանով չբաւականացաւ Դարէհը. սկիւթական երկիր-

ներում իր կրած անյաջողութիւնների վրէժը լուծելու և պարսից զօրութեան փառքը վերականգնելու առիթ էր ջորոնում նա։



Դարէհի արձանը. գահի վրայ նստած Դարէհին ձեռքերի վրայ տանում են նաճուած ազգերը։

Հէնց այդ նպատակով էլ նա Յունաստանի վրայ արշաւեց, պատճառ բռնելով այն, որ եւրոպական յոյները մի քանի հատ նաւեր էին ուղարկել, փոքր-ասիական իրանց ազգակիցներին օգնելու համար։ Դարէհի այդ արշաւանքն էլ սակայն անյաջողութեամբ վերջացաւ։ Իսկ այդ արշաւանքից շատ քիչ ժամանակ յետոյ նա մեռաւ, թողնելով մի շատ խելօք և արդարադատ թագաւորի անուն։ Նրան թաղեցին իր հիմնած Պերսեպոլիսում։





ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Յունաստանը գտնւում է Բալկանեան թերակղզու հարաւային մասում։ Դա մի վերին աստիճանի լեռնոտ երկիր է. նրա հիւսիսային կողմում, հորիզոնական ուղղութեամբ, մի շարք հսկայական լեռներ են բարձրանում, որոնք բոլորովին կտրում են Յունաստանը եւրոպական ցամաքից։ Հնումը, երբ դեռ կարգին ճանապարհներ չը կային, այդ երկրի բնակիչներն իրանց բոլորովին ապահով էին զգում ցամաքից յարձակւող թշնամիներից։ Զանազան ուղղութեամբ տարածւող լեռնաշղթաներն Յունաստանը բազմաթիւ, միմեանցից անջատւած մանր գաւառների էին բաժանում, որոնց իրար հետ միացնողը նեղ կիրճերն ու լեռնային շաւիղներն էին։ Մի քանի հարեան մանր գաւառները միասին մէկ աւելի մեծ շրջան կամ նահանգ էին կազմում։

Յունաստանը գլխաւորապէս երեք մասերի էր բաժանւում. Հիւսիսային, Միջին և Հարաւային։

Հիւսիսային Յունաստանը տարածւում էր Բալկանեան լեռներից մինչև Թերմոպիլեան կիրճը։ Այս մասն իր մէջ երկու շրջաններ էր պարունակում՝ Պինդոս լեռնաշղթայի արևմտեան կողմում՝ Եպիրոսը, իսկ արևելեան կողմում՝ Թեսալիան, որտեղ նշանաւոր էր Ոլիմպիոս լեռը։

Թեսալիան Թերմոպիլէի կիրճի միջոցով միանում էր Միջին Յունաստանի հետ, որտեղ մի քանի շրջաններ կային։ Դրանցից նշանաւոր էին Ատտիկան, Բէօտիան և Փոկիդան։ Միջին Յունաստանի լեռներից նշանաւոր էր Պառնասը։ Հարաւային Յունաստանը Մորէա թերակղզին էր կազմում, որ կոչւում էր Պելոպոնես։ Սա միջին Յունաստանի հետ միանում էր Կորնթոսի պարանոցի (այժմ նեղուց) միջոցով։ Պելեպոնեսը 6 շրջաններից էր բաղկացած. մէջտեղում գտնւում էր Արկադիան, իսկ շուրջը միւս շրջանները. հիւսիս արևմտեան կողմում Էլիդան, հիւսիսում Աքէան, հիւսիս-արևելքում Արգոլիս, Լակոնիան և Մեսսենիան հարաւում։

Յունաստանի կլիման, չը նայելով երկրի խիստ փոքրը տարածութեանը, շատ բազմազան է, ծովի եզերքում ու ցածր տեղերում չափազանց մեղմ է, իսկ լեռնային մասերում ցուրտ։ Այդ երկրում թէև մեծ յաջողութեամբ աճում են՝ հացահատիկներ, խաղող, ձիթապտուղ, նարինջ և ամեն տեսակ պտղատու ծառեր, բայց և այնպէս չէ կարելի ասել, թէ Յունաստանը բերքերով առատ երկիր է։ Մեծ գետերից զուրկ լինելով, այնտեղ միշտ ջրի պակասութիւն է զգացւում։ Հնումը Յունաստանի բնակիչները շատ աւելի խաչնարածութեամբ էին պարապում և պահում էին գլխաւորապէս մանր տեսակի խաշներ — այծ և ոչխար։

Խաշնարածութիւնն ու երկրագործութիւնը անկա-

բող լինելով հետզհետէ աճող ազգաբնակութեան կարիքներին բաւականութիւն տալ, յոյները շատ հին ժամանակից ստիպուած էին, փիւնիկեցիների նման, ծովի վրայ ապրուստի միջոցներ փնտռել։ Երկրի աշխարհագրական դիրքն էլ չափազանց նպաստում էր այդ բանին. երեք կողմից շրջապատուած լինելով ծովով, նրա ափերը բազմաթիւ մեծ ու փոքր ծոցեր ու բնական նաւահանգիստներ են ներկայացնում։ Այդ կողմից նամանաւանդ մեծ յարմարութիւններ ունեն արևելեան ափերը։ Այդ կողմում եգէյեան ծովի բազմաթիւ կղզիներն էլ չափազանց հեշտացնում էին նաւագնացութիւնը. դրանց մօտով, իբրև կամուրջի վրայով, շատ հեշտ էր Փոքր-Ասիա գնալը։ Եւ հէնց ամենակուլտուրական երկիրներն էլ հին ժամանակներում այդտեղ էին գտնւում։ Այդ կողմի ամենամեծ կղզիներն են՝ Եւբէա, Թասոս, Քիոս, Սամոս, Րոդոս և Լեսբոս։ Իսկ հարաւում գտնւում է Կրետէն և արևմուտքում՝ Կորկիւրան (այժմ Կորֆու)։

Նաւարկութեան համար անհրաժեշտ նիւթն էլ չէր պակասում Յունաստանում. նրա լեռները ծածկւած էին անտառներով, որոնք շատ լաւ տեսակի փայտ էին մատակարարում։

Յոյները արիական ցեղի մէկ ճիւղին էին պատկանում, բայց թէ երբ և ինչ ճանապարհով էին եկել Ասիայից ու Յունաստանում հաստատւել, յայտնի չէ։ Ճիշտ յայտնի չէ նոյնպէս, թէ ինչ ժողովուրդ էր բնակւում Յունաստանում արիացիների գալուց առաջ։ Այդ ժողովուրդից մնացել են մի քանի անբացատրելի աշխարհագրական անուններ միայն։

Յոյները իրանց հէլլէն էին անւանում և իրանց հայրենիքն էլ՝ Հէլլադա։ Բոլոր հէլլէնները խօսում էին մէկ լեզուով, որը սակայն մի քանի բարբառների էր բաժանւած։ Այդ բարբառների համաձայն, յոյները բաժանւում

էին չորս մեծ ցեղերի՝ յոնիացիներ, դորիացիներ, աբէացիներ և էօլիացիներ։ Յունաստանի քաղաքակրթութիւնը ստեղծողն ու պատմութեան մէջ դեր կատարողը գլխաւորապէս եղել են յոնիացիները ու դորիացիները։ Այս վերջիններն ապրում էին Պելոպոնեսում, իսկ յոնիացիները՝ Ատտիկայում։

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուն Յունաստանը չափազանց փոքր էր հետզհետէ աճող ազգաբնակութեանը իր մէջ տեղաւորելու և կերակրելու համար։ Այդ պատճառով էլ յոյները ստիպւած էին շարունակ խմբերով թողնել իրանց հայրենիքն ու օտար երկիրներ գաղթել բազդ որոնելու։ Այդպիսով ժամանակի ընթացքում բազմաթիւ յունական գաղութներ էին հիմնուել։ Սկզբում յոյները դէպի արևելք էին գաղթում։ Նրանք բռնեցին Արշիպելագոսի բոլոր կղզիներն ու Փոքր-Ասիայի արևմտեան եզերքները։ Յետոյ, ուղևորւելով դէպի հիւսիս արևելք, նրանք գրաւեցին Հէլեսպոնտի (այժմ Դարդանել) ու Բոսֆորի ասիական ափերը, Սև ծովի հարաւային ու հիւսիսային ափերը, և հասան մինչև Կոլխիդա (Կովկաս)։ Վերջը այդ գաղթականները ըսկսեցին դէպի հարաւ և արևմուտք գնալ։ Կրետէ, Րոդոս Սիցիլիա և այլ կղզիները գրաւելուց յետոյ, նրանք ատրածւեցին Ափրիկայի հիւսիսային ափերում։ Պելենինեան թերակղզու հարաւային մասում, Ֆրանսիայի հարաւում և Սպանիայի արևմտեան ափերում։

Յունական գաղութներն սկզբում իրանց մայր հայրենիքի գերիշխանութեան տակ էին գտնւում, բայց յետոյ հետզհետէ ինքնուրոյնութիւն էին ձեռք բերում ու, մայր հայրենիքի օրինակով, բոլորովին անկախ քաղաքական կազմ հաստատում։ Բուն Յունաստանի հետ գաղութ-

ները պահպանում էին միմիայն առևտրական յարաբերութիւնները և կրօնական կապ՝ օրինակ, ուխտագնացութեան էին գնում և այլն։

Գաղութները հաստատելը չափազանց մեծ նշանակութիւն ունէր Յունաստանի համար։ Նախ երկիրն ազատում էր աղքատ ու դժգոհ տարրերից և ապա, նրանց միջոցով Յունաստանը հաղորդակցութեան ու շփման մէջ մտնելով՝ այն ժամանակ կուլտուրապէս խիստ բարձր համարուող՝ եգիպտոսի և փոքր-ասիական երկիրների հետ, ինքն էլ վաղ զարգացաւ ու բարգաւաճեց։ Շատ ու շատ արհեստներ յոյները արևելեան այդ ազգերից սովորեցին, որ յետոյ, սակայն, նրանցից շատ աւելի զարգացրին ու կատարելագործեցին։ Ուրիշ շատ բաներ էլ նրանք այդ ազգերից սովորեցին ու փոխ առան։ Այսպէս օրինակ կշիռն ու միւս առևտրական չափերը նրանք բաբելացիներից էին փոխ առել, դրամ կտրելը՝ լիդիացիներից, իսկ այբ ու բէնը՝ փիւնիկեցիներից։ Գաղութների շնորհով էր նոյնպէս, որ յոյները կարողացան այս վերջիններիս ձեռքից ծովային ամբողջ առևտուրը խլել։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՄԸ

Յոյները էլ, միւս ժողովուրդների նման, սկզբում մի մեանցից անջատ տոհմերի էին բաժանւած, որոնցից ամեն մէկը մի առանձին փոքրիկ պետութիւն էր ներկայացնում։ Իւրաքանչիւր տոհմ մի քանի ընտանիքներից էր կազմւած, որոնց անդամները համարեա թէ միշտ ազգակցական կապերով էին կապւած միմեանց հետ։ Տոհմի նահապետը նրա թէ զինուորական առաջնորդն էր, թէ դատաւորը և թէ քրմապետը։ Շատ կարևոր դէպքերում նա խորհրդակցութեան էր հրաւիրում տոհմի պատկանող առանձին ընտանիքների հայրերին կամ աւագներին, որոնցից ամեն մէկն իր ընտանիքի վերաբերեալ դատաւոր ու քուրմ էր հանդիսանում։

Անդամների թիւն աճելով, տոհմը մի քանի ճիւղերի էր բաժանւում, որոնցից ամեն մէկը մի առանձին համայնք էր կազմում։ Այդպիսի համայնքները կոչւում էին *փիլաները* և նոյն կազմակերպութիւնն ունէին, ինչպէս և տոհմերը։ Սկզբում փիլան սերտ կապ էր պահպանում այն տոհմի հետ, որի մի ճիւղն էր ինքը։ Սակայն, ժամանակի ընթացքում այդ կապը թուլանում էր և փիլան բոլորովին անկախ էր դառնում։ Այդպիսի փիլաներ էին նաև յունական գաղութները։ Փիլաներն ու տոհմերը նորից միմեանց հետ կապւում և միանում էին միմիայն արտաքին թշնամիների հետ ունեցած պատերազմների ժամանակ։ Եւ որովհետև պատերազմներն գնալով աւելի և աւելի յաճախ էին կրկնւում, ուստի այդպիսի *միութիւնները* էլ հետզհետէ աւելի տևողական էին դառնում։ Հէնց այդ եղանակով էին կազմւել յունական պետութիւնները։

Լեռնաշղթաներով միմեանցից բաժանւած Յունաստանի ամեն մի մասում մի փոքրիկ պետութիւն էր կազմւել։ Պետութեան կազմակերպութիւնը նոյնն էր, ինչ որ տոհմերինը. պատերազմական ղեկավարը ամբողջ պետութեան բարձրագոյն դատաւորն ու քրմապետն էր։ Նա կոչւում էր *Բազիլեւս*, որ նշանակում է թագաւոր։ Բազիլևսը սակայն, ասիական թագաւորների նման, ընդարձակ իրաւունքներ չունէր։ Նա պարտաւոր էր բոլոր կարևոր դէպքերում տոհմապետների կամ ծերերի հետ խորհրդակցել ու նրանց որոշումների համաձայն վարւել։ Երբեմն էլ նոյնիսկ հարկ էր տեսնւում ամբողջ ժողովրդի կարծիքն իմանալ այս կամ այն չափազանց կարևոր խնդրի մասին։ Դրա համար ժողով էին հրաւիրում պե-

տութեան այն բոլոր տղամարդ անդամներին, որոնք ընդունակ էին զէնք կրելու։ Այդ ժողովները սակայն ոչ մի վճռական դեր չունէին. նրանց յայտնւում էին միայն ծերերի ու Բազիլևսի կայացրած որոշումը և լսում, թէ ինչ կարծիք ունի արդեօք ժողովուրդն այդ մասին։

Յունական այդ մանր պետութիւնները միշտ թշնամաբար էին վերաբերւում միմեանց և յաճախ պատերազմում էին իրարու դէմ։ Երբեմն էլ մի քանի հարեւան պետութիւնները իրարու հետ միանալով, մի ընդհանուր դաշնակցութիւն էին կազմում, թէ արտաքին թշնամիներին լաւ դիմադրելու և թէ առևտրական սերտ յարաբերութիւնները պահպանելու համար։ Այդ դէպքում դաշնակից պետութիւններից մէկը ընդհանուր դաշնակցութեան կենտրոնն էր դառնում։ Այդպիսի կենտրոններից էին, օրինակ՝ Սպարտան Պելոպոնեսում և Աթէնքը Աттիկայում։



ՅՈՒՆԱԿԱՆ ԿՐՕՆԸ

ԱՍՏՒԱԾՆԵՐԸ


Միմեանցից անջատ ու իրարու թշնամի մանր պետութիւնների, տոհմերի ու ֆիլների մէջև եղած միակ կապը կրօնն էր, որ ընդհանուր էր բոլոր յոյների համար։ Ինչպէս բոլոր հին ժողովուրդները, յոյներն էլ բնապաշտներ էին։

Նրանց կարծիքով սկզբում եղել է Քաօսը, այսինքն՝ բնութեան մէջ եղած տարրերի անկանոն կուխը միմեանց դէմ։ Այդ Քաօսից յետոյ դուրս են եկել՝ սիրուն Հէան (երկիրը), մռայլ Տարտարոսը (տարերկրեայ աշխարհը) և ամեն ինչ միացնող Էրոտը (սէրը)։ Երկրից ծնւել է Ուրանը *) (երկինքը)։ Միաժամանակ նրա (երկրի) գրկից դուրս են եկել Քրօնոսը (ժամանակը) զօրաւոր Տիտանները, Կիկլոպները (մէկ աչքանի հսկայ) և հարիւր ձեռք ունեցող հսկաները։ Ուրանը, վախենալով թէ կարող է ինքը իշխանութիւնից զրկւել, իր հարազատ զաւակներին Տարտարոսն է նետել։ Բայց Հէան իրան օգնութեան է կանչել Քրօնոսին, որն էլ սկսել է Տիտանների հետ միասին աշխարհը կառավարել։ Քրօնոսը նոյնպէս վախենալով, թէ կարող է իշխանութիւնից զրկւել, իր զաւակներին կուլ էր տալիս։ Բայց նրա կին Ռէան, որ նոյնպէս երկիր է նշանակում, Զևս զաւակին ծնելով, թագցնում է հօրից։ Մեղիտայի (խելքի) օգնութեամբ Զևսը ստիպում է իր ծնողին ետ ցացած զաւակներին էլ դուրս թողնել, որոնց հետ միասին նա կռիւ է սկսում Տիտանների դէմ։ Կիկլոպները, հսկաները և մինչև իսկ Տիտաններից մէկը՝ Պրոմեթեւսը Զևսի կողմն են բռնում և սա յաղթում է։ Տիտանները Տարտարոսն են իջնում և այնուհետև կարգ ու կանոնի աստւածներն են այլևս կառավարում թէ երկնքում, թէ երկրի վրայ, թէ երկրի տակ և թէ ջրերի մէջ։

---

*) Սա արիական Վարունա բառն է աղաւաղած։

Շատ հին ժամանակներում յոյներն իրանց աստուածներին կենդանիների կերպարանքով էին ներկայացնում։ Բայց աւելի ուշ նրանք ոչ միայն մարդու կերպարանքով էին պատկերացնում աստուածներին, այլ և այն կարծիքի էին, թէ աստուածները նոյնպիսի կեանք են վարում, ինչպէս և մարդիկ երկրի վրայ։ Այսպէս՝ աստուածներն էլ մարդկանց նման ուտում, խմում, զբաղանում էին և միմեանց հետ ազգակցական կապերով էին կապած, ունէին կին, զաւակներ, քոյրեր, եղբայրներ և այլն։ Այդ դեռ բաւական չէ. յոյների կարծիքով, աստուածներն էլ իրանց տոհմերի կամ ֆիլների նման, առանձին խմբակցութիւնների էին բաժանուած, որոնցից ամեն մէկն իր գլխաւորն ունէր։ Այդ գլխաւոր աստուածը, տոհմապետի նման, ոչ մի գործ ինքնագլուխ չէր որոշում, այլ միշտ խորհրդակցում էր միւս աստուածների հետ։




* Olիմպիոս լեռը*

Ոչ միայն յունական ամեն մի տոհմ, այլ և ամեն մի ընտանիք իր առանձին աստուածներն ունէր։ Ամուսնացող աղջիկը պարտաւոր էր հրաժարուել իր հօրենական աստուածներից և ամուսնու աստուածներին երկրպագել։

Ժամանակի ընթացքում, երբ անջատ տոհմերն ու մանր պետութիւնները, հետզհետէ միանալով, աւելի ու աւելի մեծ դաշնակցութիւններ կազմեցին Յունաստանում, աստուածներից մի քանիսը ընդհանուր պաշտամունքի առարկայ դարձան։

Յոյների կարծիքով, աստուածների մշտական բնակութեան տեղը Olիմպիոս լեռան գագաթն էր՝ Թեսալիայում, որտեղից նրանք շարունակ հսկում էին մարդկանց գործերի վրայ։ Հէնց դրա համար էլ աստուածներին յոյները *olիմպիականներ* էին անւանում։ Olիմպիականների գլխաւորը Զեւսն էր, որը երկնքի ու երկրի կառավարողն էր համարւում (ոչ ստեղծող)։ Զևսի կինը կոչւում էր Հերա, որ երկնքի թագուհին և ընտանեկան բարքերը պահպանողն էր։



Զեւս

Զևսը երկու եղբայր և մի քոյր ունէր. Պոսէյդոն, Հադէս և Դեմետրա։ Առաջինը ծովի աստուածն էր և իր կնոջ՝ Ամֆիտրիտայի հետ ջրերի խորքումն էր գտնւում։ Երկրորդն իր կնոջ Պերսեֆոնիայի հետ ստորերկրեայ աշխարհումն էր թագաւորում։ Իսկ քոյր Դեմետրան երկրի բարգաւաճութեան ու հողագործութեան աստուածուհին էր։



Հերա

Զևսը մի քանի զաւակներ ունէր։ Դրանցից ամենանշանաւորներն էին. Աթենասը, որ սկզբում պատերազմի,



Աթենաս

իսկ յետոյ իմաստութեան ու գիտութեան աստուածուհին էր համարւում, Ապոլլոնը՝ սկզբում արեգակի, իսկ յետոյ գեղարւեստի ու երաժշտութեան աստուածն էր։ Ա-

պոլլոնը շատ բարի բնաւորութեան տէր էր. նա բարկացած աստուածներին միշտ հաշտեցնում էր յանցաւոր մարդկանց հետ։ Միևնոյն ժամանակ Ապոլլոնը երաժշտութեան հովանաւորողն էր և ինքն էլ նւագում էր քնարի վրայ աստուածների ներկայութեան։ Նա էր ղեկավարում մուսաների խումբը, ներշնչում բանաստեղծներին և բարի խորհուրդներ տալիս հասարակ մահկանացուներին՝ քուրմերի ու գուշակողների միջոցով։



Ապոլլոն

Զևսի միւս զաւակներն էին՝ Արտեմիդը, որ լուսնի և որսորդութեան աստուածուհին էր, և Հեփեստը՝ կրակի աստուածը։ Սա հովանաւորում էր դարբնութիւնն ու այն բոլոր արհեստները, ուր կրակն առաջնակարգ դեր էր խաղում։ Հեփեստի կինը՝ Աֆրոդիտան, որն ըստ աւանդութեան ծնւել էր ծովային փրփուրից, գեղեցկութեան աստուածուհին էր համարւում։

Շատ յարգի էր նոյնպէս և Բաքոսը կամ Դիոնիսը՝ խաղողի և գինեգործութեան աստուածը, որին միշտ ներկայացնում էին հարբած մարդու դիրքով։ Սրա տօնը

կատարում էր աշնանը՝ այգեկութից յետոյ, և այդ ժամանակ մարդիկ մեծ քեֆեր և ուրախութիւններ էին անում։

Աստուածներն իրանց յատուկ սուրհանդակներն ունէին, որոնք նրանց որոշումներն ու կամքը գալիս յայտնում էին մարդկանց։ Զևսի պատգամաբեր սուրհանդակը կոչւում էր Հերմէս, որը միևնոյն ժամանակ առևտրի աստուածն էր համարւում։ Իսկ Հերայի պատգամաբերը Իրիդան էր (ծիածանը)։



Արտեմիդ


Բացի olիմպիական աստուածներից յոյները բազմաթիւ երկրորդական աստուածներ էլ ունէին, որոնք երկրի վրայ էին ապրում։ Այսպէս՝ գետերի ու աղբիւրների մէջ ապրում էին յաւերժահարսները, անտառներում՝ այծոտն սատիրանները և այլն։

ՏԱՃԱՐՆԵՐ

Շատ հնում յոյները, իբրև արիացիներ, ոչ ձեռակերտ կուռքեր ունէին և ոչ էլ տաճարներ։ Նրանք այնպէս էին հաւատում, թէ աստուածներին աղօթել ու զոհ մատուցանել կարելի է ամեն տեղ, միայն թէ պէտք էր ընտրել այնպիսի վայրեր, ուր աստուածները յաճախ են

հաւաքւում։ Այդպիսի տեղեր համարւում էին սարերի ու բլուրների գագաթները, ծովեզերքներն ու անտառները։ Կուռքերի տեղ էլ ծառայում էին մի որևէ ժայռ, ծառ, աղբիւր և այլն։

Տաճարներ ու ձեռակերտ կուռքեր յոյներն սկսեցին շինել VII-րդ դարից (Ք. ծ. ա.) սկսած, այսինքն՝ եգիպտացիների, փիւնիկեցիների և միւս Փոքր-Ասիական ազգերի հետ բաւական երկար ժամանակ շփւելուց յետոյ։ Բայց յոյների շինած կուռքերն ու տաճարներն անհամեմատ աւելի գեղեցիկ, նուրբ ու ճաշակաւոր էին։



Զևսի տաճարը

Յոյները ոչ միայն չէին աշխատում իրանց կուռքերին զանազան հրէշների կերպարանք տալ, ինչպէս այդ անում էին սեմիտական ազգերը, այլ ընդհակառակը՝ աշխատում էին ամենագեղեցիկ մարդու կամ կնոջ կերպարանքով շինել։ Այդ հանգամանքի շնորհով արձանա-

գործունեությունը Յունաստանում հետզհետե սաստիկ զարգացաւ։ Մինչև այսօր էլ յունական հին արձանները հիացմունք են պատճառում նայողին։ Արձանները շինուում էին փայտից, մետաղներից և մանաւանդ մարմարիոնից, որով շատ հարուստ է Յունաստանը։

Արձաններից ոչ պակաս հիացմունք են պատճառում յունական տաճարները. դրանք այնպիսի հսկայական մեծութիւն չունէին, ինչպէս եգիպտական և ասիրօ-բաբելական տաճարները, բայց փայլում էին իրանց նուրբ ու ճաշակաւոր գեղեցկութեամբ։ Յունական տաճարներին մասնաւոր գեղեցկութիւն էին տալիս նրանց շրջապատող սիւները։

Յունական տաճարի ամենագլխաւոր մասն այն էր, ուր աստուծոյ արձանն էր դրուում։ Իսկ զոհաբերութեան սեղանը յաճախ շինուած էր լինում տաճարից դուրս։ Բացի մորթուղ զոհից, յոյները շատ թանկարժէք նւէրներ էլ էին բերում տաճարների համար, ինչպէս օրինակ՝ թանկագին անօթներ, արձաններ, գորգեր և այլն։ Դրանց մեծ մասը տաճարում ծառայող քուրմերի սեփականութիւնն էր դառնում։

ՊԱՏԳԱՄԱԽՕՍՆԵՐԸ

Յունական տաճարներից ամենահարուստն ու հռչակաւորը Դելփիս քաղաքինն էր, Պառնաս լեռան ստորոտում։ Այդ տաճարը մեծ հռչակ էր ստացել այնտեղ ապրող յայտնի պատգամախօսի պատճառով, որը շատ յաջողակ գուշակութիւններ էր անում։

Յոյներն էլ նախագուշակութիւնների սաստիկ հաւատացող էին։ Նրանք գուշակողներին պատգամախօսներ էին անւանում։ Յունաստանում նշանաւոր մի քանի պատգամախօսներ կային, որոնցից ամենահռչակաւորը

Դելփիսում ապրողն էր։ Դելփիսը մի շատ լեռնոտ տեղ էր։ Այդտեղ մի ժայռի ճեղքւածքից շշմեցնող գոլորշի էր դուրս գալիս։ Տգէտ ժողովուրդը, անկարող լինելով բացատրել այդ բնական երևոյթը, կարծում էր, թէ աստւածներն այդ շինել են պատգամախօսին ներշնչուելու անելու նպատակով։ Ժայռի ճեղքւածից դուրս եկող գոլորշու ազդեցութեանն էր ենթարկում իրան պատգամախօս քրմուհին, որ կոչւում էր պիւթիա,—և երբ շշմում ուշաթափւում էր, սկսում էր անկապ խօսքեր արտասանել։ Նրա մօտ կանգնած քուրմերն այդ անկապ խօսքերը գրում էին և ապա՝ պատգամախօսին դիմողի հարցերի համապատասխան՝ բացատրում ու լուսաբանութիւնները տալիս։

Պատասխանները մեծ մասամբ լինում էին մութ, երկդիմի, բայց յաճախ լինում էին նոյնպէս շատ պարզ ու որոշ. այդ կախւած էր այն հանգամանքից, թէ ով և ինչպիսի հարցի մասին էր գուշակութիւն խնդրում։ Դելփիսի պատգամախօսին ոչ միայն անհատները, այլ և յունական բոլոր պետութիւնները էլ էին դիմում. սրանք ոչ մի լուրջ ձեռնարկութիւն չէին սկսում, առանց Դելփիսի պատգամախօսի կարծիքն իմանալու. այդպիսով քուրմերը տեղեակ լինելով ամբողջ Յունաստանում տեղի ունեցող անցքերին, կարողանում էին առաւել կամ նւազ ճիշտ գուշակութիւններ անել։ Դելփիսի պատգամախօսի համբաւը տարածւած էր նաև Յունաստանից դուրս, որտեղից նոյնպէս բազմաթիւ հարուստ ընծաներ էին բերում այդ սրբավայրի համար։ Լիդիայի թագաւոր Կրեսոսն էլ այդ պատգամախօսին դիմեց նախ քան Կիւրոսի դէմ պատերազմի դուրս գալը։

Շատ հին ժամանակներում Դելփիսում ոչ մի տաճար չը կար. պատգամախօսութիւնը կատարւում էր բացօդեայ։ Բայց աւելի ուշ, երբ տաճարներ շինելու սովորութիւնը Յունաստան էլ մտաւ, Դելփիսում մի շատ շքեղ տաճար էին շինել Ապոլլոն աստծուն նւիրւած։ Տաճարը երեք մասից էր բաղկացած։ Ամենաներսի մասում

գտնուում էր Ապոլոնի ոսկէ արձանն և այն ճեղքւածքը, որից գոլորշի էր քարձրանում։ Ճեղքւածքի վրայ մի եռոտանի էր դրւած, ուր և նստում էր պիւթիան, գոլորշիի ազդեցութեանը ենթարկւելու համար։ Պատգամախօսին դիմողները իրաւունք չունէին տաճարի այդ մասը մտնելու. այնտեղ մտնում էին միայն պիւթիան և քուրմերը, որոնց թիւը բաւականին մեծ էր։

Ո Լ Ի Մ Պ Ի Ա Կ Ա Ն Խ Ա Ղ Ե Ր Ը

Իւրաքանչիւր տաճար կամ սրբավայր Յունաստանում իր տօնը, կամ յատուկ օրն ունէր, երբ ահագին բազմութիւն էր հաւաքւում, կրօնական արարողութիւններ ու զոհաբերութիւններ կատարելու համար։ Եւ որչափ անհամբերութեամբ էր սպասւում այդ տօնը, որչափ էլ մեծ էր ուխտաւորների թիւը, որոնք գալիս էին հեռաւոր տեղերից, այնչափ էլ մեծ էր տաճարը, որի մօտ կատարւում էին խաղերը։ Այդ խաղերից շատ նշանաւոր էին՝ պիւթիականը Դելֆիսում, Նեմէականը Արգոլիդայում, իսթմականը Կորնթոսի պարանոցի վրայ և ոլիմպիականը, որ ամենից հռչակաւորն էր, Ոլիմպիա քաղաքում՝ Զևսի տաճարի մօտ։



Քմբիշներ

Ոլիմպիական խաղերը տեղի էին ունենում չորս տարին մի անգամ և շատ մեծ տօն էին համարւում ամբողջ Յունաստանի համար։



Մենամարտութիւն

Այդ ժամանակ բոլոր ներքին պատերազմները ու կռիւները ընդհատւում էին, որպէսզի հնարաւորութիւն տրւի երկրի ամեն ծայրերից ապահովաբար Ոլիմպիա հաւաքւելու։ Խաղերը տևում էին մի քանի օր և բաւականին բազմատեսակ էին. իրարու հետ մրցում էին ըմբիշամարտիկները, լաւ վազել գիտցողները, ձիավարները, սկիւտեղ նետողները, բանաստեղծները, աշուղները և այլն։

Խաղերին մասնակցել կարող էին բոլոր ազատ քաղաքացիները, որոնք արատաւորւած չէին մի որևէ յանցանքով։ Մրցանակը տանողներին նւիրում էին դափնեայ պսակ, որ չափազանց մեծ պարգև էր համարւում Յու-

նաստանում և պատիւ էր բերում ոչ միայն պսակն ստացողին, այլև նրա քաղաքին էլ։

Մէկ ոլիմպիական խաղերից մինչև միւսը տևող չորսամեակը կոչւում էր ոլիմպիադ։ Ժամանակի ընթացքում յոյները սկսեցին իրանց տարեգրութիւնը հաշւել ոլիմպիադներով։ Առաջին ոլիմպիադը համարւում է 776—772 թւականները (Ք. Ծ. ա.)։

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔ

Հանդերձեալ կեանքի մասին յոյները երկար ժամանակ շատ մութ ու անորոշ հասկացողութիւն ունէին։ Սկզբում նրանք հաւատում էին, թէ մեռնողի հոգին ոչ մի տեղ չի գնում, այլ շարունակում է ապրել իր ընտանիքի օջախում։ Հէնց դրա համար էլ ընտանիքի օջախը սուրբ էր համարւում և չը պէտք է երբէք նրա միջի կրակը հանգչէր։ Եթէ մէկը հարկադրւած էր լինում ուրիշ տեղ գաղթելու, հայրենական օջախից կրակ էր տանում հետը, որպէսզի նրանով վառի իր նոր օջախը։



Սկիւտեղ նետող

Աւելի ուշ յոյները այնպէս էին հաւատում, թէ մեռնողի հոգին գնում էր Հադէս աստծու սաորերկրեայ թագաւորութիւնը, որտեղից այլևս վերադարձ չը կար. սաորերկրեայ թագաւորութեան մուտքը պահպանում էր երեք գլխանի ցերբերը շունը, որը ոչ ոքի չէր թողնում յետ դառնալու։ Այնտեղ հոգիները դատւում էին Մինոս դատաւորից և սրա վճիռների համաձայն էլ հատուցումն էին տանում. արդարները գնում էին Ելիսեան դաշտերն ու այնտեղ երջանիկ կեանք վայելում, իսկ մեղաւորները նետւում Տարտարոսը, ուր յաւիտենական տանջանքների էին ենթարկւում։

Յոյները իրանց մեռելներին կամ թաղում կամ այրում էին. մեռած մերձաւորի դիակը չը թաղելը կամ չայրելը մեծ մեղք էր համարւում։

ԱՐԱՄՊԵԼՆԵՐ

Իրանց նախահայրերի ու շատ հեռաւոր անցեալի մասին յոյները բազմաթիւ առասպելներ ունէին։ Այսպէս՝ նրանք պատմում էին, թէ շատ հնումը մարդիկ ապրում էին վայրի գազանների նման և դեռ կրակի հետ էլ ծանօթ չէին։ Այդ ժամանակ երկրում իշխում էին հսկաները։ Դրանցից մէկը, Պրոմեթէոս անունով, խղճալով մարդկանց վրայ, աստւածներից երկնային մի կայծ է գողանում ու տալիս նրանց։ Այդ բանից զայրացած, աստւածները Պրոմեթէոսին շղթայում են Կովկասեան լեռների ժայռերից մէկի վրայ և արծիւը շարունակ գիշատում է նրա կուրծքը։



Հերկուլէս

Պրոմեթէոսի բերած կրակից հպարտացած, մարդիկ ըմբոստանում են աստուածների դէմ և այլևս չեն հնազանդում նրանց դրած կարգերին։ Աստուածներն էլ ջրհեղեղով ջնջում են ամբողջ մարդկային ցեղը։ Ջրհեղեղից ազատւում են միմիայն Պրոմեթէոսի որդին Դեւկալիոնն ու իր կինը՝ Պիրրա, որոնք իրանց փրկութիւնը գտել էին նաւի մէջ։ Ինն օր ջրերի վրայ շրջելուց յետոյ, Դեւկալիոնինաւն իջնում է Պարնաս լեռան գագաթին։ Նաւից դուրս գալով, ազատւածները գոհունակութեան զոհ են մատուցանում աստւածներին և խնդրում են նորից լցնել երկիրը մարդկանցով։ Այդ ժամանակ աստւածները հրամայում են նրանց քարեր նետել իրանց գլխի վրայով։ «Դեւկալիոնի նետած քարերը տղայ էին դառնում, իսկ Պիրրայի նետածները՝ աղջիկ», ասում է առասպելը։ Հէնց այդ քարերից է առաջ եկել մարդկային նոր սերունդը, որ լցրել է աշխարհը։

Պատմում էին նոյնպէս, թէ յոյների նախնիքները սովորական մարդիկ չեն եղել, այլ կիսաստւածներ, որոնք գերմարդկային ոյժ, խելք ու զօրութիւն ունէին։ Դրանք այն աստւածների զաւակներն ու թոռներն էին, որոնք ամուսնացել էին մահկանացու կանանց հետ։ Այդպիսի նախնիքներին յոյները հերոսներ էին անւանում և նրանց մասին բազմաթիւ բանաստեղծական առասպելներ պատմում։

Առասպելական հերոսներից ամենահռչակաւորն ու սիրւածը Հերակլէսն էր, որն աւելի ուշ կոչւեց Հերկուլէս։ Հերկուլէսը Զևսի որդին էր, մի մահկանացու կնոջից ծնւած։ Նա գերմարդկային ոյժի տէր էր։ Դեռ 8 ամսական մանուկ հասակում, նախանձոտ Հերան, կամենալով նրան ոչնչացնել՝ երկու օձ էր բաց թողել նրա մօտ, քնած ժամանակ։ Բայց Հերկուլէսը զարթել էր ու



Պատանի Հերկուլէս

օձերի վզից բռնելով, սպանել էր երկուսին էլ։ Մեծանալով, Հերկուլէսը այնպիսի քաջագործութիւններ էր անել, որպիսին սովորական մարդիկ երբէք չեն կարող անել։ Այսպէս՝ նա սպանել էր հսկայական առիւծին, լինն գլխանի հիդրա օձին, յետոյ աշխարհի ծայրից ոսկէ խնձորներ էր բերել, իսկ ստորերկրեայ աշխարհից էլ երեք գլխանի ցերբերը շանը, որին սակայն նորից իր տեղն էր վերադարձրել։ Այդ կարգի շատ քաջագործութիւններ կատարելուց յետոյ, Հերկուլէսը թունաւորել էր իր սպանած Կենտաւրոսի (կէս մարդ և կէս ձի) հագուստից և յուսահատութիւնից կամեցել էր ինքն իրան այրել խարոյկի վրայ։ Բայց Զևսը նրան կենդանի երկինք էր տարել, և նա անմահացել էր։

Պակաս նշանաւոր չէին Թեզէոս հերոսի կատարած քաջագործութիւնները։ Նա էլ, Հերկուլէսի նման, իր հայրենիքը մաքրել էր բազմաթիւ հրէշներից ու աւազակներից։ Թեզէոսի կատարած քաջագործութիւններից ամենանշանաւորը Մենոտաւրոսին (կէս մարդ և կէսը եզ) սպանելն ու իր հայրենիքը՝ Ատտիկան՝ Կրետէի գերիշխանութիւնից ազատելն էր։ Կրետէի Մինոս թագաւորը, գրաւելով Աթէնքը, շատ ծանր հարկեր էր դրել նրա բնակիչների վրայ։ Ի միջի այլոց Աթենացիք պարտաւոր էին ինքը տարին մէկ անգամ Կրետէ կղզին եօթը երիտասարդ և եօթը աղջիկ ուղարկել նաւով, որոնք այնտեղ կերակուր էին դառնում սոսկալի Մենոտաւրոսին։ Թեզէոսին էլ էին ուղարկել մի խումբ երիտասարդների հետ Մենոտաւրոսին կերակուր դառնալու։ Բայց նա յաջողութեամբ սպանել էր հրէշին ու վախել Կրետէից, իր հետ վերադարձնելով և հետը գնացած միւս զոհերին։

Թէ Հերկուլէսի և թէ Թեզէոսի անունները յիշատակւում են նաև մի ուրիշ առասպելական պատմւածքի մէջ, որը յայտնի է Արգոնաւորդների անունով։ Արգոնաւորդները 50 հոգուց բաղկացած մի խումբ հերոսներ էին, որոնք Թեսալիացի Յասոն հերոսի

առաջնորդութեամբ գնացել էին Կոլխիդա (Կովկաս), ոչխարի ոսկէ բուրդը բերելու։ Այդ հերոսները արգոնաւորդներ էին կոչուում իրանց «Արգո» նաւի անունով։ Դրանց թուում էին նաև Հերկուլէսը։ Թեզէոսը և Օրփէյը, որ մի շատ նշանաւոր երգիչ էր։ Մինչև իսկ գազանները, լեռներն ու քարերն էլ նրա երգից զմայլում և վրդովւում էին։



Օրփէյ, Էւրիդիկ, եւ Հերմէս

Օրփէյի մասին պատմւում էր, թէ երբ նրա Էւրիդիկ կինը մեռել էր օձի խայթումից, Օրփէյը ստորերկրեայ թագաւորութիւնն էր մտել և իր երգով այնպէս էր զմայլեցրել այնտեղի անողոք աստուածներին, որ նրանք թոյլ էին տւել Էւրիդիկին իր ամուսնու հետ լոյս աշխարհ դուրս գալ։ Պայման էր դրւած միայն, որ Օրփէյը ճանապարհին շուռ չգայ ու չը նայի կնոջը։ Սակայն նա այն աստիճան կարօտել էր իր սիրեցեալ Էւրիդիկին, որ չէր կարողացել համբերել ու շուռ էր եկել, և հէնց դրա պատճառով էլ ընդ միշտ զրկւել էր իր կնոջից։

Արգոնաւորդները թէև ճանապարհին և Կոլխիդայում բազմաթիւ արգելքների ու փորձանքների էին հանդիպել, բայց կարողացել էին բոլոր արգելքներին յաղթել և Կոլխիդայի թագաւորի կախարդ աղջկայ՝ Մեդէայի օգնութեամբ ձեռք գցել ուզած ոսկէ բուրդը ու անվնաս իրանց հայրենիքը վերադառնալ։

Այս առասպելական պատմւածքի հիման վրայ, ենթադրւում է, թէ շատ հին ժամանակներում յոյները, երկար ու դժւարին ճանապարհորդութիւն կատարելով, Կովկաս էին գնում ոսկի տանելու համար։ Այդ ենթադրութիւնը հիմնւած է նաև այն իրողութեան վրայ, որ Վրաստանի Րիոն գետի ափերին հնումը շատ ոսկի աւազ կար։

ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ



Հոմերոս

Հերոսների կատարած քաջագործութիւնների ու նրանց մասին եղած առասպելական պատմւածքները մեծ նիւթ էին մատակարարում յունական աշուղներին, որոնք շրջում էին քաղաքից քաղաք նւագում քնարի վրայ ու երգելով պատմում նրանց։ Այդ պատմւածքներից մանաւանդ չափազանց սիրւած էին Տրոյական պատերազ-

մի մասին յօրինուածները, որոնց հեղինակը յունական ա-
նդուրեան համաձայն, կոյր երգիչ Հոմերոսն է համար-
ւում: Այդ պատմուածքից մեզ երկու ընդարձակ պօէմներ
են հասել. «Իլիականը» և «Ոդիսականը»: Առաջինում
պատմւում է պատերազմի՝ նրա սկզբնաւորութեան, ըն-
թացքի ու վախճանի մասին, իսկ երկրորդում նկարագրւած
է պատերազմին մասնակցող յոյն հերոսներից մէկի՝ Ոդի-
սէսի՝ հայրենիք վերադառնալը:

Տրոյական պատերազմի սկզբնական պատճառը երեք դի-
ցուհիների միմեանց հետ կռւելն է համարւում: Յունական թա-
գաւորներից մէկը, ամուսնանալով ծովային դիցուհու՝ Թետիդայի
վրայ, իր հարսանիքին հրաւիրում է բոլոր աստւածներին, բացի
Էրիդայից, որ երկպառակութեան աստւածուհին էր: Սա էլ
վրէժ առնելու նպատակով, հարսանեաց խնճոյքի ժամանակ մի
ոսկէ խնձոր է գլորում ներս, որի վրայ գրւած է լինում՝ «ամե-
նից գեղեցկին» բառերը: Եւ դա մի կատարեալ կռւախնճոր է
դառնում. հարսանիքում եղած դիցուհիներից երեքը—Հերան, Ա-
թենասը և Աֆրոդիտան—սկսում են կռւել, իւրաքանչիւրը պնդե-
լով, թէ ամենից գեղեցիկը հէնց ինքն է:

Այդ վէճին վերջ տալու համար, դիցուհիները դիմում են
Տրոյա քաղաքի Պրիամոս թագաւորի երիտասարդ որդուն՝ Պարի-
սին, որն այդ միջոցին Իդա լեռան վրայ իր հօր ոչխարներն էր
արածեցնում: Դիցուհիներից ամեն մէկը, կամենալով իր կողմը
գրաւել երիտասարդ դատաւորին, մի գրաւիչ բան էր խոստանում
նրան: Հերան խոստանում էր մեծ իշխանութեան և փառքի հաս-
ցնել նրան, Աթենասը իմաստութիւն էր խոստանում, իսկ Աֆրո-
դիտան խոստանում էր աշխարհիս ամենագեղեցիկ կինը տալ
նրան: Վերջին խոստումը ամենից զօրաւորն է հանդիսանում և
Պարիսը ոսկէ խնձորը տալիս է Աֆրոդիտային: Սա էլ իր կողմից
օգնում է Պարիսին Սպարտայի Մենելաս թագաւորի կնոջը՝ գե-
ղեցկուհի Հելենային փախցնելու: Հէնց այդ էլ Տրոյական պա-
տերազմի իսկական պատճառն է դառնում: Յունաստանի բոլոր
թագաւորները միանալով, արշաւում են Տրոյայի դէմ, որը Փոքր-
Ասիայի հիւսիս-արևելեան ափունքն էր գտնւում: Ընդհանուր զօրքերի
հրամանատար ընտրւում է Մենելասի եղբայր Ագամեմնոնը, որը
բոլոր թագաւորներից ամենազօրեղն էր: Արշաւանքին մասնակ-

ցող հերոսներից նշանաւոր էին՝ «արագոտն» Աքիլլէսը, «խո-
րամանկ» Ոդիսևսը, ծերունի և փորձած Նեստորը, Այաքս երկու
եղբայրները և ուրիշներ:

Պատերազմը փոփոխակի բախտով է տևում է ամբողջ տասը
տարի: Պատերազմի հէնց սկզբում, երբ յունական նաւերը դեռ նոր
էին Տրոյա հասել, Ագամեմնոնի ու Աքիլլէսի միջև կռիւ է ծա-
գում, և այս վերջինը հրաժարւում է պատերազմին մասնակցել:
Այդ հանգամանքի շնորհով յոյները մի շարք պարտութիւններ են
կրում. տրոյացիներին յաջողւում է յունական բանակը մտնել ու
նրանց նաւերն այրել: Այդ պատերազմում մեծ քաջագործութիւն-
ներ է անում Պրիամոսի որդին՝ Հեկտորը, որն սպանում է Աքիլ-
լէսի ընկերոջը՝ Պատրոկլէսին:



Կռիւ նաւերի մօտ

Սիրած ընկերոջ մահը սթափեցնում է Աքիլլէսին, և նա
հաշտւում է Ագամեմնոնի հետ ու նորից պատերազմին մասնակ-
ցում: Կռւի մէջ Աքիլլէսը սպանում է Հեկտորին և նրա դիակն
իր կառքի յետևից կապելով, քարշ է տալիս մինչև յունական բա-
նակը: Դրանով պատերազմը չէ վերջանում. տրոյացիք էլ շատ
դաշնակիցներ ունէին, որոնք շարունակ օգնութեան էին հասնում
նրանց: Յոյներին վերջ ի վերջոյ յաջողւում է խորամանկու-
թեամբ գրաւել Տրոյեան: Ոդիսևսի խորհրդով նրանք մի մեծ
փայտէ ձի են շինում, որի մէջ մի քանի հերոսներ են թագցնում,
իսկ իրանք, նաւերի վրայ նստելով, հեռանում են մօտակայ
կղզին: Տրոյացիք, նկատելով յոյների հեռանալը, իրանց ազատ-
ւած են համարում պաշարումից ու դուրս են գալիս քաղաքից:
Նկատելով փայտէ ձին և ոչինչ չը կասկածելով, նրանք քաշ են

տալիս ու քաղաք տանում այդ ձին։ Երբ գիշերը վրայ է հասնում, փայտէ ձիու մէջ թագնուածները դուրս են գալիս և բաց անում քաղաքի դռները յոյն զօրքերի առաջ, որոնք աննկատելի կերպով արդէն վերադարձել էին։ Յոյները ներս են խուժում, յանկարծակիի եկած բնակիչներին կոտորում և քաղաքն էլ այրում են։

Տրոյեայի դէմ արշաւած յոյն հերոսները բոլորն էլ չէին սպասել պատերազմի վախճանին. նրանցից շատերը զանազան ժամանակներում վերադարձել էին հայրենիք և զանազան արկածների հանդիպել։ Զափազանց արկածալից էր եղել մանաւանդ Ոդիսևսի վերադարձը, որը և նկարագրուած է Հոմերոսի «Ոդիսական»-ի մէջ։ Այդ հերոսը, որի հնարագիտութեան շնորհով միայն կարելի եղաւ Տրոյեան առնել, իր մի քանի ընկերներով ամբողջ տասը տարի թափառում է ծովի վրայ, մինչև որ կարողանում է տուն հասնել։ Այդ տասը տարւայ ընթացքում նա այնպիսի սոսկալի արկածների ու վտանգների է հանդիպում, որոնցից սովորական մահկանացուն երբէք չը պիտի կարողանար ազատուել։ Այսպէս՝ փոթորիկը նրան գցում է Կիկլոպների (մի աչքանի հրէշ) աշխարհը, ուր նրա ուղեկիցներից մի քանիսը կեբակուր են դառնում հրէշներին։ Յետոյ նա ընկնում է կախարդ Կիրկէի կղզին, որը նրա մնացած ուղեկիցներին խոզ է դարձնում։ Բայց Ոդիսևսը կարողանում է սոխակ կախարդին, նորից մարդ դարձնել նրանց։ Նա կարողանում է յաղողութեամբ Սցիլլա և Խարիբդա հրէշների միջով անցնել, որ մի շատ դժւար գործ էր։ Յաջողութեամբ այդ տեղից ազատուելով, Ոդիսևսը ընկել էր մի այլ կղզի, որտեղ Կալիպսօ յաւերժահարսն էր ապրում և որը ամբողջ տարի նրան իր մօտ էր պահել։ Կալիպսոյի մօտից փախչելով, Ոդիսևսը դարձեալ մի քանի փորձանքների էր հանդիպել։ Շնորհիւ իր հնարագիտութեան նա կարողացել էր բոլոր վտանգներից էլ ազատուել ու անվնաս տուն վերադառնալ վերջապէս, ուր նրա հաւատարիմ Պենելոպա կինը ամենայն համբերութեամբ սպասում էր նրան։

ՍՊԱՐՏԱ

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Յունական մանր պետութիւնների պատմութեան մէջ շատ մեծ դեր է կատարել Սպարտան, որ կոչւում էր նոյնպէս և Լակոնիա։ Սպարտան գտնւում էր Պելոպոնէսի հարաւային մասում, Էվրոտ գետի հովտում։ Այդ հովիտը շրջապատուած է բարձր լեռներով և շատ խիստ կլիմա ունի։ Հնումն այդ տեղը լիքն էր ամեն տեսակ թրռչուններով ու գազաններով, որոնք առատ նիւթ էին մատակարարում որսորդութեան համար։ Թէ երկրի խիստ կլիման և թէ վայրի գազանների հետ շարունակ գործ ունենալը Սպարտայի բնակիչներին սաստիկ խստասիրտ, կոպիտ ու պատերազմասէր էին դարձրել

Սպարտայի, ինչպէս և ամբողջ Պելոպոնէսի հնագոյն բնակիչները աբէացիները էին, բայց յետոյ եկել էին դորիացիները և նւաճելով այդ բնիկներին, երկրի կատարեալ տէրն էին դառել։ Իշխող դորիացիներն այնուհետև սպարտիատները, այսինքն՝ Սպարտայի տէրերը էին կոչւում, որովհետև երկրի բոլոր հողերը նրանց էին պատկանում և նրանք իրանց էին վերապահել ազատ քաղաքացու բոլոր իրաւունքները։ Հողի մշակութեամբ սպարտիատները չէին պարապում, այլ միմիայն երկրի կառավարիչներն ու զինուորներն էին։ Թէ հողի մշակութիւնը և թէ միւս սև աշխատանքների բոլոր ծանրութիւնը ա-

քէացիներին էին թողնւած։ Սրանք երկու մասի էին բաժանւում, փոքրագոյն մասը, որ արհեստներով ու վաճառականութեամբ էր պարապում և պերիէկներ անունն էր կրում, համեմատաբար աւելի լաւ վիճակ ունէր։ Թէև պերիէկները կառավարչական գործերի մէջ մասնակցելու իրաւունք չունէին, բայց բոլորովին էլ զուրկ չէին անհատական իրաւունքներից. հասարակութեան մէջ նրանք մի որոշ դիրք էին վայելում և պարտաւոր էին զինուորական ծառայութեան գնալ։

Բոլորովին այլ էր մեծամասնութեան դրութիւնը, որ հելոտ էին կոչւում. Սրանք սպարտիատների ճորտերն էին. հողերի մշակութիւնն ու միւս բոլոր աշխատանքները նրանց վրայ էին ընկած, և նրանք զուրկ էին բոլոր քաղաքացիական իրաւունքներից։ Հելոտները չորս անգամ աւելի բազմաթիւ լինելով սպարտիատներից, յաճախ ապստամբում էին նրանց դէմ։ Հէնց այդ պատճառով էլ սպարտիատները սաստիկ վախենում էին հելոտներից։ Եւ որպէսզի հեշտ լինէր նրանց վրայ հսկելն ու նրանց դաւադրութիւնները խանգարելը, սպարտիատները նրանց համար մի առանձին տեսակի զգեստ էին սահմանել։ Բացի դրանից՝ հելոտների վրայ հսկելու համար գաղտնի ոստիկանութիւն էր կազմակերպւած երիտասարդ սպարտիատներից, որոնք զինւած շրջում էին երկրի բոլոր կողմերը և իրաւունք ունէին, հարկ եղած դէպքում, սպանել նրանց առանց դատարանի։ Հելոտներին թոյլ չէր տրւում պատերազմական երգեր երգել, վախենալով թէ մի գուցէ այդ երգերից նրանք քաջութեամբ ներշնչւեն։

ՍՊԱՐՏԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Հելոտների ապստամբութեան ու խլրտուքների շարունակական վախը սպարտիատներին ստիպել էր միշտ սպառազինւած մնալ, և հետզհետէ այնպիսի մի խիստ կարգապահ հասարակական ու կառավարչական կազմակերպութիւն էր հաստատւել, որ Սպարտան մի կատարեալ զինուորական բանակ էր ներկայացնում։ Այսպէս՝ Սպարտայում անհատական սեփականութիւն համարեա թէ չը կար. ամենինչ պետութեանն էր պատկանում։ Պետութեան սեփականութիւնն էր կազմում նոյնպէս և հէնց ինքը սպարտիատը իր ծնւած օրից։ Թուլամորթ ու հիւանդոտ սերունդ չառաջացնելու նպատակով, նորածին մանուկին հայրը պարտաւոր էր կառավարութեանը ներկայացնել։ Սա, մանուկին քննութեան ենթարկելով, թոյլ և արատաւորներին սպանել էր տալիս, իսկ առողջ երեխաները վերադարձւում էին ծնողներին, որոնց մօտ երեխան մնում էր մինչև 7 տարեկան հասակը միայն։ Այդ ժամանակաընթացքում ծնողները պարտաւոր էին իրանց զաւակներին այնպէս մեծացնել, որ նրանք բոլորովին չը վարժւեն քնքշութեան և ընդունակ դառնան ամեն տեսակ չարքաշ կեանք վարելու։

Եօթը տարեկան հասակից երեխաները կառավարութեանն էին յանձնւում, որը շարունակում էր նրանց կրթութիւնն ու դաստիարակութիւնը։ Երեխաներին դեռ փոքր հասակից սովորեցնում էին բոկոտն մանգալ, թեթև հագնւել, միշտ սառը ջրում լողանալ, չոր անկողնում պառկել և այլն։ Երեխաների մտաւոր ու բարոյական կրթութեան վրայ բոլորովին ուշադրութիւն չէր դարձւում. ուսումնարանում նրանք սովորում էին գլխաւորաբար մարմնամարզութիւն, զինավարժութիւն, երգեցողութիւն և պարեր։ Դրա հետ միասին երեխաների մէջ ճարպիկու-

թիւն և տոկունութիւն էին խիստ զարգանում։ Այսպէս օրինակ՝ երեխաներին թոյլ էր տրւում գողութիւն անել այն պայմանով միայն, որ չբռնւեն։ Գողութեան և այլ յանցանքի մէջ բռնւողին խիստ ծեծի էին ենթարկում, և պահանջւում էր, որ ծեծւողը տոկունութեամբ տանի վայտի հարւածները։ Շատ աշխատում էին նոյնպէս երեխաների մէջ արագ մտածելու և կարճ ու կտրուկ ոճով պատասխանելու ընդունակութիւն զարգացնել։ Մինչև այսօր էլ կարճ և կտրուկ խօսելու ձևը լակոնական ոճ է կոչւում։ Սպարտական աղջիկների դաստիարակութիւնը տղաների դաստիարակութիւնից շատ քիչ էր տարբերւում։

Քսան տարեկան հասակը լրանալուց յետոյ, սպարտիատը զինւոր էր դառնում։ Զինւորները բազմաթիւ խմբակցութիւնների էին բաժանւած, և ամեն մի երիտասարդ ինքն էր ընտրում, թէ որ խմբակցութեան մէջ է կամենում ինքն անդամ դառնալ։ Իսկ մէկ անգամ խմբակցութեան մէջ մտնելուց յետոյ, նա պարտաւոր էր այնտեղ ճաշել ու զինւորութիւն անել մինչև 60 տարեկան հասակը։ Զինւորութեան մէջ էլ սպարտիատները շարունակում էին նոյն չարքաշ կեանքը վարել. ճաշում էին մի ընդհանուր շատ պարզ սեղանից, միշտ զինւորական վարժութիւններ էին անում և առհասարակ շատ համեստ կեանք վարում։

Այդպէս մանկութիւնից մինչև ծերութեան հասակը մի առ մի կեանքի վարժւելով ու միատեսակ դաստիարակութիւն ստանալով, սպարտիատները բոլորն էլ իրար սաստիկ նմանում էին։ Նրանց մէջ շատ քիչ էին պատահում աչքի ընկնող տաղանդաւոր մարդիկ, բայց և բոլորն էլ աչքի էին ընկնում իրանց առողջ կազմւածքով, ողջամտութեամբ և երկաթէ կամքով։ Նրանց մէջ սաստիկ զարգացած էին՝ հայրենասիրութիւնը, կարգապահութիւնն ու ընկերական ոգին։

Հպատակ հելոտների ապստամբական շարժումներին դիմադրելու ու նրանց զսպելու նպատակով այդպէս պատրաստւելով, սպարտիատները մեծ ոյժ ու զօրութիւն էին ձեռք բերել նաև արտաքին թշնամիների վերաբերեալ։ Նրանք հետզհետէ տիրեցին համարեա թէ ամբողջ Պելոպոնէսին և Սպարտան մի ժամանակ Յունաստանի ամենազօրեղ պետութիւնը դարձաւ։

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՉՄԸ

Սպարտան երկու թագաւոր ունէր, և այդ բացատրւում էր նրանով, որ սպարտական պետութիւնը կազմւել էր երկու համայնքների միացումից։ Միացող համայնքներից ամեն մէկը ուզեցել էր իր թագաւորը պահել, և սրանց ժառանգներն էլ շարունակում էին թագաւորել Սպարտայում։ Բայց սպարտական թագաւորները այնպիսի մեծ իշխանութիւն սունէին, ինչպիսին ունէին արևելեան երկիրների թագաւորները։ Նրանք ամենից առաջ քրմապետներ էին. ամեն առաւօտ ամբողջ Սպարտայի անունից զոհ էին մատուցանում աստւածներին և որոշ ժամանակներում յարաբերութիւն ունենում Դելֆեան պատգամախօսի հետ։ Յետոյ՝ պատերազմի ժամանակ, թագաւորները զօրքի ընդհանուր հրամանատարն էին դառնում վիճակով։ Միւս բոլոր կառավարչական խնդիրներում թագաւորների իրաւունքները սաստիկ սահմանափակւած էին։

Երկիրը գլխաւորաբար կառավարում էր՝ 30 հոգուց բաղկացած՝ ծերերի ժողովը, կամ ծերակոյտը, որ Հերուսիա էր կոչւում։ Այդ 30 հոգուց երկուսը հէնց իրանք թագաւորներն էին, որոնք Հերուսիայի աւագ անդամներն էին համարւում։ Հերուսիան էր երկրի համար օրէնքներ մշակողն ու վարչական գործերի վրայ հսկողը։ Ոճրագոր-

ծութիւնների դատավարութիւնն էլ Հերուսիային էր պատկանում։


Բացի Ծերակոյտից՝ Սպարտայում, ինչպէս և ամբողջ Յունաստանում, մի այլ հաստատութիւն էլ կար, որպիսին արևելեան երկիրներում գոյութիւն չունէր։ Դա *Ժողովրդական կամ Ազգային ժողովն էր*. որոշ տարիքի հասած ազատ քաղաքացիներին կառավարութիւնը տարեայ մէջ մի քանի անգամ պարտաւոր էր ժողովի հրաւիրել ու նրանց կարծիքը հարցնել կառավարչական այս կամ այն կարգադրութեան մասին։ Սպարտայում Ազգային ժողովը գումարւում էր իւրաքանչիւր ամիսը մի անգամ, իսկ ժողովին մասնակցելու իրաւունք ունէին միմիայն 40 տարեկան հասակից վեր սպարտիատները։ Ժողովին նախագահող թագաւորները այս կամ այն առաջարկութիւնն էին անում ժողովականներին, իսկ սրանք բարձրաձայն աղաղակով կամ համաձայնութիւն էին տալիս և կամ մերժում էին առաջարկը։ Եթէ աղաղակով անհնարին էր լինում որոշել ժողովի ցանկութիւնը, այն ժամանակ ժողովականները երկու մասի էին բաժանւում. առաջարկութեան հաւանութիւն տուողները մի կողմ էին անցնում, իսկ հակառակողները՝ միւս կողմը։ Մեծամասնութեան կամքը ժողովի որոշումն էր համարւում։

Ժամանակի ընթացքում ազգային ժողովները Սպարտայում կորցրել էին իրանց նշանակութիւնը։ Կառավարչական բոլոր գործերն հետզհետէ անցել էին մի նոր տեսակի պաշտօնեաների ձեռքը, որոնք կոչւում էին Էֆորներ և որ հնումը գոյութիւն չունէին։ Էֆորները թւով հինգ հոգի էին և ընտրւում էին ազգային ժողովի կողմից մի տարի ժամանակով։ Թէպէտ Հերուսիայի անդամներն էլ ընտրովի էին, բայց նրանք ընտրւում էին ցմահ։ Էֆորների հաստատելով թագաւորների իրաւունքները և՛ առաւել կրճատւեցին։ Այդ ժամանակ ազգային ժողովներում այլևս էֆորներն էին նախագահում։

Այսպիսի կառավարչական ձևը, որպիսին Սպարտայումն էր, այսինքն՝ երբ կառավարչական բոլոր գործերը կենտրոնացած են հողատէր-արտօնեալ դասակարգի կողմից ընտրւած մի բուռն պաշտօնեաների ձեռքում, կոչւում է արիստոկրատական կամ օլիգարխիական հանրապետութիւն։

Յունական աւանդութեան ասելով, Սպարտայի թէ կառավարչական և թէ հասարակական կազմակերպութեան վերաբերեալ եղած բոլոր խիստ կանոնները ու օրէնքները, Դելֆեան պատգամախօսի օգնութեամբ, հաստատել էր մի շատ խելօք մարդ, Լիկուրգոս անունով, որ թագաւորներից մէկի խնամատարն էր եղել։





Ա Թ Է Ն Ք

ԵՐԿԻՐՆ ՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Աթէնքը Ատտիկայի նշանաւոր քաղաքն էր, և այդ անունով էր կոչւում այդ թերակղզու վրայ եղած ամբողջ յունական պետութիւնը, որ կազմւել էր մի քանի տոհմերի միանալուց։

Ատտիկան մեծ մասամբ շատ քարքարոտ մի երկիր է, ուստի և շատ անյարմար երկրագործութեան համար։ Այնուամենայնիւ նրա բնակիչները կարողացել էին իրանց

աշխատասիրութեամբ ու տոկունութեամբ մինչև իսկ ապառաժոտ տեղերը մշակել և ցանքսով պարապել։ Այնտեղ շատ յաջողութեամբ աճում էին հացահատիկներ, խաղող, ձիթապտուղ և զանազան պաղատու ծառեր։

Երկրագործութիւնն ու խաշնարածութիւնը անկարող հանդիսանալով աճող ժողովրդի կարիքներին գոհացնում տալու, Ատտիկայի բնակիչներն էլ, Փիւնիկեցիների նման, ստիպւել էին շատ վաղ ժամանակից ծովի վրայ բաղդ որոնել։ Սկզբում նրանք ծովային աւազակութեամբ էին պարապում և փիւնիկեան վաճառականների նաւերն էին մեծ մասամբ կողոպտում։ Բայց յետոյ, կամաց-կամաց վարժւելով, իրանք էլ սկսեցին վաճառականութեամբ ու արհեստներով պարապել։ Ատտիկայի հարստութիւններից յայտնի էին մարմարը, արծաթը և մեղրը։

Ատտիկայի բնակիչները յոնիացիները էին։ Ժամանակի ընթացքում բնակիչների փոքրագոյն մասը զանազան միջոցներով երկրի հողերն ու այլ հարստութիւնները իր ձեռքն էր գցել և ամբողջ Աթէնքի կատարեալ տէրն էր դառել։ Ժողովրդի այդ մասը երկրի ազնւականներն էին, որ կոչւում էին Եւպատրիդները, իսկ մեծագոյն մասը հողազուրկ վաճառականները, արհեստաւորներն ու գիւղացի հողագործներն էին, որոնց ղեմոս կամ ռամիկ էին անւանում։ Թէև գիւղացիները էլ հողաբաժիններ ունէին, բայց դրանք այն աստիճան փոքր էին, որ անկարելի էր նրանց հասոյթով բաւականանալ։ Եւպատրիդների բոլոր հողերը մշակւում էին գիւղացիների ձեռքով, որ վերցնում էին կապալով և հասոյթի ամենամեծ մասը հողատէրերին տալիս։ Իսկ արհեստաւորները բոլորովին զուրկ էին հողաբաժիններից. նրանք միմիայն իրանց ձեռքի աշխատանքով էին ապրում։

Զարհուրանց ծանր էր ռամիկ ժողովրդի դրութիւնը. չքաւորութիւնից ստիպւած, նրանք յաճախ Եւպատրիդ-

ներից պարտքով փող էին վերցնում և շատ մեծ՝ վաշխառուական տոկոսներ վճարում։ Այն դէպքում,—որ շատ յաճախ էր պատահում,—երբ պարտք առնողը անկարող էր հանդիսանում վերցրած գումարը ժամանակին վճարել, նրա ունեցած հողը խլում էին և իրան էլ պարտատիրոջ ստրուկը դարձնում։ Ստրուկների դրութիւնը աւելի ևս ծանր էր։ Նրանց հետ շատ խիստ էին վարւում. յաճախ նրանց նոյնիսկ օտարականների էին ծախում։

ԱԹԷՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՋՄԸ

Շատ հնուից Աթէնքի կառավարութիւնը կազմւած էր մի թագաւորից (բազիլևս) և ծերակոյտից, որ այդտեղ *Արէօպագոս* էր կոչւում։ Ծերակոյտի անդամները միացած տոհմերի գլխաւորներն էին, որոնք յետոյ եւպատրիդներ կոչւեցին։ Եւպատրիդների հետզհետէ հարստանալովը արէօպագոսի նշանակութիւնն ու իրաւունքներն էլ մեծացան, իսկ թագաւորի իշխանութիւնը աւելի ու աւելի կրճատւեց։ Այդ կրճատումներն այն աստիճանի հասան, որ թագաւորը Աթէնքումն էլ, Սպարտայի նման, լոկ մի քրմապետ մնաց, այնինչ կառավարչական բոլոր գործերը ընտրովի պաշտօնեաների ձեռքն անցան ու այդտեղ էլ արիստոկրատական հանրապետութիւն հաստատւեց։

Սկզբում Աթէնքում, ընտրովի միայն մէկ պաշտօնեայ կար, որ կոչւում էր *ալօթեմարխ* և որին զօրքերի գլխաւոր հրամանատարութիւնն էր յանձնւում։ Յետոյ սկսեցին մի երկրորդ պաշտօնեայ ևս ընտրել, որ գլխաւոր դատաւոր էր հանդիսանում և կոչւում էր *արխոնտ*։ Ժամանակի ընթացքում, երբ պետութիւնը մեծացել էր, արխոնտների թիւն էլ շատացել, իննը հոգու էր հասել։ Ա-

ռենաառաջին արխոնտը կոչւում էր *էպօնիմոս*. նրա անունովն էր կոչւում նաև առաջիկեան տարին։ Այդ բոլոր պաշտօնեաները, ինչպէս և թագաւորը, աւելի ուշ ժամանակներում մէկ տարի ժամանակով էին ընտրւում։

Երկրի գերագոյն իշխանութիւնը արէօպագոսն էր՝ եւպատրիդների կամ ազնուական դասի ներկայացուցիչների խորհուրդը, որի անդամները ընտրւում էին ցմահ։ Արէօպագոսն էր հսկում կառավարչական բոլոր գործերի վրայ, որոնցից մի քանիսը հէնց իր անմիջական վարչութեան տակ էին գտնւում։ Արէօպագոսը միևնոյն ժամանակ և բարձրագոյն դատաստանական ատեանն էր, որի առաջ պատասխանատու էին հանդիսանում նոյն իսկ թագաւորը և միւս բոլոր պետական պաշտօնեաները։

Աթէնքում էլ գոյութիւն ունէր ազգային ժողովը։ Բայց քանի եւպատրիդները զօրեղանում ու իրանց ձեռքն էին հաւաքում կառավարչական իշխանութիւնը, այնչափ էլ ազգային ժողովը կորցնում էր իր նշանակութիւնը. քանի գնում, նրան աւելի ու աւելի ուշ-ուշ էին գումարում։ Իսկ որչափ ռամիկ ժողովուրդը զրկւում էր կառավարչական գործերի վրայ ազդեցութիւն ունենալու իրաւունքից, այնչափ էլ նրա դրութիւնը վատթարանում էր, որովհետև եւպատրիդներից ընտրւած պաշտօնեաները միշտ և ամեն դէպքում իրանց դասակարգի շահերն էին պաշտպանում։

Իրաւազուրկ ու թշւառ կացութիւնը վերջ ի վերջոյ անտանելի դարձաւ ռամիկ ժողովրդին. հարուստ վաճառականները, նաւատէրերն ու արդիւնագործները չէին ցանկանում այլևս ամեն բանի մէջ կալւածատէրերին հպատակւել. նրանք պահանջում էին, որ իրանց էլ թոյլ տրւի կառավարչական գործերի մէջ մասնակցութիւն ունենալ։ Արհեստաւորները, բանւորներն ու գիւղացիներն էլ նրանց կողմն էին։ Այս վերջիններն ցանկանում էին,

որ կալւածատէրերի հողերը իրանց բաժանեն և որ թեթեւացնեն իրանց՝ վաշխառուական անարդար տոկոսների շնորհով բարդւած՝ պարտքերից։ Մի շարք ժողովրդային խլրտուքներ տեղի ունեցան, որոնցից ստիպւած եւպատրիդները, վերջապէս, համաձայնեցին զիջել։ Արէօպագոսը Դրակոն անունով արխոնտին յանձնեց գրաւոր օրէնքներ մշակելը (621 թ. Ք. Ծ. ա.), որոնցից մինչև այդ ժամանակ Աթէնքի կառավարութիւնը բոլորովին զուրկ էր. դատաւորները մեծ մասամբ իրանց քմահաճոյքով էին ղեկավարւում։


Դրակոնի հրատարակած գրաւոր օրէնքները իրանց խստութեամբ ոչ միայն չը գոհացրին ռամիկներին, այլ և աւելի ևս գրգռեցին նրանց։ Ժողովրդական խլրտուքները գնալով աւելի մեծացան, մինչև որ կառավարութիւնը ստիպւած եղաւ աւելի լուրջ և կարևոր բարենորոգումներ մտցնել։ Այդ բարենորոգումները Սոլոնի մշակածն էին (594 թ.)։

ՍՈԼՈՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

Սոլոնը առևտրականութեամբ պարապող եւպատրիդ էր։ Նա մինոյն ժամանակ բանաստեղծ էր ու իր բանաստեղծութիւնների մէջ յաճախ կոչ էր անում եւպատրիդներին, որ խղճմտանքով վերաբերւեն դէպի խեղճ ժողովուրդն ու շատ չը ճնշեն նրան։ Հէնց այդ պատճառով մեծ վստահութեամբ էին վերաբերւում Սոլոնին նաև եւպատրիդները, որոնք նրան ամեն բանի մէջ խիստ չափաւոր մարդ ճանաչելով՝ գիտէին, որ նրա բարենորոգումներն էլ չափաւոր բնաւորութիւն կունենան։

Ընտրելով արխոնտ—էպօնիմոս և լիազօրութիւն ստանալով նոր օրէնքներ ու կարգեր մշակելու, Սոլոնն

ամենից առաջ ոչնչացրեց գիւղացիների բոլոր պարտքերը՝ թէ մասնաւոր անձանց և թէ պետութեանը վճարւելիք։ Միևնոյն ժամանակ նա ոչնչացրեց և այն սովորութիւնը, որի համաձայն պարտքով փող վերցնողները յաճախ գրաւ էին դնում իրանց անձը կամ ազատութիւնը, և պարտքը չը վճարած դէպքում, ստրուկ էին դառնում։ Դրանից յետոյ նա մի շարք օրէնքներ մշակեց, որոնց համաձայն սեփականատիրութեան սահմաններն ու իրաւունքները որոշւում և կարգաւորւում էին։



Սոլոն

Սոլոնի ամենանշանաւոր բարենորոգումը քաղաքացիներին ըստ իրանց կարողութեան դասակարգերի բաժանելն էր։ Մինչև այդ ժամանակ կառավարչական բոլոր գործերը եւպատրիդների, այսինքն՝ տոհմական ազնւականների ձեռքումն էին գտնւում։ Ոչ-ազնւական ծագումն ունեցող մարդիկ, թէկուզ նրանք շատ էլ հարուստ լինէին, բոլորովին զրկւած էին քաղաքական իրաւունքներից։ Տոհմական ազնւականների այդ բացառիկ իրաւունքն էր ահա, որ ոչնչացրեց Սոլոնը։ Նրա սահմանած օրէնքով բոլոր քաղաքացիք իրաւունք էին ստանում կառավարչական գործերով զբաղւելու, միայն թէ իւրաքանչիւրն ըստ իր կարողութեան չափի. ով աւելի հարուստ էր, նա էլ աւելի մեծ քաղաքական իրաւունքներ ունէր։ Այսպէս՝ Աթէնքի բոլոր քաղաքացիները չորս դասակարգի էին բաժանւում։ Առաջին դասակարգին

պատկանում էին ամենահարուստները, որոնք տարեկան առնւազն 500 մեդիմն *) զանազան բերքերի (հացահատիկներ, գինի, ձէթ և այլ) եկամուտ էին ստանում իրանց կալւածներից։ Երկրորդ դասակարգը տարեկան առնւազն 300, իսկ երրորդը՝ 200 մեդիմն բերք ստացողներն էին։ Մնացած բոլոր քաղաքացիները չորրորդ դասակարգն էին կազմում։ Այս դասակարգին պատկանողները կոչւում էին Թեթ։

Առաջին երեք դասակարգերին պատկանող քաղաքացիներից էին ընտրւում արխոնտները և այլ պետական բարձր պաշտօնեաները, իսկ թեթերին թոյլ էր տրւում միմիայն դատարանական պաշտօնեաներ ընտրել։ Դրա փոխարէն՝ առաջին երեք դասակարգերին պատկանող քաղաքացիները պարտաւոր էին մշտապէս զինւորական ծառայութիւն կրել, այնինչ թեթերը զինւորութեան էին կանչւում պատերազմի ժամանակ միայն։ Բացի դրանից՝ առաջիններն ծանրագէն հետեակ և ձիաւոր զօրքն էին կազմում, որ շատ աւելի մեծ ծախս էր պահանջում զինւոր գնացող քաղաքացուց, այնինչ վերջիններն թեթեւ զէններ կամ թիւավարներ էին։ Առաջին դասակարգին պատկանողները, բացի զինւորական ծառայութիւն կրելուց, պարտաւոր էին իրանց վրայ վերցնել նաև նաւատորմիղի և այլ պետական գործերի համար պէտք եղած մեծաքանակ ծախսերը։ Այդպիսով Սոլոնը կամեցել էր քաղաքական մեծ իրաւունքներ ունեցողների վրայ՝ մեծ էլ դրամական պարտականութիւններ դնել։

Առանց արէօպագոսը ոչնչացնելու, Սոլոնը 400 անդամներից բաղկացած մի այլ խորհուրդ հաստատեց, որ կոչւում էր Բուլի (երեսփոխանական ժողով) Իւրաքանչիւր դասակարգ բուլիում 100 ներկայացուցիչ կամ երեսփոխան ունէր։ Պետական բոլոր գործերն ու օրէնքները նախ քննւում էին բուլիում և ապա անցնում ազգային ժողովը։ Բուլին էր նոյնպէս հսկում պետական պաշտօնեաների գործունէութեան վրայ և ցուցմունքներ տալիս նրանց։ Արէօպագոսն այժմ պետութեան վրայ գերագոյն հսկողն էր. նա իրաւունք ունէր բեկանելու ազգային ժողովի այն բոլոր որոշումները, որոնք հակասում էին երկրի հիմնական օրէնքներին։ Նա հսկում էր նոյնպէս քաղաքացիների մասնաւոր կեանքի վրայ և կարող էր իր հայեցողութեամբ պատժի ենթարկել վատ բարք ունեցողներին։

Ոչ պակաս նշանաւոր էին Սոլոնի դատաստանական բարենորոգումները։ Դրանց համաձայն, դատաւոր կարող էր դառնալ ամեն մի քաղաքացի, առանց որևէ դասակարգային խտրութեան։ Դատաւորները ընտրւում էին իւրաքանչիւր տարի վիճակով։ Յետոյ՝ նրանք երդւում էին տալիս՝ դատել մարդկանց համաձայն ազգային և պատգամաւորական ժողովների մշտական օրէնքների և որոշումների։ Իսկ այս կամ այն դէպքին համապատասխան օրէնք չեղած պարագայում, նրանք պարտաւորւում էին իրանց խղճի թելադրութեան համաձայն դատել։ Այդպիսի դատարանը կոչւում էր հելիէա, որ նշանակում է երդւեալների դատարան։

---

*) Մեդիմն մի չափ էր, որ քիչ պակաս է ռուսական կէս չեթվերիկից։

ԲՌՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱԹԷՆՔՈՒՄ

Սոլոնի բարենորոգումներից առաջացած խաղաղութիւնն Աթէնքում երկար չը տևեց։ Աղքատ ու զրկւած դասակարգը շուտով զգաց, որ թէև ազնւականութեան նշանակութիւնը ոչնչացւած էր, բայց և այնպէս կառավարչական գործերի գլխաւոր ղեկավարութիւնը դարձեալ հարուստներին էր պատկանում։ Բացի դրանից՝ թէև

եղած պարտքերը ոչնչացուած ու նորերն անելու պայմանները մեղմացուած էին, բայց նորից պարտքերի տակ ընկնելու և վաշխառուական տոկոսներ վճարելու պատճառները վերացուած չէին։ Ռամիկ ժողովրդի եկամուտը նոյնն էր մնացել, հետևապէս նա ստիպուած էր նորից ահագին տոկոսներով փող վերցնել հարուստներից։

Ժողովրդային խլրտուքներն Աթենքում կրկին սկսուեցին։ Վերջ ի վերջոյ ժողովուրդն ապստամբեց, և Պիզիստրատ անունով մի աթենացու առաջնորդութեամբ, գրաւեց միջնաբերդն ու կատարելապէս քաղաքի տէրը դարձաւ։ Պիզիստրատը թէև ինքն էլ ազնուական էր, բայց մշտ ռամիկների շահերն էր պաշտպանում։ Նա մի շատ խելօք, ընդունակ, բայց և փառասէր ու իշխանութեան ձգտող մարդ էր. նա կամենում էր ժողովրդի օգնութեամբ կառավարչական ամբողջ իշխանութիւնն իր ձեռքը գցել և միայնակ ու ինքնագլուխ կառավարել երկիրը։

Վերջնականապէս իր իշխանութիւնն Աթէնքում հաստատելուց յետոյ (540 թ. Ք. ա.), Պիզիստրատը մի շարք բարեկործութիւններ մտցրեց ռամիկ ժողովրդի օգտին։ Նրա առաջին գործն այն եղաւ, որ կարիք ունեցող երկրագործ ժողովրդի համար էժան վարկ բաց արեց պետական գանձարանից։ Այդպիսով խեղճ ժողովուրդն այլևս ազատւում էր վաշխառուներին ահագին տոկոսներ վճարելու հոգսից և իր վաստակի տէրն էր դառնում։ Հազարաւոր խեղճ ու անգործ մարդկանց աշխատանք տալու նպատակով, Պիզիստրատը մի շարք շինութիւններ կատուցել տւեց Աթէնքում, ինչպէս և բազմաթիւ նաւեր շինել տւեց, որից յետոյ Արշիպելագոսի կղզիների հետ եղած յարաբերութիւնը աւելի սերտ դարձաւ ու վաճառականութիւնն էլ զարգացաւ։

Պիզիստրատի կատարած բարեկործութիւններից խիստ կարևոր էր նոյնպէս գաւառական դատարաններ հաստատելը։ Առաջ բոլոր դատարանները կենտրոնացած էին Աթէնքում, և ժողովուրդը ստիպուած էր Ատտիկայի զանազան մասերից Աթէնք գալ՝ արդարութիւն գտնելու համար, Իսկ Ատտիկայի զանազան մասերում գաւառական դատարաններ հաստատելով, ժողովուրդն այդ հոգսից էլ էր ազատւում։

Այդ և ուրիշ մի շարք բարեկործութիւների համար՝ հասարակ ժողովուրդը Պիզիստրատին սաստիկ սիրում և յարգում էր, այնինչ հարուստ դասակարգերը չափազանց դժգոհ էին նրանից և տիրան (բռնապետ) էին անւանում նրան և նրա ինքնիշխան ու ինքնագլուխ կառավարելու ձևն էլ՝ տիրանիա (բռնապետութիւն)։

Պիզիստրատի իշխանութիւնը 13 տարի տևեց, որից յետոյ կառավարութեան գլուխ անցան նրա երկու որդիքը՝ Հիպպիաս և Հիպարքոս։ Սրանց օրով իսկապէս որ բռնապետութիւն սկսեց Աթէնքում։ Որդիքը չունենալով հօր ոչ խելքն ու ընդունակութիւնը և ոչ էլ նրա պարզութիւնն ու համեստութիւնը, անկարող հանդիսացան ժողովրդի սէրն ու համակրութիւնը գրաւել։ Նրանք միանգամայն վստահ լինելով, թէ իրանց այլ ևս ոչոք չէ կարող զրկել ժառանգած իշխանութիւնից, շատ կամայական կերպով էին կառավարում երկիրն ու բազմաթիւ բռնութիւններ էին կատարում։ Իսկ այդ բանը գրգռում էր ոչ միայն ազնուականներին, այլ ռամիկ ժողովրդին էլ, որը, պէտք եղած բարեկործութիւները հաստատելուց յետոյ, այլևս չէր ցանկանում, որ երկրի իշխանութիւնը մի կամ երկու մարդու ձեռքում մնայ կենտրոնացած։ Նա ձգտում էր, որ կառավարչական բոլոր գործերն իր՝ ռամիկ ժողովրդի՝ դերիշխանութեանը ենթարկւեն։

Ռամիկների դժգոհութիւնից օգուտ քաղելով, ազնուականները գլուխ բարձրացրին և դաւադրութեամբ սպանեցին տիրաններից մէկին՝ Հիպարքոսին։ Դրանից

յետոյ բռնապետութիւնն աւելի ևս սաստկացաւ Աթէնքում. Հիպպիասը, սպանած եղբօր վրէժը լուծելու պատրւակով, բազմաթիւ մարդկանց մահւան դատապարտեց և աքսոր ուղարկեց։ Ժողովրդի զայրոյթն ու ատելութիւնը Հիպպիասի դէմ, գնալով սաստկացաւ և այն աստիճանի հասաւ, որ նրան, ընդհանուր որոշումով, զրկեցին իշխանութիւնից և արտաքսեցին Աթէնքից (510 թ. Ք. ա.)։

ԿԼԻՍԹԷՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

Հիպպիասին արտաքսելուց յետոյ, դասակարգերի միջև եղած կռիւներն ու խլրտումները նորից սկսեցին Աթէնքում։ Ցաղթութիւնն սկզբում ազնւականների կողմն էր, որովհետև սպարտացիներն էլ նրանց օգնում էին։ Ազնւականները ժառանգում էին, իշխանութիւնն իրանց ձեռքը գցելով ոչ միայն Պիզիստրատի, այլ մինչև իսկ Սոլոնի բարենորոգումներն էլ ոչնչացնել և նախկին բոլոր կարգ ու կանոնները վերականգնել Աթէնքում։ Սակայն այդ նրանց չը յաջողւեց. ռամիկ ժողովուրդը կամ դեմոկրատիան, եւպատրիդ Կլիսթէնի առաջնորդութեամբ ապստամբեց, դուրս վանեց սպարտացիներին և իր գերիշխանութիւնը հաստատեց։

Դեմոկրատիայի յաղթութիւնից յետոյ, Կլիսթէնը առաջին արխոնտ ընտրւեց և ապա մի շարք այնպիսի հիմնաւոր բարենորոգումներ մտցրեց, որ դեմոկրատիայի գերիշխանութիւնը կատարելապէս ապահով դարձաւ։ Աթէնքի քաղաքացիներին, ըստ կարողութեան չորս դասակարգի բաժանելով և իւրաքանչիւրից 100-ական երեսփոխաններ ընտրելու իրաւունք տալով, Սոլոնը կառավարչական գործերի գլխաւոր ղեկավարութիւնը դեռ ևս հարուստ դասակարգերի ձեռքին էր թողել։ Այդ եղանակով, առա-

ջին երկու ամենահարուստ դասակարգերը, որ ընդհանուր բնակչութեան փոքրագոյն մասն էին կազմում, բուլլիում (երեսփոխանական ժողովում) նոյնչափ ներկայացուցիչներ և նոյնչափ իրաւունքներ ունէին, որչափ և երրորդ ու մանաւանդ չորրորդ դասակարգերը, որոնք բնակչութեան մեծագոյն մասն էին կազմում։ Բացի դրանից՝ կառավարչական բոլոր բարձր ու կարևոր պաշտօնեաները, Սոլոնի բարենորոգումների համաձայն, անպատճառ ընտրւում էին առաջին երկու դասակարգերից, այսինքն՝ ամենահարուստներից։

Իրաւունքների բաժանման այդ խիստ զգալի տարբերութիւնը վերացնելու նպատակով, Կլիսթէնը ոչնչացրեց Սոլոնի դասակարգային բաժանումը ու նորը կատարեց (509 թ. Ք. ծ. ա.)։ Նա ամբողջ Ատտիկան 10 շրջանների բաժանեց, իւրաքանչիւր շրջանի բնակիչներին իրաւունք տալով 50 ներկայացուցիչ ընտրել բուլլի համար, որի անդամների թիւն այժմ 500-ի էր հասնում։ Այդ եղանակով հարուստ դասակարգերի գերիշխանութիւնը բուլլիում վերացած էր, որովհետև իւրաքանչիւր շրջանում ապրող հարուստ բնակիչների թիւը միշտ աւելի քիչ էր լինում չունևորներից, հետևապէս նրանք չէին կարող մեծ թւով իրանց ներկայացուցիչներին ուղարկել երեսփոխանական ժողով։

Դեմոկրատների ազդեցութիւնն ընտրութիւնների ժամանակ աւելի ևս մեծացնելու նպատակով, Ատտիկայում վերաբնակւած օտարականներին էլ քաղաքական իրաւունքներ էին տրւած Կլիսթէնի օրէնքներով։

Հինգ հարիւր պատգամաւորներից կազմւած երեսխանական ժողովը բաժանւած էր տասը բաժանմունքների, որոնցից ամեն մէկը $^1/_{10}$ տարի էր նիստեր գումարում։ Իր ամբողջ կազմով երեսփոխական ժողովը գումարւում էր շատ կարևոր դէպքերում միայն։ Իւրաքան-

չիւր բաժանմունք իր առանձին նախագահն ունէր։ Այդ նախագահներն էին այժմ կառավարչական ամենաբարձր պաշտօնեաները. դրանց ձեռքումն էին գտնւում պետական գանձարանը, կնիքը, արխիւը և շատ կարևոր գործեր։ Զափազանց մեծ նշանակութիւն ունէին նոյնպէս և ըստրատեգի (զօրապետի) պաշտօնները։ Դրանց թիւն էլ տասն էր և ամեն մի շրջան իր համար մի առանձին սարատէգ էր ընտրում մէկ տարի ժամանակով։ Զօրքերի ընդհանուր հրամանատարութիւնը պատերազմի ժամանակ կատարում էին այդ սարատեգները հերթով։

Երկիրը պետական դատաղրութիւններից ու բռնապետական ձգտումներից վերջնականապէս ազատելու նպատակով, Կլիսթէնը մի կանոն ևս հաստատեց, որի համաձայն, անտհման իշխանութեան ձգտելու մէջ կասկածուող անձնաւորութիւնները, առանց դատարանի քննութեան, այլ միմիայն ազգային ժողովի որոշմամբ, աքսորւում էին երկրից դուրս։ Այդ կանոնը կոչւում էր աստրակիզմ։ Աստրակիզմի ենթարկւողը պարտաւոր էր տասն օրւայ ընթացքում թողնել Աատիկայի սահմանները և չը վերադառնալ մինչև որոշած ժամանակի լրանալը։ Այդպէս աքսորւելը սակայն ոչ քաղաքացիական իրաւունքներից էր զրկում մարդուն և ոչ էլ անպատուութիւն էր համարւում։

Մօտ 150 տարի տևող ժողովրդային խլրտումները Կլիսթէնի այդ բարենորոգումներով, վերջապէս, աւարտ ստացան և դեմոկրատիայի իշխանութիւնը հաստատւեց Աթէնքում։ Հէնց այդ ժամանակներում էր, որ Դարէհը Յունաստանի վրայ արշաւեց և պարսկական նշանաւոր պատերազմներն սկսւեցին, որոնք տևեցին ամբողջ կէս դար (500—449 թ. ք. ծ. ա.)։



ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ՄԱՐԱԹՈՆԻ ԵՒ ԹԵՐՄՈՊԻԼԷԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ

Պարսից Դարէհը, փոքր-ասիական յոյների ապստամբութիւնը ճնշելուց յետոյ, Յունաստանի վրայ արշաւեց։ Սկզբում նա փորձեց Թրակիայի կողմից մտնել այդ երկիրը, բայց մեծ անյաջողութեան հանդիպեց և յետ դարձաւ։ Յետոյ նա իր բազմաթիւ զօրքը էգէյեան ծովով տարաւ։ Ճանապարհին յունական բոլոր կղզիները նաճելով, Էւբէայի կողմից պարսիկները Աատիկայի սահմանները մտան։

Աթէնացիք թէև լուր էին ուղարկել սպարտացիներին, խնդրելով որ օգնութեան հասնեն, բայց նրանք իրանց տօնական խաղերի պատճառով ուշանում էին։ Միմիայն Պլատէա քաղաքը հազար զօրք ուղարկեց։ Զը նայելով դրան, աթէնացիք չը յուսահատեցին։ Հայրենիքի ու ազատութեան սիրով ոգևորւած, նրանք տաղանդաւոր սարատեգ Միլտիադէսի ընդհանուր հրամանատարութեամբ ընդ առաջ դուրս եկան պարսից ահաւոր բանակին։ Վճռական ճակատամարտը տեղի ունեցաւ Մարաթոնի դաշտում, որտեղ պարսիկները, չը նայելով որ թւով անհամեմատ շատ էին յոյներից, շատ խիստ ջարդ կերան ու մեծ պարտութիւն կրեցին։ Դրա պատճառը

գլխաւորաբար այն էր, որ պարսից բանակը մեծ մասամբ կազմւած էր զանազան հպատակ ազգերից վարձով հաւաքած մարդկանցից, որոնք յոյների ոչ հայրենասիրութիւնը և ոչ էլ քաջութիւնն ունէին։

Մարաթոնի ճակատամարտով թէև պատերազմը չը վերջացաւ, բայց այդ յաղթութիւնը սաստիկ ոգևորեց յոյներին, որոնք մինչև այդ ժամանակ իրանց չափազանց տկար էին զգում պարսից ահաւոր ոյժի առաջ։ Պարսիկները Փոքր-Ասիա վերադարձան և պատրաստութիւններ էին տեսնում երկրորդ անգամ Յունաստանի վրայ արշաւելու, երբ Դարէհը մեռաւ։

Պարսից գահը ժառանգեց նրա որդին՝ Քսերքսէսը, որն իր հօրից ոչ պակաս պատերազմասէր մարդ էր։ Որպէսզի հօր կրած անյաջողութիւնները չը կրկնւեն, նա աւելի մեծ պատրաստութիւններ տեսաւ Յունաստան արշաւելու համար։ Պատրաստութիւնները մի քանի տարի տևեցին։

Այդ միջոցին յոյներն էլ իրանց կողմից էին պատրաստութիւններ տեսնում։ Ամենից շատ պատրաստւում էին Աթէնքում, ուր գործի գլուխ կանգնած էր խելացի ու հեռատես Թեմիստոկլէսը, որն Արէսպագոսի օգնութեամբ հարկադրեց աթենացիներին մի մեծ նաւատորմիղ պատրաստել։ Նախորդ պարսկական արշաւանքի ժամանակ այ նման միայնակ չը ձգելու համար, աթենացիք նախօրօք դաշնակցութիւն կապեցին սպարտացիների և միւս մի քանի յունական մանր պետութիւնների հետ (481 թ. Ք. ա.)։ Վճռւած էր դաշնակից զօրքերի ընդհանուր ղեկավարութիւնը յանձնել սպարտացիներին, իբրև զինւորական վարժութիւնների մէջ ամենահմուտների։

1.700 000 մարդուց բաղկացած պարսից բանակը Քսերքսէսի գլխաւոր հրամանատարութեամբ Յունաստան

անցաւ Հելեսպոնտոսի վրայով (480 թ.)։ Այդ վիթխարի բանակի ուտելու պաշարը նաւատորմի էր տանում, որ նոյնպէս շատ զօրաւոր էր։ Նրա գլխաւոր ոյժը փիւնիկեան նաւերն էին կազմում։

Պարսիկների Յունաստան մտնելու լուրն առանալուն պէս, յոյները սպարտական Լէօնիդաս թագաւորի առաջնորդութեամբ զօրք ուղարկեցին Թերմոպիլէի կիրճը պաշտպանելու։ Դա միակ ճանապարհն էր, որով պարսից զօրքը պէտք է Միջին Յունաստան անցնէր։ Լէօնիդասի զօրքը մեծ քաջութեամբ կատարեց իր վրայ դրած պարտականութիւնը և հազիւ թէ պարսիկները կարողանային շուտով կիրճն անցնել, եթէ մի յոյն դաւաճանութեամբ չառաջնորդէր նրանց մի անծանօթ լեռնային շաւիղով դէպի յոյների թիկունքը։ Լէօնիդասն այդ բանը նկատելով, իր զօրքի մեծ մասն արձակեց, և ինքը միայ ընդամենը 300 զինւորներով, որոնք բոլորն էլ ընկան կուի մէջ։ Պարսիկները մտան Միջին-Յունաստան և ուղղակի Աթէնքի վրայ գնացին։ Նրանք աւերակ դարձրին ամբողջ Ատտիկան ու Աթէնք քաղաքը, որի բնակիչները, Թեմիստոկլէսի խորհրդով, նախօրօք փախել, փոքրիկ Սալամին կղզու վրայ էին պատսպարւել, որ Ատտիկայի դիմացն է գտնւում։

ՍԱԼԱՄԻՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Այն կրիտիքական րոպէին, երբ պարսիկները սպառնում էին ամբողջ Յունաստանը նւաճել, յոյների մէջ խիստ անհամաձայնութիւններ ծագեցին։ Նրանց մեծագոյն մասը ցանկանում էր, որ դաշնակից զօրքերը միանան Կորնթոսի պարանոցի վրայ ու այնտեղ դիմադրեն պարսիկներին։ Իսկ Թեմիստոկլէսը ամեն կերպ աշխատում էր համոզել, որ վճռական ճակատամարտը տեղի

ունենայ ծովի վրայ, հէնց Սալամինի նեղուցում։ Նա այն կարծիքի էր, թէ ցամաքի վրայ յոյները որչափ էլ մեծ քաջութեամբ կռւեն, այնուամենայնիւ կը չախչախուեն պարսից զօրքի շատութեան առաջ, մինչդեռ ծովի վրայ պայմանները բոլորովին ուրիշ էին։ Փիւնիկեան նաւերը, շինւած լինելով Միջերկրական ծովում լողալու համար, չափազանց մեծ էին ու չը պիտի կարողանային ազատ շարժուններ կատարել յունական նեղ ու փոքրիկ ջրերում, նամանաւանդ որ նրանց նաւաստիներն անծանօթ էին այդ ջրերին։

Թեմիստոկլէսն այն աստիճան վստահ էր իր տասածների ճշմարտութեան վրայ, որ երբ տեսաւ, թէ չէ կարողանում համոզել մեծամասնութեանն ու իր առաջարկը չէ ընդունւում, գաղտնի կերպով լուր ուղարկեց Քսերքսէսին, ասելով թէ յոյները պատրաստւում են փախչել։ Այդ լուրի վրայ Քսերքսէսն իր նաւատորմի մի մասն ուղարկեց յոյների ճանապարհը կտրելու, և պատերազմը անխուսափելի դարձաւ։ Յոյները յունահատական քաջութեամբ էին կռւում։ Թեմիստոկլէսը չէր սխալւել. պարսից նաւերը ոչ միայն չէին կարողանում ազատ կերպով շարժւել այդ նեղ ջրերում, այլ և հէնց իրանց շատութեան պատճառով, իրար սաստիկ խանգարում ու ճնշում էին։ Բոլորովին այլ պատկեր էին ներկայացնում յունական նաւերը, որ իրանք իրանց տանն էին զգում։ Կարճ ժամանակի մէջ պարսից նաւատորմի մեծ մասը ոչնչացաւ. իսկ մնացածներն էլ փախուստի դիմեցին։ Այդ անսպասելի պարտութիւնից յետոյ, Քսերքսէսը այլևս վախեցաւ պատերազմը ցամաքի վրայ շարունակելու, նամանաւանդ որ նաւատորմի ոչնչացումով, նա իր զօրքի պաշարն էլ էր կորցրել։ Իսկ կիսաւեր դարձած Յունաստանում անհնարին էր նրա անհամար զօրքը կերակրել։ 300,000 զօրք Բէովտիայում թողնելով, Քսերքսէսը Փոքր-Ասիա վերադարձաւ։



Քսերքսէս

Տարած յաղթութիւնով ոգևորւած յոյները հետևեալ տարին պատերազմական գործողութիւնները միաժամանակ սկսեցին թէ ցամաքի և թէ ծովի վրայ։ Պլատէայի ճակատամարտում նրանք վերջնական հարւած տւեցին պարսից ցամաքային զօրքին, որից յետոյ Յունաստանն իսպառ մաքրւեց պարսիկներից։ Իսկ Միկալէ հրւանդանի մօտ նրանք պարսից նաւատորմի մնացորդը խորտակեցին, որից խրախուսւած Փոքր-Ասիայի յունական գաղութները գլուխ բարձրացրին և, պարսից լուծը թօթափելով, իրանց ազգակիցներին միացան։ Դրանից յետոյ յոյները միմեանց յետևից մաքրեցին պարսիկներից Արշիպելագոսի այն բոլոր կղզիները, որոնք դեռևս պարսից տիրապետութեան տակ էին գտնւում։

Պարսից հսկայական բանակի վերջին մնացորդները իսպառ խորտակւեցին 449 թ. Ք. ա.։

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Պարսիկների դէմ կռւում էին Յունաստանի բոլոր մանր տէրութիւնները միացած։ Նամանաւանդ մեծ համերաշխութեամբ էին գործում աթենացիք ու սպարտացիք, որոնք պատերազմի գլխաւոր դեկավարներն էին հանդիսանում։

Սկզբում, քանի դեռ պատերազմը գլխաւորաբար ցամաքի վրայ էր տեղի ունենում, դաշնակից զօրքերի ընդհանուր հրամանատարութիւնը սպարտացիներին էր պատկանում։ Բայց յետոյ, երբ պատերազմական գործողութիւնները ծովի վրայ տեղափոխւեցին, ընդհանուր հրամանատարութիւնը աթէնացիներին անցաւ, որովհետև ծովի վերայ ունեցած հմտութեամբ սրանք

շատ աւելի գերազանց էին սպարտացիներից։ Այդ բանը սակայն սաստիկ վիրաւորական թւաց սպարտացիներին, և նրանք հրաժարւեցին պատերազմին մասնակցել ու դուրս եկան Ծունական ընդհանուր դաշնակցութիւնից։ Նրանց հետ հեռացան նոյնպէս և պելոպոնէսեան միւս դաշնակիցները, որից յետոյ աթենացիք հասկացան թէ միայնակ ենացին պարսիկների դէմ։

Բայց աթենացիք չը յուսահատւեցին. շատ շուտով մի նոր դաշնակցութիւն կազմւեց, որ կոչւեց «աթենական դաշնակցութիւն» և որի մէջ հետզհետէ մօտ 300 առանձին համայնքներ մըտան թէ մայր ցամաքից և թէ կղզիներից։ Հէնց այդ դաշնակցութիւնը շարունակեց պատերազմը պարսիկների դէմ։

Աթենական դաշնակցութեան կազմակերպողն ու նրանց ոգի ներշնչողը աթենացի զօրավար Արիստիդեան էր, որ յայտնի էր իբրև մի շատ ազնիւ, անշահասէր արդարադատ մարդ։ Աթենական դաշնակցութեան մէջ մտնող մանր պետութիւններից իւրաքանչիւրը, պահպանելով իր քաղաքական կատարեալ անկախութիւնը, պարտաւորւում էր աթենացիների տրամադրութեան տակ մի որոշ թւով պատերազմական նաւեր դնել իրանց մարդկանցով ու բոլոր պարագաներով։ Դաշնակցութեան վերաբերեալ բոլոր գործերը քննւում էին Դելոս կղզում, դաշնակիցների ուղարկած պատւիրակների ընդհանուր ժողովում, որի նախագահը միշտ Աթէնքի ներկայացուցիչն էր լինում։

Երբ պատերազմը չափազանց երկարեց, դաշնակիցներից շատերը, որոնք վաղուց արդէն ազատւել էին պարսկական սարսափներից, հետզհետէ դադարեցին պատերազմին անձամբ մասնակցելուց։ Նաւեր ու մարդիկ մատակարարելու փոխարէն նրանք փող էին վճարում այլևս դաշնակցութեան գանձարանին, որ նոյնպէս Դելոս կղզումն էր գտնւում։ Աթենացիք այդ կարգի դաշնակիցների վրայ սկսեցին հետզհետէ իրբև հպատակների վրայ նայել. դաշնակցութեան վերաբերեալ գործերն այլևս վարում էին ինքնագլուխ կերպով, առանց դաշնակցութեան ժողովի քննութեանը ներկայացնելու։ Իսկ եթէ դաշնակիցներից մէկը կամ միւսը մտածում էր գլուխ բարձրացնել Աթէնքի դէմ և հրաժարւել փող վճարելուց, նրանք, ապստամբութիւնը ճնշելով, ծանր հարկեր էին դնում անհնազանդ համայնքի վրայ։ Այդպիսով աթենական դաշնակցութիւնը կամաց-կամաց աթենական մի մեծ պետութիւն դարձաւ, որի սահմանների մէջ ամբողջ արևելեան

Ծունաստանն էր մտնում։ Այդ ժամանակ դաշնակցութեան գանձարանն էլ Դելոսից Աթէնք տեղափոխեցին։

Պարսկական պատերազմները և այն մեծ նշանակութիւնն ունեցան Աթէնքի համար, որ նրա վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը սաստիկ զարգացան։ Միլէտ քաղաքի անկումով յունական ամբողջ վաճառականութեան կենտրոնը Աթէնք տեղափոխւեց։ Նրա նորակառոյց նաւահանգիստ Պիրէյը առևտրական յարաբերութիւնների մէջ էր գտնւում Փիւնիկիայի, Եգիպտոսի, Ասորիքի, Իտալիայի և Սև ծովի ափերում եղած բոլոր քաղաքների հետ։

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԶՕՐԱՆԱԼԸ ԱԹԷՆՔՈՒՄ

Աթէնական պետութեան զօրեղանալու հետ միասին սաստիկ զարգացան այնտեղի վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը։ Հողատիրութիւնը, գնալով, աւելի ու աւելի կորցրեց իր նախկին նշանակութիւնը. երկրի հարուստները այլևս ոչ թէ կալւածատէրերն էին, այլ նրանք, որոնք շատ փող ունէին։ Փողն էր այժմ գերակշիռ նշանակութիւն ստացել պետութեան մէջ, և փողատէր դասակարգերին էր դիմում կառավարութիւնը կարիք ունեցած դէպքում։ Այդ իսկ պատճառով փողատէր դասակարգերը սկսեցին պահանջել, որ իրանց իրաւունքները էլ աւելի ընդարձակւեն պետական գործերի մէջ. Կլիսթէնի մշակած բարենորոգութիւններից յետոյ թէև Աթէնքի դեմոկրատները շատ իրաւունքներ էին ձեռք բերել, բայց և այնպէս երկրի բարձրագոյն դատավարութիւնն ու պետական գործերի վրայ հսկելը դեռ կալւածատէր ազնւականների ձեռքին էր գտնւում։ Իսկ այդ ազնւականները շատ խիստ էին դատում ոչ-իրանց դասակարգի մարդկանց և յաճախ հակառակ էին գնում ազգային ժողովների վճիռներին։

Փողատէր դասակարգերի հետ զուգընթացաբար Ա-

թէնքում զարգացել էր նաև քաղաքային բանաւորութիւնը, որը թէև բոլորովին զուրկ էր որ և է հարստութիւնից, բայց գիւղացիների նման անտարբեր չէր դէպի կառավարչական գործերը. հարուստ դասակարգերից ոչ նւազ քաղաքեացիք ու անձնւիրութեամբ պաշտպանած լինելով հայրենիքը պարսիկների դէմ, բանւորները իրանց համար էլ հաւասար քաղաքական իրաւունքներ էին պահանջում։

Ազնւականները, կամենալով մի անգամ ընդ միշտ վերջ դնել դեմոկրատիայի այս նոր շարժմանը, Սպարտայի ազնւականների հետ միացած դաւաճանութեան մէջ մեղադրեցին դեմոկրատիայի ղեկավար Արիստիդեսին ու Թեմիստոկլէսին և, աթենացիներին համոզելով, նրանց աքսորել տւեցին։ Բայց դրանով կանգ չառաւ դեմոկրատիայի շարժումը։ Աքսորւած ղեկավարներին շուտով նորերը փոխարինեցին—Էֆիալտը և Պերիկլէսը։ Էֆիալտի առաջարկութեամբ բոլոր դատաստանական գործերն ու կառավարութեան վերին հսկողութիւնը Արէօպագոսից խլւեցին և ժողովրդին յանձնւեցին։ Ազնւական ծերերից կազմւած դատարանի փոխարէն ժողովրդական դատարան հաստատւեց. այլևս դատաւոր կարող էր լինել ամեն մի քաղաքացի, որի տարիքը 30-ից անց էր։ Իսկ Պերիկլէսի առաջարկութեամբ ոոճիկ նշանակեցին թէ դատաւորներին և թէ կառավարչական ամեն տեսակ պաշտօն վարողներին։ Այդպիսով հնարաւորութիւն էր տրւում չունևոր դասակարգերին էլ պետական պաշտօններ վարել, որից նրանք առաջ խուսափում էին, որպէսզի ի զուր ժամանակ չը կորցնեն։ Բացի դրանից՝ պաշտօնեաներին ռոճիկ նշանակելով, մի յայտնի չափով կաշառակերութեան առաջն էր առնւում։

ՊԵՐԻԿԼԷՍԻ ԴԱՐԸ

Արէօպագոսն իր գերագոյն իշխանութիւնից զրկելն այնպիսի կատաղութիւն առաջացրեց ազնւականների շարքերում, որ նրանք սպանել տւին Էֆիալտին։ Բայց դրանով բարենորոգումների գործը կանգ չառաւ. նրան աւելի մեծ եռանդով շարունակեց Պերեկլէսը։ Սա մի շատ նշանաւոր ազնւական տոհմի զաւակ էր թէև, բայց ամբողջապէս դեմոկրատիայի շահերին էր նւիրւած։ Հէնց դրա համար էլ Պերիկլէսին ամբողջ 15 տարի շարունակ ստրատեգ էին ընտրում։ Երկարատև պատերազմների պատճառով ստրատեգները խիստ մեծ նշանակութիւն էին ստացել. այժմ նրանք աւելի մեծ դեր էին կատարում կառավարչական գործերի վերաբերեալ, քան արխոնտները։ Թէև Պերիկլէսի հետ միասին միշտ ուրիշ 9 ստրատեգներ էլ էին լինում, բայց առաջնակարգ դեր կատարողը Պերիկլէսն էր, միւս ստրա-



Պերիկլէս

տեգները միշտ խոնարհւում էին նրա առաջ։ Ի նկատի առնելով Պերիկլէսի վերին աստիճանի անշահասէր, ազնիւ ու անդաւաճան գործունէութիւնը, ըուլին (պատգամաւորական ժողովը) ու ազգային ժողովը նոյնպէս ընդարձակ լիազօրութիւններ էին տւել նրան։


Աթէնքի պետութիւնը, զօրանալով, սկսել էր մշտական զօրք պահել. որպէսզի զինւորական ծառայութիւնը չափազանց ծանր չը լինի քաղաքացիներին, Պերիկլէսը ցամաքային ու ծովային զօրքի համար էլ ռոճիկ նշանակեց։

Առհասարակ Պերիկլէսը չափազանց շատ է աշխատում չքաւոր դասակարգերի նիւթական ու բարոյական վիճակը բարձրացնելու մասին։ Պարսիկներից նւաճած երկիրներում նա ահագին հողաբաժիններ էր տալիս երկրագործութեամբ պարապել ցանկացող աթենացիներին և նոր գաղթավայրեր էր հաստատում։ Իսկ Աթէնքից հեռանալ չը ցանկացող չքաւորներին աշխատանք տալու նպատակով նա ձեռնարկեց մի շարք հասարակական շէնքեր կառուցանել։ Շէնքերը շինւում էին վերին աստիճանի նուրբ ու գեղարւեստական ճաշակով, այնպէս որ նրանք միևնոյն ժամանակ և սաստիկ զարդարում ու գեղեցկացնում էին Աթէնքը։ Շէնքերի կառուցման վրայ հսկում ու ղեկավարում էր հանճարեղ քանդակագործ Ֆիդիասը, որ Պերիկլէսի մօտիկ բարեկամն էր և որի ձեռքի տակ բազմաթիւ քանդակագործներ, նկարիչներ ու այլ վարպետներ էին աշխատում։

Այդ շէնքերից ամենանշանաւորը Աթենաս աստւածուհուն նւիրւած տաճարն էր, որ կոչւում էր Պարթենոն և գտնւում էր Ակրոպոլիսում (միջնաբերդում)։ Այս վերջինը մի շարք փառահեղ շէնքերի ու գեղարւեստական այլ գործերի մի կատարեալ թանգարան էր ներկայացնում, որի մէջ ամենանշանաւոր զարդը Աթենաս աստւածուհու հսկայական արձանն էր, շինւած փղոսկրից ու ոսկուց և որը Ֆիդիասի գլուխ գործոցն էր։

Մօտ 500 տարի Քրիստոսի ծնունդից առաջ կառուցւած Ակրոպոլիսի շէնքերից մնացած աւերակները դեռ այսօր էլ մեծ գեղարւեստական հաճոյք ու հիացմունք են պատճառում նայողին։

Դեմոկրատիայի մտաւոր զարգացումը բարձրացնելու նպատակով, Պերիկլէսը մի յատուկ դրամարկղ էր հաստատել, որտեղից չունևորներին փող էին տալիս թատրոն գնալու համար։



Ակրոպոլիսի աւերակները

Ոչ նւազ հոգատարութիւն էր ցոյց տալիս Պերիկլէսը Աթէնքի պաշտպանութեան մասին։ Այդ նպատակով նա երկու մեծ պարիսպներ շինել տւեց. մէկն Աթէնքից գը-

նում մինչև հին նաւահանգիստն էր հասնում, իսկ միւսը մինչև նոր՝ Պիրէյ նաւահանգիստն էր հասնում։

Անհրաժեշտ բոլոր դումարները Պերիկլէսը պետական գանձարանից էր վերցնում։ Իսկ այս վերջինի եկամուտները կազմում էին գլխաւորաբար դաշնակիցների վճարած տուրքերը, ապրանքներից վերցւող մաքսը և օտարականներից առնւող հարկերը։ Աթէնքի քաղաքացիները ազատ էին որեւէ հարկ վճարելուց։

Պերիկլէսի իշխանութեան ժամանակաշրջանը Աթէնքի լուսաւորութեան ու զարգացման ամենափայլուն ժամանակն է համարւում։ Դա Աթէնքի ոսկէ դարն էր, որ պատմութեան մէջ յայտնի է նոյնպէս և Պերիկլէսի դար անունով։

Պերիկլէսը մեռաւ յունական այն մեծ ներքին պատերազմների ժամանակ, որ պատմութեան մէջ յայտնի են Պելոպոնէսեան պատերազմ անունով և որ մօտ 30 տարի տևեցին։

ՊԵԼՈՊՈՆԷՍԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պարսկական պատերազմների վտանգն անցնելուց յետոյ, յունական պետութիւնները երկու թշնամի բանակներ էին ներկայացնում։ Մի կողմ աթենական դաշնակցութիւնն էր իր դեմոկրատական կառավարչական կազմ ունեցող քաղաքներով ու խիստ զօրաւոր նաւատորմիղով, իսկ միւս կողմում պելոպոնէսեան դաշնակցութիւնն էր, որի գլուխ էր կանգնած խոշոր կալւածատիրական Սպարտան իր ցամաքային բազմաթիւ զօրքով։ Բացի դրանից՝ Աթենական դաշնակցութեան սահմաններում եղած ազնականների համակրութիւնը բնականաբար սպարտական արիստոկրատիայի կողմն էր, իսկ Պելոպոնէսեան

դաշնակցութեան մէջ եղած դեմոկրատների համակրութիւնը դեմոկրատական Աթէնքի կողմն էր։ Երկու՝ շահերով միմեանցից խիստ տարբեր՝ դասակարգերի ու սրանց վայլուն արտայայտիչ Սպարտայի ու Աթէնքի յարաբերութիւնները, գնալով, լարւում էին։ Շատ աննշան առիթ էր հարկաւոր, որ դրանց մէջ պատերազմ պայթէր։ Եւ առիթը շուտով ներկայացաւ. Կորնթոսի և Կերկիրի փոքրիկ տէրութիւնները ընդհարւեցին միմեանց հետ։ Կորնթոսը Սպարտայի, իսկ Կերկիրը Աթէնքի օգնութեանը դիմեցին և պատերազմը սկսւեց (431 թ. Ք. ա.)։

Պատերազմի առաջին երկու-երեք տարին, քանի դեռ կենդանի էր Պերիկլէսը, աթենացիք գլխաւորաբար պաշտպանողական պատերազմ էին մղում։ Պերիկլէսի խորհրդով, ամբողջ Ատտիկայի բնակիչները տեղափոխւել էին Աթէնք ու պաշտպանողական դիրք բռնել պարիսպների յետևում։ Օգուտ քաղելով այդ հանգամանքից, սպարտացիք ամեն տարի յարձակումն էին գործում Ատտիկայի վրայ ու կատարեալ աւերակ դարձնում անպաշտպան թողնւած բոլոր գիւղերն ու դաշտերը։ Աթենացիք էլ նաւերով յարձակւում էին Պելոպոնէսի ծովեզրեայ քաղաքների ու գիւղերի վրայ և այդ եղանակով վնասում սպարտացիներին։ Սակայն շատ ժամանակ չանցած, Աթէնքում խռնւած ժողովրդի մէջ ժանտախտ առաջացաւ, որ սկսեց սոսկալի կոտորած անել։ Սարսափահար եղած տգէտ ժողովուրդը սկսեց Պերիկլէսին մեղադրել իր բոլոր դժբաղտութիւնների համար, չը նայելով որ հէնց ինքը Պերիկլէսն էլ շուտով ժանտախտի զոհ դարձաւ։

Նրա մահից յետոյ դեմոկրատիայի գլուխ անցաւ Կրէօնը, որն իր կոպիտ, անբարիշտ ու փառասէր բնաւորութեամբ Պերիկլէսի ճիշտ հակապատկերն էր ներկայացնում։ Նա յարձակողական պատերազմի կողմնակից էր և միշտ ժողովրդին գրգռում էր զօրավարների դէմ, ասե-

լով թէ նրանք բաւականին մեծ եռանդով չեն պատերազմում։ Նրա յորդորներով կառավարութիւնն սկսեց դաշնակիցներից կրկնակի տուրք վերցնել և Աթէնքի քաղաքացիների վրայ էլ հարկ նշանակեց։

Շուտով աթենացիք կրէօնի դրդմամբ յարձակուեցին Պելոպոնէսի վրայ, ամրացան նրա արևմտեան մասում և սկսեցին մի շարք յաղթութիւններ տանել։ Աթենացիների յաջողութիւններին խիստ նպաստում էր այն հանգամանքը, որ հելոտներն ու այլ դեմոկրատական տարրերը, օգուտ քաղելով առիթից, ապստամբութեան դրօշակ բարձրացրին Սպարտայի դէմ։ Զափազանց նեղն ընկած սպարտացիք այդ ժամանակ ցանկացան նոյնիսկ հաշտութիւն կայացնել, բայց կրէօնը չհամաձայնեց։ Շուտով սակայն կրէօնն ընկաւ պատերազմում և նրա տեղն անցաւ Նիկիասը, որը հաշտութիւն ցանկացող կուսակցութեան պարագլուխն էր Աթէնքում։ Նիկիասի ջանքերով հաշտութիւն կայացաւ (421 թ. ք. ծ. ա։)։

Ա Լ Կ Ի Վ Ի Ա Դ Է Ս

«Նիկիասեան խաղաղութիւնը» շատ կարճ տևեց, շուտով երևաց, որ երկու կողմերն էլ աշխատում էին միմեանց խաբել, որովհետև հաշտութեան պայմաններից և ոչ մէկը չէին ուզում իրագործել։ Խաղաղութիւն խզողներն աթենացիք եղան։

Այդ ժամանակ Աթէնքում ժողովրդի վրայ մեծ ազդեցութիւն էր սկսել ձեռք բերել Պերիկլէսի մօտիկ ազգական Ալկիվիադէսը։ Սա մի շատ խելօք, գեղեցիկ, քաջ բայց և միևնոյն ժամանակ խիստ փառասէր երիտասարդ էր. նա պատրաստ էր ամեն բան զոհել, միայն թէ կարողանար ինքը փայլել ու իշխել։ Նրա յորդորանքով աթե-

նացիք պատերազմը տեղափոխեցին Սիցիլիայի վրայ, որին տիրանալով, Ալկիվիադէսի կարծիքով, աթենացիք պիտի ամբողջ Միջերկրական ծովի տէրը դառնային, և Սպարտան հարկադրւած պիտի լինէր հնազանդուել (առաջնութիւնը ամբողջ Յունաստանում) Աթէնքին զիջել։

Նոր էր Ալկիվիադէսը, նաւատորմի գլուխն անցած, ճանապարհ ընկել դէպի Սիցիլիա, երբ Աթէնքում սկսեցին նրան մեղադրել սրբապղծութեան ու անհաւատութեան մէջ։ Պատճառն այն էր, որ Ալկիվիադէսի ճանապարհ ընկնելու նախընթաց գիշերը անյայտ մարդիկ ջարդուել էին փողոցներում դրւած Հերմէսի արձանները։ Կասկածը, ի միջի այլոց, Ալկիվիադէսի վրայ էր ընկել, որովհետև նա յայտնի էր իբրև մի շատ ազատամիտ մարդ։ Նրա բացակայութիւնից օգտւելով, հակառակորդները ժողովրդին աւելի ևս գրգռեցին նրա դէմ և գործն այն աստիճանի հասցրին, որ յատուկ նաւ ուղարկուեց նրան ճանապարհից յետ բերելու։ Բայց Ալկիվիադէսը փախաւ ու Սպարտա գնաց և այս անգամ սկսեց սպարտացիներին օգնել իր խորհուրդներով։

Սիցիլիայի արշաւանքը խիստ անյաջող ելք ունեցաւ աթենացիների համար. նրանք թէ նաւատորմի մեծ մասը կորցրին և թէ մեծ թւով ցամաքային զօրք։ Սպարտացիք, Ալկիվիադէսի խորհրդով, այնպէսի մի տեղ գրաւեցին, որտեղից կարողանում էին միշտ անհանգիստ անել Աթէնք քաղաքը։ Սպարտական գլխաւոր զօրավար Լիզանդրն էլ, որ մի շատ խորամանկ ու նենգամիտ մարդ էր, Աթէնքի դէմ դաշնակցութիւն կապելով Փոքր-Ասիայի սպարսից կառավարիչ Փոքր-Կիւրոսի հետ, սկսեց սպրսատմբութեան դրդել Աթէնքի թէ դաշնակիցներին և թէ ազնւականներին։ Այս վերջիններին յաջողւեց շուտով իշխանութիւնն իրանց ձեռքն առնել ու մի շարք յեղաշրջումներ կատարել կառավարչական կազմի մէջ (411 թ.

Ք. ա.)։ Կարճ ժամանակի մէջ գուցէ նախկին դեմոկրատական կարգերից ոչ մի հետք չը մնար Աթէնքում, եթէ նրա ծովային ու ցամաքային զօրքերը չը հրաժարուէին հէնց սկզբից հնազանդել նոր կառավարութեանը։ Այդ բանից յետոյ առած դեմոկրատիան նորից գլուխ բարձրացրեց, տապալեց արիստոկրատիային և կրկին դեմոկրատական կարգեր հաստատեց Աթէնքում։

Այդ միջոցին Աթէնքի նաւատորմը Ալկիվիադէսին հրաւիրել ու իրան հրամանատար էր ընտրել, և սա սպարտացիների դէմ մի շարք փառաւոր յաղթութիւններ տանելուց յետոյ, մեծ փառքով ու պատուով իր մայրենի քաղաքը վերադարձաւ։

Կարճ ժամանակից Ալկիվիադէսը ստիպւած եղաւ երկրորդ անգամ Աթէնքից փախչել։ Մի անյաջող ճակատամարտից յետոյ, որին Ալկիվիադէսը մինչև իսկ չէ մասնակցել, նրա հակառակորդները դարձեալ նրան մեղադրեցին և նորից սկսեցին ժողովրդին նրա դէմ գրգռել։ Այս անգամ նա փախաւ իր կալւածը, որ Թրակիայումն էր գտնւում։

Ալկիվիադէսի հեռանալուց յետոյ աթենացիների գործերը, գնալով, աւելի ու աւելի վատացան։ Նրանց կրած պարտութիւններից սիրտ առած դաշնակիցները միմեանց յետևից ըմբոստացան ու երես դարձրին Աթէնքից։ Պելոպոնէսեան նաւատորմը, սպարտական Լիզանդր զօրավարի հրամանատարութեամբ մի շարք փառաւոր յաղթութիւններ տանելուց յետոյ, վերջնականապէս խորտակեց աթենական նաւատորմը Հելեսպոնտի ափերում և ուղղակի Աթէնքի վրայ արշաւեց։ Սպարտացիներին ծովի վրայ շատ օգնում էին պարսիկները, որոնք յոյս ունէին նորից տիրանալ պարսկական պատերազմների ժամանակ կորցրած կղզիներին։ 404 թւականին սպարտացիք պաշարեցին Աթէնքը թէ ծովի և թէ ցամաքի կողմից և

քաղցով ստիպեցին անձնատուր լինել։ Աթենացիք հարկադրւած էին ընդունել յաղթողների առաջարկած բոլոր պայմանները. նրանք պարտաւորւում էին Սպարտային յանձնել նաւատորմի մնացորդը, քանդել Աթէնքի պաշտպանութեան համար շինւած պարիսպները և ոչնչացնել աթենական դաշնակցութիւնը։

Սպարտացիների յաղթելով, Աթէնքում ազնւականները նորից գլուխ բարձրացրին. ոչնչացուցին դեմոկրատական բոլոր կարգերը և դարձեալ խոշոր կալւածատէր ազնւականների իշխանութիւնը հաստատուեց։ Աթէնքը սկսեց կառավարւել 30 բռնապետների ձեռքով, որոնք իրանց դիրքը հաստատ պահելու նպատակով, մօտ 1500 մարդ կախեցին ու սպանել տւին։

ՍՊԱՐՏԱՅԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Պելոպոնէսեան պատերազմից յետոյ, յունական բոլոր մանր տէրութիւնների վրայի հոգեմոնիան (գերիշխանութիւնը) Սպարտային անցաւ, որն այժմ ամենազօրաւոր պետութիւնն էր Յունաստանում։ Սպարտացիք ամեն տեղ ոչնչացրին դեմոկրատական կարգերն ու խոշոր կալւածատէր ազնւականների իշխանութիւնը հաստատեցին։ Ամեն մի քաղաքում նրանք 10 կառավարիչներ նշանակեցին, որոնց նախագահը միշտ սպարտական զօրքի գլխաւորն էր հանդիսանում։

Երկրի կատարեալ տէրերը դարձած ազնւականներն սկսեցին ամեն տեղ սաստիկ նեղել ժողովրդի միւս դասակարգերն և, իշխանութիւնն իրանց ձեռքում պինդ պահելու նպատակով, սոսկալի հալածանքներ սկսեցին հակառակորդների դէմ։ Այդ պատճառով էլ կարճ ժամանակից, ամեն տեղ խիստ դժգոհութիւն սկսւեց Սպարտայի ու նրա ստեղծած վարչական կարգերի դէմ։ Նա-

մանաւանդ անտանելի էր կալւածատէր ազնւականների տիրապետութիւնը այնպիսի երկիրներում, ուր արդիւնաբերական գործունէութիւնն ու վաճառականութիւնը սաստիկ զարգացած լինելով, երկրի իսկական տէրերը փողատէր դեմոկրատ տարրերն էին հանդիսանում։ Ընդարձակ իրաւունքներ վայելելու և ազատ օրէնքով կառավարւելու սովորած արդիւնաբեր և առևտրական ժողովրդին անտանելի էր ազնւականների կաշկանդիչ լուծը։

Զափազանց դժգոհ էին Սպարտայի գերիշխանութիւնից և այն կղզիների բնակիչները, որոնք դաւաճանել էին Աթէնքին, սրան վճարւող տուրքերից ազատւելու յոյսով։ Սպարտացիք ոչ միայն չազատեցին նրանց տուրքերից, այլ աւելի ևս մեծ տուրքեր սկսեցին վերցնել նրանցից։ Իրանց գերիշխանութիւնը անխախտ պահպանելու համար, նրանք ստիպւած էին թէ ծովային և թէ ցամաքային ահագին զօրք պահել։ Իսկ դրանց պահպանութեան համար կատարւող մեծաքանակ ծախսերը հոգացւում էին գլխաւորաբար հէնց այն ժողովուրդներից վերցրւող տուրքերով, որոնց հնազանդութեան մէջ պահելու համար պահւում էին այդ զինւորական ոյժերը։

Կարճ ժամանակի մէջ ամենուրէք խռովութիւններ սկսւեցին, և ամենից առաջ Սպարտայի լուծը թօթափեց Աթէնքը։ 30 բռնապետների հալածանքներից թէրէ քաղաքը փախած աթենացիք, զօրք հաւաքելով, խուժեցին Ատտիկա և գրաւեցին Աթէնքի նաւահանգիստ Պիրէյը։ Բռնապետների ուղարկած զօրքը պարտութիւն կրեց, ապստամբները մտան Աթէնք, կոտորեցին 30 բռնապետներից շատերին և նորից դեմոկրատիայի իշխանութիւնը վերականգնեցին։

Սպարտան չը միջամտեց, որովհետև այդ ժամանակ պարսիկների հետ պատերազմելու էր նա պատրաստւում։

Այդ պատերազմը սկսւելուց յետոյ յունական միւս երկիրներն էլ գլուխ բարձրացրին Սպարտայի դէմ։

ՍՊԱՐՏԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԴԷՄ

Քանի դեռ պելոպոնէսեան պատերազմը շարունակւում էր, սպարտացիք սաստիկ բարեկամ էին պարսիկներին, որոնց օգնութեամբ էր, որ նրանք Աթէնքի ոյժը խորտակեցին։ Բայց հէնց որ պելոպոնէսեան պատերազմը վերջացաւ ու Սպարտայի հեգեմոնիան հաստատւեց Յունաստանում, նրանք իրանց դիրքը փոխեցին դէպի Պարսկաստանը։

Այդ ժամանակներում պարսից Արտաքսերքսէս թագաւորի փոքր եղբայր Կիւրոսը, որ Կապադոկիայի սատրապն էր, թագաւորական գահին տիրանալու նպատակով, ապստամբել էր եղբօր դէմ և Սպարտայից օգնութիւն էր խնդրել։ Սպարտացիք մտածելով թէ Կիւրոսի յաջողութեան դէպքում իրանք էլ մի որև է բաժին կը ստանան, 10 հազար հոգուց բաղկացած մի զօրաբանակ ուղարկեցին Պարսկաստան։ Բայց Կիւրոսի ձեռնարկութիւնն անյաջող դուրս եկաւ և նա սպանւեց կռւի մէջ Բաբելոնի մօտերքում։ Յունական «տաս հազարից բաղկացած» զօրաբանակը ստիպւած էր ահագին նեղութիւններով երկիր վերադառնալ։

Սպարտայի վարմունքից զայրացած Արտաքսերքսէսը, նրանից վրէժ առնելու դիտաւորութեամբ, այնուհետև սկսեց սաստիկ նեղել Փոքր-Ասիայի յունական գաղութները և այդ էլ հէնց առիթ դարձաւ Սպարտայի համար պարսիկների դէմ պատերազմ սկսելու։

Պատերազմը սկսելով, սպարտացիք այնպիսի յոյս ունէին, թէ յունական բոլոր տէրութիւնները կը միանան իրանց հետ և կռիւն ընդհանուր յոյն-պարսկական պատե-

բազմի բնաւորութիւն կը ստանայ։ Սակայն նրանք սաստիկ սխալւած էին։ Աթէնքը, Թէբէն, Կորնթոսն ու Արգոսը ոչ միայն զանազան պատճառաբանութիւններով հէնց սկզբից հրաժարւեցին մասնակցել պատերազմին, այլ միմեանց հետ գաղտնի դաշնակցութիւն կապելով, գլուխ բարձրացրին Սպարտայի դէմ, երբ պատերազմն արդէն սկսւած էր։ Սպարտացիք հարկադրւած էին դադարեցնել պատերազմը և խաղաղութիւն կնքել պարսիկների հետ ամենաանպատեհ պայմաններով. նրանք Պարսկաստանին էին յանձնում Փոքր-Ասիայի այն բոլոր յունական գաղութները, որոնց նոյն Պարսկաստանի լուծից ազատելու համար, այնչափ մեծ զոհողութիւններ էին արւած Թեմիստոկլէսի և Արիստիդէսի ժամանակ։ Դրա փոխարէն պարսիկներն էլ պարտաւորւում էին օգնել Սպարտային դրամով և ցամաքային ու ծովային զօրքերով, որպէսզի նա նորից իր հեգեմոնիան հաստատի Յունաստանում։ Յունական պետութիւնների միջև եղած բոլոր միութիւններն ու դաշնակցութիւնները, բացի պելոպոնէսեան դաշնակցութիւնից, լուծւած յայտարարւեցին։

Չը նայելով սպարտացիների գործ դրած խստութիւններին և պարսիկների նրանց ցոյց տւած աջակցութեանը, կալւածատիրական Սպարտայի գերիշխանութիւնը Յունաստանում երկար չը տևեց։ Կարճ ժամանակից դեմոկրատական տէրութիւնները նորից ապստամբեցին Սպարտայի դէմ։ Ապստամբութիւնն այս անգամ տարածւեց նաև Պելոպոնէսեան երկիրներում, որոնք մինչ այդ ժամանակ միշտ հաւատարիմ էին մնացել Սպարտային։ Ներքին անվերջ խռովութիւններն ու կռիւները վերջ ի վերջոյ սաստիկ թուլացրին թէ Սպարտային և թէ միւս բոլոր յունական պետութիւններին։ Իսկ այդ հանգամանքից մեծ յաջողութեամբ Մակեդոնիան օգտւեց, որ և նւաճեց նրանց։

ՔՍԵՆՈՖՈՆՏԻ ՊԱՏՄԱԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Փոքր Կիւրոսին օգնութեան գնացած յունական 10 հազար զօրքը Հայաստանի վրայով հայրենիք վերադարձաւ։ Այդ զօրաբանակի գլխաւորներից մէկը՝ Քսենոֆոնտ, իր «Անաբազիս» անունով աշխատութեան մէջ, մանրամասն նկարագրելով իրանց կատարած ճանապարհորդութիւնը, բաւականին տեղեկութիւններ է հաղորդում այն ժամանակւայ Հայաստանի մասին.

Վշտասպեան Դարէհի ժամանակից սկսած Հայաստանը Պարսից ընդարձակ պետութեան մի նահանգն էր կազմում և կառավարւում էր սատրապներով։ Հայերն առհասարակ շատ հաւատարիմ էին պարսից գահակալներին և միշտ նրանց կատարած զանազան արշաւանքներին մասնակցում էին։ Այսպէս օրինակ՝ յոյն-պարսկական պատերազմների ժամանակ, Քսերքսէսի բանակում հայերից մի առանձին զօրամաս կար, փոխուգացիների ձևով զինւած, որ կռւում էր Արտոքմէս պարսիկ զօրապետի հրամանատարութեամբ։ Իսկ Փոքր Կիւրոսի ապստամբութեան ժամանակ, չը նայելով որ Հայաստանը կապադոկիայի մերձաւոր հարևանն էր, այնուամենայնիւ հայերը Արտաքսերքսէս Թագաւորին հաւատարիմ մնացին։

«Տաս հազար» յոյները, Քսենոֆոնտի ասելով, բազմաթիւ նեղութիւններ են կրում Հայաստանն անցնելիս, մինչև որ կարողանում են Սև ծովի ափերին հասնել։ Վերադարձը սկսել էր բռնելուն մօտից։ Բաւականին թւով մարդիկ կորցնելուց յետոյ, յոյները մեծ նեղութիւններով վերջապէս հասնում են Կենտրիտ գետին (այժմ Բոխտան սու), որը Հայաստանի սահմանն էր կազմում։ Լուսադեմին նրանք տեսնում են, որ գետի միւս ափում ձիաւոր զօրք է հաւաքւում, գետն անցնելը թոյլ չտալու համար, իսկ մերձակայ բլուրների վրայ էլ հետիոտն զօրք, որպէսզի արգելնեն Հայաստան մտնելու։ Արևելեան Հայաստանի սատրապ Օրոնտի զօրքերն էին այդ, որ բաղկացած էին հայերից, մարդերից (քրդական ցեղ էր) ու խալդերից և որ զինւած էին ահագին վահաններով ու նիզակներով։ Յոյներին յաջողւում է խորամանկութեամբ գետն անցնել, և Օրոնտն իր զօրքերով յետ է քաշւում։

Մօտ 30 վերստ անցնելուց յետոյ, յոյները մի մեծ գիւղ են հասնում, ուր սատրապի պալատն էր գտնւում և որտեղ տների մեծ մասն աշտարակներ ունէին։ Այդ տեղից գարձեալ 5 օր ճա-

նապարհ գնալուց յետոյ յոյները հասնում են Տելբրաս գետին (այժմ Սև Ջուր), որի ափին բազմաթիւ գիւղեր կային։ Այդ երկիրը կոչւում էր Արևմտեան Հայաստան, որի սատրապը պարսից Թագաւորի մօտիկ բարեկամ Տիրիբազն էր։ Սա մի քանի զինուորներով, ձիու վրայ նստած, ընդառաջ է գալիս յոյներին և Թարգմանի միջոցով խոստանում է Թշնամաբար չը վերաբերուել նրանց, եթէ միայն յոյները էլ չեն հրդեհի գիւղերը և կը բաւականանան ժողովրդից վերցրած պաշարով։ Այդ իմաստով դաշինք է կապւում յունական զօրաբանակի և Տիրիբազի միջև։

Գիշերը մեծ ձիւն է գալիս, և յոյները վաղ առաւօտից վճռում են մի քանի մասերի բաժանուել ու գիւղերը ցրուել։ Զօրքի գլխաւորները պահում են տներում քնելու, իսկ զինուորները՝ բաց երկնքի տակ։ Երկրորդ գիշերը աւելի մեծ ձիւն է գալիս, և զինուորներն ամբողջապէս ծածկւում են ձիւնով։ Այդ բանից սարսափած յոյները շտապում են հեռանալ այդ երկրից։ Մի քանի օրւան ճանապարհ կտրելով, նրանք անցնում են Եփրատը և այժմեան Կարին քաղաքի մօտերն են հասնում։ Երեկոյեան դէմ նրանք մի խումբ կանանց ու աղջիկների են պատահում մի գիւղի մօտ, որոնք մօտակայ աղբիւրից ջուր էին տանում։ Կանանց այն հարցին, թէ ովքեր են նրանք, յոյները Թարգմանի միջոցով պատասխանում են պարսկերէն.

—Թագաւորի կողմից սատրապին ուղարկած զօրքն ենք։

—Սատրապն այստեղ չէ, ասում են կանայք, նա մի ֆարսաղ (մօտ 7 վերստ) հեռաւորութեան վրայ է գտնւում։

Յոյներն այդ կանանց հետ գիւղն են մտնում և, մի քանի մասի բաժանուելով, ցրւում են մերձակայ միւս գիւղերն էլ։ Այդ գիւղերում բոլոր տները գետնափոր էին։ Դրանց մէջ մարդիկ ու անասունները միասին էին ապրում։ Յոյները այդ երկրում մեծ առատութեամբ ցորեն, գարի, զանազան տեսակի չորացած մրգեր, չամիչ և այլ ուտելու բաներ են գտնում։ Այդտեղ գարուց մի տեսակ խմիչք էին պատրաստում, որ անսովոր մարդու համար սաստիկ թունդ էր և խմողն իսկոյն հարբում էր։ Այդ խմիչքը պահւում էր կարասներում, որտեղից էլ հէնց ուղղակի խմում էին եղեգնեայ խողովակներով։ Երևի հէնց այդ խմիչքի ազդեցութեան տակ, յոյները այդ գիւղերում շատ մեծ անկարգութիւններ են անում ու բռնութիւններ գործ դնում անպաշտպան ժողովրդի վրայ։ Այսպէս օրինակ՝ աթենացի Լոխակ Պոլիկրատ անունով զինուորականը յարձակւում է մի գիւղի վրայ ու

բռնաւորում բոլոր բնակիչներին իրանց տանուտէրի հետ միասին։ Նա խլում է 17 ձի, որ նշանակած էին պարսից Թագաւորին իբրև տուրք ուղարկելու համար, և տանուտէրի 9 օրւան ամուսնացած աղջկանն ու տղին։

Քսենոֆոնտը, որ իր զօրամասով յետ էր մնացել և աւելի ուշ հասել իջևանի համար ընտրած վայրը, լսելով Պօլիկրատի վարմունքը, իր մօտ ճաշի է կանչում վիրաւորուած տանուտէրին, մխիթարում է նրան, խոստանալով վերադարձնել խլած աղջկանն ու տղին, միայն թէ նա ճանապարհ ցոյց տայ դէպի Սև ծովը գնալու։ Տանուտէրը խոստանում է և ի նշան իր հաւատարմութեան, գետնում պահւած հին գինու տեղն է ցոյց տալիս։ Բայց յոյները դարձեալ չեն վստահանում նրան և շարունակ իրանց հսկողութեան տակ են պահում ծերունուն։

Լուսաբացին, երբ Քսենոֆոնտը տանուտէրի հետ գնում են առաջաւոր գունդի հրամանատար Խէյրիսոֆին փնտռելու, նրանք ամեն տեղ գիւղերում յոյն զինուորներին քէֆ անելիս են գտնում։ Քսենոֆոնտին էլ են հիւրասիրում ամեն տեղ, առաջարկելով նրան ուտել ոչխարի, այծի, խոզի, հորթի և հաւի միս, ցորենի ու գարու հաց և այլն։ Զինուորները տանուտէրին նոյնպէս առաջարկում են մի որևէ բան վերցնել յիշատակի համար, բայց նա ամեն բանից հրաժարւում է, խնդրելով միայն ազատ արձակել գերի բռնւած իր ազգականներին։ Խէյրիսոֆի մօտ գալով, Քսենոֆոնտը այնտեղ բոլորին քէֆ անելիս է գտնում վրանների մէջ խոտէ պահկներ գլխներին դրած։ Քէֆ անողներին ծառայում էին հայ տղերք, գոյնզգոյն հագուստներով։

Խէյրիսոֆը Թարգմանի միջոցով հարցնում է տանուտէրին, թէ այս ինչ երկիր է և ում համար են այնքան շատ ձիեր պահւում։

—Այս երկիրը,—պատասխանում է տանուտէրը,—կոչւում է Հայաստան, ձիերը պահւում են պարսից Թագաւորին տուրք տալու համար։ Հայաստանի հարևան երկիրը Խալիբներին է պատկանում, և հէնց այդ երկրով էլ պէտք է յոյները գնան։

Գնալու ժամանակ Քսենոֆոնտը իր ծերացած ձին տալիս է տանուտէրին, պատւիրելով նրան լաւ չաղացնել և ապա գոհ բերել աստւածներին, իսկ ինքը վերցնում է պարսից Թագաւորին ուղարկւելիք ձիերից մէկը։ Մի մի հատ ձի էլ նա բոլոր զինուորական գլխաւորներին է տալիս։ Տանուտէրին էլ հարկադրում են մինչև հայկական սահմանը առաջնորդել իրանց։ Ճանապարհին,

երեք օր ոչ մի գիւղի չը հանդիպելով։ Եէյրիսոճը կասկածում է տանուտէրի վրայ, թէ մի գուցէ նա դիտմամբ է յոյներին ամայի տեղերով տանում, և ծեծում է նրան։ Ի վերջոյ վիրաւորւած տանուտէրը գիշերը փախչում է, և յոյները առանց առաջնորդի են շարունակում իրանց ճանապարհը, մինչև որ հասնում են Պոնտոս և այնտեղից էլ, նաւեր նստած, վերադառնում Յունաստան։



ԳԵՂԱՐՒԵՍՏՆ ՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հին աշխարհի և ոչ մի երկրում գեղարւեստն ու գիտութիւնները այնպիսի զարգացման չը հասան, ինչպէս Յունաստանում։ Շատ վաղ ժամանակից սերտ յարաբերութեան մէջ մտնելով արևելեան երկիրների ու ազգերի հետ, յոյները նրանցից շատ բան փոխ առան ու սովորեցին։ Բայց իրանց փոխ առածն ու սովորածը նրանք շատ աւելի լաւ մշակեցին ու չը տեսնւած կատարելագործութեան հասցրին։

Գեղարւեստն ու գիտութիւնները ամենից առաջ Փոքր-Ասիայում և կղզիներում ապրող յոյների մէջ ըսկսեցին ծաղկել։ Սրանք աւելի մօտ գտնւելով եգիպտացիներին, Բաբելոնին և այլ ասիական երկիրներին, շատ աւելի վաղ էին ծանօթացել այդ տեղերում ծաղկած քաղաքակրթութեան զանազան ճիւղերի հետ։ Սակայն յունական քաղաքակրթութեան, գեղարւեստի ու գիտութիւնների զարգացման ամենափայլուն կենտրոնը Աթէնքը դարձաւ, որտեղից էլ նրանք տարածւեցին միւս բոլոր

յունական և այլ երկիրներում ու վերջն էլ եւրոպական քաղաքակրթութեան հիմքը կազմեցին։

Պարսկական պատերազմների, ինչպէս և ծաղկած վաճառականութեան շնորհով խիստ հարստացած աթենացիք ամենից աւելի միջոց և ժամանակ ունէին գեղարւեստով ու գրականութեամբ պարապելու։ Հէնց այդ պատճառով էլ ոչ մի տեղ ամբողջ Յունաստանում այնպէս չէին գնահատւած գեղարւեստն ու գրականութիւնը, ինչպէս Աթէնքում։ Գեղարւեստագէտները այդ քաղաքում էին լաւ վարձատրւում և մեծ փառքի արժանանում։

Զարմանալի մեծ կատարելագործութեան հասցրին յոյները նամանաւանդ գեղարւեստի երկու ճիւղերը՝ քանդակագործութիւնն ու ճարտարապետութիւնը, որոնք սերտ կապ ունէին յունական կրօնի հետ։ Քանդակագործութիւնն անհրաժեշտ էր աստւածների արձաններ շինելու, իսկ ճարտարապետութիւնը՝ հոյակապ տաճարներ կառուցանելու համար։


Հաւատալով, որ բոլոր աստւածները մարդկային կերպարանք ու կազմւածք ունեն, յոյները միևնոյն ժամանակ հաւատում էին, որ նրանք իրանց արտաքինով սովորական մարդկանցից ամենագեղեցիկն ու կատարեալն են։ Եւ այդ կրօնական պահանջը յագեցնելու համար, յոյն քանդակագործներն աշխատում էին իրանց շինած արձանները ամենագեղեցիկ տղամարդու կամ կնոջ նմանեցնել։ Մարմնամարզական զանազան մրցութիւններն էլ չափազանց նպաստում էին քանդակագործութեան զարգանալուն։ Դրանց շնորհով մարդկանց մկանունքները խիստ զարգանում և քաջառողջ էին դառնում։ Բացի դրանից՝ Յունաստանի կլիման շատ մեղմ լինելու պատճառով, մարմնամարզական մրցութիւնները մեծ մասամբ կատարւում էին մերկանդամ, և քանդակագործները հնարաւորութիւն ունէին ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրելու մարդկային մարմնի բոլոր գեղեցկութիւնները։ Պակաս չէր նպաստում Յունաստանի քանդակագործութեանը և այնտեղի առատութեամբ գտնւող փափուկ մար-

մարը, որի վրայ շատ աւելի հեշտ է քանդակելը, քան միւս պինդ տեսակի քարերի վրայ։

Յունաստանի ամենանշանաւոր քանդակագործը Փիդիասն էր, Պերիկլէսի ժամանակակիցն ու նրա մօտիկ բարեկամը, որի աշխատութիւնները յունական քանդակագործութեան մի-մի գլուխ գործոց են համարւում։

Փիդիասի ստեղծագործութեան ամենամեծ առաւելութիւնը նրանումն էր, որ նա կարողանում էր իր աշխատութիւնների մէջ ամենագեղեցիկն ու վեհութիւնը միացնել զարմանալի պարզութեան հետ։ Թէ Փիդիասի և թէ միւս նրա ժամանակակից՝ քանդակագործների բոլոր աշխատութիւնները մի ուրիշ մասնաւոր յատկութիւն ևս ունէին. այն է՝ աստուածային վեհութիւն։ Դրանք աշխատում էին իրանց շինած արձաններին այնպիսի գեղեցկութիւն, դիրք և արտայայտութիւն տալ, որ միանգամայն տարբեր լինի սովորական մարդկայինից։ Հէնց այդ յատկութիւնով են նրանց աշխատութիւնները տարբերւում յաջորդ ժամանակաշրջանի քանդակագործների աշխատութիւններից։ Սրանք թէև նոյնպէս աստուածների արձաններ են, բայց աւելի մարդկային արտայայտութիւն ու դիրք ունեն։ Այդ ժամանակաշրջանի քանդակագործներից նշանաւոր էր Պրակսիտելը։

Քանդակագործութիւնից բոլորովին յետ չէր մնում նկարչութիւնը, որը նոյնպէս շատ բարձր զարգացման էր հասել Յունաստանում։ Նկարիչներից մեծ հռչակ ունէին՝ Պօլիգնոտը, որը ժամանակակից էր Պերիկլէսին, և Ապելլէսը յաջորդ ժամանակաշրջանում։ Այս վերջինի նկարներից մասնաւորապէս նշանաւոր էր ծովի ալիքների միջից ծնուող Աֆրոդիտէն։



Դորիական ոճի սիւն

Յունական ճարտարապետութիւնը նոյնպէս իր զարգացման ամենաբարձր աստիճանին հասաւ Պերիկլէսի դարում։ Յունական ճարտարապետութեան գլխաւոր յատկանիշը, պարսկականի նման, սիւներն էին։ Սրանց ձևերի համաձայն յունական ճարտարապետութիւնը երեք տեսակի կամ ոճի էր բաժանւում, դորիական, յոնիական և կորնթական։ Դորիական ոճն այն է, որ սիւները չափազանց պարզ կերպով են շինած, առանց որև է զարդարանքի։ Սիւնը դրւում էր ուղղակի գետնի վրայ, առանց պատւանդանի, և սիւնի գագաթն էլ մի մի պարզ քառանկիւնի քար էր ներկայացնում։



Յոնիական ոճի սիւն

Յոնիական ոճի սիւները շատ աւելի թեթև ու գեղեցիկ էին շինւում։ Նրանք դրւում էին յատուկ պատւանդանների վրայ, իսկ գագաթները զարդարած էին դոչի ոլորուն եղջիւրների ձև ունեցող քանդակներով։



Կորնթական ոճի սիւն

Կորնթական ոճը աւելի բարդ էր։ Այդ ոճի սիւները նոյնպէս յատուկ պատւանդանների վրայ էին դրւում, բայց գագաթները աւելի մեծ էին և տերևանման քանդակներով շատ աւելի շքեղ զարդարուած։

ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յունաստանը գեղարւեստական գրականութեան հայրենիքն է համարւում։ Այնտեղ են ծնունդ առել ու զարգացել գեղարւեստական բանաստեղծութեան բոլոր ձևերը՝ դիւցազներգութիւնը, քնարերգութիւնն ու ողբերգութիւնը։

Յունական դիւցազներգութեան ամենափառաւոր նմուշները Հոմերոսի Իլիականն ու Ոդիսականն են, որոնց նիւթը աստուածների ու հերոսների քաջագործութիւններն են կազմում։ Քնարերգական աշխատութիւններից շատ նշանաւոր էին Անակրէօնի և Սաֆոյի (կին) բանաստեղծութիւնները, որոնց մէջ հեղինակները վառ գոյներով կեանքիւրաքանչիւրութիւնները ու ախորժութիւնները էին երգում։



Սոֆոկլէս

Ամենից աւելի Յունաստանում զարգացաւ թատերգութիւնը, որն սկզբում նոյնպէս կրօնական բնաւորութիւն էր կրում։ Յետոյ թատերգութեան նիւթ սկսեցին ծառայել պատմական պատերազմները։ տեղի ունեցած զանազան դէպքերը և մանաւանդ դեմոկրատիայի պայքարն ազնւականութեան դէմ։ Թատերգութիւնը զարգանալով երկու ճիւղի բաժանուեց. ողբերգութիւն և կատակերգութիւն։ Յունական ողբերգուներից ամենանշանաւորն էին՝ Սոֆոկլէսը և Էւրիպիդէսը, իսկ կատակերգուներից՝ Արիստոֆանոսը։ Սրանց աշխատութիւնները սաստիկ սիրած էին ժողովրդի կողմից և շատ յաճախ էին ներկայացւում թատրոնում։

Այդ հեղինակների ամենանշանաւոր աշխատութիւններն են՝ Սոֆոկլէսի «Էդիպ թագաւորը», «Անտիգոնա» և ուրիշներ, Էւրիպիդէսի «Ինֆիգենիան Տաւրիդում», «Մեդէան» և Արիստոֆանոսի «Ասպետները», «Թռչուններ» և այլն։


Այդ երեք բանաստեղծներն էլ ապրում էին Աթէնքում V-րդ դարում, երբ յունական թատերգութեան զարգացման ամենափայլուն ժամանակն էր։

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Գիտութիւններից Յունաստանում ամենից աւելի զարգացան փիլիսոփայութիւնն ու պատմութիւնը։ Ասիայում, մանաւանդ Եգիպտոսում էլ մարդիկ շատ վաղ ժամանակից փիլիսոփայական հարցերով էին զբաղւում, բայց այդ հարցերն այնտեղ զուտ կրօնական բնաւորութիւն էին կրում։ Այսպէս՝ նրանք աշխատում էին հասկանալ թէ ինչպէս և ով է ստեղծել տիեզերքը, ինչ է լինում մարդը մեռնելուց յետոյ և այլ այդ կարգի խնդիրներ։ Թէև Յունաստանում էլ սկզբում փիլիսոփայութիւնը կրօնական գիտութիւնների շուրջն էր պտտւում, բայց յետոյ յոյն փիլիսոփաները սկսեցին շատ աւելի երկրային ու մարդու համար կենսական խնդիրների բացատրութեամբ զբաղւել։ Այսպէս՝ նրանք աշխատում էին հասկանալ, թէ ինչ բան են երջանկութիւնը, ճշմարտութիւնը, արդարութիւնը, բարոյականութիւնը և այլ այդպիսի խնդիրներ, որոնք սերտ կապ ունէին դեմոկրատիայի ու արիստոկրատիայի միմեանց դէմ մղած կռիւների հետ։ Բայց որովհետև այն, ինչ որ տիրապետող դեմոկրատիայի կամ արիստոկրատիայի համար ճշմարտութիւն և արդարութիւն էր, հակառակ կողմի համար անարդարութիւն ու ստութիւն էր համարւում, ուստի և դուրս եկան այնպիսի գիտնականներ, որոնք ասում էին, թէ բացարձակ, ընդհանուրի համար հաւասարապէս ընդունելի ճշմարտութիւն, արդարութիւն և այլ այդ կարգի խնդիրներ գոյութիւն չունեն, այլ հէնց ինքը մարդն է այդ բոլոր հասկացողութիւնների չափը։ Իւրաքանչիւր մարդ, այդ գիտնականների ասելով, ամեն

բան դատում է իր սեփական տեսակէտով, հետևապէս այն, ինչ որ մէկի համար արդար է, միւսի համար կարող է անարդար համարուել։ Այսպիսի դատողութիւն կամ ուսմունք քարոզողներին «սոփեստ» էին անուանում։


Առաջին սոփեստների արտայայտած այդ պարզ միտքը աշակերտները, աւելի ու աւելի զարգացնելով, չափազանց մեծ ծայրահեղութեան հասցրին։ Նրանք այլևս հերքում էին ամեն մի գիտութիւն և ճարպիկ բառախաղութիւններով ապացուցանում էին, թէ ամեն մի անմտութիւն ճշմարիտ է։ Այդ եղանակով նրանք հերքում և ծաղրի առարկայ էին դարձնում ամեն մի սուրբ գաղափար՝ թէ հայրենասիրութիւն, թէ օրէնք, թէ կրօն և թէ ամեն բան։ Այս սոփեստները շրջում էին քաղաքից քաղաք և, ամեն տեղ փողով իրանց ուսմունքը տարածելով, սաստիկ անբարոյականացնում էին ժողովրդին։ Հէնց այդ ժամանակից է, որ սոփեստ անունը սկսում են վատ և վիրաւորական իմաստով գործածել, որը շարունակւում է մինչև այսօր էլ։ Սոփեստների դէմ առաջին անգամ դուրս եկաւ փիլիսոփայութեան նախահայրը հռամարւող Սոկրատը, որը սոփեստների ճիշտ հակառակն էր քարոզում։



Սոկրատ

Սոկրատը կեանքի վայելքներից խուսափող և վերին աստիճանի պարզ կեանք վարող մարդ էր։ Նա շարունակ ման էր գալիս բոկոտն ու պատառոտած հագուստով և երբէք չէր էլ մտածում աւելի լաւ ապրուստ ունենալու մասին։ Ընդհակառակը՝ նա ասում էր, որ մարդու երջանկութիւնը ոչ թէ կեանքի վայելքների ու շքեղ ապրելու մէջ է կայանում, այլ նրա մէջ, որ մարդը ճշմարտութեան համաձայն կեանք վարի։ Իւրաքանչիւր մարդու հոգու մէջ, Սոկրատի ասելով, թագնուած ճշմարտութիւն կայ։ Իսկ դրան նկատելու կամ գտնելու համար հարկաւոր է միայն, որ մարդ մի քիչ լաւ ուսումնասիրէ ինքն իրան, թէ իր քարոզներով և թէ իր վարած կեանքի եղանակով նա իր ուկնդիրներին սովորեցնում էր առաքինի կեանք վարել, ասելով, որ առաքինութիւնը, գիտութեան նման, մշտական և անփոփոխելի է։

Սոկրատը մինչև իր կեանքի վերջին րոպէն հաւատարիմ մնաց իր ուսմունքին։ Նրա հակառակորդները ամբաստանելով նրան իբրև յունական աստուածների դէմ քարոզող, դատարանի մատնեցին և մահւան դատապարտեցին։ Թէև Սոկրատը հնարաւորութիւն ունէր բանտից փախչելու, որի մասին թախանձանքով խնդրում էին նրա աշակերտներն ու բարեկամները, բայց նա, չկամենալով այդպիսով դաւաճանած լինել իր քարոզած մտքերին, չը լսեց նրանց։ Այն ժամանակւայ սովորութեան համաձայն, նրան թոյն տուեցին խմելու (399 թ. Ք. ա.), և նա մեռաւ 70 տարեկան հասակում։



Պլատոն

Սոկրատը իր ուսմունքի մասին գրաւոր ոչինչ չէր թողել։ Բանաւոր կերպով էր նա միշտ քարոզում։ Նրա գաղափարները գրեց ու աւելի ևս զարգացրեց նրա նշանաւոր աշակերտ Պլատոնը, որը յունական ամենամեծ փիլիսոփաներից մէկը դարձաւ։

Պլատոնը իդէալիստական փիլիսոփայութեան հիմնադիրն է։ Այդ այն ուսմունքն է, որ սովորեցնում է, թէ ամեն բանից առաջ, ամեն ինչի ծնունդ տուղն ու ղեկավարողը իդէան՝ գաղափարն է։ Նիւթը, ինչպէս և կեանքի բոլոր պայմանները երկրորդական տեղ են բռնում։ Մարդիկ բնականից ծնւում են որոշ գաղափար-

նելով, որոնց շնորհով էլ մարդը ընդունակ է դառնում յաւիտենական ճշմարտութիւնը ճանաչելու։

Իր մտածելակերպն այդ ուղղութեամբ առաջ տանելով, Պլատոնն ասում էր, որ մարդիկ կարող են երջանիկ ու հանգիստ կեանք ունենալ այն ժամանակ միայն, երբ իրանց պետական կազմը կը գոհացնի յաւիտենական ճշմարտութեան բոլոր պահանջներին։ Այդ տեսակէտից նա Աթէնքի դեմոկրատական հասարակապետութիւնը ամենավատ կառավարչական ձևն էր համարում, նրան «տգէտ ամբոխի տիրապետութիւն» անուանելով։ Իսկ յաւիտենական ճշմարտութեանը համապատասխանող կառավարչական ձևը նա համարում էր այնպիսի հասարակապետութիւնը, որտեղ կառավարողները միմիայն փիլիսոփաները կը լինեն, որովհետև միմիայն փիլիսոփաներն են վեհ պատկառներով օժտուած և ընդունակ յաւիտենական ճշմարտութիւնը լաւ ճանաչելու։ Այդ հասարակապետութեան մէջ աղնւական դասակարգը պէտք է պինդ օրէնքի ոյժը կազմէ, իսկ ամբողջ մնացած ազգաբնակութիւնը պէտք է միմիայն արդիւնաբերութեամբ պարապի և երկիրը հարբուսացնի։ Այդ հասարակապետութեան մէջ չը պէտք է լինեն ոչ սեփականատիրութիւն և ոչ էլ ընտանիք. բոլորն էլ պէտք է ընդհանուրին պատկանեն։

Բոլորովին այլ կերպ էր մտածում յունական միւս մեծ փիլիսոփան՝ Արիստոտելը, որը Պլատոնի աշակերտն էր և որ զիտական բէալիզմի հիմնադիրը եղաւ։ Արիստոտելը, ընդունելով Սոկրատի հիմնական դաղափարները գիտութեան, դաղափարի ու սրանց նշանակութեան մասին, այնուամենայնիւ չէր ընդունում, թէ մարդիկ բնականից որոշ դաղափարներով են ծնւում։ Նա ասում էր, որ դաղափարները ձևեր են բերում շրջապատի ուսումնասիրութեամբ և բազմաթիւ ստոյգ փորձերից յետոյ միայն։




Արիստոտել

Այդ իսկ պատճառով Արիստոտելը շարունակ ուսումնասիրում էր բնութիւնը, իրանից առաջ եղած փիլիսոփաների քարոզածներն ու այն ժամանակւայ բոլոր գիտութիւնները, և ապա իր փիլիսոփայութիւնը հիմնում իրական (բէալ) փաստերի վրայ։ Նա չէր

երևակայում Պլատոնի նման, այլ աշխատում էր ամեն մի միտք տրամաբանօրէն բղխեցնել իրական փաստերից։ Մարդկային մտածողութեան օրէնքները ուսումնասիրելով, նա հիմք դրեց մի նոր գիտութեան, որ է տրամաբանութիւնը։

Պետական խնդիրների վերաբերեալ Արիստոտելի հայեացքները նոյնպէս սաստիկ տարբերւում էին Պլատոնի ասածներից։ Պետական այս կամ այն կազմը, լինի դա դեմոկրատական թէ արիստոկրատական հանրապետութիւն, կամ թէ միապետութիւն, պէտք է, Արիստոտելի ասելով, համապատասխան լինի մի երկրի ու ժամանակի պահանջներին, այլապէս նա շատ անպէտք ու վնասակար կը դառնայ։ Այդպիսով, շատ սխալ է ասելը, թէ պետական այս կամ այն կազմը, կառավարչական այս կամ այն ձևը յարմար և օգտակար է ամեն երկրի ու ժամանակի համար։



Հերոդոտ


Պատմութիւնն էլ, իբրև գիտութիւն, յոյների ստեղծածն է։ Առաջին նշանաւոր պատմաբանը Հերոդոտն էր, որը ժամանակակից էր Պերիկլէսին և ապրում էր Աթէնքում։ Նա անձամբ ճանապարհորդել էր հին աշխարհի շատ երկիրները—Եգիպտոս, Բաբելոն, Պարսկաստան և այլն—ու նրանց մասին բաւականին տեղեկութիւններ հաղորդել իր՝ «Յունաստանի պատմութիւն» անունով՝ ընդարձակ աշխատութեան մէջ։

Միւս նշանաւոր յունական պատմաբանը Թուկիդիդն էր, որը գրել է Պելոպոնէսեան պատերազմի ընդարձակ պատմութիւնը։ Թէև այդ աշխատութիւնը բոլորովին չէ վերջացած, բայց և այնպէս չափազանց գնահատելի է իր վերին աստիճանի լուրջ բնաւորութեամբ։ Թուկիդիդն իր գրելու ձևով խիստ տարբերւում է Հերոդոտից։ Մինչ այս վերջինը իր գրած պատմական դէպքերին կամ ոչ մի բացատրութիւն չէ տալիս և կամ բացատրում է նախախնամութեան ու աստուածների միջամտութեամբ,

Ֆուկիդիդեան ընդհակառակը աշխատում է ամեն մի դէպքի իսկական պատճառները գտնել։

Ֆուկիդիդի հետևողներից էր պատմաբան Քսենոֆոնտը, որը միևնոյն ժամանակ և Ֆուկիդիդի աշխատութեան շարունակողը եղաւ։ Նա վերջացրեց Պելոպոնէսեան պատերազմի պատմութեան շարունակութիւնն ու գրեց Յունաստանում տեղի ունեցած յետագայ դէպքերի պատմութիւնը։ Քսենոֆոնտը մի քանի ուրիշ աշխատութիւններ էլ ունի, որոնցից Անաբազիս անունով աշխատութեան մէջ նա յունական 10 հազար զինուորների Պարսկաստանից հայրենիք վերադառնալու նկարագրութիւնն է տալիս։

Բացի փիլիսոփայութիւնից ու պատմութիւնից յոյները բաւականին մշակել ու զարգացրել էին նոյնպէս և բնագիտութիւնը, աշխարհագրութիւնը, մաթեմատիկան ու բժշկութիւնը։ Այս վերջինը գիտական հիմքերի վրայ դնողը Հիպոկրատն էր, որը նոյնպէս ժամանակակից էր Պերիկլէսին։



ՄԱԿԵԴՈՆԻԱ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱՁՈՒՄԸ

Մակեդոնիան Յունաստանի հիւսիսումն էր գտնւում։ Դա մի անտառապատ լեռնոտ երկիր էր, որի բնակիչները, թէև նոյնպէս յոյներ էին, բայց կուլտուրապէս շատ յետ էին մնացել և մեծ մասամբ հովւական կեանք էին վարում։ Այդտեղ շատ քիչ քաղաքներ կային, և ժողովուրդը դեռ ևս գլխաւորաբար զիւղերումն էր ապրում ու միապետական թագաւորներով կառավարւում։ Այստեղ էլ թագաւորների իշխանութիւնն սկզբում շատ մեծ չէր. նրանք ստիպւած էին շարունակ կռիւ մղել զանազան նահանգների կառավարիչների դէմ, որոնցից ամեն մէկը մի առանձին կիսանկախ իշխան էր իրանից ներկայացնում։

Թագաւորական իշխանութիւնը Մակեդոնիայում մեծացաւ ու մեծ զօրութեան հասաւ Փիլիպպոս թագաւորի օրով (359—336 թ. Ք. ա.), որը կարճ ժամանակի մէջ, իր բոլոր հակառակորդներին յաղթահարելով, միապետու-

թիւնը հաստատ հիմքերի վրայ դրեց։ Փիլիպպոսն իր մանկութիւնը Յունաստանում էր անցկացրել և յունական շատ լաւ կրթութիւն ստացել։ Մասնաւորապէս նա լաւ ծանօթացել էր Յունաստանի զինուորական կարգերի ու նրանց պատերազմելու եղանակների հետ, այնպէս որ, երբ ինքը թագաւոր դարձաւ, ոչ միայն իր երկրում էլ մտցրեց այդ կարգերը, այլ և, մի քանի փոփոխութիւններ ենթարկելով նրանց, շատ մեծ կատարելագործութեան հասցրեց պատերազմական գործը։ Փիլիպպոսը լաւ ուսումնասիրել էր նոյնպէս և յոյների թէ ուժեղ և թէ թոյլ կողմերը, այնպէս որ յետագայում նա մեծ հմտութեամբ կարողացաւ օգտւել դրանցից։

Իր երկրի ներքին հակառակորդներին յաղթահարելուց ու մերձակայ լեռնաբնակ ժողովուրդներին նւաճելուց յետոյ, Փիլիպպոսն իր ուշադրութիւնը յունական այն գաղթների վրայ դարձրեց, որոնք Թրակիայի ծովափերում էին գտնում։ Դրանց նւաճելով, Մակեդոնիան ազատ ելք էր գտնում դէպի ծովը, և Փիլիպպոսը մի ուժեղ նաւատորմիղ հաստատեց։

Թէ ցամաքի և թէ ծովի վրայ բաւականին զօրաւոր ղէրք ստեղծելով, Փիլիպպոսը սկսել էր ամբողջ Յունաստանը նւաճելու և իր գերիշխանութեանը ենթարկելու մասին մտածել։ Յոյներն այդ միջոցին այն աստիճան զբաղւած էին իրանց ներքին պատերազմներով, որ երկար ժամանակ նոյնիսկ չէին էլ նկատում, թէ ինչպիսի սպառնական վտանգ էր պատրաստւում իրանց հիւսիսում։ Առաջին սթափւողն ու վտանգը նկատողը աթենացիք եղան և այն էլ այն ժամանակ միայն, երբ Փիլիպպոսը, հէնց յոյների հրաւէրով, Յունաստանի ներքին վէճերին միջամտեց և, օգտւելով հանգամանքից, գրաւեց աթենական Օլինթ գաղութը Թեսալիայում։

Փիլիպպոսի ոտնձգութիւնների դէմ առաջին բողոքողը

այն ժամանակւայ ամենանշանաւոր հռետոր աթենացի Դեմոսթէնն էր, որը նախատեսնելով մակեդոնական թագաւորի ձգտումները, իր կրակոտ ճառերով յորդորում էր յոյներին՝ մոռանալ իրանց ներքին պատակտումներն ու միացած ոյժերով Փիլիպպոսի դէմ դուրս գալ։ Նա խորհուրդ էր տալիս նոյնպէս՝ գաղտնի գործակալներ ուղարկել Փիլիպպոսի նւաճած գաղթավայրերը և ապստամբութիւն առաջացնել Մակեդոնիայի դէմ։

Թէև Դեմոսթէնին վերջ ի վերջոյ յաջողւեց դաշնակցութիւն ստեղծել Աթէնքի, Թէբէի և մի քանի այլ յունական պետութիւնների միջև, բայց արդէն ուշ էր։ Դաշնակից զօրքերը, չը նայելով իրանց ցոյց տւած քաջութեանը, մեծ պարտութիւն կրեցին (338 թ. Ք. ա.) և Փիլիպպոսը տիրեց ամբողջ Յունաստանին։

Փիլիպպոսը սակայն ի չարը գործ չը դրեց իր յաղթութիւնը։ Նա շատ մեղմ վարւեց նւաճւած յոյների հետ և թոյլ տւեց իւրաքանչիւր պետութեան իր ուզած ձևով վարել իր երկրի ներքին գործերը։ Նա ստիպեց միայն, որ նրանք վերջ դնեն իրանց ներքին պատակտումներին և միմիայն իր՝ Մակեդոնիայի թագաւորի՝ գերիշխանութիւնը ճանաչեն։ Շուտով նա յունական մի ընդհանուր պատգամաւորական ժողով գումարել տւեց Կորնթոս քաղաքում և առաջարկեց՝ մի մեծ արշաւանք սկսել Պարսկաստանի դէմ։ Այդ առաջարկն ուրախութեամբ ընդունեցին բոլորն էլ և Փիլիպպոսին յունական միացեալ զօրքերի ընդհանուր հրամանատար ընտրեցին։ Բայց Փիլիպպոսին վիճակւած չէր այդ արշաւանքը կատարելու. դեռ նոր էր նա Յունաստանից Մակեդոնիա վերադարձել, արշաւանքի պատրաստութիւններ տեսնելու նպատակով, երբ նրան անձնական վրէժխնդրութեան պատճառով սպանեց իր թիկնապահներից մէկը (336 թ. Ք. ծ. ա)։

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Մ Ե Ծ

Փիլիպպոսի մահից յետոյ մակեդոնական գահը ժառանգեց (336 թ.) նրա որդին Ալեքսանդրը, որը թէև դեռ 20 տարեկան երիտասարդ էր, բայց շուտով երկիրներ նուաճելու և կառավարելու այնպիսի մեծ ընդունակութիւններ ու տաղանդ ցոյց տուեց, որ ժամանակակիցները նրան «մեծ» մականունը տուեցին։ Ալէքսանդրը այն ժամանակուայ նշանաւոր յոյն գիտնական և փիլիսոփայ Արիստոտելի աշակերտն էր։ Սրա ղեկավարութեամբ յունական լաւ կրթութիւն ստացած լինելով, նա մեծ սէր ունէր դէպի գեղարուեստն ու գիտութիւնները և ամեն կերպ աշխատում էր Մակեդոնիայումն էլ տարածել յունական կուլտուրան։



Ալեքսանդր մեծ

Բայց ամենից աւելի Ալեքսանդրը պատերազմն էր սիրում, և սիրում էր մանաւանդ ամենայանդուգն նուաճումներ կատարելը։ Նա իրան ի ծնէ իշխող էր զգում և իր համար անիրագործելի կամ անհնարին ոչ մի բան չէր ընդունում. ինչ որ մտածէր, պէտք է իսկոյն գլուխ բերէր։

Թագաւորական գահը բարձրանալուն պէս, Ալեքսանդրը ստիպւած էր կրկին անգամ նուաճել յունական երկիրները, որովհետև Փիլիպպոսի սպանութեան լուրը երբ տարածւել էր, իսկոյն իրանցում էր ընկել Աթէնքում, Թէբէում և մի քանի այլ յունական քաղաքներում։ Դեմոսթէնը նորից հրապարակ էր եկել իր կրակոտ ճառերով և դրդում էր ժողովրդին

ապստամբել Մակեդոնիայի դէմ ու բոլորովին չը վախենալ նրա «մանուկ» թագաւորից։ Բայց «մանուկ» Ալեքսանդրը այնպիսի արագութեամբ վրայ հասաւ և այնպիսի խիստ դաս տւեց ապստամբներին, որ ամբողջ Յունաստանը սարսափի մէջ ընկաւ և այլևս երբէք չը մտածեց դիմադրութիւն ցոյց տալ երիտասարդ թագաւորին։ Այսպէս Յունաստանը վերստին նւաճելուց և ամեն տեղ կարգ ու խաղաղութիւն հաստատելուց յետոյ, Ալեքսանդրը սկսեց Պարսկաստան արշաւելու պատրաստութիւնները տեսնել։

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ն Ւ Ա Ճ Ո Ւ Մ Ը

Պարսից տէրութիւնն այդ ժամանակ, չը նայելով իր ընդարձակ տարածութեանը, արդէն կորցրել էր իր վաղեմի զօրութիւնը։ Երկար տարիների անյաջող պատերազմները նիւթապէս քայքայել էին ժողովրդին, և տուրքերի տակ ծանրաբեռնւած հպատակ ազգերը այլևս դժւարութեամբ էին տանում պարսից տիրապետութիւնը։ Նրանք շարունակ ապստամբում էին ընդարձակ պետութեան այս կամ այն մասում և այդպիսով աւելի ու աւելի թուլացնում կառավարութեան իշխանութիւնը, որն առանց այդ էլ բաւականին թուլացել էր պալատական անվերջ ինտրիգների ու յեղաշրջումների շնորհով։ Այդ ժամանակ Պարսկաստանի թագաւորը Դարէհ III Կոդոմանն էր, որը չը նայելով իր քաջութեանն ու ազնւութեանը, անկարող էր իր քայքայւող տէրութիւնը փրկել անխուսափելի անկումից։

Ալեքսանդրը ընդամենը 35 թէ 36 հազար յոյն և մակեդոնացի զօրքով, Հելեսպոնտն անցնելով, Փոքր-Ասիա մտաւ։ Այդտեղի պարսից սատրապները միացած ոյժերով Ալեքսանդրի դէմ դուրս եկան, և առաջին ճակատամար-

տը Գրանիկ գետի մօտ տեղի ունեցաւ։ Պարսից բանակի գլխաւոր ոյժը յոյն վարձկաններից կազմւած զօրքն էր, որոնց թիւը մօտ 30,000-ի էր հասնում և որոնք փորձւած զօրավար Մեմնոնի հրամանատարութեան ներքոյ էին գտնւում։ Այդ վարձկան յոյները աւելի երկար դիմադրութիւն ցոյց տւեցին Ալեքսանդրին, և հէնց դրա համար էլ Ալեքսանդրը, նրանց գերելով, Մակեդոնիա ուղարկեց ու հրամայեց՝ բոլորին էլ շղթայակապ անել։

Այդ յաղթութիւնից յետոյ Ալեքսանդրը Փոքր-Ասիայի ափերով անցաւ և այդտեղի բոլոր յունական գաղութները գրաւեց։ Ամենուրեք նրան առանց որևէ դիմադրութեան էին անձնատուր լինում, բացի Հալիկարնաս և Միլետ քաղաքներից, Յաղթական երիտասարդ թագաւորը ամեն տեղ էլ դեմոկրատական կարգեր էր հաստատում և բնակիչներին ազատում հարկերից։

Փիլնիկեան նաւատորմիղը շատ աշխատեց Ալեքսանդրի հաղորդակցութիւնը կտրել Եւրոպայի հետ, բայց չը յաջողեց. նա անցաւ Փոքր-Ասիայի ամբողջ հարաւային ափը և հասաւ Սիրիա։ Պարսից Դարէհը, կամենալով յանդուգն երիտասարդ թագաւորի յաղթական երթը կանգնեցնել, իր գլխաւոր բանակով նրա առաջ դուրս եկաւ և թշնամիներն Իսա դաշտավայրում հանդիպեցին։ Բայց այստեղ էլ պարսիկները պարտւեցին։ Դարէհը փախաւ, իսկ Ալեքսանդրը առանց դիմադրութեան միմեանց յետևից նւաճեց Սիրիայի ու Փիլնիկիայի բոլոր քաղաքները։ Միայն Տիւրոսը յամառ դիմադրութիւն ցոյց տւեց։

Հաճութեամբ անձնատուր եղաւ Ալեքսանդրին և եգիպտոսը, ուր Ալեքսանդրը գնաց Սիրիան ու Փիլնիկիան նւաճելուց յետոյ։ Եգիպտացիք միշտ ատելութեամբ էին վերաբերւում պարսիկներին և մեծ դժկամակութեամբ տանում նրանց լուծը։ Իսկ երբ լսեցին, թէ ինչպէս Ալեքսանդրը մեծ յարգանքով է վերաբերւում դէպի իր

նւաճած ազգերի կրօնն ու սովորութիւնները, նրանք մինչև իսկ ուրախութեամբ ընդունեցին նւաճողներին։ Ալեքսանդրը Եգիպտոսում, այնտեղ, ուր Նեղոսի դելտայի ճիւղերից մէկը Միջերկրական ծովն է թափւում, մի քաղաք շինեց, որին իր անունով Ալեքսանդրիա անւանեց։

Այդ քաղաքը կարճ ժամանակի մէջ յունական քաղաքակրթութեան ու վաճառականութեան կենտրոնը դարձաւ և երեք դար շարունակ աշխարհի ամենամեծ և ամենահարուստ քաղաքն էր համարւում։ Ալեքսանդրիան դեռ այսօր էլ Միջերկրական ծովի վրայ եղած ամենավաճառաշահ ու գեղեցիկ նաւահանգիստներից մէկն է։

Մակեդոնացիների յաղթութիւններից սաստիկ ընկճւած Դարէհը հաշտութիւն առաջարկեց, խոստանալով Ալեքսանդրին տալ Եփրատից դէպի արևմուտք գտնւած բոլոր պարսկական երկիրները։ Միևնոյն ժամանակ նա երիտասարդ թագաւորին իր աղջիկներից մէկի ձեռքն էր առաջարկում։ Ալեքսանդրն այդ բոլորը մերժեց և Եգիպտոսից դէպի պարսից թագաւորութեան խորքերն արշաւեց։ Դարէհը ստիպւած էր վերջին անգամ իր բաղտը փորձել. նա նորից մի մեծ բանակ կազմեց և գնաց Ալեքսանդրի առաջը կտրելու։ Թշնամիները հանդիպեցին Ասորեստանում, Գավգամել քաղաքի մօտ՝ Արբելայում։ Պատերազմը չափազանց կատաղի էր, բայց յաղթութիւնը դարձեալ մակեդոնական ու յունական միացեալ զօրքերի կողմը մնաց։ Դարէհը փախաւ, և փախչելու ժամանակ սպանւեց իր սատրապներից մէկի ձեռքով։

Դրանից յետոյ Ալեքսանդրն այլևս առանց արգելքի գրաւեց պարսից բոլոր երկիրները իրանց նշանաւոր մայրաքաղաքներով—Բաբելոն, Շուշ, Եկբատան, Պերսեպոլիս—ու նրանց մէջ գտնւած անսահման հարստութիւններով։ Ամեն տեղ սիրով էին ընդունում Ալեքսանդրին, որն ա-

մեն մի քաղաք մտնելիս զոհ էր մատուցանում տեղական աստուածներին և աշխատում ամեն կերպ շահել ժողովրդի սիրտը։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ

Պարսկական բոլոր երկիրները նւաճելով, Ալեքսանդրը ասիական այդ ընդարձակ կայսրութեան թագաւորը դարձաւ։ Յետոյ նա արշաւեց դէպի Միջին Ասիա՝ Ամու Դարիա և Սիր-Դարիա գետերի շրջանը, որտեղից Պարկաստանի վրայ շարունակ վայրենի ցեղեր էին յարձակւում։ Միջին Ասիայից նա թեքւեց դէպի հարաւ և գնաց Հընդկաստան, ուր տեղական իշխաններից մէկը նրան օգնութեան էր կանչել, իր թշնամու հետ կռւելու համար։ Բազմաթիւ նոր ու նոր երկիրներ նւաճելով, Ալեքսանդրը մինչև Հինդուսն ու Գանգէսը իրարից բաժանող անապատը հասաւ։

Նա կամենում էր աւելի հեռուն գնալ և Գանգէսի ամբողջ հովիտը նւաճել, բայց այդտեղ զօրքն այլևս չուզեց նրան հնազանդել։ Յաղթական թագաւորը ստիպւած էր վերադառնալ Բաբելոն, որն իր մայրաքաղաքն էր դարձրել։ Վերադարձը տեղի ունեցաւ Պարսկաստանի հարաւային անապատներով, որտեղ ջրի պակասութեան պատճառով քիչ մնաց որ ամբողջ զօրքը կոտորւէր։

Իր ընդարձակ կայսրութեան վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնը զարգացնելու նպատակով, Ալեքսանդրը ընդարձակեց գետերի վրայ եղած նաւագնացութիւնը, բազմաթիւ նոր ճանապարհներ շինել տւեց և մաքրեց նրանց աւազակներից, որոնք սաստիկ դժւարացնում էին հաղորդակցութիւնը։ Կամենալով արևելեան երկիրներում էլ յունական քաղաքակրթութիւնն ու կուլտուրան տարածել, նա բազմաթիւ (70) նոր քաղաքներ

հիմնեց, բոլորն էլ Ալեքսանդրիա անունով, և նրանց մէջ յոյն գաղթականներ բնակեցրեց։ Արևելքում յունական քաղաքակրթութիւն տարածելու հետ միասին Ալեքսանդրը աշխատում էր յոյներին ու մակեդոնացիներին էլ արևելեան կուլտուրային վարժեցնել։ Նա ցանկանում էր, արևելեան ու արևմտեան քաղաքակրթութիւնները իրարու խառնելով, մի տեսակ նոր քաղաքակրթութիւն առաջ բերել։ Այդ նպատակով հէնց ինքն էլ մի շարք արևելեան սովորութիւններ ընդունեց և սկսեց ճիշտ պարսից թագաւորների ձևով ապրել. նրանց պալատական կարգերը մտցրեց իր արքունիքում և նրանց տարազով է հագնւում։ Այդ դեռ բաւական չէ՝ ինքը Դարէհի աղջկայ վրայ ամուսնանալով, նա իր տաս հազար զինւորներին էլ ասիական աղջիկների հետ ամուսնացրեց։

Ալեքսանդրին վիճակւած չէր սակայն յոյն-արևելեան քաղաքակրթութեան տարածելն ու զարգանալը տեսնել։ Նա պատրաստութիւններ էր տեսնում ծովային մի նոր արշաւանք կատարելու, երբ վաղահաս մահը նրան գերեզման տարաւ (323 թ. Ք. ծ. ա.) դեռևս ընդամենը 32 տարեկան հասակում։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Մեծն Ալեքսանդրի մահից յետոյ երկար արիւնահեղ պատերազմներ տեղի ունեցան նրա զօրավարների միջև, որոնք պատմութեան մէջ յայտնի են ղիադոխ (յաջորդ) անունով և որոնցից ամեն մէկը ցանկանում էր ինքը ժառանգել մակեդոնական գահը։ Այդ պատերազմները շարունակւեցին մինչև 301 թ. Ք. ծ. ա., երբ Իպսայի մօտ եղած վճռական ճակատամարտից յետոյ Ալեքսանդրի ընդարձակ կայսրութիւնը մի քանի մասերի բաժանւեց։ Ասիական մասին՝ Միջերկրական ծովից ըս-

կած մինչև Հնդկաստանի սահմանը՝ տէր դարձաւ Սելևկը։ Եգիպտոսը Պտղոմէին բաժին հասաւ։ Իսկ Բալկանեան թերակղզու վրայ Անտիգոնի ժառանգները հաստատուեցին։

Չափազանց ծանր էր յոյներին քաղաքակրթութեամբ ու կուլտուրայով իրանցից շատ յետ մնացած մակեդոնացիների գերիշխանութեան տակ մնալը։ Նրանք շարունակ խլրտում, ալեկոծւում էին, աշխատելով ամեն կերպ իրանց նախկին անկախութիւնը հաստատել, բայց իրանց ներքին անհամաձայնութիւնների ու պառակտումների շնորհով, նրանց բոլոր ապստամբութիւնները անյաջողութեամբ էին վերջանում։ Այդ դրութիւնը շարունակւեց մինչև որ Բալկանեան թերակղզին՝ թէ Յունաստանը և թէ Մակեդոնիան՝ հռոմայեցիք նւաճեցին։



Սելևկ

Մինչ Յունաստանը, ներքին պառակտումների շնորհով, հետզհետէ դէպի անկումն էր գնում, յունական քաղաքակրթութիւնն ու կուլտուրան, Եգիպտոս տեղափոխւելով, այնտեղ էր զարգանում և առաջ գնում։ Պտղոմէյները չափազանց մեծ հովանաւորութիւն էին ցոյց տալիս թէ վաճառականութեանը և թէ գիտութիւններին ու արւեստներին։ Կարճ ժամանակի մէջ Ալեքսանդրիան մի չտեսնւած մեծութեան հասաւ։ Հելլէնական մտաւոր աշխարհի մայրաքաղաքն այլևս Ալէքսանդրիան էր դառել։ Ալեքսանդրիայի թանգարան-գրադարանը իրնմանը չունէր. այնտեղ 700,000 ձեռագիրներ կային, այն ժամանակւայ բոլոր՝ գիր ունեցող՝ ազգերի լեզուներով գրւած։

Զը նայելով այդ հանգամանքին, յունական քաղաքակրթութեան ազդեցութիւնը չէր տարածւում Եգիպտոսի

տեղական ժողովրդի վրայ։ Պտղոմէյները, եգիպտական կրօնն ու քաղաքակրթութիւնը յունականից ոչ պակաս համարելով, իսկի չէին էլ աշխատում եգիպտացիներին հելլէնականացնել։

Բոլորովին այլ էր Ասիայում։ Սելևկեանները միշտ ձգտում էին Մեծն Ալեքսանդրի քաղաքականութիւնը շարունակել։ Նրանք էլ, երկրի զանազան մասերում բազմաթիւ քաղաքներ հիմնելով, ամեն կերպ աշխատում էին հելլէնացնել Ասիայի ժողովուրդներին։ Սելևկեանների հիմնած քաղաքներից շատ մեծ նշանակութիւն ստացաւ Անտիոքը Սիրիայում, որը լուսաւորութեան և վաճառականութեան կենտրոն դարձաւ Ասիայի համար։

Բայց բռնի կերպով հելլէնացնելու քաղաքականութիւնը հետզհետէ մեծ դայրոյթ էր առաջացնում հպատակ ժողովուրդների մէջ, որոնց համար մանաւանդ խիստ թանգ էին ազգային լեզուն, կրօնն ու սովորութիւնները։ Այդ ժողովուրդները միմեանց յետևից ապստամբեցին և թօթափեցին Սելևկեանների լուծը։ Այդպիսով Սելևկեան ընդարձակ կայսրութեան տեղ մի քանի մեծ և փոքր տէրութիւններ հաստատուեցին։ Դրանցից առաջին տեղը Պարթևաց թագաւորութիւնն էր բռնում, որ ընկած էր Եփրատից դէպի արևելք և տարածւում էր մինչև Հինդուս գետը։

Պարթևները իրանական հովիւ ժողովուրդ էին, որոնք պարսից տիրապետութեան շրջանում մի առանձին զօրութիւն չէին ներկայացնում։ Սելևկեանների դէմ ապստամբելով, նրանք նորից Իրանի ինքնիշխանութիւնը վերահաստատեցին (3-րդ դարի կէսում Ք. ծ. ա.)։

Եփրատի հիւսիսային մասում, պարթևներից դէպի արևմուտք, հայկական թագաւորութիւնը հաստատւեց։ Սև ծովի հարաւային ափում՝ Պոնտոսի թագաւորութիւնը, իսկ

սրանից դէպի արեւմուտք և հարաւ՝ Պերգամի, կապադոկիայի, Բիւթանիայի և այլ մի քանի մանր թագաւորութիւններ հաստատուեցին։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Պարսից թագաւորութեան անկումից յետոյ, հայերը յաջողել էին իրանց ազգային անկախութիւնը վերականգնել թէ Փոքր Հայքում, թէ Մեծ Հայքում և թէ Ծովից աշխարհում, որը Մեծ Հայքի հարաւումն էր գտնւում։ Մակեդոնացիք թէև այդ երկիրներից ամեն մէկի վրայ մի առանձին փոխարքայ էին նշանակել, բայց սրանց իշխանութիւնը մեծ մասամբ անւանական էր։ Երկիրն իրապէս կառավարւում էր հայ թագաւորների ձեռքով, որոնք ամէն տարի, իշխան կամ այլ տիտղոս էին կրում և յաճախ նոյնիսկ բոլորովին մերժում էին Մակեդոնիայի գերիշխանութիւնը։

Մեծն Ալեքսանդրը Հայաստանի կառավարութիւնը Լիդիայի սատրապ Միհրանին էր յանձնել, որը յօժարակամ էր անձնատուր եղել մեծ աշխարհակալին։ Միհրանի մահից յետոյ (323 թ.) մակեդոնական Պերդիկա զօրավարը Նէօպտոլէմին Փոքր Հայքի վրայ փոխարքայ նշանակեց։ Սա մի շատ հպարտ ու դաժան մարդ էր, ուստի դժգոհ հայերը իրանց Արտաւազդ թագաւորի առաջնորդութեամբ դուրս արեցին նրան իրանց երկրից։ Կատաղած Պերդիկը կապադոկիայի փոխարքայ Եվմէնին յանձնեց անհնազանդ հայերին խաղաղեցնելու գործը։ Բայց նա, տեսնելով որ բռնի ոյժով անհնարին է հայերին հնազանդութեան բերել, աշխատում էր բարեկամութեամբ Արտաւազդին համոզել Նէօպտոլէմիի գերիշխանութիւնը ճանաչել։ Սակայն շուտով հէնց Եւմէնի ու Նէօպտոլէմիի միջև պատերազմ սկսւեց և այս վերջինը սպանւեց։ 30 տարուց յետոյ Պոնտոսն ու կապադոկիան ապստամբեցին Սելևկեանների դէմ (301 թ.), և Արտաւազդը նրանց հետ միանալով, չափազանց նպաստեց ապստամբութեան յաջողութեանը։

Այնուհետև Փոքր Հայքը մի բոլորովին անկախ տէրութիւն դարձաւ և իր անկախութիւնը պահպանեց մինչև որ երկրորդ դարի վերջերում (115 թ. Ք. ծ. ա.) Պոնտոսի նշանաւոր Միհրդատ Եւպատոր թագաւորը նրան իր տէրութեանը միացրեց։

Նէօպտոլէմիից ոչ պակաս վատ ընդունելութիւն գտաւ Ալեքսանդրի զօրավար Մենոնը Մեծ Հայքում։ Մեծ մակեդոնացին Մենոնին ուղարկել էր զօրքով Ճորոխ գետի ափում գտնւած ոսկու հանքերը, այդ թանկագին մետաղից բերելու, բայց հայերը այնպիսի ընդիմադրութիւն ցոյց տւեցին, որ Մենոնը ստիպւած էր դատարկաձեռն վերադառնալ։ Իսկ աւելի ուշ, երբ Սելևկեան Անտիոք III թագաւորը Մեծ Հայքի դէմ արշաւեց (203), նրան բոլորովին նւաճելու նպատակով, հայոց Ատրաբազան թագաւորը, անձնական տեսակցութեան ժամանակ, իր վայելուչ տեսքով ու խելօք խօսակցութեամբ այնպիսի խորը տպաւորութիւն թողեց Անտիոքի վրայ, որ հակառակորդները, առանց պատերազմելու, խաղաղութիւն կնքեցին, երկու կողմի համար էլ շահաւէտ պայմաններով։

Մօտաւորապէս նոյնպիսի վախճան ունեցաւ նոյն Սելևկեան Անտիոք երրորդի արշաւանքը հայկական Ծովից աշխարհի դէմ (215 թ.)։ Այս վերջինի Քսերքս թագաւորը հրաժարւել էր սովորական տուրքը վճարել Սելևկեաններին, և Անտիոքը եկել պաշարել էր նրա Արտամօսատ քաղաքը։ Քսերքսը ցանկութիւն յայտնեց անձամբ բանակցութեան մէջ մտնել Անտիոքի հետ։ Եւ նա այնպէս ազդեց այս վերջինի վրայ, որ բանակցութիւնը բոլորովին անսպասելի հետեւանք ունեցաւ։ Հայոց թագաւորի հաւատարմութիւնը պահպանած լինելու նպատակով, Անտիոքը հրաժարւեց այն բոլոր ապառիկ տուրքերից, որ ճնացել էին դեռ Քսերքսի հօր ժամանակից։ Բացի դրանից՝ Անտիոքը իր քրոջը կնութեան տւեց Քսերքսին։ Իսկ սա էլ իր կողմից Սելևկեան թագաւորին 300 տաղանդ (մօտ ½ միլիոն րուբլի) փող և հազար ձի ու նոյնչափ էլ ջորի տւեց իրանց գրաստներով։

Սելևկեան թագաւորը 189 թ. (Ք. ա.) մի մեծ պարտութիւն կրեց հռոմայեցիներից, և այդ պարտութիւնը մի տեսակ ազդանշան եղաւ Առաջաւոր և Փոքր Ասիայի ազգերի համար ոտքի կանգնելու։ Այդ ազգերի թւումն էին և հայերը։ Այդ ժամանակ թագաւորում էին՝ Մեծ Հայքում Արտաքսիասը (Արտաշիս), իսկ Ծովից աշխարհում Զարիադրը (Զարէհ)։ Սրանք երկուսն էլ ապստամբեցին, իւրաքանչիւրն իր երկրում, և իրանց միանդամայն անկախ թագաւորներ հրատարակեցին։




ՀՌՈՄ

ԵՐԿԻՐԸ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հռոմէական պետութիւնը, որը հետզհետէ յունական բոլոր երկիրներին տիրեց, գտնում է Ապենինեան թերակղզու վրայ՝ Իտալիայում։ Այդ թերակղզին էլ, բալկանեանի նման, հիւսիսային կողմում կտրած է մայր ցամաքից խիստ բարձր ու անանցանելի լեռնաշղթայով։ Միայն հիւսիս-արևելեան և հիւսիս-արևմտեան կողմերում երկու անցքեր կան, որտեղից կարող էին եկուոր ժողովուրդները այդ երկիրն անցնել։ Ապենինեան թերակղզու մակերևոյթն էլ, Յունաստանի նման, մի շարք լեռնաշղթաներով երեք մասերի է բաժանւում՝ վերին, Միջին և Հարաւային Իտալիա։ Բայց այդ մասերը իրարից այնպէս անջատուած չէին, ինչպէս Յունաստանում։ Վերին կամ Հիւսիսային Իտալիան իրանից մի ընդարձակ դաշտավայր է ներկայացնում, շրջապատուած՝ հիւսիսից Ալպեան, իսկ հարաւից Ապենինեան լեռներով։ Այդտեղ հոսում է Պօ գետը իր բազմաթիւ ճիւղերով, որոնք խիստ արգաւանդ են դարձնում երկիրը։ Իտալիայի այս մասը, որն այժմ Լոմբարդեան հարթավայրը է կոչւում, հնումը Գալլիա (Գաղիա) էր անւանւում, որովհետև այդտեղ գալլական կամ գաղիական ժողովուրդներ էին բնակւում։

Միջին Իտալիան՝ հիւսիսից դէպի հարաւ ընկած՝ Ապենինեան լեռնաշղթայով բաժանւում է երկու մասի։ Արևմտեան մասը, ուր Արնօ, Տիբեր և Վոլտուրն գետերի հովիտներն են տարածւում, հնումը երեք շրջանների էր բաժնւած՝ Էտրուրիա, Լացիում և Կամպանիա։ Իսկ արեւելեան մասը, որ զուրկ է գետերից և խիստ լեռնոտ է, նոյնպէս երեք շրջանների է բաժանւած՝ Ումբրիա, Պեցինէում և Սամնիում։

Հարաւային Իտալիան, որ կազմւած է երկու թերակղզիներից, հնումը Մեծ Յունաստան էր կոչւում, որովհետև այդտեղ շատ յոյն գաղթականներ էին բնակւում։ Ապենինեան թերակղզու այս մասը, իր մօտ գտնւած Սիցիլիայի հետ միասին, ամենից աւելի յարմարութիւններ ունէին ծովագնացութեան համար։



Հռոմէական արօր

Իտալիայի կլիման վերին աստիճանի մեղմ է, իսկ հողը մեծ մասամբ չափազանց արգաւանդ, ուստի նրա բնակիչները շատ վաղ էին սկսել երկրագործութեամբ

պարապել։ Խաշնարածությունը միմիայն լեռնային շրջաններում էր պահպանել։

Միջին և Հարաւային Իտալիայի բնակիչներին ընդհանուր առմամբ իտալացիները էին անւանում։ Դրանք մի քանի տարբեր ժողովուրդներ էին, որոնք իրանց կրօնական հաւատալիքներով ու սովորութիւններով սաստիկ նման էին յոյներին։ Թէ իտալացիները և թէ գալլերը արիական ցեղին էին պատկանում և ենթադրւում է, որ յոյներն ու իտալացիները մի մեծ արիական ցեղի երկու տարբեր ճիւղերն էին։

Իտալիայի բոլոր ժողովուրդներից սաստիկ տարբերւում էին Էտրուրիա շրջանի բնակիչները, որոնց Էտրուսկները էին անւանում։ Սրանք իրանց յատուկ լեզուն, կրօնական հաւատալիքներն ու սովորութիւնները ունէին և Իտալիայի պատմութեան սկզբում կուլտուրապէս ամենազարգացած ցեղն էին։ Ենթադրւում է, թէ Էտրուսկները արիացիների գալուց առաջ Իտալիայում բնակւող և առանձին կուլտուրա ունեցող հրեիտ ցեղի ճիւղերից էին։



Էտրուսական դամբարան

Իտալիայում ապրող բոլոր մանր ցեղերից ամենաընդունակն ու կենսունակը լատին ցեղը դուրս եկաւ, որը ապրում էր Լացիումի շրջանում, Տիբեր գետի վրայ։ Այս ցեղը յետոյ իրան հպատակեցրեց միւս բոլոր ցեղերին։ Լատինների իշխանութեան տակ ընկնելով, միւս բոլոր ցեղերը, հետզհետէ սկսեցին նրանց լեզուով խօսել, նրանց կուլտուրան ընդունեցին և նրանց մայրաքաղաք Հռոմի անունով հռոմայեցիները կոչուեցին։



Էտրուսկ զինուոր

ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐԻ ԿՐՕՆԸ



Հռոմայեցիների կրօնը շատ մեծ նմանութիւն ունէր յունականին, թէև շատ ինքնուրոյն կողմեր էլ ունէր։ Հռոմայեցիների համար հանգուցեալ նախնիները սուրբ էին համարւում, ինչպէս և սուրբ էր կրակը, որ միշտ վառ էր պահւում ամեն մի ընտանիքի օջախում։

Որովհետև հռոմէական ամբողջ պետութիւնը մի ընտանիք էր համարւում, ուստի պետութիւնն էլ իր առանձին օջախն ունէր, որ գտնւում էր Վեստա անունով Հռոմի աստուածուհին յատուկ տաճարում։ Այդ կրակի վրայ հսկում ու շարունակ վառ էին պահում վեց կոյս աղջիկներ, որոնք բնակւում էին տաճարի հարևան տանը և կոչւում էին վես-


տալուհիներ։ Դրանք ամենանշանաւոր ընտանիքների աղջիկներն էին, որոնց քրմապետը 6—10 տարեկան հասակում «փախցնում էր իբրև երկնքի նշանածների»։ Վեստալուհիների ծառայութիւնը տաճարում տևում էր ընդամենը 30 տարի, որից յետոյ նրանք կարող էին կրկին իրանց ընտանիքը վերադառնալ։



Վեստալուհի

Երկար ժամանակ Հռոմայեցիներն իրանց աստուածներին այնպէս պարզ ու որոշ չէին պատկերացնում, ինչպէս յոյները։ Նրանք ոչ արձաններ էին շինում և ոչ տաճարներ կառուցանում։ Նրանց հասկացողութեամբ աստուածները մի-մի անտեսանելի ոգիներ են, և ամեն մի երևոյթ իր յատուկ ոգին ունի։ Այսպէս օրինակ՝ ցանքսը, գետը, երկրի սահմանը և այլն մի-մի առանձին ոգիներ ունէին։ Էտրուսկներից ազդուելով, հռոմէացիները գուշակութիւնների էին հաւատում, ինչպէս և հաւատում էին, թէ ժժոկը կայ, ուր մեռածների հոգիները սոսկալի տանջանքների են ենթարկւում։

Աւելի ուշ ժամանակներում, յոյների հետ շփուելով, հռոմայեցիների կրօնական հասկացողութիւնները հետզհետէ փոխուեցին. նրանք էլ սկսեցին, յոյների նման, իրանց աստուածներին մարդկային կերպարանքով ներկայացնել, գեղեցիկ արձաններ ու փառաւոր տաճարներ շինել։ Յունական բոլոր կրօնական հաւատալիքները հետզհետէ իւրացնելով, նրանք միմիայն աստուածների անուն-



Իպիտերի տաճարը

ները փոխեցին։ Այսպէս՝ յունական Զևսը հռոմայեցիների մօտ դարձաւ Իպիտեր, Հերան՝ Յունոնա, Պոսէյդոնը՝ Նեպտուն, Արէսը՝ Մարս, Աֆրոդիտէն՝ Վեներա և այլն։

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Հռոմայեցիներն սկզբում, յոյների նման, բազմաթիւ տոհմերի էին բաժանւած։ Տոհմապետն այստեղ շատ աւելի մեծ իշխանութիւն ունէր իր տոհմի անդամների նկատմամբ, քան Յունաստանում. նա կարող էր նրանց ամենախիստ պատիժների ենթարկել, մինչև իսկ ծախել կամ սպանել։ Տոհմապետի այդ անսահման իշխանութիւնը յետոյ թագաւորին անցաւ, երբ Իտալիայի մանր ցեղերը, զօրեղացած լատինների ազդեցութեամբ միանալով, մի ընդհանուր պետութիւն կազմեցին։ Հռոմի թագաւորը անսահման իշխանութիւններ էր վայելում. նա թէ քրմա-

պետ էր, թէ զինուորական առաջնորդ և թէ գլխաւոր դատաւոր։ Կառավարչական բոլոր գործերի վերաբերեալ նա խորհրդակցում էր Ծերակոյտի հետ, որ կազմւած էր 300 անդամներից։ Սրանք հռոմէական ցեղերի 300 տոհմապետներն էին։ Զափազանց մեծ կարևորութիւն ունեցող գործերի մասին երբեմն քաղաքացիների կարծիքն էլ էին հարցնում, որոնք ձայն էին տալիս ծուխերով։

Հռոմի թագաւորների, մանաւանդ առաջինների մասին ստոյգ տեղեկութիւններ չկան։ Ըստ աւանդութեան, Լացիում շրջանի ամենաառաջին քաղաքը կոչւել է Ալբա-Լոնգա։ Այդ քաղաքի թագաւորներից մէկի կոյս աղջիկը, աստւածների կամքով երկու զաւակ է ծնում։ Երեխաների քեռին, վախենալով, թէ նրանք կարող են ապագայում իրանից թագաւորական գահը խլել, սպանել է տալիս նրանց մօրն ու հրամայում է երեխաներին Տիբեր գետը գցել։ Ծառաները սակայն տաշտի մէջ են դնում փոքրիկներին ու այնպէս գցում գետը։ Տաշտը ցամաք է դուրս գալիս և երեխաներն անվտանգ են մնում։ Նրանց ամենից առաջ մի էգ գայլ է տեսնում և սկսում է իր կաթովը կերակրել։ Յետոյ մանուկներին մի հովիւ է գտնում, որը տանում է տուն ու մեծացնում։ Հովիւը երեխաներից մէկին Հռոմուլոս, իսկ միւսին Հռիմոս անուններն է տալիս, և երբ նրանք մեծանում են, յայտնում է իրանց ով լինելը։ Հռոմուլոսն ու Հռիմոսը, մի խումբ իրանց նման քաջ երիտասարդներ հաւաքելով, գնում սպանում են իրանց քեռուն ու նրա տեղ մի նոր թագաւոր դնում Ալբա-Լոնգայում։ Բայց իրանք չեն մնում այնտեղ, այլ գնում են և Տիբերի ափին մի նոր քաղաք հիմնում (753 թ. Ք. ա.)։ Քաղաքի կառուցման ժամանակ, եղբայրների միջև կռիւ է ծագում, և Հռոմուլոսը սպանում է Հռիմոսին, որից յետոյ ինքը այդ նոր քաղաքի առաջին թագաւորն է դառնում։ Քաղաքն էլ Հռոմուլոսի անունով կոչւում է Հռոմ։

Հռոմուլոսը, կամենալով իր քաղաքի բնակիչների թիւը արագութեամբ բազմացնել, ապաստան է տալիս ամեն տեսակ ոճրագործների ու փախստականների։ Բայց որովհետև այդ կարգի ժողովրդին հարևան ցեղերից ոչ ոք աղջիկ չէր տալիս, ուստի Հռոմուլոսը խորամանկութեան է դիմում։ Նա հանդիսաւոր խաղեր է նշանակում Հռոմում և բոլոր հարևան ցեղերին հրաւիրում

է ամբողջ ընտանիքով հանդէսի գալ։ Խաղերի ժամանակ Հռոմի երիտասարդները յարձակւում են ներկայ եղող աղջիկների վրայ և բոլորին էլ փախցնում։ Որովհետև աղջիկների մեծ մասը սաբինական քաջ ցեղին էին պատկանում, ուստի շատ ժամանակ չանցած սաբինացիք իրանց թագաւորի ղեկավարութեամբ գալիս են հռոմայեցիներից վրէժ առնելու։ Սակայն թշնամի կողմերը, հէնց նոյն փախցւած աղջիկների միջամտութեամբ, հաշտւում են, որոշելով միանալ իրարու հետ, մէկ ազգ կազմել ու բոլորն էլ միասին Հռոմում բնակւել։

Հռոմուլոսից յետոյ,—որի մասին աւանդութիւնն ասում է, թէ չէ մեռել, այլ ժողովրդի աչքերի առջևից յանկարծ անհետացել է,—երկու կողմերը պայմանաւորւում են, որ այնուհետև Հռոմի թագաւորները պէտք է լինեն սաբինական ցեղից, միայն թէ նրանց պէտք է միմիայն հռոմայեցիներն ընտրեն։ Այդպիսով Հռոմի բոլոր յետագայ թագաւորները սաբինացիներ էին լինում։

Հռոմի ազգաբնակութիւնն էլ ժամանակի ընթացքում հետզհետէ երկու դասի էր բաժանւել։ Քաղաքի սկզբնական համայնքին պատկանողները կոչւում էին *պատրիկներ*, իսկ յետոյ եկածներն ու նւաճւած նահանգների բնակիչները՝ *պլեբէյներ*։ Պատրիկները, Աթէնքի եւպատրիդների նման, երկրի խոշոր կալւածատէրը, արտօնեալ դասն էին կազմում. նրանք էին պետական բարձր պաշտօնները վարում և ծխական ժողովներին մասնակցում, այնինչ պլեբէյները, որոնք Աթէնքի դեմոսի նման, կամ սեփականազուրկ աշխատաւորներ էին և կամ մանր կալւածատէր գիւղացիներ ու խաշնարածներ, բոլորովին զրկւած էին կառավարչական գործերի մէջ խառնւելու իրաւունքից։

Կային և *մարդիկ*, որոնք *կլիէնտ* էին կոչւում։ Սրանք իրանց ազատ կամքով այս կամ այն պատրիկի հովանաւոր մտնողներն էին։ Իւրաքանչիւր պատրիկ իր կլիէնտի վերաբերեալ *պատրօն* էր կոչւում։ Նա իր կլիէնտին մի փոքրիկ հողաբաժին էր տալիս մշակելու և հարկ եղած դէպքում, նրան պաշտպանութիւն էր ցոյց տալիս։ Կլի-

էնան էլ իր պատրոնի տոհմական անունն էր կրում և նրան զանազան ծառայութիւններ մատուցանում։ Կլիէնտի ու պլեբէյի միջև եղած տարբերութիւնն այն էր, որ վերջինը, ոչ թէ առանձին անհատից կախումն ունէր, այլ ամբողջ պետութիւնից։

Իբրև իրաւազուրկ հպատակներ, պլեբէյները զէնք կրելու և զինուոր դառնալու իրաւունք չունէին, այդ իրաւունքը պատրիկներին էր վերապահուած։ Եւ որովհետև պատերազմները շատ յաճախ էին լինում այն ժամանակներում, ուստի պատրիկների թիւը այնպիսի արագութեամբ չէր աճում, ինչպէս պլեբէյներինը։ Սրանք, աթենական դեմոսի նման, շարունակ խլրտում ու խռովութիւններ էին յարուցանում երկրում։ Այդ խռովութիւններին վերջ տալու համար, պատրիկներն ստիպուած էին մի քանի քաղաքական բարենորոգումներ մտցնել (578 թ. Ք. ա.)։ Այդ բարենորոգումների համաձայն, Հռոմի ամբողջ ազգաբնակութիւնը՝ թէ պատրիկներ և թէ պլեբէյներ՝ բաժանուած էին ըստ նիւթական կարողութեան, 5 դասակարգի։ Նիւթական կարողութիւն ասելով, հասկացւում էր ունեցած անշարժ կալուածի քանակը։ Այսպէս ամենալաւ և ամենից մեծ արդիւնք բերող կալուածք ունեցողները առաջին դասակարգն էին կազմում, իսկ ամենաաղքատները 5-րդ դասակարգին էին պատկանում։ Նոր օրէնքով բոլոր դասակարգի մարդիկ պարտաւորւում էին զինուորական ծառայութիւն կատարել, միայն թէ այնպէս, որ հարուստների համար ծառայութիւնը աւելի ծանր լինի, իսկ աղքատների համար աւելի թեթեւ։ Այսպէս առաջին դասակարգի մարդիկ պարտաւոր էին ամենաթանկարժէք զէնքերով զինուել. պէտք է կրէին սաղաւարտ, վահան, նիզակ, սուր, կրծկալ։ Միւս դասակարգերը կարող էին, իրանց կարողութեան համաձայն, աւելի թեթև ու էժան զէնքերով զինուել։ Ամենավերջին դասակարգը պատերազմի էր դուրս գալիս միմիայն պարսատիկներով զինուած։ Զինուորական ծառայութիւնը որքան ծանր էր, այնքան էլ պատուաւոր էր համարւում։

Դասակարգերի բաժանման համաձայն և պետական տուրքերն էին նշանակւում. ով հարուստ էր, նա էլ աւելի մեծ տուրք էր վճարում կառավարութեանը։ Եւ որպէս զի մեծ սխալներ տեղի չունենան, 5 տարին մի անգամ ցենզ էր կատարւում, այսինքն՝ զնահատւում էին մարդկանց կարողութիւնները եւ ըստ այնմ նրանց այս կամ այն դասակարգի մէջ նշանակում։

Նոր օրէնքով պլեբէյներին իրաւունք էր տրւում նոյնպէս և հասարակական կամ ազգային ժողովներին մասնակցել։ Բայց այդ մասնակցութիւնը այնպիսի շրջանակների մէջէր դրւած, որ դարձեալ պատրիկներն էին ձեռքում երկրի կառավարողները։

ՀՌՈՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հռոմում շատ վաղ ժամանակից հասարակապետութիւն էր հաստատւել։ Թագաւորի փոխարէն ընտրւում էին երկու բարձր պաշտօնեաներ, որ հիւպատոս (կոնսուլ) էին կոչւում։ Միաժամանակ երկու հիւպատոս ընտրելու նպատակն այն էր, որ նրանք չը կարողանան ի չարը գործ դնել իրանց իշխանութիւնը և միմեանց վրայ հրսկողներ հանդիսանան։ Հիւպատոսները ընտրւում էին մէկ տարով միայն, որից յետոյ նրանք կարող էին պատասխանատուութեան ենթարկւել իրանց պաշտօնէութեան ժամանակ կատարած ապօրինի գործերի համար։

Հիւպատոսները, բացի քրմապետութիւնից, թագաւորի բոլոր իրաւունքներն էին վայելում։ Իսկ քրմապետութեան պաշտօնը քուրմերից մէկին էր յանձնած։ Պատերազմի ժամանակ հիւպատոսներին այնպիսի բացառիկ

իրաւունքները էին տրւում, որ նրանք կարող էին, առանց դատարանի, մարդկանց մահուան պատժի ենթարկել։ Հիւպատոսների ամեամերձաւոր օգնականները երկու համալրակալներն էին (քեեստոր)։ Սրանց ձեռքումն էր գտնւում պետական գանձարանը և սրանք էին հաւաքում նշանակւած տուգանքները։

Բացառիկ դէպքերում, երբ պետութեանը վտանգ էր սպառնում, երկու հիւպատոսներն էլ արձակւում էին և երկրի գերագոյն իշխանութիւնը, յատուկ լիազօրութիւններով, մի այլ տեսակ պաշտօնեայի էր յանձնւում, որ կոչւում էր դիկտատոր (հրամայող)։ Սրա իշխանավարութեան ժամանակը սաստիկ սահմանափակ էր. ընտրում էին այնչափ ժամանակով, որչափ որ անհրաժեշտ էր յանձնւած գործը վերջացնելու համար, և 6 ամսից աւելի չը պիտի տևէր դիկտատորի իշխանութիւնը։

Հիւպատոսների և դիկտատորների պաշտօնավարութիւնը կարճ ժամանակեայ լինելու շնորհով, Հռոմի ծերակոյտի իրաւունքները հետզհետէ աւելի և աւելի ընդարձակւեցին։ Իբրև մշտական ու ճնշող պետական մարմին, ծերակոյտն էր ուղղութիւն տալիս կառավարչական բոլոր գործերին, նա էր հսկում պետական գանձերի վրայ, բանակցութիւնները վարում օտար պետութիւնների հետ և օրէնքներ հրատարակում։ Իսկ ազգային ժողովի դերն այն էր միայն, որ կարող էր, մի պարզ «այո» կամ «ոչ» ասելով, ընդունել կամ մերժել ծերակոյտի առաջարկած օրէնքները։

ՊԼԵԲԷՅՆԵՐԻ ԵՒ ՊԱՏՐԻԿՆԵՐԻ ԿՈՒԻԻԸ

Հանրապետական կարգերը շատ չը թեթևացրին պլեբէյների դրութիւնը։ Շնորհիւ այն հանգամանքի, որ թէ ծերակոյտի անդամները, թէ հիւպատոսները և թէ միւս

բոլոր պետական պաշտօնեաները միմիայն պատրիկներից էին ընտրւում, ուստի կառավարութեան ամբողջ ղեկն էլ նրանց ձեռքումն էր։ Պլեբէյների վայելած քաղաքացիական իրաւունքները բոլորովին անուանական էին։ Բացի դրանից՝ զինուորական ծառայութիւն կատարելով, նրանք այժմ տնտեսապէս շատ աւելի էին քայքայւում, որովհետև պատերազմների պատճառով ստիպւած էին յաճախ իրանց դաշտերն անմշակ թողնել։ Պատերազմներով հարևան ազգերից գրաւած ընդարձակ հողերից օգտւողներն էլ գլխաւորաբար պատրիկներն էին միշտ։ Այդ հողերը թէև հասարակական կամ պետական սեփականութիւն էին համարւում, բայց պատրիկները ամենալաւ հողաբաժինները ընտրելով, իրանց ժամանակաւոր սեփականութիւն էին դարձնում։ Թէև սովորութեան համաձայն, հասարակական հողեր տիրողները պարտաւորւում էին մի որոշ տուրք վճարել պետութեանը, բայց պատրիկներն առ հասարակ շատ անկանոն էին վճարում, իսկ մի որոշ ժամանակ անցնելուց յետոյ, բոլորովին չէին էլ վճարում տուրքը և իւրացրած հողաբաժինների կատարեալ տէրն էին դառնում։ Այդպիսով պետական տուրքը ամբողջապէս պլեբէյների վրայ էր ծանրանում։ Եւ որովհետև տուրքերի քանակը, պետական աճող ծախսերի հետ միասին, հետզհետէ աւելանում էր, ուստի պլեբէյների տնտեսութիւնը էլ աւելի քայքայւում և իրանք էլ աւելի պարտքերի մէջ խրւում։

Պարտատէր պատրիկները շատ անխիղճ կերպով էին վարւում իրանց պարտապան պլեբէյների հետ։ Օգտւելով իրանց արտօնեալ դրութիւնից, նրանք խլում էին չըվճարող պարտապանի հողը, տունն ու բոլոր ունեցածը և իրան էլ յաճախ ստրուկ էին դարձնում։ Պլեբէյներն այն աստիճան արհամարհւում էին պատրիկներից, որ նրանց արգելւում էր այս վերջինների հետ ամուսնանալը։

Անտանելի կացութիւնից դուրս գալու համար պլեբէյները յամառ կռիւ էին մղում պատրիկների դէմ։ Միևերկու անգամ նրանք հրաժարուեցին պատերազմի գնալ, բայց յետոյ որոշեցին, միանգամայն բաժանուելով պատրիկներից, գնալ և իրանց համար մի նոր քաղաք հիմնել։ Այդ նպատակով թողին մէկ օր դուրս գնացին Հռոմից, և բանակ դնելով մօտակայ բլուրի վրայ, լուր ուղարկեցին պատրիկներին իրանց որոշման մասին։ Սեփական աշխատանքի անսովոր և շարունակ պլեբէյների աշխատանքով օգտուող պատրիկները սաստիկ վախեցան և համաձայնեցին զիջումներ անել։ Ընդհանուր համաձայնութեամբ թոյլ տուեց պլեբէյներին իրանց միջից յատուկ պաշտօնեաներ ընտրել, որոնք լիազօրութիւն ունէին ամեն պարագայում պլեբէյների իրաւունքները պաշտպանելու։ Այդ պաշտօնեաները կոչւում էին *տրիբուններ*։ Այդպիսի համաձայնութիւնից յետոյ պլեբէյները վերադարձան Հռոմ և «Սուրբ Լեռ» անւանեցին այն բլուրը, որի վրայ իրանք ժամանակաւոր ապաստան էին գտել։

Տրիբունների թիւը սկզբում երկու էր, բայց յետոյ հետզհետէ մինչև տասի բարձրացաւ։ Տրիբունի անձը անձեռնմխելի էր. նրան վիրաւորելը կամ նրա գործունէութիւնը խանգարելը աստուածների դէմ սրբապղծութիւն կատարելու չափ մեծ մեղք էր համարւում։ Կառավարչական բոլոր պաշտօնեաների կարգադրութիւններն ու որոշումները տրիբունը իրաւունք ունէր մէկ խօսքով կանգնեցնել։ Այդ խօսքը *վէտո* (արգելում եմ) բառն էր։ Տրիբունի միջամտութիւնը ընդունելի էր նոյնիսկ հիւպատոսների համար։ Որպէսզի ամեն մի պլեբէյ հարկ եղած դէպքում կարողանայ տրիբունների օգնութեանը դիմել, այս վերջինների տան դռները երբէք չէին կողպւում՝ ոչ ցերեկը և ոչ գիշերը։

Իւրաքանչիւր տրիբուն, հիւպատոսի նման, իր յատուկ օգնականն ունէր, որ նոյնպէս պլեբէյներն էին ընտրում և որը էդիլ էր կոչւում։ Էդիլներն էին պատրիկներից հաւաքում տրիբունների նշանակած տուգանքը։

Ժամանակի ընթացքում տրիբուններն իրաւունք ձեռք բերեցին պլեբէյների առանձին ժողովներ գումարել, որտեղ իրանց դասակարգին վերաբերեալ խնդիրներն էին քննում։ Այդ ժողովները կոչւում էին *տրիբունատ*։

Տրիբունների ու տրիբունատի հաստատուելով, պլեբէյները հնարաւորութիւն ստացան իրանց կռիւը պատրիկների դէմ այդուհետև վարել օրինաւոր ճանապարհով, առանց յեղափոխական խիստ բռնկումների, ինչպիսին Աթէնքումն էր։

ԳՐԱՒՈՐ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Հռոմում էլ, Աթէնքի նման, սկզբում գրաւոր օրէնքներ չը կային։ Վէճերը քննում և մարդկանց դատում էին հռոմայեցիների հին սովորութիւնների հիման վրայ։ Եւ որովհետև հռոմայեցիների հին սովորութիւնները լաւ իմացողները միմիայն պատրիկներն էին համարւում, ուստի սրանք միայն իրաւունք ունէին դատաւոր լինելու։ Պատրիկ դատաւորները, պլեբէյներին դատելիս, խիստ քմահաճ կերպով էին մեկնում հռոմէական հին սովորութիւնները և ամեն տեսակ անարդարութիւններ էին գործում. մինչդեռ սովորութեան հիման վրայ պատրիկին արդարացնում, իսկ պլեբէյին մեղադրում էին։ Այդ քաօսային դրութիւնից և անարդարութիւնից ազատուելու համար պլեբէյները *գրաւոր օրէնքներ* պահանջեցին։ Պատրիկները երկար ժամանակ չէին համաձայնում, բայց վերջը ստիպուած էին զիջել։ Տաս հոգուց բաղկացած մի մասնաժողով ընտրեցին և նրանց, ինչպէս Դրակոնին Աթէնքում, յանձնեցին գրաւոր օրէնքներ մշակել (451 թ. Ք. ա.)։

Այդ մասնաժողովի անդամները դեցիմվիրնիր կոչեցին։ Ցետոյ՝ հիւպատոսներին, տրիբուններին և միւս կառավարչական պաշտօնեաներին ժամանակաւորապէս արձակելով պաշտօններից, այդ նոյն դեցիմվիրներին յանձնեցին վարելու պետական բոլոր գործերը։

Դեցիմվիրներն աշխատեցին ամբողջ երկու տարի։ Ներանց մշակած օրէնքները, 12 բրոնզէ տախտակների վրայ գրելով, դրեցին Հռոմի մեծ հրապարակի վրայ, որպէսզի ամենքն էլ կարդան նրանց։

Այդ օրէնքները հռոմէական հին իրաւունքների հիմքը կազմեցին։

Դեցիմվիրների մշակած օրէնքները, Դրակոնի օրէնքների նման, չը գոհացրին պլեբէյներին, որովհետև այդ օրէնքները բոլորովին չէին թեթևացնում նրանց դրութիւնը։ Պլեբէյների դժգոհութիւնը նամանաւանդ սաստկացաւ, երբ դեցիմվիրները, իրանց պաշտօնէութեան ժամանակը լրանալուց յետոյ էլ, շարունակում էին իշխանութիւնն իրանց ձեռքում պահել և առաջարկում էին տրիբուններին պաշտօնը ոչնչացնել, ասելով՝ թէ քանի որ արդէն գրաւոր օրէնքներ կան, պլեբէյներն այլևս յատուկ պաշտպանների կարիք չունեն։ Երկար մաքառումից յետոյ, պլեբէյները, տեսնելով որ իրանք անզօր են գոհացում ստանալու, երկրորդ անգամ թողեցին Հռոմն ու «Սուրբ լեռը» բարձրացան։ Այդ սպառնալիքի առաջ պատրիկները նորից զիջելով, դեցիմվիրներին հրաժարեցրին պաշտօններից և կրկին հիւպատոսութիւնը վերականգնեցին։

Այս նոր յաղթութիւնից խրախուսած, պլեբէյները աւելի մեծ եռանդով սկսեցին իրանց մաքառումը և կարճ ժամանակից յետոյ, նրանք մի քանի ուրիշ շատ կարևոր իրաւունքներ էլ ձեռք բերեցին։ Այսպէս՝ պատրիկներն ստիպւած էին այնպիսի մի օրէնք անցկացնել, որի զօ-

րութեամբ տրիբունատների (պլեբէյական ժողովների) որոշումները պարտաւորեցուցիչ էին դառնում ամբողջ ժողովրդի համար, մինչդեռ առաջ տրիբունատները պետական հաստատութիւն չէին ճանաչւում և նրանց վճիռները պարտադիր էին միմիայն պլեբէյների համար։

Այդ օրէնքը մի նոր զէնք էր տալիս պլեբէյների ձեռքը պատրիկների դէմ կռւելու, և նրանք սկսեցին իրարու յետևից մի շարք՝ իրանց համար խիստ նպաստաւոր՝ օրէնքներ անցկացնել։ Այսպէս՝ օրէնքով նրանք ոչնչացրին այն ստորացուցիչ արգելքը, որով թոյլ չէր տրւում պլեբէյներին պատրիկների հետ ամուսնանալ։

Պատրիկները, կամենալով ազդեցութիւն ունենալ պլեբէյական այդ ժողովների վրայ, սկսեցին իրանք էլ մասնակցել նրանց մէջ։ Իսկ դրա հետևանքն այն եղաւ, որ տրիբունատները հետզհետէ ընդհանուր ազգային ժողովներ դարձան և պետական հաստատութիւն ճանաչւեցին։ Ցետոյ՝ պլեբէյները պահանջեցին, որ իրանց էլ իրաւունք տրւի հիւպատոս ընտրելու։ Պատրիկները պլեբէյների այդ պահանջը մերժելու նպատակով ստիպւած էին պետական մի նոր պաշտօն ստեղծել, որի համար կարող էին և պլեբէյներն ընտրւել։ Այդ պաշտօնը *զինւորական տրիբունն* էր, որը համարեա թէ հիւպատոսական իշխանութիւն ունէր։ Տարբերութիւնն այն էր միայն, որ հիւպատոսներն իրանք էին որոշում քաղաքացիների *ցենզը*՝ քաղաքական իրաւունքների սահմանները, այն ինչ զինւորական տրիբունների վարչութեան ժամանակ ցենզ որոշողը պատրիկներից ընտրւած ցենզորներն էին։ Զինւորական տրիբունների թիւը վեց էր լինում, և օրէնքով ծերակոյտին էր թողնւած որոշելու, թէ երբ արդեօք պէտք է հիւպատոսներ և երբ զինւորական տրիբուններ ընտրել։

ԳԱԼԼԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ ԵՒ ԴԱՍԱՑԻՆ ԿՌԻՒ-ՆԵՐԻ ՎԱԽՃԱՆԸ

Պլեբէյների ու պատրիկների ներքին կռիւը մի առժամանակ ընդհատուեց գալլերի կամ կելտերի արշաւանքի պատճառով։

Գալլերը արիացիներ էին։ Նրանք անյիշելի ժամանակներում Ասիայից եկել և հաստատուել էին միջին Եւրոպայում։ Այդտեղից նրանք յետոյ սկսեցին Եւրոպայի զանազան կողմերը տարածուել, այն է՝ Բրիտանական կղզիները և Պիրենեան ու Ապենինեան թերակղզիները։ Այս վերջինի Պօ գետի հովիտումն էին գալլերը հաստատուել, և նրանց անունով էլ այդ հովիտը Գալլիա էր կոչվում։



Գալլեր

Սկզբում գալլերի յարձակումները իտալական զանազան ցեղերի վրայ շատ ձեռնտու էին հռոմայեցիներին, որովհետև իրանք էլ շարունակ պատերազմների էին ունենում այդ ցեղերի հետ։ Բայց երբ գալլերը հզօրեաց առաջ գնալով սկսեցին Հռոմին մօտենալ, նրանք շտապեցին օգնութեան հասնել իրանց հարևան ցեղերին։ Հռոմէական զօրքերը սակայն անզօր հանդիսացան գալլերի խիզախ արշաւանքը կանգնեցնելու. կարճ ժամանակի մէջ այդ բարբարոսները ոչ միայն ամբողջ Հիւսիսային ու Միջին Իտալիան, այլ և Հռոմն էլ գրաւեցին (390 թ. Ք. ա.)։

Հռոմայեցիք մեծ քանակութեամբ ոսկու փրկանք տալով միայն ազատեցին իրանց կիսաւեր դարձած քաղաքը, որ և նորոգեցին շուտով։

Իսկ գալլերը, որ բոլորովին չէին էլ մտածում հաստատուել Միջին Իտալիայում, հեռացան իրանց ձեռք բերած հարուստ աւարով և հաստատուեցին Պօ գետի հովիտում։ Այդ տեղից նրանք երբեմն-երբեմն արշաւանքներ էին կատարում, աւար ձեռք բերելու նպատակով։

Գալլերի արշաւանքի մասին ժողովրդական երևակայութիւնը մի քանի բանաստեղծական առասպելներ էր յօրինել։ Ի միջի այլոց պատմում էին, թէ հռոմայեցիներն ու իրանց ծերակոյտը փախել փակուել էին քաղաքի միջնաբերդում, երբ գալլերը պաշարել էին Հռոմը։ Մի գիշեր սրանք, մագլցելով պարիսպների վրայ, կամենում են քաղաք մտնել, բայց միջնաբերդում եղած սագերը սոսկալի աղաղակներ են բարձրացնում, որից զարթնում են հռոմայեցիք և փախցնում թշնամիներին։ «Այդպիսով,—պատմում էր առասպելը,—Հռոմը սագերի շնորհով է ազատուել անխուսափելի կործանումից»։

Գալլական սպառնալիքից ազատուելուց յետոյ, պլեբէյների ու պատրիկների կռիւը նորից սկսուեց։ Պլեբէյներին զինուորական տրիբուններ չէին գոհացնում և նրանք այժմ պահանջում էին, որ միմիայն հիւպատոսներ ընտրուեն, միայն թէ նրանցից մէկն անպատճառ պլեբէյ լինի։ Յետոյ՝ նրանք պահանջում էին, որ ոչ ոք իրաւունք չունենայ 500 իւգերից *) աւելի պետական հող գրաւել ու 100-ից աւելի խոշոր կամ 500-ից աւելի մանր անասուն արածեցնել պետական արօտատեղերում։ Պլեբէյները պահանջում էին նոյնպէս, որ պարտքերի դիմաց վճարուած գումարներն այլևս պարտքի տոկոսներ չը հաշուեն, այլ իբրև դրամագլխից վճարուած գումարներ։

*) Չափի անուն էր։

Տասը տարւայ յամառ կռւից յետոյ պլեբէյների այս պահանջներն էլ իբրև օրէնք ընդունւեցին (366 թ. Ք. ա.)։ Բայց այդ էլ միանգամից չեղաւ. սկզբում՝ պլեբէյներին թոյլ տալով հիւպատոս ընտրելու, պատրիկները ուրիշ այնպիսի նոր պաշտօններ ստեղծեցին, որոնց համար միմիայն պատրիկներ պէտք է ընտրւէին։ Այդ՝ *արետորները և շրջանային Էդիլները էին։* Առաջինները բարձրագոյն դատաւորներ, իսկ վերջինները ոստիկանական բարձրագոյն իշխանաւորներ էին հանդիսանում։ Բայց յետոյ այդ տարբերութիւնն էլ վերացւեց և պլեբէյներն իրաւունք ստացան ամեն տեսակ պաշտօններ վարելու։ Երկար ժամանակ նրանց քրմութեան պաշտօն թոյլ չէր տրւում, բայց վերջ ի վերջոյ այդ իրաւունքն էլ նրանք ստացան (300 թ. Ք. ա.), որից յետոյ պլեբէյներն ու պատրիկները իրանց քաղաքական իրաւունքներով հաւասար դարձան։

ԻՏԱԼԻԱՅԻ ՆԻԱՀՈՒՄԸ

Դասային ներքին պատակոուիների վերջանալուց յետոյ, հռոմայեցիք աւելի մեծ եռանդով շարունակեցին իրանց տիրապետութեան սահմանները ընդարձակել Միջին Իտալիայում։ Հարևան փոքր ցեղերը մեկը միւսի յետևից նւաճւում և Հռոմի գերիշխանութեան տակ էին առնւում։ Ամենից աւելի մեծ դիմադրութիւն ցոյց տւեց սամնիական ցեղը։

Սաննիացիները ապրում էին Միջին Իտալիայի լեռների ամենաբարձր տեղերում և յայտնի էին թէ իրանց վերին աստիճանի պարզ ու նահապետական կեանքով և թէ չափազանց քաջ ու պատերազմասէր բնաւորութեամբ։ Յաճախ նրանք օտար երկիրներ էին գնում և իբրև կամաւոր զինւորներ վարձւում։ Սաննիացիների թոյլ կողմն

այն էր միայն, որ նրանք դեռևս բաժան-բաժան՝ միմեանցից անջատ՝ համայնքներով էին ապրում և դեռ քաղաքական մի այնպիսի կենտրոն չունէին, որը կարողանար վտանգի ժամանակ բոլորին միացնել։ Զը նայելով այդ հանգամանքին, հռոմայեցիք խիստ մեծ դժւարութիւններ



Սամնիական զինւորներ

կրեցին, մինչև որ կարողացան վերջնականապէս նրանց նւաճել։

Սաննիացիների հետ հռոմայեցիք երեք պատերազմ ունեցան։ Բայց առաջին պատերազմը հազիւ վերջացած, նրանք լատինների հետ ընդհարւեցին։ Լատինները դեռ շատ վաղ ժամանակից Հռոմի դաշնակիցներն էին։ Ամեն մի պատերազմի ժամանակ երկու կողմերն էլ հաւասար թւով զօրք էին դուրս բերում և նւաճած հողերն էլ հաւասարապէս բաժանում իրանց մէջ։ Մինչև իսկ զօրապետներն էլ հերթով էին նշանակւում. մի անգամ հռոմայեցիներից, միւս անգամ լատիններից։ Այդ դաշնակցութիւնը, հետզհետէ զօրանալով, Միջին Իտալիայում ամենազօրեղը դարձաւ։ Բայց ժամանակի ընթացքում Հռոմը, կամաց-կամաց իր ձեռքը հաւաքելով դաշնակցու-

թեան վերաբերեալ բոլոր գործերը, սկսեց լատիններուն վրայ էլ իշխանութիւն բանեցնել։ Այդ բանը մեծ դժգոհութիւն առաջացրեց լատիններուն մէջ և նրանք սկսեցին պահանջել, որ հիւպատոսներից մէկը և ծերակոյտի անդամների կէսը լատիններից ընտրուեն։ Հռոմայեցիք մերժեցին լատինների պահանջը, իսկ սրանք էլ ապստամբեցին Հռոմի դէմ։

Հռոմայեցիք ստիպուած էին շտապով հաշտութիւն կայացնել սամնիացիների հետ և իրանց զէնքը լատինների դէմ ուղղել։ Կարճ ժամանակի մէջ սրանց բոլոր քաղաքները նուաճեցին հռոմայեցիք և նրանցից ամեն մէկի հետ մի առանձին դաշնակցութիւն կապեցին. ոմանց թոյլ տուեցին ինքնավար լինել իրանց ներքին գործերի վերաբերեալ, իսկ ոմանց էլ Հռոմի կատարեալ հպատակը դարձրին։ Քաղաքների մէջ այդպիսի տարբերութիւն դնելով, հռոմայեցիք նրանց համար անվերջ պատերազմների դուռ բաց արին, իսկ իրանք նրանց բոլորի վրայ գլխաւոր իշխողը դարձան։

Դրանից յետոյ հռոմայեցիք դարձեալ երկու պատերազմ ունեցան սամնիացիների հետ։ Բայց այս պատերազմները չափազանց թանգ նստեցին Հռոմին, որովհետև սամնիացիներն այս անգամ էտրուսկներին ու մի քանի ուրիշ ցեղեր էլ հանեցին նրանց դէմ։ Այնուամենայնիւ հռոմայեցիք յաղթեցին բոլոր դժբաղդութիւններին և ամբողջ Միջին Իտալիան իրանց իշխանութեանը ենթարկեցին (290 թ.)։

Միջին Իտալիան նուաճելուց յետոյ հռոմայեցիք իրանց ուշադրութիւնը Հարաւային Իտալիայի վրայ դարձրին։ Այնտեղ ամենամեծ պիմադրութիւն նրանց ցոյց տուեց յունական Տարէնտոն հանրապետական քաղաքը, որ շատ նշանաւոր էր իր վաճառականութեամբ ու հարստութիւններով։ Տարէնտոնացիք յոյս չունենալով իրանց ոյժի

վրայ, եպիրոսի թագաւոր Պիւրոսին օգնութեան հրաւիրեցին։ Սա մի շատ քաջ, պատերազմասէր ու արկածախնդիր մարդ էր և ուրախութեամբ եկաւ Իտալիա։ Առաջին ընդհարման մէջ հռոմայեցիք խիստ մեծ պարտութիւն կրեցին։ Այս առաջին անգամն էր, որ նրանք մայր Ցունաստանի զօրքերի հետ գործ ունէին։ Նրանք տեսան, որ իրանց զօրքը, որն իր կազմակերպութեամբ առաջինն էր համարուում ամբողջ Իտալիայում, դեռ շատ բան ունի յոյներից սովորելու։

Չը նայելով իր տարած յաղթութեանը, Պիւրոսն ինքը հաշտութիւն առաջարկեց, պայմանով միայն, որ Հարաւա-



Պիւրոսի դրամ

յին Իտալիայի յոյներին կատարեալ ազատութիւն տրւի։ Հռոմի ծերակոյտը մերժեց Պիւրոսի առաջարկը, և երկրորդ պատերազմը տեղի ունեցաւ։ Այս անգամ էլ յոյները յաղթեցին, թէև այնպիսի մեծ դժբաղդութեամբ ու կորուստներով, որ Պիւրոսը բացականչեց. «Մի այսպիսի յաղթութիւն ևս և ես այլևս զօրք չեմ ունենայ»։ Պիւրոսը նորից հաշտութիւն առաջարկեց Հռոմին, բայց դարձեալ մերժուեց ստացաւ։ Այդ ժամանակ նա շտապով հեռացաւ Իտալիայից ու Սիցիլիա գնաց, ուր նրան այնտեղի յոյները էին կանչում կարթագէնացիների դէմ կռուելու։ Մինչև Պիւրոսի վերադառնալը, որ ամբողջ 3 տարի տևեց, հռոմայեցիք մի շարք փոփոխութիւններ մտցրին իրանց

զինուորական կազմակերպութեան մէջ և մեծ կատարելագործութեան հասցրին նրան։

Պիւրոսին նրանք դիմաւորեցին խիստ պատրաստուած ոյժերով և փառաւորապէս յաղթեցին։ Պիւրոսն ընդմիշտ թողեց Իտալիան ու իր հայրենիքը վերադարձաւ, ուրից յետոյ հռոմայեցիք տիրեցին Տարենտոնն ու ամբողջ Հարաւային Իտալիան (266 թ. Ք. ծ. ա.)։

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՆԻԱՁՈՒՄԸ

ԱՌԱՋԻՆ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հարաւային Իտալիան գրաւելուց յետոյ հռոմայեցիք ուզեցին Սիցիլիան էլ տիրել, որը մայր ցամաքից միայն նեղուցով է միայն բաժանուած։ Բայց այդտեղ նրանք մի այնպիսի հզօր հակառակորդի հանդիպեցին, որպիսին նրանք դեռ չէին ունեցել։ Այդ հակառակորդը Կարթագէնն էր, որն այդ ժամանակ ամենահարուստ, վաճառաշահ և ամենազօրաւոր ծովային պետութիւնն էր։


Կարթագէնը, Փիւնիկիայի քաղաքների ձևով, որ *ամատիրական հասարակապետութիւն* էր։ Կառավարչական բոլոր գործերը փիւնիկեցի վաճառականների ու արդիւնագործների ձեռքում էին գտնւում։ Նրանց ունեցած հողերը աֆրիկացի բնիկների ձեռքով էին մշակւում, որոնք նաև զինուորներ էին մատակարարում։ Կարթագէնը զօրեղ նաւատորմիղ ունէր։ Նրա իշխանութեան տակ էր գտնւում։ Թէ կղզիներում և թէ շուրջը գտնուող



Կարթագէնի դրամ

երկիրներում Կարթագէնը բազմաթիւ առևտրական տներ ու գաղութներ ունէր, որոնց միջոցով այդ ամբողջ շրջանի վաճառականութիւնն իր ձեռքն էր հաւաքել։ Այդ կղզիներից էր և Սիցիլիան, որտեղ Կարթագէնը նոյնպէս բազմաթիւ գաղութներ ունէր։

Կարթագէնի դէմ մղած պատերազմը մի քանի ընդմիջումներով տևեց մօտ 120 տարի (264—146 թ.)։ Այդ երկարատև պատերազմները պատմութեան մէջ յայտնի են «Պունիկեան պատերազմները» անունով, որովհետև Կարթագէնացիները նոյնպէս և պունիկները էին կոչւում։



Կարթագէնի նաւահանգիստը

Պունիկների հետ պատերազմելը հռոմայեցիների համար սկզբում չափազանց դժւար բան էր, որովհետև նրանք դեռ բոլորովին անծանօթ էին ծովագնացութեան հետ և միանգամայն զուրկ էին նաւատորմիղից։ Բայց նրանց այդ պակասը Հարաւային Իտալիայի և մանաւանդ Սիցիլիայի

յոյները լրացրին, որոնք պունիկների վաղեմի թշնամիներն էին և առիթ էին որոնում նրանցից վրէժ առնելու։ Յոյները ոչ միայն իրանց նաւերը դրին հռոմայեցիների տրամադրութեան տակ, այլ և իրանք էլ միացան նրանց հետ և կարթագինացիներին բոլորովին դուրս վանեցին Սիցիլիայից։

Տարած յաղթութիւններից ոգևորուած, հռոմայեցիք ռեփական նաւատորմիղ շինեցին և Հռեգուլոս հիւպատո-



Հռոմի պատերազմանաւ

սի ղեկավարութեամբ նոյնիսկ Աֆրիկա զօրք ուղարկեցին։ Տեսնելով որ երկարատև պատերազմը սաստիկ ձնասում է իրանց առևտուրին, վաճառական պունիկները սկսեցին հաշտութիւն խնդրել։ Բայց բանակցութեան ժամանակ գոռոզացած Հռեգուլոսը այնպիսի ծանր պայմաններ առաջարկեց, որ շատ աւելի պունիկների հայրենասիրութիւնը գրգռեց։ Նա պահանջում էր, որ կարթագէնի հանրապետութիւնը, հրաժարելով իր անկախութիւնից Հռոմի իշխանութեանը ենթարկւէր։

Պատերազմը շարունակւեց, և զայրոյթով ու հայրենասիրութեամբ լցած պունիկները շատ մեծ քաջութեամբ սկսեցին կռւել։ Հռոմայեցիք միմեանց յետևից մի շարք պարտութիւններ կրեցին։ Հռեգուլոսը գերի բռնւեց և



Հռեգուլոս

հռոմէական զօրքը, որ սովոր չէր երկար ժամանակ օտարութեան մէջ մնալ, թողեց հեռացաւ Աֆրիկայից։ Կարթագէնացիների յաղթութեանը սաստիկ նպաստում էր այն հանգամանքը, որ նրանք իրանց զօրքի կազմակերպութիւնը հռոմէականի օրինակով հիմնական փոփոխութեան էին ենթարկել և մի շատ հմուտ զօրապետ ընտրել Համիլկար անունով։ Բայց շուտով կարթագէնի վարձկան զօրքն էլ ապստամբեց, և հակառակորդները 23 տարի պատերազմելուց յետոյ հաշտութիւն կնքեցին։

Դրանով էլ վերջացաւ առաջին պունիկեան պատերազմը։ Կարթագէնացիք Սիցիլիան հռոմայեցիներին զիջեցին և պարտաւորւեցին մի մեծ պատերազմական տուգանք վճարել։

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հռոմի ու կարթագէնի միջև կնքւած խաղաղութիւնը մօտաւորապէս 20 տարի տևեց։ Այդ ժամանակամիջոցում հռոմայեցիք գալլական Հիւսիսային Իտալիան էլ նւաճեցին։ Յետոյ նրանք գրաւեցին Սարդինիա ու Կորսիկա կղզիները ու այդպիսով շատ մեծ ձնաս հասցրին կարթագէնի առևտրին Միջերկրական ծովի վրայ։

Զօրքի ապստամբութիւնը ճնշելուց յետոյ, քաջ Համիլկարը Միջերկրականում կարթագէնի կրած կորուստը լրացնելու նպատակով, արծաթի հանքերով հարուստ հա-

բաւային Սպանիան նուաճեց մինչև էբրօ գետը։ Այդ երկրի գրաւումը շատ կարևոր էր և այն տեսակէտով, որ նրա բնակիչները, որոնք յայտնի էին իրանց քաջութեամբ, շատ լաւ կուռող զինուորներ էին ժամանակարարում կարթագէնին։

Դեռ իր նուաճումները Սպանիայում չը վերջացրած, Համիլկարը մեռաւ։ Պունիկեան զօրքը նրա երիտասարդ




Հաննիբալ

Հաննիբալ որդուն ընտրեց իրան զօրապետ, որ ոչ միայն չափազանց քաջ ու հայրենասէր մարդ էր, այլ և սաստիկ ատում էր հռովմայեցիներին։ Այս վերջինները Հաննիբալի նման վտանգաւոր հակառակորդ երբէք չէին ունեցել ու չունեցան։

Ասում են, որ դեռ 9 տարեկան հասակում նրան զոհի սեղանի առաջ հայրը երդւեցրել էր՝ միշտ թշնամի մնալ Հռոմին և ղէնքը վայր չը դնել ձեռքից, մինչև որ այդ քաղաքը չը նւաճի։

Նա շատ հնարագէտ մարդ էր, մեծ համառութեամբ էր ղեկավարում իր կիսավայրենի զօրքերը և արագութեամբ ուսումնասիրում թշնամուն ու օգտւում նրա թոյլ կողմերից։

Զօրապետ ընտրւելուն պէս, Հաննիբալը յարձակւեց յունական Սագունտ քաղաքի վրայ, որ Սպանիայում էր գտնւում, և գրաւեց նրան։ Այդ քաղաքը Հռոմի դաշնա-



Ալպեան լեռները

կից էր համարւում, ուստի և նրա գրաւումը երկրորդ պունիկեան պատերազմի պատճառը դարձաւ։

Հռոմայեցիք պատրաստութիւններ էին տեսնում նրանից զօրք ուղարկելու Աֆրիկա, երբ յանկարծ իմացան, որ Հաննիբալն իր զօրքով արդէն Հիւսիսային Իտալիայում է գտնւում։ Այդ մի այնպիսի յանդուգն ու չը տեսնւած արշաւանք էր, որ հռոմայեցիք անսասելի շփոթութեան մէջ ընկան։ Հաննիբալը ահագին և խիստ դժւա-

բին ճանապարհ էր կտրել. նա անցել էր Պիրինեան լեռները, այժմեան հարաւային Ֆրանսիան, Ալպեան լեռնաշղթան և ապա Իտալիա մտել։

Ճանապարհի խիստ դժւարութեան պատճառով նա իր զօրքի համարեա թէ կէսը կորցրեց, ինչպէս և կորցրեց իր մէկ աչքը։ Բայց ոչինչ չը կասեցրեց նրան իր ձեռնարկած արշաւանքից։ Հաննիբալը յուսահատող կամ վրհատող անձնաւորութիւններից չէր. նա ընդունակ էր ամբողջ գիշերներ չը քնել, օրերով ոչինչ չուտել և ուրիշ ամեն տեսակ նեղութիւններ տանել։

Այդ դժւարին ճանապարհով Հիւսիսային Իտալիա գալով, Հաննիբալը հաւատացած էր, որ գալլերն անպատճառ իր կողմը կանցնեն։ Եւ նա չէր սխալւել. պունիկների տարած հէնց առաջին յաղթութիւնից յետոյ գալլերը նրանց կողմն անցան։ Միմեանց յետևից Հաննիբալը հռոմայեցինների երեք լեգիոնը (զօրաբանակը) խորտակեց։ Դրանից յետոյ ամենքն էլ հաւատացած էին, թէ Հաննիբալը ուղղակի Հռոմի վրայ կը գնայ, և նրա ճանապարհը կտրելու նպատակով, հռոմայեցիք նոյնիսկ Տիբեր գետի կամուրջը քանդեցին։ Սակայն կարթագէնացի մեծ զօրավարը, իր յոյժերին չը վստահանալով, չը գնաց Հռոմ։ Նա Ապենինեան լեռներն անցնելով, Ադրիական ծովի շրջանը մտաւ, աշխատելով այդ տեղի ժողովուրդներին Հռոմի դէմ ապստամբեցնել։ Հռոմայեցիք, Հաննիբալի վարանումը նկատելով, նորից մի մեծ զօրաբանակ ուղարկեցին նրա դէմ, բայց դարձեալ մեծ պարտութիւն կրեցին։ Այդուհետև այլևս կասկած չը կար, որ Հաննիբալը կը գնայ Հռոմն առնելու, մինչդեռ նա, Հռոմ գնալու փոխարէն, գնաց Կապուա քաղաքում ձմեռն անցկացնելու։

Հաննիբալի դանդաղկոտութիւնից օգտւելով, Հռոմայեցիք նոր լեգիոններ կազմակերպեցին։ Նրանք բազմաթիւ թէ սարուկների և թէ մինչև իսկ ոճրագործների ա-

զատութիւն տալով, զինեցին ու լեգիոնների շարքերը լրացրին։ Պատերազմը բոլորովին ուրիշ ընթացք ստացաւ։ Հաննիբալը սկսեց կարթագէնից օգնութիւն խնդրել։ Բայց այնտեղի կառավարութիւնը, կատարւող դէպքերի կարևորութիւնը չըմբռնելով, խիստ անփոյթ վերաբերւեց իր հանճարեղ զօրապետի խնդիրներին։ Հաննիբալին օգնութեան գնաց միայն իր կրտսեր եղբայր Հասդրուբալը, որը նոյնպէս զօրապետ էր և Սպանիայում էր յամառ կռիւ մղում հռոմայեցիների դէմ։ Թէև նա մի անգամ յաղթել էր այդտեղ գործող հռոմէական երիտասարդ Պուբլիոս Կորնելիոս Սցիպիոն զօրավարից, բայց և այնպէս դարձեալ կարողացաւ իր զօրքի մեծագործութեամբ Իտալիա գնալ նոյն ճանապարհով, որով Հաննիբալն էր անցել (207 թ.)։ Գալլիայում Հասդրուբալը իր զօրաբանակը ուժեղացրեց նոր զինուորներով ու լուր ուղարկեց եղբօրը, թէ ինքը գալիս է։ Սակայն հռոմայեցիք նրա ճանապարհը կտրեցին, և Հասդրուբալը մեծ պարտութիւն կրեց ու սպանւեց պատերազմի մէջ։



Պունիկեան զինւոր

Դրանից յետոյ Հաննիբալը թէև խիստ ծանր կացութեան մէջ մնաց, բայց իր բացառիկ ընդունակութիւնների շնորհիւ, դեռ էլի կարողացաւ մի քանի տարի Իտալիա-

յում ճնալ ու իրանից շատ աւելի զօրաւոր թշնամու դէմ մաքառել։

Այդ ժամանակ Սցիպիոնը, կատարելապէս ոչնչացնելով պունիկների ոյժերը Սպանիայում, Աֆրիկա էր անցել արդէն և կարթագէնին էր սպառնում։ Յանկարծակի եկած կարթագէնի ծերակոյտը այժմ միայն զգաց իր սխալը, որ Հաննիբալին օգնութիւն չէր ուղարկել։ Բայց արդէն ուշ էր։ Փրկութեան ուրիշ ոչ մի ելք չունենալով, ծերակոյտը դարձեալ Հաննիբալին օգնութեան կանչեց։ Թէև չափազանց ծանր էր մեծ զօրավարին թողնել Իտալիան, ուր նա ոչ մի պարտութիւն չէր կրել, բայց ուրիշ ելք չունէր։ Աֆրիկայում թշնամիները հանդիպեցին կարթագէնից ոչ հեռու՝ Զամայի մօտ։ Պատերազմը պունիկների կատարեալ պարտութիւնով վերջացաւ, որից յետոյ նրանք հարկադրւած էին հաշտութիւն խնդրել Սցիպիոնից։ Հաշտութիւնը կայացաւ կարթագէնի համար չափազանց ծանր պայմաններով (202 թ. Ք. ծ. ա.)։ Պունիկները պարտաւորւում էին մի շատ խոշոր պատերազմական տուգանք վճարել Հռոմին 50 տարւայ ընթացքում, նրան յանձնել իրանց պատերազմական նաւերը, հրաժարւել Սպանիայից և ոչ մի երկրի պատերազմ չը յայտարարել, առանց Հռոմի թոյլատուութեան։ Այլ խօսքերով՝ կարթագէնը Հռոմի մի սատրապրեալ պետութիւնը դարձաւ։

ԵՐՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Կարթագէնին յաղթելով, Հռոմը սաստիկ զօրացաւ Միջերկրական ծովի շրջանում։ Նա սկսեց Ալեքսանդր Մակեդոնացու կայսրութեան ժառանգորդներին տիրանալու մասին երազել։ Այդ ժամանակներում Մակեդոնիայի Փիլիպպոս III-րդ թագաւորը մի կողմից և Սելևկեան Անտիոքոս III-րդը միւս կողմից կամենում էին տիրել Եգիպտոսին։ Եգիպտացիք Հռոմի օգնութեանը դիմեցին, և ծերակոյտը նրանց անչափահաս Պտղոմէոս Եպիփանես թագաւորին իր խնամակալութեան տակ վերցրեց, ու հէնց որ պունիկների հետ հաշտութիւն կնքւեց, պատերազմ յայտարարեց նախ մակեդոնական Փիլիպպոսի և ապա Սելևկեան Անտիոքոսի դէմ։ Այդ երկուսին էլ հռոմայեցիք յաղթելով, նրանց երկիրներին էլ տիրեցին։ Թէև Հաննիբալը,—որ հռոմայեցիների պահանջով հեռացած էր Կարթագէնից,—Անտիոքոսի մօտ էր գնում և օգնում էր նրան իր խորհուրդներով, բայց այդ էլ չօգնեց։ Հաննիբալը փախաւ Սիրիայից և գնաց Հայաստան՝ Արտաշիսես թագաւորի մօտ։ Հռոմայեցիք այդ տեղից էլ սկսեցին պահանջել նրան, և յուսահատ Հաննիբալը, չը կամենալով գերի ընկնել իր ոխերիմ թշնամիների ձեռքը, թոյն խմեց։

Այն ժամանակ, երբ հռոմայեցիք պատերազմներով էին զբաղւած, վաճառական պունիկները իրանց խանգարւած առևտրական գործերն ուղղելու մասին էին հոգ տանում։ Կարճ ժամանակի մէջ նրանք այն աստիճան կազդուրեցին, որ կարող էին բոլորովին մոռանալ իրանց կրած դժբախտութիւնները։ Այդ բանը տեսնելով, հռոմայեցիք նորից սկսեցին վատ աչքով նայել Կարթագէնի վրայ։ Այժմ Հռոմի արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնն էլ սաստիկ զարգացել էին, ուստի հռոմայեցի դրամատէրերը առիթ էին որոնում, որպէսզի մի նոր պատերազմ սկսեն և ընդ միշտ ոչնչացնեն իրանց կարթագենացի մրցակիցներին։ Հռոմայեցիների այդ ցանկութեան փայլուն արտայայտիչը ծերակոյտի անդամ Կատոնն էր, որ իր բոլոր ճառերը սկսում ու վերջացնում էր միևնոյն նախադասութիւնով. «Այնուամենայնիւ, ես կարծում եմ, որ պէտք է ոչնչացնել Կարթագէնը»։

Առիթը շուտով ներկայացաւ։ Պունիկները չը կարո-

դանալով տանել սեամորթ նումիդիացիների յաճախակի յարձակումները, որ նրանք կատարում էին հենց հռոմայեցիների դրդմամբ, պատերազմ յայտարարեցին նրանց, առանց Հռոմի կամքը հարցնելու։ Հռոմէական ծերակոյտն այդ բանը դաշնագրի խախտումն համարեց և իր կողմից պատերազմ յայտարարեց Կարթագէնին։ Շատ աշխատեցին պունիկները խոյս տալ այդ պատերազմից. նրանք պատրաստակամութիւն յայտնեցին ամեն տեսակ զիջումներ անել, դրամական մեծ փրկանք վճարել, համաձայնելով մինչև իսկ իրանց բոլոր զէնքերը Հռոմին յանձնել, բայց հռոմայեցիք ոչ մի զիջում չընդունեցին, և երրորդ պունիկեան պատերազմը սկսուեց։

Հռոմայեցիք այնպէս էին կարծում, թէ չափազանց հեշտ պիտի լինի Կարթագէնի գրաւելը։ Բայց սխալուած էին. պունիկները զարմանալի կերպով ամրացրին իրանց քաղաքը և այնպիսի մեծ քաջութիւն ցոյց տուեցին, որ երկար ժամանակ հռոմայեցիների բոլոր ջանքերն ապարդիւն էին ցնում։ Իսկ երբ, վերջապէս, յաղթեցին քաղաքը մտնել, նրանք սոսկալած էին ամեն մի փողոցը, մինչև իսկ ամեն մի տունը առանձին-առանձին նւաճել։ Այդ եղանակով ամբողջ քաղաքը գրաւելուց յետոյ, հռոմայեցիք այրեցին Կարթագէնն ու կատարելապէս հողի հետ հաւասարեցրին նրան։ Այնուհետև Կարթագէնեան ամբողջ պետութիւնը հռոմէական մի նահանգը դարձաւ (146 թ. ք. ա.)։ Նոյն ժամանակներում հռոմայեցիք և Ցունաստանը նւաճեցին, իսկ 13 տարուց յետոյ (133 թ.) նրանք Սպանիան գրաւեցին վերջնականապէս և ապա սկսեցին փոքր-ասիական երկիրների վրայ տարածել իրանց իշխանութիւնը։

ՆՒԱՃԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Ապենինեան ամբողջ թերակղզու տէրը դառնալուց յետոյ, հռոմայեցիք նւաճած երկիրների հետ ճիշտ այնպէս վարուեցին, ինչպէս որ վարուել էին լատինական քաղաքների հետ։ Նրանց մեծ մասը Հռոմի դաշնակիցները դարձան։ Դաշնակից քաղաքներն իրանց ներքին կառավարչական գործերի վերաբերեալ կատարեալ ազատութիւն էին վայելում, բայց պարտաւոր էին հռոմէական դրամ գործ ածել, ինքնագլուխ կերպով ոչ մի բանակցութիւն չը վարել օտարների հետ և պատերազմի ժամանակ Հռոմին ենթարկուել։

Բացի դրանից՝ Հռոմին մօտիկ ապրող ժողովուրդները հռոմէական իրաւատէր քաղաքացիներ էին համարւում և իրաւունք ունէին նրա ազգային ժողովներին մասնակցել, իսկ հեռու ապրողները այդ իրաւունքից զրկւած էին։ Կային այնպիսի քաղաքացիներ էլ, որոնց մասին ասում էին թէ լատինական իրաւունքներ են վայելում, այսինքն՝ իրանց քաղաքում մի որևէ պետական պաշտօն վարելու դէպքում միայն նրանք իրաւունք ունէին Հռոմում կատարեալ իրաւատէր քաղաքացի համարւել։

Հպատակ ժողովուրդներին այդպէս իրարից տարբեր իրաւունքներ տալով, հռոմայեցիք նրանց միշտ անհաշտ դրութեան մէջ էին պահում միմեանց հետ և աւելի հեշտութեամբ իշխում նրանց վրայ։

Բոլորովին տարբեր պայմանների մէջ էին գտնւում Իտալիայից դուրս նւաճած երկիրները։ Դրանք Հռոմի նահանգները (պրովինց) էին կոչւում։ Այդ նահանգներից ամեն մէկը մի առանձին կառավարիչ ունէր, որ պրետոր կամ փոխ-հիւպատոս էր կոչւում։ Թէ պրետորները և թէ փոխ-հիւպատոսները իրանց օգնական քւեստորի հետ միասին Հռոմի ծերակոյտին էին ենթարկւում։ Քւեստորը դրա-

մական մասի վրայ հսկողն էր։ Նահանգների այդ կառավարիչներն ամենաընդարձակ իրաւունքներ ունէին իրանց իշխանութեան տակ եղած ժողովուրդի վրայ։ Ժողովուրդը նրանց դէմ կարող էր ծերակոյտին գանգատուել այն ժամանակ միայն, երբ նրանք արդէն հեռացած լինէին իրանց պաշտօնից, թէև այդ ժամանակ էլ նրանք մի առանձին պատասխանատուութեան չէին ենթարկուում։

Այդպիսի անպատասխանատու լինելու շնորհով, այդ պաշտօնեաները անասելի կամայականութիւններ ու բռնութիւններ էին կատարում։ Ցոյս չունենալով, թէ պաշտօնէութեան ժամանակը լրանալուց յետոյ կարող են իրանց նորից նոյն պաշտօնը տալ, նրանցից ամեն մէկն աշխատում էր, կարելի եղածին չափ մեծ հարստութիւն դիզել կարճ ժամանակի մէջ։ Հէնց այդ նպատակով էլ նրանք ամեն կերպ կեղեքում էին իրանց հպատակ ժողովրդին։ Բացի հողային տուրքից ու գլխահարկից, բնակիչները պարտաւոր էին իրանց երկրագործական արդիւնքներից ու վաճառուող ապրանքներից էլ մի որոշ տոկոս վճարել։ Այդ դեռ բաւական չէ՝ ամեն մի գիւղից կամ քաղաքից հաւաքւելիք տուրքը նահանգի կառավարիչները կապալով էին տալիս զանազան վաշխառուների, որոնք աշխատում էին իրանց վճարած կապալի կրկնապատիկն ու եռապատիկը դուրս քաշել ժողովրդից։ Իսկ այդ հանգամանքի շնորհով ժողովրդի առանց այն էլ խիստ ծանր վիճակը էլ աւելի ծանր և անտանելի էր դառնում։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒԻՆԵՐԸ

Միջերկրական ծովի շուրջը գտնուող ընդարձակ երկիրները նւաճելով, Հռոմը սաստիկ զօրացաւ ու չը տեսնւած հարստութիւնների տէր դարձաւ։ Ամբողջ Միջերկրականի վրայ այլևս մրցակից չունենալով, նրա արդիւնագործութիւնն ու առևտուրը արագութեամբ զարգացան և խիստ մեծ չափեր ընդունեցին։ Երկարատև պատերազմները ու անսահման հարստութիւնները միևնոյն ժամանակ մի շարք այնպիսի նոր պայմաններ ու փոփոխութիւններ առաջացրին հռոմայեցիների կեանքի մէջ, որ նրանց պետութեան թուլանալու և անկման պատճառը դարձան։

Հռոմի զօրքը գլխաւորաբար կազմւում էր մանր կալւածատէր գիւղացիներից, որոնք պատերազմական աւարներով հարստանալու հեշտ միջոցներին վարժւելով, այլևս չէին վերադառնում իրանց գիւղերն ու հողի մշակութեամբ պարապում։ Իրանց հողաբաժինները նրանք խոշոր կալւածատէրերին էին ծախում։

Բացի դրանից՝ ասիական ու աֆրիկեան երկիրների նւաճումով, ահագին քանակութեամբ ստրուկներ բերւեցին Հռոմ։ Խոշոր կալւածատէրերը առնում էին դրանցից փողով և իրանց հողերի մշակութիւնը ստրուկների աշխատանքով կատարում, որ շատ աւելի ձեռնտու էր քան գիւղացիներին կապալով տալը։ Ստրուկների ձեռքով մշակւած տնտեսութիւնները կոչւում էին «լատիֆունդիա»։ Մանր կալւածատէրերը չէին կարողանում լատիֆունդիաների հետ մրցել, և այդ էլ միւս կողմից էր նրանց ստիպում իրանց կալւածները ծախել և հեռանալ գիւղից։

Մնանկացած ու հողագործութիւնից հեռացած այդ գիւղացիները խռնւում էին քաղաքները՝ մեծ մասամբ Հռոմ, յուսալով թէ գուցէ այնտեղ մի որ և է աշխատանք կը գտնեն իրանց համար։ Բայց որովհետև քաղաքներում արդիւնագործական և ուրիշ աշխատանքներն էլ մեծ մասամբ ստրուկների ձեռքով էին կատարւում, ուստի Հռոմում անգործ պրօլետարների ամբողջ բանակներ էին կազմւում։ Քաղցի ու սովի մատնւած պրօլետարիատի մի մասը, ստրկութիւնից փախածների հետ միացած, աւազա-

կութեամբ էին պարապում՝ թէ ցամաքի և թէ ծովի վրայ։ Իսկ մեծագոյն մասը հարուստ դասակարգերի ուսած փշրանքներով էր պահպանում իր գոյութիւնը։

Հարուստ դասակարգեր Հռոմում գլխաւորաբար երկու էին. առաջին տեղը բռնում էին խոշոր կալուածատէրերը, որոնք երկրի հողային արիստոկրատեան էին կազմում, իսկ երկրորդ տեղը արդիւնագործներին ու վաճառականներին էր պատկանում։ Սրանք թէև մեծ կալուածներ չունէին, բայց ահագին դրամական հարստութիւններ ունէին, և Հռոմի փողային արիստոկրատիան էին կազմում։ Դրանց ասպետները էին անւանում։

Ամբողջ պետութեան կառավարչական ղեկը հողային արիստոկրատների ձեռքին էր գտնւում. այդ դասակարգից էին ընտրւում թէ ծերակոյտի անդամները և թէ պետական ամեն կարգի պաշտօնեաները, այնինչ ասպետներն այդ իրաւունքները չունէին։ Այդ հանգամանքի շնորհով ասպետների ու հողային արիստոկրատիայի միջև խիստ մեծ պայքար կար Հռոմում։

Ահա հէնց այդ դասակարգային պայքարն էր պրօլետարիատի մեծագոյն մասի ապրուստի միակ միջոցը։ Շնորհիւ այն հանգամանքի, որ պրոլետարիատը, կորցնելով իր ունեցած հողաբաժինը, դեռ ևս շարունակում էր հռոմէական քաղաքացի համարւել և ազգային ժողովներում ձայնի իրաւունք ունենալ, ուստի պայքարող հարուստ դասակարգերից ամեն մէկն աշխատում էր միշտ պրօլետարիատին իր կողմը գրաւել։ Դրա համար նրանք պարզապէս կաշառում էին պրօլետարիատին թէ փողով և թէ խնջոյքներ ու զանազան տեսակ զւարճալի տեսարաններ կազմակերպելով։

Շատ զւարճալի տեսարաններ էին համարւում Հռոմում գլադիատորական մենամարտութիւնները, որ տեղի էին ունենում խիստ ընդարձակ կրկէսներում։

Գլադիատոր էին կոչւում այն ստրուկները, որոնց յատուկ վարժոցներում սովորեցնում էին զանազան տեսակի զէնքերով մենամարտել միմեանց՝ և մանաւանդ ահռելի գազանների հետ։ Մենամարտութիւնը շարունակւում էր մինչև որ մենամարտողներից մէկը կամ միւսը սպանւում էր։

Պրօլետարիատին ձրի կերակրում ու կաշառում էին և այնպիսի մարդիկ, որոնք բարձր պաշտօնների ու փառքի էին ձգտում։ Բայց ամենից աւելի նրան կաշառում էին, որովհետև վախենում էին նրա աւելի ու աւելի աճող ոյժից։ Ձրի ճաշ և զւարճութիւններ ունենալն օրից օր բազմաթիւ բախտախնդիրներ էր գրաւում դէպի Հռոմ։ Իսկ քաղցածութիւնից յուսահատած այդ ահագին ամբոխային մասսան ընդունակ էր տակն ու վրայ անելու պետական տիրող բոլոր կարգերը։ Նա արդէն սկսել էր խըլրտալ և իր համար էլ պահանջել քաղաքական լայն իրաւունքներ ու լաւ վիճակ։



Գլադիատոր

ԳՐԱԿՔՈՍ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Հռոմի հասարակապետութեանն սպառնացող վտանգը թոռը կերպով առաջին անգամ Գրակխոս եղբայրներն զգացին։ Սրանք պլեբէյական մի շատ նշանաւոր հին տոհմից էին և փոքր հասակից յուշական շատ լաւ կրթութիւն էին ստացել։ Հետզհետէ բազմացող քաղցած պրօլետարիատի առաջն առնելու միակ միջոցը Գրակխոս եղբայրները համարում էին այն, որ յետ առնուեն հարուստներից պետական հողերի մի մասը և պրօլետարներին բաժանեն, հնարաւորութիւն տալով նրանց կրկին հողագործութեամբ պարապելու։

Պրօլետարիատը Գրակխոսների ծրագրով ոգևորւած, նրանցից մեծին՝ Տիբերիոսին ժողովրդական տրիբուն ընտրեց (113 թ. Ք. ա.), որից անմիջապէս յետոյ այս վերջինը մի շարք նոր օրէնքներ առաջարկեց տրիբունատի ծխական ժողովներին։ Ի միջի այլոց նա առաջարկում էր վերականգնել այն՝ վաղուց ի վեր խախտւած՝ հին օրէնքները, որոնց համաձայն ոչ ոք իրաւունք չունէր 500 իւգերից աւելի հողաբաժին իւրացնել պետական հողերից և ոչ էլ 100 գլուխ մեծ և 500 գլուխ մանր անասունից աւելի ուղարկել հասարակաց արօտատեղիները արածելու։ Իրանց հայրերից անբաժան ապրող կալւածատէրերի որդիներին 250-ական իւգեր հողաբաժին էր միայն առաջարկում նա թողնել։ Իսկ մնացած բոլոր հողերը Տիբերոսն առաջարկում էր պրօլետարիատին բաժանել, պայմանն դնելով, որ ոչ ոք իրաւունք չունենայ իր ստացած հողաբաժինը ծախել կամ գրաւ դնել։

Խոշոր կալւածատէրերին մեծ վնասներ չը հասցնելու և նրանց գայրոյթը շատ չը շարժելու նպատակով, Տիբերիոսը միևնոյն ժամանակ առաջարկում էր, որ նրանց մի որոշ վարձատրութիւն տրւի պետական գանձարանից յետ առնւելիք հողաբաժինների համար։

Բայց Տիբերիոսը սխալւել էր. խոշոր կալւածատէրերը ոչ մի պայմանով չը համաձայնեցին իրանց իւրացրած հողաբաժինները զիջել և խիստ հակառակ կանգնեցին նրան։ Հակառակութիւնը, գնալով, աճեց և այն աստիճանի հասաւ, որ նրանք մեծ բազմութեամբ Տիբերիոսի վրայ յարձակւեցին և սպանեցին նրան իր 300 զինակիցների հետ միասին։

ԿԱՅՈՍ ԳՐԱԿՔՈՍ

Ծրագրւած բարենորոգումներն առաջ տանելու գործում Տիբերիոսին յաջորդեց նրա կրտսեր եղբայր Կայոսը։ Սա ևս տրիբուն ընտրւեց (123 թ.) և իսկոյն պահանջեց, որ արդէն ընդունւած օրէնքները անթերի կերպով իրագործւեն։ Այդ օրէնքների գործադրութիւնը սակայն լոկ նախադրւեն էին այն ընդարձակ ծրագրի, որով կարելի պիտի լինէր Հռոմի հանրապետութիւնը փրկել անխուսափելի անկումից։ Այդ բանը շատ լաւ ըմբռնելով, Կայոս Գրակխոսը մի շարք ուրիշ նոր օրէնքներ էլ քւեարկել տւեց։ Այդ նոր օրէնքների համաձայն կառավարութիւնը պարտաւոր էր աղքատ ժողովրդին կէս գնով ցորեն բաց թողնել պետական ամբարներից և զէնք տալ նրանց, որոնք կը ցանկանային զինւոր դառնալ և լեգիոնների մէջ մտնել։ Այս վերջին օրէնքով հնարաւորութիւն էր տրւում պրօլետարներին էլ զինւորական ծառայութիւն կրելու, մինչդեռ առաջ նրանք այդ իրաւունքից զրկւած էին հէնց նրա համար միայն, որ անկարող էին իրանց հաշւով զէնքեր գնել։ Բացի դրանից՝ կառավարութիւնը պէտք է ձրի հողաբաժիններ տար ցանկացողներին և գաղութներ հաստատէր նւաճւած նոր երկրներում։ Իսկ չը ցանկացողներին էլ աշխատանք և ապրուստի միջոցներ

տալու նպատակով, կառավարությունը պէտք է պետութեան հաշուով նոր ճանապարհներ, կամուրջներ և զանազան հասարակական շինութիւններ կառուցանէր թէ Հռոմում և թէ ամբողջ Իտալիայում։

Յետոյ՝ կայոս Գրակխոսը, կամենալով մի յայտնի աստիճան չափ ու սահման դնել բարձր պաշտօնեաների՝ հեռաւոր նահանգներում կատարած՝ բռնութիւնների ու անիրաւութիւնների, մի օրէնք անցկացրեց, որով փոխ հիւպատոսների և պրետորների գործունէութեան վերաբերեալ դատավարութիւնը, ծերակոյտից խլելով, ասպետների դասակարգին էր յանձնում։

«Հռոմի քաղաքացիները»-ի տնտեսական ու իրաւական դրութիւնն այդպէս մի յայտնի չափով բաւարարելուց յետոյ, կայոս Գրակխոսն իր ուշադրութիւնը «Հռոմի դաշնակիցների» վրայ դարձրեց։ Զը նայելով որ դաշնակից կոչուողները քաղաքացիներից ոչ պակաս պետական զանազան պարտականութիւններ էին կատարում, բայց և այնպէս նրանք միանգամայն զրկուած էին քաղաքացիական ամեն տեսակ իրաւունքներից։ Այդ իսկ պատճառով նրանց մէջ երկար ժամանակից ի վեր մեծ դժգոհութիւն կար Հռոմի դէմ։ Կայոսը կամենալով ընդառաջ գնալ նրանց պահանջներին մի օրէնք առաջարկեց, որի համաձայն «դաշնակիցները» պէտք է քաղաքացիական կատարեալ իրաւունքներ ստանային։

Բայց կայոսի այդ առաջարկը համակրութիւն չը գտաւ ոչ միայն հարուստ դասակարգերի, այլ և պրօլետարիատի կողմից էլ, որ նոյնպէս ցանկանում էր միշտ արտօնեալ դիրք ունենալ գոնէ «դաշնակիցների» վերաբերեալ։ Օրէնքը չանցաւ ծխական ժողովներում։


Հողային արիստոկրատիայի կատաղութեանը չափ ու սահման չկար։ Նրանք միջոցներ էին որոնում ոչ միայն առաջարկուած բարեկործութիւնները, այլ և հէնց իրան՝ կայոսին տապալելու։ Մեծ ժողովրդականութիւն վայելող տրիբունի դէմ բռնութիւն գործ դնելուց զգուշանալով, ծերակոյտը մտածեց խորամանկութեան դիմել։ Այսպէս՝ ժողովրդի համակրութիւնն իր կողմը դարձնելու նպատակով, նա կեղծաւորաբար իրան էլ ընդարձակ բարեկործութիւների կողմնակից ցոյց տուեց, և երկրորդ տրիբունի բերանով մի շարք շատ գրաւիչ նոր օրէնքներ առաջարկեցին քւէարկութեան։ Այդ օրէնքների համաձայն 12 գաղութներ պէտք է հաստատուէին հէնց Իտալիայում, պետական հողեր մշակող գիւղացիները պիտի ազատուէին հարկերից և այլն։ Թէև այդ առատաձեռն բարեկործութիւններն իրականացնելու մասին ծերակոյտն իսկի չէր էլ մտածում, բայց և այնպէս նրանք բաւականին թուլացրին կայոսի ժողովրդականութիւնը։ Այդ պարզ երևաց, երբ կայոսը փորձեց երրորդ տարին տրիբուն ընտրուել (121 թ.) ու չընտրուեց։

Այդ բանից սիրտ առած ծերակոյտն սկսեց հետզհետէ խոչնդոտներ յարուցանել կայոսի անցկացրած օրէնքների գործադրութեան առաջ, և յարաբերութիւնը երկու կուսակցութիւնների միջև նորից լարուեց։ Իսկ այդ վերջացաւ նրանով, որ կայոսին էլ իր եղբօր նման սպանեցին (121 թ. Ք. ա.) ու դիակը գետը նետեցին։ Արիստոկրատներն այն աստիճան կատաղած էին Գրակխոսների ու նրանց կուսակիցների դէմ, որ մինչև իսկ խստիւ արգիլեցին սպանուածների կանանց՝ բարձրաձայն լաց լինելու։

Իր կատարեալ իշխանութիւնը վերստին հաստատելով, կալւածատիրական կուսակցութիւնը հետզհետէ ոչնչացրեց այն բոլոր բարեկործութիւնները, որ սկսել էին կայոս Գրակխոսի օրով իրագործութիւն ստանալ։ Դասակարգային կռիւը մի ժամանակ դադարեց, նամանաւանդ որ շուտով Հռոմն ստիպուած էր մի նոր պատերազմ սկսել Աֆրիկայում, որը պատմութեան մէջ յայտնի է Յուգուրթական կամ Նումիդիայի պատերազմ անունով։

ՅՈՒԳՈՒՐԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Նումիդիան Հռոմի դաշնակից երկիր էր համարւում և նրա հովանաւորութեան տակ էր գտնւում։ Այդ երկի-



Նումիդիայի Տիրտա քաղաքը

րը երեք մասի էր բաժանւած, որոնցից ամեն մէկն իր առանձին թագաւորն ունէր։ Դրանցից մէկը՝ Յուգուրթան,

կամենալով միայնակ թագաւորել ամբողջ Նումիդիայում, միւս երկու՝ իր ազգական՝ թագաւորների վրայ յարձակւեց, սպանեց նրանց միմեանց յետևից ու գրաւեց նրանց երկիրները։

Հռոմի ծերակոյտը, յանդուգն աֆրիկացու ոտնձգութիւններն արգիլելու նպատակով, յաւուկ դեսպանութիւն ուղարկեց Նումիդիա։ Բայց Յուգուրթան կաշառեց դեսպաններին և իր կամքն առաջ տարաւ։ Շատ լաւ ծանօթ լինելով Հռոմի բարձր արիստոկրատիայի ապականած բարքերին, նա հաւատացած էր, որ կարելի է նոյնիսկ ծերակոյտի բոլոր ազդեցիկ անդամներին էլ կաշառել։ Եւ իրաւի, երբ ծերակոյտը, վերջապէս, պատերազմ յայտարարեց Յուգուրթայի դէմ, սա հռոմէական զօրապետներին ու ծերակոյտի անդամներին կաշառելով, կարողացաւ մի շարք այնպիսի մեծ յաղթութիւններ տանել, որ քիչ միայն Հռոմը զրկւեր իր Աֆրիկեան բոլոր երկիրներից։



Մարիուս

Այդպիսի խայտառակութիւնից զայրացած, ժողովրդական կուսակցութիւնը հիւպատոս ընտրեց Մարիուսին և նրան յանձնեց զօրքի գլխաւոր հրամանատարութիւնը։ Մարիուսը մի շատ անշան՝ անանկացած՝ ասպետական տոհմից էր և ծնւել ու մեծացել էր գիւղում։ Իբրև հասարակ զինւոր, պատերազմներում մանակացելով, նա շուտով շատ աչքի էր ընկել իր վերին աստիճանի քաջ և տոկուն բնաւորութեամբ։ Ժողովուրդը նրան զինւորական արիբուն էր ընտրել և իրաւ այդպիսին նա կարողացել էր

նոյնպէս բարձր դասակարգերի համակրութիւնը գրաւել։ Յետոյ՝ ամուսնանալով մի հին և նշանաւոր պատրիկեան տոհմի աղջկայ հետ, Մարիուսը ազգակցական կապերով էլ էր կապուել բարձր շրջանների հետ։ Մեծ վստահութեամբ էին վերաբերւում Մարիուսին և զինուորները, որոնց մասին նա միշտ մեծ հոգատարութիւն էր ցոյց տալիս, նրանց հետ բաժանելով պատերազմական բոլոր դժուարութիւնները։ Զօրքն այդ ժամանակներում բոլորովին նոյնը չէր, ինչ առաջներում, երբ ամեն մի պատերազմական արշաւանքից յետոյ ազատ էր արձակւում և տուն վերադառնում։ Հեռաւոր երկիրներում երկարատև պատերազմներ մղելու պատճառով Հռոմն այժմ ստիպւած էր մշտապէս մեծաքանակ զօրք պահել ռոճիկով։ Զինուորութիւնն այլևս մի տեսակ արհեստ էր դառել և զինուորները, բացի իրանց հրամանատարից, ոչ ոքի իշխանութիւնն այլևս չէին ուզում ճանաչել. ոչ Ծերակոյտի ու ոչ էլ ժողովրդի։

Զօրքերի գլխաւոր հրամանատարութիւնն ստանձնելով, Մարիուսը կարճ ժամանակի մէջ ոչնչացրեց Յուգուրթայի բանակը և իրան էլ ամբողջ ընտանիքով գերելով, Հռոմ բերեց (106 թ. Ք. ա.)։

Յաղթական զօրքով Հռոմ վերադառնալուց յետոյ, Մարիուսն իր յաղթութեան տօնը կատարեց. նա մի յաղթական թափոր (тріумфъ) կազմակերպեց, որի ժամանակ ինքը ոսկեզօծ կառքի մէջ նստած, անցնում էր իր զօրքով Հռոմի փողոցներով, իսկ գահնկեց Յուգուրթան գնում էր ոտքով կառքի առջևից իր ամբողջ թագաւորական զգեստով և ոսկէ շղթաներով շղթայած։ Թափորը վերջանալուց յետոյ, Յուգուրթային տարան բանտը, մերկացրին բոլորովին և թողեցին սառը յատակի վրայ սովից մեռնելու։

ԿԻՄԲՐԵՐԻ ԵՒ ՏԵՒՏՈՆՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Յուգուրթական պատերազմը հազիւ վերջացած, Հռոմին սկսեցին ուրիշ և բոլորովին նոր թշնամիներ սպառնալ։ Այդ թշնամիներն այժմեան գերմանական ազգերի նախահայրերն էին, որ դեռ բոլորովին վայրենի դրութեան մէջ էին գտնւում և յայտնի էին ընդհանուր՝ կիմբր և տեվտոն անուններով։ Նրանք գալիս էին հիւսիսից, խառնիճաղանճ խմբերով։ Եւ գալիս էին ոչ թէ երկիրներ նուաճելու, այլ միմիայն առատ պաշար գրտնելու և կողոպտելու նպատակով։ Թէև լաւ զինւած չէին նրանք, բայց մեծ կատաղութեամբ էին կռւում և չափազանց մեծ թիւ էին կազմում։ Կռւելիս այնպիսի վայրենի աղաղակներ էին արձակում կիմբրերը, որ միանգամայն սարսափահար էին անում իրանց թշնամիներին։

Հիւսիսային Իտալիա մտնելով, վայրենիներն ամենից առաջ գալլերի հետ ընդհարւեցին։ Սրանք, չը նայելով իրանց քաջութեանը, շատ շուտով ընկճւեցին և իրանք էլ ընդհանուր շարժմանը միացան։

Հռոմէական լեգիոններն էլ սկզբում անկարող հանդիսացան վայրենի հեղեղի այդ հոսանքը կանգնեցնելու։ Նրանք մի շարք խիստ պարտութիւններ կրեցին, որից յետոյ նորից ահագին իրարանցումն ընկաւ Հռոմում։ Համբերութիւնը կորցրած ժողովրդական կուսակցութիւնը, որն անյաջողութիւնների ամբողջ յանցանքը զեկավարող արիստոկրատիայի վրայ էր գցում, նորից գլուխ բարձրացրեց։ Տիրող օրէնքների հակառակ, Մարիուսը հինգերորդ անգամ հիւպատոս ընտրւեց և 6 տարի շարունակ վարեց այդ պաշտօնը։

Զօրքի գլխաւոր հրամանատարութիւնն ստանձնելով, Մարիուսը դարձեալ զինուորական մեծ տաղանդ ցոյց տւեց։ Ամենից առաջ նա մի շարք բարեփոխութիւններ մտցրեց զօրքի թէ կազմի և թէ սպառազինութեան մէջ։ Դեռ

Յուգուրթական պատերազմի ժամանակից էր սկսել նա իր զինուորական բարեփոխութիւնները, թոյլ տալով, որ ոչ մի ցենզ չունեցող պրօլետարներն էլ զինուրական շարքերի մէջ մտնեն։ Իսկ այժմ նա լեգիոնները մի քանի կօզորտների (վաշտերի) բաժանեց, իւրաքանչիւրը 5—6 հարիւր մարդից բաղկացած, նրանց կուռելու նոր եղանակներ սովորեցրեց, նոր տեսակի զէնքեր բաժանեց և այլն։ Յետոյ գերմանական ցեղերի դէմ դուրս գալով, Մարիուսը մի շարք փառաւոր յաղթութիւններ տարաւ. հարաւային Գալլիայում տեվտոնների ոյժը նա խորտակեց, իսկ հիւսիսային Իտալիայում կիմբրներին ջարդեց։ Այդպիսով այն ժամանակւայ քաղաքակիրթ աշխարհը փրկուեց վայրենի ցեղերի աւերիչ յորձանքից, և նրանք նորից իրանց կուսական անտառները յետ քաշուեցին (102 թ.)։

Այդ փառաւոր յաղթութիւններից յետոյ, Մարիուսն իր փառքի ամենաբարձր գագաթնակէտին էր հասել. զօրքը նրան «իմպերատոր» տիտղոսը տւեց, իսկ ժողովուրդը 6-րդ անգամը նրան հիւպատոս ընտրեց, որ միանգամայն հակառակ բան էր Հռոմի հանրապետութեան օրէնքներին։

Ժողովրդական կուսակցութիւնը, ոգեւորւած Մարիուսի յաջողութիւններից, մտածում էր թէ նրա օգնութեամբ պիտի կարողանայ ինքը մի շարք խիստ էական բարենորոգումներ անցկացնել։ Նրա ղեկավարները՝ տրիբուն Սատուրնինը և պրետոր Գլաւկիան, հէնց այդ նպատակով էլ դաշնակցելով Մարիուսի հետ, սաստիկ նպաստեցին նրա վեցերորդ անգամ հիւպատոս ընտրուելուն. Սակայն նրանք սաստիկ սխալւած էին. Մարիուսը որչափ որ տաղանդաւոր էր զինուրական ասպարիզում, նոյնչափ էլ անշնորհք դուրս եկաւ, իբրև քաղաքական գործիչ։ Վճռական րոպէին նա սկսեց սաստիկ տատանուել. բանակցութիւններ մէջ մտաւ թէ մի և թէ միւս կողմի հետ, կամենալով միաժամանակ հպրաշահած լինել երկու հակառակ

կողմն էլ։ Իսկ երբ խնդիրը զինւած բացարձակ կռւի հասաւ, Մարիուսը մինչև իսկ բարձր դասակարգերի կողմն անցաւ և իր երեկւայ բարեկամների դէմ դուրս եկաւ։ Ժողովրդական կուսակցութիւնը կրկին անգամ մեծ պարտութիւն կրեց. Սատուրնինը իր արբանեակներով, իրանց նախորդների նման, ընկան անհաւասար կռւի մէջ։

Դրանից յետոյ Մարիուսը բոլորովին կորցրեց իր վարկը ժողովրդի աչքում, իսկ բարձր արիստոկրատիայի համակրութիւնն էլ նա չը վաստակեց։ Քաղաքական ասպարէզից քաշւած, նրանով այլևս ոչ ոք չէր հետաքրքրւում։ Ինքն էլ իրանից դժգոհ, Մարիուսը չը կամենալով ականատես լինել, թէ ինչպէս Սատուրնինի ջանքերով անցկացւած բարենորոգումները ոչնչացւում էին միմեանց յետևից և թէ ինչպէս իր վաղեմի զինուորներին, փոխանակ հողաբաժիններ տալու, փշրանքներով էլն միայն վարձատրում, թողեց ու հեռացաւ Փոքր-Ասիա, համբերութեամբ աւելի լաւ օրերի սպասելով այնտեղ։

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հազիւ մի քանի տարի անցած, նորից բաղդը ժպտաց Մարիուսին. մի նոր պատերազմ սկսւեց Հռոմի դէմ և նրան հրաւիրեցին կրկին անգամ զօրքի գլուխ անցնելու։ Այդ պատերազմը պատմութեան մէջ յայտնի է Դաշնակիցների պատերազմ անունով, որովհետև այս անգամ Հռոմի դէմ զինւողը հէնց իր՝ Իտալիայի դաշնակից ցեղերն էին՝ սամնիտները, մարսները, լուկանները և այլն։ Դրանք վերջ ի վերջոյ համոզւելով, թէ Հռոմի քաղաքացիները երբէք չը պիտի իրանց էլ հաւասար քաղաքական իրաւունքներ տան, զաղտնի կերպով միմեանց հետ դաշնակցելով, որոշեցին միանգամայն անջատւել Հռոմից և իրանց համար առանձին պետութիւն հաստատեն։ Այդ նոր պե-

տուքիւնը պէտք է իր քաղաքական-վարչական կազմով միանգամայն նման լինէր Հռոմի պետութեան։ Նրանք իրանց համար արդէն նոր մայրաքաղաք և երկու հիւպատոսներ էին ընտրել, ծերակոյտ հաստատել և այլն։

Այդ բանն իմանալով, Հռոմի ծերակոյտը խիստ մեծ շփոթութեան մէջ ընկաւ. անհրաժեշտ էր զէնքի դիմել։ Բայց դաշնակիցներն այն աստիճան մեծ ոյժ էին ներկայացնում, որ նրանց յաղթելը շատ էլ հեշտ բան չէր։ Զօրքի հրամանատարութիւնն սկզբում Մարիուսին յանձնեցին, բայց յետոյ նրա դանդաղ գործունէութիւնից կասկածելով, նրան հեռացրին ու տեղը Սուլլային ընտրեցին։



Սուլլա

Սուլլան ծագումով Հռոմի արիստոկրատական մի շատ նշանաւոր տոհմից էր։ Իր սկզբնական զինուորական ծառայութիւնը նա կատարել էր Մարիուսի հրամանատարութեան ներքոյ և նրա քւեստորն (համարակալը) էր եղել։ Սակայն, իբրև բարձր արիստոկրատի զաւակ, նա սաստիկ չէր սիրում Մարիուսին, նամանաւանդ որ ինքն էլ պակաս քաջ ու փառասէր մարդ չէր։

Բայց Սուլլան էլ անկարող հանդիսացաւ դաշնակիցներին յաղթելու. ապստամբները մեծ վճռականութեամբ էին կռւում, և պատերազմը մօտ երկու տարի տևեց։ Հռոմի ծերակոյտը ստիպւած էր մի քանի էական զիջումներ անել։

ՄԱՐԻՈՒՍԻ ԵՒ ՍՈՒԼԼԱՅԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Դաշնակիցների պատերազմը դեռ նոր էր վերջացել, երբ Հռոմը ստիպւած էր մի նոր ու երկարատև պատերազմ սկսել Պոնտոսի թագաւոր Միհրդատ Եւպատորի դէմ։

Փոքր-ասիացի այս յոյն թագաւորը, կարթագէնացի Հաննիբալի նման, սաստիկ ատում էր հռոմայեցիներին և մեծ նախանձով էր նայում, թէ ինչպէս նրանք իրանց իշխանութիւնը հետզհետէ փոքր-ասիական երկիրների վրայ են տարածում։ Լինելով խիստ փառասէր ու աշխարհակալական ձգտումների տէր մարդ, Միհրդատը մտածում էր՝ դուրս վռնդել հռոմայեցիներին Փոքր-Ասիայից ու Յունաստանից և մի ընդարձակ յունական պետութիւն հաստատել։ Այդ նպատակը յաջողութեամբ իրագործելու համար, նա դաշնակցութիւն կապեց Մեծ Հայքի թագաւոր Տիգրան II-ի հետ և, օգուտ քաղելով Հռոմում տեղի ունեցող ներքին պառակտումներից, նրա ասիական նահանգների վրայ յարձակւեց և 80,000 հռոմայեցիներ կոտորել տւեց։ Այդ նահանգները գրաւելուց յետոյ, Միհրդատը անցաւ Յունաստան, որը նա համարեա թէ առանց պատերազմի գրաւեց։



Միհրդատ Եւպատոր

Այդ անսպասելի արշաւանքից սաստիկ շփոթւած, Հռոմի ծերակոյտն իսկոյն Սուլլային զօրքի հրամանատար ընտրելով, պատւիրեց նրան Միհրդատի դէմ գնալ։ Սուլլան այդ ժամանակ փոխհիւպատոսի պաշտօնով Կիլիկիայումն էր գտնւում, և հազիւ էր նա իր զօրքը գումարել ու հրամանատարութիւնն ստանձնել, երբ Հռոմից սուրհանդակ ներկայացաւ նրան ու յայտնեց, որ զօրքի հրամանատարութիւնն այլևս Մարիուսին է յանձնւած և սա

պիտի գնայ Միհրդատի դէմ։ Այդ տարօրինակ փոփոխութիւնը բացատրում էր նրանով, որ Սուլլային հրամանատար ընտրելուց յետոյ, ժողովրդական կուսակցութիւնը նորից գլուխ էր բարձրացրել Հռոմում ու պահանջել, որ Մարիուսին յանձնուի պօնտական թագաւորի դէմ պատերազմ մղելու գործը։

Հպարտ ու փառասէր Սուլլան, չը կարողանալով այդպիսի վիրաւորանք տանել, ոչ միայն չը զիջեց զօրքի հրամանատարութիւնը, այլ և նրա գլուխն անցած, ուղղակի Հռոմի վրայ արշաւեց։ Այդպիսի չը տեսնուած սպառնալիքից շփոթած ծերակոյտը մի քանի անգամ սուրհանդակներ ուղարկեց Սուլլային ասելու, որ նա յետ կանչի իր դիտաւորութիւնից և առիթ չը տայ եղբայրասպան պատերազմի։ Բայց նա չը լսեց։ Սուլլան Հռոմ մտաւ իր զօրքով, որտեղ նրանց դիմաւորեց զինուած ժողովուրդը Մարիուսի ղեկավարութեամբ։ Կռիւը շատ կատաղի էր քաղաքի փողոցներում և Սուլլայի կատարեալ յաղթութեամբ վերջացաւ։ Մարիուսը, մեծ դժւարութեամբ վերահաս մահից ազատւելով, փախաւ։

Դրանից յետոյ, Սուլլան ծերակոյտային արիստոկրատիայի հետ միացած, ոչնչացրեց այն բոլոր բարենորոգումները, որ ժողովրդական կուսակցութիւնը ձեռք էր բերել Դաշնակիցների պատերազմի ժամանակ, և ապա զօրքի գլուխն անցած, գնաց Միհրդատի դէմ պատերազմելու։

Մինչ Սուլլան նախ Յունաստանում և ապա Փոքր-Ասիայում պատերազմով էր զբաղւած, վրէժխնդրութեան ոգով լցւած փախստական Մարիուսը, աֆրիկեան զանազան ցեղերից ու տորուկներից զօրք հաւաքելով, Հռոմի վրայ արշաւեց։ Եղբայրասպան կատաղի պատերազմից յետոյ, այս անգամ էլ Մարիուսը տիրեց Հռոմին, և ապա սոսկալի կոտորած սկսեց հակառակ կուսակցութեան դէմ։

կոտորածը շարունակւեց ամբողջ 5 օր ու գիշեր, որ տարածւեց նոյնիսկ Իտալիայի միւս քաղաքներում էլ։

Մարիուսի կուսակիցները Սուլլային հայրենիքի թշնամի յայտարարեցին, յարքունիս գրաւելով նրա բոլոր կալւածներն ու հարստութիւնները։ Յետոյ նրանք մի շարք դեմոկրատական օրէնքներ անցկացրին և Մարիուսին էլ եօթերորդ անգամ հիւպատոս ընտրեցին։ Բայց նա այս անգամ երկար չը վայելեց այդ պաշտօնը և շուտով մեռաւ (86 թ. Ք. ա.)։

ՀԱՅՈՑ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԸ

Միհրդատի դաշնակից Տիգրան II-րդը Մեծ Հայքի Արտաքսիաս թագաւորի թոռն էր։ Նա դեռ մանուկ էր, երբ հայրը մեռաւ, ուստի թագաւորական գահի վրայ նրա հօրեղբայր Արտաւազդը բարձրացաւ (125—95. Ք. Ք. ա.)։ Այս թագաւորի օրով Մեծ Հայքի հարևան Պարթևաց տէրութիւնը մեծ զօրութեան հասաւ և, հայերի հետ ընդհարւելով, մանկահասակ Տիգրանին պատանդ վերցրեց։ Իսկ երբ Տիգրանը չափահաս դարձաւ, պարթևաց թագաւորը նրան զօրք տւեց և ուղարկեց իր հօր գահը Արտաւազդից յետ խլելու (95 Ք.)։ Այդպիսի օգնութեան փոխարէն Տիգրանը պարտաւորւել էր իր երկրից «70 հովիտ» զիջելու պարթևներին։

Տիգրան II-րդը մի շատ փառասէր և աշխարհակալական ձգտումների տէր մարդ էր, ուստի Մեծ Հայքի թագաւոր դառնալով, իր տէրութեան փոքրիկ սահմաններով չը բաւականացաւ։ Շուտով նա Ծովից աշխարհի վրայ յարձակւեց և Հայաստանի այդ մասն էլ իր երկրի սահմաններին միացրեց։

Ահա հէնց այդ ժամանակ էր, որ պօնտացի Միհրդատն իր ուշադրութիւնը Տիգրանի վրայ դարձրեց։ Նրան մի լաւ աջակից էր հարկաւոր Հռոմի զօրութիւնը խորտակելու համար, և Տիգրանը շատ համապատասխան էր նրա ձգտումներին։ Գորդիոս զօրավարին դեսպան ուղարկելով հայոց թագաւորի մօտ, նա առաջարկեց դաշնակցութիւն կնքել իր հետ Հռոմի դէմ։ Միևնոյն ժամանակ

նա իր կէօպատրա աղջկանը կնութեան տուեց երիտասարդ Տիգրանին։

Միհրդատի հետ դաշնակցելով, հայոց թագաւորն էլ իր նպատակներն ունէր. նա մտածում էր, որ Պոնտոսի զօրեղ թագաւորին աջակից ունենալով, ինքը կարող է աւելի ևս ընդարձակել իր տէրութեան սահմանները և շատ աւելի մեծ երկրի թագաւոր դառնալ։ Այդ է պատճառը, որ մինչ Պոնտոսի թագաւորը փոփոխակի բաղդով Հռոմի դէմ պատերազմով էր զբաղուած, հայոց Տիգրանը Առաջաւոր ու Փոքր-Ասիայում աւելի ու աւելի ընդարձակ նւաճումներ էր կատարում։

Ճիշտ այդ ժամանակ պարթեւաց արքունիքում խիստ մեծ ներքին պատակոումներ էին սկսւել, և Տիգրանն, օգտւելով այդ հանգամանքից, ամենից առաջ այդ երկրի վրայ յարձակւեց։ Նա այնպիսի մեծ հարուած հասցրեց պարթեւներին, որ նրանք ստիպուած էին, ոչ միայն հայերից խլած «70 հովիտները» վերադարձնել, այլ և իրանց գերիշխանութեան տակ գտնւած բոլոր երկիրներն էլ Տիգրանին զիջել։ Այդ երկիրներն էին՝ Կորդուաց աշխարհը (Քիւրդստան), Աղիաբքանը (նախկին հիւսիսային Ասորեստանը), Միջագետքը, Մեծ Միդիան, Ատրպատականը և այլն։ Բացի դրանից՝ պարթեւաց թագաւորը պարտաւորւեց «արքայից արքայ» տիտղոսն էլ Տիգրանին զիջել։



Մեծն Տիգրան

Հիւսիսից ու արեւելքից իր երկիրը բոլորովին ապահով դարձնելուց յետոյ, Տիգրանն իր ուշադրութիւնը հարաւային և արեւմտեան կողմը դարձրեց։ Օսրօէնը կամ Եղեսիան ու Կոմմագէնը նւաճելուց յետոյ, նա Սիրիայի վրայ արշաւեց։ Սելևկեանների անվերջ պատակոումներից ձանձրացած Սիրիայի բնակիչները հէնց իրանք էին «արքայից արքային» հրաւիրում իրանց երկիրը գրաւելու։ Նոյնպէս համարեա թէ առանց պատերազմի Տիգրանը Փիւնիկիան ու Կիլիկիան էլ նւաճեց։ Այս վերջինի ծաղկած քաղաքներից շատերի բնակիչներին նա Հայաստան տեղափոխեց բնակեցնելու։

Կիլիկիան ու Սիրիան հայկական առանձին նահանգներ դարձան, որոնց կառավարելու համար Տիգրանը մի յատուկ փոխարքայ էր նշանակել։ Իսկ Սելևկեանների նշանաւոր Անտիոք քաղաքը հայոց թագաւորի մայրաքաղաքներից մէկը դարձաւ։

Այդ ընդարձակ նւաճումներից յետոյ, Տիգրանը Միհրդատի դրդմամբ, հայկական ու պոնտական միացեալ զօրքերի գլուխն անցած, կապադոկիայի վրայ յարձակւեց։ Այդ երկիրը Հռոմի հովանաւորութեան տակ էր գտնւում։ Միհրդատը երկու անգամ նըւաճել էր նրան, բայց ստիպւած էր եղել նորից վերադարձնել։ Այս երրորդ անգամին Տիգրանը կապադոկիայի Արիոբարզան թագաւորին գերի բռնեց և նրա Մազակ մայրաքաղաքն էլ գրաւեց։ Այս քաղաքի 300 հազար բնակիչներին, ինչպէս և կապադոկիայի ուրիշ տասնումէկ ծաղկած քաղաքների բնակիչներին «արքայից արքան» իր Տիգրանակերտ մայրաքաղաքը տեղափոխեց բնակեցնելու, որ նա նոր էր հիմնել (77 թ. Ք. ա.) Տիգրիս գետի ափին։

Այդպիսով Տիգրան II-րդի օրով հայկական թագաւորութեան սահմանները Միդիական լեռներից մինչև Կիլիկիայի Տաւրոսը և Փուռ գետից մինչև Յորդանանն էին հասնում։ Հէնց այդ պատճառով էլ հայոց այդ մեծ աշխարհակալ թագաւորը պատմութեան մէջ յայտնի է *Մեծն Տիգրան* անունով։

ՍՈՒԼԼԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Սուլլան մեծ յաջողութեամբ վերջացրեց Միհրդատի դէմ սկսւած պատերազմը։ Ծունաստանում երկու ճակատամարտի մէջ Պոնտոսի զօրեղ աշխարհակալին յաղթելուց յետոյ, նա անցաւ Փոքր-Ասիա, ուր վերջին հարւածը հասցնելով, ստիպեց նրան հաշտութիւն խնդրել։ Այդ հաշտութեամբ Միհրդատը պարտաւորւում էր Հռոմին յանձնել իր ամբողջ նաւատորմիղը, և 20,000 տաղանդ էլ (30 միլիոն րուբլի) պատերազմական տուրք վճարել։

Հաշտութեան պայմանագրի բոլոր կէտերը դեռ չիբագործած, Սուլլան շտապով Հռոմ վերադարձաւ։ Մարիուսի կողմնակիցները զէնքով դիմաւորեցին նրան. երկու ճակատամարտ տեղի ունեցաւ, որոնց մէջ Սուլլան հաղթակորզնների բոլոր ոյժերը խորտակեց ու տիրեց քաղաքին։

Հռոմը նորից սոսկալի կոտորածների վայր դարձաւ։ Այս անգամ Մարիուսի կողմնակիցներին էին կոտորում, և կոտորում էին անխնայ։ Մինչև իսկ մեռածներին չը խնայեցին. Մարիուսի դիակը, գերեզմանից հանելով, յոշոտեցին ու գետը նետեցին։ Կոտորածը մի քանի օր շարունակուելուց յետոյ, Սուլլան սկսեց «պրօսկրիպցիա»-ները հրատարակել։ Այդպես էին կոչւում մեղապարտների ցուցակները։ Պրօսկրիպցիայի մէջ ընկած մարդուն ամեն ոք կարող էր սպանել և գալ առատ վարձատրութիւն ստանալ գանձարանից։ Իսկ սպանուածների գոյքերը յարգունիս էին գրաւում, որ Սուլլան յետոյ մեծ մասամբ իր զինուորներին էր բաժանում։ Սպանութիւնները Հռոմից տարածուեցին ամբողջ Իտալիա, իսկ այնտեղից էլ՝ հեռաւոր նահանգները։ Մարդկանց սպանում էին ամեն տեղ, մինչև իսկ տաճարներում՝ աղօթելու ժամանակ։

Կալւածատիրական արիստոկրատիան իր ազատարար Սուլլային ղեկատատոր յայտարարեց, իրաւունք տալով նրան այդ պաշտօնում մնալու այնքան, ինչքան որ ինքը կը ցանկանար։ Եւ նրա ամեն մի խօսքը պէտք է օրէնքի ոյժ ունենար։

Միապետական այդպիսի ընդարձակ իրաւունքներ ստանալով, Սուլլան միմեանց յետևից ոչնչացրեց բոլոր գոյութիւն ունեցող դեմոկրատական օրէնքներն ու կարգերը և բարձր արիստոկրատիայի լիակատար իշխանութիւնը հաստատեց։ Իսպառ ոչնչացնելով ցենզորութիւնը, խիստ ահմանափակելով տրիբուններների ու ազգային ժողովների

իրաւունքները, Սուլլան ամեն բան ծերակոյտին ենթարկեց։ Բարձրաստիճան պաշտօնեաներին դատելու իրաւունքն էլ ծերակոյտին յանձնեց, որ մինչ այդ ժամանակ ասպետների կուսակցութեանն էր պատկանում։

Այդ բոլորից յետոյ Սուլլան, բոլորովին անսպասելի կերպով, հրաժարուեց իր գերագոյն իշխանութիւնից և իր կալւածը քաշուեց, ուր անհոգեան նա մանաւոր մարդու կեանք էր վարում։ Բայց նա երկար չապրեց. մէկ տարուց յետոյ մեռաւ (78 թ. Ք. ա.), պատուիրելով իր մարմինն այրեն, որպէսզի իր դիակն էլ չը սրբապղծեն, ինչպէս որ ինքն էր արել Մարիուսի դիակի հետ։

ԿՆԷՈՍ ՊՈՄՊԷՈՍ

Չէնց որ Սուլլան մեռաւ, հակառակ կուսակցութիւնները նորից գլուխ բարձրացրին։ Ամենից խիստը Պիրենէեան թերակղզում ծագած ապստամբութիւնն էր։ Սուլլայի հալածանքներից այդտեղ փախած Մարիուսի կողմնակիցները, տեղական ժողովրդի հետ միացած, ոտքի էին կանգնել և ուզում էին անջատուել Հռոմից ու առանձին պետութիւն հիմնել Սպանիայում։ Ապստամբութեան գլուխն էր անցել Մարիուսի ամենալաւ զօրավարներից մէկը՝ Սերտորիոսը, որը շատ քաջ, խելօք ու ազնիւ մարդ էր և մեծ յաջողութեամբ էր ղեկավարում կռիւը Հռոմի դէմ։ Հռոմէական լեգիոնները միմեանց յետևից խայտառակ պարտութիւն էին կրում, մինչև որ ծերակոյտը զօրքի գլխաւոր հրամանատարութիւնը Կնէոս Պոմպէոսին յանձնեց։

Պոմպէոսն իր քաղաքական ու զինուորական կրթութեամբ ամբողջապէս Սուլլային էր պարտական, որի կուսակցութեան մէջ նա բաւականին նշանաւոր դեր էր կատարել։ Սուլլայի մահից յետոյ նա հռոմէական ամենա-

լաւ զօրավարներից մէկն էր համարւում, թէև, ինչպէս ժամանակակից պատմաբաններն են վկայում, նա շատ էլ մեծ տաղանդի տէր մարդ չէր և իր ունեցած յաջողութիւններով մեծ մասամբ բախտաւոր պատահականութեանն էր պարտական։ Հաւանական է համարւում, որ նա էլ, իր նախորդ զօրավարների նման, խայտառակ պարտութիւն կրէր Սպանիայի ապստամբներից, եթէ միայն այդ ժամանակ Սերտորիոսին դաւաճանութեամբ չսպաններ իր կուսակիցներից մէկը, որը կամենում էր նրա տեղն անցնել։ Սերտորիոսի մահից յետոյ, Պոմպէոսին շատ հեշտութեամբ յաջողւեց ապստամբութիւնը ճնշել և Սպանիան նորից նւաճել։



Կ. Պոմպէոս

Դեռ նոր էր Սպանիայի պատերազմը վերջացել, երբ հռոմէական Իտալիայում ստրուկների ապստամբութիւնը բռնկեց։ Հռոմում ամենից անտանելին ստրուկների վիճակն էր, որոնց թիւը հարիւր հազարների էր հասնում։ Նրանք, նամանաւանդ գլադիատորները, թէև շատ յաճախ էին ապստամբել, բայց ոչ մի անգամ նրանց ապստամբութիւնը այնպիսի մեծ ծաւալ չէր ընդունել, ինչպէս այս անգամ (73 թ. ք. ա.)։ Մօտ 120,000 ստրուկներ ոտքի էին կանգնել և երեք տարի շարունակ

սարսափի մէջ էին գցել ամբողջ Իտալիան։ Նրանց ղեկավարում էր նախկին ստրուկ Թրակիացի Սպարտակը, որը գլադիատորների վարժոցից էր փախել ու ապստամբութիւնը կազմակերպել։

Հռոմէական լեգիոնները այս ապստամբութեան մէջ էլ մի քանի խայտառակ պարտութիւններ կրեցին, մինչև որ հիւպատոս Կրասոսին յաջողւեց, վերջապէս, ստրուկների ոյժը խորտակել։ Կենդանի ազատւած ապստամբ բոլոր ստրուկներին էլ Սպանիայից վերադարձող Պոմպէոսը ոչնչացրեց, որին Կրասոսը շտապով օգնութեան էր կանչել։



Ստրուկն աշխատելիս

Զը նայելով որ յաղթութիւնը վերջ ի վերջոյ կառավարութեան կողմը մնաց, այնուամենայնիւ բարձր արիստոկրատիան հետզհետէ համոզւեց, որ անհնարին է Սուլլայի հաստատած օրէնքներն ու կարգերը պահպանել, եթէ չեն ցանկանում, որ երկիրը շարունակ ալեկոծւի զրկւած դասակարգերի ապստամբութիւններից։ Այդպիսի կարծիք ունեցողներից էր և Պոմպէոսը, որի առաջարկութեամբ Սուլլայի հրատարակած համարեա թէ բոլոր օրէնքները ոչնչացւեցին ու հինները վերականգնեցին։ Նորից իրանց նախկին իրաւունքների մէջ վերահաստատւեցին տրիբունները, ցենզորները, ծխական ժողովները, պրօկոնսուլարիատին հողաբաժին և հաց բաժանելը և այլն։

Այդ բարենորոգումների շնորհով Պոմպէոսը խիստ մեծ ժողովրդականութիւն ստացաւ և հէնց ժողովրդի պահանջով

նրան զօրքի ընդհանուր հրամանատար նշանակեցին և ծովային աւազակների դէմ ուղարկեցին։

Ծովային աւազակութիւնը սաստիկ զարգացել և մեծ յանդգնութեան էր հասել։ Ով չէր կարողանում Հռոմի աւրիստոկրատիայի լուծի հետ հաշտուել, գնում ծովային աւազակ էր դառնում։ Նրանց թիւն այնչափ մեծացել էր, որ այլևս չէին վախենում Հռոմից. կողոպտում էին բացարձակ կերպով, առանց քաշելու։ Առևտրական նաւերը հանգստութիւն չունէին նրանց ձեռքից։ Ամբողջ Միջերկրական ծովի շուրջը նրանք իրանց կողոպտած ապրանքների հա-



Դրադիատորների վարժոց

մար յատուկ նաւահանգիստներ ու պահեստներ ունէին, որով կարելի էր կարծել, թէ իրանց յատուկ պետութիւնն ունէին։ Աւազակների յանդգնութիւնն այն աստիճանի հասաւ, որ նրանք սկսեցին ցորենի մուտքն արգիլել Իտալիա, և Հռոմին սով էր սպառնում։

Պոմպէոսը 120,000 զօրքի և 500 նաւերի գլուխն անցած, աւազակների դէմ գնաց և ընդամենը երեք ամսւայ մէջ մաքրեց նրանցից Միջերկրականը. նրանց բոլոր ամրոցները նա քարուքանդ արեց, իսկ իրանց էլ՝ մի մասը

կոտորեց և մի մասն էլ, բռնելով, աքսոր ուղարկեց։

Այս պատերազմից յետոյ Պոմպէոսը, հրաժարւելով իրան յանձնած բացառիկ իշխանութիւնից, քաշւեց մասնաւոր կեանքով ապրելու։ Բայց այդ երկար չը տևեց. շուտով նրան հրաւիրեցին նորից պատերազմի գնալու Պոնտացի Միհրդատ Եւպատորի դէմ, որը դարձեալ սպառնում էր Հռոմին։

ՊՈՆՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թէև Սուլլան յաղթել էր Միհրդատին, բայց սա չէր ընկճւել. հռոմէական զօրքերի հեռանալուց յետոյ, վերանորոգելով հայոց Մեծն Տիգրանի հետ ունեցած դաշնակցութիւնը, նա կրկին պատերազմ սկսեց Հռոմի դէմ։

Լուկուլլոս զօրավարին ուղարկեց Հռոմի ծերակոյտն այս անգամ Միհրդատի դէմ։ Նա կարճ ժամանակի մէջ կատարելապէս խորտակեց Միհրդատի ոյժերը և քիչ մնաց, որ իրան էլ գերի պիտի բռնէր։ Բայց Միհրդատը փախաւ և գնաց իր փեսայ Տիգրանի մօտ ապաստան գտաւ։ Լուկուլլոսը դեսպան ուղարկեց և պահանջեց հայոց թագաւորից՝ յանձնել Միհրդատին, իսկ երբ մերժուեց ստացաւ, Հայաստանի վրայ արշաւեց։



Լուկուլլոս

Հայկական ու հռոմէական զօրքերը Տիգրանակերտի մօտ միմեանց հանդիպեցին, և չը նայելով որ հայերը թւով

մի քանի անգամ աւելի էին, այնուամենայնիւ մեծ պարտութիւն կրեցին։ Տիգրանը յետ նահանջեց և իր փեսա՝ Արտաշատ՝ մայրաքաղաքը գնաց, որ Արարատեան դաշտումն էր գտնւում, Արաքսի ափին։ Այնտեղ նա սկսեց նոր զօրք հաւաքել ու նորից պատերազմի պատրաստուել։ Լուկուլլոսը հետապնդելով Տիգրանին, նոյնպէս դէպի Արտաշատ գնաց, բայց այդ ժամանակ Հայաստանի վաղաժամ ձմեռը վրայ հասաւ, և զրաեբի անսովոր հռոմէական զօրքը, հրաժարւելով այլևս իր զօրավարին հետևել, պահանջեց յետ վերադառնալ։



Հռոմէական զինուորը

Լուկուլլոսը ստիպւած էր մեծ դժւարութիւններով յետ նահանջել, իսկ Տիգրանն ու Միհրդատը, օգուտ քաղելով առիթից, իրանց թարմ զօրքերի գլուխն անցած, սկսեցին յետ նւաճել հռոմայեցիների գրաւած բոլոր երկիրները (66 թ. Ք. ա.)։

Լուկուլլոսի այդ անյաջողութիւնները շատ մեծ գրգռում առաջացրին Հռոմում, և ժողովուրդը պահանջեց, որ իր սիրած Պոմպէոսին յանձնւի զօրքի հրամանատարութիւնն Ասիայում։

Պոմպէոսը մի մեծ զօրաբանակի գլուխ անցած եկաւ Պոնտոս և նախ Միհրդատի հետ գործ ունեցաւ։ Լիկոս (այժմ Եշիլ-Իրմակ) գետի մօտ տեղի ունեցած ճակատամարտում Միհրդատը՝ վերջնական ու սոսկալի պարտութիւն կրեց և փախաւ։ Իսկ Պոմպէոսը երկար ժամանակ նրան հալածելուց յետոյ, Հայաստանի վրայ արշաւեց։

Պոմպէոսից պարտւելով, Միհրդատն ուզեց, որ նորից Տիգրանի մօտ ապաստանի, բայց այս անգամ իմացաւ, որ «արքայից արքան» սաստիկ զայրացած է իր դէմ և մինչև իսկ մեծ գումար է խոստացել այն մարդուն, ով իրան՝ Միհրդատին՝ կը սպանի։ Դրա պատճառն այն էր, որ ճիշտ այդ ժամանակներում հայոց թագաւորի որդին, նոյնպէս Տիգրան անունով, դաւադրութիւն էր կազմել և ուզում էր, գահընկեց անելով հօրը, օր առաջ թագաւոր դառնալ։ Իսկ Մեծն Տիգրանը հաւատացած էր, թէ Միհրդատն է այդ դաւադրութեան մէջ։ Միևնոյն ժամանակ, զգալով հռոմայեցիների մեծ ոյժը, նա կամենում էր Միհրդատի սպանութեան գնով նրանց բարեկամութիւնը ձեռք բերել։

Անվեհեր Միհրդատն ստիպւած էր իր աներոջից էլ փախուստ տալ։ Բայց նա չընկճւեց. իր գանձերի մի մասը թշնամիներից պատելով, նա գնաց Սև ծովի Հիւսիսային ափերը, կամենալով այդ կողմերում նոր զօրք հաւաքել և կրկին շարունակել պատերազմը Հռոմի դէմ։ Այդ յանդուգն աշխարհակալը մտածում էր, կարթագէնացի Հաննիբալի եղանակով, ցամաքով կատարել իր արշաւանքը և Իտալիայի հիւսիսային կողմից յարձակւել Հռոմի վրայ։ Նա էլ էր երազում հպատակ զանազան ժողովուրդներին— սկիւթացիներին, մակեդոնացիներին, գալլերին և այլն ապստամբեցնել Հռոմի դէմ։ Բայց նրա հաւաքած զօրքը, զարհուրելով պատրաստւելիք դժւարութիւններից, ապստամբեց Միհրդատի դէմ։ Ապստամբների կողմն էր անցել և նրա փառնակ որդին, որը պաշարելով հօր բնակարանը, կամենում էր բռնել նրան։ Այդ ժամանակ միայն յուսահատւեց Միհրդատը և անձնասպանութեամբ վերջ դրեց իր կեանքին։

Պակաս յուսահատական չէր հայոց թագաւորի դրութիւնը փոքր Տիգրանի դաւադրութեան պատճառով։ Դեռ կապադովկիա-յումն էր նա, երբ որդու դաւադրութեան լուրը լսեց։ Շտապով Հայաստան վերադառնալով, Մեծն Տիգրանը մի լաւ ջարդ տւեց ապստամբ—դաւադիրներին։ Երիտասարդ Տիգրանը փախաւ և իր աներոջ՝ պարթևաց թագաւորի մօտ գնաց։ Կարճ ժամանակից յետոյ նա, պարթևական զօրքի գլուխն անցած, եկաւ Արտաշատը պաշարեց։ Ծանկարծակիի եկած Մեծն Տիգրանը հազիւ ազատւեց անխուսափելի վտանգից ու փախաւ։ Բայց շուտով նա զօրք հաւաքեց և, յարձակւելով որդու վրայ, կրկին մի լաւ ջարդ տւեց նրան։ Սա փախաւ և ուզեց այս անգամ իր պապի՝ Միհրդատի օգնութեանը դիմել։ Բայց ճանապարհին լսելով, որ Միհրդատը

յաղթել է հռոմայեցիներից, դաւաճան որդին ուղղակի Պոմպէոսի մօտ գնաց, խոստանալով նրան առաջնորդի դեր կատարել և Հայաստանի անմատչելի ճանապարհները ցոյց տալ, եթէ միայն հօր գահը իրան կը տան։

ՊՈՄՊԷՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երիտասարդ Տիգրանի առաջնորդութեամբ Պոմպէոսը Հայաստան մտաւ և սկսեց միմեանց յետևից նւաճել բոլոր բերդերն ու ամրոցները։ Այդպէս առաջ խաղալով, նա Արտաշատ հասաւ և պաշարեց Ծերունի Տիգրանին, որն իսկի չէր էլ մտածում դիմադրութիւն ցոյց տալ հռոմայեցիներին։ Նա անձամբ գնաց Պոմպէոսի մօտ ու նրա ոտների առակ դրեց իր արքայական թագը։

Հռոմայեցի զօրավարը, ալեզարդ թագաւորի այդպիսի խոնարհութիւնից սաստիկ զգացած, իսկոյն թագը վերցրեց, նրա գլխին դրեց, և նստեցնելով իր կողքին, սկսեց մխիթարել նրան։

—«Դու ոչ միայն թագաւորութիւնդ չես կորցրել,— ասաց Պոմպէոսը Մեծն Տիգրանին, — այլ և այսուհետև հզօր Հռոմի բարեկամը պիտի համարւես»։

Հայաստանի թագաւորութիւնը նա նորից Մեծն Տիգրանին յանձնեց, յետ վերցնելով միայն այն երկիրները, որ Տիգրանը նւաճել էր իր թագաւորութեան օրով։ Այդպիսով հայոց թագաւորին ճոռում էր Մեծ Հայքն ու Հայկական Միջագետքը։ Բացի դրանից՝ Մեծն Տիգրանը պարտաւորւում էր 6000 տաղանտ (մօտ 9 միլիօն րուբլի) պատերազմական տուգանք վճարել հռոմայեցիներին։

Իսկ երիտասարդ Տիգրանին Պոմպէոսը Ծոփաց աշխարհը տւեց, իբրև վարձատրութիւն նրա մատուցած դաւաճան ծառայութիւնների, պայման դնելով միայն, որ այդ երկրում եղած թագաւորական գանձերը Մեծն Տիգրանին յանձնւեն, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ 6000 տաղանդի խոշոր գումարը հռոմայեցիներին վճարել։

Երիտասարդ Տիգրանը Պոմպէոսի մօտ էր գնում։ Նա ոչ միայն ոտքի չը կանգնեց ծերունի հօր առաջ, այլ մինչև իսկ հրաժարւեց մասնակցել այն հացկերոյթին, որ Պոմպէոսը տւեց ի պատիւ հայոց թագաւորի։

Սաստիկ գժգոհելով Պոմպէոսի արած կարգադրութիւններից, երիտասարդ Տիգրանը սկսեց խրոխտանալ նրա դէմ, ասելով որ Թոյլ չի տայ Ծոփաց աշխարհից գանձեր դուրս բերելու։ Այդպիսի յանդգնութիւնից ու ամբարտաւանութիւնից սաստիկ զայրացած Պոմպէոսը շղթայել տւեց նրան և իր մօտ պահեց։ Իսկ երբ պարթևաց թագաւորը միջամտեց, ու փեսին ազատելու համար փրկանք առաջարկեց, նա պատասխան ուղարկեց, թէ՝—«որդու վրայ հայրն աւելի իրաւունքներ ունի, քան անները»

Մեծն Տիգրանից ու Միհրդատից խլած երկիրների մի մասը հռոմէական նահանգներ դարձան, իսկ մի մասն էլ Հռոմին հարկատու թագաւորութիւններ։ Պոմպէոսն այդ երկիրների հետ վարւում էր իբրև մի գերիշխան թագաւոր. իր ցանկութեան համաձայն նրանց վրայ թագաւորներ էր նշանակում, տուգանքներ որոշում և այլ կարգադրութիւններ անում։

Այդ թագաւորներից էր նաև Միհրդատի դաւաճան որդին՝ Փառնակը, որին Բոսֆորի մօտ եղած երկրի թագաւոր նշանակեց։

Ասիական երկիրները խաղաղեցնելուց յետոյ Պոմպէոսը Հռոմ վերադարձաւ, ուր նրան արքայավայել փառքով ընդունեցին։ Իր յաղթական երթի ժամանակ Ալեքսանդր Մակեդոնացուն պատկանած հագուստներով ու զէնքերով էր նա պճնւել, իսկ նրա կառքի առջևից բազմաթիւ տախտակներ էին տանում, որոնց վրայ նրա նւա-

ճած 16 թագաւորութիւնների, 1000 բերդերի և 900 քաղաքների անուններն էին գրած։ Նրա կառքի յետևից գընացող գերիների մէջ էր գանուում և հայոց թագաւորի որդին՝ երիտասարդ Տիգրանը, որին Պոմպէոսը ամբողջ ընտանիքով Հռոմ էր տարել։

ԿԱՏԻԼԻՆԱՅԻ ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մինչ Պոմպէոսը փառաւոր յաղթութիւններ էր տանում Ասիայում և նոր ու նոր երկիրներ գրաւում, Հռոմում նորից գլուխ էր բարձրացրել ժողովրդական կուսակցութիւնը և մեծ պայքար սկսել կառավարութեան դէմ։ Այս անգամ պահանջում էին՝ ծախել նւաճած երկիրներում ձեռք բերւած աւարն ու գաւառներում եղած պետական հողերն ու կալւածները և այդ բոլորից ստացւած գումարներով ընդարձակ հողաբաժիններ գնել Հռոմի իշխանութեան տակ եղած երկիրներում և հողազուրկ քաղաքացիներին բաժանել։ Այս նոյն առաջարկն էր, ինչ Գրակխոս եղբայրներն էին անում, բայց աւելի ընդարձակ չափերով։

Այս առաջարկը խիստ մեծ իրարանցում առաջացրեց Հռոմում։ Նրան դէմ էին ոչ միայն կալւածատէր ազնւականները, այլ և կապալառուներն ու միւս դրամատէր մարդիկ, որոնք մեծ օգուտներ էին ստանում պետական կալւածներից։ Ժողովրդական կուսակցութեանը չը յաջողեց օրինական ճանապարհով իր ցանկութիւնն անցկացնել ծերակոյտում։ Այդ ժամանակ կուսակցութեան աւելի յանդուգն անդամները որոշեցին բռնի միջոցներով ձեռք բերել իրանց ուզածը։ Նրանք մտածում էին հրդեհել Հռոմը մի քանի տեղից, սրի անցկացնել հիւպատոսներին ու ծերակոյտի անդամներից շատերին և, իշխանութիւնն իրանց ձեռքը գցելով, իրագործել իրանց բոլոր ցանկացածը։

Դաւադրութեան գլուխ կանգնած էր ազնւական Կատիլինան, որը մի շատ տաղանդաւոր ու քաջ մարդ էր։ Նա մի ընդարձակ ծրագիր էր մշակել ու իր կողմը գրաւել ամեն կարդի դժգոհ մարդկանց։ Հողազուրկ գիւղացիներից ու փախած ստրուկներից նա զինւած խմբեր էր պատրաստել Իտալիայի զանազան մասերում, իսկ Հռոմում գաղտնի ընկերութիւններ էր կազմակերպել։ Սկզբում Կատիլինան մտածում էր իր այդ կազմակերպութեան միջոցով հիւպատոս ընտրւել, իսկ եթէ չը յաջողւի, ապստամբութիւն առաջացնել։ Սակայն նրան չը յաջողւեց ոչ մէկը և ոչ միւսը։ Սպասւող յեղափոխութիւնից սարսափած բոլոր ունևոր դասակարգերը միացան ընտրութիւնների ժամանակ և տապալեցին Կատիլինայի թեկնածութիւնը։ Նրա փոխարէն Տուլլիոս Ցիցերոնին (յունարէն արտասանութիւնը Կիկերոն) ընտրեցին հիւպատոս, որն այն ժամանակւայ ամենանշանաւոր հռետորն ու փաստաբանն էր։ Ցիցերոնի ջանքերով Կատիլինայի դաւադրութիւնը բացւեց նախ քան սա կը կարողանար ապստամբութիւն առաջացնել։ Նրա կազմակերպած զօրքը ոչնչացւեց, իսկ ինքը՝ Կատելինան՝ ընկաւ կռւի մէջ (63 թ. Ք. ա)։



Ցիցերոն

կենդանի մնացած դաւադիրներին ծերակոյտը Ցիցերոնի դրդմամբ մահուան պատժի ենթարկեց, իսկ Ցիցերոնին, հանրապետութիւնն անխուսափելի վտանգից ազատելու համար, «Հայրենիքի հայր» մականունը տուեց։ Սակայն շատ ժամանակ չանցած հակառակորդները Ցիցերոնին մեղադրեցին հէնց նրա համար, որ Հռոմի քաղաքացիներին մահուան պատժի էր ենթարկել, առանց ծխական ժողովների կարծիքն իմանալու, մի բան, որ մեծ ապօրինութիւն էր համարւում Հռոմում։ Մեղադրանքն այն աստիճան վտանգաւոր էր, որ «Հայրենիքի Հայրը» ստիպւած էր փախչել Հռոմից։

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Թէև Կատիլինայի դաւադրութիւնը բացւեց ու դաւադիրներն էլ չարաչար պատժւեցին, բայց և այնպէս Հռոմի հանրապետութիւնը շատ քայքայւած դրութեան մէջ էր այն ժամանակ։ Երկարատև պատերազմներն ու ներքին խռովութիւնները այն աստիճան խախտել ու թուլացրել էին կառավարչական իշխանութիւնը, որ միապետական ձգտումներ ունեցող զօրավարը շատ հեշտութեամբ պիտի կարողանար ինքն իրան դիկտատոր կամ նոյն իսկ թագաւոր յայտարարել և ամբողջ պետութեան միահեծան տէրը դառնալ։ Շատերը հէնց այդպէս էլ սպասում էին Պոմպէոսից, երբ նա Ասիայից վերադարձաւ։ Բայց Պոմպէոսը ոչ միայն այդպիսի բան չարեց, այլ և Իտալիա հասնելուն պէս արձակեց իր զօրքը և յետոյ միայն, իբրև մասնաւոր մարդ, դիմեց ծերակոյտին, խնդրելով՝ վաւերացնել իր արած կարգադրութիւնները Ասիայում և հողաբաժիններ տալ իր զինուորներին, ինչպէս որ այդ սովորութիւն էր։ Եւ Պոմպէոսն այն ժամանակ միայն զգաց իր կատարած

սխալը, երբ իր խնդիրների վրայ ոչ մի ուշադրութիւն չը դարձրեցին՝ ոչ ծերակոյտը և ոչ էլ ազգային ժողովը։

Այդպիսի անտարբերութիւնից ու մինչև իսկ թշնամական վերաբերմունքից դրդւած, Պոմպէոսն սկսեց նորից իշխանութիւն ձեռք գցելու մասին մտածել, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ծերակոյտի վրայ ազդել և իր ուզածը կատարել տալ։ Բայց այժմ, երբ զօրքն արդէն արձակել և ինքն իրան զինաթափ էր արել, այլևս շատ հեշտ չէր կրկին անգամ իշխանութիւն ձեռք գցելը, նամանաւանդ որ այդ ժամանակ Հռոմում մեծ ազդեցութիւն ու ժողովրդականութիւն էին սկսել ձեռք բերել ուրիշ երկու նոր անձնաւորութիւններ, որոնք նոյնպէս բարձրը դիրքի էին ձգտում։ Այդ անձնաւորութիւնները ասպետների կուսակցութեան ներկայացուցիչ՝ շատ հարուստ կրասոսը և ժողովրդական կուսակցութեան սիրելին՝ տաղանդաւոր երիտասարդ Յուլիոս Կեսարն էին։ Պոմպէոսն իր նպատակին հասնելու համար, այդ երկու անձնաւորութիւնների հետ զաղտնի համաձայնութեան մէջ մտաւ և նրանք պայմանաւորեցին՝ ընդհանուր ոյժերով կռւել իրանց հակառակորդների դէմ ու փոխադարձաբար միմեանց օգնել իշխանութեան հասնելու (60 թ. Ք. ա.)։ Հռոմի այդ երեք ամենազօրաւոր մարդկանց զաղտնի միութիւնը պատմութեան մէջ յայտնի է *Առաջին եռապետութիւն (Triumvirat)* անունով։

Եռապետութեան շնորհով ամենից շատ Յուլիոս Կեսարն առաջ գնաց, որն այն շրջանի ամենանշանաւոր պետական անձն է համարւում։ Կեսարը թէև մի շատ հին ազնւական տոհմից էր, բայց ընտանեկան կապերով Մարիուսի կուսակցութեանն էր պատկանում։ Սուլլայի հալածանքներից նա փախուստով էր ազատւել և Հռոմ վերադարձել էր նրա մահից յետոյ միայն։

Նա մի շատ խելօք, զինուորական անօրինակ տաղանդի տէր և չափազանց ազնիւ մարդ էր։ Ոչ միայն ընտանեկան կապերով,

այլ համոզմունքով էլ նա ժողովրդական կուսակցութեանն էր պատկանում. նա հաւատում էր իր ժողովրդի ուղեղութեան վերածնութեանը և իր հոգու ամբողջ զօրութեամբ ձգտում էր նպաստել այդ բանին։

Պրօլետարիատի համար կեսարի սարքած խնճոյքներն ու զբաղճութիւնները միշտ աչքի էին ընկնում իրանց ճոխութեամբ ու շքեղութեամբ, և հէնց դրանց համար նա ոչ միայն իր հօրենական ամբողջ կարողութիւնն էր վատնել, այլ և ահագին պարտքերի տակ էր ընկել։ Սպանիայում քւէստորի պաշտօն ստանալով, կեսարը պարտքերի պատճառով չէր կարողանում Հռոմից հեռանալ, մինչև որ Կրասոսը երաշխաւորութիւն չը տւեց նրա պարտատէրերին։ Բայց հէնց այդ՝ իր սարքած՝ խնճոյքների ու զբաղճութիւնների շնորհով էր մասամբ, որ կեսարը պրօլետարիատի սիրելին էր դառել ու այնպիսի մեծ ժողովրդականութիւն ստացել։


Եռապետութիւնը կազմւելուց շատ ժամանակ չանցած կեսարը, Կրասոսի ու Պոմպէոսի աջակցութեամբ, հիւպատոս ընտրւեց և, ծերակոյտի կամքի հակառակ, Պոմպէոսի թէ զինւորներին վարձատրեց և թէ Ասիայում արած կարգադրութիւնները վաւերացնել տւեց։

Բայց այդ եռապետների գործունէութեան առաջին քայլերն էին միայն. կարճ ժամանակի մէջ նրանք, միմեանց օժանդակելով, այնպիսի մեծ ոյժ և ազդեցութիւն ձեռք բերեցին, որ կարող եղան ամբողջ հռոմէական պետութիւնը երեք մասի բաժանել ու ամեն մէկը մի մասի լիակատար կառավարիչը դառնալ։ Ալպեան լեռների այս և այն կողմի գալլական երկիրների կառավարութիւնը Յուլիոս Կեսարին տւեցին, ասիական երկիրները՝ Կրասոսին, իսկ Սպանիայի կառավարութիւնն էլ Պոմպէոսին յանձնեցին։

Այս վերջինը չը գնաց Սպանիա, այլ իր օգնականներին միայն ուղարկեց, իսկ ինքը մնալով Հռոմ, շուտով համարեա թէ դիկտատորի իշխանութիւն ձեռք բերեց։ Կրասոսը, որ ամենից աւելի իր անթիւ հարստութիւնները մեծացնելու մասին էր մտածում, Ասիա գնալով, ամենից առաջ Երուսաղէմի և ուրիշ մի քանի հարուստ տաճարները կողոպտեց։ Յետոյ՝ Պարթևաց տէրութեան հետ պատերազմի բռնւելով, նա շուտով սպանւեց (53 թ.)։

ՊԱՐԹԵՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Պոմպէոսի Հայաստանից հեռանալուց յետոյ, Մեծն Տիգրանը դարձեալ 8 տարի ապրեց։ Հայաստանի գահի վրայ նրան յաջորդեց իր կրտսեր որդին՝ Արտաւազդ II-րդը (56 թ. Ք. ա.), որն իր կլէոպատրա մօր ջանքերով շատ լաւ յունական կրթութիւն էր ստացել ու ինքն էլ յետոյ մի քանի գրական աշխատութիւններ էր կատարել։



Արտաւազդ II-ի դրամ

Պոմպէոսի ու Մեծն Տիգրանի միջև կայացած դաշինքի համաձայն հայերը հռոմայեցիների դաշնակիցներն էին համարւում և պարտաւոր էին պատերազմի դէպքում օգնել նրանց։ Կրասոսի՝ պարթևաց դէմ արշաւելու՝ դիտաւորութիւնն իմանալով, Արտաւազդ II-րդը 6000 ձիաւորներով հռոմայեցիների բանակը գնաց, խոստանալով դարձեալ 10,000 ձիաւոր և 30,000 հետևակ զօրք բերել տալ, եթէ միայն արշաւանքը Հայաստանի վրայով տեղի կունենայ։ Նա շատ լաւ գիտէր, որ պարթևները, արշաւանքի լուրն իմանալուն պէս ամենից առաջ Հայաստանի վրայ պիտի յարձակւէին, որպէսզի խանգարեն հայերին հռոմայեցիների հետ միանալու։ Եթէ ուրեմն հռոմէական բանակը Հայաստանի վրայով անցնէր, ինչպէս որ Արտաւազդն էր ցանկանում, պարթևական արշաւանքի առաջն այդպիսով առնւած կը լինէր։ Հայաստանի վրայով ճանապարհը թէև աւելի երկար էր, բայց շատ աւելի լաւ ու ապահով էր, մինչդեռ այն ճանապարհը, որով Կրասոսն էր ուզում գնալ, միանգամայն անապատ էր, և զօրքը մեծ նեղութիւններ պիտի կրէր ուտելիքի և ջրի պակասութիւնից։ Կրասոսը հէնց այդ ճանապարհն ընտրեց ու չը լսեց հայոց թագաւորին։ Սա էլ իր զօրքն առնելով շտապով Հայաստան վերադարձաւ։

Արտաւազդը բոլորովին չէր սխալւել. պարթևաց Օրոդ թա-

գաւորը, Կրասոսի դէմ իր քաջ զօրավար Սուրէնին ուղարկելով, ինքը մի գումարտակ զօրքի գլուխ անցած շուտով Հայաստանի վրայ յարձակուեց։ Իսկ Կրասոսի զօրքն էլ, քանի հեռանում, այնչափ աւելի ու աւելի մեծ դժուարութիւնների էր հանդիպում. Սուրէնն իր զօրքով դիմամբ շարունակ յետ էր նահանջում և հռոմայեցիներին աւելի ու աւելի երկրի խորքերը քաշում։ Անխուսափելի վտանգը տեսնելով, Արտաւազդը սուրհանդակ ուղարկեց Կրասոսին զգուշացնելու, որ քանի դեռ ուշ չէ, թող վերադառնայ։ Բայց Կրասոսը ոչ միայն չը լսեց, այլ և սպառնաց՝ մի լաւ պատժել հայոց թագաւորին, պարթեւների հետ իր հաշիւը վերջանալուց յետոյ։



Օրոդ

Կրասոսի ու Արտաւազդի այդ գժտութիւնից օգտուելով, Օրոդը հաշտութիւն կնքեց հայոց թագաւորի հետ և, նրա քրոջն իր Պակոր որդու համար կնութեան առնելով, աւելի ամուր կապերով հաստատեց իր բարեկամութիւնը։ Պարթեւաց ու հայոց թագաւորները Արտաշատում այդ հարսանեաց հանդէսն էին կատարում, երբ Սուրէնի կողմից սուրհանդակ եկաւ ու Կրասոսի կարած գլուխը բերեց։

Հռոմայեցիներին Սուրէնը մի շատ յարմար առիթ ընձեռեց մօտ 20 հազար մարդ սպանել և 10 հազար գերի էր բռնել։ Սպանուել էր նոյնպէս և Կրասոսը։

Հռոմէական զօրավարի կտրած գլուխը Արտաշատ բերեցին ճիշտ այն ժամանակ, երբ Օրոդն ու Արտաւազդը իրանց պալատականներով խնճոյքը վերջացրել և յունական դերասանների ներկայացումն էին դիտում։ Դերասանը Եւրիպիդի «Տարփուհի» ներկայացումից այն կտորը պիտի արտասանէր, երբ Պենթէի պատառոտած գլուխը ցոյց տալով, ասում է.

«Մենք հեռու լեռներից
Տուն ենք բերում

Փառաւոր աւարը՝
Արիւնոտ որսը»։

Օգտուելով առիթից, դերասանը Պենթէի դիմակի փոխարէն Կրասոսի արիւնոտ գլուխը ցոյց տուեց հանդիսականներին և ահագին ոգևորութիւն առաջ բերեց։

Պատմում են, թէ Օրոդը հալած ոսկի է լցնել տուել Կրասոսի կոկորդը, որպէսզի նրա անկուշտ ագահութիւնը յագեցնի։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐԸ ԳԱԼԼԻԱՅՈՒՄ

Մինչ Կրասոսն Ասիայում կորստաբեր պատերազմներով էր զբաղուած, իսկ Պոմպէոսը Հռոմում, շռայլ ու փարթամ կեանքի մէջ, իր վաստակած դափնեայ պսակների վրայ էր հանգստանում, Յուլիոս Կեսարը գալլական երկիրներում, նոր ու նոր յաղթութիւններ տանելով, իր ժողովրդականութիւնն էր աւելացնում։



Յուլիոս Կեսար

Գալլերը կամ կելտերը, որոնք տարածուում էին ամբողջ միջին Եւրոպայում (Ֆրանսիա, Շվէյցարիա, Բրիտանիա և այլն), այն ժամանակ դեռ ևս կիսավայրենի դրութեան մէջ էին գտնուում։ Նրանք բազմաթիւ մանր տոհ-

մերի ու համայնքների էին բաժանուած, որոնցից ամեն մէկն իրանից մի առանձին տէրութիւն էր ներկայացնում։ Իբրև դեռ ևս խաշնարած ու որսորդ ժողովուրդ, նրանք յաճախ, Ալպերն անցնելով, արգաւանդ Իտալիայի վրայ էին յարձակւում և մեծ անհանգստութիւն պատճառում հռոմայեցիներին։ Իրանց քաջութեամբ ու դաժանութեամբ գալլերը սարսափ էին ազդում ամենքի վրայ։

Այդ կիսավայրենիների դէմ պատերազմելը չափազանց դժւար գործ էր, և շատ մեծ պիտի լինէր այն զօրավարի փառքը, որը կը կարողանար դրանց յաղթել։ Ահա հէնց այդ մեծ փառքն էր, որ Յուլիոս կեսարին բաժին ընկաւ։ Ամբողջ 8 տարի պատերազմելով գալլերի դէմ, կեսարը նրբանց բոլոր երկիրները գրաւեց՝ Միջերկրականից մինչև Հիւսիսային ծովը և Ատլանտեան ովկիանոսից մինչև Ռէյն գետը։ Թէև նա մի անգամ Ռէյնն էլ անցաւ ու երկու անգամ Բրիտանիա գնաց, բայց այդ կողմերում նւաճումներ չարեց։

Այդ փառաւոր յաղթութիւնները աւելի ևս մեծացրին կեսարի ժողովրդականութիւնը, և նա, գնալով, աւելի ու աւելի զօրեղանում ու սպառնական էր դառնում։ Իսկ Պոմպէոսն, ընդհակառակը, իր անգործունէութեան շնորհով, հետզհետէ իր վաղեմի փառքը կորցնում ու նսեմանում էր։ Այդ դրութիւնը շատ լաւ զգալով և կեսարի աճող զօրութիւնից վախեցած, Պոմպէոսը միջոցներ էր որոնում իր երեկւայ դաշնակցին տապալելու համար։ Այդ նպատակով նա ծերակոյտի ու բարձր արիստոկրատիայի հետ բարեկամացաւ։ Իսկ նրա այդ քայլը աւելի ևս գրգռեց կեսարի կողմնակիցներին, որոնք աւելի մեծ եռանդով սկսեցին Պոմպէոսի վարկը գցել և կեսարինը բարձրացնել ժողովրդի աչքում։ Այդ նպատակով նրանք հրապարակային ճառախօսութիւններ էին անում, կեսարի հաշւով գլադիատորական մրցութիւններ կազմակերպում,

փող բաժանում, խնճոյքներ, ճաշկերոյթներ սարքում և այլն։

Կամենալով կեսարին զինաթափ անել, ծերակոյտը Պոմպէոսի խորհրդով հրամայեց Գալլիայի հերոսին՝ արձակել զօրքը և Հռոմ վերադառնալ։ Ի պատասխան այդ պահանջի կեսարի կողմնակից Կուրիոս տրիբունը հարց դրեց, որ Պոմպէոսն էլ իր՝ Սպանիայում ունեցած՝ իշխանութիւնից հրաժարւի։ Բայց ծերակոյտը ոչ միայն ուշադրութիւն չը դարձրեց այդ հարցի վրայ, այլ և որոշ ժամանակ նշանակեց կեսարին՝ Հռոմ վերադառնալու համար, յայտարարելով, որ հակառակ պարագայում նա հայրենիքի թշնամի կը նկատւի։ Այդ ժամանակ Կուրիոս և Մարկոս Անտոնիոս տրիբունները փախան և կեսարի մօտ գնացին, այդպիսով առիթ տալով նրան՝ հակառակորդներին ապօրինութեան մէջ մեղադրելու։

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հաւատարիմ զօրքի գլուխն անցած, Յուլիոս կեսարը հիւսիսային Իտալիայի գալլական նահանգը թողեց և, Ռուբիկոն գետն անցնելով (49 թ. Ք. ա.), բուն Իտալիա մտաւ։ Այդ արդէն երկրորդ քաղաքացիական պատերազմի նշանն էր, որպիսին առաջին անգամ տեղի ունեցաւ Հռոմում, Սուլլայի և Մարիուսի օրով։

Զը նայելով, որ այդ ընդհարումը բոլորովին անսպասելի չէր, այնուամենայնիւ Պոմպէոսը շատ անպատրաստ գտնւեց կեսարի դէմ պատերազմելու համար։ Նրա զօրքերը Սպանիայում էին, և նա միանգամայն անկարող հանդիսացաւ Հռոմը պաշտպանելու։ Յաղթական հակառակորդից ազատւելու միակ միջոցը փախուստն էր։ Եւ Պոմպէոսը փախաւ, ինչպէս և փախաւ ծերակոյտը, հակառակորդին թողնելով մինչև իսկ պետական գանձերը։ Կարճ ժամանակի մէջ կեսարը Հռոմի, ինչպէս և ամբողջ Իտալիայի

տերը դարձաւ։ Յետոյ՝ բոլորովին ուշադրութիւն չը դարձնելով, որ Պոմպէոսը Յունաստան էր գնացել ու այնտեղ պատերազմի պատրաստութիւններ էր տեսնում, նա Սպանիա գնաց, կամենալով նախ Պոմպէոսի սպանական զօրքը ոչնչացնել։ Սպանիան նւաճելուց ու իր թիկունքը միանգամայն ապահով դարձնելուց յետոյ, կեսարը Յունաստան գնաց։

Մինչ կեսարի գալը, Պոմպէոսը յաջողել էր ահագին զօրք հաւաքել այդտեղ արևելեան երկիրներից։ Նրա զօրքի թիւը նոյն իսկ աւելի մեծ էր, քան կեսարինը, և այս վերջինի դրութիւնը խիստ լրջանում էր նամանաւանդ նրանով, որ Պոմպէոսը նաւատորմիղ էլ ունէր։

Շատ մեծ դժւարութիւններով կարողացաւ կեսարն իր զօրքը Ադրիատիկականն անցկացնել։ Հռոմէական երկու նշանաւոր զօրավարները Իլիրիայում իրարու հանդիպեցին։ Սկզբում յաջողութիւնը, կարծես, Պոմպէոսի կողմն էր։ Բայց վճռական ճակատամարտում, որ տեղի ունեցաւ Մակեդոնիայում՝ Փարսալի մօտ (48 թ.), Պոմպէոսը կատարեալ պարտութիւն կրեց։ Գալլական պատերազմներում երկար տարիներ լաւ մարզուած հռոմէական լեգիոնները իրանց քաջութեամբ ու կուելու հմտութեամբ գերազանցեցին ասիական զօրքերին։ Պոմպէոսն այս անգամ Եգիպտոս փախաւ, յուսալով, թէ այնտեղ ապահով ապաստարան կունենայ։ Բայց հազիւ տեղ հասած, հէնց ցամաք դուրս գալու րոպէին նրան սպանեցին։ Յաղթական կեսարի բարեկամութիւնը վաստակելու նպատակով եգիպտական կառավարութիւնն էր այդ սպանութիւնը կատարել տուել։ Բայց երբ կեսարը, Պոմպէոսին յետապնդելով, Եգիպտոս եկաւ ու իմացաւ իր հակառակորդի եղեռնական մահը, աստիկ դժգոհ ճնաց և սարսափեց։ Նա հրամայեց խիստ արժանավայել պատուով թաղել Պոմպէոսի դիակը։

Մի առժամանակ Եգիպտոսում ճնալով, կեսարն սակաւած էր տեղական գործերով զբաղել։ Վերջին փարաւոնի կտակի համաձայն, պէտք է, նրա մահից յետոյ, իր Պտոլոմէոս որդին ու Կլէօպատրա աղջիկը միասին թագաւորէին։ Բայց Պտոլոմէոսը դուրս էր արել Կլէօպատրային Եգիպտոսից, և սա գնացել էր Սիրիա ու այնտեղ պատրաստութիւններ էր տեսնում եղբօր դէմ պատերազմելու։ Կեսարը միջամտեց այդ վէճին, պահանջելով, որ գահաժառանգները հանդուցեալ փարաւոնի կտակի համաձայն վարուեն։

Կեսարի այդ միջամտութիւնը մեծ զրգռում առաջացրեց Ալեքսանդրիայի բնակիչների մէջ, որոնք, մասամբ էլ Պոմպէոսի կուսակիցների դրդումով, ապստամբեցին նրա դէմ։ Շատ դժւարին կացութեան մէջ ընկաւ կեսարը. ամբողջ հինգ ամիս նա պաշարուած ծնաց թագաւորական դղեակում, մինչև որ Փոքր-Ասիայից օգնութիւն ստացաւ։ Ապստամբութիւնը ճնշելուց յետոյ, որի ժամանակ Պտոլոմէոսը խեղդուեց Նեղոսում և Ալեքսանդրիայի հարուստ գրադարանն էլ այրուեց, կեսարը կլէօպատրային հաստատեց եգիպտական գահի վրայ, պարտաւորեցնելով նրան իր և իր կրտսեր եղբօր անունից թագաւորել։ Միևնոյն ժամանակ եգիպտոսն այդուհետև պէտք է Հռոմի ծերակոյտի բարձրագոյն հովանաւորութիւնը ճանչնար։

Եգիպտոսից կեսարն շտապով Փոքր-Ասիա գնաց զօրքով, որտեղ Միհրդատի որդի Փառնակը, կամենալով իր հօր ժամանակւայ Պոնտական ընդարձակ տէրութիւնը վերականգնել, գլուխ էր բարձրացրել ու հռոմէական նահանգների վրայ յարձակւել։ Կեսարն այնպիսի արագութեամբ ու հեշտութեամբ չախչախեց Փառնակին, որ այդ պատերազմի մասին երեք բառով միայն զեկուցեց ծերակոյտին.—«Եկայ, տեսայ, յաղթեցի»։

Փոքր-Ասիայից կեսարը, վերջապէս, Հռոմ վերադար-

ձաւ, որտեղ նրան դեռ տեղ չը հասած դիկտատոր էին հռչակել անորոշ ժամանակով։

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Իր հակառակորդներին վերջնականապէս յաղթելուց յետոյ, երբ կեսարը Հռոմ վերադարձաւ, բոլորն սպասում էին թէ նա էլ, Մարիուսի ու Սուլլայի նման, կոտորած ու հալածանք պիտի սկսի քաղաքում։ Բայց նա, ընդհակառակը, ոչ միայն այդպիսի բան չարեց, այլ և ընդհանուր ներում յայտարարելով իր հակառակորդներին, ամեն կերպ աշխատեց, որ երկրի խաղաղութիւնն այլևս չը խանգարւի։ Բացի անորոշ ժամանակով նրան դիկտատոր յայտարարելը, ծերակոյտն ու ժողովուրդը նրան նոյնպէս և հիւպատոս ընտրեցին տասը տարով, թոյլ տալով նրան միաժամանակ իր ձեռքում կենտրոնացնել նաև տրիբունի իրաւունքները։ Իսկ գօրքը նրան իմպերատոր էր արդէն հռչակել, որ հանրապետութեան բոլոր զօրքերի գլխաւոր և հրամայող էր նշանակում։

Այդ բոլոր՝ միմեանցից տարբեր ու զանազան՝ պետական պաշտօններն իր անձի մէջ կենտրոնացնելով, կեսարն իրաւունք էր ստանում պետութեան ամեն տեսակ՝ թէ վարչական, թէ օրէնսդրական, թէ զինուորական և այլն՝ գործերն իր հայեցողութեամբ վարել։ Այլ խօսքերով կեսարը հռոմէական պետութեան միահեծան տէրը կամ թագաւորն էր հանդիսանում, առանց սակայն թագ և թագաւոր տիտղոսը կրելու։ Նրան իրաւունք էր տրւած ծիրանի հագնել մշտապէս և գլխին դափնեայ պսակ կրել, որ նոյնպէս բացառիկ իշխանութիւն ունենալու նշաններ էին համարւում։ Իսկ աւելի ուշ նրան մինչև իսկ գլխաւոր քրմապետի տիտղոս էլ տւեցին, որ հնումը միմիայն Հռոմի թագաւորներին էին տալիս։

Թէև ծերակոյտը դեռ շարունակում էր իր գոյութիւնը պահպանել, բայց նա այժմ բոլորովին այն չէր, ինչ որ առաջ. ծերակոյտի կարծիքները դիկտատոր կեսարի համար բոլորովին պարտաւորեցուցիչ չէին, և նա այժմ մի պարզ պետական խորհուրդ էր հանդիսանում։ Իր կազմով էլ այժմ ծերակոյտը առաջւանից տարբեր էր. կեսարը նրա անդամների թիւը 500-ից 900-ի բարձրացրեց, 400-ը միւս դասակարգերից լրացնելով։

Իսկ ազգային կամ ծխական ժողովները այժմ միմիայն դիկտատորի ցուցմունքներով էին առաջնորդւում։

Այդպէս հռոմէական պետութեան միահեծան տէրն ու կառավարիչը դառնալով, կեսարը միմեանց յետևից մի շարք այնպիսի բարենորոգումներ մտցրեց, որոնց մասին հասարակ ժողովուրդը դեռ Գրակխոս եղբայրների ժամանակից էր երազում։ Եւ իբրև պետական գործիչ ու բարեկարգիչ, կեսարը նոյնպիսի եռանդ, հեռատեսութիւն և տաղանդաւոր հմտութիւն ցոյց տւեց, որպիսին ցոյց էր տւել զինուորական ասպարիզում։ Նա մի քանի գաղութներ հաստատեց նւաճւած երկիրներում, ուր աւելի քան 80,000 աղքատ հռոմայեցիներ տեղափոխւեցին բնակւելու։ Իսկ գաղթել չը ցանկացող խեղճերին աշխատանք տալու նպատակով, նա մի շարք շինութիւններ հրամայեց կառուցանել Հռոմում։ Միևնոյն նպատակով նա մի օրէնք հրատարակեց, որի համաձայն խոշոր կալւածատէրերը պարտաւոր էին իրանց բանւորների մի երրորդ մասը ազատ քաղաքացիներից վարձել և $^2/_3$-ը միայն ստրուկներ բանեցնել։

Նահանգների բնակիչների նիւթական վիճակը բարձրացնելու նպատակով, կեսարն արգելեց հաւաքւելիք հարկերի կապալով տալը։ Միևնոյն ժամանակ, պետական պաշտօնեաների կամայականութիւններից ու բռնութիւններից նրանց թեթևացնելու համար, ինքնակոչ այդ պաշ-

ծանեաներին նշանակել, որ խիստ մեծ ընտրութեամբ էր կատարում։ Իսկ դրանց յանցաւոր դէպքում էլ շատ խըստութեամբ էր նա պատժում։

Բնիկ հռոմայեցիների վայելած քաղաքական իրաւունքները պետութեան մէջ ապրող բոլոր ժողովուրդների վրայ տարածելու նպատակով, կեսարը մի օրէնք հրատարակեց, որի համաձայն այդ իրաւունքից հետզհետէ պիտի ըրըւէին բոլոր այն նահանգների բնակիչներին, որոնք հռոմէական քաղաքակրթութիւն ընդունած կը լինեն։ Իսկ հռոմէական քաղաքակրթութիւն ասելով, կեսարը յունական քաղաքակրթութիւն էր հասկանում, որը նա չափազանց սիրում ու հովանաւորում էր։

Կեսարը մտադիր էր մի մեծ գրադարան հիմնել Հռոմում Ալեքսանդրիայի օրինակով։ Նրա պատւէրով Ալեքսանդրիայի գիտնականներից մէկն էլ հռոմէական տոմարն ուղղեց, որ չափազանց լի էր սխալներով։ Ուղղած այդ տոմարը կեսարի անունով Յուլեան տոմար կոչեց, որը մինչև այսօր էլ դեռ գործ է ածւում Ռուսաստանում ու հայերիս մէջ։ Տարւայ մէկ ամիսն էլ կեսարի անունով Յուլիս կոչեց։

Հարևան կիսավայրենի ցեղերի յարձակումներից հռոմէական պետութիւնը ապահով դարձնելու նպատակով, կեսարն սկսել էր բազմաթիւ բերդերով ամրացնել սահմանները։ Բայց դեռ այդ և ուրիշ շատ օգտակար ձեռնարկութիւններ չը վերջացրած, դաւադրութեամբ սպանեցին նրան (44 թ. Ք. ա.)։

ԴԱՒԱԴՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ԵՒ ԿԵՍԱՐԻ ՄԱՀԸ

Զը նայելով որ կեսարի ամբողջ գործունէութիւնն ուղղած էր ժողովրդի ընդհանրութեան շահերի, նրա նիւթական բարօրութեան ու բարեկեցութեան օգտին, այնուամենայնիւ ժողովրդի

բոլոր խաւերի մէջ էլ նրանից դժգոհներ կային։ Դժգոհ էին մանաւանդ ծերակոյտային արիստոկրատները, որոնք սովորած լինելով՝ դարեր շարունակ պետական բոլոր գործերի գլխաւոր ղեկավարները հանդիսանալ, այժմ մի կատարեալ ոչնչութիւն էին ներկայացնում։ Բայց դժգոհ էին և այն դեմոկրատական տարրերը, որոնք համոզած հանրապետականներ էին։ Սրանք անկարող էին սառնասրտութեամբ տեսնել, թէ ինչպէս կեսարը, հետզհետէ ոչնչացնելով հանրապետական բոլոր կարգերը, բացարձակապէս ձգտում էր միապետական թագաւոր դառնալ։ Թէև կեսարի միապետութիւնը խիստ դեմոկրատական բնաւորութիւն էր կրում, բայց և այնպէս նրանք չէին կարողանում այդ բանի հետ հաշտւել, որոնք հաւատացած էին, որ բոլոր միապետականները Յուլիոս կեսարի նման դեմոկրատական ձգտումներ կարող են չունենալ. նրա յաջորդները կարող են միանգամայն հակառակ ուղղութեան տէր մարդիկ լինել և ինքնակամ կերպով ոչնչացնել այն բոլորը, ինչոր կեսարն էր արել ժողովրդի օգտին։

Կեսարից դժգոհ էին և այն տարրերը, որոնք ցանկանում էին, որ Հռոմ քաղաքն ու նրա բնակիչները միշտ արտօնեալ վիճակ և իրաւունքներ ունենան մեւս բոլոր նահանգների վերաբերեալ։

Այդ բոլոր դժգոհ տարրերը միանալով, դաւադրութիւն էին կազմել կեսարի դէմ։ Դաւադրութեան գլուխ կանգնած էին՝ խրամանկ Կասիոսը և համոզած հանրապետական ու անպայման աղնիւ Բրուտոսը, որը կեսարի սիրելին էր ու նրանից մեծ բարիքներ էր վայելել։ Դաւադիրները կեսարին խաբէութեամբ ծերակոյտ տարան և հէնց ժողովի ժամանակ սպանեցին նրան։

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Կեսարի մահը սկզբում մի ընդհանուր շփոթութիւն առաջացրեց։ Գլուխ բարձրացրած հակառակ տարրերը կարծես թէ նոյնիսկ յաջողութիւն ունէին։ Բայց շուտով պարզուեց, որ դրանց հետևողների թիւը շատ փոքր է։ Արիստոկրատիայի եսասիրական իշխանութիւնից վաղուց ձանձրացած և կեսարի դեմոկրատական բարեկործութիւնները տեսած ստորին դասակարգերն այլևս ոչ մի կերպ չէին ցան-

կանում նախկին պետական կարգերին վերադառնալ։ Նամանաւանդ հակառակ էր զօրքը, որը Մարիուսի ժամանակներից ի վեր շատ մեծ ոյժ էր ներկայացնում և միշտ գերակշիռ դեր էր կատարում պետական գործերի մէջ։ Զօրքի ու ժողովրդի հէնց այդ տրամադրութիւնից էլ օգտուեցին կեսարի բարեկամները Մարկոս Անտոնիոսը, 19 տարեկան Օկտաւիանոսը, որը կեսարի որդեգիրն էր, և Սպանիայի ու հարաւային Գալլիայի փոխ-հիւպատոս Լեպիդը։ Դրանք, միմեանց հետ համաձայնութեան գալով, մի երկրորդ եռապետութիւն կազմեցին (43 թ. Ք. ա.) և կառավարութեան գլուխն անցան։



Օկտաւիանոս

Եռապետների առաջին գործը հակառակ կուսակցութիւններին սարսափահար անելը եղաւ. Մարիուսի և Սուլլայի ժամանակները նորից վերադարձան և դարձեալ արիւնն առատութեամբ սկսեց հոսել թէ Հռոմում և թէ ամբողջ Իտալիայում։ Զոհերի թւում այդ ժամանակ ընկաւ և նշանաւոր հռետոր Ցիցերոնը, որն աքսորից վերադարձել և դարձեալ մեծ դիրք էր գրաւում Հռոմում։ Հակառակորդներից շատերը Մակեդոնիա փախան, որտեղ իրանց ղեկավար Բրուտոսի և Կասիոսի շուրջը հաւաքուելով, մի պատկառելի զօրաբանակ կազմեցին։

Եռապետները իրանց զօրքով նոյնպէս Մակեդոնիա գնացին և Փիլիպպէ քաղաքի մօտ մի կատաղի ճակատա-


մարտ տեղի ունեցաւ։ Հակառակորդները սոսկալի ջարդ կրեցին, և Բրուտոսն ու Կասիոսը, իրանց ձեռնարկութեան անյաջողութիւնից յուսահատուած, անձնասպանութեամբ վերջացրին իրանց կեանքը (42 թ. Ք. ա.)։

Հակառակորդների հետ հաշիւը վերջացնելուց յետոյ, եռապետներն իրանց նախորդների նման, հռոմէական պետութիւնն իրանց մէջ բաժանեցին։ Անտոնիոսը Արեւելքը վերցրեց, Յունաստանով հանդերձ, Օկտաւիանոսը Իտալիայի ու բոլոր արևմտեան նահանգների կառավարիչը դարձաւ, իսկ Լեպիդին Աֆրիկան յանձնեցին։ Բայց որովհետև Լեպիդը մի շատ անշնորհք ու ողորմելի անձնաւորութիւն էր իրանից ներկայացնում, ուստի նրան այդ նահանգից էլ զրկեցին Օկտաւիանոսն ու Անտոնիոսը և իրանք երկուսով ձեռացին ամբողջ պետութեան լիակատար տէրերը։

Նրանք տասն երկու տարի հաշտութեամբ կառավարեցին երկիրը։ Եւ այդ ժամանակի ընթացքում մինչ երիտասարդ Օկտաւիանոսը շարունակ աշխատում և պետական գործերով էր զբաղած, թեթևամիտ Անտոնիոսը, եգիպտոսի կլէոպատրա թագուհիով յափշտակուած, մեծ մասամբ նրա պալատում զարճանութիւններով էր ժամանակ անցկացնում։ Նա փորձեց պարթևների դէմ պատերազմի գնալ, բայց անյաջողութեան հանդիպելով, կրկին Եգիպտոս վերադարձաւ, անյաջողութեան պատասխանատուութիւնը հայոց Արտաւազդ II-րդ թագաւորի վրայ գցելով։

Անտոնիոսը Օկտաւիանոսի քրոջ՝ առաքինի Օկտաւիայի վրայ էր ամուսնացած։ Հէնց այդ պատճառով էլ նրա՝ Եգիպտոսում վարած՝ անառակ կեանքը սաստիկ դուր չէր գալիս Օկտաւիանոսին։ Օկտաւիանոսն առիթ էր որոնում իր փեսային մի լաւ պատժելու համար։ Եւ առիթն այն եղաւ, որ խիստ փառասէր Անտոնիոսն իրան, Ալեքսանդր Մակեդոնացու օրինակով, ամբողջ Արևելքի

«արքայից արքայ» երևակայելով, սկսել էր կլէօպատրայից ծնուած իր զաւակներին, իբրև թագաժառանգներ, հռոմէական նահանգները բաժանել։ Օկտաւիանոսը նրան հայրենիքի թշնամի յայտարարեց և ծերակոյտին էլ դրդեց պատերազմ սկսել նրա դէմ։



Մարկոս Անտոնիոս

Վճռական ճակատամարտը ծովի վրայ տեղի ունեցաւ, Յունաստանի արևմտեան ափերի մօտ, և չը նայելով Անտոնիոսի անհամեմատ աւելի մեծ ոյժերին, յաղթութիւնը Օկտաւիանոսի կողմը ծնաց (33 թ. Ք. ա.)։ Հէնց առաջին ընդհարումից յետոյ կլէօպատրան փախաւ։ Իսկ նրան անմիջապէս Անտոնիոսը հետևեց։

Օկտաւիանոսն էլ նրանց յետևից Եգիպտոս գնաց, բայց մինչև նրա գալը, Անտոնիոսն ինքնասպանութեամբ վերջ դրեց իր կեանքին։ Կլէօպատրան նախ փորձեց Օկտաւիանոսին էլ հրապուրել իր գեղեցկութեամբ, բայց միանգամայն սառն անտարբերութեան հանդիպելով, նոյնպէս ինքնասպան եղաւ։

Դրանից յետոյ, Օկտաւիանոսը հռոմէական նահանգ դարձրեց Եգիպտոսը, իսկ ինքն էլ, Հռոմ վերադառնալով, այդ ընդարձակ պետութեան միակ կառավարիչն ու պետը դարձաւ։

ԱՆՏՈՆԻՈՍ ԵՒ ԱՐՏԱՒԱԶԴ II

Կրասոսի խայտառակ պարտութիւնից ոգևորուած պարթևացիք ու նրանց դաշնակից հայերը մի քանի անգամ Սիրիայի ու Պաղեստինի վրայ արշաւեցին և նոյն իսկ գրաւեցին այդ երկիրները։ Այդ ժամանակ հռոմայեցիք, ներքին պատակոծութիւններով զբաղուած լինելով, համարեա թէ անպաշտպան վիճակի մէջ էին թողել իրանց ասիական նահանգները։ Անտոնիոսի ու Օկտաւիանոսի իշխանութեան օրով միայն (38 թ. Ք. ա.) նրանք զօրք ուղարկեցին այդ նահանգների պաշտպանութեան համար։ Պարթևացիք մեծ պարտութիւն կրեցին, որից յետոյ Սիրիան ու Պաղեստինը նորից Հռոմին անցան և հայերն էլ Հռոմի գերիշխանութիւնը ճանաչեցին։

Հռոմէական զօրքի այդ յաղթութիւնից ոգևորուած Անտոնիոսը սկսել էր, Ալեքսանդր Մակեդոնացու օրինակով, ամբողջ Ասիան նուաճելու և մի շատ ընդարձակ թագաւորութիւն հաստատելու մասին երազել։ Նա այն աստիճան ոգևորուած էր իր ծրագրով ու այնքան վստահ իր յաջողութեան վրայ, որ ինքն իրան արդէն ամբողջ Արևելքի «արքայից արքայ» էր երևակայում և կլէօպատրայից ծնուած իր որդիներին էլ՝ թագաժառանգներ։ Որդիներից մէկին նա, ի միջի այլոց, Հայաստանի թագաժառանգ էր համարում և նրան հայկական հագուստ էր հագցնում ու գլխին հայկական խոյր դնում։

Իր այդ հսկայական ծրագիրն իրագործելու նպատակով, Անտոնիոսը 100 հազար զօրքով Եգիպտոսից Հայաստան գնաց։ Այդտեղ պէտք է հաւաքէին բոլոր դաշնակից զօրքերը և ապա պիտի գնային Պարթևաց տէրութիւնը նուաճելու, որն այդ ժամանակ ամենազօրաւորն էր Արևելքում։

Հայոց Արտաւազդ II թագաւորը սաստիկ համամիտ էր այդ ծրագրին. նա յոյս ունէր, թէ ինքն էլ, առիթից օգուտ քաղելով, կը կարողանայ յետ գրաւել Ատրպատականը, որ պարթևները խլել էին հայերից։ Բայց հէնց այդ Ատրպատականում դաշնակիցներն այնպիսի մի մեծ պարտութիւն կրեցին, որպիսին երբէք չէին սպասում ոչ Անտոնիոսը և ոչ էլ Արտաւազդը։ Անտոնիոսն այնտեղ մօտ 10,000 զօրք կորցրեց, որից յետոյ Արտաւազդը այլևս կասկածելով հռոմայեցիների յաջողութեան վրայ և վախենալով

պարթևների վրէժխնդրութիւնից, իր 13 հազար զօրքն առաւ ու շտապով Հայաստան վերադարձաւ։

Հայաստանից Անտոնիոսը շտապով Եգիպտոս վերադարձաւ, մտքումը դնելով, յարմար առիթին մի լաւ պատժել Արտաւազդին, որին իր անյաջողութեան ու ամբողջ խայտառակութեան միակ պատճառն էր համարում։ Շուտով նա Եգիպտոսից դեսպաններ ուղարկեց ու հայոց թագաւորին իր մօտ հրաւիրեց պատժելու նպատակով, ասելով թէ կամենում է նրա հետ մի նոր արշաւանքի մասին խորհրդակցել։ Արտաւազդը շատ լաւ հասկանալով Անտոնիոսի չար դիտաւորութիւնը, չը գնաց։ Այդ ժամանակ Անտոնիոսը մի այլ դեսպանութեան միջոցով Արտաւազդի աղջկայ ձեռքն իր այն որդու համար խնդրեց, որին ինքը Հայաստանի գահաժառանգ էր նշանակել։ Հայոց թագաւորը Անտոնիոսի այս խնդիրն էլ մերժեց, որով նրա կատաղի բարկութիւնն աւելի ևս բորբոքեց։

Այդ ժամանակ Անտոնիոսը ամեն կողմ յայտարարելով, թէ ինքը դարձեալ պատերազմելու է գնում Արևելք, Պոնտոս եկաւ ու նորից Արտաւազդին իր մօտ հրաւիրեց, իբր պատերազմական խորհուրդ կազմելու համար։ Բայց հայոց թագաւորը կրկին չը վստահեցաւ ու չը գնաց։ Համբերութիւնը հատած ու զայրացած Անտոնիոսն այս անգամ, զօրքն առնելով, ուղղակի Հայաստան արշաւեց։ Հայկական մայրաքաղաքի մօտ բանակ դնելով, նա խաբէութեամբ վերջապէս Արտաւազդին իր մօտ բերել տւեց և ձերբակալեց։ Նա գերեց նոյնպէս և հայոց թագուհուն ու զաւակներին և հետը Եգիպտոս տարաւ։ Հայոց թագաւորական գանձերն ու Անահիտ Աստւածուհու ոսկեձոյլ արձանն էլ Անտոնիոսը, յափշտակելով, հետը Եգիպտոս տարաւ։

Ալեքսանդրիա հասնելով, Անտոնիոսն իր բերած ամբողջ աւարը, ինչպէս և ոսկէ շղթաներով շղթայած Արտաւազդին, կէսօպատրային նւիրեց։ Քիչ յետոյ նա իր համար յաղթական թափոր (тріумфъ) սարքեց, որի ժամանակ հայոց թագաւորին իր ընտանիքով ստիպեցին շղթայակապ նրա առջևից գնալ։

Այդ միջոցին կլէօպատրան, ահագին ամբոխով շրջապատւած, նստած էր փողոցում մի բարձր ոսկէ գահի վրայ, որի մօտով թափորը պիտի անցնէր։ Սովորութիւն էր, որ եգիպտական թագուհու մօտով անցած ժամանակ, թափորի մէջ եղած բոլոր մարդիկ պալատաւոր էին խոնարհ գլուխ տալ նրան։ Իսկ գերւածներից նրանք, որոնք գթութիւն կաղերսէին թագուհուց, ազատութիւն կը ստանային։ Հայոց թագաւորն ու իր ընտանիքի անդամները ոչ միայն գթութիւն չը խնդրեցին կլէօպատրայից, այլ մինչև իսկ ղլուխ չը խոնարհեցրին. անցան նրանք թագուհու մօտով իրանց ամբողջ արժանապատւութիւնն ու վեհութիւնը պահպանելով։

Օկտաւիանոսը Արտաւազդի անմեղ զոհ լինելը իմանալով, շատ էր աշխատում նրան գերութիւնից ազատել, բայց Անտոնիոսը ոչ մի կերպ չը համաձայնեց և իր անկումից քիչ առաջ գլխատել տւեց հայոց թագաւորին։ Իսկ հայոց թագուհուն և զաւակներին Օկտաւիանոսը, իր փառաւոր յաղթութիւնից յետոյ, Հռոմ տարաւ և մեծ պատւով էր պահում։

Արտաւազդ II-ի գերւելուց յետոյ (33 թ. Ք. ա.), Հայաստանի գահը նրա մեծ որդին՝ Արտաքսիաս կամ Արտաշիաս II-դը բարձրացաւ։



ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՃԻՒՂԱՆ

ՕԿՏԱՒԻԱՆՈՍ ՕԳՈՍՏՈՍԸ

Անտոնիոսին յաղթելուց յետոյ, Օկտաւիանոսը Հռոմ վերադարձաւ, որտեղ ժողովուրդը նրան շատ մեծ փառքով ընդունեց։ Այստեղ նա մի քանի անգամ յաղթական թափորներ կազմակերպեց, որոնց ժամանակ առատ պարգևներ տրւեցին թէ զօրքին և թէ ժողովրդին։ Թէև Օկտաւիանոսը կեսարի հանճարը չունէր, բայց այն աստիճան խելօք ու հեռատես էր, որ շատ լաւ հասկացել ու գնահատում էր կեսարի ընդգծած պետական գործունէութիւնը և որոշել էր նրա ուղիով ընթանալ։ Երբ ոգևորւած ժողովուրդը նրան էլ այն բոլոր պետական բարձրագոյն պաշտօններն ու լիազօրութիւնները տւեց, ինչ որ կեսարին էր տւել, Օկտաւիանոսը խոստացաւ այլևս ամեն կերպ խուսափել պատերազմներից։ Նա շատ լաւ ըմբռնում էր, որ մօտ հարիւր տարւան դասակարգային կռիւներն ու ներքին պատակոտւմները չափազանց քայքայել ու սպառել էին ժողովրդի ոյժերը և սա խաղաղ ու հանգիստ կեանքի մեծ կարիք էր զգում։ Իրապէս Հռոմի միապետ թագաւորը դառնալով հանդերձ, նա ժողովրդին չը խրտնեցնելու համար, հանրապետական հաստատութիւնները էլ պահպանեց՝ թէ ծերակոյտը և թէ ժխական ժողովները։ Միայն թէ այնպէս արեց նա, որ այդ հաստատութիւնները մի-մի գործ

ծիք դարձան իր ձեռքում. այսպէս՝ Անտոնիոսի բոլոր կուսակիցներին հեռացրեց ծերակոյտից և իր հաւատարիմներով փոխարինեց նրանց։ Իսկ ժխական ժողովները նա իր հսկողութեան տակ առաւ միանգամայն։ Զևանալով թէ ինքը հանրապետական հաստատութիւնների մի պարզ հաւատարմատարն է միայն, Օկտաւիանոսն իր բոլոր կարգադրութիւնները ու օրէնքները ծերակոյտի և ժողովրդի անունից էր հրատարակում։

Առհասարակ Օկտաւիանոսն իրան չափազանց պարզ էր պահում, աշխատելով շատ մատչելի լինել ամենքի համար էլ։ Նա բոլորովին չէր սիրում երբ իրան «դիկտատոր» կամ մի այլ բարձրաստիճան տիտղոսով էին կոչում։ Ամենից աւելի նա պրինցեպս (առաջին քաղաքացի) անունն էր գերադասում։

Իր միապետական ձգտումները միանգամայն քօղարկելու նպատակով, Օկտաւիանոսը մի անգամ հարց բարձրացրեց ծերակոյտում, թէ ինքը կամենում է, հրաժարւելով իր ունեցած բոլոր իշխանութիւններից, հասարակ քաղաքացու կեանքով ապրել։ Եւ ծերակոյտը լուրջ ընդունելով այդ առաջարկը, թախանձեց նրան այդպիսի բան չանել և էլ աւելի ընդարձակ նոր լիազօրութիւններ առաջարկեց նրան։ Այդ լիազօրութիւնները հռոմէական նահանգներին էին վերաբերում. Օկտաւիանոսին առաջարկւում էր բոլոր նահանգների փոխ-հիւպատոս համարւել ու նրանց միակ միահեծան կառավարողը լինել։ Բայց Օկտաւիանոսը զգուշութեամբ, որ չը կասկածեն թէ ինքը նոր լիազօրութիւնների է ձգտում, նահանգները երկու կարգի բաժանեց. ներքին նահանգների կառավարութիւնը ծերակոյտին թողեց, իսկ արտաքին՝ պետութեան սահմաններին մօտ գտնւող՝ նահանգներն իր իշխանութեան տակ առաւ։ Այդ բաժանումը այն մեծ նշանակութիւնն ունէր Օկտաւիանոսի համար, որ այդպիսով պետական եկամուտների

մեծ մասն իր անձնական գանձարանն էր մտնում, իսկ միւս մասը միայն ընդհանուր պետական գանձարանը։



Օկտաւիանոս Օգոստոս

Բայց ծերակոյտը նրա մեծ հոգուբիւնից, կարծես, զգացած, նրան Օգոստոս (Աւգուստոս) տիտղոսը տւեց, որ *մեծութիւն կամ սրբազնութիւն է նշանակում։ Եւ հէնց Օգոստոս անունով էլ յայտնի է պատմութեան մէջ Հռոմի այդ առաջին ոչ թագակիր կայսրը։*


Իր դիրքը միանգամայն հաստատ ու ապահով դարձնելու նպատակով, Օկտաւիանոս Օգոստոսը նաև մի առանձին թիկնապահ զօրամաս հաստատեց, որ Պրետորեանների գունդ էր կոչւում և որն ամենաքաջ զինւորներից էր կազմւում։ Պրետորեանները կրկնակի թոշակ էին ստանում, շատ շքեղ էին հագնւում և մեծ արտօնութիւններ ունէին։ Այդ զօրամասը հետագայում Հռոմի համար մի կատարեալ պատուհաս դարձաւ. այլևս մեծ մասամբ նրանք էին տապալում ու ընտրում կայսրներին։ Թէ պրետորեանները և թէ լեգիոնների մէջ ծառայող զօրքը, ծառայութեան մէջ մտնելիս, պարտաւոր էին երդումն տալ, թէ հաւատարիմ պիտի մնան Օգոստոսին, որը նրանց վերաբերեալ իբրև, իմպերատոր, կեանքի և մահու իրաւունք ունէր։

ՕԳՈՍՏՈՍԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

Օկտաւիանոս Օգոստոսը մինչ մի կողմից, երկրի իշխանութիւնն իր ձեռքը հաւաքելով, մեծ զգուշութեամբ միապետական կայսրութիւն էր հաստատում Հռոմում, միւս կողմից նա, դարձեալ կեսարի օրինակին հետևելով, ընդարձակ բարենորոգումներով էր զբաղւած։

Երկարատև քայքայիչ պատերազմների պատճառով ընկած արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնը բարձրացնելու և առաւելապէս զարգացնելու նպատակով, Օգոստոսը բազմաթիւ ճանապարհներ ու կրանցքներ շինել տւեց։ Մասնաւոր հոգատարութիւն էր ցոյց տալիս նա ցորենի առևտրի մասին, աշխատելով որ Հռոմը երբէք հացի պակասութիւն չը զգայ և միշտ առատութիւն լինի։

Նա էլ անգործ պրօլետարիատին աշխատանք տալու նպատակով բազմաթիւ շինութիւններ կառուցել տւեց, և



Օգոստոսի գտղմշ հանօ փոտոսոՕ

նրա օրով շինւած շքեղ տաճարները, յաղթական կամարները, զբօսավայրերը, բաղնիքները, արձանները և այլ շէնքերը Հռոմի մի-մի զարդարանքներն էին համարւում։

Նահանգների քնակիչներին փոխ-հիւպատոսների ու պրետորների քմահաճոյքից ազատելու և նրանց տնտեսական վիճակը նոյնպէս բարձրացնելու նպատակով, Օգոստոսը կեսարի օրինակով խիստ հսկողութիւն նշանակեց այդ պաշտօնեաների վրայ և յանցաւոր ճանաչւածներին էլ սաստիկ ծանր պատիժների էր ենթարկում։

Զափաղանց խրախուսելով գրականութիւնն ու գեղարւեստը, Օկտաւիանոս Օգոստոսը միևնոյն ժամանակ մեծ ջանքեր էր գործ դնում, որ յետաւնաց ցեղերի ու ազգերի մէջ էլ հռոմէական կուլտուրան տարածւի։ Այդ տեսակէտով նա մեծ ուշադրութիւն էր դարձնում նամանաւանդ կիսավայրենի գալլերի վրայ, որոնք, յիրաւի, կարճ ժամանակի մէջ հռոմայեցիներից համարեա թէ չէին տարբերւում։

Օգոստոսի իշխանութեան օրով, ինչպէս Պերիկլէսի ժամանակ Աթէնքում, գրականութիւնն ու գեղարւեստը սաստիկ ծաղկեցին ու զարգացան Հռոմում։ Հռոմէական գրականութեան ոսկէ դարն է համարւում այդ շրջանը։ Այդ ժամանակ էին ապրում ու գրում Հռոմի ամենանշանաւոր բանաստեղծները՝ Վիրգիլիոս, Հորացիոս, Օվիդիոս, ինչպէս և յայտնի պատմագիր Տիտոս Լիվիոսը։

Հեռաւոր նահանգները սահմանակից բարբարոսների յարձակումներից պաշտպանելու նպատակով, Օգոստոսն 250 հազար հոգուց բաղկացած զօրքը սահմանների վրայ էր պահում, գլխաւորաբար Հռենոս Դանուբ և Եփրատ գետերի մօտ։

Զը նայելով իր խաղաղասիրական ձգտումներին, Օգոստոսը ստիպւած էր մի քանի պատերազմներ էլ մղել պարթևների ու գերմանացիների դէմ, որոնք ամենից աւելի էին խանգարում խաղաղութիւնը։ Սա Սպանիան էլ վերջնականապէս խաղաղեցրեց։

Օգոստոսի միայնակ իշխելը մօտ 45 տարի տեւեց, և նրա այդ իշխանութեան օրով տեղի ունեցաւ նաև մի դէպք, որը հետագայում չափազանց մեծ նշանակութիւն ստացաւ մարդկային պատմութեան մէջ։ Դէպքը Յիսուսի ծընունդն էր Հրէաստանում, որն այն ժամանակ Հռոմի գերիշխանութեան տակ էր գտնւում։ Օգոստոսը Յիսուսի ծնունդից 14 տարի յետոյ մեռաւ։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ ՕՐՈՎ

Անտոնիոսի կրած անյաջողութիւններից յետոյ, պարթեւները մի առ ժամանակ իրանց ներքին անյաջողութիւնների շնորհով թուլացան։ Այդ հանգամանքից օգտւելով, հայոց Արտաքսիաս II թագաւորը կարողացաւ նորից զորեղանալ ու առաջնակարգ դերը գրաւել Առաջաւոր Ասիայում։ Իր պապ Մեծն Տիգրանի նման, նա դրամներ էր կտրել տալիս «արքայից արքայ» մակագրութեամբ և թագաւորում էր Հռոմից բոլորովին անկախ։ Այդ բանը չը կարողանալով տանել, հռոմայեցիք շարունակ խնդրիկներ էին լարում Արտաքսիասի դէմ։ Դրանց շնորհով ապստամբութիւն յարեց Հայաստանում և նա սպանուեց (20 թ. Ք. ա.)։ Արտաքսիասի մահից յետոյ, հայերը նրա կրտսեր եղբօրը՝ Տիգրան III-ին թագաւոր յայտարարեցին, և հռոմէական իշխանատուն Տիբերիոսը, որն այդ ժամանակ հայերի հրաւէրով Հայաստան էր եկել զօրքով, մեծ հանդիսաւորութեամբ թագ դրեց նրա գլխին։ Այդ եղանակով Հայաստանը նորից Հռոմի գերիշխանութեան տակ էր մտնում։

Բայց այդ երկար չը տեւց. պարթեւները կրկին զօրեղացան, և այդ ժամանակից պատերազմներ սկսւեցին նրանց ու Հռոմի միջև Հայաստանին տիրելու նպատակով։ Հայաստանում երկու կուսակցութիւն էր առաջացել. մէկը հռոմայեցիների բարեկամութիւնն էր ցանկանում, իսկ միւսը՝ պարթեւների։ Պատերազմները տեւեցին մօտ 80 տարի, որի ժամանակամիջոցում աւելի քան 15 թագաւորներ թագաւորեցին Հայաստանում՝ ոմանք հռոմայեցիների և ոմանք էլ պարթեւների գերիշխանութեան ներքոյ։ Մեծն Տիգրանի տոհմը վերջանալուց յետոյ (14 թ. Ք. ծ. յետոյ), հարևան երկիրների այս կամ այն թագաւորական տոհմի մարդիկ էին թագաւորում Հայաստանում։ Այդ երերուն ու խառնակ դրութիւնը շարունակեց, մինչև որ, վերջապէս, պարթեւներն ու հռոմայեցիք համաձայնութեան եկան, որով Հայաստանը ճանաչուեց անկախ և պարթեւաց Արշակունիների թագաւորական տոհմն այնտեղ հաստատուեց (26 թ. Ք. յ.)։

ՏԻԲԵՐԻՈՍ

Շնորհիւ այն հանգամանքի, որ Օկտաւիանոս Օգոստոսը չափազանց մեծ զգուշութեամբ էր ոչնչացնում հանրապետական կարգերը, նրա հաստատած միապետութիւնը բոլորովին դուրկ էր օրինական լինելուց։ Հռոմէական պետութիւնը, տիրող օրէնքների համաձայն, շարունակում էր դեռ ևս հանրապետութիւն համարուել, իսկ Օկտաւիանոսը՝ ժողովրդի ու ծերակոյտի ընտրած՝ ներկայացուցիչը միայն։ Հէնց այդ պատճառով էլ կայսերական գահը ժառանգելու վերաբերեալ ոչ մի օրէնք չը կար։ Կայսրը պէտք է իր կենդանութեան ժամանակ բարձր պետական պաշտօններ տար ժառանգներին, այլապէս նրանք կարող էին չը ճանաչել ու չընդունել ժողովրդի ու ծերակոյտի կողմից։ Տիրող օրէնքների ոգու համաձայն, նոյնիսկ կայսրի նշանակած գահաժառանգներն էլ կարող էին իշխանութիւնն ապօրինաբար յափշտակողներ համարել։ Այդ իսկ հիման վրայ, Օկտաւիանոս Օգոստոսի յաջորդները, իրանց դիրքը սաստիկ խախուտ զգալով, վերին աստիճանի կասկածկոտութեամբ էին վերաբերւում ժողովրդին, ենթադրելով թէ սա ամեն րոպէ կարող է իրան զրկել իշխանութիւնից։ Եւ այդպիսի մեծ վտանգի առաջն առնելու նպատակով, Օգոստոսի անմիջական յաջորդ այրինցեալս անւանւող կայսրները մի կողմից՝ ձրի հաց ու փող բաժանելով և գլադիատորական մրցութիւններ ու այլ զբաղմունքներ կազմակերպելով աշխատում էին ժողո-

վըրդի ստորին խաւերի համակրութիւնը վաստակել, իսկ մեա կողմից՝ բազմաթիւ լրտեսների, բանտ ու կախաղանի միջոցով սոսկալի սարսափներ էին տարածում ժողովըրդի մէջ։

Այդ կարգի բռնակալութեան սկիզբը դրեց հէնց Օգոստոսի անմիջական յաջորդ Տիբերիոսը, որը նրա խորթ որդին էր։ Օկտաւիանոսն անզաւակ լինելով, Տիբերիոսին էր գահաժառանգ ընտրել և իր կենդանութեան ժամանակնըրան տրիբունի ու փոխհիւպատոսի պաշտօններ էր տւել։

Կայսր դառնալուն պէս Տիբերիոսը կատաղի հալածանք սկսեց ժողովրդի զանազան խաւերի դէմ։ Ամեն տեղ դաւադրութիւն նկատելով և շարունակ կասկածի ու վախի ազդեցութեան տակ գտնուելով, նա լրտեսների ու մատնիչների մի ամբողջ բանակ էր ստեղծել։ Մարդիկ ձերբակալւում, բանտարկւում ու գլխատւում էին տասնեակներով և հարիւրեակներով։ Մարդկանց յաճախ պատժում էին նոյնիսկ նորին կայսերական մեծութեան հասցէին անարգական խօսք արտասանելու մէջ մեղադրելով։ Մի ժամանակ գործն այն աստիճանի հասաւ, որ մինչև իսկ կանանց ու երեխաների էլ էին ձերբակալում և պատժում։ Տիբերիոսի կասկածկոտութիւնը այն աստիճանի հասաւ, որ իր կեանքի վերջին տարիներում նա բոլորովին խուսափում էր մարդկանցից, և հեռանալով Հռոմից, Կապրի կղզու վրայ էր ապրում՝ Նէապոլի դիմացը և այնտեղից՝ կառավարում երկիրը։

Ջր նայելով իր բռնակալութեանը, Տիբերիոսն այնուամենայնիւ Օգոստոսի շատ արժանաւոր ժառանգը հանդիսացաւ։ Իր նախորդի օրինակին հետևելով, նա էլ մեծ զգուշութեամբ շարունակ աշխատում էր, իր իրաւունքներն ընդարձակելով, միապետութիւնն աւելի ու աւելի հաստատ հիմքերի վրայ դնել։ Այսպէս՝ թէ պետական պաշտօնեաներ ընտրելու և թէ օրէնքներ հաստատելու իրաւունքը,

ծխական ժողովներից խլելով, նա ծերակոյտին յատկացրեց, որն այդ ժամանակ այլևս ոչ մի վտանգ չէր սպառնում։ Այդպիսով ծխական ժողովները Տիբերիոսի օրով բոլորովին կորցրեցին իրանց վաղեմի նշանակութիւնը։

Տիբերիոսն էլ, Օգոստոսի նման, իրան շատ համեստ էր պահում ու չէր սիրում, որ զանազան փքուն տիտղոսներով կանչեն իրան։

Հասարակ ժողովրդի սէրն ու համակրութիւնը գրաւելու համար, նա մեծ հոգատարութիւն էր ցոյց տալիս նրա մասին, ամեն կերպ աշխատելով, որ մթերքների առատութիւն լինի Հռոմում։ Միևնոյն ժամանակ նա սաստիկ հալածում էր ցոփ ու շռայլ կեանք վարող արիստոկրատներին, ինչպէս և ծանր պատիժների էր ենթարկում կաշառակեր ու կեղեքիչ դատաւորներին և այլ պետական պաշտօնեաներին։

Գիտութիւնն ու գրականութիւնն էլ մեծ հովանաւորութիւն էին գտնում Տիբերիոսի կողմից, որը ոչ միայն միշտ գիտնականներով ու գրականագէտներով էր իրան շրջապատում, այլ և ինքն էլ ոտանաւորներ էր գրում լատիներէն ու յունարէն լեզուներով։

ԿԱԼԻԳՈՒԼԱ ԵՒ ԿԼԱՒԴԻՈՍ

Տիբերիոսն էլ անզաւակ մեռաւ (37 Ք.)։ Կենդանութեան ժամանակ նա որդեգրել ու գահաժառանգ էր նշանակել իր եղբօր թոռանը՝ ժողովրդից սիրուած զօրավար Գերմանիկի կալիգուլա որդուն։ Ծերակոյտն էլ հէնց նրան կայսր յայտարարեց և ժողովուրդը մեծ ցնծութեամբ ընդունեց նրա գահ բարձրանալը։

Իր վարչութեան առաջին ամիսներում կալիգուլան կարծես թէ արդարացնում էր իր վրայ դրւած յոյսերը։ Սակայն շուտով հիւանդացաւ, որից յետոյ նա բոլորովին

փոխւեց։ Տիբերիոսի հալածանքների դաժան օրերը նորից վերադարձան, և շատ աւելի մեծ չափերով, քան Տիբերիոսի ժամանակ։ Կալիգուլայի հալածանքներին մինչև իսկ իր մերձաւոր ազգականներն էլ զոհ գնացին։

«Թող ատեն ինձ,— ասում էր Կալիգուլան,— միայն թէ թող վախենան ինձնից»։ Եւ չորս կողմ մահ տարածելով, կարծես թէ մի տեսակ զւարճութիւն էր զգում այդ դաժան կայսրը։ Այսպէս օրինակ՝ մէկ առաւօտ նա սպանել տւեց մի մարդու, իսկ կէս օրին սպանւածի հօրն իր մօտ ճաշի հրաւիրեց։ Բռնակալութեան զոհերը, դաւադրութիւն կազմելով, սպանեցին Կալիգուլային, չորս տարւան անզուսպ իշխանութիւնից յետոյ։

Կալիգուլայից յետոյ նոր կայսր յայտարարողները պրետորեանները եղան, այլ ոչ ծերակոյտը։ Նրանք ընտրեցին սիրւած զօրավար Գերմանիկի եղբօրը՝ Կլաւդիոսին, որը մի գիտնական մարդ էր և, մինչև կայսր դառնալը, իրան միշտ հեռու էր պահում քաղաքական գործերից։ Կայսր դառնալով, Կլաւդիոսը շարունակում էր գիտնականին յատուկ պարզութեամբ պահել իրան. մեծ յարգանքով էր վերաբերւում ծերակոյտի անդամներին, ինչպէս և պետական բարձր պաշտօնեաներին, և խիստ մատչելի էր իրան պահում ժողովրդի բոլոր դասակարգերի համար։

Կլաւդիոսի կատարած նշանաւոր գործերից մէկն այն էր, որ նա ոչնչացրեց Տիբերիոսի հրատարակած այն օրէնքը, որի համաձայն կայսրին անարգողները հալածանքի էին ենթարկւում։ Բացի դրանից՝ նա մի առանձին հովանաւորութիւն էր ցոյց տալիս ստրուկներին, որոնց մէջ խիստ շատ գրագէտներ կային և պետական դիւանատներում էին ծառայում։ Մինչև Կլաւդիոսի կայսր դառնալը Հռոմում ընդունւած սովորութիւն էր, որ հիւանդացած ստրուկներին կամ սպանում և կամ Տիբերի մէջ եղած կղզու վրայ էին տանում գցում։ Կլաւդիոսը մի օրէնք հրատարակեց,

որով հիւանդ ստրուկին սպանողը սովորական մարդասպան էր նկատւում, իսկ Տիբերիան կղզին նետած ստրուկը՝ ազատ արձակւած համարւում։

Կլաւդիոսի օրով Մեծն Բրիտանիայի հարաւային մասը, ինչպէս և Հրէաստանը հռոմէական մի-մի նահանգները դարձան։

Կլաւդիոսի ամենամեծ պակասութիւնն այն էր, որ չափազանց թոյլ կամքի տէր էր, և կառավարչական գործերը մեծ մասամբ նրա կանանց՝ նախ Մեսալինայի և ապա Ագրիպինայի ձեռքումն էին գտնւում։ Մեսալինային Կլաւդիոսը սպանել տւեց, նրա խիստ անբարոյական կեանք վարելու պատճառով։ Իսկ Ագրիպինան ստիպեց Կլաւդիոսին հեռացնել իր մօտից հարազատ որդուն և որդեգրել ու գահաժառանգ նշանակել իր՝ Ագրիպինայի՝ Ահենոբարբ որդուն, որն առաջին ամուսնուցն էր ծնւած։

Ն Ե Ր Ո Ն

Կլաւդիոսի մահից յետոյ, պրետորեանները 17 տարեկան Ահենոբարբին կայսր յայտարարեցին, տալով նրան Ներոն անունը։

Ներոնը բոլորովին պատրաստւած չէր պետական գործունէութեան համար։ Ընդհակառակը՝ նրան շատ աւելի գեղարւեստական կրթութիւն էին տւել. նա գիտէր նկարել, փորագրել, արձաններ քանդակել, քնարի վրայ նւագել, ոտանաւորներ գրել, արտասանել, մարմնամարզութեամբ պարապել և այլն։

Բնականից չափազանց փառասէր լինելով, Ներոնը դերասանական ձևերի սաստիկ սիրահար էր. իր կատարած գործերին նա միշտ աշխատում էր թատրոնական կեղծ արտայայտութիւն տալ։ Այսպէս օրինակ՝ չը նայելով որ իր դաժանութեամբ նա իրան շրջապատող հասա-

բակուԹիւնից բոլորովին բարձր չէր կանգնած, բայց երբ առաջին անգամ ի պատիւ նրա գլադիատորական մրցուԹիւն սարքեցին, նա Թոյլ չէր տւեց գլադիատորներին մինչեւ մահ սպանելու, ձևանալով Թէ ինքը չէ կարող սպանուԹիւն տեսնել։ Իսկ երբ առաջին անգամ նրան տւեցին մահուան պատիժ ստորագրելու, նա դերասանական ձևերով բացականչեց. «Օհ, երանի Թէ ես գրել չիմանայի»։ Բայց այդ չը խանգարեց, որ նա հարիւ կայսերական գահը բարձրացած, սպանել տար իր խորԹ եղբօրը՝ Բրիտանիկին և իր հարազատ մօրը՝ Ագրիպինային։



Ներոն

Աւելի ուշ Ներոնն իր կնոջն ու հարազատ զաւակին էլ սպանել տւեց, ինչպես սպանել տւեց և իր դաստիարակ Սենեկային, որն այն ժամանակւայ նշանաւոր փիլիսոփաներից մէկն էր, և հազարաւոր ուրիշ անմեղների։ Կրլաւդիոսի ոչնչացրած օրէնքը, կայսերական մեծուԹիւնը վիրաւորելու մասին, նորից վերականգնեց Ներոնը և աւելի մեծ չափերով էր օգտւում նրանից, քան իր նախորդները։

Մինչ մարդիկ հարիւրներով ձերբակալւում, բանտարկւում ու մահւան էին դատապարտւում, ինքը՝ կայսրը կրկեսում կամ Թատրոնում մրցուԹիւններով ու խաղերով


էր ոգևորւում։ Նրա ոգևորուԹիւնը մի ժամանակ այն աստիճանի հասաւ, որ ինքն էլ սկսեց մրցուԹիւններին մասնակցել։ Սկզբում նա մարմնամարզական մրցուԹիւնների մէջ էր մասնակցում, իսկ յետոյ սկսեց իբրև երգիչ հրապարակ դուրս գալ։ Այդ ժամանակ նա երգում ու նւագում էր քնարի վրայ։ Ներոնն իրան մի այնպիսի մեծ արտիստ ու երգիչ էր երևակայում, որ յաճախ ասում էր. «ԵԹէ գահից զրկւեմ, արւեստով պիտի հայԹայԹեմ ապրուստս»։

Ներոնը բազմաԹիւ Թշնամիներ ունէր, և դաւադրուԹիւն էր կազմւել նրա դէմ։ Այդ ժամանակներում Հռոմում մի չափազանց մեծ հրդեհ պատահեց, որից քաղաքի մեծագոյն մասը կրակի ճարակ դարձաւ (64 Թ. Ք. յ.)։ ԱռիԹից օգտւելով, Թշնամիները լուր տարածեցին, Թէ հէնց ինքը Ներոնն է հրդեհել տւել Հռոմը, չը նայելով որ կայսրն այս դէպքում մեծ կարեկցուԹիւն ու օգնուԹիւն էր ցոյց տւել հրդեհում Ճգնաժամներին։ Ժողովրդական կատաղի զայրոյԹից վախեցած կառավարուԹիւնն էլ, բոլոր կասկածները Ներոնի վրայից հեռացնելու նպատակով, հրդեհի ամբողջ յանցանքը քրիստոնեաների վրայ դրեց։ Սրանք այդ ժամանակ բաւական մեծ Թիւ էին կազմում Հռոմում և դեռ գաղտնի էին դաւանում իրանց նոր կրօնը։

Մի չը տեսնւած ու սոսկալի հալածանք սկսւեց քրիստոնեաների դէմ։ Հարիւրներով ու հազարներով էին ձերբակալում նրանց, կամենալով մի շատ տարօրինակ զարճուրԹիւն սարքել ժողովրդի համար, Ներոնը քրիստոնեաներից շատերին կրկէսի հրապարակում պատառոտել տւեց գազաններից, իսկ շատերին էլ, կայսերական պարտէզներում անկած սիւներին կապելով, իբրև ջահեր վառել տւեց հասարակական զբօսանքի ժամանակ։

Չը նայելով իր բոլոր դաժանուԹիւններին, հասարակ ժողովուրդը Ներոնին սիրում էր իր առատաձեռնուԹեան

ու վերին աստիճանի ճոխ հանդէսներ սարքելու համար: Նա մեծ ժողովրդականութիւն էր վայելում նոյնպէս և հեռաւոր նահանգներում ու մինչև իսկ հարևան երկիրներում:



Հռոմի կրկէսը

Այրւած Հռոմը Ներոնը նորոգել տւեց և առաջւանից շատ աւելի գեղեցիկ ձևով, իսկ յետոյ Յունաստան գնաց, որտեղ նա բոլոր ազգային խաղերին մասնակցեց: Յունաստանում, կարծես, նրա արտիստական տաղանդն աւելի էին գնահատում, և հէնց դրա համար էլ նա յոյներին

աւելի էր սիրում, ասելով թէ նրանք գեղարւեստական աւելի մեծ ճաշակ ունեն:

Մինչ Ներոնը Յունաստանում և ապա Իտալիայի զանազան քաղաքներում ներկայացումներով էր ոգևորւում, Հռոմում նրա դէմ կազմւած դաւադրութիւնը, գնալով, աւելի ու աւելի մեծ չափեր էր ընդունում: Մինչդէրն այն աստիճան լուրջ կերպարանք ստացաւ, որ Ներոնի Հռոմ վերադառնալուց շատ ժամանակ չանցած, ծերակոյտն ստիպւած էր հայրենիքի թշնամի յայտարարել կայսրին և հրաման արձակել նրան ձերբակալելու: Այդ իմանալով Ներոնն իսկոյն փախաւ: Բայց երբ նրա թագաւորան տեղը գտան, նա խնդրեց իր հաւատարիմներից մէկին սպանել իրան և այդ եղանակով վերջ դնել իր կեանքին:

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԻԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հռոմէական կլաւդիոս կայսրի օրով պարթևական գահի վրայ Արշակունի Վոլագաս I քաջ թագաւորը բարձրացաւ (51 թ. Ք. յ.): Կամենալով երեք հարևան երկիրները միևնոյն թագաւորական տան իշխանութեան տակ միացնել, նա իր Պակոր եղբօրը Միդիական Ատրպատականի գահի վրայ հաստատեց, իսկ Տիրիդ (Տրդատ) եղբօրն էլ զօրքով ուղարկեց Հայաստանի գահը գրաւելու: Այդ ժամանակ Հայաստանում Իբերիայի (Վրաստանի) Փարասման թագաւորի որդի Ռադամիստն էր թագաւորում: Սա իր նախորդ Միհրդատ թագաւորին,—որն իր հարազատ հօրեղբայրն էր,—դաւաճանութեամբ սպանել ու այնպէս էր Հայաստանի գահին տիրել: Հայ ժողովուրդը կամենալով օր առաջ ազատւել իր դաժան ու դաւաճան թագաւորից, մեծ սիրով ընդունեց Տիրիդին, և նրա զօրքերի հետ միանալով, դուրս վռնդեցին Ռադամիստին իր իբերիական զօրքերի հետ միասին:

Բայց որովհետև իբերիական տոհմը, Հայաստանում թագաւորելով, Հռոմի գերիշխանութիւնն էր ճանաչում, ուստի Հայաստանում տեղի ունեցած փոփոխութիւնը մեծ իրարանցում առա-

ջացրեց Հռոմում: Այդ ժամանակ Կլաւդիոսը մեռած էր և Ներոնն էր կայսր յայտարարուած: Սրա կարգադրութեամբ Հռոմի կառավարութիւնն իր ամենալաւ զօրավար Կորբուլոնին Արեւելք ուղարկեց, յանձնարարելով նրան՝ վռնդել Տիրիդին Հայաստանից և վերականգնել Հռոմի պատիւը: Փոքր-Ասիայում եղած հռոմէական ամբողջ բանակը Կորբուլոնի տրամադրութեան տակ էր դրւած: Բացի դրանից՝ Հռոմի գերիշխանութեան տակ եղած ասիական բոլոր թագաւորներին հրամայւած էր ամեն տեսակ աջակցութիւն ցոյց տալ Կորբուլոնին: Այդ թագաւորների թւումն էին նոյնպէս Փոքր-Հայքի ու Ծոփաց աշխարհի թագաւորները:

Չը նայելով այդ բոլորին, հռոմայեցիք շատ չարչարւեցին, մինչև որ կարողացան Հայաստանը գրաւել: Պատերազմական գործերի մէջ Կորբուլոնից ոչ պակաս հմուտ Տիրիդը, ի նկատի առնելով իր զինուորական ոյժերի անհամեմատ սակաւութիւնը, բացարձակ ճակատամարտի երբէք դուրս չէր գալիս: Նա աշխատում էր միայն յանկարծական յարձակումներով անհանգիստ անել հռոմայեցիներին և նրանց պաշարը բռնել: Եւ այդ եղանակով Տիրիդն այնպիսի վախի մէջ էր գցել Կորբուլոնին, որ նա մեծ զգուշութեամբ էր առաջ գնում. ահագին ժամանակ տևեց մինչև որ նա կարողացաւ, հայկական բերդերը նւաճելով, Արտաշատ մայրաքաղաքին հասնել: Տիրիդի բացակայութեան պատճառով, Արտաշատն անպաշտպան էր, ուստի քաղաքացիք առանց դիմադրութեան անձնատուր եղան, խնդրելով միայն, որ հռոմայեցիք ոչ մի վնաս չը հասցնեն քաղաքին: Կորբուլոնը խոստացաւ և ինքն էլ մնաց այնտեղ ձմեռելու (59 թ. ք. յ.): Սակայն գարնանը, երբ արդէն ինքը պիտի թողնէր հայոց մայրաքաղաքը, նա հրամայեց հրդեհել և հողի հետ հաւասարեցնել նրան: Արտաշատից հռոմայեցիք Տիգրանակերտի վրայ գնացին, որ նոյնպէս գրաւեցին նրանք (60 թ.): Բայց այս քաղաքը նրանք անվնաս թողեցին:

Տիգրանակերտի գրաւելուց յետոյ, Ներոնը Հայաստանի գահը տւեց Տիգրան VI-րդին, որը Կապադոկիայի թագաւորի թոռն էր: Այս Տիգրանը իր թագաւորութեան հէնց առաջին տարին, հռոմայեցիների դրդումով, պարթևաց տիրապետութեան սահմանների վրայ յարձակւեց: Վոլոգասը, որն այդ ամբողջ ժամանակ հիւրկանների դէմ պատերազմի բռնւած լինելու պատճառով, անկարող էր եղել Տիրիդ եղբօրն օգնել, Տիգրան IV-րդի յանդուգն վարմունքից սթափւած, հաշտութիւն կնքեց հիւրկան-

նների հետ և ապա մի մեծ ժողով գումարելով, Տիրիդին մեծ հանդիսաւորութեամբ Հայաստանի թագաւոր պսակեց ու, բազմաթիւ զօրք տալով, նրան Տիգրանի դէմ ուղարկեց: Ինքն էլ սկսեց պատրաստութիւններ տեսնել, հռոմէական արևելեան նահանգների վրայ յարձակւելու նպատակով:

Այդ իմանալով, հռոմայեցիք կրկին զօրք ուղարկեցին Հայաստան: Այս անգամ զօրքերի հրամանատարութիւնը Պետ անունով զօրավարին յանձնեցին, որովհետև Կորբուլոնն արդէն Սիրիայի փոխ-հիւպատոս էր նշանակւած և ինաց Եփրատի սահմանները պահպանելու: Բայց Պետը, անզգուշութեան պատճառով, խիստ մեծ պարտութիւն կրեց և շուտով յետ նահանջեց: Տիրիդը նորից գրաւեց Հայաստանը:

Հռոմայեցիք ստիպւած էին կրկին անգամ Կորբուլոնին ուղարկել Տիրիդի ու Վոլագասի միացած ոյժերի դէմ (63 թ.): Բայց այս վերջիններն, շատ լաւ հասկանալով, որ հռոմայեցիք ոչ այնքան Հայաստանի վրայ գերիշխելու, որքան իրանց անուան պատիւը վերականգնելու մասին են մտածում, այս անգամ շտապեցին բանակցութեան մէջ մտնել Կորբուլոնի հետ: Եւ իսկապէս, Կորբուլոնը պահանջում էր միայն, որ Տիրիդը Հռոմ գնայ և հանդիսաւորապէս Ներոնի ձեռքից ընդունի Հայաստանի թագը:

Տիրիդը սկզբում այդ առաջարկից էլ էր հրաժարւում. պատճառ բռնելով, թէ որովհետև ինքը միաժամանակ և քրմապետ է, ուստի անկարող է բացակայել երկրից: Նա առաջարկում էր, որ ինքը, Հռոմ գնալու փոխարէն, Ներոնի արձանի առաջ խոնարհութիւն ցոյց տայ: Բայց վերջը, տեսնելով որ իրանից անպայման պահանջւում է Հռոմ գնալ, նա համաձայնեց, պայման դնելով միայն, որ 1) ճանապարհորդութիւնը, զրադաշտեան կրօնի համաձայն, տեղի ունենայ ոչ թէ ծովով, այլ ցամաքով, որպէսզի զանազան անմաքրութիւններ թափելով ծովի մէջ, ինքը պղծած չը լինի ջուրը: 2) ճանապարհորդութիւնը մեծ հանդիսաւորութեամբ պիտի կատարւէր, և 3) բոլոր ծախսերը պէտք է Հռոմի հաշւին լինէին:

Առաջարկւած բոլոր պայմաններն ընդունւեցին և Տիրիդն սկսեց ճանապարհորդութեան պատրաստութիւններ տեսնել, որ ամբողջ երեք տարի տևեցին:

Զափազանց հանդիսաւոր բնաւորութիւն էր կրում Տիրիդի ճանապարհորդութիւնը. նա գնում էր իր կնոջ, որդիների ու բազմաթիւ հայ և պարթև իշխանազունների ուղեկցութեամբ, ե-

րեք հարիւր թիկնապահ զինուորներով շրջապատուած։ Ճանապարհորդութիւնը մի քանի ամիս տևեց, որոնց ընթացքում Հռոմն օրական մօտ 2 միլիոն դրախմ (կէս միլիոն լուբլուց աւելի) փող էր ծախսում։ Անցած բոլոր երկիրներում Տիրիդին արքայավայել ընդունելութիւն էին ցոյց տալիս։

Արքայազուն ճանապարհորդները երբ Իտալիա հասան, Ներոնը Նէապօլումն էր։ Հանդիսաւոր թափորն էլ սոխակած էր Նէապօլ գնալ, որտեղ Ներոնը չափազանց մեծ շուքով ու պատուով ընդունեց Տիրիդին։ Ի պատիւ հայոց թագաւորի նա մի շարք շատ փառաւոր հանդէսներ ու գլադիատորական խաղեր սարքել տւեց Նէապօլում, իսկ երբ այդ հանդէսները վերջացան, Տիրիդին հետը Հռոմ տարաւ, թագադրութեան հանդէսն էլ այնտեղ կատարելու համար։

Վերին աստիճանի շքեղ էր և թագադրութեան հանդէսը։ Քաղաքի ամբողջ բնակչութիւնը, ռօնական հագուստներ հագած, վաղ առաւօտից խռնուել էր այն հրապարակը, որտեղ թագադրութիւնը պիտի կատարուէր։ Ժողովրդի շուրջը զօրքն էր կանգնել ամբողջապէս զինուած։ Ներոնը ծերակոյտի անդամներով ու թիկնապահներով շրջապատուած, եկաւ բազմեց իր համար պատրաստուած բարձր գահի վրայ։ Ցետոյ Տիրիդը եկաւ իր թիկնապահներով։ Նա իր պարթև հասակով ու գեղեցկութեամբ կատարեալ հիացմունք էր պատճառում բոլորին էլ։ Մօտենալով Ներոնին, արևելեան եղանակով նա խորը գլուխ տւեց և ապա ողջունեց նրան պարթևական լեզուով, որ իսկոյն թարգմանուեց բարձրաձայն։ Տիրիդի ասածն այն էր, թէ ինքը թէև Արշակունեաց ցեղից և Վոլագասի ու Պակորի եղբայրն է, բայց եկել է Ներոնին խոնարհութիւն ցոյց տալու։ Ներոնը նրան նոյնպէս մի կարճ ճառով պատասխանելուց յետոյ, բռնեց նրա ձեռքից, համբուրեց և, մի աստիճանով աւելի ցածր պատրաստուած գահի վրայ նըստեցնելով, բազմութեան ցնծագին աղաղակների մէջ, նրա գլխին դրեց հայկական թագը։

Թագադրութիւնից յետոյ հանդէսներն ու մրցութիւնները դեռ էլի մի շաբաթ շարունակուեցին Հռոմում։ Ներոնն այն աստիճան ոգևորուեց, որ ուզեց հեռաւոր Արևելքից եկած արքայազուն հիւրերին էլ ցոյց տալ իր արտիստական տաղանդը, և նա երգեց ու նուագեց։ Բայց այդ բոլորովին դուր չեկաւ Տիրիդին, որը հանդիսականների ներկայութեամբ կայսրի երգելն ու նուագելը մի շատ անվայել բան էր համարում։ Նա մինչև իսկ, թէև շատ

քաղաքավարական ձևով, յայտնեց իր դժգոհութիւնն այդ մասին։

Հանդէսները վերջանալուց յետոյ, Տիրիդն իր շքախմբով Հայաստան վերադարձաւ, հետն անթիւ ու անհամար թանկագին նւէրներ բերելով, որ Ներոնն էր ընծայել։ Բացի ընծաներից Ներոնն ահագին գումարներ և բազմաթիւ իտալական հմուտ վարպետներ ու բանւորներ էր տւել Տիրիդին, Կորբուլոնի կործանած Արտաշատը վերանորոգելու համար։ Հայոց թագաւորի հէնց առաջին գործն էլ այդ եղաւ, երբ նա Հայաստան վերադարձաւ։

Հռոմէական կայսրից թագաւորական թագն ընդունելով, Հայաստանը թէև Հռոմի գերիշխանութեանն էր ենթարկւում, բայց այդ գերիշխանութիւնը շատ աւելի անւանական էր. հռոմայեցիք չէին խառնւում հայոց գործերին և Հայաստանի թագաւորը բոլորովին անկախ էր իրան զգում։ Իսկ պարթևական արշակունիների և Հռոմի միջև բարեկամական յարաբերութիւն հաստատուելով, վերջապէս խաղաղութիւն տիրեց ամբողջ Առաջաւոր Ասիայում, որ տևեց մօտ 50 տարի (63—113 թ.)։ Այդ երկարատև խաղաղութեան հետևանքն այն եղաւ, որ արդիւնաբերութիւնը, արհեստներն ու վաճառականութիւնը խիստ ծաղկեցին Հայաստանում։

Ֆ Լ Ա Ի Ո Ս Ն Ե Ր Ը

Ներոնի մահից յետոյ, նորից խռովութիւններ ու արիւնահեղ կռիւներ սկսեցին Հռոմում, որ տևեցին ամբողջ երկու տարի։ Այդ կարճ ժամանակընթացքում մի քանի հատ կայսրներ միմեանց յաջորդեցին. ծերակոյտն իր թեկնածուն էր յայտարարում կայսր, իսկ պրետորեաններն էլ իրանցը։ Զանազան սահմանագլուխներում կանգնած լեգիոններից ամեն մէկն էլ իր զօրապետին էր կայսր յայտարարում։ Այդ բոլոր թեկնածուներից վերջ ի վերջոյ ամենայաջողը Վեսպասիանոս Ֆլաւիոսը դուրս եկաւ, որը Սիրիայի լեգիոնների թեկնածուն և հռոմէական աւենանշանաւոր զօրավարներից մէկն էր։

Խռովութիւններն սկսած ժամանակ Վեսպասիանոսը


Հրէաստանում էր գտնւում։ Դեռ Ներոնի կենդանութեան ժամանակ այնտեղ մի ընդարձակ ապստամբութիւն էր ծագել և Վեսպասիանոսին ապստամբների դէմ էին ուղարկել։ Ջը նայելով որ մեծ կատաղութեամբ էին կրւում ապստամբ հրէաները, բայց և այնպէս Վեսպասիանոսը կարողացաւ ամբողջ Հրէաստանը նւաճել և ապստամբներին Երուսաղէմի մէջ պաշարել։

Ահա հէնց այդ պաշարման ժամանակ էր, որ Վեսպասիանոսին իր լեգիոնները կայսր յայտարարեցին։ Վեսպասիանոսը Երուսաղէմի պաշարման գործն իր Տիտոս որդուն յանձնելով, որ նոյնպէս մի շատ քաջ զօրապետ էր, ինքը շտապով Հռոմ գնաց։

Չափազանց մեծ դժւարութեամբ կարողացաւ Տիտոսը Երուսաղէմը գրաւել։ Հրէաները կատաղի քաջութեամբ էին կռւում։ Քաղաքը թշնամու ձեռքն ընկնելուց յետոյ, նրանք տաճարումն էին շարունակում պաշտպանել։ Վերջին կռւողները, հռոմայեցիների ձեռքը չընկնելու համար, կամ նրանց սուրերի վրայ էին իրանց նետում և կամ իրանց սուրերով անձնասպան լինում։ Այդպիսի կատաղութիւնից զրգռւած հռոմայեցիք քանդեցին ու գետնի հետ հաւասարեցրին թէ տաճարը և թէ ամբողջ Երուսաղէմը (70 թ. ք. յ.)։

Վեսպասիանոս Ֆլաւիոսը, կայսր դառնալով, նոյնպիսի մեծ ընդունակութիւններ ցոյց տւեց պետական ասպարէզում, որպիսին ցոյց էր տւել պատերազմի դաշտում։ Նրա առաջին ու ամենագլխաւոր հոգսը պետական գանձարանը կարգի բերելն եղաւ, որ չափազանց դատարկւել էր Ներոնի շռայլ ու անհաշիւ ծախսերի շնորհով։ Այդ նպատակով նա կրկին վերանորոգեց շատ այնպիսի հարկեր, որ իր նախորդները ոչնչացրել էին, ինչպէս և մի քանի նորերը սահմանեց։

Լինելով մի շատ աննշան մարդու զաւակ և մանկութիւնից համեստ ու պարզ կեանքի սովորած, Վեսպասիանոսը, կայսր դառնալուց յետոյ էլ շատ համեստ կեանք էր շարունակում վարել։ Նա ոչ միայն մրցութիւններ ու զա-




Տիտոսի յաղթական կամարը

նազան զւարճութիւններ չէր սիրում, այլ և ժողովրդի համար էլ չէր սարքում այդպիսի տեսարաններ։ Լինելով ինքը

վերին աստիճանի աշխատասէր մարդ, նա սիրում էր, որ ժողովուրդն էլ աշխատանքով պարապի։ Այդ նպատակով նա մեծ գումարներ էր ծախսում զանազան շինութիւններ կառուցանելու համար թէ Հռոմում և թէ նահանգներում։

Վեսպասիանոսի մահից յետոյ, կայսերական գահը ստանձնեց նրա Տիտոս որդին, որը յայտնի էր իբրև մի վերին աստիճանի բարի ու ողորմած մարդ։ Այդ կայսրը, իր կատարած բարեգործութիւնների համար, մարդկային ցեղի մխիթարիչ անունն էր ստացել։



Պոմպէյի հրապարակը

Տիտոսի չափազանց բարեգործ լինելու մասին գաղափար տալու համար պատմում էին, թէ մի երեկոյ, երբ ամբողջ օրւայ ընթացքում դէպք չէր եղել բարեգործութիւն անելու, Տիտոսն ասել էր շրջապատողներին. «Բարեկամներ, այսօրւան օրս ես իզուր կորցրի»։

Տիտոսի կայսրութեան օրով Վեզուվի հրաբխային սաստիկ ճայթքում տեղի ունեցաւ (79 թ.), որից Պոմպէյ և Հերկուլանում քաղաքները կործանուեցին ու փլատակների տակ մնացին։



Վեզուվի լեռը



Դոմիցիանոս

Տիտոսի կայսրութիւնը շատ կարճ տևեց։ Նրան իր կրտսեր եղբայր Դոմիցիանոսը յաջորդեց, որը թէ նրա և թէ իրանց հօր ճիշտ հակապատկերն էր։ Իր կայսրութեան սկզբում, Դոմիցիանոսը մեծ խստութիւններ ու հալածանքներ սկսեց կաշառակեր, անբարեխիղճ ու անպարտաճանաչ պաշտօնեաների դէմ։ Բայց վերջը, հեռանալով ոգևորութիւնից, այս խստութիւններն ու հալածանքները նա տարածեց և անմեղ ժողովրդի դէմ։ Այդ պատճառով էլ նրա դէմ դաւադրութիւն կազմեց և նրան սպանեցին (98 թ.)։

Դոմիցիանոսից յետոյ կայսր ընտրուեց ծերակոյտի անդամ Ներվան, որը երդում տուեց միշտ համերաշխութեամբ գործել ծերակոյտի հետ։ Սակայն շատ շուտով նա զգաց, որ ինքը բոլորովին կոչուճ չունի կայսր լինելու։ Այդ ժամանակւայ ամենանշանաւոր զօրապետ Ուլպիոս Տրայեանոսին որդեգրելով, Ներվան նրան յանձնեց իշխանութիւնը և ինքը հրաժարուեց գահից (80 թ.)։ Տրայեանոսը բնիկ հռոմայեցի չէր, այլ Սպանիայում ծնուած հռոմէական հին գաղթականի որդի, և այս առաջին անգամն էր, որ ոչ—բնիկ հռոմայեցի էր կայսերական գահի վրայ բարձրանում։ Այդուամենայնիւ Ներվան իր ընտրութեան մէջ բոլորովին չէր սխալուել։ Տրայանոսը ոչ միայն քաջ և լաւ զօրապետ էր, այլ և շատ հմուտ կառավարիչ դուրս եկաւ։

Կայսր դառնալով Տրայեանոսը շարունակեց իր նախկին պարզ կեանքը վարել և չափազանց մատչելի մնալ ժողովրդի բոլոր խաւերին։ Ամեն մի արձակուած հրամանի տակ ծերակոյտի ու հռոմէական ժողովրդի անուններից յետոյ էր ստորագրում, իսկ պատերազմի ժամանակ հասարակ զինուորների կրած բոլոր նեղութիւնները էր բաժանում նա և հայրական խնամք ցոյց տալիս դէպի նրանց։ Այդ պատճառով էլ Տրայանոսին սաստիկ սիրում էին թէ ժողովուրդը և թէ զօրքը։ Տրայեանոսը Տիտոսի նման, շատ բարեգործ մարդ էր։ Կարիք ունեցող կալւածատէրերին նա փող էր տալիս պարտքով պետական գանձարանից և ստացւող տոկոսներով որբանոցներ ու ապաստարաններ հիմնում։

Տրայեանոսը մի քանի շատ յաջող պատերազմներ ունեցաւ թէ Եւրոպայում և թէ Ասիայում։ Նրա օրով հռոմէական պետութեան սահմանները այն աստիճան ընդարձակուեցին, ինչպիսին երբէք չէր եղած ու յետոյ էլ չեղաւ։ Այդ պատերազմներից ամենանշանաւորը Եւրոպայում կիսավայրենի դակների դէմ մղածն էր, որոնք մի մեծ թագաւորութիւն էին կազմում Դանուբի ափերին, այժմեան Րումինիայի, Բեսարաբիայի և Տրանսիլվանիայի տեղը։ Տրայեանոսը դակերի թագաւորութիւնն իսպառ ոչընչացրեց և նրանց երկիրը նւաճելով, Հռոմի նահանգը դարձրեց։ Յետոյ նա այդտեղ հռոմէական բազմաթիւ գաղութներ հաստատեց։



Տրայեանոս

Տրայեանոսի միւս շատ աւելի նշանաւոր պատերազմը պարթեւների դէմ էր։ Հռոմէական պետութեան սահմաններն այդտեղ նա մինչև Կովկասեան լեռները ն ու Կասպից ծովը հասցրեց։ Հայաստանն ու միւս նւաճած ասիական երկիրները մի առ ժամանակ նոյնպէս Հռոմի նահանգները դարձան։ Տրա-

յեանոսը մտածում էր աւելի հեռուն՝ մինչև Հինդոս գետը գնալ, բայց չը յաջողեց. Պարթևաց երկրի զանազան մասերում բռնկած ապստամբութիւնները ստիպեցին նրան յետ նահանջել, և հէնց այդ նահանջի ժամանակ նա հիւանդացաւ ու մեռաւ Կիլիկիայում (117 թ.)։


ՏՐԱՅԱՆՈՍԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Տրայեանոսին յաջորդեց նրա մօտիկ ազգական որդեգիր Ադրիանոսը։ Սա շատ բազմակողմանի կրթութիւն էր ստացել ու չափազանց խաղաղասէր և օրինապահ մարդ էր։ Արտաքին նւաճումներից աւելի Ադրիանոսն իր երկրի ներքին կառավարութեան մասին էր մեծ հոգ տանում։ Նա մեծ եռանդով ծերակոյտի նիստերին էր յաճախում, աչալրջութեամբ դատական ու վարչական գործերի վրայ էր հսկում և մեծ ուշադրութեամբ էր վերաբերւում պաշտօնեաների թերութիւններին։

Ադրիանոսը ճանապարհորդութիւններ կատարելուշատ մեծ սիրահար էր։ Նա հռոմէական պետութեան ամենահեռաւոր նահանգներն էր այցելում և փոխարքաների ու այլ պաշտօնեաների գործերը տեղն ու տեղը անձամբ էր քննում։

Այդ կայսրի ամենամեծ ծառայութիւնը սակայն պետական օրէնքները կարգի բերելը եղաւ։ Տարիների ընթացքում բազմաթիւ օրէնքներ էին հրատարակւել, որոնցից շատերը սաստիկ հակասում էին միմեանց և անթիւ խառնաշփոթութիւններ էին առաջացնում կառավարչական գործերի մէջ։ Ադրիանոսի յանձնարարութեամբ բոլոր օրէնքները իւ մի հաւաքւեցին, զտւեցին հակասութիւններից և հրատարակւեցին առանձին գրքով։ Դրանից յետոյ պետական պաշտօնեաները պարտաւոր էին այ օրէնսգրքով ղեկավարւել իրանց որոշումներն անելիս։

Ադրիանոսին յաջորդեց նրա որդեգիր Անտոնիոս Պիոսը (138 թ.), որը նոյնպէս մի շատ խաղաղասէր ու մարդասէր մարդ էր։ Նրա կայսրութեան ամբողջ 23 տարւայ



Ադրիանոսի դամբարանը

ընթացքում կատարեալ խաղաղութիւն վայելեցին հռոմայեցիք։

Այդ խաղաղասէր կայսրին յաջորդեց նրա փեսան Մարկոս Աւրելիոսը (161 թ.), որը միևնոյն ժամանակ հանգուցեալի որդեգիրն էր։ Իր մեծ ուսումնականութեան և դէպի ուսումնականները ցոյց տւած սիրոյ ու յարգանքի համար, Մարկոս Աւրելիոսին փիլիսոփայ կանուանն էին տւել։ Այդ փիլիսոփայ կայսրը վերին աստիճանի պարզ կեանք էր վարում, չընդունելով ոչ



Անտ. Պիոսի դրամը

մի զարճուրթիւն, բացի պարտականութիւն կատարելը։ Ինքը իրան նա համեմատում էր այն զինուորի հետ, որին անփոխարինելի կերպով պահապան են կանգնեցրել, և մահը միայն նրան պիտի ազատի այդ պաշտօնից։ Նա ասում



Մարկոս Աւրելիոսը ներում է մարկոմաններին

էր, որ պետութիւնը այնպիսի ազատ ու հաւասար իրաւունքներով օժտւած քաղաքացիներից պէտք է լինի

կազմւած, որ մարդիկ, ոչ թէ ստիպմամբ, այլ գիտակցաբար ու ինքնաբերաբար հպատակւեն օրէնքներին։

Զբ նայելով իր խաղաղասիրական ձգտումներին, Մարկոս Աւրելիոսը ստիպւած էր մի շարք պատերազմներ մղել թէ արտաքին և թէ ներքին թշնամիների դէմ։ Սկզբում նա ստիպւած էր պարթևների դէմ սուր բարձրացնել Հայաստանի պատճառով։ Յետոյ նա գնաց գերմանական բարբարոս ցեղերի արշաւանքը կանգնեցնելու հիւսիսային սահմանում, և ապա մի շարք ապստամբութիւններ ճնշելու Սպանիայում, Գալլիայում, Բրիտանիայում ու Սիրիայում։ Երկարատև այդ պատերազմները միանգամայն քայքայեցին փիլիսոփայ կայսրի առանց այն էլ վատ առողջութիւնը և նա մեռաւ գերմանական մարկոման ցեղի դէմ մղւած պատերազմը դեռ չը վերջացած (180 թ.)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՏԻՐԻԴԻՑ ՅԵՏՈՑ

Ներոնի ժամանակից Արևելքում տիրող երկարատև խաղաղութիւնը խախտելու առաջին առիթ տւողը պարթևաց Խոսրով թագաւորը եղաւ։ Նա Տիրիդի յաջորդ հայոց Ակսիդար թագաւորին բռնի կերպով հրաժարեցրեց գահից ու տեղը նրա Պարթամասիր եղբօրը նստեցրեց։ Թէև Ակսիդարն ու Պարթամասիրը Խոսրովի եղբօր որդիներն էին, այնուամենայնիւ Պարթևաց թագաւորի այդ կամայական վարմունքը սաստիկ զայրացրեց հռոմէական Տրայեանոս կայսրին, որն աշխարհակալութեան տենչով բռնւած արդէն առիթ էր որոնում դէպի Արևելք արշաւելու։ Տրայեանոսը պատերազմ յայտարարեց պարթևներին, և լեգիոնների գլուխն անցած, անձամբ եկաւ Սիրիա։

Թշնամի բանակները նախ առաջ հանդիպեցին իրար, և սկզբում յաղթութիւնը պարթևների կողմն էր երևում։ Բայց հէնց որ զօրքի հրամանատարութիւնը Տրայեանոսն անձամբ իր վրայ վերցրեց, պատերազմի բաղդն էլ փոխւեց։ Պարթևները սկսեցին յետ նահանջել, և հռոմայեցիք, շարունակ առաջ խաղալով, առանց դիմադրութեան գրաւեցին՝ նախ Փոքր և ապա Մեծ Հայքը։

Վախեցած Պարթամասիր թագաւորը շտապեց հզօր կայսրի մօտ գնալ և խնդրել, որ նա, ինչպէս Ներոնը Տիրիդին, իրան թագադրի Հայաստանի թագով։ Բայց Տրդատեանոսը շատ կորուկ կերպով նրան յայտնեց, որ ինքը վճռել է ոչնչացնել Հայաստանի թագաւորութիւնն ու հռոմէական մի նահանգը դարձնել նրան։ Պարթամասիրը յուսախաբ հեռացաւ, բայց շուտով սպանուեց հռոմէական ու իր թիկնապահ զօրքերի միջև պատահած կռւի մէջ։

Հայաստանից Տրդատեանոսը Պարթևաց երկիրը գնաց, որտեղ բազմաթիւ քաղաքներ, համարեա թէ առանց պատերազմի, յանձնուեցին նրան։ Ծոսրովը փախաւ, և հռոմեական զինուորները կողոպտեցին նրա կտեղիփոն մայրաքաղաքը։ Շուշ քաղաքում Տրդատեանոսը Ծոսրովի աղջկան գերի բռնեց և պարթևական թագաւորների ոսկէ գահը յափշտակեց։

Զը նայելով այդ յաջողութիւններին, Տրդատեանոսի դիրքը շատ անհաստատ էր Պարթևաց երկրում։ Ժողովուրդն սկսել էր երկրի զանազան մասերում ապստամբել հռոմայեցիների դէմ, և Տրդատեանոսը, զգուշանալով ընդհանուր ապստամբութիւնից, շտապով Ծոսրովի Պարթամասպատ որդուն թագադրեց կտեղիփոնում ու ինքը դէպի Սիրիա ճանապարհ ընկաւ։ Բայց հազիւ էր նա Պարթևաց երկրից դուրս եկել, որ այնտեղ ապստամբութիւնը սաստիկ մեծացաւ ու սպառնական դարձաւ։ Պատճառն այն էր, որ Տրդատեանոսը պարթևաց տէրութիւնը Հռոմի գերիշխանութեան տակ էր առել և ամեն տեղ զօրքեր էր թողել։ Ցայտնի չէ, թէ ինչով պիտի վերջանար խնդիրը, եթէ այդ ժամանակ Տրդատեանոսը չը մեռնէր։ Սակայն նրա յաջորդ Ադրիանոսը, որ մի շատ խաղաղասէր ու զգոյշ մարդ էր, լաւ ըմբռնելով այն մեծ զոհողութիւնները, որ պիտի պահանջէին արևելեան երկիրները վերջնականապէս նւաճելու և հպատակութեան մէջ պահելու համար, հրաժարւեց պատերազմը շարունակել և հաշտութիւն կայացրեց պարթևների հետ։ Այդ հաշտութեամբ Ադրիանոսը հրաժարւեց իր նախորդի՝ Ասիայում նւաճած՝ երկիրներից, ինչպէս և Հայաստանից, և հռոմէական բոլոր զօրքերը դուրս տարաւ այդ տեղերից։ Հայերը նորից իրանց թագաւորն ունեցան Արշակունիների տոհմից (117 թ.)։ Այս թագաւորը Վօլագաս կամ Վաղարշ I-ն էր, որի թագաւորութեան մասին, որ ամբողջ 25 տարի է տևել, համարեա թէ ոչինչ յայտնի չէ։ Ցայտնի է միայն այն, որ այդ թագաւորի օրով Կովկասի լեռնաբնակ ալանները (այժմեան օսերի

նախահայրերը), իրերների հետ միացած, մի քանի աւազակային արշաւանքներ են կատարել Հայաստանի վրայ (135 թ.)։


Այդ կիսավայրենի ցեղերը դեռ Տիրիդի ժամանակից էին սկսել իրանց յարձակումները թէ Հայաստանի և թէ միւս հարեւան երկիրների վրայ։ Առաջին անգամ, երբ Տիրիդը դուրս եկաւ զօրքով նրանց դիմադրելու, քիչ մնաց պիտի գերի բռնւէր բարբարոսներից, և իր ճարպիկութեան շնորհով միայն կարողացաւ ազատւել ու փախչել։

Վաղարշ I-ին յաջորդեց Արշակունի Սոխեմը, որը, Տիրիդի օրինակով, հռոմէական Անտոնիոս Պիոս կայսրից ընդունեց հայկական թագը (140 թ.) և այդպիսով կրկին Հայաստանը Հռոմի գերիշխանութեան տակ դրեց։ Այդ բանն առհասարակ սաստիկ գրգռում էր պարթևներին, որոնք չէին կարողանում հանդուրժել, որ իրանց հարևան երկիրը հեռաւոր Հռոմի հովանաւորութիւնն էր շարունակ վայելում։ Յարմար առիթ գտնելուն պէս պարթևական Վոլագաս III-դը Հայաստանի վրայ յարձակւեց, իր գերիշխանութիւնն այնտեղ հաստատելու նպատակով։ Բայց հայոց Սոխեմն իսկոյն Հռոմի օգնութեանը դիմեց։ Այդ ժամանակ Անտոնիոս Պիոսը մեռել և Մարկոս Աւրելիոսը հէնց նոր էր գահ բարձրացել։ Նրա կարգադրութեամբ Կապադովկիայից զօրք ուղարկւեց Հայաստան օգնութեան, բայց այդ հռոմէական զօրքը մեծ պարտութիւն կրեց, և յուսահատ Սոխեմը փախաւ, Հռոմ գնաց։

Պարթևները Սոխեմի տեղ Վոլագաս III-դի կրտսեր Պակոր եղբօրը Հայաստանի թագաւոր յայտարարեցին (162 թ.)։ Յետոյ նրանք, կապադովկիայի ու Սիրիայի վրայ յարձակւելով, հռոմէական այդ ընդարձակ նահանգներն էլ տիրեցին։ Այդ տիրապետութիւնը սակայն երկար չը տևեց. հետևեալ տարին հռոմայեցիք պարթևների դէմ նոր և աւելի մեծ զօրք ուղարկեցին։

Այդ զօրքի մի մասը Հայաստան մտաւ, գրաւեց երկիրն ու Պակորին,—որն արդէն փախել էր,—գահնկեց յայտարարեց։ Յետոյ Սոխեմին Հռոմից բերելով, նորից թագաւորական գահի վրայ բազմեցրին (164 թ.)։ Այդ արշաւանքի ժամանակ հիմնայատակ եղած Արտաշատի փոխարէն, հռոմայեցիք Սոխեմի համար մի նոր մայրաքաղաք շինեցին Նայնոպօլիս, այսինքն Նոր քաղաք անունով։

Հռոմէական զօրքի գլխաւոր մասն էլ, պարթևներին դուրս վանելով Սիրիայից ու Կապադովկիայից, նրանց մինչև կտեղիփոն մայրաքաղաքը հալածեց, որն ուրիշ շատ քաղաքների նման հռոմայեցիք կրակի ճարակ դարձրին։ Վոլագասն ստիպւած էր հաշտութիւն խնդրել։ Այդ հաշտութեան պայմանների համաձայն, պարթևները Միջագետքը Հռոմին զիջեցին, որից յետոյ այդ երկու մեծ պետութիւնների սահմանները Եփրատից Տիգրիսի վերին հոսանքը փոխադրւեցին (166 թ.)։



ՋԻՆԻՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՉՐՋԱՆԸ

ՍԵՊՏԻՄԻՈՍ ՍԵՎԵՐ

Մարկոս Աւրելիոսի մահով հռոմէական կառավարութիւնը վերջնականապէս կորցրեց իր այն կիսահանրապետական ու կիսամիապետական ձևը, որպիսին հաստատել էր Յուլիոս Կեսարի ու Օկտաւիանոս Օգոստոսի ջանքերով։ Անվերջ պատերազմների շնորհով, որոնց ընթացքում կառավարութիւնն ու հասարակութիւնը շարունակ ստիպած էին զօրքի օգնութեանը դիմել, և երբ ամեն մի յաջողութիւն միմիայն զօրքից ու զօրավարներից էր կախուած, այս վերջինների նշանակութիւնը չափազանց մեծացել էր։ Զօրքը այն աստիճան շփացել ու երես էր առել, որ այլևս ոչ մի բանի տեղ չէր դնում միւս պետական հաստատութիւնները. նա այդ բոլորին էլ արհամարհում էր, և միմիայն իրան էր համարում պետութեան տէրն ու նրա ճակատագիրը տնօրինողը։

Թէև զօրքի այդպէս գոռոզանալը սկսել էր դեռ Մարիուսի ու Սուլլայի ժամանակներից, բայց քանի միապետական կարգերը դեռ չէին իսպառ բթացրել ժողովրդի քաղաքացիական իրաւունքների գիտակցութիւնը, զօրքի բռնակալական ձգտումները միշտ զսպւում էին։

Մասամբ էլ զօրքին զսպում էին Ադրիանոսի ու Մարկոս Աւրելիոսի նման զաղափարական կայսրները, որոնք ամեն կերպ աշխատելով ժողովրդի իսկական ներկայացուցիչը՝ սլրինցեպսը՝ հանդիսանալ, մեծ յարգանքով էին վերաբերում Սերակոյին և այլ դեռ ևս մնացած հանրապետական հաստատութիւններին։ Բոլորովին այլ էին այդ փիլիսոփայ կայսրների յաջորդները։

Մարկոս Աւրելիոսին յաջորդեց նրա որդին՝ Կոմմոդը, որը պետական գործերով զբաղւելու ոչ սէր և ոչ ընդունակութիւն ունէր։ Կառավարչական բոլոր գործերը նա թիկնապահ զօրքի հրամանատարին յանձնեց, իսկ ինքն ամբողջ ժամանակ զարճութիւնների յետևից էր ընկած։ Այդ տարօրինակ կայսրը ինքն իրան Հերկուլէս էր երեւակայում, և միանգամայն մոռանալով իր դիրքն ու աստիճանը, կրկէսում գլադիատորների հետ ըմբշամարտի էր դուրս գալիս։ Այդ կայսրի օրով Հռոմում նորից բռնկուեցին Կալիգուլայի ու Ներոնի ժամանակւայ խստութիւնները ու հալածանքները։ Հիմա մարդկանց շատ անգամ հալածում էին նրանց հարստութիւնները գրաւելու նպատակով միայն։ Սերակոյին այլևս ոչ մի նշանակութիւն չէին տալիս և նրան չէին լսում։

Դաժան Կոմմոդի դէմ նոյնպէս դաւադրութիւն կազմուեց շուտով և նրան սպանեցին։ Բայց դրանով իրերի դրութիւնը դէպի լաւը չը փոխուեց Հռոմում։ Նորից ներքին պատերակռուաներ ու քաղաքացիական պատերազմներ սկսուեցին, որ տևեցին մի քանի տարի։

Պրետորեանների յանդգնութիւնն ու ամբարտաւանութիւնը այն աստիճանի էր հասել, որ նրանք այժմ սկսել էին կայսերական գահը վաճառքի դնել. ով աւելի մեծ վճար էր խոստանում, նրան էլ կայսր էին յայտարարում։ Պատահում էր, որ մէկին կայսր յայտարարելուց

քիչ յետոյ մի ուրիշին էին ծախում կայսերական գահը և առաջինին գահնկեց յայտարարում։

Զանազան նահանգներում գտնուող լեգիոնները բոլորովին յետ չէին մնում պրետորեաններից։ Նրանցից ամեն մէկն էլ իր զօրավարին էր կայսր յայտարարում։ Եւ այդ՝ զանազան տեղերում միաժամանակ՝ կայսր յայտարարուածները կատաղի պատերազմ էին սկսում միմեանց դէմ, իւրաքանչիւրն աշխատելով՝ ինքը դրաւել կայսերական գահը։

Եղբայրասպան այդ ներքին կռիւները Դանուբեան բանակի թեկնածու Սեպտիմիոս Սեվեր քաջ զօրավարի յաղթութիւնով վերջացան, որն էլ հէնց ամբողջ պետութեան կայսր յայտարարուեց (193 թ.)։ Սեպտիմիոս Սեվերը կարթագինեան գաղթականի որդի էր։ Զինուորական կոպիտ ոյժի միջոցով կայսերական գահին հասնելով, նա իր իշխանութիւնն էլ զինուորական ոյժի վրայ հիմնեց ամբողջապէս։ «Զինուորներ եղէք,— ասում էր նա իր որդոց,—ձեզ զինուորներով շրջապատէք, նրանց վրայ խնամք ունեցէք և այնուհետև դուք կարող էք ամեն ինչ արհամարհել»։ Եւ ինքն էլ հէնց այդպէս էր անում. նա արհամարհում էր ամեն ինչ, իսկ ծերակոյտն ու հանրապետական աւանդութիւնները բոլորովին նշանակութիւն չունէին նրա աչքում։ Ծերակոյտին այժմ թեկնածու զօրքի հրամանատարն էր փոխարինում, սա էր հիմա պետական հաստատութիւնների ու պաշտօնեաների վրայ գերագոյն հսկողը։ Ներքին նահանգների վրայ հսկելու ու նրանց եկամուտները տնօրինելու իրաւունքն էլ Սեվերը խլեց ծերակոյտից, որ սա վայելում էր դեռ Օգոստոսի ժամանակից։



Սեպտիմիոս Սեվերի դրամը

Նահանգական լեգիոնների աջակցութեամբ կայսր դարձած լինելով, Սեպտիմիոս Սեվերը մեծ անվստահութեամբ էր վերաբերուում պրետորեանների զօրաբանակին, որը բացառապէս հռոմայեցի ու իտալացի բնիկներից էր կազմուած։ Նա ոչնչացրեց այդ զօրաբանակը և նրա փոխարէն մի ուրիշը կազմեց, որի մէջ նահանգական լեգիոնների ամենաքաջ զինուորներն էին առնուում։ Այդպիսով մասամբ վերացուած էր այն անհրաժեշտը, որ շարունակ բաժանում էր բնիկ իտալացիներին նահանգների բնակիչներից։ Բացի դրանից՝ ընդունելով որ կայսերական իշխանութեան միակ նեցուկը զօրքն է, Սեպտիմիոսը զինուորների ռոճիկները աւելացրեց ու նրանց զանազան այնպիսի արտօնութիւններ տուեց, որ հետզհետէ Հռոմում մի չը տեսնուած զինուորական բռնակալութիւն հաստատուեց։ Ու այդ բռնակալութիւնը ամբողջ 100 տարի տևեց։

Ներքին պատերազմները զսպելուց և իր իշխանութիւնը հաստատ հիմքերի վրայ դնելուց յետոյ, Սեպտիմիոս Սեվերն իր ուշադրութիւնը արտաքին թշնամիների կողմը դարձրեց։ Այս վերջիններն, օգտուելով հռոմայեցիների ներքին պատերազմներից, ամեն կողմից անհանգիստ էին անում նրանց երկրի սահմանները։ Սեվերը երկու անգամ անձամբ Արևելք գնաց և երկար պատերազմներ ունեցաւ պարթևների հետ։ Արևելքում հաշիւները վերջացնելուց յետոյ, նա Բրիտանիա գնաց պատերազմելու, բայց հէնց այնտեղ էլ մեռաւ (211 թ.)։

ՍԵՊՏԻՄԻՈՍ ՍԵՎԵՐՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

Հռոմում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմները յարմար առիթ համարելով, պարթևացիք ուզեցին նորից յետ ստանալ Միջագետքի այն նահանգը, որ հռոմայեցիներին էին զիջել Մարկոս Աւրելիոսի օրով։ Նրանք արաբների ու ադիաբենացիների օգնութեամբ մեծ ջարդ տուեցին այդ նահանգում եղած

հռոմէական զօրքերին ու գրաւեցին երկիրը։ Ներքին պառակտումներով զբաղուած հռոմայեցիք ստիպուած էին մի առժամանակ տանել այդ անպատուութիւնը։ Բայց հէնց որ Սեպտիմիոս Սեվերը, իր հակառակորդներին յաղթելով, Հռոմի միակ կայսրը դարձաւ, իսկոյն զօրքի գլուխն անցած անձամբ Արեւելք եկաւ (195 թ.)։ Նա համարեա թէ առանց դիմադրութեան նորից ամբողջ Միջագետքը գրաւեց, իր նուաճումները մինչև հայկական Նիզիբ (Մծբին) քաղաքը հասցնելով, որն Արտաշատի կործանումից յետոյ հայոց թագաւորանիստ քաղաքն էր։

Այդ ժամանակ Հայաստանում Սոխեմի յաջորդ Սանատրուկն էր թագաւորում։ Սա ոչ մի մասնակցութիւն չէր ցոյց տուել Միջագետքը պարթևների կողմից նուաճելու գործում և ամբողջ ժամանակ խիստ չեզոք դիրք էր պահպանել։ Դրա պատճառը մասամբ և այն էր, որ այդ ժամանակ ալաններն զարձեալ սկսել էին Հայաստանի սահմաններն անհանգիստ անել և հայոց թագաւորը նրանց դէմ պատերազմով էր զբաղուած։ Չը նայելով սակայն հայերի բռնած չեզոք դիրքին, Սեպտիմիոս Սեվերը Միջագետքը գրաւելուց շատ քիչ ժամանակ յետոյ, հէնց որ Սանատրուկը մեռաւ ալանական պատերազմում (186 թ.), նրա մայրաքաղաք Նիզիբն էլ նուաճեց։ Իր զինուորականներից մէկին այդտեղ նահանգապետ նշանակելով, ինքը շտապով Հռոմ վերադարձաւ, որովհետև այդ ժամանակ կայսերական գահի համար մի նոր թեկնածու էր լոյս ընկել։

Սանատրուկին Հայաստանի գահի վրայ յաջորդեց Վոլագասկամ Վաղարշ II-դը (196—215 թ.), որը Սեվերի անիրաւացի վարմունքից զայրացած պարթևների կողմն անցաւ ու նրանց հետ միացած եկաւ Նիզիբը պաշարեց, երբ Սեվերը Հռոմ գնաց։ Բայց պաշարումը դեռ չէր վերջացել, որ կայսրը կրկին Արեւելք վերադարձաւ. նա իր նոր հակառակորդին էլ էր ջախջախել Հռոմում և շտապել էր յանդուգն պարթևների հետ իր հաշիւները վերջացնելու։ Հազիւ էր նա Սիրիա հասել, որ պարթևները թողեցին Միջագետքն ու Նիզիբի պաշարումը և իրանց երկիրը քաշուեցին (198 թ.)։

Սեվերն իսկոյն չը գնաց իր արեւելեան թշնամիներին հալածելու. յաջորդ տարին միայն նա Եփրատն անցաւ և նախ ուզեց հայերի հետ հաշուել, որպէսզի իր համար աւելի հեշտ լինի պարթևների դէմ պատերազմելը։ Այդ նպատակով նա իր գրաւած Նիզիբի փոխարէն մի քանի ընդարձակ գաւառներ նուիրեց Վաղարշին Փոքր Հայքում։ Բացի դրանից՝ Հայաստանից նա դուրս հանեց հռոմէական բոլոր զօրքերը, որ այնտեղ պահուում էին Հռոմի գերիշխանութիւնը պահպանելու նպատակով, և կարգադրեց որ Հռոմի պետական գանձարանից շարունակ մի յատուկ գումար տրւի հայոց թագաւորներին իբրև նպաստ, հայկական զօրաբանակը ուժեղ պահելու համար։ Սեվերի այս վերջին կարգադրութիւնը պէտք է պարտաւորեցուցիչ լինէր նաև իր բոլոր յաջորդների համար։

Հայերի հետ այսպէս հաշուեհարց յետոյ միայն հռոմէական կայսրը պարթևների դէմ գնաց։ Այս վերջինները մի շարք պարտութիւններ կրեցին, և պատերազմը վերջացաւ նրանով, որ Հռոմի տիրապետութեան սահմանն Արեւելքում էլ աւելի հեռուն տեղափոխուեց. Տիգրիսի վերին հոսանքից նրա միջին հոսանքին հասաւ։

ՍԵՎԵՐԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Սեպտիմիոս Սեվերին յաջորդեց իր կարակալա որդին, որը մի շատ չար ու դաժան մարդ էր։ Իր կայսրութիւնը նա սկսեց նրանով, որ ամենից առաջ իր հարազատ եղբօրն սպանեց։ Շարունակ դաւադրութիւններից վախենալով նա Հռոմն ու ամբողջ երկիրը լրտեսներով լցրեց և լրտեսութիւնը մի կատարեալ սիստեմ դարձրեց։

Կարակալան մեծ հաւատարմութեամբ էր կատարում հօր տւած խրատը, ամենինչ նա արհամարհում էր, բացի զօրքից, որին նա ընդհակառակը չափազանց փայփայում և երես էր տալիս։ Զինուորներին շարունակ առատութեամբ պարգևատրելու միջոցներ հայթայթելու նպատակով, նա թէ բազմաթիւ նոր հարկեր դրեց և թէ եղածների քանակն աւելացրեց։ Բայց որովհետև շատ այնպիսի հարկեր էլ կային, որոնց վճարողները միմիայն հռոմէական քաղաքացի համարւողներն էին, ուստի կարակալան, այդ կարգի հարկեր վճարողների թիւն աւելացնելու նպատակով, քաղաքացիութիւն տւեց կայսրութեան մէջ ապրող բոլոր

ազատ ծնւածներին։ Այդպիսով Հռոմի հպատակ ժողովուրդները, առանց պատերազմի, ձեռք էին բերում այն, ինչ որ նրանք դարեր շարունակ պահանջում էին և ինչի համար այնքան մարդկային զոհեր էին տւել հանրապետութեան ժամանակ։ Եւ կարակալայի տւած այդ իրաւունքը մի մեծ բարենորոգումն պիտի համարւէր, եթէ քաղաքացի լինելը, առաջւան պէս, հիմա էլ մարդուն քաղաքական որոշ իրաւունքներ տար։ Բայց միապետութիւնը վաղուց էր քաղաքացու այդ իրաւունքները ոչնչացրել։ Այժմ քաղաքացիութիւնը աւելորդ հարկ վրճարելու իրաւունք էր միայն տալիս մարդկանց։



Կարակալա

Կարակալան աշխարհակալական չափազանց մեծ ձգտումներ էլ ունէր. նա ինքն իրան Ալեքսանդր Մակեդոնացի էր երևակայում և երազում էր, նրա նման, մինչև Հնդկաստանն ու մինչև իսկ Չինաստանը նւաճել։ Այդ դիտաւորութեամբ նա մեծ զօրքով Արևելք գնաց։ Բայց հէնց այնտեղ էլ պարթևների դէմ պատերազմելու ժամանակ, սպանւեց իր երես տւած զինւորների ձեռքով (217 թ.)։

Կարակալայի մահից յետոյ, կայսերական իշխանութիւնը իրաւաբան Մակրինի ձեռքն անցաւ։ Բայց նրա կայսրութիւնը մի քանի ամիս միայն տևեց. չափազանց երես առած զօրքը շուտով գահնկեց արեց նրան ու տեղը կարակալայի քրոջ որդի Հելիոհաբալին կայսր յայտարարեց։ Սա Սիրիայումն էր ծնւել ու մեծացել և այնտեղի Արեգակի տաճարում քրմապետ էր։

Արևելեան անբան ու անհոգ կեանքի վարժւած երիտասարդ Հելիոհաբալը, կայսր յայտարարւելուց յետոյ, Հռոմ գալով, իրան բազմաթիւ կիներով ու ծառաներով շրջապատեց, առանց աշխատանքի մի որև է տրամադրութիւն ցոյց տալու, և ամբողջապէս կեր ու խումի և քէֆերի անձնատուր եղաւ։ Այդպիսով նա շատ շուտով հռոմայեցիների ատելութիւնը վաստակեց և նրան էլ սպանեցին։

Հելիոհաբալին յաջորդեց Ալեքսանդր Սեվերը, որն իր վերջին նախորդների ճիշտ հակապատկերն էր ներկայացնում։ Նա մի շատ բարեխիղճ, աշխատասէր ու խելօք մարդ էր և ոչ միայն ամեն ինչ չէր արհամարհում, այլ ընդհակառակն ամեն կերպ աշխատում էր ծերակոյտի նշանակութիւնը նորից բարձրացնել ու ժողովրդի համակրութիւնը գրաւել։ Նոյն նպատակով Ալեքսանդր Սեվերը մեծ համբերութեամբ էր վերաբերւում դէպի օտար՝ ոչ հռոմէական՝ կրօնները, որ այդ ժամանակներում բաւականին շատ էին տարածւած թէ Հռոմում և թէ կայսրութեան բոլոր կողմերում։



Հելիոհաբալ

Ալեքսանդր Սեվեր

Այդ կրօնների թւումն էր նաև քրիստոնէութիւնը, որը Պետրոս և Պօղոս առաքեալների միջոցով դեռ քրիստոնէական առաջին դարում էր մուտք գործել Հռոմ ու հետզհետէ բազմաթիւ հետևողներ գտել։ Հռոմէական կայսրները մեծ մասամբ, Ներոնի նման, խիստ հալածում էին քրիստոնեաներին, բայց լինում էին և այնպիսիները, որոնք համբերատարութեամբ էին վերաբերւում դէպի նրանց։ Այս վերջին տեսակի կայսրներից էր Ալեքսանդր Սեվերը, որն այն կարծիքի էր, թէ Քրիստոսին էլ կարելի է հռոմէական աստւածների ցանկի մէջ մտցնել։

Ջը նայելով իր վերին աստիճանի խաղաղասէր բնա-

բուլթեանը, Ալեքսանդր Սեվերը նոյնպէս ստիպուած էր Արեւելքում պատերազմ մղել։ Բայց այժմ նա ոչ թէ պարթեւական թագաւորների հետ գործ ունէր, այլ պարսիկների, որովհետեւ ճիշտ այն ժամանակներում (224 թ.) պարթեւական տէրութեան մէջ մի շատ նշանաւոր յեղաշրջում էր տեղի ունեցել։ Այդ ընդարձակ թագաւորութեան հեռաւոր՝ արեւելեան Փարսիստան նահանգում ապրող պարսիկ իշխաններից մէկը, Արդեշիր կամ Արտաշիր անունով, օգուտ քաղելով պարթեւական արքունիքում տեղի ունեցող ներքին պատակոուռներից, ապստամբութեան դրօշակ բարձրացրեց։ Ապստամբութիւնը, գնալով, աւելի ու աւելի ընդարձակ ծաւալ ընդունեց, և պարթեւական Արշակունի Արտաբան V-րդ թագաւորը շատ նեղ կացութեան մէջ ընկաւ։ Մի քանի անյաջող ճակատամարտից յետոյ, Արտաբանը սպանուեց, իսկ յաղթական պարսիկ Արդեշիրն իրան ամբողջ Պարթեւաց երկրի տէր և «արքայից արքայ» յայտարարեց։ Այդպիսով Արդեշիրը մի նոր թագաւորական տոհմի հիմնադիրը դարձաւ, որ նրա Սասան պապի անունով Սասանեան կամ Սասանիդների տոհմը կոչուեց, իսկ պարթեւաց տէրութիւնն էլ այդ ժամանակից Պարսկաստան անուանուեց։ Սասանեանների թագաւորութիւնը Պարսկաստանում աւելի քան 400 տարի տեւեց։



Արդեշիր



Սասանեան թագաւորների դրամի վրայ նկարուած ատրուշան

Թագաւորական այս նոր տոհմը Արշակունիներից նրանով էր տարբերւում, որ դարեր շարունակ հեռաւոր արեւելքում ապրելով, աւելի մեծ անարատութեամբ էր պահպանել զուտ պարսկական ազգային ու կրօնական աւանդութիւնները։ Արշակունիները, ընդհակառակը, երկար ժամանակ հռոմայեցիների ու մանաւանդ յոյների հետ շփուելով, աւելի յունականացածներ էին համարւում։ Այդ պատճառով էլ Սասանեանները, թագաւորական գահի վրայ հաստատուելով, ուզեցին իսպառ ոչնչացնել այն բոլորը, ինչ որ յունական կամ հռոմէական էր, և վերականգնել թէ Զրադաշտի կրակապաշտական մաքուր կրօնը և թէ պարսկական նախկին՝ Կիւրոսի ու Դարէհի ժամանակների՝ ընդարձակ թագաւորութիւնը։

Խաղաղասէր Ալեքսանդր Սեվերը հէնց այդ ֆանատիկոս Արդեշիրի հետ էր ստիպուած պատերազմելու։ Բայց պատերազմը դեռ չէր վերջացած, նրան էլ գինուորներն սպանեցին (235 թ.)։

ՏՐԴԱՏ II ԵՒ ԱՐՇԱԿ ԿԱՄ ՔՈՍՐՈՎ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԸ

Սեպտիմիոս Սեվերի հայերի հետ հաստատած բարեկամութիւնը հէնց նրա մահով էլ վերջացաւ։ Ամբողջ արեւելքը նուաճելու մասին երազող նրա յաջորդ Կարակալան ուզեց ամենից առաջ բարբարոս Օսրոէնի ու Հայաստանի թագաւորութիւնները ոչնչացնել։ Այդ դիտաւորութեամբ էլ, հէնց որ նա Սիրիա եկաւ (215 թ.), այդ երկու երկիրների թագաւորներին, կեղծ—բարեկամական նամակներ գրելով, իր մօտ հրաւիրեց, և երբ նրանք, ոչինչ չը կասկածելով, գնացին, նա երկուսին էլ ձերբակալեց ամբողջ ընտանիքով ու Հռոմ ուղարկեց։

Կարակալայի նենգամտութիւնից սաստիկ զայրացած հայերը

ապստամբեցին և ձերբակալած Վաղարշ II-րդ թագաւորի Տիրիդ կամ Տրդատ որդուն թագաւոր յայտարարեցին։ Տրդատն էլ էր իր հօր հետ ձերբակալուել, բայց շուտով յաջողել էր գերութիւնից փախչել և Հայաստան վերադառնալ։ Կարակալան մի դումարատակ զօրք ուղարկեց Հայաստան, բայց զօրքը խայտառակ պարտութիւն կրեց ու յետ դնաց։

Կարակալան միևնոյն ժամանակ պարթևների դէմ պատերազմական գործողութիւնները սկսեց, և յանկարծակի բերելով, բաւականին մեծ վնասներ հասցրեց նրանց։ Բայց շատ ժամանակ չանցած նա սպանուեց իր զինուորների ձեռքով։

Յաջորդ գարնանը պարթևաց Արտաբան V-րդ թագաւորը անձամբ դուրս եկաւ հռոմայեցիների դէմ պատերազմելու։ Կարակալայի յաջորդ խաղաղասէր Մակրինը ուզեց հաշտուել պարթևների հետ, բայց Արտաբանը այնպիսի մեծ պահանջներ դրեց, որ անկարելի էր համաձայնել. նա պահանջում էր՝ պարթևներին վերադարձնել ամբողջ Միջագետքը և հատուցումն տալ այն բոլոր աւերմունքների համար, որ արել էր Կարակալան պարթևաց նահանգներում։ Պատերազմը շարունակուեց և այս անգամ հռոմայեցիք մեծ պարտութիւն կրեցին։ Մակրինն ստիպուած էր մօտ 20 միլիոն դրաքի տուգանք վճարել պարթևներին։ Հէնց այս անյաջողութիւնն էր մասամբ պատճառը, որ նրան շուտով կայսերական գահից զրկեցին։

Մակրինն ուզեց հայերի հետ էլ հաշտուել։ Որովհետև Վաղարշ II-ը արդէն մեռել էր գերութեան մէջ, ուստի նա Տրդատ II-ին թագաւորական թագ ուղարկեց։ Բացի դրանից՝ Մակրինը վերադարձրեց Տրդատին նրա հօրենական այն բոլոր կալւածները, որ Կարակալան գրաւել էր, և վերականգնեց Սեպտիմիոս Սեվերի կարգադրութեամբ Հայաստանին տրւող դրամական նպաստը, որ նոյնպէս Կարակալան դադարեցրել էր։

Տրդատ II-րդը անզաւակ մեռաւ (222 թ.), և պարթևաց Արտաբան V-րդը, օգտւելով Հռոմում այդ ժամանակ տեղի ունեցող խառնակութիւններից, իր Արշակ եղբօրը հայոց թագաւոր նշանակեց, առանց մինչև իսկ Մակրինի յաջորդ Հելիոհաբալի համաձայնութիւնը հարցնելու։ Այս հայոց Արշակ թագաւորը հայկական աւանդութեան մէջ Խոսրով անունով է յիշւում։ Եւ հէնց այդ հայոց Արշակ կամ Խոսրով թագաւորի օրով էր, որ պարսից Սասանեան Արդեշիրը, պարթևական Արշակունի Արտաբան V-րդին յաղթելով, նրա թագաւորական գահը խլեց։

Արդեշիրի յաղթութիւնից յետոյ, պարթևական բոլոր Արշակունիները Հայաստան փախան և իրանց ազգական Արշակ կամ Խոսրով Արշակունիի մօտ ապաստան գտան։ Այդ պատճառով էլ Արդեշիրը, պարթևական գահի վրայ հաստատուելուց յետոյ, ամենից առաջ Հայաստանի վրայ յարձակուեց։ Սակայն հայ և պարթև Արշակունիների միացած ոյժերի առաջ նա ստիպուած եղաւ տեղի տալ և իր երկիրը վերադառնալ։

Արդեշիրը շուտով աւելի մեծ զօրքի գլուխ անցած հռոմէական Միջագետքին տիրեց և ապա Սիրիա անցաւ։ Այդ ժամանակ արդէն Ալեքսանդր Սեվերն էր Հռոմի կայսրը։ Սասանեան առաջին գոռող գահակալը պահանջում էր նրանից՝ իրան վերադարձնել այն բոլոր երկիրները, որոնք մի ժամանակ պարսից Աքեմենեանների տիրապետութեան տակ էին գտնւում։ Շատ աշխատեց Սեվերը խնդիրը հաշտութեամբ վերջացնել, բայց չեղաւ։ Սկսած պատերազմի ժամանակ հայերը հռոմայեցիների հետ միացած պարսիկների դէմ էին կռւում, որովհետև նրանք այժմ շատ աւելի արևմտեան քաղաքակրթ ազգերին էին իրանց մօտ զգում, քան փանատիկոս ու քաղաքակրթութիւնը հերքող պարսիկներին։ Միացած ոյժերի առաջ Արդեշիրը դարձեալ պարտութիւն կրեց։ Նա իր երկիրը յետ քաշւեց, իսկ քիչ յետոյ Ալեքսանդր Սեվերը սպանուեց։

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ալեքսանդր Սեվերի մահից յետոյ, սոսկալի ներքին պատռակտումներ Հռոմում նորից սկսուեցին, որ այս անգամ ամբողջ 50 տարի տևեցին։ Կայսրները զարմանալի արագութեամբ էին միմեանց յաջորդում։ Ցաճախ միևժամանակ մի քանի կայսրներ էին ընտրւում, որոնք միմեանց դէմ կատաղի կռիւներ էին մղում, մինչև որ մէկին կը յաջողւէր իր իշխանութիւնը հաստատել։ Պատահում էր և այն, որ իւրաքանչիւր նահանգ, կամ նահանգական բանակ իւր առանձին կայսրն էր կամենում ունենալ։

Արդիւնագործութեան ու առևտրի զարգացման

շնորհով, նահանգական քաղաքներից մի քանիսը այնպես հարստացել ու այնպիսի մեծ նշանակութիւն էին ստացել, որ Հռոմի գերիշխանութիւնն ու առաջնութիւնը չէին կասկածում ճանաչել։ Հէնց իրանք կայսրներն էլ շատ էին նպաստել Հռոմի վաղեմի նշանակութիւնը նսեմացնելուն։ Դեռ Յուլիոս Կեսարի ու Օկտաւիանոս Օգոստոսից սկսած, նրանք իրանց միապետական ձգտումները նահանգների օգնութեամբ էին գլխաւորաբար առաջ տանում։ Հռոմի հանրապետական ազնուականների դէմ կուելու ամենալաւ ոյժը նահանգների բնակիչներն էին։ Ամենից շատ հէնց դրանք էին հարստահարւում ու կեղեքւում այդ հանրապետականներից, որոնք նահանգների վրայ նայում էին իբրև իրանց սեփական կալւածների, որ պէտք է կարելի եղածին չափ լաւ շահագործել ու կողոպտել։ Համարեա թէ բոլոր կայսրները պաշտպանութիւն էին տալիս նահանգների բնակիչներին ընդդէմ Հռոմի արիստոկրատիայի և ազիլի ու աւելի ընդարձակում նրանց ունեցած իրաւունքների սահմանը։ Իսկ դրա հետևանքն այն էր եղել, որ ամբողջ պետութեան բնակիչները իրանց քաղաքական և այլ իրաւունքներով, վերջ ի վերջոյ, բոլորովին հաւասարւել էին մայրաքաղաքի բնակիչների հետ, և վաղեմի արտօնեալ Հռոմի բացառիկ շահերը տեղի էին տալ ամբողջ կայսրութեան ընդհանուր շահերի առաջ. Հռոմ քաղաքին հռոմէական պետութիւնն էր փոխարինել։

Բայց այդ պետութիւնը կառավարողն այժմ ոչ թէ ժողովուրդը կամ նրա ընտրած պատգամաւորական ժողովն էր, ինչպէս Հռոմուլն էր առաջ, այլ միապետ կայսրը։ Թէև կայսրները ժողովրդի ընտրածը կամ ներկայացուցիչներն էին համարւում, բայց իրապէս ժողովուրդը, Օգոստոսից յետոյ ոչ մի մաս ու բաժին չունէր կայսրների ընտրութեան գործում։ Նրանց ընտրում էր զօրքը, որի ձեռքումն էլ հէնց ամբողջ պետութեան ճակատագիրն էր գտնւում։

Բայց զօրքի կազմն էլ ժամանակի ընթացքում ահագին փոփոխութեան էր ենթարկւել։ Կայսրները սկզբում, Հռոմի բնակիչներին չը վստահանալով, աւելի ու աւելի նահանգների բնակիչներից էին լրացնում իրանց զօրքերի շարքերը։ Բայց յետոյ, երբ միապետութեան բռնութիւնները, նահանգների վրայ ևս տարածւելով, այդտեղ էլ դժգոհութիւններ առաջացրին, կայսրներն սկսեցին հարևան բարբարոս ցեղերից զինուորներ վարձել։ Իսկ բարբարոսներին հետաքրքրող միակ բանը կողոպուտն ու թալանն էր, ուստի որչափ շուտ-շուտ փոխւէին կայսրները և որչափ երկար տևէին ներքին պատակոումները, այնչափ էլ աւելի շատ կողոպուտ կարելի էր ունենալ։

Յաճախ կրկնուող ներքին պատակոումների հետևանքն այն եղաւ, որ արդիւնագործութիւնն ու առևտուրը կանգ առան, երկրագործութիւնն ընկաւ և պետութիւնն ահագին վնասներ կրեց։ Հռոմայեցիների նւաճումները որչափ որ ընդարձակել էին ասիական ու աֆրիկեան երկիրները, այնչափ էլ այդ երկիրներից բերւող ստրուկների թիւը պակասել էր։ Իսկ դրա հետևանքն այն էր եղել, որ լատիֆունդիաների տէրերը, որոնք սովոր էին ստրուկների ձեռքով մշակել իրանց հողերը, ստիպւած էին մասերի բաժանել նրանց և գիւղացիներին կապալով տալ։ Ահագին մրցումներ էր առաջ եկել կալւածատէրերի ու գիւղացիների միջև։ Այս վերջինները կամենալով կարելիին չափ ձեռնտու պայմաններով հողաբաժին ձեռք գցել, շարունակ կալւածից կալւած և քաղաքից քաղաք էին թափառում։ Իսկ դրա հետևանքն այն էր լինում, որ յաճախ ահագին կալւածներ անմշակ էին մնում և նրանց տէրերն էլ մեծամեծ վնասներ էին կրում։

Երկարատև ներքին պատակոումներից ու կայսերական իշխանութեան թուլանալուց օգտւելով, հարևան ազգերն ու բարբարոս ցեղերն էլ միւս կողմից էին սպառ-

նում հռոմէական կայսրութեան։ Ճիշտ այդ ժամանակներում Ասիայից արիացիների նոր խմբեր էին սկսել դէպի Եւրոպա գաղթել։ Հռոմի սահմանակից երկիրներում ապրող գերմանական ցեղերը, այդ նոր գաղթականների գրոհից փախչելով, հռոմէական նահանգներն էին խուժում և սոսկալի աւերմունքներ առաջացնում։ Նոյնն էին անում արևելքում պարսիկները, որոնք անօգնական մբնացած նահանգների համարեա թէ կատարեալ տէրն էին դառել։ Հռոմէական կայսրութեան խայտառակութիւնն այն աստիճանի հասաւ, որ կայսրներից մէկը՝ Վալերիանոսը, պարսիկների դէմ պատերազմի դուրս գալով, գերի բռնուեց և պարսից բանտումը մեռաւ։



ԻՆՔՆԱԿԱԼ ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏԻԼԸ


Դ Ի Ո Կ Լ Ի Տ Ի Ա Ն Ո Ս

Յիսուն տարի շարունակուող եղբայրասպան ներքին պատերազմներին վերջ դնելու մասին հռոմէական կայսրներից շատերն էին մտածում, բայց կամ նրանց այդ չէր յաջողւում և կամ նրանց իշխանութիւնը շատ կարճ էր տեւում։ Այդ կողմից ամենայաջողակն ու բախտաւորը Դիոկլիտիանոս կայսրը եղաւ։

Դիոկլիտիանոսը ստրկութիւնից ազատ արձակուած մարդու որդի էր։ Երիտասարդ հասակում զինուորական ծառայութեան մէջ մտնելով նա, իր բացառիկ ընդունակութիւնների շնորհով, շատ արագութեամբ բարձր աստիճանների էր հասել։

Կայսր դառնալով (248 թ.), նա ամենից առաջ իր իշխանութիւնը հաստատ հիմքերի վրայ դնելու մասին մտածեց։ Երկարատև ներքին պատերազմները նրան այն համոզման էին բերել, որ կայսրների դիրքը երբէք չէ կարող հաստատ լինել, քանի որ դեռ նրանց ընտրութիւնը զօրքից կամ ժերակոյտից կախուած կը լինի։ Կայսերական ամենահաստատ իշխանութիւնը արևելեան թագաւորների *ինքնակալ միապետութիւնը* համարելով, Դիոկլիտիանոսը ոչնչացրեց Հռոմի կառավարչական այն բոլոր ձե-

ւերն ու պաշտօնները, որոնք որևէ կերպով վարեմի հանրապետական կարգերն էին յիշեցնում։ Յետոյ՝ արևելեան թագաւորների օրինակով, նա իրան բազմաթիւ պալատականներով ու զանազան արարողութիւններով շրջապատեց և սկսեց գլխին թագ կրել ու բոլորովին անմատչելի դարձաւ ժողովրդին և հասարակութեանը։ Ասիական բռնակալներին հետևելով, նա մինչև իսկ հրամայում էր, որ իր առաջ ծունկ չոգեն և երկրպագութիւն անեն։



Դիոկլիտիանոս

Ծերակոյտն այդուհետև Հռոմի սոսկաքաղաքային խորհուրդը դարձաւ, որն այլևս պետական գործերի մէջ խառնուելու ոչ մի իրաւունք չունէր։

Ընդարձակ պետութիւնը թէ պաշտպանելու և թէ կառավարելու գործը հեշտացնելու նպատակով, Դիոկլիտիանոսն իրան օգնական ընտրեց իր մանկութեան ընկեր Մաքսիմիանոսին, որը նոյնպէս մի շատ նշանաւոր զօրավար էր, և կայսրութիւնը երկու մասի բաժանելով, արևմտեան մասը նրան յանձնեց կառավարելու։ Մաքսիմիանոսն էլ, Դիոկլիտիանոսի նման, «Օգոստափառ» կայսր էր համարւում։ Նա էլ իր առանձին արքունիքը, գանձարանն ու զօրքն ունէր և միանգամայն ինքնիշխան էր պետութեան իր մասի կառավարութեան գործերում։ Միայն թէ բոլոր օրէնքները երկու կայսրների անունից էին հրատարակւում և կայսրութեան երկու մասերումն էլ միևնոյն դրամն էր գործ ածւում։

Հռոմի գերիշխող նշանակութեանը հարած հասցնելու և հանրապետական աւանդութիւնների միջավայրից հեռու ապրելու նպատակով, կայսրներն իրանց մայրաքաղաքներ ընտրեցին՝ Դիոկլիտիանոսը Նիկոմիդիան, Մարմարա ծովի ափին, իսկ Մաքսիմիանոսը՝ Միլանը։

Դիոկլիտիանոսը յետոյ երկու ուրիշ ստորադրեալ օգնական կայսրներ էլ ընտրեց, որոնց նա «կեսար» տիտղոսը տալով, իրան և Մաքսիմիանոսի օգնականներ նշանակեց։ Յուլիոս կեսարից յետոյ, կեսար բառը տիտղոս էր դառել և տրւում էր բոլոր հռոմէական կայսրներին, Օգոստոսից սկած։ կեսարներից մէկը՝ Գալերիոսը պէտք է Դիոկլիտիանոսի գերիշխանութեան ներքոյ Բալկանեան թերակղզին կառավարէր, իսկ միւսը՝ Կոնստանցիոս Քլորը՝ Մաքսիմիանոսի հսկողութեան տակ՝ պիտի Գալլիան, Սպանիան ու Բրիտանիան կառավարէր։

Օգնական կայսրներին ընտրելով, Դիոկլիտիանոսը պայմանաւորւել էր նրանց հետ, որ 20 տարի կառավարելուց յետոյ, ինքն ու Մաքսիմիանոսը պիտի հրաժարւէին իրանց իշխանութիւնից, «օգոստափառութիւնը» տալով կեսարներին զիջելով։ Իսկ սրանք էլ պէտք է իրանց համար օգնական նոր կեսարներ նշանակէին։

Նահանգները կառավարելու ձևն էլ Դիոկլիտիանոսը ահագին փոփոխութեան ենթարկեց. ամբողջ պետութիւնը 101 մանր նահանգների բաժանեց և բոլորովին նոր տեսակի կառավարչական ձև մտցրեց։ Բացի դրանից՝ զինւո-

րական իշխանութիւնը քաղաքացիականից բաժանելով, նա քաղաքացիական նշանակովի պաշտօնեաների (չինովնիկների) մի ահագին բանակ ստեղծեց։

Զորս կայսրների համերաշխ գործունէութեան շնորհով, հնարաւոր եղաւ կարճ ժամանակի մէջ բոլորովին խաղաղացնել երկիրը։ Նրանք շատ հեշտութեամբ կարողացան ընկճել զանազան նահանգներում բռնկած ապստամբութիւնները և ապա, գերմանական ցեղերին մի լաւ ջարդ տալով, կանգնեցրին նրանց գրոհը։ Պարսիկներին էլ նրանք ասիական նահանգներից դուրս վանեցին։

Կատարած փոփոխութիւնների պատճառով առաջացած թէ արքունական և թէ այլ մեծաքանակ ծախսերը լրացնելու նպատակով, Դիոկլիտիանոսը բազմաթիւ նոր հարկեր աւելացրեց։ Այսպէս՝ նա շատ մեծ հարկ նշանակեց առևտրականութեան ամեն տեսակների վրայ և հողային հարկը տարածեց նոյնպէս և Իտալիայի վրայ, որ մինչև այդ ժամանակ առանձին արտօնութիւն էր վայելում ու հողային հարկ չէր վճարում։

Երկրի արդիւնաբերութիւնը բարձրացնելու նպատակով, Դիոկլիտիանոսն արգելեց գիւղացիներին կալւածից կալւած և քաղաքից քաղաք թափառելու սովորութիւնը. այդուհետև իւրաքանչիւր գիւղացի պարտաւոր էր միշտ միևնոյն հողի վրայ ապրել և միևնոյն կալւածատիրոջ հողը մշակել։ Իսկ դրա հետևանքն այն եղաւ, որ նախկին ազատ կապալառու գիւղացիները հետզհետէ իրանց կալւածատէրերի ծորտերը դարձան։ Սրանք կալւածատիրոջից մի-մի փոքրիկ հողաբաժին ստանալով, իբրև սեփականութիւն, պարտաւորւում էին նրա բոլոր հողերը մշակել և թէ տնային ու դաշտային ամեն տեսակի աշխատանքները կատարել ձրի։ Իրանց աննշան հողաբաժնի եկամուտից ճորտերը պարտաւոր էին դեռ զլխահարկ էլ վճարել։

Շատ սոսկալի եղաւ Դիոկլիտիանոսի թագաւորութիւնը քրիստոնեաների համար։ Հռոմէական կայսրներից

շատերն էին այդ նոր կրօնը դաւանողներին հալածել, բայց այնպէս, ինչպէս Դիոկլիտիանոսն էր հալածում (303 թ.) երբէք տեսնւած չէր։ Նա չափազանց կատաղած էր քրիստոնեաների դէմ մանաւանդ նրա համար, որ նրանք չէին ընդունում իր՝ Դիոկլիտիանոսի աստւածութիւնը, ինչպէս որ ինքն էր պահանջում, և նրա արձանին չէին երկրպագում։

Զորս կայսրների անունից Դիոկլիտիանոսն հրաման արձակեց՝ կալանաւորել քրիստոնեաների բոլոր այն հոգեւորականներին, որոնք չեն ցանկանայ զոհ մատուցանել կայսեր պատկերի առաջ, յետոյ՝ այրել նրանց սուրբ գրքերը, քանդել եկեղեցիները և պաշտօնանկ անել պետական ծառայութեան մէջ եղած բոլոր քրիստոնեայ պաշտօնեաներին։ Մի այլ կայսերական հրամանով պահանջւում էր, որ ոչ միայն հոգևորականները, այլ բոլոր քրիստոնեաները զոհ մատուցանեն կայսեր պատկերի առաջ։ Իսկ հրամանը չը կատարողներին ամենասոսկալի տանջանքների էին ենթարկում և մահով պատժում։

Այդ բոլոր տանջանքներն ու սարսափները սակայն անզօր էին քրիստոնէութիւնը կասեցնելու։ Նոր կրօնի հետևողների թիւը, գնալով, կրկնապատկւում ու եռապատկւում էր։ Դարեր շարունակ իշխանաւորների ու հարուստ դասակարգերի կողմից կեղեքւած ու տանջւած տարրերը, կռապաշտական աստւածներից ոչ մի օգնութիւն չը ստանալով, երես էին դարձնում նրանից և ուրախութեամբ ընդունում այն նոր կրօնը, որը նրանց յաւիտենական երջանկութիւն ու խաղաղութիւն էր խոստանում։ Եւ յանուն երկնային երջանկութեան մարդիկ սիրով երկրային ամեն տեսակ տանջանքների ու սարսափների էին դիմանում։ Այդպիսով շուտով նրանց թիւը այն աստիճան պատկառելի դարձաւ, որ կայսրներն անգամ ստիպւեցին նրանց ոյժի առաջ խոնարհւել։

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԵԾ


Պայմանաւորուած 20 տարին լրանալուց յետոյ, Դիոկլէտիանոսն ու Մաքսիմիանոսը հրաժարուեցին իրանց ունեցած իշխանութիւնից և կայսերական գահերը Գալերիոսին ու Կոնստանցիոս Քլորին զիջեցին։ Այս վերջիններն երկու նոր կեսարներ նշանակեցին իրանց տեղը յայտնի գօրավարներից։ Բայց շուտով ինքնագլուխ կերպով ուրիշ երկու կայսրեր էլ լոյս ընկան. դրանք Կոնստանցիոսի Կոնստանդին և Մաքսիմիանոսի Մաքսենցիոս որդիներն էին, որոնք նոյնպէս ուզում էին իրանց հայրերի գահը գրաւել։ Ծագած խառնակութիւններից օգտուելով Մաքսիմիանոսն էլ իրան նորից կայսր յայտարարեց։

Դիոկլէտիանոսի ջանքերով խաղաղած երկիրը կրկին ալեկոծուեց։ Բայց կարճ ժամանակի մէջ կայսրներից 3-ն ընկան կռւի մէջ և չորսը միայն մնացին՝ երկուսը կայսրութեան արևմտեան և երկուսն էլ արևելեան մասում։ Արևմտեան մասում մնացողները Կոնստանդինն ու Մաքսենցիոսն էին, որոնք կատաղի պատերազմ յայտարարեցին միմեանց դէմ, իւրաքանչիւրը կամենալով ինքը միայնակ թագաւորել կայսրութեան այդ մասում։

Շատ լաւ գնահատելով քրիստոնեաների բարոյական ոյժը, Կոնստանդինը նրանց կրօնի կատարեալ ազատութիւն խոստացաւ, եթէ ինքը կը յաղթի և միայնակ կայսր կը դառնայ։ Եւ այդ խոստումից ոգևորուած քրիստոնեաներն այնպիսի մի չտեսնուած քաջութեամբ կռւեցին, որ Մաքսենցիոսը սոսկալի պարտութիւն կրեց ու փախաւ, իսկ Կոնստանդինը գրաւեց Հռոմը և կայսրութեան արևմտեան մասի միահեծան տէրը դարձաւ (312 թ.)։

Բացի կրօնական ազատութիւն խոստանալը, Կոնստանդինը քրիստոնեայ գինուորներին թոյլ էր տուել իրանց վահանների վրայ Քրիստոսի անուան տառերը գրել, իսկ իր՝

կայսերական դրօշակի վրայ՝ ինքն էլ մի մեծ խաչ էր նկարել տուել։



Կոնստադին մեծ

Ասում են, որ Կոնստանդինը այնչափ ոգևորուել ու տարուել էր իր հակառակորդներին քրիստոնեաների միջոցով յաղթելու


գաղափարով, որ գիշերը երազում մի մեծ խաչ էր տեսել, տակը գրած. «Սրանով դու պիտի յաղթես»։

Մօտաւորապէս նոյն ժամանակներում Լիցինիոսն էլ կայսրութեան արևելեան մասի միահեծան տէրն էր դառել։

Իր խոստմանը հաւատարիմ մնալով, Կոնստանդինը կայսերական գահի վրայ հաստատուելուց յետոյ քրիստոնեաներին կրօնի կատարեալ ազատութիւն տւեց։ Բայց որպէսզի միւս կրօնները դաւանողներին նախանձը չը գրգռւի, նա հետևեալ տարին Լիցինիոսի հետ միասին մի նոր կայսերական հրովարտակ հրատարակեցին, որով կայսրութեան սահմաններում եղած բոլոր կրօնները հաւասարապէս ազատ էին ճանաչւում։ «Թող բոլոր աստւածներն էլ մեր կայսրութեան մէջ պաշտւեն,—ասւած է հրովարտակում,— որպէս զի ոչ ոք նրանցից չը վիրաւորւի ու դժբախտութիւն չը պատճառի մեր տէրութեանը»։

Լիցինիոսի հետ միասին թագաւորելը մօտ 12 տարի տևեց միայն։ Դրանից յետոյ Կոնստանդինը նրան ևս խորտակեց և ինքը հռոմէական ամբողջ պետութեան միակ կայսրը դարձաւ։

Այդ ժամանակից նա սկսեց՝ Դիոկլետիանոսի օրինակով, հետզհետէ աւելի ու աւելի հաստատ հիմքերի վրայ դնել կայսերական ինքնակալ ու միահեծան իշխանութիւնը։ Բայց Կոնստանդինը, փոխանակ պետութիւնը, Դիոկլետիանոսի նման, մասերի բաժանելու և նրանցից իւրաքանչիւրի մէջ մի առանձին կայսր նշանակելու, ինքը մընալով ամբողջ պետութեան միայնակ տէրը; եօթ հատ պետական բարձրագոյն պաշտօններ հաստատեց և նրանցից ամեն մէկին, այժմեան մինիստրների ձևով, կառավարչական մի որոշ ճիւղը յանձնեց ղեկավարելու։ Հազարաւոր բարձր ու ստորին պաշտօնեաններ այդ եօթ բարձրագոյն պաշտօնեաներին էին ենթարկւում ու նրանցից կարգադրութիւններ ու հրահանգներ սպասում։ Իսկ դրանց բոլորից բարձրում ինքնակալ ու միահեծան Կոնստանդինն էր կանգնած, որին «Ձերդ Աստւածութիւն» կամ «Ձերդ Յաւիտենականութիւն» տիտղոսներով էին դիմում։ Բոլոր բարձր ու ստորին պաշտօնեաների համար էլ տիտղոսներ էին հնարել, ինչպէս օրինակ՝ «ձերդ գերազանցութիւն», «ձերդ պայծառափայլութիւն» և այլն։



Կոնստանդինոպոլիսի պարիսպները

Լիցինիոսին կայսրութեան արևելեան մասում յաղթելուց յետոյ, Կոնստանդինն այլևս չը վերադարձաւ Հռոմ։ Այնտեղի հանրապետական աւանդութիւններն ու ծնացած սովորութիւնները մեծ խոչնդոտներ էին ինքնակալ միահեծանութիւնը զարգացնելու համար։ Այդ պատճառով էլ նա Բիւզանդիոնն իրան մայրաքաղաք ընտրեց, որն իր աշխարհագրական դիրքի շնորհով շատ կարևոր քաղաք էր համարւում։ Բազմաթիւ շէնքերով գեղեցկացնելով իր նոր մայրաքաղաքը, Կոնստանդինը նոր Հռոմ անւանեց նրան։ Բայց ժողովուրդն այդ նոր մայրաքաղաքը կայսեր անունով Կոնստանդինոպոլիս կոչեց։

Կայսերական գահը Բիւզանդիոն տեղափոխելուց յետոյ էլ Կոստանդինը շատ համբերատար ու անտարբեր մնաց դէպի բոլոր կրօնական դաւանութիւնները։ Զը նայելով որ ինքը համարեա թէ մինչև մահ կռապաշտ մնաց և, նախորդ կայսրների նման կռապաշտական կրօնի գլխաւոր քրմապետն էր, բայց և այնպէս հաւասար եռանդով նա թէ կռապաշտական տաճարներ և թէ քրիստոնէական եկեղեցիներ էր կառուցանում։ Այս վերջիններն էլ նա, կռապաշտական տաճարների նման, ազատ էր յայտարարում պետական բոլոր հարկերից։ Նախորդ կայսրների օրով քրիստոնեաններից խլուած և յարքունիս գրաւուած բոլոր կալուածները Կոստանդինը իրանց տէրերին կամ նրանց ժառանգներին վերադարձրեց։

Առհասարակ նա ամեն կերպ աշխատում էր ոչ մի առիթ չը տալ դժգոհութեան ու ներքին խռովութիւնների, որպէսզի ինքը հնարաւորութիւն ունենայ իր միահեծան իշխանութիւնը աւելի ու աւելի հաստատ հիմքերի վրայ դնել։ Իր միահեծանութեան շահերը Կոստանդինը ամեն բանից վեր էր դասում, յանուն այդ շահերի նա մինչև իսկ իր հարազատ որդուն ու կնոջը սպանել տւեց։ Ներքին պատակոծների առաջն առնելու համար, նա քրիստոնէական բարձր հոգևորականութեան մէջ ծագած դաւանաբանական վէճերին էլ էր միջամտում։ Այսպէս՝ քրիստոնեաների առաջին կրօնական ժողովը Նիկիա քաղաքում (325 թ.) Կոստանդինի նախաձեռնութեամբ գումարւեց։

Այդ ժողովում Ալեքսանդրիացի Արիոս քահանան, որը Յիսուսի աստուածութիւնը չէր ընդունում, հերետիկոս յայտարարւեց։

Կոստանդինն իր մահից առաջ միայն քրիստոնեայ մկրտւեց (337 թ.)։ Պատմութեան մէջ նա յայտնի է Կոստանդին Մեծ անունով։

ԴԷՊԻ ԵՐՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ ԵՒ ՏՐԴԱՏ ՄԵԾ

Ալեքսանդր Սեվերի մահից յետոյ, պարսիկները նորից Միջագետքը տիրեցին։ Թէև հռոմայեցիք շուտով նրանց դարձեալ դուրս վանեցին այդ երկրից, բայց այդ երկար չը տևեց։ Կայսրութեան մէջ տիրող արիւնահեղ պատակոծներն ու գերմանական ցեղերի կատաղի յարձակումները հիւսիսում ամբողջապէս կլանած լինելով հռոմայեցիներին, պարսիկները բոլորովին ազատ էին Արևելքում իրանց ուզածն անելու։ Եւ այդ ժամանակւայ պարսից Շապուհ I (Շապուհ) թագաւորն ամենից առաջ Հայաստանը գրաւեց։

Հայաստանում այդ ժամանակ Արշակի (Խոսրովի) որդի երիտասարդ Տրդատ III-ն էր թագաւորում։ Սա հռոմայեցիների մօտ փախաւ իսկ նրա ընտանիքը յօժարակամ Շապուհին անձնատուր եղաւ։ Շապուհը Տրդատի տեղ նրա ազգական Արտաւազդին (V) հայոց թագաւոր նշանակեց, որը պարսիկներին մեծ ծառայութիւններ էր մատուցել (253 թ.)։

Դրանից յետոյ պարսիկները Միջագետքն ու Սիրիան էլ տիրեցին և այնտեղից շարունակ յարձակումներ էին գործում հարեւան նահանգների վրայ։

Հռոմայեցիք անկարող լինելով պարսիկների այդ յանդուգն աւազակութիւնները տանել, վերջապէս, նորից իրանց ուշադրութիւնը դէպի Արևելք դարձրին։ Սակայն պատերազմը շատ անյայտ ելք ունեցաւ նրանց համար, պարսիկները սոսկալի ջարդ տւեցին և Վալենտիանոս կայսրին էլ գերի բռնեցին։ Այդուհետև ամբողջ Արևելքի կատարեալ տէրը դառնալով, պարսիկները ոչ միայն կողոպտում ու աւերում էին այդ նահանգները, այլ և գերանց բնակիչներին էլ գերելով, ահագին բազմութեամբ Պարսկաստանի խորքերն էին տեղափոխում, նրանց միջոցով արհեստներն ու վաճառականութիւնը իրանց երկրում էլ ծաղկեցնելու նպատակով։

Պարսիկների կատարած բռնութիւնների շուտով ահագին դժգոհութիւն առաջացրին ասիական նահանգում և ժողովուրդն սկսեց ապստամբութեան պատրաստուել։ Գալիք փոթորիկները նախատեսելով հայոց Արտաւազդ V թագաւորը նամակ գրեց պարսից Շապուհին ու նախազգուշացրեց նրան։

«Ուրախանում եմ ես քո փառքին,—ասում էր նա իր նա-

մակում,—միայն թէ վախենում եմ, որ դու շատ աւելի պատերազմի հուրը բորբոքեցիր, քան թէ յաղթեցիր։ Վալերիանոսին ազատ արձակելու մասին խնդրում են թէ նրա որդիները, թէ թոռները, թէ հռոմէական զօրապետները և թէ բոլորը, առանց բացառութեան՝ Գալլիան, Աֆրիկան, Սպանիան, Իտալիան, ամբողջ զօրքը և Հռոմի բոլոր դաշնակիցները։ Դու մի անգօր ծերունի գերի բռնեցիր և դրանով բոլորին էլ զրգռեցիր քո դէմ, գուցէ և մեզ՝ քո դաշնակիցների դէմ։ Մենք՝ քո հարևաններդ՝ միշտ տուժում ենք, երբ դուք կռւում էք միմեանց հետ»։

Հայոց թագաւորի նախազգուշացումներն ի դուր չէին։ Ժողովրդային դժգոհութիւնը, գնալով, սաստկացաւ Շապուրի դէմ, իսկ դրանից մեծ յաջողութեամբ կարողացաւ Պալմիրի Օդենատ իշխանն օգտուել։ Պալմիրը Սիրիայի հարաւ արևելեան կողմում գտնուող արաբական մի շատ ծաղկած քաղաք էր, որը մինչ այդ նոյնպէս Հռոմի գերիշխանութեան տակ էր գտնուում։

Ապստամբ տարրերից հաւաքած զօրքերի գլուխն անցած Օդենատը պարսիկների դէմ դուրս եկաւ և մի լաւ ջարդ տուից նրանց (260 թ.)։ Սիրիան ու փոքր-ասիական նահանգները հետզհետէ պարսիկներից մաքրելով, Օդենատը Միջագետք մտաւ, գրաւեց Նիզիբն ու մինչև Կտեզիֆոն հալածեց Շապուրին (264 թ.)։

Արաբիան, Սիրիան, Փոքր-Ասիան, Միջագետքն ու Հայաստանը Օդենատի տիրապետութեան տակ ընկան, և յայտնի չէ թէ մինչև ուր պիտի հասցնէր իր տէրութեան սահմանները այդ քաջ արաբը, եթէ հռոմայեցիք նրա՝ այդպիսի արագութեամբ՝ հզօրանալուն նախանձելով, դաւաճանութեամբ սպանել չը տային նրան։ Օդենատի մահից յետոյ, արագութեամբ բարձրացած Պալմիրեան թագաւորութիւնը շատ շուտով ոչնչացաւ (274 թ.)։ Իսկ այդ հանգամանքից դարձեալ պարսիկները օգտուեցին, որովհետև հռոմայեցիք ուրիշ պատերազմներով էին զբաղուած և անկարող էին արևելեան նահանգներին տիրանալ։ Պարսիկների տիրապետութիւնն այդ նահանգներում մօտ տաս տարի տևեց, որից յետոյ հռոմայեցիք դարձեալ նրանց դուրս վանեցին այնտեղից ու մինչև Կտեզիֆոն հալածեցին (282)։ Այդտեղ երկու դարաւոր ոսոխները հաշտութիւն կնքեցին, որի համաձայն Միջագետքն ու Հայաստանը դարձեալ հռոմայեցիների գերիշխանութեան տակ անցան։

Այդ խաղաղութիւնը պարսից Ներսէս թագաւորը խախտեց, որը ահագին զօրքով Հայաստանի վրայ յարձակուեց ու տիրեց նրան։ Այդ ժամանակ Հռոմում Դիոկլիտիանոսն էր թագաւորում։ Նա իր օգնական Գալերիոս կեսարի հետ միասին բազմաթիւ զօրքի գլուխն անցած, անձամբ Ասիա եկան։ Դիոկլիտիանոսը Միջագետքում մնաց, իսկ Գալերիոսը Հայաստան անցաւ, ուր և վճռական պատերազմը տեղի ունեցաւ։ Պարսիկները սոսկալի պարտութիւն կրեցին և Ներսէսն էլ վիրաւորուած փախաւ։ Նրա ամբողջ ընտանիքը, գանձերն ու բազմաթիւ իշխանազուններ հռոմայեցիների ձեռքն ընկան (297 թ.)։

Դրանից յետոյ Դիոկլիտիանոսը հայոց Տրդատ III-ին զօրք տալով Հայաստան ուղարկեց և նա կրկին իր կորցրած գահին տիրացաւ։

Պարսից Նարսէսն ստիպուած էր Դիոկլիտիանոսից հաշտու-



Տրդատը վրաց եւ աբխազաց թագաւորների հետ

թիւն խնդրել, որի պայմաններից մէկն էլ այն էր, որ նա հրաժարուում էր Հայաստանի գերիշխանութիւնից։ Այդուհետև ամբողջ 40 տարի խաղաղութիւն տիրեց Հայաստանում, որ չափազանց նպաստաւոր եղաւ նրա բարգաւաճմանու զարգացման համար։

Տրդատն իր թագաւորութեան սկզբում, Դիոկլիտիանոսի նման, կատաղի հալածանքներ էր սկսել քրիստոնեաների դէմ, բայց Հայաստանում էլ բաւականին մեծ թիւ էին կազմում։ Բայց վերջը, երբ Հռոմում Կոնստանդին Մեծի միապետութիւնն սկսեց,

Տրդատը հզօր կայսրի բարեկամութիւնը պահպանելու համար, ոչ միայն դադարեց քրիստոնեաներին հալածելը, այլ և ինքն էլ քրիստոնեայ մկրտուելով, նոր կրօնը պետական կրօն դարձրեց։ Շնորհակալ քրիստոնեայ ժողովուրդը նրան Մեծ մականունն է տուել, և նա պատմութեան մէջ յայտնի է Տրդատ Մեծ անունով։

ԿՈՆՍՏԱՆՑԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻԱՆՈՍ

Կոստանդին Մեծը մեռնելուց առաջ հռոմէական կայսրութիւնն իր որդիների մէջ բաժանեց։ Բայց որդիները չը բաւականացան իրանց ստացած մասերով, այլ նրանցից ամեն մէկը կամենում էր, Կոստանդին Մեծի նման, միայնակ թագաւորել ամբողջ պետութեան մէջ։ Նորից սկսեցին եղբայրասպան կռիւները, որ տևեցին ամբողջ 13 տարի և վերջացան Կոստանդինի Կոնստանցիոս որդու յաղթութեամբ։

Զափազանց փոթորկալից էր Կոնստանցիոսի կայսրութիւնը։ Լինելով մի շատ հաւատացեալ քրիստոնեայ և ընդունելով հերետիկոս յայտարարուած Արիոսի դաւանանքը, նա խիստ հալածանք սկսեց «ուղղափառ» համարուող քրիստոնեաների դէմ։ Միևնոյն ժամանակ նա աստիկ հալածում էր կռապաշտներին, որոնց բոլոր տաճարները փակել տուեց։

Երկրի ներսում կրօնական հակառակորդների դէմ էր կռիւ մղում Կոնստանցիոսը, իսկ դրսում արտաքին թշնամիների դէմ էր մաքառում։ Եւ այդ թշնամիները, գրնալով, աւելի ու աւելի սպառնական էին դառնում։ Արևելքում պարսիկները էին նորից գլուխ բարձրացրել, իսկ Հռենոսի ու Դանուբի սահմանների վրայ գերմանական և այլ վայրենի ցեղերն էին յարձակւում։ Ամենից շատ գալլական նահանգն էր տուժում, որ Գալլիա, Սպանիա և Բրիտանիա երկիրներից էր բաղկացած։ Կոնստանցիոսն այդ

նահանգի պաշտպանութիւնն իր հօրեղբօր որդի երիտասարդ Յուլիանոսին յանձնեց, որը ոչ միայն այդ երկիրը մաքրեց բարբարոսներից, այլ Հռենոսն անցնելով, բոլորովին աւերակ դարձրեց նրանց երկիրը։

Յուլիանոսը երկար ժամանակ գիտութիւններով էր պարապել Աթէնքում և աստիկ սիրում էր յունական փիլիսոփայութիւնն ուսումնասիրել։ Գալլական նահանգը բարբարոսներից մաքրելուց յետոյ, նա իր սիրած Լիւտեցիա (այժմ Պարիզ) քաղաքում դարձեալ գիտութիւններով էր պարապում։ Հէնց այդ ժամանակ էլ նրան իր հաւատարիմ զօրքը, գեռ Կոնստանցիոսի կենդանութեան օրով, կայսրը յայտարարեց։ Զայրացած Կոնստանցիոսն սկսեց պատ-



Յուլիանոսը եւ իր կինը

րաստութիւն տեսնել նրա դէմ պատերազմելու, բայց շուտով էլ մեռաւ, և Յուլիանոսն ամբողջ կայսրութեան միահեծան տէրը մնաց (316 թ.)։

Կայսերական գահը բարձրանալով, Յուլիանոսը հին կռապաշտական կրօնի կողմը բռնեց և սկսեց քրիստոնեաներին հալածել։ Նա չէր սիրում քրիստոնէութիւնը գլխա-

ւորաբար նրա համար, որ այդ կրօնը համարում էր յունական հին կուլտուրան ու գեղարուեստը ոչնչացող եւ քանդող մի ուսմունք։

Բայց Յուլիանոսի սկսած հալածանքը քրիստոնեաների դէմ բոլորովին չէր նմանում իր նախորդների հալածանքներին. նա ոչ տանջանքների էր ենթարկում նրանց եւ ոչ էլ մահուան պատիժներ տալիս։ Նրա հալածանքն այն եղաւ միայն, որ եկեղեցիներին ու եկեղեցականներին տրւած բոլոր արտօնութիւնները յետ խլեց։ Յուլիանոսը հաւատացած էր, որ քրիստոնէութիւնը ինքն իրան կարող էր վերանալ, եթէ կառավարական կրօնի քահանայական դասը սկսի բարոյական ու արժանավայել կեանք վարել և լաւ բացատրել ժողովրդին այդ կրօնի ամբողջ վեհութիւնն ու խոր իմաստը։ Այդ իսկ ուղղութեամբ Յուլիանոսը մի շարք օրէնքներ հրատարակեց և ինքն էլ մի շարադրութիւն գրեց քրիստոնէութեան դէմ։

Յուլիանոսի թագաւորութիւնն ընդամենը 1½ տարի տեւեց։ Պարսիկների դէմ սկսած մի անյաջող պատերազմի մէջ նա ընկաւ, Տիգրիսի մօտերքում։

Քրիստոնեաները պատմում էին, թէ իբրև Յուլիանոսը մեռնելիս բացականչել է՝ «Դու յաղթեցիր, Գալիլիացի»։ Այդպիսի խօսքեր Յուլիանոսը թէև չէր արտասանել, բայց այդ առասպելը ճիշտ է այն տեսակէտով, որ կառավարական հին կրօնը Յուլիանոսի օրով իր վերջին ճակատամարտը տւեց քրիստոնէութեան դէմ և պարտութիւն կրեց։

Թ Է Ո Դ Ո Ս Մ Ե Ծ

Յուլիանոսի մահով Կոնստանցիոս Քլորի սերունդը վերջացաւ։ Յաջորդ կայսրներին դարձեալ զինւորներն սկսեցին ընտրել։ Այդ բոլոր կայսրները սպիտակած էին շրունակ կատաղի պատերազմներ մղել բարբարոս ցեղերի

դէմ, որոնց գրոհը Հռենոսի ու Դանուբի սահմաններում, քանի գնում, մեծանում էր։

Յուլիանոսի յաջորդներից մանաւորապէս նշանաւոր է Թէոդոս Մեծը, որի օրով քրիստոնէութիւնը վերջնականապէս պետական կրօն դարձաւ հռոմէական կայսրութեան մէջ։ Հազիւ կայսերական գահը բարձրացած, Թէոդոսը կրօնական պատերազմ յայտարարեց՝ նախ արիոսականների և ապա կռապաշտների դէմ։ Միմեանց յետևից մի շարք օրէնքներ հրատարակեց նա կռապաշտութիւնն ու արիոսականութիւնը ոչնչացնելու համար։ Կռապաշտական բոլոր տաճարները փակւեցին և բազմաթիւ արիոսական եպիսկոպոսներ աքսոր գնացին։

Այդ հալածանքների ժամանակ պակաս դեր չէին կատարում և ուղղափառ եպիսկոպոսները, որոնք Թէոդոսի բարեհաճ տրամադրութիւնից ու ֆանատիկոսութիւնից օգտւելով, նրան շարունակ կրօնական անհամբերատարութեան էին դրդում։ Այդ բարձր հոգևորականութիւնը հետզհետէ այն աստիճան մեծ իրաւունքներ ձեռք բերեց, որ սկսեց քաղաքական գործերի մէջ էլ խառնւել և մինչև իսկ կայսրին իր իշխանութեանը ենթակել։ Այսպէս օրինակ՝ մեկ անգամ Թեսալոնիկ քաղաքում խռովութիւն էր ծագել, և Թէոդոսը հրամայել էր զօրքին՝ կրկէսում հաւաքւած անզէն ժողովրդին ամբողջապէս սրի անցկացնել։ Դրանից յետոյ, երբ կայսրը եկեղեցի գնաց, Միլանի Ամբրոսիոս եպիսկոպոսը նրան թոյլ չը տւեց ներս մտնելու և, մի լաւ յանդիմանելուց յետոյ, ապաշխարանք դրեց նրա վրայ կատարւած կոտորածի համար։ Կայսրը հնազանդեց, և այդ առաջին օրինակը եղաւ, երբ մարմնաւոր իշխանութիւնը քրիստոնիայ կղերին էր ենթարկւում։

Մեռնելուց առաջ Թէոդոսը,—որ պատմութեան մէջ Մեծ տիտղոսն է վայելում—հռոմէական կայսրութիւնն իր երկու որդիների մէջ բաժանեց, արևմտեան մասը Հո-

նորիոսին, իսկ արեւելեանը Արկադիոսին տւեց։ Արեւմտեան հռոմէական կայսրութիւնը սակայն չը կարողացաւ երկար իր գոյութիւնը պահպանել. գերմանական ցեղերի գրոհին չը դիմանալով, նա ընկաւ շուտով (476 թ.), և նրա վայտակների վրայ բարբարոսներն իրանց սեփական թագաւորութիւնները հիմնեցին։ Իսկ արեւելեան կայսրութիւնը դեռ էլի մօտ 1000 տարի պահպանեց իր գոյութիւնը, Բիւզանդական կայսրութիւն անունով, մինչև որ Օսմանեան թիւրքերը նւաճեցին նրան։






ԳԵՂԱՐԻԵՍՏՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՌՈՄՈՒՄ

Թէ գեղարւեստի ու գրականութեան և թէ գիտութիւնների մէջ հռոմայեցիք յոյների հաւատարիմ աշակերտն էին։ Շնորհիւ Հարաւային Իտալիայում եղած յունական գաղութների, հռոմայեցիք շատ վաղ էին ծանօթացել յունական լեզւի, կրօնի ու գեղարւեստի հետ։ Եւ հէնց յոյներից էին նրանք փոխ առել իրանց կրօնական շատ հաւատալիքներն ու հասկացողութիւնները։ Բայց յոյների ազդեցութիւնը չափազանց մեծացաւ Պունիկեան պատերազմների ժամանակ և յունական Տորնտոն քաղաքն ու մանաւանդ Յունաստանը գրաւելուց յետոյ։ Այդ ժամանակներից էլ ահա սկսեցին Հռոմում հետզհետէ գեղարւեստն ու գրականութիւնը զարգանալ։ Բայց որովհետև հռոմայեցիք վերին աստիճանի գործնական մարդիկ էին և չունէին յոյների գեղարւեստական նուրբ ճաշակն ու երազող բնաւորութիւնը, ուստի նրանք ամեն բանի մէջ նախ գործնական կողմն էին որոնում։ Հէնց այդ հիման վրայ էլ Հռոմում գեղարւեստի ճիւղերից ամենից աւելի ճարտարապետութիւնը զարգացաւ։ Նրանք ոչ թէ յոյների նման աստւածային վեհութիւն արտայայտող արձաններ կամ գեղեցիկ տաճարներ, այլ շատ աւելի

հսկայական՝ կարելիին չափ մեծ բազմաթիւն պարունակող՝ ժողովասրահներ, դատարաններ, հրապարակներ, կրկէսներ, բաղնիսներ ու այլ այդ կարգի գործնական անհրա-



Հռոմի միջնաբերդը

ժեշտութիւն ունեցող շէնքեր էին կառուցանում։ Այսպէս օրինակ՝ Հռոմի Մեծ-կրկէսը 260,000 մարդու համար էր շինւած, իսկ Փլաւիանոսի շինել տւած ամֆիթա-

տրոնն իր չափազանց մեծ լինելու պատճառով հսկայ (կոլոսէա) անունն էր ստացել։ Հռոմայեցիք շատ սիրում էին կամարաձև և գմբեթաւոր շէնքեր շինելը, որ նրանք էտրուսկներից էին սովորել։ Այդպիսի շէնքերից շատ նշանաւոր էր Օգոստոսի օրով Հռոմում շինւած պանթէոնը։

Քանդակագործութիւնն էլ Հռոմում գլխաւորաբար գործնական նպատակների էր ծառայում. քանդակագործներն ամենից աւելի պետական ու հասարակական գործիչների արձաններ, զօրավարների ու թագաւորների համար յաղթական կամարներ և այլ այդ կարգի գործեր էին շինում։

Գեղարւեստական գրականութիւնն էլ Հռոմում յունական ազդեցութեան տակ ստեղծւեց, և առաջին լատիներէն լեզւով գրւածքի հեղինակը մի յոյն էր, Անդրօնիկ անունով։ Այդ գրւածքը յունարէնից թարգմանւած մի դրամա էր, որ Պունիկեան պատերազմների բարեյաջող ելքի առիթով ներկայացւեց (240 թ. Ք. ա.) «հռոմէական խաղերի» ժամանակ։ Նոյն Անդրօնիկը Հոմերոսի Ոդիսականը թարգմանեց լատիներէն։ Յետոյ արդէն հռոմայեցի գրողներ էլ դուրս եկան, որոնց գրւածքների նիւթը ըստկզբում դարձեալ յունական աստւածների ու հերոսների մասին եղած առասպելներն էին կազմում։

Գեղարւեստական գրականութեան ճիւղերից Հռոմում ամենից աւելի կատակերգութիւնն ու մանաւանդ երգիծաբանութիւնը զարգացան։ Հռոմէական կատակերգուներից շատ նշանաւոր էր Պլաւտոսը (250—184 թ. թ. Ք. ա.) և Տերենցիոսը (189—159 թ. թ. Ք. ա.)։ Այս երկու հեղինակներն էլ յունական IV-րդ դարի կատակերգական ուղղութեանն էին հետևում, և նրանց գրւածքները շատ էլ մեծ քաղաքական ու հասարակական նշանակութիւն չունէին. չափազանց սովորական, ամեն քայլում հանդիպող տիպերն էին նրանց մէջ պատկերացւում ու ծաղրւող

ւում: Պլաւտոսը իր աշխատութիւնների նիւթը թէև յունական կատակերգութիւններից էր փոխ առնում, մինչև իսկ յունական անունները պահպանելով, բայց իրապէս հռոմէական կեանքն էր նա պատկերացնում: Իր կատակերգութիւնների մէջ նա ծաղրում էր պարծենկոտ վախկոտներին, հարուստ ժլատներին, թեթևամիտներին և այլն:



Տերենցիոս

Պլաւտոսի ոճն ու լեզուն խիստ կոպիտ ու գռեհիկ են, որ նոյնպէս շատ համապատասխան են իր ժամանակի ճաշակին ու հայեացքներին: Այդ կողմից բոլորովին տարբեր է Տերենցիոսը, որի ոճն ու լեզուն Պլաւտոսի ոչ կոպտութիւնը և ոչ էլ գռեհկութիւնն ունեն, թէև այս վերջինի գրւածքներում տիպերն աւելի լրիւ են դուրս բերւած:

Երգիծաբաններից շատ նշանաւոր էր Իւվենալը, որի մաղձոտ գրիչը ոչ ոքի չէր խնայում: Նա ապրում էր Դոմիցիանոս կայսրի ժամանակ և մեծ համարձակութեամբ ծաղրում, հեգնում էր այն ժամանակւայ հասարակութեան տգիտութիւնը, այլասերւած, փչացած ճաշակները, քսութիւնը, կաշառակերութիւնն ու ամեն տեսակ ախտերը: Իր գրւածքներում նա մինչևիսկ կայսրին ու պալատականներին էլ էր դիպչում: Հէնց այդ է պատճառը, որ Իւվենալի աշխատութիւնների մեծ մասը Դոմիցիանոսի մահից յետոյ միայն լոյս տեսան: Իսկ քանի դեռ այդ կայսրը

կենդանի էր, նրանք մասնաւոր շրջաններում էին միայն կարդացւում և բերանացի պատմւում:

Երգիծաբաններից յիշատակութեան արժանի է և Պետրոնիուսը, որը Ներոնի ժամանակներում էր ապրում: Իբրև վերին աստիճանի նուրբ ճաշակի ու շատ լաւ կրթւած մարդ, Պետրոնիուսը ամենից աւելի վաճառականութեամբ հարստացած գաւառացիներին էր ծաղրում, որոնք, չը նայելով իրանց անկրթութեանն ու գռեհկութեանը, կապկաբար աշխատում էին Հռոմի արիստոկրատիային նմանւել:



Վիրգիլիոս

Բայց Հռոմի գրականութեան ոսկէ դարը Օկտաւիանոս Օգոստոսի կայսրութեան շրջանն է համարւում: Այդ ժամանակ էին ապրում ու գրում հռոմէական ամենանշանաւոր բանաստեղծները՝ Վիրգիլիոս, Հորացիոս և Օվիդիոսը:

Վիրգիլիոսը փորձեց մի այնպիսի դիւցազներգութիւն ստեղծել հռոմայեցիների համար, որպիսին յունական Իլիականն ու Ոդիսականն էին, և նա Հոմերոսի այդ երկու աշխատութիւնների օրինակով իր նշանաւոր Ենէականը գրեց: Այս դիւցազներգութեան հերոս Ենէասը, որն իբր թէ Օգոստոս կայսրի նախահայրն էր եղել, Տրոյեայի կործանումից յետոյ, Ոդիսևսի նման, երկարատև ու արկածալից ճանապարհորդութիւն էր կատարել, մինչև որ Իտալիայի ափերին էր հասել: Իսկ այստեղ էլ լաւինե-

քի հետ երկար ու դժւարին պատերազմներ էր մղել, մինչև որ կարողացել էր իր իշխանութիւնը հաստատել։

Այդ աշխատութեան միջոցով Վիրգիլիոսն աշխատում էր հայրենասիրութիւն, ազնւութիւն, կրօնասիրութիւն ու բարոյականութիւն զարթեցնել իր ընթերցողների մէջ։ Մի ուրիշ աշխատութեան մէջ նա երկրագործի կեանքն ու աշխատանքն էր երգում, իսկ մի այլ գրւածքում էլ՝ հովւական կեանքը։ Իր բոլոր գրւածքներում առհասարակ շատ գեղեցիկ կերպով արտացոլում են Վիրգիլիոսի մաքուր ու զգայուն սիրտը և անհուն սէրը դէպի բնութիւնն ու մարդիկ։

Հորացիոսը զանազան առիթներով գրւած իր ձօներով ու երկիծական աշխատութիւններով աւելի հռչակ ստացաւ։ Իսկ Օվիդիոսն՝ իր բազմաթիւ բանաստեղծութիւններով, որոնցից շատ նշանաւոր էին «կերպարանափոխութիւնները» անունով աշխատութիւնը, դիւցաբանական թեմայով գրւած։

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՌՈՄՈՒՄ

Գիտութիւնները էլ Յունաստանից անցան Հռոմ։ Այստեղ Էպիկուրեան և Ստոիկեան կոչւող փիլիսոփայական վարդապետութիւնները ամենից շատ հետևողներ ունեցան։ Այդ երկու վարդապետութիւնները միմեանցից բոլորովին տարբեր ու հակառակ բաների մէջ էին գտնում մարդկային երջանկութիւնը։ Մինչ էպիկուրեանները անհատական խաղաղ ու անվրդով կեանքի չափաւոր վայելքների մէջ էին տեսնում մարդկային երջանկութիւնը, ստոիկները ընդհակառակը, հաւասարապէս ժխտելով ճոխ ու աւելորդ զւարճութիւնները, մարդուն անխոնջ աշխատանքի ու հասարակական գործունէութեան էին մղում։ «Աւելի լաւ է,—ասում էր էպիկուրեան վարդապետութիւնը,—ամենայն հանգստութեամբ հպատակւել, քան հանրապետութիւնը կառավարելու և թագաւորութիւններն

տիրելու ձգտել. թող, ուրեմն, արիւն քրտինք թափեն նրանք, որոնք սիրում են փառասիրութեան նեղ ուղիի վրայ կռիւ մղել»։ Ընդհակառակը՝ «Աշխատիր շարունակ,—ասում էր ստոիկը,—առանց մի բեռ կամ դժբախտութիւն համարելու քեզ համար աշխատանքը, և մի ցանկանայ, որ քեզ դրա համար գովեն կամ խղճան։ Դու պէտք է միմիայն ընդհանուրի բարօրութիւնն աչքի առաջ ունենաս»։

Թէ էպիկուրեաններն և թէ ստոիկները շատ հանդիստ սրտով իրանց կեանքը անձնասպանութեամբ էին վերջացնում։ Բայց առաջիններն այդ անում էին յանուն անհատական երջանկութեան, իսկ վերջիններն՝ յանուն առաքինութեան։



Սենեկա

Էպիկուրեաններից Հռոմում նշանաւոր էր Լուկրեցիոսը՝ «Իրերի բնութեան մասին» վերնագիրը կրող՝ իր ընդարձակ պօէմով, իսկ ստոիկներից նշանաւոր էին՝ Սենեկան, որ Ներոնի ուսուցիչն էր, և փիլիսոփայ կայսր Մարկոս Աւրելիոսը՝ իր «Ինքս ինձ» անունով աշխատութիւնով։

Հռոմէական պատմագիրներից նշանաւոր էին՝ Տիտոս Լիվիոսը, որ գրել է «Հռոմէական պատմութիւնը Հռոմի հիմնադրութիւնից սկսած», Յուլիոս Կեսարը, որն իր Գալլիայում ունեցած պատերազմների ճշգրիտ նկարագիրն է տւել, և մանաւանդ Տացիտոսը, որն ապրում էր Դոմիցիանոսի ու Տրայեանոսի

ժամանակ և երեք շատ նշանաւոր աշխատութիւններ է թողել. 1. «Տարեգրութիւն», որի մէջ նկարագրել է Օգոստոսի մահից մինչև Ներոնի մահը տեղի ունեցած դէպքերը 2) «Պատմութիւնները», որտեղ յետագայ անցքերն են նկարագրուած մինչև Դոմիցիանոսի մահը, և 3) «Գերմանիա», որտեղ գերմանացիների ծագումը, նրանց բնակութեան հին տեղն ու բարքերն են նկարագրուած:

Գիտութեան միւս ճիւղերի մէջ հռոմայեցիք նոյնպէս յոյներին էին հետևում: Յիշատակութեան արժանի է բնագէտ Պլինիոս Երեցը, որն իր «Բնական պատմութիւն» անունով աշխատութեան մէջ բազմաթիւ հետաքրքրական դիտողութիւններ է հաւաքել հանքաբանութեան, բուսաբանութեան, կենդանաբանութեան ու գիւղատնտեսութեան վերաբերեալ: Պլինիոսը սաստիկ սիրում էր բնագիտութիւնը և հէնց իր հետաքրքրութեանն էլ զոհ գնաց 79 թուականի Վեզուվիի ժայթքման ժամանակ:

Յոյներից բոլորովին անկախ և միանգամայն ինքնուրոյն հանդիսացան հռոմայեցիք միմիայն իրաւաբանութեան ճիւղի մէջ: Շնորհիւ այն հանգամանքի, որ Հռոմ քաղաքի բնակիչները, համարեա թէ նրա հիմնարկութեան օրից, ստիպւած էին շատ զանազան ու բազմատեսակ պայմաններով կապւել կամ դաշնակցել իրանց թէ մերձակայ և թէ հեռաւոր հարևան ազգերի ու ցեղերի հետ, ուստի նրանք կարիք ունէին մարդկանց յարաբերութիւնների համար բազմատեսակ իրաւունքների սահմաններ մշակել շուռնակ: Եւ քանի հռոմէական պետութիւնը զօրեղանում ու ընդարձակւում էր, քանի նրա արդիւնաբերութեան միջոցներն ու կառավարչական ձևերը փոխւում էին, այնքան էլ փոխւում էին պետութեան մէջ ապրող զանազան ազգերի, ցեղերի ու դասակարգերի միջև եղած յարաբերութիւնները և նրանց վայելած քաղաքացիական իրաւունքները: Նախկին ժամանակների լատինական իրաւունքը

հետզհետէ տեղի տւեց բոլոր ազատ մարդկանց համար ընական համարւող իրաւունքի առաջ: Այդ իրաւունքը կոչւում էր նախ համաժողովրդական կամ համազգային իրաւունք, իսկ յետոյ պարզապէս՝ քաղաքացիական իրաւունք:

Հռոմայեցիների մշակած քաղաքացիական իրաւունքը դեռ մինչև այսօր էլ չէ կորցրել իր մեծ նշանակութիւնը և բոլոր քաղաքակրթւած երկիրներում օրէնսդրութեան իբրև հիմք է ծառայում:

Հռոմի ամենանշանաւոր իրաւաբաններն էին՝ Գայոսը, Պապինիանոսը և Ուլպիանոսը, որոնք երրորդ դարի սկիզբներն էին ապրում, Սեվերների թագաւորութեան ժամանակ:

Վ Ե Ր Ջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես

Կազմողի կողմից . . . . . 3—4

Ներածութիւն.—1. Ինչ է պատմութիւնը: 2. Մարդկային գլխաւոր ցեղերը . . . . . 5—8

Եգիպտոս.—1. Երկիրն ու բնակիչները: 2. Պետութեան կազմակերպութիւը: 3. Դասակարգեր: 4. Կառավարչական կազմը: 5. Զօրքը: 6. Ժողովրդի զբաղմունքը: 7. Եգիպտացիների կրօնը: 8. Մումիաներ: 9. Դամբարաններ: 10. Օզիրիսի դատաստանը: 11. Կենդանիների պաշտամունքը: 12. Գլխաւոր և երկրորդական աստուածները: 13. Եգիպտական գիրն ու գիտութիւնները: 14. Եգիպտոսի քաղաքական համառօտ պատմութիւնը: 15. Հիւքսոսները Եգիպտոսում: 16. Նոր շրջան: . . . . . 9—50

Միջագետք.—1. Երկիրն ու ժողովուրդը: 2. Ժողովրդի զբաղմունքը: 3. Քաղդէայի քաղաքական կազմը: 4. Կրօնը: 5. Աստուածները: 6. Հանդերձեալ կեանք: 7. Բիւրգամիշի աւասպելը: 8. Մնոտիապաշտութիւն և տաճարներ: 9. Կախարդութիւն: 10. Գիր և գիտութիւններ: 11. Սեմիտները Քաղդէայում: 12. Սեմիտական թագաւորութիւնը: 13. Էլամացիք: 14. Բաբելոնական թագաւորութիւնը: 15. Բաբելոնի արդիւնաբերութիւնն ու վաճառականութիւնը: 16. Բաբելացիների փարթամութիւնը . 51—83

Ասորեստան. 1. Երկիրն ու ժողովուրդը: 2. Ասորեստանի զօրանալն ու կառավարչական կազմը: 3. Ասորեստանցիների խստասրտութիւնը: 4. Ասորեստանցիների քաղաքականութիւնը: 5. Ասորեստ. քաղաքները: 6. Ասուրբանապալի գրադարանը: 7. Ասորեստանի անկումը: 8. Բաբելոնը Ասորեստանի անկումից յետոյ 9. Նաբուգոդոնոսորի գործունէութիւնը: . . . . . 84—105

Փիւնիկիա.—1. Երկիրն ու ժողովուրդը: 2. վաճառականութ. ու արդիւնագործութիւնը: 3. Այբուբենը: 4. Գաղթավայրերը: 5. Կրօնը: 6. Տաճարները: 7. Քաղաքական և հասարակ. կազմը . . . . . 106—117

Հայաստան.—1. Երկիրն ու ժողովուրդը: 2. Ժողովրդի զբաղմունքը: 3. Կրօնը: 4. Հին Հայաստանի քաղաք. համառօտ պատմութիւնը: 5. Ուրարտու . . 118—129

Արիական ցեղը.—1. Արիական ցեղի զանազան ճիւղերն ու նրանց գաղթը: 2. Արիացիների հին կրօնը: 3. Արիացիները Փոքր-Ասիայում: . . . . . 130—135

Իրան.—1. Երկիրն ու ժողովուրդը: 2. Իրանի կրօնը: 3. Զրադաշտ և Աւեստա: 4. Իրանցիների մաքրասիրութիւնը: 5. Հանդերձեալ կեանք: 6. Տաճարները: 7. Միդիա կամ Մարաստան: 8. Միդիայի թագաւորական պալատի շքեղութիւնը: 9. Պարսկաստան: 10. Կիւրոսը և Լիդիայի նւաճումը: 11. Բաբելոնի նւաճումը և Կիւրոսի մահը: 12. Կամբիզ: 13. Պարսկաստանի խռովութիւնները: 14. Դարէհի կառավարութիւնը: 15. Պերսեպոլիս: 16. Դարէհի պատերազմակ. ձեռնարկութիւնները: . . 136—175

Յունաստան.—1. Երկիրն ու ժողովուրդը: 2. Գաղթականութիւններ: 3. Յունաստանի հասարակ.-քաղաք. կազմը: 4. Յունաստանի կրօնը: 5. Տաճարներ: 6. Պատգամախօսներ: 7. Ոլիմպիական խաղեր: 8. Առասպելներ: 9. Տրոյական պատերազմը: 10. Սպարտայի երկիրն ու բնակիչները: 11. Սպարտայի հասարակ. կազմը: 12. Կառավարչական կազմը: 13. Աթէնքի երկիրն ու բնակիչները: 14. Աթէնքի կառավարչ. կազմը: 15. Սոլոնի բարենորոգումները: 16. Բռնապետութիւնն Աթէնքում: 17. Կլիսթենի բարենորոգումները: 18. Պարսկական պատերազմները: 19. Պարսկ.պատերազմների հետևանքները: 20. Դեմոկրատիայի զօրանալն Աթէնքում: 21. Պերիկլէսի դարը: 22. Պելոպոնէսեան պատերազմը: 23. Ալկիվիադէս: 24. Սպարտայի դերիշխանութիւնը: 25. Սպարտայի պատերազմը պարսիկների դէմ: 26. Քսենոֆոնտի պատմածը Հայաստանի մասին: 27. Գեղարուեստն ու գիտութիւնները Յունաստանում: 176—259

Մակեդոնիա.—1. Յունաստանի նւաճումը 2. Ալեքսանդր Մեծ: 3. Պարսկաստանի նւաճումը, 4. Ալեքսանդրի արևելեան կայսրութիւնը: 5. Ալեքսանդրի կայսրութեան բաժանումը: 6. Հայաստանը Պարսկաստանի անկումից յետոյ . . . . . 257—269

*Հռոմ.—1. Երկիրն ու ժողովուրդը: 2. Հռոմայեցիների կրօնը: 3. Պետական կազմը: 4. Սերվիոս Տուլլոսի բարենորոգումները: 5. Հռոմի հասարակապետութիւնը: 6. Պլեբէյների և պատրիկների կռիւը: 7. Գլխաւոր օրէնքները: 8. Գալլերի արշաւանքը: 9. Իտալիայի նւաճումը: 10. Առա-

Ջին Պունիկեան պատերազմը։ 11. Երկրորդ Պունիկ, պատերազմը։ 12 Երրորդ Պունիկեան պատերազմը։ 13. Նւաճած երկիրները կառավարելու եղանակը։ 14. Դասակարգային կռիւները։ 15. Գրակխոս եղբայրները։ 16. Յուգուրթական պատերազմը։ 17. Կիմբրների ու Տեւտոնների արշաւանքը։ 18. Դաշնակիցների պատերազմը։ 19. Մարիուսի և Սուլլայի ընդհարումները։ 20 Հայոց Մեծն Տիգրանը։ 21. Սուլլայի վերադարձը։ 22. Կ. Պոմպէոս։ 23. Պոմպէոսը Հայաստանում։ 34. Կաթիլինայի դաւադրութիւնը։ 25. Առաջին եռապետութիւնը։ 26. Պարթեւական պատերազմը և հայերը. 27. Յուլիոս Կեսարը Գալլիայում։ 28. Երկրորդ քաղաքացիական պատերազմը։ 29. Յուլիոս Կեսարի կառավարութիւնը։ 30. Դաւադրութեան շարժառիթները 31. Երկրորդ եռապետութիւն։ 32. Անտոնիոս և Աբտաւազդ II. 33. Օկտաւիանոս Օգոստոս։ 34. Օգոստոսի բարենորոգումները։ 35. Հայաստանը Օգոստոսի օրով։ 36. Տիբերիոս։ 37. Կալիգուլա և Կլաւդիոս։ 38. Ներոն։ 39. Արշակունիների հաստատուելը Հայաստանում։ 40. Ֆլաւիոսները։ 41. Ներվա և Տրայեանոս։ 42. Տրայեանոսի յաջորդները։ 43. Հայաստանի վիճակը Տիրիդից յետոյ։ 45. Սեպտիմիոս Սեվեր։ 46. Սեպտ. Սեվերն ու հայերը։ 47. Սեվերի յաջորդները։ 48. Տրդատ II և Արշակ կամ Խոսրով Արշակունիները։ 49. Կայսրութեան անկումը։ 50. Ինքնակալ միապետութեան հաստատուելը։ 51. Կոստանդին Մեծ։ 52: Դէպքերն արեւելքում և Տրդատ Մեծ։ 53. Կոստանցիոս ու Յուլիանոս։ 54. Թէոդոս Մեծ. 55. Գիտութիւնները Հռոմում։ 56. Գիտութիւնները Հռոմում . . . 270—429



ՄՄ Հայագիտական գրադարան
MAL018782